

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Սուբաթյան (Փարիզ), պրոֆ. դր. Յ. Հովհաննիսյան (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Ժ.  
Փիփլըր (Աախեն), պրոֆ. դր. Յ. Սուրուբյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Ջեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Ս. Հասրաթյան (Երևան)

Աշխատությունը հրատարակվում է ՀԾՈՒՀԿ (RAA) գիտական խորհրդի երաշխավորությամբ

**RAA ԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Գիրք Թ**

## **ՋԱՎԱԽՔ**

**ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Վրացերեն վիճաբերի և գիտական գրականության քննությունը՝  
**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՆԱՆՅԱՆԻ**

**JAVAKHK**

**SAMVEL KARAPETYAN**

Critical study of the Georgian-language lapidary inscriptions and scientific literature by  
**ALEXANDRE KANANYAN**

**ДЖАВАХК**

**САМВЕЛ КАРАПЕТЯН**

Критическое исследование грузиноязычных лапидарных надписей  
и научной литературы  
**АЛЕКСАНДРА КАНАНЯНА**

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 725. 945:941(479.25)  
ԳՄԴ 85.113 (23)+63.3.(23)  
Կ - 294

Գիտական խմբագիր՝ **Պավել Չոբանյան**  
*պատմ. գիտ. քեկնածու*

Կ - 294 Կարապետյան Ս.  
**Ջավախք**  
Գիրք Թ, Երևան, ՀՀ ԳԱԱ  
«Գիտություն» հրատ., 2006  
Գիրք Թ, 2006, էջ 624 (32 էջ գունավոր ներդիր)

Փաստական նյութի համալիր ուսումնասիրության հիման վրա ներկայացված է պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Ջավախք գավառի բնակավայրերի և պատմական հուշարձանների պատմությունը: Առանձնահատուկ տեղ է հատկացված երկրամասում պահպանված վիճազերի վերծանություններին:

Հասցեագրվում է հայ և վրաց ժողովուրդների պատմությանը և մշակույթով հետաքրքրվողներին և ընթերցող լայն հասարակայնությանը:

The present work treats the history of the settlements and cultural monuments of Javakhk District of Gugark Province of Historical Armenia on the basis of archive and field material. A special emphasis is laid on the lapidary inscriptions of the district.

Intended for the general reader and those interested in the history and culture of the Armenian and Georgian nations.

На основании архивных материалов и полевых исследований представлена история населенных пунктов и памятников материальной культуры области Джавахк провинции Гугарк исторической Армении. Особое внимание уделено эпиграфике края.

Книга предназначена для специалистов, изучающих историю и культуру армянского и грузинского народов, и широкого круга читателей.

Կ  $\frac{44030000}{703(02)2006}$  2006թ.

ԳՄԴ 85.113 (23)+63.3(23)

ISBN 5-8080-0651-1

© Սամվել Կարապետյան 2006

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն (RAA)

Նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) անկախության հռչակման 15-ամյակին  
(1991-2006)

*Dedicated to the 15th anniversary (1991 to 2006) of the declaration of independence of the Republic of  
Highland Karabakh (Artsakh)*

*Посвящается пятидесятилетию (1991-2006) независимости Нагорно-Карабахской Республики  
(Арцах)*

Աշխատությունը հրատարակվում է  
Անուշ Ջաքարյանի  
Լիլա Սերեդյանի  
Արթուր Սերեդյանի  
Ջանեթ Ջաքարիի  
Իրմա և Մայքլ Մակարների  
Օդրի և Վահան Գրեգորների  
Արաքս և Գևորգ Ոսկանյանների  
Ֆրիդա և Իսահակ Վարդանյանների  
Մարգրետ և Արմեն Հախնազարյանների  
հովանավորությամբ

Contributors of the publication:

Anoush Zakarian

Lila Seredian

Arthur Seredian

Janette Zakari

Irma and Michael Macar

Audrey and Vahan Gregor

Arax and Gevork Voskanian

Frieda and Isaac Vartanian

Margrit and Armen Haghazarian

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	7	Եկեղեցիներ, վանքեր, մատուռներ .....	23
ՆԱԽԱԲԱՆ .....	8	Խաչքարեր .....	26
Աշխարհագրական միջավայր.....	8	Գերեզմանոցներ .....	27
Գետեր.....	8	Տապանաքարեր.....	25
Լճեր.....	8	Կամուրջներ .....	27
Լեռներ.....	9	Ժողովրդական և արտադրական կառույցներ.....	27
Անտառներ.....	9	Վիմագրեր.....	27
Գյուղատնտեսություն.....	10	Հայերեն վիմագրեր.....	26
Երկրաշարժ .....	11	Վրացերեն վիմագրեր .....	24
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....	12	Թուրքերեն արաբատառ վիմագրեր.....	25
Ջավախք տեղանվան ծագումն ու ստուգաբանությունը.....	12	Աբուլ .....	30
Ջավախքը նախաքրիստոնեական շրջանում .....	12	Ագավրեք .....	37
Ջավախքը Դ-Թ դարերում .....	12	Ալաբուժան .....	43
Ջավախքը Թ-ԺԴ դարերում.....	12	Ալաստան .....	46
Ջավախքը ԺԴ-ԺԸ դարերում .....	13	Ախալքալաք .....	53
Ջավախքը ԺԹ-Ի դարերում .....	13	Ականա (Ակն, Ագանա) .....	78
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ .....	15	Ասփարա .....	82
Հայեր.....	15	Արակովա .....	84
Հայ բոշաներ.....	16	Ափնիա .....	89
Վրացիներ.....	16	Բալանթար .....	91
Ռուսներ.....	18	Բալխո .....	92
Թուրքեր .....	18	Բավրա .....	95
Քրդեր .....	18	Բարալեք .....	101
Բնակչության տեղաշարժեր .....	19	Բեժանո (Ճանճղա).....	111
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ .....	20	Բզավեք .....	116
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ .....	22	Բնելա .....	122
Հնագիտական .....	22	Բոգալի .....	123
Կիլիկյան բերդեր .....	22	Բուղաշեն .....	124
Վիշապաքարեր.....	23	Բուռնաշեք (Բուռնաշեն).....	127
Սիջնադարյան բերդեր,.....	23	Գանձա.....	135
Դիտակետ-աշտարակներ.....	23	Գոգաշեն .....	144
Քառակող կոթողներ .....	23	Գոմ .....	145
		Գորելովկա.....	150
		Դադեշ .....	151
		Դավնիա.....	155
		Դիլիսկա.....	157
		Դիլիվ (Դիլիվեկ).....	166
		Ջակ .....	170
		Ջրեսկ .....	175
		Էխթիլա .....	178
		Էրինջա.....	188
		Թախչա .....	189



Թմոք (Թմկաբերդ).....	192	Սուրբա ..... 457
Թոթխամ ..... 205		Վահանավանք ..... 464
Թորիա ..... 206		Վաչիան ..... 471
Թոք ..... 209		Վարգավ ..... 476
Ժդանովկա ..... 211		Վարևան ..... 479
Լոմատուրցխ ..... 212		Վարձունիք ..... 484
Խանդո ..... 215		Վլադիկիրովկա ..... 487
Խավեթ ..... 224		Տաբաթդուր ..... 489
Խերթվիս ..... 230		Տամալա ..... 493
Խզաբավրա ..... 234		Տամբովկա ..... 498
Խոջաբեկ ..... 246		Տրկնա ..... 499
Խոսպիա (Մեծ, Ներքին) ..... 248		Տուրցխ ..... 502
Խորենիա ..... 251		Ուջմանա ..... 508
Խուլզումո ..... 265		Փարվանա ..... 510
Ծունդա (Նաքալաբե, Քաջատուն) ..... 269		Փոկա ..... 514
Կաթնատու ..... 275		Փոքր Արագյալ ..... 523
Կանո ..... 276		Փոքր Գյունդուրա ..... 527
Կարծախ ..... 282		Փոքր Խանչալի ..... 530
Կարտիկամ ..... 291		Փոքր Սամսար ..... 533
Կոթելիա ..... 295		Քարցեթ ..... 537
Կոկիա ..... 288		Օթա ..... 541
Կորիս ..... 304		Օլավեր ..... 547
Կուլիկամ ..... 309		Օրոջալար (Օրաջալար)..... 548
Կումուրդո (Գյումբուրդա)..... 313		Օրջա ..... 552
Հեշտիա ..... 338		Ֆիլիպովկա ..... 561
Հոկամ ..... 341		Ջավախքի վիմագրերի ցուցակ ..... 562
Ղադո (Ղադուլար)..... 344		Օգտագործված գրականության ցանկ ..... 566
Ղատումա (Ղատումեթ) ..... 347		Գունավոր լուսանկարների ցանք ..... 575
Ղուլալիս ..... 352		Տեղանունների ցանկ ..... 577
Մաջադիա ..... 361		Անձնանունների ցանկ ..... 582
Մարտունի (Փոքր Խոսպիա)..... 366		Վրացերեն տեղանունների ցանկ ..... 588
Մեծ Արագյալ ..... 369		
Մեծ Գյունդուրա ..... 372		
Մեծ Խանչալի ..... 373		
Մեծ Սամսար (Թոք Սամսար) ..... 389		
Մերենիա ..... 391		
Մյասնիկյան ..... 397		
Մոդեգամ ..... 399		
Մոլիթ ..... 401		
Մուրճախեթ ..... 404		
Նամզարա ..... 410		
Նինոծմինդա (Բոզդանովկա) ..... 413		
Չամդուրա ..... 412		
Չիֆլիկ (Չիֆթլիկ) ..... 418		
Չխարոլա ..... 420		
Չունչիս ..... 422		
Պրտենա ..... 424		
Ջգրաշեն ..... 465		
Սաթխա ..... 430		
Սաղամո ..... 443		
Սիբկ (Փոքր Կանո) ..... 451		
Սպասովկա ..... 455		

Հեղինակը հայտնում է իր երախտագիտությունը ջավախարնակ մեր բոլոր հայրենակիցներին, ովքեր մշտապես և մեծագույն նվիրումով աջակից են եղել գրեթե երկու տասնամյակների ընթացքում իրակամացված դաշտային ուսումնասիրություններին:

Ի մասնավորի շնորհապարտ են թանկագին ընկերոջս՝ Հակոբ Ավետիսյանին, որի անսպառ և վարակիչ ոգևորությունն ու բազմաբնույթ աջակցությունը խթանել են սույն աշխատության ստեղծմանը:

Մեր խորին երախտագիտությունն ենք ուղղում նաև գրքի հրատարակության հովանավորներին և «Զավեն և որդիք» հրատարակչատանը:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ջավախքի պատմության և նյութական մշակույթի հուշարձանները, ի դեմս Մ. Բրոսսեի, մասնագիտորեն սկսել են ուսումնասիրվել դեռևս ԺԹ դարի կեսերից: Բնագավառն իրենց հետազոտություններով նկատելիորեն հարստացրել են վրացագրի հեղինակներ Ի. Ռոստոմաշվիլին, Է. Թաղաշվիլին, Ի. Ջավախիշվիլին, Ն. Բերձենիշվիլին, Շ. Լոմսաձեն, Գ. Բերձենիշվիլին, Վ. Սիլոգավան և ուրիշներ: Նախախորհրդային տարիներին բնագավառին հետամուտ են եղել նաև հայագրի գիտնականներ Կարապետ Տ. Սարգսյան Մարգարյանցը, Հ. Սուքիաս Էփրիկյանը, Ե. Լալայանը և այլք: Ջավախքի՝ Խորհրդային Վրաստանի կազմում ընդգրկվելուց հետո հայ հետազոտողները քաղաքական հանգամանքների բերումով զրկված էին երկրամասում համապատասխան գիտահետազոտական գործունեություն ծավալելու և նյութին առնչվող գրականություն հրատարակելու հնարավորությունից: Մինչդեռ վրացական կողմը, առաջնորդվելով քաղաքական նկատառումներով և առավելագույնս օգտվելով տարածքում ազատորեն գործելու մենաշնորհից, շուրջ յոթ տասնամյակների ընթացքում իրար հաջորդած բազմաթիվ գիտարշավների (այդ թվում՝ հնագիտական պեղումների) շնորհիվ շրջանառության մեջ է մտցրել երկրամասի պատմությանն ու նյութական մշակույթին վերաբերող սովորածավալ գրականություն: Վերջինս աչքի է ընկնում երկրամասի պատմական անցյալի միակողմանի և խտրական լուսաբանմամբ, որոշ դեպքերում պարունակում է ակնհայտ հակագիտական կեղծիքներ: Ուսումնասիրությունների շրջանակից դուրս թողնելով այն ամենը, ինչ հայկական է, վրաց հետազոտողները հեղինակել են Ջավախքի պատմության միակողմանի և ըստ այդմ՝ թերաբժեք ու միտումնավոր պատկեր:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Ջավախքի պատմության հանդեպ հետաքրքրություն դրսևորելու հնարավորություն է ընձեռվել նաև հայ պատմաբաններին, որոնք մինչ օրս հրատարակել են սուսկ առանձին աշխատություններ<sup>1</sup>: Ջուգահեռաբար ջավախաբնակ հայերի շրջանում երևան է եկել ողջունելի մի շարժում, երբ առանձին հեղինակներ ստեղծում են հարազատ բնակավայրի պատմությանը նվիրված աշխատություններ: Այդ ձեռնարկները, բազմաթիվ ուշագրավ նյութեր պարունակելով հանդերձ, հիմնականում չեն հավակնում և չեն կարող դասվել գիտական աշխատությունների շարքը<sup>2</sup>: Նորատիպ հրատարակությունների շարքում զգալի թիվ են կազմում նաև իրապատում գեղարվեստական ստեղծագործությունները<sup>3</sup>:

Սկսած 1988 թ-ից՝ «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը մի շարք գիտարշավների շնորհիվ իրականացրել է Ջավախքի պատմական հուշարձանների ուսումնասիրությունները, որոնք, լրացվելով դիվանական և գրադարանային տևական աշխատանքի շնորհիվ հավաքված անհրաժեշտ տվյալներով, հնարավորություն ընձեռեցին ձեռնամուխ լինել ներկայացվող աշխատության ստեղծման գործին: Մենք այսու նպատակադրվել ենք ներկայացնել երկրամասի պատմությունն ու մշակութային արժեքները լուսաբանող առավել ամբողջական և համապարփակ ուսումնասիրություն:

<sup>1</sup> **Մանույան Ա.**, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992: **Դավթյան Ա.**, Ջավախք, Երևան, 1994: **Կիրակոսյան Ն.**, Դունկիանոս երգիչ Կարնեցի. Դունկիանոսի ընձան, Երևան, 1995: **Արոյան Ս.**, Բեկորներ Մշո ջոջ քարի, Երևան, 1997: **Կիրակոսյան Ն.**, Դունկիանոս երգիչ Կարնեցի. Վարք Դունկիանոսի, Երևան, 1997: **Մեղրոյան Ա.**, Ջավախք. պատմության ուրվագծեր, Երևան, 1999: **Մարգարյան Վ.**, Ջավախք տեղանվան ծագումը, Երևան, 1999: **Մանույան Ա.**, ...նաև Սպիտակ եղեռն, Երևան, 2001: **Ջոռնաջյան Ս.**, Ջավախք. ժամանակագրություն, Երևան, 2002: **Մեղրոյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

<sup>2</sup> **Իսոյան Ա.**, Սաթխա, Երևան, 1995: **Մկիկյան Ա.**, Արագվա, Երևան, 1997: **Դավթյան Ա.**, Ամմախոյան հուշարձան, Երևան, 1998: **Մնոյան Գ.**, Ջավախք. ովքեր ենք մենք, առաջին պրակ, Երևան, 1998: **Մուրադյան Ռ.**, **Վանատուր Վ.**, Կորխ. օրերն այստեղ չեն ծերանում, Երևան, 2003 և այլն:

<sup>3</sup> **Կիրակոսյան Ն.**, Ջավախքի ժպիտներ, Երևան, 1994: **Դավթյան Ա.**, Գաղթի ճամփաներ, Երևան, 1997: **Դավթյան Ա.**, Ո՞ր են տանում ճամփաները, Երևան, 1998: **Գրիգորյան Հ.**, Հուլիսի ակոսներ, 1999: **Ջատիկյան Հ.**, Երգիծական Ջավախք, Երևան, 2004 և այլն:





Փարվանա գետի ձորակը Ախալքալաքի մոտ (նկ. ԺԹ դարի վերջ)

խորությունը՝ 3,3 մ: Ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության՝ Ջավախքի լճերը դասվում են հետևյալ կերպ. Մաղաթափա (2108 մ), Փարվանա (2076 մ), Տաբաթուր (1990 մ), Սաղամո (1986 մ), Խանչալի (1928 մ) և Խոզապին (1798 մ): Գոյություն ունեն նաև անհամեմատ ավելի փոքր մի քանի լճեր, որոնցից հիշատակելի են Լևալգյոլը (2560 մ), Թարանգյոլը (2079 մ), Բուղղաշենը (2040 մ) և Ջատկի (Ջրեսկ) լիճը (1720 մ): Խոշոր լճերից միայն Տաբաթուրն ու Խոզապինն ունեն ջրհավաք փակ ավազան, իսկ մյուսներից սկիզբ են առնում լեռնաշխարհի մեծ ու փոքր գետերը: Բացառությամբ Խոզապին լճի, որի ջուրն աղի է («Ջուրը դառն-աղային համ ունի և պարունակում է կիր, նատրիում, մագնեզիա, քլոր, ածխաթթու և ծծմբախառն թթվատ. 1000 խոր. սմ ջրի մեջ պարունակվում է 0,8804 գրամ պինդ նյութ: Ոչ մի ձուկ չկա ջրում և չի էլ կարող ապրել»)՝, մյուսները ձկնառատ են և ունեն քաղցրահամ ջուր:

**Լեռներ.** Ջավախքի բարձրավանդակը հյուսիսից, արևելքից և հարավից սահմանազատված է ջրբաժան լեռնաշղթաներով: Առավել բարձր գագաթներ ունեն Աբուլը (3301 մ), Սամսարը (3284 մ), Փոքր Աբուլը (2799 մ), Մաղաթափան (2714 մ), Սբ. Հովհաննեսը (2375 մ), Տաշվանկան (1883 մ) և այլն:

6 **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 49: Տե՛ս նաև սույն աշխ., էջ 282, ծանոթ. № 1: Ի դեպ, վերջին տարիներին լճում հայտնվել է պնդաճակատի նմանողությամբ բավականին խոշոր ձկնատեսակ, որը, դատելով նաև որսի քանակից, արդեն հասցրել է լավագույնս հարմարվել և արագորեն բազմանալ:

**Անտառներ.** Ջավախքի բարձրավանդակում անտառների երբեմնի գոյության առաջին վկայությունը մեզ է հասել Սամսար ժայռափոր հուշարձանախումբում պահպանված Ժ-ԺԲ դարերին վերագրվող վրաց մեսրոպատառ մի արձանագրության մեջ<sup>7</sup>:

1595 թ. կազմված «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ում հիշվող, Անտառային Ջավախք անունը կրող գավառակի (Ախալցխայի փաշայության Խերթվիսի լիվայում) գոյությունն ինքնին վկայում է Ջավախքի արևմտյան և հյուսիսարևմտյան մասի անտառներով որոշակիորոն հարուստ լինելը:

1745 թ. Վախուշտի Բագրատիոնի հեղինակած «Վրաստանի աշխարհագրության» մեջ Ջավախքը բնութագրված է որպես անտառազուրկ երկրամաս. «...միշտ ձյունով է ծածկված, անտառից զուրկ, լանջերը խոտավետ ու ծաղկավետ, աղբյուրները բազմաթիվ և համեղ: Տաբաթվում է հարավից դեպի հյուսիս...»<sup>8</sup>: Ի դեպ, բնակլիմայական նույնպիսի պայմաններ ունեցող հարևան Աշոցքի վերաբերյալ Վախուշտին նշել է. «...ամբողջապես լեռներով է պատած. իսկ մեջտեղը հարթ է և լեռնակողմը բլրա-

7 Տե՛ս սույն աշխ., էջ 390, արձ. № 2: Բնական այնպիսի միջավայրում, որտեղ գտնվում է Սամսար վիճակոր հուշարձանախումբը, քիչ հավանական է հոծ անտառային զանգվածի երբեմնի գոյությունը: Ուստի հիշյալ արձանագրությունն անզամ մեծ ցանկության դեպքում չի կարող համարվել հավաստի:

8 **Զանոշճի Զագրաճիօնո**, სავარგველოს გეოგრაფიის, თბილისი, 1997, էջ 133: Տե՛ս նաև **Մելիքսեթ-Բեկ Լ. Մ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 81:



նաև հեռավոր և մոտակա գավառների այլազգի բնակիչներին:

Հայտնի է, որ յուրաքանչյուր տարի ամառային արոտավայրերի որոնման նպատակով Ջավախք ժամանող վրաց անասնապահների անհամար հոտերը մեծ վնաս էին հասցնում երկրամասի երկրագործությանը. «Գաւառի գիւղատնտեսութեանը վնասում են նաև հովութեամբ պարապող թուշերը, որոնք Թիօնէթի գաւառից իրանց ահագին հօտերով գալիս են, մեր գաւառով անցնում դէպի Գեօզ-Դաղի և Արդահանի շրջանի արօտները: Գնալու ժամանակ և վերադարձին նրանց հօտերը վնասում են մեր գիւղացու արտերը, որի շնորհիւ յաճախ ընդհարումներ են լինում»<sup>15</sup>:

1899 և 1900 թթ. երկրամասի գյուղատնտեսությանը նկատելի վնաս էին հասցրել հացի բզեզն ու հոտենտոտյան մլուկը: Տուժած գյուղերին օգնություն ցույց տալու նպատակով 1900 թ. ստեղծվել էր կոմիտե՝ Թիֆլիսի նահանգապետի նախագահությամբ և «Մշակ»-ի խմբագիր Ալ. Քալանթարի ու հայտնի կովկասագետ Ե. Վեյդենբաումի մասնակցությամբ<sup>16</sup>: Տեղում կատարված աշխատանքների

շնորհիվ աղետից տուժած գյուղերն ըստ վնասվածության աստիճանի բաժանվել են երեք խմբի: Առավել օգնության կարոտ սովյալ բնակչությանը (259 տուն, 1369 բնակիչ) կառավարության կողմից հատկացվել էր 3000 ռ.՝ այլուրի ձեռքբերման և բաշխման համար<sup>17</sup>:

Հետպատերազմյան տարիներին Ջավախքում լայն տարածում է գտել կարտոֆիլի մշակությունը:

**Երկրաշարժ.** Ջավախքը Հայկական լեռնաշխարհի առավել ակտիվ սեյսմիկ գոտիներից է: Առանձնապես կործանարար են եղել 1089, 1283, 1319 և 1899 թվականների երկրաշարժերը: Երկրամասի կրած վնասների չափի մասին առավել շատ մանրամասներ հայտնի են միայն 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի վերաբերյալ, որի հետևանքով եղած զոհերի թիվը կազմել է 241 մարդ, վիրավորներինը՝ 55, կոտորված կենդանիներինը՝ 2570 գլուխ: Տուժել է 21 գյուղ<sup>18</sup>:

Վերջին վնասաբեր երկրաշարժը տեղի է ունեցել 1986 թ.:

15 **Մայիլմեան**, Տնտեսական հարցեր, «Մուրճ», 1901, № 7, էջ 178:

16 **Մայիլմեան**, Ամբերիլությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, «Մուրճ», 1901, № 6, էջ 247:

17 Նույն տեղում, էջ 248, 249:

18 «Մուրճ», 1900, էջ 103-105:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**Ջավախք տեղանվան ծագումն ու ստուգաբանությունը.** Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջավախք գավառի մասին պատմագրությանը հայտնի հնագույն հիշատակությունը մ.թ.ա. Ը դարից է, Արգիշտի Ա-ի (786-764) Խորխորյան տարեգրության<sup>1</sup> մեջ՝ որպես երկրանուն Ջաբախա անվանաձևով: Ըստ Հ. Կարագոյանի՝ «Տուեալ երկրանունն մեջ հնչյունական անցումները կատարուել են հետեւեալ կերպ. Ջաբախա (տեղանունն հիմքը), մեր կարծիքով, հոգնակիութեան «ա» ցուցիչով, որը յատուկ է հնդեւրոպական լեզուներին < Ջաբախ (տեղանունն ուղիղ ձեւը) > Ջաախ (բ>վ, ւ հնչյունափոխութեամբ, որը նկատելի է նաև այլուր, ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ Սցխեթայում յայտնաբերուած արամեերէն արձանագրութիւններից մէկում յիշատակուած է Ջեաախ անձնանունը, որը թերեւ, ծագում է սոյն Ջաաախ երկրանունից) > Ջաաախ (գ>ջ անցումով) > Ջաաախք (հայերէնի յոգնակիութեան «ք» ցուցիչով նախկին «ա» ցուցիչի փոխարէն)»<sup>2</sup>:

Վ. Սարգսյանն իր ուսումնասիրություններից մեկում փորձ է արել Ջավախք տեղանվան ծագումը ստուգաբանել «Ճապաղ-Ջավախք» անցման տեսանկյունից՝ հիմք ընդունելով երկրամասի աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունը, մասնավորապես ընդարձակ ու ջրառատ հարթավայրերը<sup>3</sup>:

**Ջավախքը նախաքրիստոնեական շրջանում.** Ջավախքի առաջին հիշատակությանը սույն անվանաձևով հանդիպում ենք Ե դարի պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, որն առնչվում է Մեծ Հայքի Վաղարշակ արքայի ծավալած վարչաքաղաքական համակարգի բարենորոգումներին. «Իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի,

ժառանգեաց լեռն Մթին, որ է Կանգարք, և զկէս մասինն Ջաախաց, զԿողք, զԾոր, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ»<sup>4</sup>: Անկախ Մ. Խորենացու «Պատմության»՝ նախաքրիստոնեական շրջանին վերաբերող Հայոց արքայացանկի տարբեր մեկնություններից<sup>5</sup>, բոլոր հետազոտողները համամիտ են, որ վերոնշյալ իրադարձությունները վերաբերում են մ.թ.ա. Ը դարին:

Մ.թ.ա. Դ դարում Ջավախքը վրաց Փառնավազ թագավորի ամառանոցն էր. «Ջաշունն և զգարունն առնէր ի Սցխեթա քաղաք, և զամառն ի Ջաախեթ և զձմեռն ի Գանչէնսն...»<sup>6</sup>:

Մ.թ.ա. մոտ 185-ին երկրամասը Մեծ Հայքի թագավորությանն էր միացրել Արտաշես Ա-ը:

**Ջավախքը Դ-Թ դարերում.** մ.թ. Դ դարում Ջավախքը հիշվում է Սր. Նունեի՝ դեպի Սցխեթ կատարած ուղևորության նկարագրության մեջ. «...և ի յունիս ամսեան եկի ի լեռն Ճաախեթոյ. և ի ծովն Փառնաայ և եկեալ՝ տեսի անդ ձկնորսս ի ծովուն, և հովիս առ եզր ծովուն. և լուայ՝ զի երդնուին յԱրամազդն և ի Ջադէն. զի տեղեակ էր լեզուին Հայոց, ուսեալ ի տանն Նիոփորայ Դունացոց: Եւ հարցեալ զուստին՝ ասեն. ի Դարբայ, ի Լրբնայ, ի Սափուրսլոյ, ի Քինձերոյ, յՌապատէն Սցխեթոյ...»<sup>7</sup>:

Արևելյան Հռոմեական կայսրության և Մասանյան Պարսկաստանի միջև Մեծ Հայքի առաջին բաժանման ժամանակ (387 թ.) Ջավախքը Գուգարաց բղեշխության գավառների մեծ մասի հետ կցվեց Վիրքին:

4 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 113:

5 Խնդրո առթիվ ուշագրավ են Լ. Շահինյանի և Բ. Հարությունյանի հետազոտությունները, որոնց համաձայն Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ հիշատակված Արշակունի Վաղարշակ թագավորն իրական պատմական անձ էր՝ ապրած մ.թ.ա. Բ դարում: Տե՛ս **Շահինյան Լ.**, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, 1993: Նաև՝ **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի բղեշխությունները և բղեշխության հաստատության շուրջ. – «Հանդես ամսօրեայ» 2001, № 1-12, էջ 89-180:

6 **Ջաանշէր**, էջ 24:

7 Նույն տեղում, էջ 46: Տե՛ս նաև՝ **Սելիստե-Քեկ Լ.**, Հայերը Վրաստանում, «Кавказ и Византия», № 1, Ереван, 1979, էջ 167-169:

1 Խորխոր ժայռը, որի վրա պահպանվում է Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունը, գտնվում է Վան քաղաքի հարավարևմտյան կողմում:

2 **Կարագոյան Յովհ.**, Մեպագիր տեղանուններ, հ. 1, գիրք 1, Երևան, 1998, էջ 204:

3 **Սարգսյան Վ.**, նույն տեղում: Ի դեպ, Ջավախք գավառանվան ծագումը կապվել է նաև օսերեն «ջաբախ» (լավ, առողջ) բառի հետ (**Դապայան Տ.**, Ջավախք գավառանվան ծագման շուրջ, «Իրան-Նամե», № 36, 2001, էջ 69):



**Ջավախքը Թ-ԺԳ դարերում.** Թ դարում Ջավախքի հարավային մասը՝ Գոգշենը, միացվում է Հայաստանի Բագրատունյաց թագավորությանը, բայց գավառի կենտրոն Ախալքալաքը շարունակում է մնալ Վրաստանի կազմում: 1065-ին երկրամասը նվաճում և ավերում են թուրք-սելջուկները:

ԺԲ-ԺԳ դարերում Ջավախքի կուսակալն էր Սարգիս Թնոզվեցին (Սարգիս Ա Վահրամյան - մոտ 1160 և մոտ 1210). «Ջաքարիա Երկայնաբազուկ գորապետի օրոք Ջավախքը կառավարում էին Սարգիս Երկայնաբազուկ Թնոզվեցին և Շավա Թորեցին»<sup>8</sup>:

Վրաստանի Ռուսուդան թագուհու (1222-1245) մահից հետո Ջավախքն անցնում է Թորեցի Գամրեկելիի իշխանությանը<sup>9</sup>:

1236-ին Ջավախքը գրավում են մոնղոլները: 1266-ին վերջիններիս աջակցությամբ ծագումով հունադավան հայ Սարգիս Ջաղեցին Ջավախքի և հարևան Ախալցխայի տարածքներում, հիմք է դնում Սամցխե-Սաաթաբազո անվամբ հայտնի դարձած իր իշխանությանը:

**Ջավախքը ԺԳ-ԺԸ դարերում.** պետական այս միավորը գոյատևում է մինչև 1637 թ.՝ թուրքերի կողմից տարածքի վերջնական նվաճումը (արդեն 1579 թ. թուրքերը գրավել էին իշխանության հյուսիսարևմտյան կեսը՝ Ախալցխան՝ շրջակայքով):

Ուշագրավ է, որ երկրամասում ցայսօր պահպանված հայկական պատմական հուշարձանների նշանակալի մասը ստեղծվել է հենց այդ իշխանության ժամանակաշրջանում (ԺԳ-ԺԷ դդ.):

Ինչպես այլուր, այնպես էլ նվաճված Տայքի և արևմտյան Գուգարքի տարածքներում գոյացած Սամցխե-Սաաթաբազո իշխանության փլուզմանը հաջորդած թուրքական տիրապետությունը նշանավորվում է բռնությամբ և տեղի բնակչության անլուր տառապանքներով: Իսպառ բնաջնջվելուց ազատվելու հույսով բնակչության մի զգալի մասը ստիպված ընդունում է մահմեդականություն: Ամբողջ ԺԷ դարում առաքելադավան հայերի մի մասը, հատկապես վրացացած հայ-քաղկեդոնականների, ինչպես նաև Սամցխեի բնիկ վրաց ազգաբնակչության ստվար զանգվածները դավանափոխ են լինում, թեպետև երկրամասի բազմաթիվ բնակավայրերում պահպանվում է քրիստոնեությունը չուրացած բնակչություն:

1735 թ. երկրամասին բաժին է հասնում մի նոր արհավիրք. Հայաստանի հյուսիսային գավառները, այդ թվում նաև՝ Ջավախքը, ասպատակում է Նա-

դիր շահը. «Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ զնացեալ հասին մերձ Թեոքուպոլսոյ: Եւ գերեցին զՆարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու և զԴալի դուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ քչեցին զայր և զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ԶՌ- (6000), որպէս լսեմք»<sup>10</sup>: Հիշյալ վկայությունը փաստում է, որ տակավին ԺԸ դարի առաջին կեսին գավառը եթե ոչ ամբողջապես, ապա հիմնականում հայաբնակ էր, քանի որ գերեվարվածներն առաքելադավան հայերն էին՝ «բովանդակ ի մեր ազգէ»:

**Ջավախքը ԺԹ-Ի դարերում.** մինչև ԺԹ դարի սկզբները Ջավախքը մնում է թուրքական բռնակալության ներքո և վարչականորեն ենթարկվում Ախալցխայում նստող փաշաներին:

1810 թ. Ջավախքի ուղղությամբ ռուսների Թիֆլիսից առաջանալուն զուգընթաց Շերիֆ փաշան Ջավախքի բոլոր քրիստոնյաներին հրահանգում է անցնել Կուր գետն ու նահանջել կայսրության խորքային նահանգները: Այսուհանդերձ, ռուսական ստորաբաժանումների հուսադրող հաջողությունները նպաստում են բնակչության գաղթի մտադրությունից հրաժարվելուն: Ռուսական բանակի նահանջից հետո Ախալցխայի փաշաներն առավել դաժանաբար են վարվում իրենց հանդուգն հպատակների հետ, և 1828 թ., երբ ռուս-թուրքական հերթական պատերազմի ավարտից հետո տարածքը վերջնականապես միացվում է Ռուսաստանին, երկրամասի միայն հազվագյուտ գյուղերում էին մնացել քրիստոնյա բնակիչներ:

Ախալցխայի անկումից հետո տեղի է ունենում Օսմանյան կայսրության և Ռուսաստանին անցած տարածքներից բնակչության փոխադարձ գաղթ: Հոժ խմբերով օսմանյան տիրապետության ներքո մնացած Արևմտյան Հայաստանի գավառներ է փոխադրվում ԺԷ դարից ի վեր մահմեդականացած բնակչության գերակշիռ մասը, որոնց ազգային ինքնագիտակցությունն այդ պահին արդեն զուտ թուրքական էր: Մյուս կողմից, պատերազմի ընթացքում ռուսներին՝ որպես թուրքական լծից իրենց ազատարարների բազմապիսի աջակցություն ցուցաբերած արևմտահայ զանգվածները (հատկապես՝ Էրզրումի նահանգում) հարկադրված են լինում հայրենի բնակավայրերը լքել և փոխադրվել «ռուսաց սահմաններ»՝ խուսափելով օսմանյան իշխանությունների անխուսափելի վրեժխնդրությունից: Վերջիններիս բնակություն հաստատելու տեղ է տրվում Ախալցխայի նախկին փաշայության Ռու-

<sup>8</sup> Մելիքսեթ-Քելեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Խ. Բ, Երևան, 1936, էջ 34:

<sup>9</sup> Նշվ. աշխ., էջ 56:

<sup>10</sup> Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Դորդանյանի, Երևան, 1973, էջ 67:

սական կայսրությանն անցած հատվածում, մասնավորապես Ջավախքում և հարակից շրջաններում: Քիչ հավանական է, որ Կարնո նահանգից գաղթած հայությունը որևէ հատուցում պիտի ստանար հայրենիքում թողած ունեցվածքի դիմաց, մինչդեռ նոր գաղթավայրում հաստատվելու համար հայերը հաճախ հարկադրվեցին հեռացող թուրքերից գնել թափուր գյուղերն ու վարելահողերը: Հայտնի է, օրինակ, Կարծախ, Խավեթ, Գաղեշ և Սուլթա (հարակից 10 ավերակ գյուղատեղիներով հանդերձ) գյուղերի գնման փաստը Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու համար: Այդ վայրերից թուրքերը հեռացել էին 1834 թ., իսկ գործարքը կնքվել է 1841 թ.՝ հայր և որդի Հաջի Նադի և Թայեր բեգերի հետ, 44.000 դուռուշով<sup>11</sup>:

Սա ծանր, բայց և անհրաժեշտ ձեռնարկ էր, որ իրականացրել էր հազար ու մի հոգերի ու կարիքի մեջ գտնվող հայ գաղթականության առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը: Հայտնի են նմանօրինակ այլ դեպքեր ևս:

Ի դեպ, Ջավախքից մահմեդականների փոքրածավալ արտագաղթեր տեղի են ունեցել նաև ռուս-թուրքական հետագա բոլոր պատերազմների հետևանքով:

Անցնող տասնամյակների ընթացքում նորեկ և տեղաբնիկ հայերը համատեղ ջանքերով շենացրել են իրենց բնակավայրերը:

1905 թ.՝ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, հակառակ Ջավախքում թուրք տարրի սակավաթվության հանգամանքին, վերջիններիս ավազակային հարձակումները երկրամասի մի շարք գյուղերին պատճառեցին տնտեսական որոշ վնասներ. «Վերջերս Ալեքսանդրոպոլի գաւառում ապրող ու Ախալքալակի շրջանին սահմանակից թիւրքերը՝ օգտւելով Կովկասում տիրող ընդհանուր իրարանցումից, յարձակւել են մի քանի հայ գիւղերի վրայ թալանի նպատակով: Ախալքալակի գաւառում թալանած են հետևեալ գիւղերը հետևեալ չափերով. –Թակչայ գիւղից յունիսի 16-ին տարել են 12 եգ, Յեշտիա գիւղից՝ 80 ձի, որոնցից 20 հատ ամենալաւը ընտրելով՝ միւսները յետ են թողել: Կէօնդուրա՝

11 գլուխ ապրանք, որոնցից 1-ը գտել են Դուլախս գիւղի թիւրքերի նախրի մէջ. միւս 10 չկան: Ուճմանայից տարել են 6 եգ, փոքր Խանչիլից՝ 5 ձի: Յուլիսի 15-ին Ալեքսանդրոպոլի ճանապարհին մի խումբ թիւրքեր մի քանի անգամ հրացան են արձակում Մաթխացիների վրայ և տանում 4 եգ. Փոկայից՝ 3 եգ...: Մաթխայից հովին սպանելով՝ տարել են 7 ձի: Կարծախից 15, Խոսպեայի արօտատեղից 3...»<sup>12</sup>:

1918 թ. ռուս-թուրքական ռազմաճակատի կազմալուծումից հետո՝ թուրքական բանակի ներխուժման ժամանակ, ազգային ղեկավար ուժերը, հակառակ առկա ներուժին, ի գորու չգտնվեցին կազմակերպել Ջավախքի ինքնապաշտպանությունը, ուստի և անտերունջ բնակչությունը մատնվեց աղետաբեր խուճապի: Անխուսափելի սպանդից փրկվելու հույսով Ջավախքի գրեթե ողջ բնակչությունը գաղթեց. «Գավառի բնակչության հիմնական մասը՝ մոտ 85 հազար հայեր, ապաստանեցին Բակուրիանիում և Ծալկայում: Մակայն միայն 5 ամսվա ընթացքում ցրտից, քաղցից ու հիվանդություններից մեռավ մոտ 40 հազար մարդ: Գանձա գյուղի 2060 մարդուց Ծալկայում մեռան մոտ 720-ը: Մաթխայի 3250 հոգուց մահացան մոտ 2500-ը: Հ. Թումանյանի հաղորդմամբ, այդ քաղցած մասսան իր գավառում էր թողել 2,5 մլն. փութ հացահատիկ, մոտ 8 մլն. փութ բերք, 15 հազար փեթակ, մեծ թվով գյուղատնտեսական գործիքներ ու մթերքներ, եկեղեցական գույք, հին ձեռագրեր և այլն: Գաղթականների թողած ողջ գույքը վերավաճառվեց տարբեր ազգերի սպեկուլյանտներին, իսկ քշված անասուններին տարան Ախալքալաք և Ախալցխա՝ թուրքական բարձրագույն հրամանատարության տակ»<sup>13</sup>:

Ռուսական կայսրության փլուզումից հետո Ջավախքը հայտնվում է նորաստեղծ Վրաստանի Հանրապետության տարածքային հավակնությունների ոլորտում, իսկ 1921 թվականից խորհրդային կարգերի հաստատումից ի վեր, ի հեճուկս բնակչության միահամուռ կամքի, վերջնականապես կցվում է Խորհրդային Վրաստանին<sup>14</sup>:

12 Տխուր փաստեր.- «Դրօշակ», 1905, № 10, էջ 150:

13 Կարապետյան Մ. Մ., Հովհաննես Թումանյանը հայկական կոտորածների մասին, ՊԲՀ, 1987, № 2, էջ 241: 1918 թ. հունվար-մայիս ամիսներին տեղի ունեցած դեպքերի զարգացման մանրամասները տես Մեքոնյան Աշոտ, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 271-284:

14 Մանրամասները տես Մեքոնյան Աշոտ, նշվ. աշխ., էջ 285-289, 295-330:

11 Այն ժամանակ այդ գումարը համապատասխանել էր ռուսական 2315 ռուբլուն:

## ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ջավախքի բարձրավանդակում պահպանված միջնադարյան գյուղատեղիների խիտ ցանցը (գյուղատեղիների միմյանցից միջին հեռավորությունը 1,5-2 կմ է) վկայում է, որ երկրամասը պատմական Հայաստանի առավել խիտ բնակեցված գավառներից էր: Այսպես, թուրքական կառավարության կազմած 1595 թ. «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ի համաձայն Ջավախքը, որը վարչականորեն բաժանված էր Ակչեհիրի, Խերթվիսի և Անտառային Ջավախքի շրջանների, ուներ ավելի քան 200 գյուղ: ԺԸ դարի սկզբներին երկրամասում բնակավայրերի թիվը զգալիորեն նվազել էր: Դա ակնառու է «Ջաբա դավթար»-ի տվյալներից:

ԺԹ դարում Ջավախքի ազգային-կրոնական պատկերը գերազանցապես քրիստոնեական էր: Հայերը<sup>1</sup> և վրաց ազգաբնակչության մի մասը բնիկներ էին, մինչդեռ Ռուսաստանից արտաքսված և քաղաքական նկատառումներով Այսրկովկասում բնակեցված ռուս աղանդավորները Ջավախք էին թափանցել 1841 թ. Գանձակի գավառի տարածքից և հաստատվել ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհների մերձակայքում, մասնավորապես՝ Փարվանա և Մադաթափա լճերի շրջանում:

ԺԹ դարի սկզբներին ռուս-թուրքական պատերազմների հետևանքով բնակչության թվաքանակը Ջավախքում խիստ նոսրացել էր, սակայն 1830 թ-ից հետո աճել<sup>2</sup> ի հաշիվ հայ, ավելի ուշ նաև ռուս վերաբնակիչների: 1893 թ. երկրամասն արդեն ուներ 102 գյուղ, 60.000 բնակիչ, ընդ որում, 52 գյուղ՝ հայաառաքելականներ (3458 տուն), 8 գյուղ՝ հայ-կաթոլիկներ (807 տուն), 19 գյուղ՝ թուրք, քուրդ, դարափափախ (638 տուն), 9 գյուղ՝ վրացի (347 տուն), 8 գյուղ՝ ռուս դուխոբոր (951 տուն), 6 գյուղ՝ խառնաբնակ՝ հայ, թուրք և վրացի (276 տուն)<sup>2</sup>: 1979 թ. Ա-

խալքալաքի և Բոզդանովկայի շրջանները միասին ունեին 106.087 բնակիչ, որից 95.923-ը՝ հայ, իսկ 3.124-ը՝ վրացի:

**Հայեր.** Ջավախքում գտնվող նախաքրիստոնեական շրջանին վերաբերող նյութական մշակույթի այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են վիշապաքարերը, կիկլոպյան ամրոցները, սալարկղային և ժայռափոր թաղումները, իրենց բնութագրական առանձնահատկություններով բաղկացուցիչ մաս են կազմում և նույնանում Հայկական լեռնաշխարհի պատմական վաղագույն շրջանի հրնդեվրոպական բնիկ քաղաքակրթության մշակույթի հետ: Հանգամանք, որն ինքնին վկայում է Ջավախքի՝ Հայկական լեռնաշխարհում ձևավորված միասնական մշակույթի ոլորտում ընդգրկված լինելը:

Դ-Է դդ. պատմական Հայաստանում համընդհանուր տարածում գտած քառակող կոթողների՝ Ջավախքում ևս առատորեն պահպանված մնուշները դարձյալ փաստում են վաղ միջնադարում երկրամասի՝ հայ մշակույթի անբակտելի և ներկայանալի մաս լինելու մասին:

Թ-ԺԱ դարերից և հատկապես ԺԳ-ԺԴ դդ. կերտված խաչքարերի բազմաթիվ մնուշները, որոնք գրեթե հավասարաչափ տեղաբաշխված են Ջավախքի տասնյակ գյուղերում և հնավայրերում, պատմական սկզբնաղբյուրներին զուգահեռ հաստատում են նշված ժամանակաշրջանում երկրամասի հայկական մշակութային տարածքին աշխարհագրորեն պատկանելու և հայաբնակ լինելու իրողությունը:

Թ-ԺԴ դդ. քաղկեդոնականություն ընդունած և Վրաստանի քաղաքական միավորման գործընթացը զլխավորած Տայքի Բագրատունիների գերիշխանության օրոք Ջավախքում ի հայտ եկած հայաքաղկեդոնական ուրույն մշակութային շերտի առկայությունը վկայում է երկրամասի իշխող վերնախավի և հայ ազգաբնակչության մի մասի վրաց կաթողիկոսի եկեղեցական իրավասության ներքո գտնվելու և հունադավանությանը հարելու հանգամանքը:

<sup>1</sup> Պատմական Հայաստանի սահմաններում տեղի ունեցող ցանկացած ներքին գաղթի արդյունքում բնակչության վայր փոխած հայ ազգաբնակչությունն իրավամբ շարունակում է մնալ բնիկ: Ռուսի, Կարնո հայության մի մասի վերաբնակումը Ջավախքում, լինելով ներքին գաղթ, անհիմն է դարձնում հայազգի վերաբնակիչներին երկվոր հռչակելու փորձերը:

<sup>2</sup> «Նոր-Դար», 1893, № 180, էջ 2: Տե՛ս նաև՝ «Արաքս», գիրք Բ, հինգերորդ տարի, Ս.Պետերբուրգ, 1893, էջ 21:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանի ԺԵ-ԺԶ դդ. Ջավախքում նկատվում է անընդմեջ թվապես մեծամասնություն պահպանած առաքելադավան հայոց մշակույթի աշխուժացում, որն արտացոլվել է հիշյալ դարերով թվագրվող խաչքարերի առանձնակի առատությամբ:

Սակայն ԺԵ-ԺԸ դարերում Ջավախքում օսմանյան տիրապետության հաստատմամբ ահագնացող չափերի է հասնում քրիստոնյա բնակչության բռնի մահմեդականացումը, որն առանձնապես համակում է հայ-քաղկեդոնականների շրջանակները, ինչպես նաև նախորդ դարերի ընթացքում երկրամաս ներթափանցած վրացիներին: Բռնի մահմեդականացված բնակչությունը համալրվեց թուրքական տիրապետության օրոք երկրամաս ներթափանցած թուրքերի և Ախալխալսի փաշաների՝ Վրաստանի տարբեր անկյուններից գաղթեցրած և տեղում արագորեն մահմեդականացված վրացիներով:

ԺԹ դարում Ջավախքի՝ առանց այն էլ խիստ նոսրացած հայ բնակչության քանակն էլ ավելի նվազեց Նադիր շահի արշավանքներից մեկի ժամանակ իրականացված զանգվածային գերեվարության հետևանքով: Ջավախքի հայկական բնիկ դիմագիծն էլ ավելի աղճատվեց ԺԹ դարի սկզբներին՝ տարածաշրջան ռուսական ռազմաքաղաքական ներթափանցման սկզբնական շրջանում, որի հետևանքով երկրամասը գրեթե ամբողջապես անայացավ և հայաթափվեց:

Այնուամենայնիվ, Ջավախքին վիճակված չէր երկարատև ժամանակաշրջանում հայաթափ մնալ, քանի որ արդեն 1830 թ. երկրամասի ամայացած գյուղերում բնակություն հաստատեցին Արևմտահայաստանի տարբեր գավառներից, գլխավորապես Կարնո նահանգից փոխադրված հայերը:

Չերծ կրոնական հալածանքներից և կեղեքումներից՝ ընդհուպ մինչև 1918 թ. Ջավախքի բնակչությունը թևակոխեց բարգավաճման ու զարգացման աննախադեպ ժամանակաշրջան: Սակայն, դուրսը կտրուկ փոխվեց 1918 թ. օսմանյան Թուրքիայի բանակների ներխուժման ժամանակ, երբ ջավախահայության հիմնական մասը անխուսափելի կոտորածից փրկվելու հույսով դիմեց դեպի հարևան գավառները: Ամիսներ անց, երբ վերադարձի հնարավորություն ընձեռվեց, Ջավախք վերադարձավ արտագաղթած հայության հազիվ 1/3 մասը: Մյուսները զոհ էին գնացել ջավախահայերին հնարավորինս ոչնչացնելու հարմար առիթն օգտագործած վրացական իշխանությունների սանձազերծած շրջափակմանը: Վրացական «Տեր-Ջոր»-ի վերածված Բակուրիանի անտառները գերեզմանեցին քաղցի, հիվանդությունների և զինված վրացական հրոսակախմբերի ճիրաններում հայտնրված հազարավոր ջավախահայերի:

Հակառակ խորհրդային բռնապետության և վրացական իշխանությունների՝ հետևողականորեն իրականացրած ազգային խտրական քաղաքականության՝ 1920-ական թթ-ից ի վեր ջավախահայերը վերստին շենացրին հայրենի երկրամասը: Հարագատ երկրի նկատմամբ տածած սիրո վկայություններից է երկրամասի հարյուրավոր հեկտար տարածությունների անտառապատումը:

Խորհրդային վերջին տարիներին նոր եռանդով առաջ տարված Ջավախքի հայաթափման ծրագիրը Վրաստանի անկախացումից հետո վերածվեց հետևողականորեն իրականացվող պետական քաղաքականության առանցքային բաղադրիչի: Վրացական իշխանությունների որդեգրած ազգային խտրական քաղաքականությունը, երկրամասը եկվոր վրացական և թուրքական տարրերով բնակեցնելու պարբերական փորձերը, տնտեսական բազմաբնույթ ճնշումները, ինչպես նաև հայատյացության և բարոյահոգեբանական սադրիչ անհանդուրժողականության մթնոլորտի արմատավորման խրախուսումը Ջավախքի հայ ազգաբնակչության շրջանում նպաստել են արտագաղթի չափերի կտրուկ աճի:

**Հայ բռնաներ.** երկրամասում հայ բռնաները խիստ սակավաթիվ են եղել: Նրանց թվաքանակը ԺԹ դարի վերջերին կազմել է ընդամենը 31 տուն<sup>3</sup>: 1892 թ. հրապարակված վիճակագրական տվյալների համաձայն՝ Ջավախքում հայ բռնաներ բնակվում էին Ախալքալաքում՝ 25 տուն և Էխսիլա գյուղում՝ 8 տուն<sup>4</sup>:

**Վրացիներ.** վրաց ազգաբնակչության մուտքը Ջավախք սկսվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանից և ներառել մի քանի հանգրվան:

Որքանով Վրաստանը (Քարթլի, Կախեթ, Իմերեթ), աշխարհագրական և բնակլիմայական տեսանկյունից առավել նպաստավոր պայմաններ ուներ այգեգործությունն ու մասամբ հողագործությունն զարգացնելու առումով, նույնքանով երկրի մարզերն անբարենպաստ էին խոշոր չափերի անասնապահության զարգացման տեսանկյունից՝ անհրաժեշտ ընդարձակ ալպյան գոտիների նկատելի սակավության պատճառով: Ուստի պատահական չէ, որ հնագույն ժամանակներից ի վեր Վրաստանի տարբեր շրջաններից նկատվում էին վրացագգի անասնապահների տեղաշարժեր Ջավախքի բարձրավանդակի ուղղությամբ՝ ամառային

3 Վանցեան Գ., Պատմական ակնարկ բռնաների անցեալից, «Մուրճ», 1894, էջ 1074:

4 Նույնի՝ Հայ բռնաներ, «Մուրճ», 1892, էջ 1047:



վով տեղի էր ունենում մաս հետադարձ հոսք, այսպես, 1801թ. Քարթլի էր փոխադրվել ավելի վաղ եղած, լեզգիների արշավանքի հետևանքով Ջավախքում ապաստանած վրացիների մի փոքր խումբ (17 տուն)<sup>10</sup>:

Այն պնդումները, որոնց համաձայն ջավախաբնակ վրացիները ռուսական իշխանությունների կողմից անհուսալի տարր դիտվելու պատճառով 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում արտաքսվել էին երկրամասից, ըստ էության, սոսկ այժմյան քաղաքական անհրաժեշտությունից բխած մտացածին հորինվածք է, որը չի հաստատվում պատմագիտությանը հայտնի ոչ մի վավերագրով<sup>11</sup>:

1944 թ., Ստալինի կարգադրությամբ, երկրամասից մահմեդականների արքայից հետո տեղի է ունեցել մեղմ կլիմա և բարեբեր հող ունեցող թափուր բնակավայրերում վրացիների ծրագրված բնակեցում: Նշված գյուղեր փոխադրվեցին մաս Ջավախքի բարձրավանդակում գտնվող սակավաթիվ վրացաբնակ գյուղերի մի քանի տասնյակ ընտանիքներ, մինչդեռ տեղի հայերը զրկված մնացին մույն արտոնությունից: Այսպիսով, 1950-1970-ական թվականների ընթացքում Ջավախքի բարձրավանդակում վրացիների թիվն արձանագրեց նվազման միտում:

1980-ականների վերջերին երկրամասի ազգային պատկերն արհեստականորեն այլափոխելու հույսով Վրաստանի իշխանությունները ձեռնարկել էին մի շարք գյուղերում (Ազմանա, Ափնիա, Գոգաշեն, Կոթելիա, Հոկամ, Մամեթա և այլն) վրացալեզու մահմեդական աջարների բնակեցում: Թեպետև բնական աղետի հետևանքով մերձարևադարձային կլիմայով հայտնի Աջարիայից Ջավախք տեղահանված աջար նորաբնակներն օգտվում էին միայն իրենց ընձեռած պետական բազմատեսակ արտոնություններից, այնուամենայնիվ, նրանց հիմնական մասը չկարողացավ դիմագրավել Ջավախքի խստաշունչ առաջին իսկ ձմռանը և, լքելով պետությունից նվեր ստացած երկհարկանի, ընդարձակ առանձնատները, վերադարձան «աղետի ենթարկված» բնակության մախկին վայրեր:

Ջավախքի վրացացման պետական ծրագրին մեծապես աջակցում են մաս վրաց եկեղեցու սպասավորները, հատկապես ի դեմս կրոնապետ մոլեռանդ և ազգայնամոլ վանականության: Միայն

1990-ական թվականներին Ջավախքի տարածքում կաթողիկոս-պատրիարք Իլյա Բ-ի գլխավորությամբ և ջանքերով վրաց եկեղեցին հիմնել է վրաց եկեղեցական երեք կենտրոն<sup>12</sup>:

1991 թ. բացառապես հայաբնակ Փոկա գյուղում հիմնվեց վրաց կուսամաս վանք: 2002 թ. հոկտեմբերի 17-ին Նիկոլոզ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ Ջավախքում կազմավորվել է Ախալքալաքի և Կոմուրդոյի թեմը<sup>13</sup>, իսկ 2005 թ. վրացական աղոթատուն հիմնվեց մաս Ախալքալաքում:

**Ռուսներ.** ռուս դուխոբորների մուտքը Ջավախք տեղի է ունեցել 1841 թ.: Տամբովի շրջանից սերված դուխոբորներն իրենց աղանդի<sup>14</sup> մեջ համառելու պատճառով նախ արքայից էին Տավրիկյան նահանգի (Դրին) Մելիտոպոլ գավառ, ապա Գանձակի գավառ, որտեղից էլ նրանց մի մասը փոխադրվեց Ջավախք<sup>15</sup>: Մինչև 1845 թ. նրանց թվաքանակն իրենց հիմնած 8 գյուղերում (Բոգդանովկա, Գորելովկա, Եփրեմովկա, Ռոդիոնովկա, Մպասովկա, Տամբովկա, Տրոիցկոյե և Օրլովկա) կազմել է 495 տուն, 4.097 շունչ<sup>16</sup>: 1893 թ. վերջիններս 8 գյուղերում կազմում էին 991 տուն<sup>17</sup>: 1990 թ. Վրաստանի նախարարների խորհրդի որոշմամբ՝ «նպաստավոր պայմաններ» են ստեղծվել Ջավախքում բնակվող ռուս դուխոբորներին վերադարձը Ռուսաստան դյուրացնելու համար<sup>18</sup>:

12 “Յոթնամյակ”, 18. 01. 2003, № 13:  
13 “Երեւոյն”, 12-25.08.2005, № 14:  
14 Դուխոբորների դավանական առանձնահատկությունների հակիրճ բնութագիրը տրվել է հետևյալ կերպ. «Դուխոբորները հաւատոյ վարդապետութեանց մէջ շատ մնանութիւններ կան նախնի հերձուածոց: Երրորդութիւնն կ'ընդունին, բայց զՀայր կը համարին յոյս, գորդին՝ կեանք, իսկ զՀոգին Սուրբ՝ խաղաղութիւն: Հայրն կը հայտնուի մարդոյն յիշողութեան միջոցաւ, Որդին՝ իմացականութեան, իսկ Հոգին Սուրբ՝ կամաց: Կը հաւատան հոգոց յառաջագոյն գոյութեանն և մարդոյ անկմանն և այնպէս կ'ընդունին, որ հոգին դրուած է մարմնոյ մէջ իր մեղքն քաւելու համար: Հետեապէս, երբ Աղամ երեւեցաւ երկրի վերայ, շփոթ յիշողութիւն ունէր վերին աշխարհի. միտքն իստարած էր և կամքն՝ ապստամբ: Նա չը կարողացաւ փորձութեան դիմադրել և նորէն մեղանչեց, նորա մեղքն իր սերունդին չ'անցնիր: Հոգին հակամիտ է չարութեան և սորա պատճառն է մարդոյ առաջին անկումն: Աշխարհս քաւութեան և մաքրութեան տեղի է, ուր մարդն ազատութեամբ բարի գործելով պէտք է թողութիւն ստանայ իր այն հին մեղաց, որով իր անձն աւելի սիրեց քան զԱստուած Յիսուս Քրիստոս, որ Որդի Աստուծոյ է և Աստուած, մարմնացաւ, որ մարդուն առաջնորդէ և օգնէ տոյն փորձութեան և քաւութեան մէջ: Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւններն պարունակած են Ս. Գրոց մէջ, բայց այնպէս խորհրդատու են, որ միայն Դուխոբորներուն տրուած է հասկանալ. իսկ նորածն Ռուսներն գուրկ են այս շնորհքէն: Այս է ահա Դուխոբորներու դասնութիւնն» («Միօն», 1875, էջ 71):  
15 «Մեղու Հայաստանի», 1876, № 48, էջ 1:  
16 **Լեռնաբէ Թ.**, Նամճեյ-ճեյճեյո XVIII Նաջկեյո Մեյլեյ-ձոճն XIX Մեյլեյճեյճեյ, տ.ձ., 1975, էջ 338:  
17 **Մալխաս Զ.**, Դուխոբորներն Ախալքալաքի գաւառում.– «Նոր-Դար», 1893, № 221, էջ 3:  
18 “Մեղու”, 1990, № 10:

10 AKAK, т. 1, էջ 501. Տե՛ս մաս՝ **Լեռնաբէ Թ.**, նշվ. աշխ., էջ 361:  
11 Պատմաբան Սվինոն Մասխարաշվիլու պնդմամբ. «1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսները Ջավախքից վրացիներին որպես անհուսալի տարր քշեցին և նրանց փոխարեն երկրամասը բնակեցրին իրենց համար հավատարիմ և հուսալի կարսեցի հայերով» (“Օգոստեյոյձոյ ճեյճեյ”, 26.07-02.08.2005, № 40):

2000-ական թթ. սկզբներին ռուս ազգաբնակչության մի նշանակալի հատվածը լքել էր ջախջախյալ գաղթագյուղերը և շուրջ 160-ամյա բացակայությունից հետո վերադարձել հայրենիք՝ Ռուսաստանի Դաշնություն:

**Թուրքեր.** դեռևս ԺՁ դարի վերջին թուրքական տարրեր ցեղային տարրերի ներկայությունը Ջավախքում խիստ սակավաթիվ էր: Օրինակ, 1595 թ. Ջավախքի ոչ մի բնակավայրում ազգությամբ թուրք բնակիչներ չեն հիշատակվում, բացառությամբ Խերթվիս գյուղի, որտեղ էլ թուրք էին միայն կալվածատերերը: Թուրքական տիրապետության հաստատումը խթանել էր թուրք տարրի երկրամաս քափանցմանը, իսկ ԺԸ դարում տեղի բնակչության մի զգալի մասի բռնի մահմեդականացման հետևանքով վերջիններիս թվաքանակը կտրուկ աճել էր:

ԺԹ դարի սկզբներին ռուս-թուրքական պատերազմների հետևանքով ծայր առած փոխադարձ գաղթերի շնորհիվ Ջավախքում նվազում է ծագումով թուրք և թուրքացած բնակչության քանակը: Փոխադարձաբար, Արևմտյան Հայաստանից Ջավախքում և հարակից Թռեղքում (Ծաղկայի շրջան) հանգրվանում են քրիստոնյա բնակիչներ (մեծագույն մասով՝ հայեր):

Դեպի ներկայիս Թուրքիայի տարածք թուրքերի հերթական գաղթ տեղի է ունենում 1918-1921 թթ.: Ջավախքում ինչպես թուրք, այնպես էլ մահմեդական այլ տարրերը (քրդերը) դադարում են գոյություն ունենալ 1944 թ. արքայի հետևանքով:

Նրանցից թափուր մնացած տասնյակ այգեվետ բնակավայրեր վրացական իշխանությունների ծրագրային հոգածությամբ 1940-ական թթ. 2-րդ կեսին հատկացվում են ինչպես տեղի սակավաթիվ, այնպես էլ Վրաստանի հեռավոր զանազան շրջաններից հոծ չափերով փոխադրված վրացագզի նորաբնակներին: Այսպիսով, հիմնականում Ախալ-ցըխայի և վերջինիս հարակից Աղիգենի, Ասպինձայի վարչական շրջաններում թուրքերի արքայից հետո թափուր մնացած բնակավայրերից շուրջ 80-ը վերածվում են վրացաբնակ գյուղերի, իսկ շուրջ 40 գյուղ չբնակեցվելով վերածվում է ամայի գյուղատեղիների: Միայն Ջավախքի բարձրավանդակում գտնվող 6 գյուղերում (Դավնիա, Էրինջա, Խավեթ, Կոկիա, Սաղամո, Քարցեթ) բնակություն հաստատեցին մերձակա բազմամարդ ու սակավահող գյուղերի հայերը:

**Քրդեր.** Ջավախքի արևմտյան սահմանագոտում, Վարձունիքի մերձակայքում, ԺՁ դարից ի վեր թափանցած յուրուք և յուզղեջ քրդական ցեղերը ԺԹ դարի վերջերին զբաղեցնում էին Միրաշխան,

Նաբալաք (պատմ. Ծունդա), Դանեթ, Գեորգիժմինդա և այլ գյուղերում (առաջին երկուսը՝ Կորի աջակողմում): Երկրամասի քուրդ բնակիչներն արտրվել են թուրքերի հետ մեկտեղ 1944 թ.:

**Բնակչության տեղաշարժեր.** 1829-30 թթ. ներգաղթից հետո Ջավախքում հաստատված հայերի շրջանում նկատվում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասնակի տեղաշարժեր: Երևույթն առավելապես պայմանավորված էր տնտեսական գործոններով և շարունակվել է մինչև ԺԹ դարի կեսերը: Նորահաստատ գյուղերի բնակիչները մերթ-ընդմերթ փոխադրվում և նոր բնակավայրեր էին հիմնում ոչ միայն Ախալքալաքի, այլև մինչև իսկ հարևան գավառների տարածքում: Այդ կերպ, օրինակ, հարևան Թռեղքում (Ծաղկայի շրջան) ԺԹ դարի առաջին կեսին հիմնադրվել էին գյուղեր, որոնք կրկնում էին Ջավախքում արդեն իսկ գոյություն ունեցող գյուղանունները: Այդպիսիք էին Նոր Արագյալ, Նոր Բուռնաշեթ և Նոր Կորխ գյուղերը:

Ջավախահայության ներքին տեղաշարժերը նկատվում են՝ սկսած 1830 թ-ից: Այսպես, 22 տուն բրդոնքցիները սկզբում 2 ամիս ապրել են Սամսարի տարածքում, այնուհետև նրանցից 7 տունը հաստատվել է ներկայիս Ականա գյուղի տեղում, իսկ 15-ը՝ փոխադրվել Մեծ Արագյալ:

1834 թ. Գոմ գյուղում հանգրվանել էին Արակովայից փոխադրված մի քանի ընտանիք:

1836 թ. Էխթիլայի բնակիչների մի մասը փոխադրվել ու հիմնել էր Էխթիլա-Սամսար (Փոքր Սամսար), մյուս մասը՝ Լոմատուրցիս, իսկ 7 ընտանիք էլ՝ Տրկնա գյուղերը:

1844 թ. Բուռնաշեթում հաստատված հայերից 15 ընտանիք հեռացել էր գյուղից և փոխադրվել Ծաղկայի շրջան՝ հիմնադրելով Նոր Բուռնաշեթ գյուղը:

1845-47 թթ. կորխեցիների մի մասը փոխադրվել է Ծաղկայի շրջան և մի ավերակ գյուղատեղիի տարածքում հիմնել Նոր Կորխ անվամբ գյուղը:

1854 թ. կազմված տեղեկագրի համաձայն՝ Ծաղկայի գավառի Նոր Կորխ և Նոր Արակովա գյուղերի հայ բնակիչները փոխադրվել էին Ախալքալաքի գավառ՝ իրենց եկեղեցիները թափուր թողնելով. «...երկրքին գիւղօրայք, որք են Նոր Կորխ և Նոր Արակովայ գաղթեալք ի նահանգէն Ծաղկայի, ի նահանգն Ախլքալակայ...»<sup>19</sup>:

1855-56 թթ. Թոքը իսպառ հայաթափվել է բնակիչների՝ Սամսար լեռան ստորոտում նորահիմն Փոքր Սամսար գյուղ փոխադրվելու պատճառով:

<sup>19</sup> Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. Պ-56, ց. 12, գ. 306, թ. 17:

1870-ականների սկզբներին Ղուլալիս էին փոխադրվել Ծաղկայի գավառի Ղարբուռ, Ջինիս և այլ գյուղերից հեռացած բնակիչները:

Մեծ Սամսարի բնակիչների նախնիները, սկզբում հաստատվելով Թոք գյուղում, 1848 թ. փոխադրվել և հիմնել են ներկայիս իրենց այժմյան բնակավայրը՝ Թոք տեղանունը կցելով Սամսարին:

1852 թ. Ծաղկայի Նոր Կորիս գյուղից հեռացած հայերի մի քանի ընտանիք հաստատվել և շենացրել է Օլավեր գյուղատեղին:

1850-ական թվականների սկզբին Սիրկը հիմնադրել են Կառն գյուղից փոխադրված մի քանի հայ ընտանիքներ:

1860-ական թթ. Մոլիթ գյուղը հիմնադրել են Ջակ, Տրկնա գյուղերից և Ծաղկայից փոխադրված հայերը:

Նույնպես 1860-ականներին Կորիս, Բարալեթ և Տրկնա գյուղերից հեռացած հայ ընտանիքները հիմնել են ներկայիս Տաբաձողուրը:

1907 թ. Կորիսից հեռացած մի քանի հայ ընտանիք հիմնեց Թոթխամ գյուղը:

Բոզալին 1927-29 թթ. հիմնադրել են սուլդացի հայերը:

Կաթնատուն 1928 թ. հիմնադրել են Թորիայից և Ուջմանայից փոխադրված հայերը:

Ժղանովականը 1930-32 թթ. Հեշտիա գյուղի ամառային արոտավայրի տեղում հիմնել են Հեշտիայից փոխադրված մի քանի հայ ընտանիք:

1944 թ. Բեժանոյից փոխադրված մի քանի հայ ընտանիքներ շենացրել են Գավնիա գյուղը:

1944 թ. Խավեթում բնակություն են հաստատել Մրակոլ (Մրակովալ) գյուղից փոխադրված հայերը:

Առավել փոքրածավալ, ներքին տեղաշարժեր Ջավախքում նկատվել են նաև հետպատերազմյան տարիներին: Այդ երևույթը գրեթե մարեց 1960-90-ական թթ.:

1993-94 թթ., պայմանավորված օրավուր սրվող քաղաքական և վատթարացող տնտեսական գործոններով, Ջավախքում սկիզբ է առել բնակչության արտագաղթ՝ գլխավորապես դեպի Ռուսաստանի Դաշնություն, որն այսօր էլ, ցավոք, չի դադարել:



## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**Կրթություն.** Ջավախքում առաջին կրթական հաստատությունները հիմնադրվել են դեռևս 1837 թ-ից: Հայտնի է, որ այդ թվականին գավառի մի շարք բնակավայրերում (օրինակ՝ Աբուլ, Դիլիսկա, Չամ-դուրա) գործել են խալֆայական կարգի մասնավոր դպրոցներ:

Մեզ հայտնի ամենահին եկեղեցական-ժխական դպրոցը հիմնվել է 1836 թ. Ախալքալաքում: 1860-ական թթ-ից գավառի գյուղական առավել մարդաշատ բնակավայրերում բացվում են ժխական նոր դպրոցներ: Երևույթ, որը վերելքով շարունակվում է մինչև 1880-ական թվականների սկզբները, երբ երկրամասի խոշոր բնակավայրերում (օրինակ՝ Դիլիսկա, Կարծախ, Մաթխա, Վաչխան) կառավարության որոշմամբ բացվում են ռուսական (պետական, արքունի) դպրոցներ: Վերջիններս ծանր հարված են հասցնում նյութական անապահով վիճակում գտնվող և մի կերպ պահպանվող հայոց եկեղեցական-ժխական դպրոցներին, քանի որ անգետ ազգաբնակչության մի ստվար հատված գավակներին ազգային կրթություն տալու փոխարեն ուղարկում էր ռուսական դպրոցներ՝ դրանով իսկ նպաստելով օտար դպրոցի բարգավաճմանն ու ազգային անկմանը: Առանց այդ էլ դժվարին կացության մեջ հայտնված Ջավախքի ժխական դպրոցները կառավարության կարգադրությամբ 1885 թ. և 1896-1905 թթ., համայն հայոց դպրոցների օրինակով, ևս փակ մնացին: Վերաբացման թույլտվություն ստանալուց հետո (1905 թ.) կրթական գործը Ջավախքում նոր վերելք ապրեց: Մինչև 1918

թ. կրթօջախներ են վերաբացվում երկրամասի ավելի քան 40 բնակավայրերում: 1918-1921 թթ. խառնակ տարիներին ողջ երկրամասի կրթական համակարգը կաթվածահար է լինում<sup>1</sup>:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո վերականգնվող բնակավայրերին զուգընթաց, ըստ տվյալ գյուղի բնակչության թվաքանակի, հիմնվում են միջնակարգ, ութամյա և տարրական հայկական դպրոցներ, որոնց ուսումնական ծրագրում Վրաստանի լուսավորության նախարարության խտրական կեցվածքի պատճառով արգելվում և չեն դասավանդվում «Հայ ժողովրդի պատմություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաները (ինչպես էր Խորհրդային Ադրբեջանին մինչև 1988 թ. բռնակցված Արցախում):

Ցավոք, հակահայ այս կեցվածքը որդեգրել և իրականացնում են նաև Վրաստանի ներկայիս իշխանությունները:

Վրաստանի անկախացումից հետո ժողովրդավարական արժեքներին և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգայնորեն ընդունված և երկրում օրենսդրորեն ամրագրված պարտավորություններին հակառակ՝ անկախ Վրաստանի բոլոր վարչակարգերը ոչ միայն շարունակեցին համառորեն վարել խորհրդային տարիներից ժառանգված խտրական քաղաքականությունը, այլև նոր քայլեր ձեռնարկեցին Ջավախքի հայալեզու կրթական համակարգի լիակատար քայքայման ուղղությամբ:

<sup>1</sup> Երկրամասի կրթական գործի համապարփակ պատմության մասին տես **Մելքոնյան Աշոտ**, Նյութեր Ախալքալաքի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Երևան, 2005:

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ջավախքը բազմաբնույթ և բազմադարյան հուշարձաններով առավել հարուստ տարածաշրջաններից է: Երկրամասի տարածքում հայտնաբերվել են տասնյակ հնագիտական, նախաքրիստոնեական հուշարձաններ: Առավել հարուստ ու բազմազան է հուշարձանների միջնադարյան բաժինը: Այստեղ առկա են հայկական (հայ-առաքելական, հայ-քաղկեդոնական և հայ-կաթոլիկ), վրացական, ինչպես նաև թուրքական տիրապետության ժամանակաշրջանում կառուցված մի քանի մահմեդական հուշարձաններ:

Ժ-ԺԱ դարերով թվագրվող ճարտարապետական պաշտամունքային կառույցների զգալի մասնակնհայտորեն կրում է հայկական, վրացական և բյուզանդական մշակույթների փոխազդեցությունների կնիքը: Երևույթ, որը դրսևորվել է բազմաթիվ յուրօրինակ և հատկանշական հուշարձաններում:

Յայժմ երկրամասի պատմական հուշարձանների ուսումնասիրությամբ գերազանցապես զբաղվել են վրացի մշակութաբաններ: Մակայն վերջիններիս հրատարակած նյութերի հիմնական մասը ցավալիորեն հաճախ աչքի է ընկնում արծարծած նյութի մակերեսային մատուցմամբ, ինչպես նաև, որպես կանոն, կանխակալ և միտումնավոր մեկնաբանություններով:

Վրացագրի մի շարք ուսումնասիրողներ, առաջնորդվելով ոչ թե գիտության, այլ ազգայնամոլական շահերով, առնչվելով մեծաքանակ հայկական պատմական հուշարձանների հետ, իրենց հրատարակություններում անտեսել կամ պարզապես զանց են առել դրանց գոյությունը: Միաժամանակ իբրև զուտ վրացական է ներկայացվել հայ-քաղկեդոնական մշակութային շերտը: Առաջնորդվելով Ջավախքում հայկական միջնադարյան հուշարձանների գոյության ժխտման և բացառման սկզբունքով՝ վրացի մի շարք հետազոտողներ հանգել են ծայրահեղ անհեթեթ պնդումների: Օրինակ, Վրաստանի մշակութային արժեքների պահպանության գերատեսչության փոխտնօրեն Պաստա Գափրիանյանը 2011 թ. հունիսին իր հոդվածում հայտարարել է, թե «Հնարավոր է, որ մի քանի գյուղերում լինեն ժամանակակից հայկական հուշարձաններ, իսկ հայկական պատ-

մական հուշարձանի ոչ մի տեղ չեք հանդիպի: Այդ մասին վիճելն անգամ անհեթեթություն է...»<sup>1</sup>: Վերջինիս հայրն էլ՝ ավագ գիտաշխատող Գիլի Գափրիանյանը, որը 1958 թ-ից սկսած՝ 40 տարի շարունակ, զբաղվել է Ջավախքի պատմական հուշարձանների ուսումնասիրությամբ, նշել է. «Ընդհանրապես, ԺԹ դարից ավելի հին հայկական հուշարձան տարածաշրջանում չի արձանագրվել»<sup>2</sup>:

**Հնագիտական.** երկրամասի տարածքը հարուստ է հնագիտական հուշարձաններով: Տարբեր ժամանակներում պատահականորեն հայտնաբերված հնագիտական գտածոները լույս են սփռում երկրամասի վաղ շրջանի պատմության վրա: Դրանցից են Թոթխամ գյուղում, մի բնակելի տան շինարարության ժամանակ հայտնաբերված Ա դարի երկրորդ կեսով թվագրվող ապակյա գեղազարդ սափորները: Հնավայրի տարածքի ավերված մի դամբարանից 1960-ական թթ. սկզբներին հայտնաբերվել են արձանիկների բեկորներ և հնագիտական այլ իրեր: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գտածո նյութերը վերաբերում են մ.թ.ա. Ը-Չ դդ. և պատկանում են Արարատյան (Ուրարտու) թագավորության մշակույթին:

Ուշագրավ է Բարալեթից դեպի Կոթելիա տանող ճանապարհին՝ Մոխրաբլուր (վրաց.՝ Նացարգորա) հնավայրում հայտնաբերված, մ.թ.ա. Ա հազարամյակով թվագրվող աստղագիտական բրոնզե օրացույցը:

Դիլիսկա բնակավայրի տարածքում պահպանված հնագիտական հուշարձանները վկայում են, որ գյուղը բնակեցված էր վաղնջական ժամանակներից: Այդ է փաստում գյուղամիջի «Գոգոլի սուրբ» ուխտատեղիում պահպանված, մ.թ.ա. Բ-Ա հազ. թվագրվող ֆալլուսը:

**Կիլոսյան բերդեր.** Ջավախքը հարուստ է համեմատաբար լավ պահպանված՝ մ.թ.ա. Դ-Գ հազարամյակներին բնորոշ կիլոսյան ամրոցներով: Ուշագրավ են հատկապես Գանձա, Բզավեթ, Խոջաբեկ և Սաթխա գյուղերի տարածքում գտնվող

<sup>1</sup> «Հայաստանի պատմություն», 25-31. 07. 2005, № 30:

<sup>2</sup> Նույն տեղում:

ամբողջները, որոնց զուգահեռները կան Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում: Նշված ժամանակաշրջանին են պատկանում նաև Ժղանովական, Մոդեգամ, Ջգրաշեն և այլ գյուղերի մերձակայքում պահպանված բնակատեղիներն ու դամբարանադաշտերը:

**Վիշապաքարեր.** բացառապես Հայկական լեռնաշխարհում տարածում գտած ջրի պաշտամունքին առնչվող հնագույն վիշապ-կոթողների (մ.թ.ա. Բ-Ա հազ.) տարածումը բավական ընդգրկում է: Գետերի, լճերի ափերին և աղբյուրների ակունքների մոտ կանգնեցված՝ ձկան կամ վիշապի տեսքով, զանգվածեղ, միակտոր քարակոթողները, որոնց վրա քանդակված են օձի, ցուլի, խոյի և այլ կենդանապատկերներ, հայտնաբերվել են Գեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիսարևելյան ափին, Արագածի լանջերին, Ազատ գետի վերին հոսանքի շրջանում, Ճորոխ գետի ավազանում, Վայոց ձորում, Թռեղքում, Փոքր Հայքում, ինչպես նաև՝ Ջավախքում:

Բազմաթիվ հետազոտողներ վիշապաքարերին մվիրված ուսումնասիրություններում անդրադարձել են Ջավախքում պահպանված համանման քարակոթողներին: Հատուկ քննության առարկա են դարձել Մուրճախեթի, Գանձայի, Փոկայի վիշապաքարերը<sup>3</sup>:

**Միջնադարյան բերդեր, դիտակետ-աշտարակներ.** պաշտպանական հզոր համակարգ ունեցող բերդերից Ջավախքում հայտնի են Ախալքալաքը, Թմոքը և Խերթվիսը: Գերազանցապես Ժ-ԺԱ դարերի ընթացքում սկզբնավորված և հետագայում վերաշինված և ամրացված հիշյալ բերդերն ունեն ամրոցաշինության բոլոր հիմնական հատկանիշները՝ կիսաբոլոր կամ ուղղանկյուն աշտարակներ, զորանոցներ, ապարանքներ, ժայռափոր և գետնափոր հորեր, գաղտնուղիներ և այլն: Ուղղանկյուն հատակագծով մենավոր դիտակետ-աշտարակներ պահպանվել են Արակովա, Թոք, Խանդո, Տուրցխ գյուղերում և նրանց մերձակայքում:

<sup>3</sup> **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 399-400: **Սամուելյան Խ.**, Քարի պաշտամունքը հայերի մեջ. «Հանդես ամսօրեայ», 1927, № 9, էջ 524, նաև՝ **Նույնի** Հայաստանի հին կուլտուրան, Երևան, 1931, էջ 319-320: **Մելիքսեթ-Քել Լ.**, Մեգալիթյան կուլտուրան Վրաստանում, (վրաց.), Թբիլիսի, 1938, էջ 99-104: **Ростомов И.**, Ахалкалакский уезд в археологическом отношении. – Сборник Материалов для Описания Местностей и Племен Кавказа, вып. XXV, 1898, էջ 93-94: **Такайшвили Е.**, «Материалы по археологии Кавказа», т. XII, Москва, 1909, էջ 28: «Христианский восток», т. VI (1917-20), Петроград, 1922, էջ 335: **Март Н. и Орбели И.**, Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петроград, 1922, էջ 41: **Капанян Г.**, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, էջ 328: **Սամույան Ա. Ս.**, Ջավախքի «վիշապ» քարակոթողները. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 2:

**Քառակող կոթողներ.** վաղ միջնադարյան քառակող կոթողները նույնպես բնորոշ են վաղ միջնադարյան հայ քրիստոնեական պաշտամունքային մշակույթին և լայնորեն տարածված են պատմական Հայաստանի սահմաններում: Ներկայիս Վրաստանում այդպիսիք հանդիպում են միմիայն նրա կազմում ընդգրկված Մեծ Հայքի Գուգարք նահանգի գավառներում, այդ թվում՝ Ջավախքում: Բազմաթիվ հնավայրերում, մեծ մասամբ տեղահան և բեկորված, պահպանվել են Դ-Է դարերում կերտված տասնյակ քառակող կոթողներ: Առավել մեծ թիվ են կազմում դարերի ընթացքում ոչնչացված երբեմնի կոթողների պահպանված պատվանդանները: Ինչպես կոթողները, այնպես էլ դրանց պատվանդանները կրում են հարդարանքի բնորոշ այնպիսի տարրեր (ականթի տերևներ, որթագալար խաղողի ողկույզներ, պատկերաքանդակներ և խաչաքանդակներ), որոնք հատուկ են այլուր պահպանված համանման հուշարձաններին:

Հատկանշական է, որ Ջավախքի հնավայրերում պահպանվել են նաև Թ-ԺԱ դդ. թվագրվող քառակող և բոլորածև կոթողներ, որոնք բնութագրական են ողջ Գուգարքի<sup>4</sup> հայ քաղկեդոնական, այնպես էլ հարակից վրացական միջավայրին<sup>5</sup>: Հարկ է նշել նաև, որ ի տարբերություն Ջավախքում և Գուգարքի մյուս գավառներում պահպանված քառակող կոթողների, որոնցում առկա են կոթողային մշակույթի պատմական զարգացման զույգ ժամանակաշրջանների (Դ-Է դդ. և Թ-ԺԱ դդ.) նմուշները, Վրաստանի Քարթլի և Կախեթ պատմական մարզերում հանդիպող սակավաթիվ կոթողները վերաբերում են միայն վերոնշյալ երկրորդ ժամանակաշրջանի:

**Եկեղեցիներ, վանքեր, մատուռներ.** երկրամասի տարածքում պաշտամունքային կառույցներ պահպանվել են գրեթե բոլոր բնակավայրերում և գյուղատեղիներում: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ հայկական (հայ-առաքելական և հայ-կաթոլիկ) և բյուզանդադեան: Վերջինս արտացոլված է Թ-ԺԴ դդ. Ջավախքի հայ-քաղկեդոնական բնակչության մշակութային ժառանգությամբ և ԺՋ-ԺԸ դդ. վրացական պաշտամունքային սակավաթիվ կառույցներով:

Հայ-առաքելական եկեղեցիներից հնագույնները թվագրվում են Ե-Է դարերով (Բարալեթի Սբ. Հովհաննես, Բզավեթի միանավ եկեղեցի և այլն):

<sup>4</sup> Գուգարքի Ջավախք գավառում՝ Կումուրդո, Սաղամո, Խանդո, Թոք, Թռեղքում՝ Մանուկ, Զվիշափորում՝ Կարեթ, Կանգառքում՝ Ուկանգորի:

<sup>5</sup> Քարթլիում՝ Խանդիսի, Դավաթի. Կախեթում՝ Սախտենիսի, Նաթխանցենի և այլն:

Հայաստանյայց Եկեղեցու կանոնական իրավասության ներքո գործած եկեղեցիներ, անկախ գերիշխող քաղաքական հանգամանքներից, անընդմեջ կառուցվում էին երկրամասի ողջ պատմության ընթացքում՝ ընդհուպ մինչև ԺԹ դարը:

Թ դարից սկսած քաղկեդոնականություն ընդունած և իրենց տիրույթների թեմերը վրաց կաթողիկոսի եկեղեցական իրավասության տակ դրած Տայքի Բագրատունիների իշխանական վերնախավի քաղաքական ազդեցության ոլորտում գտնված Ջավախքում պետական հովանավորությամբ կառուցվել են նաև բյուզանդաժես տաճարներ և եկեղեցիներ (Կումուրդոյի Սբ. Համբարձման, Էխթիլայի Սբ. Ստեփանոս, Խորենիայի Երևման Սբ. Խաչ և այլն):

Վրացագրի բնակչության կողմից կառուցված պաշտամունքային վաղազույն կառույցները ԺԳ-ԺԴ դարերից են (Բարալեթ, Կոթելիա, Մուրճախեթ, Վարևան և այլն):

ԺԹ դարում Ջավախքի բազմաթիվ բնակավայրերը (թե՛ հայաբնակ, թե՛ վրացաբնակ) համարվել են նորաշեն եկեղեցիներով, իսկ Ախալքալաքում կառուցվել էր նաև ռուսական եկեղեցի:

ԺԴ-ԺԵ դարերով թվագրվող եկեղեցիներ Ջավախքում գրեթե չկան, մինչդեռ հատկապես վիճագրական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում երկրամասի բնակչության ճնշող մեծամասնությունը առաքելադավան հայեր էին: Այս երևույթը հուշում է, որ ԺԳ-ԺԴ դարերից ի վեր, հաճախ փոխանակ նոր եկեղեցիներ կառուցելու, հայերը առաքելական ծիսակարգով կրկին օծել են երկու-երեք դար առաջ քաղկեդոնականացած վերնախավից և նրանց հետևած բնակչությունից ժառանգված եկեղեցիները: Ասվածի ակնառու օրինակներից են Կումուրդոյի Սբ. Համբարձման, Էխթիլայի Սբ. Ստեփանոս, Աբուլի Սբ. Հարություն և այլն բազմաթիվ եկեղեցիները, որոնց շուրջն առկա են ԺԴ-ԺԶ դդ. թվագրվող հայոց գերեզմանոցներ<sup>6</sup>:

<sup>6</sup> Հատկանշական է, որ Ջավախքի հայ-քաղկեդոնական եկեղեցիները (ինչպես և Տայքում) ծիսակարգից թելադրված ճարտարապետական առանձին դրվագներում ունեն այնպիսի հատկանիշեր, որոնք հատուկ չեն և բնավ չեն հանդիպում Վրաստանի տարածքում պահպանված բյուզանդաժես վրացական եկեղեցիներում: Մինչդեռ այդպիսիք բնորոշիչ և նույնական են հայ-առաքելական եկեղեցաշինական կանոններին: Օրինակ, եկեղեցու բարձր թեմը (նկատի ունենք խորանի ընդգծված բարձրությունը սրահի հատակի մակարդակի համեմատ), եկեղեցու ներսում թաղումների բացակայությունը և, ընդհակառակը, եկեղեցու շուրջ իրար մոտ կատարված թաղումները: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծիսակարգը խստորեն արգելում էր օծված եկեղեցու մեջ կատարել նախապես չսրբադասված անձանց թաղումներ: Հակառակ պարագայում եկեղեցին վերածվում էր պարզ տապանատուն-դամբարանի՝ առանց պատարագ մատուցելու իրավունքի: Հայ-առաքելական եկեղեցիներում հանգուցյալին ամփոփվում էին օծված աղոթասրահից դուրս՝ գավթում (եթե այն կա) կամ պարզապես եկեղեցամերձ բակում:

Հայ-քաղկեդոնականների կառուցած և առնվազն ԺԵ դարից առաքելական մվիրապետության հովվության ներքո անցած եկեղեցիները, որոնք ԺԸ դարի երկրորդ կեսից մեծամասամբ ամայացել էին հայ ազգաբնակչության զանգվածային գերեվարության և տեղահանության պատճառով, 1830-ական թվականներին վերստին օծվել են և գործել որպես հայ-առաքելական ծխական եկեղեցիներ:

Ջավախքի հայության կողմից միջնադարյան առաքելածես և հայ-քաղկեդոնական եկեղեցիների վերաբացման իրողությունն արդեն 1850-ական թվականներին առաջ էր բերել ուղղափառ եկեղեցու հովվապետների դժգոհությունը: Վերջիններս նույնիսկ ստորագրահավաքներով տեղաբնակ հայերին ստիպեցին հրաժարվել իրենց գյուղական եկեղեցիների նկատմամբ իրավունքից: Վրաց հոգևորականության այդօրինակ ոտնձգությունները լավազույնս արտացոլվել և մերկացվել են, օրինակ, 1853 թ. Ախալցխայի հոգևոր կառավարությունից Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիային հղված հայտարարության մեջ. «...հայազգի գիղական ժողովուրդը ի 1830 ամի ի գաղթելն ի Կարնոյ նահանգէ յԱխալցխոյ նահանգ ի գաւառին Ախալքալակու և Ծալկայու յաւերակ գիւղօրայս հրամանաւ հօօր տէրութեան ռուսաց, ուրանօր գտանէին յոմանս գիւղօրայս քայքայեալ հոյակապ եկեղեցիք, և թէ յումմէ՞ էին կառուցեալ այնոքիկ և որոյ ազգի պատկանէին չէր յայտ, թէ և յոմանս ի նոսա գտանէին արձանագրութիւնք ի յոյն և ի վրաց լեզու, ...ուստի ի յայնժամեան գլխատր կառավարչէն յայսկոյս Կովկասու նորին լուսափայլութիւն գրաֆէն Երևանայ կնեազ Պասկէկէն Վարչաւոյ թոյլատրեցաւ գաղթականացն վերանորոգել զայնոսիկ և առնել եկեղեցի, որք զկնի վերանորոգութեան օծեալ սրբեցան ի նոյն թիւ ի բարձր սրբազան Կարապետ արքեպիսկոպոսէ յայնժամեան վիճակատրէ, և յօրէ յայնմանէ ցարդ են ի ձեռն հայազգի ժողովրդականաց և կատարին ի նոսին զպաշտօն աստուածածառայութեան առանց ինչ արգելանաց: Այժմ գործակատարն Ախալքալակու և Ծալկայու յայտարարութեամբ ի 29 մայիսի ներկայ ամի № 264. յայտնէ ատենիս թէ բարեկարգն յունաց ազգի ելեալ ընդ օգնականի պարոն կառավարչի տեղոյն շրջի ի գիւղօրայս նահանգին և ուր գտանին հոյակապ եկեղեցիք կառուցեալք ի վարուց զկնի տեսանելոյ զայնս և չափման զդրութիւն նոցին առնեն ի գրի, յետ որոյ հրաւիրեն ստիպմամբ զքահանայս և զժողովուրդս տեղեացն ստորագրել ի գրութեան այն, թէ այս եկեղեցին է յունաց, թէ և առեալ է յոմանց միամիտ գիղական ժողովրդոց ստորագրութիւն համաձայն բաղձանաց իւրեանց, բայց

գիտականքն Գիւմրիւրտոյ շիւմաճայնեալ հրա-  
վիրման նորին չեն ստորագրեալ, նոքա այնու յիսա-  
ցեալ և զնացեալ առ պրն կառավարիչն Ախլաբալա-  
կայ ամբաստանեալ են զնոցանէ, որպէս թէ ընդդի-  
մացեալ են նոքա ինքեանց և անպատուեալ: Կառա-  
վարիչն ևս կոչեալ առ ինքն զերևելիս գիտին ար-  
կեալ է ի բանտ զհնգեանն անձինս թողլով անդ զա-  
տուրս երկուս, յորմէ ժողովուրդք նահանգին անկեալ  
են յոյժ յուսահատութեան վասն անմեղութեանց  
խրեանց և անկանելոյն ի բանտ»<sup>7</sup>:

Ի պատասխան իբր հայերի կողմից ապօրինա-  
բար սեփականված եկեղեցիների շուրջ բարձրաց-  
ված աղմուկի՝ տակավին 1854 թ. Վրաստանի էկ-  
զարխի պնդումների, թե. «...եկեղեցեաց եղելոց ի  
գաւառին Ախալցխոյ, որք համարին ուղղափառաց,  
բայց տուեալ են հայոց...»<sup>8</sup>, թեմական կոնսիստո-  
րիան ձգձգվող խնդրո առթիվ 1865 թ. նշել էր. «...վե-  
րոգրեալ եկեղեցիքն, զորս վեճին հոգևոր տեսչու-  
թիւնն յունաց գոլով ոմանք կիսակործանք և այլք  
պառակք խաշանց և գոմք անասնոց ի ձեռս թուրք  
թարաքամայից ըստ կարգադրութեան կնեազ Պաս-  
կկիչ Երևանսկոյ՝ յայնժամեան կառավարիչք Ա-  
խալքալակայ, Խրթուիզայ և Ծալկայի յանձնեալ են  
Կարնոյ քաղաքի հայ գաղթականաց առ ի կատա-  
րիլ անդ զԱստուածապաշտութիւն, առանց յայտնի  
լինելոյ, թէ այնոքիկ եկեղեցիք ի սկզբանէ անտի յա-  
կանէ որում դաւանութեան պատկանին, հայոց՞, թէ  
յունաց, ուստի նորում բարձր սրբազնութիւն Կարա-  
պետ արքեպիսկոպոսն օծեալ զայն ընդ Հայաստա-  
նեայց եկեղեցոյ արարեալ է վասն նոցա եկեղեցի,  
յորս յերեսուն և հինգ ամաց հետէ անարգել ուստի և  
յորոց և իցէ, կատարին ժամերգութիւնք ըստ Հա-  
յաստանեայց դաւանութեան, և բաց յայսօրիկ տե-  
ղեկութեանց, թէ այնոքիկ եկեղեցիք ի բազում ժա-  
մանակաց հետէ գտանին ընդ տեսչութեամբ հոգևոր  
իշխանութեան հայոց, վերանորոգեալ են ի հայոց և  
օծեալ ըստ կանոնաց եկեղեցոյն հայոց՝ չունի հո-  
գևորս իշխանութիւն զայլ վկայագիր պատկանելու-  
թեան նոցին հայոց, իսկ հոգևոր տեսչութիւնն յու-  
նաց ըստ ո՞րպիսի վկայագրոց և ապացուցութեանց  
յարուցեալ է զվեճ և ցանկայ իւրացուցանել զայնու-  
սիկ եկեղեցիս չէ յայտնի Ատենիս, ըստ որում եր-  
կիրն այն յորում գտանին նոքին ըստ պատմութեան  
հայոց բաղկացուցանէ զմասն հայոց մի և ըստ այսմ  
անշուշտ մակաբերելի է, թէ եկեղեցիքն այնոքիկ  
պարտին ցաւերումն նոցին լինիլ հայոց...»<sup>9</sup>:

1853 թ. գավառի եկեղեցական հաստատություն-  
ներին զգալի վնաս էր հասցրել երկրամաս ներխու-

ժած օսմանյան բանակը<sup>10</sup>: Այդ է վկայում 1854 թ.  
մարտի 24-ին Ախալցխայի հոգևոր կառավարու-  
թյան կազմած հայտարարագիրը: Օսմանյան բա-  
նակի Ախալցխայի գավառ ներխուժելու հետևան-  
քով կողոպտվել և ավերվել էին 9 գյուղերի<sup>11</sup> ծխա-  
կան եկեղեցիներ. «...կողոպտելոյ բարբարոս զօ-  
րացն օսմանեան ի ժամանակս տալոյ նոցա զպա-  
տերազմ ընդ խաչակիր զօրացն մեծագոր կայսե-  
րութեան ռուսաց քանդեալ զսեղանս և զամենայն  
շինութիւնս այնոցիկ եկեղեցեաց և պատառեալ  
զպատկերս սրբոց արարեալ էին զոմանս ի նոցանէ  
բնակարան երիվարաց...»<sup>12</sup>:

1866 թ. վրաց հոգևորականությունը անհիմն հա-  
վակնոտությամբ կրկին վիճարկման առարկա էր  
դարձրել երկրամասի միջնադարյան մի շարք եկե-  
ղեցիների պատկանելության հարցը: Հիշյալ կա-  
ռույցները վավերագրում խմբավորված են հետևյալ  
կերպ.

1. Վարդիսցիխեի, Յիխեի, Օլղանի, Արուճի, Հո-  
կամի, Լեկնարի, Խուվրիսի եկեղեցիները, որոնք ա-  
վերվել էին թուրքական իշխանությունների կարգա-  
դրությամբ մահմեդականների ձեռքով:

2. Կարանտի, Ալասթուբանի, Բավոյի եկեղեցի-  
ները, որոնք ինքնակամ զբաղեցրել են հայ-կաթոլիկ-  
ները:

3. Աբուլի, Բուռնաշեթի, Խտիլի, Մերենիայի եկե-  
ղեցիները, որոնք զբաղեցրել են հայերը:

4. Ալաստանի եկեղեցին, քանդել են հայ-կաթո-  
լիկները, իսկ շինանյութը օգտագործվել է նոր եկե-  
ղեցու շինարարության համար:

5. Կումուրդոյի եկեղեցին, որը սկզբնապես ավե-  
րել են թուրքերը: Այնուհետև, եկեղեցու արևմտյան  
հատվածը զբաղեցրել են հայերը<sup>13</sup>:

Ջավախքում սակավ են միջնադարյան վանա-  
կան կենտրոնները: Պահպանվածները (Էխթիլա,  
Կառնեթ, Թոքավանք), որոնք կառուցվել են ԺԲ-  
ԺԳ դարերում, բաղկացած են մեկ-երկու եկեղեցի-  
ներից, առավելագույն դեպքում՝ շրջապարսպից:

Հայտնի է, որ արքեպիսկոպոս Կարապետ Բագ-  
րատունին վանական հաստատությունների պակա-  
սը լրացնելու նպատակով տակավին 1842 թ. դիմել էր  
ռուսական իշխանություններին Ախալքալաքի տե-  
ղամասի արքունի կալված Մուխրաշեն ավերակա-  
վայրը գնելու և այնտեղ վանք հիմնելու մտադրու-  
թյամբ: Առաջնորդը հայցը հիմնավորելու համար  
նկատել էր, որ իր գլխավորությամբ գաղթած բնա-

7 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 306, թ. 1:

8 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 306, թ. 31:

9 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 306, թ. 31-32:

10 Դիվանական վավերագրերում պահպանված տեղեկու-  
թյունները ևս մեկ անգամ փաստում են, որ քրիստոնեական  
պաշտամունքային կառույցների պղծումը տեղի էր ունենում  
տարածքի մահմեդական տարրի կամ օսմանյան զինված  
ստորաբաժանումների ձեռքով:

12 Վավերագրում գյուղերի անունները չեն հիշված:

13 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 306, թ. 19, 36, 41:

կիչներն իրենց բնօրրան Կարնո գավառում չորս վանք ունեին, մինչդեռ Ջավախքում կանգուն վանքեր չկային<sup>14</sup>:

Երկրամասում պահպանված եկեղեցական կառույցների հիմնական մասը միանավ հորինվածքով փոքրիկ մատուռներ են: Այդպիսիք առավելապես կառուցվել են բարձրադիր վայրերում՝ բլուրների և լեռների գագաթներին: Օրինակ՝ Գանձայի Սբ. Հովհաննես, Վաչիանի Սբ. Լուսավորիչ, Ախալքալաքի Շգնավոր և այլն:

1990-ական թթ. վերջերից ջավախահայությունը տարբեր բնակավայրերում, առաջնորդվելով բարեպաշտական մոլուկներով, ինքնակամորեն ձեռնամուխ է եղել կիսավեր և ավերված միջնադարյան մի քանի եկեղեցիների նորոգմանը: Այսպես, տեղի ունեցած մի քանի եկեղեցիների «վերանորոգումները» հանգեցրել են հուշարձանների ճարտարապետական նկարագրի զգալի աղավաղմանը: Որքան էլ ազնիվ լինեն նման նախաձեռնությունների հիմքում ընկած կրոնական մոլուկները, այնուամենայնիվ, այդպիսիք բնավ հանդուրժելի չեն: Հարկ է մշտապես նկատի առնել, որ պատմական հուշարձանները վերականգնվում են՝ համաձայն լիազորված գիտական խորհուրդների հաստատումը ստացած նախագծերի, որոնք բացառում են կամայական դրսևորումները: Վրացական մամուլն ըստ ամենայնի շահարկել է վերջին տարիներին երկրամասի որոշ եկեղեցիների կամայական նորոգումների փաստերը՝ խնդրին հանիրավի հաղորդելով քաղաքական անհարկի հնչեղություն<sup>15</sup>:

**Խաչքարեր.** քրիստոնեության տարածման ժամանակներից ի վեր Հայաստանում հարատևորեն կերտվում են խաչի փրկչագործական հավերժությունը խորհրդանշող հուշակոթողներ, սկզբում՝ քառակող կոթողների, այնուհետև՝ խաչքարերի տեսքով: Հարյուրամյակներ շարունակ խաչքարը մարմնավորել է հայի ստեղծագործ էությունը և դրսևորվել իբրև գուտ հայեցի երևույթ: Խաչքարեր արարվում էին պատմական Հայաստանի ողջ տարածքում ամենատարբեր առիթներով:

Ջավախքում խաչքարերը սփռված են գավառի ողջ տարածքով մեկ: Դրանք պահպանվել են գլխավորապես հին գերեզմանատներում, թեև սակավ չեն նաև հետագայում եկեղեցիների պատերի մեջ ագուցված նմուշները: Հանդիպում են նաև մենավոր խաչքարեր, սահմանախաչեր: Ժամանակագրական տեսանկյունից Ջավախքում առկա են գրեթե բոլոր դարաշրջաններին պատկանող խաչքարեր: Հաջորդելով քառակող կոթողներին՝ խաչքարեր

կերտվել են առնվազն Թ դարից սկսած և, անցնելով զարգացման հայտնի բոլոր փուլերը, ստեղծվում են նաև մեր օրերում: Մեծաթիվ են հատկապես Թ-ԺԸ դարերի խաչքարերը: Բարեբախտաբար, դրանց զգալի մասն արձանագիր է, որոշ դեպքերում՝ նաև թվակիր: Գեղարվեստական հարդարանքի տեսանկյունից Ջավախքի խաչքարերը մեծամասամբ ունեն պարզ լուծումներ և որոշակի ուշագրավ ընդհանրություններ՝ Հայաստանի մի շարք բարձրլեռնային շրջանների հնավայրերում պահպանված խաչքարերի հետ: Առավել հաճախակի հանդիպող խորհրդանշական զարդաքանդակներից են խաղողի ողկույզները, վեցթևյան դավթյան աստղը և այլն: Ջավախքի խաչքարերում պատկերաքանդակները հազվագյուտ են: Նմանապես սակավադեպ են հյուսածո զարդանախշերն ու գոտիները: Այսուհանդերձ, դրանց պատմական նշանակությունը շատ կարևոր է, քանի որ բոլոր այդ խաչքարերը հայոց մշակույթի միջնադարյան շրջանի հուշարձաններ են և իրենց գոյությամբ վկայում են համայն Ջավախքի բնակավայրերում հոծ հայության առկայության մասին ողջ միջնադարի ընթացքում:

Մեր օրերում ևս Ջավախքում խաչքարեր են կերտվում, որոնց ոչ սակավ նմուշներ կարելի է տեսնել Ախալքալաքի և բազում գյուղերի գերեզմանատներում: Վերջիններիս թվում կան արվեստի գործեր, որոնք մարմնավորում են ավանդական հիմքի վրա շաղախված ստեղծագործական նոր մտահղացումները:

Ջավախքի խաչքարերին առաջին անգամ հպանցիկ ուշադրություն է դարձվել միայն ԺԺ դարի վերջերին<sup>16</sup>: Խորհրդային տարիներին Թմկաբերդի և Ծունդայի (Քաջատուն) խաչքարերի ուսումնասիրությամբ զբաղվել է վրացի հետազոտող Լ. Դավիլիանիձեն<sup>17</sup>: 1990-ական թթ. մեր կողմից փորձ է արվել առավել ամբողջական ներկայացնելու երկրամասում պահպանված խաչքարերը<sup>18</sup>: Վերջերս Ախալքալաք քաղաքատեղիի տարածքում հայտնաբերված խաչքարերը «քննության» են արժանացել նաև Դ. Բերձենիշվիլու և Դ. Թումանիշվիլու կողմից<sup>19</sup>:

16 **Էփրիկեան Հ. Ս.**, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 65, **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 55, 71:

17 **Давилянцзе Л. С.**, К изучению цундско-тмговских хачкаров (крестов-каменей), Вестник гос. музея Грузии, 1959.

18 **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, Երևան, 1995:

19 **Ներթվեցնիցո Ջ.**, ახალქალაქის ჯავახეთისა, «არტანუჯი», 1998, № 7, էջ 25-27: Դ. Բերձենիշվիլին, դիմելով խաչքարագիտության բնագավառի «գիտակ» Է. Ջանդիերիի օգնությանը, հանգել է այն եզրակացությանը, թե Ախալքալաք քաղաքատեղիում գտնված խաչքարերը այդտեղ են բերվել հայ գաղթականների ձեռքով, քանի որ դրանք հայտնաբերվել են «ԺԺ դարի հնագիտական շերտում» և հետևաբար չէին կարող առնչվել հնավայրի միջնադարյան պատմությանը: Սբ. Խաչ եկեղեցու բակում կանգնեցված (հայտնաբերվել է 1988

14 Մատենադարան, քրթ. 152, վավ. 153:

15 **Նոնաթյե Ն.**, «Բյժոնանես», ՋճՅՅՅՅՅՅՅՅ ՅՅՅՅՅՅՅՅ ՅՅՅՅՅՅՅՅ ՅՅՅՅՅՅՅՅ, «6 նասոնյե», 20.12.2001, № 225:

Հայ-քաղկեդոնական խաչքարեր. Ձավախքի տարածքում ավանդական հորինվածքով խաչքարերից զատ պահպանվել է խաչքարերի յուրօրինակ մի խումբ, որը բնութագրական էր քաղկեդոնականություն ընդունած հայության մշակութային ուրույն դրսևորումներին: Վերոնշյալ խաչքարերը կերտվել են Ժ-ԺԳ դարերում և պահպանվել են, օրինակ, Բավրա, Վաչիան, Սուլդա, Խանդո, Վարևան գյուղերում և այլուր: Դրանք, խաչքարերի հորինվածքային առանցքային լուծումներով հանդերձ, զուրկ են հայկական խաչքարերին հարագատ և ընդհանրական այնպիսի տարրերից, ինչպիսիք են՝ հավերժություն խորհրդանշող վարդապետ, կենաց ծառը, խաչաթևերի գնդաձև և բուսական ավարտները, քանդակագարդ եզրագոտիները և այլն:

**Գերեզմանոցներ.** Ձավախքում գերեզմանոցներ առկա են ինչպես ներկայիս շեն գյուղերում և գյուղատեղիներում, այնպես էլ առանձին վանքերին կից: Ժամանակագրորեն դրանք վերաբերում են պատմության գրեթե բոլոր դարաշրջաններին՝ ըսկսած նախաքրիստոնեական շրջանից մինչև մեր օրերը: Բացի հայոց գերեզմանոցներից, մի շարք հնավայրերում պահպանվել են նաև վրացացած հայ-քաղկեդոնական, վրացական, թուրքական, հունական, հրեական և ռուսական գերեզմանոցներ: Դրանցում պահպանված գերեզմանաքարերը ոճական և հորինվածքային առանձնահատկությունների առումով էապես տարբերվում են միմյանցից: Նկատելի ընդհանրություններ ունեն առաքելական, քաղկեդոնական և կաթոլիկ հայերի գերեզմանոցներում պահպանված տապանաքարերը:

**Տապանաքարեր.** լայն տարածում գտած ուղղանկյունաձև, օրորոցաձև, դագաղաձև տապանաքարերից բացի, Ձավախքում մեծաթիվ են նաև եկեղեցաձև, խոյաձև և ձիակերպ շիրմաքարերը, որոնց ժամանակագրական ընդգրկումը ներառում է վաղ միջնադարից մինչև ԺԹ դարն ընկած ժամանակահատվածը:

**Կամուրջներ.** հակառակ երկրամասի գետառատությանը, Ձավախքում միջնադարյան կամուրջներ գրեթե չեն պահպանվել: Հայտնի են միայն

Փարվանա գետի վրա ԺԹ դարում կառուցված Ղաուրմա գյուղի բազմաթիվ և Գանձայի երկթիչք կամուրջները: Ինժեներական ուշագրավ կառույց է եղել Թմկաբերդի ստորոտում՝ Կուր գետի վրա միջնադարում կառուցված երկթիչք կամուրջը, որից պահպանվել են սոսկ խելերը:

**Ժողովրդական և արտադրական կառույցներ.** բնակելի և հասարակական բնույթի շենքերը Ձավախքում մեծ թիվ են կազմում: Բազմաթիվ գյուղերում ցայժմ պահպանվել են ԺԹ դարում կառուցված բնակելի համալիրներ՝ բաղկացած «հազարաշեն» հորինվածքով գլխատնից, թոնրատնից, մարագից, գոմից և օժանդակ այլ շինություններից: Առանձնապես ուշագրավ են տան շեն լինելը խորհրդանշող բուխարու կամ օջախի քանդակագարդ, երբեմն նաև արձանագիր քարերը: Ճարտարապետական բարձրարվեստ կառույց է Կումուրդյում 1898 թ. Մարտիրոս աղա Վարդանյանի կառուցած և առ այսօր միանգամայն անխաթար պահպանված բնակելի տունը<sup>20</sup>:

Ձավախքում ձիթհաններ եղել են գրեթե բոլոր բնակավայրերում, իսկ ջրաղացներ՝ ջրի բավարար քանակություն և անկում ունեցող վայրերում: Արտադրական այդ կառույցների մեծ մասն ավերվել է խորհրդային տարիներին: Հիմնականում պահպանվել են միակտոր մեծաչափ անվաքարերը: Գեղարվեստական հարդարանքով առանձնանում է Մաթխայի ձիթհանի քարը (ԺԹ դ.), որի վրա պատկերված է ուղտերի քարավան:

**Վիմագրեր.** Ձավախքի վիմագրական նյութի ուսումնասիրության և հրատարակության գործն առաջին անգամ հեղինակել է Մ. Բրոսսեն: Վաստակաշատ գիտնականը կարողացել է իր ժամանակի համար աննախադեպ ճշգրտությամբ վերծանել իր այցելած հնավայրերում պահպանված և նկատած վիմագրերը: Նրա աշխատանքի հատկանշական արժանիքներից է նյութի համալիր ուսումնասիրության սկզբունքը թե՛ հայերեն, թե՛ վրաց մետրոպատա վիմագրերի ընդգրկման շնորհիվ: Միայն այսօրինակ սկզբունքային մոտեցումը կարող է ընձեռել երկրամասի պատմությունը ամբողջական և լիարժեք ուսումնասիրելու հնարավորություն: Ցավոք, Ձավախքի պարագայում գիտությանն ի նպաստ սույն աշխատանքը չկիրառվեց հետագա ուսումնասիրողների կողմից: Ազգությամբ վրացի հեղինակներն անդրադարձան սոսկ վրացալեզու վիմագրերին՝ առանց իսկ ակնարկելու հայերեն վիմագրերի առկայությունը, իսկ հայագի գիտնականները, անդրադառնալով վրաց մետրոպատա

թ., միջնաբերդից) ԺԳ-ԺԴ դարերին առավել հատկանշական գեղաբանական խաչքարը Դ. Բերձենիշվիլին բնորոշել է որպես «թուրքական լծից ռուս հրամանատարության օժանդակությամբ վրաց հողում ապաստան գտած հայերի փրկության խորհրդանշան-կոթող»: Այստեղ մենք գործ ունենք արտառոց այնպիսի երևույթի հետ, երբ միջնադարյան արվեստի հետագոտողն ի վիճակի չէ գանազանել ԺԳ-ԺԴ դդ. խաչքարը ԺԹ դարի խաչքարից, իսկ խաչքարերի՝ «ԺԹ դարի հնագիտական շերտում» հայտնաբերված լինելու մասին եզրակացության մեկնաբանման անգամ ավերորդ է անդրադառնալ:

20 Մանրամասները տես սույն աշխ., էջ 313, 334:





նոր խմբաքանակ<sup>39</sup>: Վրաց մեսրոպատառ արձանագրությունները Ջավախքում հիմնական մասով ժամանակագրորեն ի հայտ են գալիս Թ դարից սկսած՝ հայ ազգաբնակչության մի մասի քաղկեդոնականությունը ընդունելուց հետո<sup>40</sup>: Պատմական Հայաստանի հյուսիսային գավառներում գտնվող հոգևոր կենտրոնների շուրջ ձևավորված հայ-քաղկեդոնական համայնքներում, այդ թվում մաս Բագրատունիների վրացական ճյուղի քաղաքական գերիշխանության ներքո հայտնված Ջավախքում եկեղեցական արարողակարգի պաշտոնական լեզուն արդեն վրացերենն էր:

Սկսած Թ դարից՝ Վիրքի էթնիկական վրացալեզու տարածքից դուրս գտնվող քաղկեդոնականացած Ջավախքում, Տայքում և Կղարջքում) քաղաքական և դավանաբանական թելադրանքով որդեգրված վրացերենով ստեղծվեցին հարուստ և բազմաբովանդակ գրական հուշարձաններ: Հիշյալ երևույթը պայմանավորված էր արդեն Ե դարից ի վեր Հայաստանում գրավոր մշակույթի բազմազան, հարուստ և պատկառելի դպրոցի գոյությանը:

Ի տարբերություն Ջավախքի հայ վիմագրական ժառանգության, որոնց բազում նմուշները (օրինակ՝ Թմկաբերդի և Ախալքալաք քաղաքատեղիի գերեզմանոցներում) անցած տասնամյակների ընթացքում անխնա կերպով ոչնչացվել են, վրաց մեսրոպատառ արձանագրությունների պահպանության վիճակն անհամեմատ բարվոք է<sup>41</sup>:

*Արաբերեն արաբատառ թուրքերեն վիմագրեր.* հակառակ օսմանյան տիրապետության տևական շրջանին՝ երկրամասի արաբերեն կամ թուրքալեզու արաբատառ արձանագրությունները պետք է խիստ սակավաթիվ լինեին: Հիշյալ հանգամանքը վկայում է, որ թուրքական գերիշխանության ժամանակաշրջանում պետական մակարդակով աշխույժ շինարարական գործունեություն չի ծավալվել: Հայտնի են Ախալքալաքի միջնաբերդում կառուցված մզկիթի (ԺԸ դ.) և Էրինջա գյուղի աղբյուրի շինարարական արձանագրությունները:

39 Ի դեպ, նշված վիմագրերից շատերը, ինչպես և սույն աշխատության մեջ առաջին անգամ հրատարակվող վրաց մեսրոպատառ վիմագրերը հայտնաբերվել և գրի են առնվել տակավին 1988 թ.՝ մեր կատարած դաշտային աշխատանքների ժամանակ: Նորագյուտ վիմագրերի արտագրությունները լուսանկարներով հանդերձ, նույն թվականին ներկայացվել են դր.-պրոֆ. Պ. Մուրադյանին՝ վերծանության և հրատարակությանը պատրաստելու ակնկալիքով: Մակայն, վերջինիս չարդարացված անտարբերության պատճառով սույն վիմագրերի՝ տարիներով անտիպ մնալուց հետո դրանց մի մասի առաջին հրատարակության պատիվը վերապահվեց Վ. Միրզաբալային:

40 Ուշագրավ է, որ Ջավախքի վրաց մեսրոպատառ արձանագրություններում երբեմն հանդիպում են առավելապես հայկական միջավայրին հատկանշական անձնանուններ (օրինակ՝ Վարդան, Գայանե, Սարգիս, Հակոբ և այլն):

41 Ջավախք այցելած վրացի հետազոտողները սովոր են հանիրավի մեղադրել «եկվոր հայությանը», որն իբր թե պարբերաբար զբաղվել է երկրամասի «վրացական» միջնադարյան արձանագրությունների միտումնավոր ոչնչացմամբ: Մինչդեռ, այժմ էլ, ջավախահայերը, որոնց մեծավ մասամբ հասու չեն միջնադարյան գրչագրության առանձնահատկությունները, չգանազանելով հորինվածքով իրար ակնբախտեն մման վրաց մեսրոպատառ և մեսրոպայան հայոց գրերը, հաճախ խորապես համոզված են, որ գործ ունեն հայոց վիմագրության նմուշների հետ և վերջիններիս հանդեպ տածում են աներկբա ակնածանք:

## ԱՐՈՒԼ



ԱՐՈՒԼ. գյուղի տեսքը հր-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքի և Աբուլ լեռան միջակայքում, լեռան հարավարևմտյան ստորոտում, շրջկենտրոնից 10 կմ արևելք, ծովի մակերևույթից ունի 1964-1985 մ բարձրություն:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ի՝ Աբուլն ունեցել է 12 տուն բնակիչ և պետական գանձարան մուծել 14.000 ակչե<sup>1</sup> հարկ<sup>2</sup>: Հայտնի է նաև, որ 1705-1706 թթ.՝ տանուտեր Մեհմեդի օրոք, հարկվել է 13.000 ակչե<sup>3</sup>:

1830 թ. Կարնո գավառի Ումուտում<sup>4</sup> գյուղից գաղթած հայերը հաստատվել են այդ ժամանակ հայաթափ ու ավերակ Աբուլ գյուղատեղիում և շենացրել այն:

**Տնտեսություն.** 1860-ական թթ. գյուղում գործել են 2 ջրաղաց և 2 ձիթհան<sup>5</sup>:

1 Ակչեն (ակչա) փոքր արծաթյա դրամ է, դուրուշի 1/120 մասը (տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց Սաֆրաստյան Ա., Երևան, 1961, էջ 352):

2 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 229-230:

3 “ხივდობის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.”, էջ 122:

4 Ումուտումը (այժմ՝ Umudum) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 16 կմ հյուսիս:

5 Сборник материалов для описания Тифлисской губернии (այսուհետև՝ СМОТГ), т. 1, вып. 1, Тифлис, 1870, էջ 31:

Բացի հացաբույսերի մշակումից և անասնապահությունից, արուլցիների գլխավոր զբաղմունքներից էր բրուտագործությունը: Օգտագործելով գյուղից շուրջ 1 կմ հեռու (Աբուլ լեռան ուղղությամբ) գտնվող բարձրորակ կավը՝ արուլցիները պատրաստել են կենցաղային իրեր (կուժ, պուլիկ և այլն)<sup>6</sup>:

**Բնակչություն.** ամբողջ ԺԹ դարի ընթացքում և Ի դարի սկզբին Աբուլի բնակչությունն անընդմեջ աճել է: Բնակչության թվաքանակի նվազումը 1918-ին և հաջորդած տարիներին պայմանավորված է թուրքական բանակի ներխուժմամբ ու գաղթով: Վերջինիս հետևանքով առաջացած սովից ու հիվանդություններից զգալի թվով արուլցիներ են զոհվել: Խորհրդային տարիներին տարագիր գյուղացիները կրկին համախմբվել են հայրենի գյուղում և երկրորդ անգամ շենացրել: Ներկայումս Աբուլի բնակչության թվաքանակը մոտեցել է 1880-ականների ցուցանիշին:

Ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակի փոփոխություններն ըստ հետևյալ տարիների.

6 “Кавказский календарь на 1852 г.”, Тифлис, 1851, էջ 296:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին	1885 <sup>39</sup>	53	363	282	645
1838 <sup>7</sup>		123	128	251	1886 <sup>40</sup>		363	282	645
1840 <sup>8</sup>		112	126	238	1889 <sup>41</sup>		407	330	737
1841 <sup>9</sup>		116	129	245	1890 <sup>42</sup>		410	331	741
1842 <sup>10</sup>		120	131	251	1891 <sup>43</sup>	64	430	354	784
1844 <sup>11</sup>		135	139	274	1892 <sup>44</sup>		443	362	805
1845 <sup>12</sup>		144	145	289	1893 <sup>45</sup>		440	357	797
1847 <sup>12</sup>		152	188	280	1894 <sup>46</sup>		450	375	825
1849 <sup>14</sup>		165	200	365	1897 <sup>47</sup>		475	403	878
1857 <sup>15</sup>		144	200	344	1898 <sup>48</sup>		492	422	914
1860 <sup>16</sup>		152	215	367	1899 <sup>49</sup>	89			914
1861 <sup>17</sup>		211	182	393	1900 <sup>50</sup>		502	427	929
1862 <sup>18</sup>		219	183	402	1901 <sup>51</sup>		505	429	934
1863 <sup>19</sup>		223	193	416	1902 <sup>52</sup>		537	448	985
1864 <sup>20</sup>		228	193	421	1905 <sup>53</sup>		582	491	973
1865 <sup>21</sup>		231	197	428	1908 <sup>54</sup>	103	609	519	1128
1866 <sup>22</sup>	47	231	197	428	1910 <sup>55</sup>		627	533	1160
1867 <sup>23</sup>		236	213	449	1912 <sup>56</sup>		644	562	1206
1868 <sup>24</sup>		232	214	446	1914 <sup>57</sup>		658	577	1235
1869 <sup>25</sup>		241	214	455	1916 <sup>58</sup>		678	580	1258
1870 <sup>26</sup>	47	242	216	458	1918 <sup>59</sup>	128	473	462	930
1871 <sup>27</sup>		239	216	455	1921 <sup>60</sup>		202	198	400
1872 <sup>28</sup>		240	217	457	1968 <sup>61</sup>				1250
1875 <sup>29</sup>		243	216	459	1987 <sup>62</sup>	161			686
1874 <sup>30</sup>				463					
1875 <sup>31</sup>				459					
1876 <sup>32</sup>		245	216	461					
1877 <sup>33</sup>		360	286	646					
1878 <sup>34</sup>		361	287	648					
1880 <sup>35</sup>		361	290	651					
1881 <sup>36</sup>		363	291	654					
1882 <sup>37</sup>		365	289	654					
1883 <sup>38</sup>		360	285	645					

7 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, ք. 7-8:  
 8 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:  
 9 Նույն տեղում, գ. 3802, ք. 63-64:  
 10 Նույն տեղում, գ. 3805, ք. 78:  
 11 Նույն տեղում, գ. 3809, ք. 16:  
 12 Նույն տեղում, գ. 3811, ք. 72-73:  
 13 Նույն տեղում, գ. 3814, ք. 35:  
 14 Նույն տեղում, գ. 3818, ք. 39:  
 15 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:  
 16 Նույն տեղում, գ. 3833, ք. 66:  
 17 Նույն տեղում, գ. 3839, ք. 24:  
 18 Նույն տեղում, գ. 3836, ք. 21:  
 19 Նույն տեղում, գ. 3843, ք. 20-21:  
 20 Նույն տեղում, գ. 3846, ք. 10:  
 21 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-14:  
 22 Նույն տեղում, ք. 74:  
 23 Նույն տեղում, գ. 3851, ք. 22:  
 24 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 25 Նույն տեղում, գ. 3855, ք. 6-7:  
 26 Նույն տեղում, գ. 3857, ք. 19-20:  
 27 Նույն տեղում, գ. 3858, ք. 10:  
 28 Նույն տեղում, գ. 3859, ք. 58:  
 29 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 30 Նույն տեղում, գ. 3864, ք. 28:  
 31 Նույն տեղում, գ. 3866, ք. 21:  
 32 Նույն տեղում, գ. 3868, ք. 30-31:  
 33 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30:  
 34 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 35 Նույն տեղում, գ. 3872, ք. 88:  
 36 Նույն տեղում, գ. 3873, ք. 98:  
 37 Նույն տեղում, գ. 3874, ք. 44:  
 38 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:

Երկրորդ աշխարհամարտին արուցիներից մասնակցել է 132 հոգի, որոնցից զոհվել է 72-ը<sup>63</sup>:

**Դպրոց.** արուցիները հենց սկզբից կրթության հարցում նախանձախնդիր են եղել: Դրա վկայու-

39 Նույն տեղում, գ. 3877, ք. 10:  
 40 Նույն տեղում, գ. 3878, ք. 12:  
 41 Նույն տեղում, գ. 3884, ք. 65:  
 42 Նույն տեղում, գ. 3887, ք. 146:  
 43 Նույն տեղում, գ. 3889, ք. 145: Նույն տարվա համար մեկ այլ աղբյուր գյուղի բնակչության թիվը ցույց է տալիս 708 շունչ («Кавказ», 1891, № 241):  
 44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3891, ք. 117:  
 45 Նույն տեղում, գ. 3895, ք. 121-122:  
 46 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22: Տե՛ս նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 170-171:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 143-144:  
 48 Նույն տեղում, գ. 3897, ք. 165: Լրատվական մեկ այլ հաղորդման համաձայն՝ նույն թվականին գյուղն ունեցել է 441 շունչ («Նոր-Գար», 1898, № 101, էջ 3), որը չի կարող հավաստի համարվել:  
 49 **Мушкетов И.**, Материалы по ахалкалакскому землетрясению 19-ого декабря 1899 г.— «Труды Геологического комитета», Новая серия, вып 1, СПб, 1903, էջ 7:  
 50 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 55:  
 51 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 134-139:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 19-20:  
 53 Նույն տեղում, գ. 3912, ք. 262-263:  
 54 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 55 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 56 Նույն տեղում, գ. 3919, ք. 58-59:  
 57 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 173-174: Համաձայն վիճակագրական մեկ այլ տվյալի՝ 1914 թ. ունեցել է 1448 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», Тифлис, 1914, էջ 82):  
 58 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 20-21:  
 59 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 60 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 2:  
 61 Հայկական սովետական հանրազիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 1, Երևան, 1974, էջ 45:  
 62 Ըստ գյուղխորհրդի մատյանների:  
 63 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 100:

թյունն է արդեն 1837-ին գյուղում խալֆայական տիպի դպրոցի գոյությունը<sup>64</sup>: Ծխական դպրոցն էլ համեմատաբար հին պատմություն ունի, հիմնվել է 1864 թ.: Ծխական դպրոցի գործունեությանը վերաբերող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1837 <sup>65</sup>	խալֆայական	1	12
1864 <sup>66</sup>	արական		
1865 <sup>67</sup>		1	27
1868 <sup>68</sup>		1	30
1870 <sup>69</sup>		1	30
1872 <sup>70</sup>		1	26
1873/74 <sup>71</sup>		1	23
1875 <sup>72</sup>		1	40
1876 <sup>73</sup>		1	23
1877 <sup>74</sup>		1	30
1878 <sup>75</sup>		1	24
1879 <sup>76</sup>		1	24
1880 <sup>77</sup>		1	39
1881 <sup>78</sup>			40
1883 <sup>79</sup>		1	14
1889 <sup>80</sup>		1	30
1891 <sup>81</sup>	չի գործել		
1914/15 <sup>82</sup>	վերաբացվել է		
1917 <sup>83</sup>	գործել է ԿՀԲԸ-ի օժանդակությամբ		

**Սր. Հարություն եկեղեցի.** Ժ-ԺԱ դարերով թվագրվող համակ սրբատաշ, դեղնավուն տուֆից կառուցված միանավ, թաղածածկ հորինվածքով ե-

64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 4077, թ. 20, նաև՝ գ. 3977, թ. 54:

65 Նույն տեղում, գ. 4077, թ. 20:

66 Նույն տեղում, գ. 3977, թ. 54:

67 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 332, թ. 12, ֆ. 355, ց. 1, գ. 279, թ. 8, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:

68 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3977, թ. 54: Դասավանդվում էին հետևյալ առարկաները՝ հայերեն, ռուսերեն, կրոն, հայերեն ընթերցանություն, քերականություն, հայոց պատմություն, եկեղեցական երգ, վայելչագրություն, թվաբանություն, ռուսերեն ընթերցանություն, վայելչագրության մասնավոր թարգմանություն և սուրբ գրքերի պարզաբանություն:

69 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3978, թ. 34:

70 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 332, թ. 12:

71 **Խոսրոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 513:

72 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3983, թ. 17: Ունեցել է նաև նախակրթարան: Ուսուցիչն էր Սեդրակ Հարությունյանցը (ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 43):

73 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51-52:

74 Նույն տեղում, գ. 3869, թ. 31, նաև՝ գ. 3850, թ. 130:

75 Նույն տեղում, գ. 3850, թ. 177:

76 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 7279, թ. 3:

77 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 88:

78 **Խոսրոյան Ս.**, նույն տեղում:

79 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 48-49:

80 Նույն տեղում, գ. 3873, թ. 97:


81 “Кавказ”, 1891, № 241: Դպրոցի փակ լինելու պատճառով արուլցի դպրոցականները հաճախել են Կարսի կամ գյուղի դպրոցը:

82 ՀԱԳ, ֆ. 57, ց. 2, գ. 1039, թ. 31:

83 “Армянский вестник”, 1917, № 35-36, էջ 21 (ԿՀԲԸ = Կովկասի հայոց բարեգործական ընկերություն):



ԱԲՈՒԼ. Սր. Հարություն եկեղեցի, տեսքը հր-ամ-ից, հս-ամ-ից, նախասրահը հր-ամ-ից



ԱՐՈՒԼ. Սր. Հարություն եկեղեցի, ներքին տեսքը դեպի ալ և հատակագիծը

կեղեցին (արտաքին չափերն են՝ 11,85 x 6,50 մ), ամենայն հավանականությամբ, ի սկզբանե եղել է բյուզանդածես:

Հայտնի չէ, թե քանի դար է հիշյալ եկեղեցին գործել որպես բյուզանդածես, բայց շուրջը տարածված ԺԵ-ԺԷ դարերին վերաբերող հայկական գերեզմանոցը վկայում է, որ առնվազն այդ շրջանից այն արդեն գործել է որպես հայ-առաքելական (քնականաբար, մաս օժված է եղել հայոց եկեղեցու ծեսով)<sup>84</sup>: Նորաբնակները, գտնվելով նյութական սուղ կացության մեջ, նպատակահարմար են համարել հոգևոր իշխանության բյուլտվությամբ օժել տեղում կանգուն մնացած հին եկեղեցին: ԺԹ դարի 30-ական թվականներին, երբ եկեղեցին օժվել է Սր. Հարություն անվամբ, ներսում՝ հյուսիսային պատի մեջ, ավելացվել է մկրտարանի ավազանը, իսկ հանգուցյալներն ամփոփվել են եկեղեցու շուրջ տարածված միջնադարյան գերեզմանոցում: Ի դեպ, այդտեղ պահպանվել են բնիկներից մնացած նյութական մշակույթի հետքեր, քառակող կոթողների, խաչքարերի պատվանդաններ և խոյածև տապանաքարեր:

Արևմտյան ճակատին, բարձր դիրքով, գրեթե քիվի տակ պահպանվել է վրաց մեսրոպատառ, երկտող հակիրճ արձանագրություն.

ՃԿ ԿՆ | ԿԴ ԿԴ ԼՆԻ ԼՔՆ

Ջ(շար)օ յ(րօ)ն(ճե)օ. | յ(րօ)ն(ճե) օ Յ(ջօ՞ջօ-լլ)յ ց(յ)Ն(ս)ն ց(ալա)ճ(ո)Ն(օ).

Թարգմ. *Խաչ Քրիստոսի: Քրիստոս ողորմիր Գուզան քարագործներին:*

Հրատ. **Brosset M.**, Mélanges Asiatique, II, էջ 344: **Կալոս-ճրճե յ.** Նասեթորոս Մասալա V, “օջերօ”, 1891, № 239: **Րօսոմօ Մ.**, մշվ. աշխ., էջ 29: **Գոսկարօ՞ճիլլօ յ.** մշվ. աշխ., էջ 122: **Յերձե՞նօ՞ճիլլօ Ն.** մշվ. աշխ., էջ 108: **Նօլօջօջօ յ.** Մրձալօլօթօջօ, VII, տօլլօլօ, էջ 170: “Ջօջօջօթօ. օնճօրօ-յլլ-նյւրօտօմօլլօջրյւլլօ յՆՅձկօլլօլլօ”, տօլլօլօ, 2000, էջ 48: Տարբերակում. Բրոսսե՝ ԿԴ ԿԴ ԼՆԻՆԻ; Կալիստրատ՝ Ջջարօ; ց(յ)Ն(ս)ն ց(ալա)ճ(ո)Նօ փոխարեն՝ յճրօնօ յերճե; Ի. Ռոստոմաշվիլի՝ ԼՔՆԻՆ՝ արտանկարի վրիպակ է, պետք է լինի՝ ԼՆԻՆԻ; ցալաճօնօ; Վ. Ֆրսկարիշվիլին՝ ԼՆԻՆԻ; ցալաճօնօ:


Ճանօր. Կալիստրատը յերճե տառակապակցությունը թեականորեն վերականգնում է յշրճե (Գուրանտե) կամ (Գուրանոլիստ) յշրճելլօ: Ն. Բերձենիշվիլին որոշ վերապահությամբ կրկնել է նախորդ հրատարակիչներին՝ արձանագրությունը թվագրելով ԺԱ-ԺԲ դարերով: Վ. Ֆրսկարիշվիլին անտեսել է Մ. Բրոսսեի ներկայացրած վիճակի առաջին հրատարակությունը: Վ. Սիլոգավան, հիմք ընդունելով արձանագրության ոճական առանձնահատկությունները, այն վերագրել է ԺԲ դարին:

**Սր. Աստվածածին եկեղեցի.** Սր. Հարությունը՝ որպես ծխական եկեղեցի, գործել է ավելի քան կես դար, սակայն 1870-ականների վերջերին զգացվել է նոր, ավելի ընդարձակ եկեղեցի կառուցելու անհրա-

84 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:




ԱՐՈՒՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հր-ամ-ից



ԱՐՈՒՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը

Ժեշտությունը: Բազմաձախս նոր եկեղեցու կառուցումը սկսվել է 1884-ին. «Գիւղացիք պատրաստում են շինել նոր եկեղեցի, որի հիմն օժեց ս. Առաջնորդը»<sup>85</sup>: Սբ. Աստվածածնի անվամբ օծված նորաշեն եկեղեցին, ինչպես և հինը, կառուցված է սրբատաշ տուֆով: Այն ընդարձակ կառույց է (20,2 x 10,4 մ), եռանավ հորինվածքով, ավանդատներով, երկու զույգ սյուներով, արևմտյան ճակտոնի զագաթին՝ զանգակատնով (քանդվել է կայծակի հարվածից):

**Դամբարաններ.** Աբուլի արևմտյան կողմում՝ ճանապարհի հարավային եզրին, պահպանվել են



ԱՐՈՒՆ. Կիկլոսյան բերդի հատակագիծը (արտատպված՝ Դ. Բերձենիշվիլու աշխատությունից)

ժայռափոր գերեզմաններ (ավելի ճիշտ՝ դամբարաններ), որոնք, ամենայն հավանականությամբ, վերաբերում են նախաքրիստոնեական շրջանին:

85 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:



ԱՐՈՒԼ. ժայռափոր գերեզմաններ

ԱՐՈՒԼ. եկեղեցու և գերեզմանոցի մնացորդներ գյուղից 1,5 կմ հս-ամ զտնվող Խարաբա գյուղատեղիի տարածքում



*Աբուլ. խոյածև տապանաքարեր գյուղից 1,5 կմ հս-ամ գտնվող Խարաքա գյուղատեղիի գերեզմանոցում*

Գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք մ.թ.ա. Գ-Բ հազ. թվագրվող դամբարանադաշտն է:

**Խարաքա գյուղատեղի.** Աբուլի շրջակայքում Խարաքա անունով երկու հին գյուղատեղիներ կան: Մեկը տարածվում է գյուղի հարավային եզ-

րին, մյուսը՝ գյուղից 1,5 կմ հյուսիս-արևմուտք: Վերջինում պահպանվել են հիմնավեր եկեղեցու առանձին սրբատաշ քարեր, խոյածև տապանաքարերով և կոթողների խաչազարդ պատվանդաններով գերեզմանոց:



### ԱԶԱՎՐԵԹ



ԱԶԱՎՐԵԹ. տեսարան գյուղի կենտրոնական թաղամասից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 19 կմ հյուսիս, ծ. ս. 1840-1940 մ բարձրության վրա, համանուն վտակի երկու ափերին:

**Անվան ծագումը.** ստուգաբանվում է որպես «գրաստների երկիր»<sup>1</sup>:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. թուրքական կառավարության կազմած հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 6 տուն, հարկվել է 25.000 ալչե<sup>2</sup>:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները գաղթել են Էրզրում թաղաքից, համանուն գավառի Ղարակեպակ<sup>3</sup>, Շիփեկ<sup>4</sup> գյուղերից և Սեբաստիայից<sup>5</sup>:

**Վիճակագրություն.** Ջավախքի բազմամարդ գյուղերից մեկն է: Հայաթափ գյուղատեղիում բարձրհայքի վերաբնակիչների՝ գյուղում հաստատվելու պահից նեթ Ազավրեթն ունեցել է համե-

մատաբար սովոր բնակչություն, որը պարզորոշ նկատվում է ստորև բերվող վիճակագրական տվյալներ պարունակող աղյուսակից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>6</sup>		185	186	371
1841 <sup>7</sup>		247	200	447
1842 <sup>8</sup>		218	175	393
1844 <sup>9</sup>		235	193	426
1845 <sup>10</sup>		250	209	459
1847 <sup>11</sup>		270	230	500
1849 <sup>12</sup>		284		
1853 <sup>13</sup>		267	250	517
1854 <sup>14</sup>		269	254	523
1855 <sup>15</sup>		301	252	553
1857 <sup>16</sup>		322	281	603

6 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:

7 Նույն տեղում, գ. 3802, ք. 67:

8 Նույն տեղում, գ. 3805, ք. 78-79:

9 Նույն տեղում, գ. 3809, ք. 16-17:

10 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:

11 Նույն տեղում, գ. 3814, ք. 35-36:

12 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:

13 Նույն տեղում, գ. 2743, ք. 37-38:

14 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

15 Նույն տեղում, գ. 3826, ք. 46-47:

16 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:

1 **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 30:

2 “Զարթոնքի շրջանի շրջանի շրջանի շրջանի”, էջ 203-204:

3 Ղարակեպակը (Ղարագյոթեկ, այժմ՝ Karagöbek) հայաբնակ գյուղ էր՝ Կարինից (Էրզրում) 29 կմ հյուսիս-արևելք:

4 Շիփեկը (Շինետ, այժմ՝ Akbaba) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) թաղաքից 38 կմ հյուսիս-արևելք, Թորթումից 9 կմ հարավ-արևմուտք:

5 «Հայաստանի աշխատավորուհի», 1984, № 1:

1860 <sup>17</sup>	64	331	297	628
1861 <sup>18</sup>	56	339	298	637
1862 <sup>19</sup>	56	348	308	656
1863 <sup>20</sup>	66	359	316	675
1864 <sup>21</sup>		575	331	906
1866 <sup>22</sup>	66	558	326	884
1867 <sup>23</sup>		585	353	938
1868 <sup>24</sup>		591	367	958
1869 <sup>25</sup>		610	385	995
1870 <sup>26</sup>	66	626	396	1022
1871 <sup>27</sup>		638	409	1047
1872 <sup>28</sup>		657	409	1066
1873 <sup>29</sup>		656	426	1076
1874 <sup>30</sup>				1096
1875 <sup>31</sup>	84			1065
1876 <sup>32</sup>		663	441	1104
1877 <sup>33</sup>		678	484	1162
1878 <sup>34</sup>		694	490	1184
1880 <sup>35</sup>		738	523	1261
1881 <sup>36</sup>		748	548	1296
1882 <sup>37</sup>		755	567	1322
1884 <sup>38</sup>	80			
1885 <sup>39</sup>		777	597	1374
1886 <sup>40</sup>				1146
1887 <sup>41</sup>		850	660	1510
1889 <sup>42</sup>		868	675	1543
1890 <sup>43</sup>		874	691	1565
1891 <sup>44</sup>		803	709	1512
1892 <sup>45</sup>		827	734	1561
1893 <sup>46</sup>	110	828	728	1556
1894 <sup>47</sup>		843	752	1595

17 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:  
 18 Նույն տեղում, գ. 3839, ք. 24-25:  
 19 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:  
 20 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 21 Նույն տեղում, գ. 3846, ք. 9:  
 22 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 23 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 24 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:  
 25 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 26 Նույն տեղում, գ. 3857, ք. 20:  
 27 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:  
 28 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58, 61-62, մակ.՝ ֆ. 355, ց. 1, գ. 332, ք. 10, 12, 28:  
 29 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, ք. 71-72:  
 30 Նույն տեղում, գ. 3864, ք. 28-29:  
 31 Նույն տեղում, գ. 3866, ք. 21-22:  
 32 Նույն տեղում, գ. 3868, ք. 30-31: «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 33 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 126, մակ.՝ գ. 3869, ք. 29-30:  
 34 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 35 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:  
 36 Նույն տեղում, գ. 3873, ք. 98-99, 101-102:  
 37 Նույն տեղում, գ. 3874, ք. 44-45:  
 38 «Արձագանք», 1885, № 3, էջ 44:  
 39 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 11, 15, 80, 86-87:  
 40 «Кавказский календарь на 1894 г.», Тифлис, 1893, էջ 153:  
 41 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, ք. 41-42:  
 42 Նույն տեղում, գ. 3884, ք. 66-67:  
 43 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:  
 44 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:  
 45 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:  
 46 Նույն տեղում, գ. 3895, ք. 43-44: Տե՛ս մակ.՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 794:  
 47 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 22, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 172-173:

1897 <sup>48</sup>		932	810	1742
1898 <sup>49</sup>		968	848	1816
1899 <sup>50</sup>		934	798	1732
1900 <sup>51</sup>		964	824	1788
1901 <sup>52</sup>		988	831	1819
1902 <sup>53</sup>		1007	832	1839
1905 <sup>54</sup>		1074	892	1966
1908 <sup>55</sup>	136	1084	900	1984
1910 <sup>56</sup>		1098	936	2034
1912 <sup>57</sup>		1136	992	2128
1914 <sup>58</sup>		1162	994	2156
1916 <sup>59</sup>		1184	1017	2201
1921 <sup>60</sup>		210	190	400
1965 <sup>61</sup>				1150
1987 <sup>62</sup>	367			1662

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 300 ազավրեքցիներից 116-ը զոհվել է<sup>63</sup>:

**Առողջապահություն.** 2005 թ. սեպտեմբերի 10-ին ՀՕՄ-ի Ջավախքի օժանդակության ծրագրի հանձնախմբի նախաձեռնությամբ գյուղում բացվել է նոր բուժկետ:

**Գպրոց.** հիմնադրվել է 1863 թ.: Հաստատության հետագա տարիների գործունեությունը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1863 <sup>64</sup>	հիմնադրվել է		
1865 <sup>65</sup>		1	21
1868 <sup>66</sup>		1	27
1872 <sup>67</sup>		1	41
1876 <sup>68</sup>		1	20
1877 <sup>69</sup>		1	20

48 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 145-146:  
 49 Նույն տեղում, գ. 3897, ք. 167:  
 50 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 51 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 52 Նույն տեղում, գ. 3906, ք. 69:  
 53 Նույն տեղում, գ. 3907, ք. 21-22:  
 54 Նույն տեղում, գ. 3912, ք. 264-265:  
 55 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 56 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 136-137:  
 57 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 58 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 175-176: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 1740 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 84).  
 59 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 22-23:  
 60 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 61 ՀՄՀ, հ. 1, էջ 95:  
 62 Ըստ գյուլխորհրդի մատյանների:  
 63 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3977, ք. 56:  
 65 Նույն տեղում, գ. 3848, ք. 2:  
 66 Նույն տեղում, գ. 3977, ք. 56: 1868 թ. դպրոցն ուներ 5 հուզուց բաղկացած հոգաբարձություն: Դասավանդվում էին հայերեն, ռուսերեն, կրոն, հայերեն ընթերցանություն, քերականություն, հայոց պատմություն, եկեղեցական երգ, վայելչագրություն, թվաբանություն, ռուսերեն ընթերցանություն ու վայելչագրություն, մասնավոր թարգմանություն, կրոնական գրքերի մեկնություն:  
 67 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58, 61-62:  
 68 Նույն տեղում, գ. 3850, ք. 52:  
 69 Նույն տեղում, ք. 130:





ԱԶԱՎՐԵԹ. Սր. Մատթեոս (Մարկոս ավետարանիչ) եկեղեցու տեսքը ալ-ից, ալ-ից բացված լուսամուտը և սյունասրահը

ԱԶԱՎՐԵԹ. Սր. Մատթեոս (Մարկոս ավետարանիչ) եկեղեցու ատամնաշար քիվագոտիով սյունասրահը ալ-ից, որմնախոյակ և հատված հս-ամ անկյանը հարող որմնակամարաշարից





ԱԶԱՎՐԵԹ. Սր. Մեսրոպ քարզմանիչ եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հր-ալ-ից, հր ճակատից բացված միակ մուտքը և 1868 թ. շինարարական արձանագրությունը

**Սր. Մեսրոպ քարզմանիչ եկեղեցի.** կառուցվել է 1868 թ.: Արևմտյան ճակտոնի գագաթին ունի կրրկնահարկ զանգակատուն: 1885 թ. ականատեսը նշել է. «...ունին մի եկեղեցի հոյակապ, սրբատաշ քարով, բայց փայտածածկ»<sup>78</sup>: Տուժել է 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից<sup>79</sup>:

Ներկայումս եկեղեցին կանգուն է և բարեկարգ:

Միակ հարավային ճակատից բացված մուտքի բարավորին քառասող փորագրվածք.

Ս. ՄԵՍՐՈՎԲ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵԿԵՂԵՑԻՍ | ՀԱՅՈՑ ԿԱՌՈՒՑԱԻ ԱՐԴԵԱՍ(Բ)Ք ԵՒ | ԾԱԽԻԻՔ ՀԱՍԱՅՆ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԱԶԱԻԲԵԹ ԳԵՂՁ | ԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1868. ԻՍԿ ՀԱ(ՅՈՑ) ՈՅԺԶ:

Հրատ. առաջին անգամ:

**Գերեզմանոց.** տարածվում է գյուղի հյուսիսարևելյան եզրին: Տեղում պահպանվել են ԺՁ-ի դա-

րերին բնորոշ ուղղանկյունաձև, օրորոցաձև և ձիակերպ տապանաքարեր:

**Բնակելի տուն.** Ազավրեթում պահպանվում է 1872 թ. բովխարի ունեցող Ժորա Սալմաձորցյանի հայրական տունը:

**«Թեթրով» գյուղատեղի.** գյուղից 4 կմ հյուսիսարևմուտք «Թեթրով» միջնադարյան գյուղատեղիի և եկեղեցու ավերակներն են:



ԱԶԱՎՐԵԹ. եկեղեցու ավերակ Թեթրով գյուղատեղիում

78 «Արձագանք», 1885, № 3, էջ 44:  
79 **Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 24:

ԱԼԱԹՈՒՄԱՆ



ԱԼԱԹՈՒՄԱՆ. գյուղի ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 20 կմ հյուսիս, ծ. ս. 1760-1790 մ բարձրությամբ հարավարևմտահայաց, մեղմաթեք լեռնալանջին: Գյուղը երկու թաղերի է բաժանում Ախալքալաք-Տաբաձորը խճուղին:

**Պատմություն.** 1595 թ. Ալախուբան անվանումով հայտնի այս գյուղն ունեցել է 14 տուն և հարկվել 14.000 ալչե<sup>1</sup>: Դարձյալ Ալախուբան անվամբ գյուղից 1718-1719 թթ. տանուտեր Մեհմեդ Իբրահիմի օրոք հարկվել է 26.000 ալչե<sup>2</sup>:

**Բնակչություն.** Ալաթումանի ներկայիս բնակիչների նախնիները 1829-1830 թթ. փոխադրվել են Կարնո նահանգի համանուն գավառի Գաղտառիձ<sup>3</sup> գյուղից:

**Վիճակագրություն.** դիվանական վավերագրերը վկայում են, որ գյուղում հաստատվելուց ի վեր բնակչության թվաքանակն անընդմեջ աճել է: Վերջինս ակնառու երևում է ստորև բերվող աղյուսակից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>4</sup>		65	65	130
1841 <sup>5</sup>		69	70	139
1842 <sup>6</sup>		75	78	153
1844 <sup>7</sup>		88	89	177
1845 <sup>8</sup>		82	79	161
1847 <sup>9</sup>		82	80	162
1849 <sup>10</sup>		86	85	171
1853 <sup>11</sup>		94	82	176
1857 <sup>12</sup>		90	102	192
1860 <sup>13</sup>	16	101	104	205
1861 <sup>14</sup>	16	105	88	193
1862 <sup>15</sup>		103	91	194
1863 <sup>16</sup>		110	94	204
1864 <sup>17</sup>	16	113	97	210

4 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:

5 Նույն տեղում, գ. 3802, ք. 63-64:

6 Նույն տեղում, գ. 3805, ք. 78-79:

7 Նույն տեղում, գ. 3809, ք. 16-17:

8 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:

9 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:

10 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:

11 Նույն տեղում, գ. 2743, ք. 37-38:

12 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:

13 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:

14 Նույն տեղում, գ. 3839, ք. 24-25:

15 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:

16 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:

17 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:

1 “Զյրջոսեթանոս Յոլաօյտոս ճոճո ճոճո”, էջ 199-200:

2 “Խոջճոսոս յոլաօյտոս ճոճո ճոճո 1694-1732 ՎՎ.”, էջ 157:

3 Մեծ և Փոքր Գաղտառիձները (այժմ` Büyük և Küçük Geçit) միմյանցից 3 կմ հեռու հայաբնակ գյուղեր էին` Կարին (Էրզրում) քաղաքից 40 կմ արևմուտք:





1918 <sup>56</sup>	70	279	280	553
1921 <sup>57</sup>		80	70	160
1969 <sup>58</sup>				1120
1987 <sup>59</sup>	185			907

Հայրենական մեծ պատերազմին մասնակցած 115 ալաթումանցիներից 45-ը զոհվել է<sup>60</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գոյությունը վավերագրերում փաստված է 1865 թ-ից.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>61</sup>		1	23
1874 <sup>62</sup>		1	20
1880 <sup>63</sup>		1	21
1881 <sup>64</sup>		1	18

**Սբ. Երրորդություն եկեղեցի.** հիմնվել է 1830-ականներին<sup>65</sup>: Եղել է քարաշեն, փայտածածկ կառույց<sup>66</sup>: Հայտնի է, որ 1856 թ. եկեղեցին «...խախտեալ գոլով, յոյժ կարծիք տան փլանելոյ, ուստի

հայազգի հասարակ ժողովրդականք կամին վերանորոգել ծախսիք իւրեանց...»<sup>67</sup>: Նախատեսված աշխատանքները, իրոք, կատարվել են:

Եկեղեցու շենքը տուժել է 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից<sup>68</sup>: Ներկայումս կանգուն է: Քարաշեն, փայտածածկ, արևմտյան ճակատում միակ մուտքով, նույն ճակտոնի զագաթին զանգակատնով ուղղանկյունաձև կառույց է: Բացի արևմտյան ճակատից և լուսամուտներից, որոնք սրբատաշ քարից են, մնացած հատվածները անմշակ քարից են:

Եկեղեցու մուտքից վեր՝

**ԱՐԳԵԱՍԲ ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԳԼԽ(ԱԻՈՐ)Ը (Յ)ԱՆՈՒՆ Ս(ՈՒՐ)Բ ՅԵՐՐ(ՈՐ-ԴՈՒԹ)Ե(Ա)Ն ԱԼ(Ա)Թ(Ո)ԻՍ(Ա)Ն ԳԵՂՁ. 1857 ՇԻՆԵՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ ՅԵԿԵՂԵՑԻՍ:**

Հրատ. առաջին անգամ:

56 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, թ. 1-4:

57 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 1:

58 ՀԱՀ, հ. 1, էջ 134:

59 Ըստ գյուղխորհրդի մատյանների:

60 **Գալթյան Ա.**, Ջավախք, էջ 101:

61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:

62 Նույն տեղում, գ. 3864, թ. 27-28:

63 Նույն տեղում, գ. 3872, թ. 88-89:

64 Նույն տեղում, գ. 3873, թ. 97-98:

65 Նույն տեղում, գ. 457, թ. 42-67:

66 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

67 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 3436, թ. 8:

68 **Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 22:

ԱԼԱՍՏԱՆ



ԱԼԱՍՏԱՆ. գյուղի տեսքը հս-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 16 կմ հյուսիս-արևմուտք, ծ. մ. 1700-1720 մ բարձրությամբ հարավարևելահայաց լեռան ստորոտի մեղմաթեք փեշին, ջրառատ վայրում:

**Պատմություն.** 1595 թ. Ներքին Ալաստան անվամբ հայտնի գյուղն ունեցել է 7 տուն բնակիչ, և հարկվել 10.999 ակչե<sup>1</sup>: Անայացել և ավերվել է ԺԸ դարում:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները 1929-1830 թթ. փոխադրվել են Կարնո Արծաթի<sup>2</sup> և Թվանջ<sup>3</sup> գյուղերից: Ալաստանաբնակ ազավրեթցի Դարբինյանները ծագում են Ղարակեպակ գյուղից:


**Վիճակագրություն.** տարբեր տարիներին Ալաստանի բնակչության թվաքանակն արտացոլող մեզ հասու վիճակագրական տվյալները սակավաթիվ են: Դրանց համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1870 <sup>4</sup>		95	470	473
1883 <sup>5</sup>				943
1885 <sup>6</sup>				1306
1886 <sup>7</sup>				1226
1886 <sup>7</sup>				1334
1908 <sup>8</sup>	260			1771
1912 <sup>9</sup>				2264
1914 <sup>10</sup>				2355
1915 <sup>11</sup>				2174
1916 <sup>12</sup>				2192
1968 <sup>13</sup>				2125
1987 <sup>14</sup>	360			1380

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 296 ալաստանցիներից 137-ը զոհվել է<sup>15</sup>:

4 СМОТГ, էջ 28:  
 5 “Кавказский календарь на 1885 г.”, Тифлис, 1884, отдел III, էջ 204:  
 6 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:  
 7 “Кавказский календарь на 1894 г.”, էջ 154:  
 8 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 36:  
 9 **Յակոբյան Պ.**, Հրակր ողջնություն, Էջմիածին, 1993, էջ 95:  
 10 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 86:  
 11 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 81:  
 12 Նույն տեղում, Թիֆլիս, 1916, էջ 81:  
 13 ՀՄՀ, հ. 1, էջ 139:  
 14 Ըստ գյուղխորհրդի մատյանների:  
 15 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:

1 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 203:  
 2 Արծաթին (այժմ՝ Yesilyayla) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Երզրում) քաղաքից 15 կմ հյուսիս:  
 3 Թվանջը (այժմ՝ Güzelova) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Երզրում) քաղաքից 13 կմ հյուսիս:



ԱԼԱՍՏԱՆ. հին եկեղեցու տեսքը հր-ից, հր-ամ-ից, հր ճակատից բացված միակ մուտքը և հատակագիծը

**Տնտեսություն.** հայտնի է, որ 1870 թ. գյուղում գործել է 7 ջրղաց<sup>16</sup>:

**Դպրոց.** 1870 թ. մի տեղեկագրի համաձայն՝ Ալաստանում գործել է 2 դպրոց՝ պետական և ծխական<sup>17</sup>: Ծխական դպրոցը տեղակայված է եղել հին եկեղեցում, որը տեղացիներին առ այսօր հայտնի է որպես վարժատուն:

**Եկեղեցի.** թվագրվում է Ժ-ԺԱ դարերով: Ամենայն հավանականությամբ, ի սկզբանե բյուզանդաժես եկեղեցի է եղել, բայց 1830-ականներին հայաբափ գյուղատեղիում հաստատված հայ-կաթոլիկներն այն նորոգել և օժել են որպես հայ-կաթոլիկ եկեղեցի, որը շուրջ քառորդ դար գործել է իբրև ծխական: 1856 թ.<sup>18</sup>, երբ դրանից քիչ արևմուտք հիմնվում է նոր և ավելի ընդարձակ եկեղեցի, հնի փայտե ծածկը մասամբ քանդում են. «...գեկեղեցին Ալաստանու քայքայեալ են հայ կաթոլիկք և զնիւթե-

ղենսն ի գործ եղեալ ի վերայ շինութեան նոր եկեղեցոյ իրեանց...»<sup>19</sup>:

Եկեղեցին այժմ էլ կանգուն է, միայն քայքայված է տանիքը: Որմերը հարուստ են վաղ միջնադարին բնորոշ հավասարաթև խաչաքանդակներով: Կառուցված է սրբատաշ քարով: Արտաքին չափերն են՝ 11,5 x 6,56 մ:

1. Եկեղեցու արևելյան ճակատին, լուսամուտի երկու կողմերում պահպանվել է վրաց մետրոպատառ դժվարըմբռնելի երկու արձանագրություն.

դևղ թղ հակըղոժեհ | ծեղոժղ | փղըհ

ըսը թը ուղձղղղղղ | ճըզղղ | յղղղղ

Թարգմ. Այս ես Նոշելս դրեցի քարը:

Հրատ. **Brosset M.**, Mélanges asiatiques. II, էջ 342: **ՐՕՏՕՄՕՅ II.**, նշվ. աշխ., էջ 31: **ՇԵՂՔՆԵՄՅՕՂՕ Ե.** նշվ. աշխ., էջ 123: **ՅԵՂՔՆԵՄՅՕՂՕ Ե.** նշվ. աշխ., էջ 158: **ՆՕՂՕՂՅՅՅՅՅ Գ.** մրავալ-տաջո, VII, էջ 171: “ჯავახეთი. ისტორიულ-ხელოთ-მოძღვრული გზამკვლევი”, էջ 71:


Տարբերություն. Մ. Բրոսսեն հակըղոժեհ (Նոշել) ձևի փոխարեն ունի՝ ԵՂՄԳԵՄԵՐ (Ռոշել), Ն. Բերձենիշվիլին ունի

16 СМОТГ, էջ 28:

17 Նույն տեղում:

18 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 81:

19 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 3436, ք. 8:



ԱԼԱՍՏԱՆ. մանրամասեր հին եկեղեցուց

Թո՞ղջեման անվանաձևը, սակայն չի բացառում նաև օ՞ղջեման տարբերակը: Ի. Ռոստոմաշվիլին և Վ. Ֆիսկարիշվիլին կրկնել են Բրոսսեին:

Ճանոթ. Ն. Բերձենիշվիլին գտնում է, որ վիմագիրը կերտվել է ԺԳ դ-ից վաղ ընկած շրջանում: Վ. Սիլոգավան այն թվագրում է Ժ-ԺԱ դարերով:

2. Արձանագրություն՝

դկդ ժդ Յիժ Ճևր | ևՃառուճուժիժի

յեյ յե ճ(ս)ն(օ)ձ ճ(ս)ն(յ)օ | ևճօլօսեյձեման.

Թարգմ. Այս ես Դաշիմ Սասուլի որդիս տեղադրեցի:

Հրատ. **Brosset M.**, Mélanges asiatiques. II, էջ 343: **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 31: **Ընթացից** յե, նշվ. աշխ., էջ 123: **Ճեթեյնե՞ջեյլօ ճ.**, նշվ. աշխ., էջ 158: **Նեղօջայ յե.** մրձեյլօտօյօ, VII, էջ 171:

Տարբերություն. Մ. Բրոսսեն ունի՝ ԴՆԴ ժԴ ՃՄԴՄ... ճՆՃՃ-ՆՆՆ ժԴժ: Ի. Ռոստոմաշվիլին և Վ. Ֆիսկարիշվիլին կրկնել են Բրոսսեին: Ն. Բերձենիշվիլին՝ յեյ յե ճՆժ ճՆՅ | ևճօլօսեյձեման: Հապավումները բացելով՝ յեյ յե ճՆձ | ևճօլօսեյձեման(?):


Ճանոթ. Ն. Բերձենիշվիլին գտնում է, որ վիմագիրը կերտվել է ԺԳ դ-ից վաղ ընկած շրջանում: Վ. Սիլոգավան այն թվագրում է Ժ-ԺԱ դարերով:

**Սր. Աստվածամոր եկեղեցի.** հայ-կաթոլիկ Սր. Աստվածամոր եկեղեցին փոքր-ինչ արևմուտք է գյուղամիջի հին եկեղեցուց: Հիմնվել է 1856 թ. «...ժողովրդապետական քարաշեն եկեղեցի յանուն Վերափոխման ամենասուրբ Կուսին Մարիամու, 1856 ամին, ծախսիք ծխականաց»<sup>20</sup>, որը վերակառուցվել է 1863<sup>21</sup> և 1903 թվականներին:

Եկեղեցին ներկայումս գործում է:

20 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 81:

21 «Արձագանք», 1885, № 26, էջ 368: Տե՛ս նաև՝ ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 36:



ԱԼԱՍԱՆ. Սր. Աստվածամոր եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ից, հր ճակատից բացված մուտքը և Կարնո Արծաթի գյուղից փոխադրված ոսկեթել ասեղնագործ սփռոց (1790 թ.)

Արձանագրություն. Սր. Աստվածամոր եկեղեցու հր մուտքի կամարին.

ՌՅԾԲ 1903 | ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս(ՈՒՐԲ) ԱՍՏՎԱԾԱԾՆԻ | ՅԻՇԱՏԱԿ ՊԵՏՐՈՍ ԴՈՒԴՈՒԿՆԻՍՆԻ | ԱԼԱՍԱՆ ԳԻՒԴԻ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ:

Հրատ. առաջին անգամ:

Սր. Աստվածամոր եկեղեցի. ներսում պահվող մասունքներից է ոսկեթել, ասեղնագործ սփռոցը, որի կենտրոնում 9 տողով արձանագրված է.

ՅԻՇԱՏԱԿ Է ԷՐԶՐՈՒՄԻ ԱՐԾԱԹԻ ԳԻՒՂՆ | Ս(ՈՒՐԲ) Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ ԵԿ(Ե)Ղ(Ե)ՅԻ(Ո)ՅՆ, | ՕԳՆՈՒԹԻ(ԻՆ) Ի ԺՈՂՈՎՐԴԵՆԵ. ԱՇԽԱՏՈՒԹ(ԵԱՍ)Բ ՍԱՆԱՍԷԻ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒ | ՅՕՀԱՆԻ Յ(Ո)ՎՍ(Է)ՓԵ(Ա)Ն | ՈՍԼԹ (1790) ԹԻՒՆ:

Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** 1915 թ. գյուղի ծխատեր քահանան էր տեր Սիմեոն Խաչատուրյանը<sup>22</sup>:

**Գերեզմանոց.** տարածվում է եկեղեցու բակում: Այդտեղ ամփոփված են գյուղի ծխատեր քահանաները.

1. Տալանաքար՝

ՅԱՅՍ Է | ՏԱՊԱՆ | ԴԱՄԲԱՐԱՆԻ ԱԻԱԳ ԵՐԷՅ Տ(Է)Ր ՍԻՄՈՎՆԻ ԵՒ ԳԵՐԻՍԱՍՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ. ՈՐ Է ՈՐԴԻ ԱԲՐԱՀԱՄԻ ԶՈՐ | ԵԴԱԻ ՅԱՅՄ ՇԻՐՄԻ | ՈՐ Է Ի ԴՈՒՌՆ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԻ | ՓՈԽՈՒՄՆ ԵՂԵԻ ՕԳՈՍՏՈՍԻ. ՀԱԶԱՐ ՈՒԹ ՀԱՐԻԻՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՕԹԻ:

Հրատ. առաջին անգամ:

22 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 81:



2. Տապանաքար՝  
 ՅԱՅՄՍ ՇԻՐՄԻ | ՀԱՆԳԵԱԲ ՊԵՏՐՈՍ ՄԱԿԱ-  
 ԲԵ(Ա)Ն. | ՈՐ Է ... | ՊԱՇՏՕՆ ԱԹՈՌԱԿ(Ա)ԼԻՆ |  
 ԾԱՌԱ(Յ)ԵՑ ԱՆՎԱԽ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑՈՅՍ:  
 Հրատ. առաջին անգամ:

3. Տապանաքար՝  
 ԱՅՍ Է | ԳԵՐԵՉՄԱՆ | Զ(Ա)Հ(Ա)ՆԱ(Յ)Ի ԴԱ-  
 ԻԱՆՈՒԹԻ(Ի)Ն ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿԻ ԵՒ ԳԵՐԻ-  
 ՄԱՍՏ Տ(Է)Ր ՅԱԿՈԲԻ. | ՈՐ Է ՈՐԴԻ ՍԱՂԱԹԷԼԻ.  
 ՉՈՐ ԵՒ ԵԴԱԲ ՅԱՅՄՍ ՇԻՐՄԻ | 1853. 12/24:  
 Հրատ. առաջին անգամ:

**Ուխտատեղի.** Ալաստանից 700 մ արևմուտք՝  
 Ջուրարեթի անտառներ տանող ճանապարհի եզ-  
 րին, բարձունքի վրա գտնվում է գյուղի ամենա-  
 հայտնի ուխտատեղիներից մեկը:

**Վերին Ալաստան կամ Խարաբա գյուղատեղի.**  
 գյուղից 2,5 կմ հյուսիս-արևմուտք՝ ձորակի հարավ-  
 արևմտահայաց լանջին, պահպանվում են միջնա-  
 դարյան գյուղատեղիի, եկեղեցու և գերեզմանոցի  
 ավերակները: Հնավայրի պատմական անունը մո-  
 ռացոյան է մատնված: Թերևս այն համապա-  
 տասխանում է 1595 թ. կազմված հարկացուցակում  
 հիշատակված Վերին Ալաստան գյուղին, որն այդ  
 թվականին ունեցել է 15 տուն և հարկվել 8.000 ալ-  
 չե<sup>23</sup>: Այժմ հնավայրը տեղացիներին հայտնի է  
 «Խարաբա» անվամբ:



ԱԼԱՍՏԱՆ. հայ-կաթոլիկ հոգևորականների տապանագրեր




ԱԼԱՍՏԱՆ. Վերին Ալաստան գյուղատեղիի ավերակները. կենտրոնում՝ եկեղեցին

**Եկեղեցի.** կոփածո քարերով կառուցված միա-  
 նավ շինություն է (արտաքին չափերն են՝ 8,34x5,31  
 մ): Համեմատաբար լավ է պահպանվել արևմտյան  
 ճակատը: Ըստ հորինվածքային և կառուցողական  
 առանձնահատկությունների քննության՝ եկեղեցին  
 կարելի է թվագրել ԺՉ-ԺԷ դդ.:

23 “Երջուհի Գեորգիանի Գեորգիանի Գեորգիանի”, էջ 196-197:



ԱԼԱՍԱՆ. Վերին Ալաստան գյուղատեղիի եկեղեցու ավերակները. տեսքը հր-ամ-ից, հր ճակատից բացված մուտքը, ներքին տեսքը դեպի ալ և ամ



ԱԼԱՍԱՆ. Վերին Ալաստան գյուղատեղիի եկեղեցու հատակագիծը

Խաչքար. եկեղեցուց 7-8 մ արևմուտք ընկած է 1643 թ. հիշատակագրությամբ գեղաքանդակ խաչքար (90 x 90 x 19 սմ).

ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ ՊԱՐՈՒՆԻԿԻՆ ... | ԹՎ(ԻՆ) ՋՃՂԲ (1643):


Հրատ. **Կարապետյան Մ.**, Ջավախքի խաչքարերը, էջ 12:

**Ղևաթ գյուղատեղի.** ավերակները պահպանվում են Ալաստանից 2 կմ հարավ-արևելք: Երբեմնի գյուղը 1595 թ. ունեցել է 4 տուն բնակիչ և հարկվել 10.000<sup>24</sup>, իսկ 1717-1718 թթ. տանուտեր Հասանի և 1721-1722 թթ. տանուտեր Յուսուփի որդի Աբդուլլահի օրոք՝ 5.000-ական ակչե<sup>25</sup>:

**Օրդան (Օրդան, Ալդան) գյուղատեղի.** տարածվում է գյուղից 4 կմ հյուսիս-արևմուտք՝ Ջուբարեթ

<sup>24</sup> “Երջիսեթանի շեղագրոս ճոցո ճոցոարո”, էջ 205:

<sup>25</sup> “Նոցլոթոս յոցլոթոս յոցլոթոս 1694-1732 ՎՎ.”, էջ 152, 170:



ԱԼԱՍՏԱՆ. խաչքար Վերին Ալաստան գյուղատեղիի եկեղեցու ամ կողմում տարածված գերեզմանոցում

ԱԼԱՍՏԱՆ. խոյածև տապանաքար Վերին Ալաստան գյուղատեղիի գերեզմանոցում

վտակի աջ կողմում: 1595 թ. Օլդանը հիշվում է որպես ռայաներից ազատ և 7.000 ակչե հարկվող գյուղ<sup>26</sup>: Ավելի ուշ՝ 1706-1707 թթ. Մուստաֆա տանուտիրոջ օրոք, գյուղը 11.000 ակչե պետական տուրք է վճարել<sup>27</sup>:

ԺԹ-Ի դդ. վերջի ցարական քարտեզներում գյուղատեղին նշված է Ալդան անունով:

**«Քրքենց խարաբա» գյուղատեղի.** Ալաստանից մոտ 6 կմ հեռու՝ Ջուբարեթ տանող ճանապարհին է գտնվում միջնադարյան այս գյուղատեղին՝ ավերակ եկեղեցու և գերեզմանատան մնացորդներով հանդերձ:

**Այլ գյուղատեղիներ.** Ալաստանի մերձակայքում են գտնվում նաև Բուրաստան և Էրիկլի գյուղատեղիները<sup>28</sup>:

26 “Գեորգիսեթանիս շիլաօյտիս լոցո լաճոտարո”, էջ 207: Ի դեպ, Օսմանյան պետության մեջ ԺՁ դարից ռայա կոչվել է ոչ մահմեդական (քրիստոնյա և ոչ քրիստոնյա) հպատակ ազգաբնակչությունը, որը վճարում էր լրացուցիչ հարկ (գլխահարկ), չուներ քաղաքացիական լայն իրավունքներ, տարագով տարբերվում էր մահմեդականներից, ենթակա էր ամեն տեսակ կամայականության (տե՛ս ՀՄՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 594):

27 “Փոլոստանի յոսթոյտիս ջաճա լաճոտարո 1694-1732 ՎՎ.”, էջ 126:

28 Զեքեյանցի Ե., նշվ. աշխ., էջ 170:



ԱԽԱԼՔԱԼԱՔ



ԱԽԱԼՔԱԼԱՔ. ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** դարեր շարունակ և այժմ էլ Ախալքալաքը, շնորհիվ իր բարենպաստ աշխարհագրական դիրքի, եղել է և է Ջավախքի կենտրոնը բոլոր առումներով (վարչաքաղաքական, տնտեսական, մշակութային և այլն): Դիշտ է, ներկայումս սոսկ համանուն շրջանի կենտրոնն է, բայց դարձյալ մնում է իբրև երկրամասի գլխավոր և ամենամարդաշատ բնակավայրը: Գտնվում է Փարվանա և Քառասնակն (Դրխբուլաղ) գետերի միջև, հրվանդանաձև ձգված սարահարթին, ծ. մ. 1690 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** քաղաքի անվան ստուգաբանությանն անդրադարձել է Վարդան Արևելցին՝ նշելով. «Նոր քաղաք, զոր Վիրք Ախալ-քաղաք ասեն»<sup>1</sup>:

**Պատմություն.** Ախալքալաք բերդաքաղաքի հիմնադրման ժամանակը համարվում է ԺԱ դարի սկիզբը: Հայտնի է, որ վրաց Բագրատ Գ թագավորի օրոք՝ 1008-1012 թթ., կառուցվել են Ախալքալաքի աշտարակներն ու դռները, իսկ Բագրատ Գ-ի օրոք՝ 1044-1047-ին, քաղաքի պարիսպները. «Մա շինեաց գպարիսպն Ախալքալաքի. և զի մայր նորա Մարիամ՝ դուստր էր Սենեքերիմայ Հայոց արքայի...»<sup>2</sup>:

1 Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 101:

2 Ջաանշեր, էջ 112:

Երկու տասնամյակ անց՝ 1064 թ. Ախալքալաքը 100.000-անոց զորքով<sup>3</sup> կործանում է սելջուկ Ալփալանը. «Առաջանալով՝ նա բանակեց Ջավախ կոչվող գավառում և կատաղի մարտ տալով պաշարեց Ախալ քաղաքը, որը և գրոհով գրավեց: Նա անգթորեն սրի քաշեց ողջ քաղաքը՝ տղամարդկանց ու կանանց, բոլոր քահանաներին, վանականներին ու իշխաններին: Ամբողջ քաղաքը արյամբ ողողվեց: Անհամար տղաների ու աղջիկների գերի թլեցին Պարսկաստան, ավար վերցրին ոսկու ու արծաթի, թանկագին քարերի և մարգարիտների անթիվ զանձեր»<sup>4</sup>:

1175 թ., ի թիվս Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառների ու քաղաքների, Ախալքալաքն ավերում է սելջուկ զորապետ Ելտկուզը. «Ի ՌԻԴ գա

3 Մանր ժամանակագրություններ, հ. Բ (այսուհետև՝ ՄԺԲ, համապատասխան էջերով), կազմ.՝ Հակոբյան Վ. Ա., Երևան, 1956, էջ 133 («...և դարձեալ եկն ճն (100.000)-աւ առ զԱխալքալաք...»): Ալփալանի կողմից Ախալքալաքի գրավման մասին վկայություն ունի նաև Սամվել Անեցին. «...Էառ և զԱխալքաղաք» (Մամուլի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 112):

4 Մատթոս Ուռայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 96: Նույն դեպքերի առնչությամբ ունենք նաև հետևյալը. «Ի ՇԺԳ (1064) էառ Ալփալան սուլտանն զԱխալքալաք և զՅանի...» (ՄԺԲ, էջ 502):



ԱՆԱԼՔԱԼԱԶ. քերթի հատակագիծը 1828 թ. (արտատպված՝ *Ушаков Н. ., История военных действий в азиатской Турции в 1828-1829 гг., т. 1, СПб., 1836, գրքից*)

աքաբակ Ելտկուզն և պաշարե զԱնի և քակե բազում եկեղեցիս ի Շիրակ, ընդ նմին աւերե զԱխալքաղաք և զՋաւախեք և առժամայն դառնալով ի Դուին սատակի ինքն...»<sup>5</sup>:

Քաղաքի՝ 1291 թ. հիշատակությանը հանդիպում ենք Անիի վիմափոր եկեղեցու արևմտյան ճակատին 14 տողով փորագրված արձանագրության մեջ<sup>6</sup>:

Հերթական ավերման Ախալքաղաքը ենթարկվել է 1484 թ. մոնղոլ Յաղուբ շահի ձեռքով<sup>7</sup>: Նա ևս բնակիչների մեծ մասին գերի է տարել:

<sup>5</sup> ՄԺԲ, էջ 500: Տե՛ս նաև՝ Ժամանակագրութիւն **Ստեփանոսի Օրբելեանի**, Երևան, 1942, էջ 18:

<sup>6</sup> «Գիվան հայ վիմագրության», պրակ 1, կազմ.՝ **Հ. Ա. Օրբելի**, Երևան, 1966, էջ 68: Ի դեպ, կիսաեղծ արձանագրության ընթեռնելի հատվածի բովանդակությունը («ԿԱՍԱԻՆ» ԱՅ. | ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ԱԹԱՊԱԿ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀԻՆՇԱՀԻ. | ԵՍ ԶՈՐԳԻ ԿԵՆԱՅԿԻՑ | ԻՄ ՍԹԷԷՍ ԿԱՏԱՐԵՅԱԶ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆ[Յ] ՉԵԿԵՂԵՑ[ԻՄ]... ԱՆԷԼՔԱՂԱՔ[ԻՄ]...ԹՈՒԻՆ] :ՉԻ: ՍԱՐԳ[ԻՄ]») թույլ է տալիս կարծելու, թե այն վերաբերում է հիշյալ թվականին Ախալքաղաքում կառուցված հայոց մի եկեղեցու:


<sup>7</sup> **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 72:

1637-ից արդեն բազմիցս ավերված, բայց կրկին շենացած Ախալքաղաքն ընկնում է թուրքական տիրապետության տակ: Սկսվում է քաղաքի և ողջ գավառի քրիստոնյա բնակչության (հայեր և վրացիներ) բռնի և աննախադեպ դավանափոխությունը:

Այդ ծանր իրավիճակը շարունակվում է մինչև ԺԹ դարի սկիզբը, երբ ռուսները Ախալքաղաքը գրավելու մի քանի անհաջող փորձ անելուց հետո, ի վերջո, այն նվաճում են 1828-ին:

Ռուս-թուրքական պատերազմի հետևանքով վերջնականապես ամայացած բերդաքաղաքը նոր բնակիչներն անիմաստ են համարում շենացնել և 1831 թ. նրան կից հարավարևելյան կողմում հիմնում են կանոնավոր հատակագծով նոր քաղաք: Այն, ինչպես և սպասելի էր ու բնական, կրում է նախկին ավեր քաղաքի անունը՝ Ախալքաղաք:

**Քաղաքատեղի.** հին բերդաքաղաքը գտնվում է ծ. մ. 1690 մ բարձրության վրա և տարածվում Փարվանա (Կուրի աջակողմյան խոշորագույն վտակն է) և վերջինիս ձախ կողմից խառնվող Քառասնակն գետերի միջև հրվանդանաձև երկարած սարահարթի վրա:



ՄԻՍԼԲԱՆՈՒԹՅԱՆ Միջնաբերդի ԺԹ դարի վերջին (ստորագրված՝ *Утверждение русского Владычества на Кавказе, под редакцией генерал-майора Потто, том 2, Тифлис, 1901, գրքից*):



*ԱՆԱՆՔԱՆԱՔ. քաղաքի և միջնաբերդի տեսքը Ի դարի սկզբին*


Քաղաքատեղին ունի շուրջ 700 մ երկարություն, սակայն ընդամենը 120-130 մ առավելագույն լայնություն:

*Միջնաբերդ.* գտնվում էր քաղաքի հարավարևելյան ծայրին՝ գլխավոր դարպասի մոտ: Այդտեղ են նաև ԺԸ դարում կառուցված թուրքական մզկիթի շենքը, իջևանատունը:



*Եկեղեցի.* քաղաքատեղիի հյուսիսային ծայրին պեղումների շնորհիվ հայտնաբերվել են խաչաձև (գմբեթավոր) հորինվածքներով եկեղեցու մնացորդ-

ներ: Պատերի պահպանված առավելագույն բարձրությունը 1 մետր է: Կառուցված է եղել անմշակ քարերով: Արտաքին չափերն են՝ 16,0 x 14,4 մ: Հարկ է նշել, որ նույնաձև հորինվածք ունեցող եկեղեցիները Ջավախքում հազվադեպ են (մնանօրինակ լուծում ունի Էխսիլայի Սբ. Ստեփանոս եկեղեցին)<sup>8</sup>: Թվագրվում է Ժ-ԺԱ դարերով:

<sup>8</sup> «ժրգջօն թրքօմօրօ», 1976, № 40: «Մոլորակ», 1997, № 14, էջ 4:



*ԱՆՍԱԼՔԱԼԱՔ. միջնաբերդի տեսքը ՇԹ դարի վերջին, հատվածներ բերրաշտարակներից (1980-ական թվականներ)*



*ԱԽԱԼՔԱԼԱՔ. քաղաքատեղիի հր մասում, հայոց գերեզմանատան հարևանությամբ գտնվող խաչաձև եկեղեցու մնացորդները և հատակագիծը*

*ԱԽԱԼՔԱԼԱՔ. միջնաբերդում գտնվող մզկիթի և ներսում պահպանված արաբերեն արձանագրությունը*



ԱՆԱԼՔԱԼՔ. իջևանատան ավերակները



ԱՆԱԼՔԱԼՔ. քաղաքագլուխ Աստվածատուրի բեկորված տապանաքարը խաչածև եկեղեցու հարևանությամբ տարածված հայոց գերեզմանոցում

**Մզկիթ.** գտնվում է միջնաբերդում, կանգուն է: Ներսում ագուցված քարին արաբերեն արձանագրված է.

كما دخل عليها زكريا المحراب سنة ١٢١٨



ԱՆԱԼՔԱԼՔ. քաղաքագլուխ Աստվածատուրի տապանաքարի բեկորները



ԱՆԱԼՔԱԼՔ. քաղաքագլուխ Աստվածատուրի տապանաքարի գրչանկարը

Թարգմ. ...ինչպես նաև այն գրավեց Չաքարիա Ալ-Սիրաբ, 1218 թվական (1803\1804):

Ծանոթ. վերծանությունն ըստ Բաֆֆի Քոլբոշյանի: Պարսկագետ Զ. Կոստիկյանն առաջարկում է հետևյալ ընթերցումը և վերծանությունը.

کار ما علیها دخل المحراب زكريا سنة ۱۲۱۸

Թարգմ. Աղոթատեղիի ներսի աշխատանքը Չաքարիա[յինն է]. 1218 թվական (1803\1804):

**Հայերեն արձանագրություններ.** ընդհանրապես քաղաքատեղիի ողջ տարածքում անպակաս են հայերեն արձանագրություններով տապանաքարերի և խաչքարերի, ինչպես նաև վերջիններիս պատվանդանների ու առանձին սրբատաշ երեսապատ քարերի բեկորներն ու կտորտանքները: Մինչև անգամ միակ սնկիթի պատերի մեջ ագուցված են և լավ տեսանելի, այժմ գոյություն չունեցող հայոց եկեղեցու երեսապատի խաչագարդ քարեր: Տարբեր ժամանակներում բերդաքաղաքի տարածքից հայտնաբերված հայերեն արձանագրությունների մասին վկայություններն առատ են: 1882 թ., երբ «արքունական շինությունների համար քարեր էին կրում այդ ավերակներից, պատահել են մի քարուկոյա պատի, փորել են և գտել սրբատաշ քարերից շինած մի սալատակ և նրա տակ արդեն մի քանի գերեզմանաքարեր, խաչքարեր, մի քարե աշտանակ, եկեղեցու դռնագլխի մի քար և այլն: Գտնված քարերից շատերը ծածկված են եղել հայերեն արձանագրություններով, որոնք վերաբերում են ԺԳ, ԺԴ և ԺԵ դարերին: Դրանցից ամենահինն ունեցել է այսպիսի արձանագրություն».

Տապանաքար.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ՆԵՐՍԷՍ (ՔԱՀԱՆԱՅԻՆ), ԹՎ(ԻՆ) ՉԽԳ (1294):

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 55:

Տապանաքար.

ԹՎ(ԻՆ) ՊԺԱ (1362): ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԵԹԷ ԳԻՏԵՍ ՀԱՐԱՉԱՏ ՈՐ ՃԱՆԱՉԵՍ, ԵՂԲԱՐՔ ... ՎՈ ... ԱՂԻՆ ԵՒ ՆԵՐՋՍԱԲԻՆ:

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 55:

Ծանոթ. վրան եղել է մարդու պատկերաքանդակ:

Եկեղեցու ճակատակալ քարին (քարավոր).

ԹՎ(ԻՆ) Ջ (1451):

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 55:


Խաչքար.

ԸՆԿԱԼ, ԿԵՑՈ, ՈՂՈՐՄԵԱ...ՀԱՆԳՈՒՑԵԱԼ:

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 55:

Ծանոթ. «Քարերից մի քանիսի վրա նկատվել է աղյուսի քանձր շերտ, գործինակ՝ մի կանգուն խաչքարի վրա, որ հավանականորեն քահանայի գերեզմանաքար է, դժվարությամբ կարդացվել է մի քանի հատ ու կտոր բառեր»:

Արձանագրությունների մնացորդներ նկատվել են նաև այլ գտածոների վրա. «Քարե աշտանակը մոտ 7 վերջուկ բարձրության է եղել և բավական



ԱՄԱԼՔԱԼԱՔ. խաչքարի արձանագիր պատվանդան (1251 թ.) քաղաքատեղիի ավերակների մեջ



կոշտ շինված. սրա վրա ևս արձանագրության հետքեր են երևացել, բայց անվերծանելի են»<sup>9</sup>:

Հավանաբար ԺԷ դարի հայերեն արձանագրությունների հայտնաբերման մասին է նշվել 1885 թ. լրագրային մի հրատարակման մեջ. «Քաղաքի արևմտակողմն է հին բերդն, որի մոտերքում գտնուում են հին քաղաքի ատերակներ, որոնցից մի քանի տարի առաջ հանել են գերեզմանաքարեր մինչև 200 տարուայ հայ տապանագրերով»<sup>10</sup>:

Քաղաքատեղիի տարածքում պահպանված որոշ հուշարձաններ՝ մասնավորապես Թ-Ժ դդ. բնորոշ խաչքարերն ու խաչաձև հորինվածքով եկեղեցին, իրենց գոյությամբ փաստում են տեղում մինչև ԺԱ դարը հայկական բնակավայրի առկայության հանգամանքը:

1988 թ. բերդաքաղաքի հայոց ավերակ գերեզմանոցների ուսումնասիրության ժամանակ մեզ ևս հաջողվեց գտնել հայերեն նորահայտ արձանագրություններ, այդ թվում՝ Աստվածատուր տանուտիրոջ, այսինքն՝ քաղաքագլխի տապանագիրը.

Տապանաքար. բերդաքաղաքի հյուսիսարևմտյան կողմում, ավերակ խաչաձև եկեղեցուց փոքր-ինչ հարավ-արևելք, 4 մասի ջարդված տապանաքարի բեկորներից մեկի վրա (86 x 80 x 30 սմ) եռատող փորագրվածք.

Ա(ՍՏՈՒԱ)ՅԾՍԱՌԻՐ ՏԱՆՈՒՏ(Է)Ր :ՃԾ: (150)  
ԳԵՐԻ ԱԶՂԱՏ ԱՐԱՐ:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. տանուտեր, իմա՝ քաղաքագլուխ: Գրչությունը՝ ԺԱ-ԺԲ դդ.:

Խաչքարի պատվանդան. գտնվում է միջնաբերդի հատվածում, ուշ շրջանի կառուցապատումների շարքում, մի տան սանդուղքների մեջ գետեղված է խաչքարի պատվանդան (100 x 72 x 55 սմ), որի մի երեսին յոթ տողով փորագրված է հայերեն, հողմահար արձանագրություն.

ՈՎ Տ(Է)Ր Յ(ԻՍՈՒՍ). ՅՈՒՍ ԵՒ ԴԱԻԱՆ. ԱՌԱՔԵԱ ...ԿԱՆ. Ի ՓՐԿՈՒԹԻ(ԻՆ) | ԱԶԳԻՍ ... ՏԵՂԻ ... |... |... ՈՎ Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆ ԵՒ ՊԱՏՎԱԿԱՆ... |ՈՒ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԽԱՉԿԱՆՆ ԼԵՐ ԶԱՎԱՐԱՆ ՅԱՀ... Թ(ԻՎՆ) Չ... (1251°):

Հրատ. առաջին անգամ:

Նույն վայրից 1988 թ. հայտնաբերվել է մի գերեզման, որի վրա գետեղված գեղաքանդակ խաչքարն ու տապանաքարը պահպանության նպատակով փոխադրվել են Ախալքալաքի գավառագիտական թանգարան: Մեկ-երկու տարի անց խաչքարը կրկին տեղափոխվեց. այս անգամ՝ քաղաքի կենտրոնում գտվող Սբ. Խաչ եկեղեցու բակը (չափերն են՝ 195 x 79 x 5 սմ), իսկ տապանաքարը շարունակեց մնալ թանգարանի բակում:



ԱԽԱԼՔԱԼԱՔ. տապանաքար, 1301 թ.

9 Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 55:  
10 «Արձագանք», 1885, № 3, էջ 42:

Տապանաքար. չափերն են՝ 127 x 63 x 20 սմ, արձանագրությունը՝ եռատող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԳՐ(Ի)ԳՈՐՈՒ ԹՎ(ԻՆ) ՉԾ (1301):

Հրատ. առաջին անգամ:

Քաղաքատեղիի տարածքից են փոխադրվել նաև Սր. Խաչ եկեղեցու որմերում ագուցված կամ շուրջը կանգնեցված մոտ մեկ տասնյակ խաչքարերը (հնագույնները՝ Թ-Ժ դդ.):

**Պարիսպ.** քաղաքատեղիին բոլոր կողմերից շրջապատված է եղել պարիսպներով: Սրանց մեծագույն մասը ևս այժմ հիմնավեր է:

**Նոր Ախալքալաք.** նոր քաղաքը, որն ինչպես նշվեց, կից է համանուն հին քաղաքատեղիին հարավից, զբաղեցնում է 2 կմ երկարությամբ և 1 կմ լայնությամբ հիշյալ գետերի միջև ընկած հարթավայրը:

Քաղաքի հարավարևելյան եզրին վեր է խոյանում ծովի մակերևույթից 1883 մ բարձրություն ունեցող Տավշանկա լեռը: Սրա քաղաքահայաց ստորոտին տարածված է հայոց գերեզմանոցը՝ ԺԹ-Ի դարերի բազմաթիվ շիրմաքարերով, տապանաքարերով:

**Քաղաքի զարգացման փուլերը.** 1831 թ-ից սկիզբ առած Նոր Ախալքալաքը 1845-ին իշխանություններից ստանում է ոչ վարչանիստ քաղաքի կարգավիճակ<sup>11</sup>: ԺԹ դարի երկրորդ կեսի ընթացքում, բնակավայրի աստիճանական զարգացմանը զուգահեռ, Ախալքալաքը ստանում է քաղաքային բնակավայրերին հատուկ կարգավիճակներ. «Նոյն տարին (1874 - Ս. Կ.) Ախալքալաքը կը լինի Գ կարգի գաւառական քաղաք, իսկ 1890ին կը դառնայ գաւառական Բ. կարգի քաղաք, և 1896 ին կ'ստանայ քաղաքային պարզ ինքնավարութիւն»<sup>12</sup>: Այդ թվականից ի վեր քաղաքի ավագ է հիշվում Արշակ Քրիստափորի Գրիգորյանը (վախճ. 1905 թ.)<sup>13</sup>: Չնայած Ախալքալաքը ձեռք էր բերել ինքնավարություն, սակայն 1905 թ. «...էլի քաղաքը կը գտնէք նոյն դրութեան մէջ, ինչ որ տասը, քսան տարի առաջ էր: Դարձեալ նոյն փոշոտ կեղտոտ փողոցները առանց սալալատակի, գուրկ բուսականութիւնից և ջրից, չնայած որ քաղաքը բազմամբ է երկու յորդառատ գետերի և աղբիւրների մէջ»<sup>14</sup>:

**Կառուցապատում.** 1884 թ., երբ Ախալքալաքը դեռևս 3-րդ կարգի քաղաք էր, ուներ այսպիսի նկա-

րագիր. «Քաղաքի շինութիւնները քարուկիր են», շատերը սրբատաշ քարով և բաժանուած կանոնաւոր ընդարձակ փողոցներով»<sup>15</sup>: 1890-ականների սկզբին քաղաքի ավելի հանգամանալից նկարագրության մեջ նշվել է. «Ախալքալաքը ունի եօթը բաւական լայն և կանոնաւոր փողոցներ, որոնք կը տրուին ուրիշ վեց, աւելի կարճ փողոցներով: Այս փողոցներէն բաց ի միոյն, միւսները խճուղի չունին, ուստի և սաստիկ ցեխն և փոշին պակաս չեն: Տները ընդհանրապէս քարաշէն են, ցած, միյարկանի և գրեթէ բոլորն ալ արտաքուստ սպիտակացուած: Արեւելեան կողմը կառուցած են մեծ և փոքր երկյարկանի զօրանոցներ»<sup>16</sup>:

1880 թ. բազմաթիվ ծառատնկումներով հիմնվել է քաղաքի հասարակական պարտեզը. «...որ ծառերով շրջապատուած է, և ունի հովանոց մը. աղբիւր կամ աւազան չունի, մէջը տնկուած սակաւաթիվ ծառերը կը ջրեն ջրհորի ջրով»<sup>17</sup>:

1851 թ. Ախալքալաքում բացվել է տոնավաճառ, որը գործում էր յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-15-ը<sup>18</sup>:

**Ջրամատակարարում.** ԺԹ դարի վերջին գրեթէ 6000 բնակիչ ունեցող Ախալքալաքը խմելու ջուր էր ստանում բացառապէս տեղական աղբյուրներից. «Քաղաքիս ջուրը կը մատակարարեն ձորերու մէջ բոխող 4 պատուական աղբիւրներ. կան նաեւ մի քանի ջրհորներ, որոց ջուրը չեն խմեր»<sup>19</sup>: Ջրի պակասը լրացնելու նպատակով 1895 թ. 27.000 ռ. նախահաշվային արժողությամբ կազմվել է նախագիծ՝ քաղաքից մոտ 3 կմ հեռու գտնվող «Աբլար»-ի աղբյուրների ջուրը Ախալքալաք հասցնելու համար<sup>20</sup>:

Մեկ այլ նախագծով (1903 թ.), որի նախահաշվային արժեքն էր 4000 ռ., ծրագրվել է ինքնահոս կերպով քաղաք հասցնել Քառասնակն վտակի ջրերը<sup>21</sup>: Այնուամենայնիվ, ինչպես կարելի է եզրակացնել 1913 թ. հրապարակված մի հաղորդումից, վերոհիշյալ նախագծերից և ոչ մեկը կյանքի չի կոչվել. «Ինչպէս բոլորին յայտնի է, մեր քաղաքը գտնուած է քարածայրի վրայ, նրա երեք կողմը ձորեր են, այդ ձորերի միջով հոսում են Տափարուան գետակը և այսպէս կոչուած Գըռխ-բուլաղ վտակը: Տափարվան գետակի մէջ է թափուած արևելեան կողմից Կուլիկամի ջուրը, որը մաքուր է և կարելի է գործ ածել թէ խմելու և թէ ուրիշ պէտքերին բաւարարութիւն տալու համար: Սակայն քաղաքի մէջ ջուր բոլորովին չկայ. շատ փորձեր է եղել գետնի տակից ջուր

11 “Кавказский календарь на 1852 г.”, էջ 294 (“В 1845 году образовался здесь город и с Высочайшего утверждения возведен на степень заштатного, с учреждением Полицейского Управления и в ведении Полицейского Коммисара. С того времени город значительно стал расширяться постройками”).

12 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 66:

13 “Новое обозрение”, 1905, № 150.

14 Տը-Յակովբեանց, Ախալքալաքի ներկայ վիճակը. «Արշալոյս», 1906, № 6, էջ 3:

15 «Արձագանք», 1885, № 3, էջ 42:

16 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 66:

17 Նույն տեղում, էջ 67:

18 “Кавказский календарь на 1854 г.”, Тифлис, 183, էջ 220:

19 Նույն տեղում, էջ 68:

20 «Նոր-Գար», 1895, № 54, էջ 3:

21 “Кавказ”, 1903, № 179.

գտնելու և պատրաստելու ջրհորներ, բայց այդ էլ ի-գուր է անցել: Մեր քաղաքին նախ՝ հարկատու է խմելու ջուր ունենալ հենց քաղաքի մեջ: Մեզանից ո՞ւմ յայտնի չէ, թե ինչպիսի մեծամեծ չարչարան-քով քաղաքի բնակչությունը ջուր է ստանում «Ղոխ-բուլաղ» ձորակից: Քաղաքի ազգաբնակչությունը մեծամեծ ծախսեր է անում, որ կարողանում է ջուր խմել. եթե հաշվելու լինենք խմելու ջուր ստանալու վրայ ծախսուած փողերը, բաւական մեծ գումար դուրս կը գայ: Որպէսզի քաղաքացիք ազատեն ա-հագին փողեր ծախսելուց, միայն խմելու ջուր ունե-նալու վրայ անհրաժեշտ է, որ օր առաջ մտածի ձո-րակից մի որևէ մաքուր ջուր բերելու մասին՝ վերջ տալու այն անտանելի չարչարանքներին, մանա-ւանդ ձմեռ ժամանակ՝ բութ ու բորանին, որ քաշում են քաղաքացիք»<sup>22</sup>:

Հերթական անգամ «Աբլար»-ի աղբյուրների ջուրը Ախալքալաք հասցնելու խնդիրը շոշափվում է 1914 թ-ին, երբ քաղաքային ավագի հրավերով Թիֆլիսից գործին տեղում ծանոթանալու նպատա-կով հրավիրվում են քաղխորհրդի անդամ Արշակ Բաբովը և ճարտարապետ Միխայիլովը. «Յարգելի հիւրերը դիտեցին Աբլար կոչւած տեղի հարուստ աղբիւրները, որտեղից ծրագրուած է բերել ջուրը: Ինչպէս իմացանք, պ. պ. ինժեներների տած գեկու-ցումից՝ Աբլարի ջուրը իր հատկութեամբ անչափ ա-ռողջարար է և լաւ: Եւ յանձն առան մինչև ներկայ ամառ կազմելու դրանց վերաբերեալ պահանջող մակարդակներն ու այլ նիւթերը՝ ներկայացնելու ի հաստատութիւն. ջուրը քաղաք բերելը, կոյողի և բա-ղանիք շինելը կնստին ընդամենը մօտ 100-հազար ռուբլի: Ի հարկէ, թէ Ախալքալաքը չունի հնարաու-րութիւն իր սեփական միջոցներով իրականացնելու այդ ծրագիրը, բայց դիմելու է փոխառութեան կամ ձեռնահասանքի օգնութեանը»<sup>23</sup>:

**Բնակչություն.** Նոր Ախալքալաքի բնակեցումը սկիզբ է առնում 1831 թ-ից: Առաջին բնակիչներն էին Ախալցխայից փոխադրված մի քանի հայ ըն-տանիքներ. «...1831 ին Ախալցխայէն մի քանի հա-յեր գալով, բերդի հարաւային կողմը կը կառուցա-նեն սրճատուն, փուռ և քանի մը բնակարաններ: Այնուհետև հետզհետէ ուրիշներ եւս գալով բնակու-թիւն կը հաստատեն, և կ'սկսի ձեւանալ փոքրիկ գիւղ մը...»<sup>24</sup>: Սկզբնական շրջանում գուտ հայա-բնակ Ախալքալաքում տասնամյակների ընթաց-քում բնակություն են հաստատել նաև այլ ազգերի փոքրաթիվ ներկայացուցիչներ (ռուսներ, հրեաներ, վրացիներ, հույներ և այլն): Վերջիններս, ինչպես և հայերը, փոխադրվել էին այլևայլ վայրերից: Հրեա-

ները, օրինակ, գաղթել էին Ախալցխայից («...ունի մօտ վեց հարիւր տուն բնակիչներ, որոնք բացառու-թեամբ մի քանի տուն Ախալցխայից գաղթած հրեա-ների, լուսաւորչական հայեր են...»)<sup>25</sup> և մինչև իսկ ունեին իրենց առանձին թաղը. «Քաղաքի գեղեցկու-թեանը չի նպաստում հիւսիսային կողմը գտնուած թաղը, որտեղ բնակուած են մեծ մասամբ հրեաներ և բոշաներ: ...Այդ թաղում, ուր հազիւ յիսուն վաթսուն տուն լինի, խոլերայից մեռան 60-65 մարդ, իսկ քա-ղաքի միւս մասերից մի մարդ էլ չմեռա...»<sup>26</sup>: Ու թեև «Ախալքալաքը կարելի է համարել գուտ հայկական քաղաք, ուր ապրում է հինգ հազար բնակիչ, որոն-ցից հարիւր հոգի այլ ազգի հազիւ լինի...»<sup>27</sup>, այ-նուամենայնիվ, քաղաքաբնակ հայերի տեսակա-րար կշիռն ամբողջ բնակչության թվի մեջ ժամանա-կի ընթացքում անընդմեջ նվազել է: Դա նկատելի է մի քանի տարիների վիճակագրական տվյալների համադրման շնորհիվ.

տարեթիվ	հայեր	վրացիներ	այլ ազգու-թյուններ	ընդամենը
1830-ական <sup>28</sup>	805	5		810
%	99,4		0,6	
1851 <sup>29</sup>	2599		76	2675
%	97,1		2,8	
1865 <sup>30</sup>				2260
%				
1883 <sup>31</sup>	2811	24	285	3120
%	90,1	0,7	9,1	
1886 <sup>32</sup>	4083	45	175	4303
%	94,9	1,0	4,0	
1896 <sup>33</sup>				5303
%				
1897 <sup>34</sup>				5443
%				
1902 <sup>35</sup>	5210	91	192	5493
%	94,8	1,6	3,5	
1905 <sup>36</sup>	5775	158	339	6272
%	92,1	2,5	5,4	
1916 <sup>37</sup>	6151			7055
%	87,2			
1979 <sup>38</sup>	10278	506	2440	13224
%	77,7	3,8	18,5	

25 «Մշակ», 1878, № 134, էջ 1:  
 26 «Նոր-Դար», 1894, № 130, էջ 2-3:  
 27 Նույն տեղում:  
 28 “Кавказский календарь на 1850 г.”, Тифлис, 1849, էջ 36.  
 29 “Кавказский календарь на 1852 г.”, էջ 293, 295:  
 30 **А. К-дзе**, Этническое состояние Грузии в XIX веке.— “Тифлиссский Листок”, 1900, № 61.  
 31 “Кавказский календарь на 1885 г.”, էջ 204:  
 32 “Кавказский календарь на 1897 г.”, Тифлис, 1896, էջ 52-53:  
 33 “Кавказский календарь на 1898 г.”, Тифлис, 1897, էջ 22-23:  
 34 **А. К-дзе**, նշվ. հոդվ., նույն տեղում:  
 35 “Известия Закавказского Статического Комитета”, т. 1, № 2, Тифлис, 1904, էջ 80-81:  
 36 “Кавказский календарь на 1908 г.”, Тифлис, 1907, էջ 325:  
 37 “Кавказский календарь на 1917 г.”, Тифлис, 1916, էջ 190-193:  
 38 Ըստ քաղխորհրդի տվյալների:

22 **Մայխասեան Մ.**, Ջրի պահանջը Ախալքալաքում.— «Ջա-սախք», 1913, № 26, էջ 207:  
 23 «Ջաւախք», 1914, № 9, էջ 70:  
 24 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 66:

*Վիճակագրություն*. ուշագրավ է, որ որոշ տարիներին համար (1851, 1883, 1886, 1902, 1905) ծխական և պետական վիճակագրական տվյալներում առկա են անհամապատասխանություններ: Դա կարելի է նկատել՝ համադրելով ներկայացված աղյուսակները.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841 <sup>39</sup>		572	510	1082
1842 <sup>40</sup>		598	521	1119
1844 <sup>41</sup>		644	560	1204
1845 <sup>42</sup>		650	610	1260
1847 <sup>43</sup>		640	624	1264
1849 <sup>44</sup>		704	712	1416
1851 <sup>45</sup>	193	553	534	1087
1853 <sup>46</sup>		774	785	1559
1854 <sup>47</sup>		791	793	1584
1857 <sup>48</sup>		898	996	1894
1860 <sup>49</sup>	320	1025	1020	2045
1861 <sup>50</sup>		1032	1014	2046
1862 <sup>51</sup>		1066	1045	2111
1863 <sup>52</sup>		1084	1068	2152
1864 <sup>53</sup>	327	1117	1107	2224
1865 <sup>54</sup>		1147	1116	2263
1866 <sup>55</sup>	401	1142	1113	2255
1867 <sup>56</sup>		1214	1180	2394
1868 <sup>57</sup>		1248	1211	2459
1869 <sup>58</sup>		1244	1232	2476
1870 <sup>59</sup>		1285	1253	2538
1871 <sup>60</sup>		1317	1301	2618
1872 <sup>61</sup>		1355	1333	2688
1873 <sup>62</sup>		1391	1369	2760
1875 <sup>63</sup>				2813
1876 <sup>64</sup>		1456	1451	2907
1877 <sup>65</sup>		1600	1489	3089
1878 <sup>66</sup>		1634	1544	3178

39 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, ք. 62-63:  
 40 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:  
 41 Նույն տեղում, գ. 3809, ք. 13-14:  
 42 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:  
 43 Նույն տեղում, գ. 3814, ք. 34:  
 44 Նույն տեղում, գ. 3818, ք. 40:  
 45 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 26-27:  
 46 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 39-40:  
 47 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:  
 48 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:  
 49 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:  
 50 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:  
 51 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:  
 52 Նույն տեղում, գ. 3843, ք. 20-21:  
 53 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:  
 54 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-12:  
 55 Նույն տեղում, էջ 74:  
 56 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 57 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 58 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 59 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 60 Նույն տեղում, գ. 3858, ք. 10:  
 61 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 62 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 63 Նույն տեղում, գ. 3866, ք. 19-20:  
 64 Նույն տեղում, գ. 3868, ք. 29-30:  
 65 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 66 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:

1880 <sup>67</sup>		1745	1644	3389
1881 <sup>68</sup>		1720	1636	3356
1882 <sup>69</sup>		1753	1698	3451
1883 <sup>70</sup>		1881	1715	3596
1884 <sup>71</sup>	600			
1886 <sup>72</sup>		1953	1758	3711
1887 <sup>73</sup>		2083	1877	3960
1889 <sup>74</sup>		2181	1850	4031
1890 <sup>75</sup>		2227	1886	4113
1891 <sup>76</sup>		2272	1946	4218
1892 <sup>77</sup>		2275	1937	4212
1893 <sup>78</sup>		2282	1945	4227
1894 <sup>79</sup>		2320	1963	4283
1897 <sup>80</sup>		2449	2105	4554
1898 <sup>81</sup>		2510	2167	4677
1899 <sup>82</sup>		2537	2206	4743
1900 <sup>83</sup>		2571	2233	4804
1901 <sup>84</sup>		2627	2296	4923
1902 <sup>85</sup>		2648	2316	4964
1905 <sup>86</sup>		2771	2453	5324
1906 <sup>87</sup>		2771	2453	5324
1908 <sup>88</sup>	730	2827	2514	5341
1910 <sup>89</sup>		2928	2600	5528
1912 <sup>90</sup>		2990	2654	5644
1914 <sup>91</sup>		3062	2693	5755
1916 <sup>92</sup>		3071	2700	5771
1921 <sup>93</sup>		500	400	900
1979 <sup>94</sup>				10.278
1991 <sup>95</sup>				15.800

67 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 68 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 69 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 70 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 71 «Արձագանք», 1885, № 3, էջ 42:  
 72 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, ք. 11-12:  
 73 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 74 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 75 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:  
 76 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:  
 77 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:  
 78 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 79 Նույն տեղում, գ. 3896, ք. 167-168:  
 80 Նույն տեղում, գ. 3899, ք. 140-141:  
 81 Նույն տեղում, գ. 3897, ք. 162:  
 82 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 83 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 84 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 85 Նույն տեղում, գ. 3907, ք. 16-17:  
 86 Նույն տեղում, գ. 3912, ք. 259-260:  
 87 Նույն տեղում, գ. 3915, ք. 20:  
 88 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 89 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 90 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 91 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 170-171: Վիճակագրական մենկայ տվյալի համաձայն Ախաբալարի մույն թվականին ունեցել է 7484 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 83):  
 92 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 17-18:  
 93 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1: Ի դեպ, 1933 թ. Ախաբալարի 10-ամյա վրացական դպրոցի աշակերտ Բենո Գվարամանձի վկայությամբ՝ 1933 թ. քաղաքում բնակվել են միայն 4 տուն վրացի՝ Բերիձե, Գվարամանձե, Միքելանձե... (Ներքինի շրջապատ, նշվ. աշխ., էջ 109):  
 94 Ըստ քաղխորհրդի տվյալների:  
 95 Նախորդող ընտրություններ, Ե. 1, Թբիլիսի, 1997, էջ 287:

**Սր. Մեսրոպյան արական դպրոց.** ողջ Արևելահայաստանում ամենահին ծխական դպրոցներից մեկը՝ Սր. Խաչ եկեղեցուն կից Սր. Մեսրոպյան երկդասյա արականը, հիմնվել է 1836 թ.:

1910 թ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ «...դպրոցական հին շինությունը բոլորովին անկարող է իր մեջ ամփոփել դպրոցի պարապմունքները...»<sup>96</sup>, հոգաբարձությունը, առձեռն ունենալով ընդամենը 1500 ռ., սակայն վստահ համաքաղաքացիների ցուցաբերելիք օժանդակությանը՝ ձեռնամուխ է լինում նոր շենքի կառուցման գործին: Շուտով ազգօգուտ նախաձեռնությանն իրենց նյութական ներդրումներով իրապես սատարում են բազմաթիվ բարերարներ<sup>97</sup>: Հանգանակությունները շարունակվում են մահ 1911 թ.<sup>98</sup>:

Սակայն, 1912 թ., երբ արդեն 3 տարի շարունակ ընթացքի մեջ էին շինարարական աշխատանքներն, ու այդ նպատակով ծախսվել էր հանգանակությունների շնորհիվ գոյացած շուրջ 20.000 ռ., այդուհանդերձ, կառույցն ամբողջացնելու համար դեռևս զգալի էր դրամի պակասը<sup>99</sup>: Ստեղծված կացությունից դուրս գալու ելք էր նկատվել Ախալքալաքում գտնվող էջմիածնապատկան կրպակների հասույթին թեկուզ ժամանակավորապես տիրապետելը:

Շինարարությունն ավարտին է հասել 1914 թ. (ցայսօր կանգուն շենքը շարունակում է ծառայել բուն նպատակին):

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1836 <sup>100</sup>	հիմնվել է		
1854 <sup>101</sup>		3	85
1860 <sup>102</sup>	վերաբացվել է		
1865 <sup>103</sup>		6	157
1876 <sup>104</sup>		5	150
1877 <sup>105</sup>		5	150
1878 <sup>106</sup>		5	162
1881 <sup>107</sup>		8	127
1885 <sup>108</sup>	փակվել է		
1886 <sup>109</sup>	վերաբացվել է		

96 ՀԱԴ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 852, թ. 1:

97 «Մշակ», 1910, № 95:

98 «Արարատ», 1911, էջ 624:

99 ՀԱԴ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 852, թ. 1:

100 Նույն տեղում:

101 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 49-50:

102 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 512:

103 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:

104 Նույն տեղում, գ. 3850, թ. 51:

105 Նույն տեղում, թ. 100:

106 Նույն տեղում, թ. 177:

107 **Խուրդյան Ս.**, նույն տեղում:

108 Նույն տեղում:

109 Նույն տեղում: Ի դեպ, դպրոցի վերաբացումից հետո հաստատվել է հոգաբարձության նոր կազմը. «Կոնդակա Վեհ. Հայրապետի Ազգիս ի 23 Հոկտ. ընդ համարաւ 623. հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական երկրասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Ախալքալակ քաղաքի պատուելիք Չարմայրն Առուանեանց, Մահտեսի-Յովհաննէսն Տէր Կիրակոսեան, Արտաշէսն Յովհաննիսեան և Սարգիսն Յարութեանց» («Արարատ», 1886, էջ 469):



ԱՆՍԼՔԱԼԱՔ. 1914 թ. կառուցված դպրոցի շենքը

1888 <sup>110</sup>	երկդասյա		130
1890 <sup>111</sup>			129
1891 <sup>112</sup>			139
1892 <sup>113</sup>			123
1894 <sup>114</sup>		6	165
1896 <sup>115</sup>	փակվել է		
1905 <sup>116</sup>	վերաբացվել է		
1909 <sup>117</sup>	Սանդիստյան դպրոցի	14	487
	հետ միացյալ (254-ը՝ աղջիկ)		
1910/11 <sup>118</sup>		12	447
	(233-ը՝ աղջիկ)		
1912 <sup>119</sup>		13	460
	(225-ը՝ աղջիկ)		
1914 <sup>120</sup>			445
1916 <sup>121</sup>	գործել է		

**Սր. Սանդիստյան իգական դպրոց.** 1871 թ. քաղաքում բացվել է օրիորդաց Սր. Սանդիստյան ծխական ուսումնարանը:

110 Նույն տեղում:

111 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3887 թ. 143:

112 Նույն տեղում, գ. 3889, թ. 142:

113 Նույն տեղում, գ. 3891, թ. 114:

114 Նույն տեղում, գ. 3895, թ. 99, գ. 3896, թ. 34, 167-168:

115 **Խուրդյան Ս.**, նույն տեղում:

116 Նույն տեղում:

117 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 15:

118 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:

119 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920:

120 **Խուրդյան Ս.**, նույն տեղում:

121 Նույն տեղում:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1871 <sup>122</sup>	բացվել է		
1876 <sup>123</sup>		5	51
1877 <sup>124</sup>		5	51
1878 <sup>125</sup>		5	59
1890 <sup>126</sup>			121
1891 <sup>127</sup>			155
1892 <sup>128</sup>			150
1894 <sup>129</sup>		2	148

**Երկսեռ դպրոց.** ի դեպ, 1870-ական թվականների երկրորդ կեսին և 1880-ականների սկզբին կրթօջախների ուսուցչական կազմն ու աշակերտության թվաքանակը վավերագրերում ցույց են տրված միասնաբար:


տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1875 <sup>130</sup>		6	192
1876 <sup>131</sup>		6	190
1877 <sup>132</sup>		7	229
1880 <sup>133</sup>		9	197
1881 <sup>134</sup>		9	203
1882 <sup>135</sup>		10	191
1883 <sup>136</sup>		6	130

**Ռուսական դպրոց.** 1889 թ. Ախալքալաքում բացվել է ռուսական դպրոց. «Նոր կառուցուած վայելուչ շէնք մ'է, որուն վրայ քաղաքը ծախսեր է 15.200 ռ. 18 կոպէկ. աշակերտաց թիւն է 130-140»<sup>137</sup>:

**Գյուղատնտեսական դպրոց.** քաղաքում 1895 թ-ից գործել է նաև գյուղատնտեսական դպրոց<sup>138</sup>:

**Գրադարան.** հիմնվել է 1880-ին: ԺԹ դարի վերջին հաստատությունն արդեն համարված էր բազմաթիվ գրքերով և պարբերականներով. «Քաղաքիս մէջ 1880 թուի մայիս 14-ին Հայք բացին գրադարան-ընթերցարան մը, որ բաժնուած է երկու մասի, արականաց և իգականաց: Այդ գրադարան-ընթերցարանը այժմ ունի մօտ 1.500 օրինակ հայերէն և ռուսերէն գրքեր, և տարին կ'ընդունի նաեւ նոյն լեզուներով 21-է աւելի պարբերական թերթեր»<sup>139</sup>: Հայտնի է, որ 1898 թ. գրադարանը փակվել է<sup>140</sup>:



122 «Արարատ», 1871, էջ 368:  
 123 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51:  
 124 Նույն տեղում, թ. 100:  
 125 Նույն տեղում, թ. 177:  
 126 Նույն տեղում, գ. 3887, թ. 143:  
 127 Նույն տեղում, գ. 3889, թ. 142:  
 128 Նույն տեղում, գ. 3891, թ. 114:  
 129 Նույն տեղում, գ. 3895, թ. 99, մաս՝ գ. 3896, թ. 34, 167-168:  
 130 Նույն տեղում, գ. 3866, թ. 19-20:  
 131 Նույն տեղում, գ. 3868, թ. 29-30:  
 132 Նույն տեղում, գ. 3869, թ. 28-29:  
 133 Նույն տեղում, գ. 3872, թ. 86-87:  
 134 Նույն տեղում, գ. 3873, թ. 96-97:  
 135 Նույն տեղում, գ. 3874, թ. 42-43:  
 136 Նույն տեղում, գ. 3875, թ. 47-48:  
 137 “Новое обозрение”, 1905, № 150.  
 138 Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Սաղիմեան, Տնտեսական հարցեր, էջ 179:  
 139 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 67:  
 140 “Новое обозрение”, 1905, № 150.




ԱԽԱԼՔԱԼԱՔ. Սր. Խաչ եկեղեցու հատակագիծը՝ կազմված 1899 թ. (ՎԱԳ, ֆ. 204, ց. 1, գ. 985)

**ԵԿԵՂԵՑԻՆԵՐ**

**Սբ. Խաչ եկեղեցի.** քաղաքի կենտրոնական մասում կանգուն է Սբ. Խաչ եկեղեցին, որի արևմտյան ճակատին եղած շինարարական արձանագրությունը տարիներ առաջ ոչնչացվել է: Բարեբախտաբար, շինարարության պատմությանն առնչվող պատմական վկայություններ են պահպանվել դիվանական վավերագրերում: Դրանց շնորհիվ պարզվում է, որ 1830-ականներին կարնեցի գաղթական հայերն իրենց սուղ միջոցներով կառուցել են Սբ. Խաչ անվամբ մի եկեղեցի: 1854 թ. եկեղեցին քայքայված էր այն աստիճան, որ ախալքալաքաբնակ մահտեսի Կարապետ Յաղուբյանցը դիմել է հոգևոր իշխանություններին՝ իր միջոցներով հնի տեղում նոր եկեղեցի կառուցելու թույլտվության խնդրանքով. «...մատուցանել ի տնօրենություն կոնսիստորիս զխնդիր Ախալքալաքաբնակ մահտեսի Կարապետի Եաղուբեանց, յորում գրե, թե ի գաղթելն իրեանց, ընդ հովանաւորութեամբ ամենահագոր տերութիւն ռուսաց ի սուղ ինչ միջոցի շինեցաք աստ եկեղեցի յանուն Սբ. Խաչի, բայց հնութիւն շինութեան այնորիկ արդէն իսկ կարծիս տայ փլման, և յաւոր միում մեծի վտանգի բազմաթիւ աղօթաւորաց ի նմին: Առ ի զառաջս առնուլ անտի կարծեցի վտանգից, մտադիր եմ քանդել զայն ի հիմանց ի 24-ն ապրիլի յառաջիկայ 1854 ամի և վերանորոգել պարտուպատշաճն եղանակաւ. գործսն քար և կիր, զերկայնութիւն երեքտասան սաժէն, զլայնութիւն ընդ առաջնոյն ութն սաժէն և զբարձրութիւն երեք սաժէն, զըջապատն հնգետասան պատուհանս. և այլն ընդ կարգին և ընդ յարմարութիւն, չխնայելով ի շինութիւն նորին զամենայն զծախս իւրում իսկ սեպիականութենէ, ըստ հարկելոյ ջերմեռանդն պարտաւորութիւն ի յիշատակ հոգոյ իւրոյ և համօրէն ննջեցելոցն...»<sup>141</sup>: Ստանալով հոգևոր իշխանությունների և մասնավորապես Ներսես Ե կաթողիկոսի թույլտվությունը<sup>142</sup> Կարապետ Յաղուբյանցը սկսում և 1856 թ. ավարտում է նոր եկեղեցու կառուցումը: Նորոգումներ են կատարվել նաև 1870, 1880, 1895 թվականներին<sup>143</sup>: Հայտնի է, որ 1884 թ. Ախալքալաքի առաջնորդ Խորեն վարդապետ Ստեփանեն Ախալքալաք կատարած կարճատև այցի ժամանակ հասցրել է իրականացնել մի շարք մանրաձևավոր նորոգումներ. «Բարութելով եկեղեցոյ դրութիւնը ՚ի ներքուստ, չմոռացաւ հայր-սուրբը շքեղացնել նորան և արտաքուստ. և դրսի պատերը, որ բոլորովին անշքացած էին և ծեփել ու սպիտակացնել տուեց կրով. շրջապատը, որ տեղ-տեղ ապակա-





ԱՅՄԱՔԱՄԱՔ. Սբ. Խաչ եկեղեցու կտրվածքները՝ կազմված 1899 թ. (ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 985)



ԱՅՄԱՔԱՄԱՔ. Սբ. Խաչ եկեղեցու այժմեական շենքի հատակագիծը

141 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 3245, ք. 1:  
 142 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 985, ք. 2:  
 143 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6408, ք. 1, 7: Տե՛ս նաև՝ ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 985, ք. 1-22, «Մոլորակ», 1997, № 14, էջ 4:



*ԱՅՍԼՔԱՍԼՔ. Սր. Խաչ եկեղեցու տեսքը հր-ից, զանգակատունը, եկեղեցու ներքին տեսքը և ամ մուտքից վեր պահպանված վերակառուցման արձանագրությունը*

նուած էր լինում աղբով, և սրբել ու մաքրել տուեց. կտուրը, որ տեղ-տեղ պատերի արանքովը ջուր էր ներս թողնում, և շինել ու ամրացնել տուեց»<sup>144</sup>:

1895 թ. գլխավորապես տանիքի նորոգության նախագիծը ներկայացվել է նահանգային վարչությանը՝ հաստատման<sup>145</sup>:

Տակավին 1897 թ. հոկտեմբերի վերջին ընթացել էր «1856 թ-ից ի վեր գոյություն ունեցող եկեղեցու»

նորոգություն սկսելու թույլտվությունը ձեռք բերելու նպատակին հասնելու համար առաջ տարվող գրագրությունը<sup>146</sup>:

1899 թ. վերջապես հաստատվել է եկեղեցու հողաձածկ ցածր տանիքը նոր, ավելի բարձր փայտամածով փոխարինելու վերաբերյալ նախագիծը<sup>147</sup>, և նույն թվականին էլ աշխատանքները մոտեցել են ավարտին. «Մեր եկեղեցու նորոգութեան

144 «Արձագանք», 1885, № 22, էջ 309:

145 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 985, ք. 1:

146 Նույն տեղում, ք. 7:

147 Նույն տեղում, ք. 12:





ԱՌԱՔԱՆԱԳ. Սր. Խաչ եկեղեցու հր-ամ անկյան հիմքում ագուցված քառակող կորոտի պատվանդան

ԱՌԱՔԱՆԱԳ. Սր. Խաչ եկեղեցու ալ ճակատին և ներքուստ խորանի մեջ ագուցված խաչքարեր , Թ-ԺԱ դարեր

վրա մինչև հիմա ծախսվել է 6.000 ռուբլի, որից 4 հազար ռուբլի եկեղեցին ունէր, իսկ 2 հազար ռուբլի հանգանակվեց քաղաքում: Նորոգութիւնը վերջացնելու համար կրկին պակասում է 1.000 ռուբլի...»<sup>148</sup>: Արևմուտքից կից է 1856 թ. կառուցված կրկնահարկ զանգակատունը: Վերջին նորոգումներից մեկը կատարվել է 1977 թ. տեղական իշխանության ծախսով<sup>149</sup>:

Սր. Խաչ եկեղեցին ընդարձակ դահլիճով (արտաքին չափերն են՝ 24,7 x 16 մ) գմբեթավոր տաճար է: Ծածկերն ու գմբեթը ներքուստ պահում են երեք զույգ սյուները: Անստվոր են ավազ խորանի երկու կողմում գտնվող երկուսական ավանդատները: Միակ՝ արևմտյան ճակատից բացված մուտքը

առջևում ունի կրկնահարկ զանգակատուն: Կառուցված է գլխավորապես անմշակ քարով, կրաշահախով, փայտով: Սվաղված է թե՛ ներսից, թե՛ դրսից:

Եկեղեցու արևելյան ճակատին ագուցված է Թ-Ժ դարերին բնորոշ գեղարվեստական առանձնահատկություններով գեղաքանդակ մի խաչքար (76 x 60 սմ): Նույն ժամանակաշրջանին վերաբերող մեկ այլ խաչքար էլ ագուցված է ներսում՝ խորանի մեջ:

Ի դեպ, Սր. Խաչն ունեցել է եկեղեցապատկան եկամտաբեր որոշ շինություններ, այդ թվում՝ մի ամբարանոց, որի՝ վիճակային հասույթների ծախսով վերակառուցելու թույլտվությունը ստացվել է տակավին 1859 թ.<sup>150</sup>:

148 «Մշակ», 1899, № 203, էջ 2:  
149 «Էջմիածին», 1978, Գ, էջ 624:

150 Մատենադարան, թղթ. 152, վավ. 119:



ԱԽԱԼՔԱԼԱՔ. Խաչքար (ԺԳ-ԺԴ դդ.) հայտնաբերվել է 1989 թ. քաղաքատեղիի հայոց գերեզմանոցներից մեկում և փոխադրվել Սր. Խաչ եկեղեցու բակ

Խաչքարի բեկոր. չափերը՝ 65 x 34 սմ, ագուցված է Սր. Խաչ եկեղեցու հարավային ճակատին, արձանագրությունը՝ քառատող.

...Ա(ՍՏՈՒԱ)Ծ... | ...ԳՈՀԱՐԻՆ... | ...ԳՐԻ-Գ(ՈՐ)ՈՒ ԼԵՐ ԱԻԳՆԱԿԱՆ ԱՀԵՂ ԱՎՈՒՐՆ ԱՆՁՐՎԱԿԱՆ, ՉԼԸ (1289):


Հրատ. առաջին անգամ:

Խաչքարի բեկոր. չափերը՝ 60 x 46 սմ, ագուցված է եկեղեցու արևմտյան ճակատին, արձանագրությունը՝ կիսաեղծ.

... Ս(ԱՐ)Կ(Ա)Ի(Ա)Գ ...

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դարեր:



ԱԽԱԼՔԱԼԱՔ. Խաչքարի բեկոր (1289 թ.)  
Սր. Խաչ եկեղեցու հր ճակատին

Խաչքար. հայտնաբերվել է քաղաքատեղիի տարածքից և փոխադրվել Սր. Խաչ եկեղեցու բակ: Այժմ գտնվում է եկեղեցու հս կողմում.

... ԱԻՍՐ ՆՇԱՆՍ Է...

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դարեր:

Մ. Բրոսսեի վկայությամբ՝ Գանձայից Ախալքալաք տանող ճանապարհին՝ «Գոքչա» անվամբ բնակավայրում, հին եկեղեցու ավերակներում պահպանվում էր մի խաչքար՝ հայերեն արձանագրությամբ:

Խաչքար.


ԵՄ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՀՕՐ ՄԵՐՈՒՄ ԹՎԻՆ Չ: (1251 թ.)  
...ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՅԻՇԱՍԱԿԻՆ  
...ՊՍՏՁՈԳՆ (°):

Հրատ. Brosset M., Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie exécuté en 1847-1848 par M. Brosset; livre 2, St. Pétersburg, 1850, էջ 174:

**Հայ-կաթոլիկ աղոթատուն.** «Քաղաքիս Հայ-կաթոլիկները յոյժ սակաւաթիվ լինելով չունին ոչ եկեղեցի, և ոչ մատուռ...»<sup>151</sup>: Ախալքալաքում հայ-կաթոլիկ աղոթատուն կառուցելու խնդիրն արժարժվել է ԺԺ դարի վերջին, սակայն 1900 թ. ստացվել է կառավարության մերժումը<sup>152</sup>: Այնուամենայնիվ, քա-

151 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 66:

152 "Kavkaz", 1900, № 206, էջ 3:



*ԱՆՍԼՔԱԼՔ. խաչքարերի բեկորներ (ԺԳ-ԺԴ դդ.)՝  
ազուցված Սբ. Խաչ եկեղեցու որմերում,  
ներքուստ և արտաքուստ*


դաքի փոքրաթիվ հայ-կաթոլիկները հետագայում հիմնել են իրենց աղոթատունը և կառավարվել Բավրա գյուղի քահանա տեր Սիմոն Խաչատրյանի կողմից<sup>153</sup>: 1915 թ. քաղաքում կային ընդամենը 54 շունչ հայ-կաթոլիկներ<sup>154</sup>: 1916 թ. տեղի հայ-կաթոլիկներին թույլատրվել է եկեղեցու վերանորոգման համար կատարել մինչև 2000 ռ. հանգանակություն<sup>155</sup>:

**Ռուսաց եկեղեցի.** Ախալքալաքում ԺԹ դարի վերջին գործել է նաև ռուսաց եկեղեցի. «Քաղաքիս հիսիսային ծայրը կը գտնուի պարսպապատ Ռուսաց եկեղեցին, որ կառուցուած է Ալէքսանդրապոլցի Պ. Ստեփանոս Անանիկեանցի աշխատութեամբ

153 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 84:

154 Նույն տեղում, Թիֆլիս, 1915, էջ 84:

155 «Кавказское слово», 1916, № 230.



ԱԽԱԼՔԱԼԱՔ. խաչաքանդակ և և խաչքար Սբ. Խաչ եկեղեցու ներսում և ևս կողմում (ԺԳ-ԺԷ դարեր)

և ըստ բառականի նիւթական օժանդակութեամբ, որով և արժանացած է առաջին քաղաքական աստիճան ստանալու ...»<sup>156</sup>: Ավերվել է խորհրդային տարիներին:


**Ճգնավոր ուխտատեղի.** Ախալքալաքի հյուսիսարևելյան կողմում՝ Փարվանա գետի աջ ափին, բարձր ժայռերի տակ, «Ճգնավոր» եկեղեցին է: Միանավ, բաղաձաձկ շէնք է՝ կառուցված սրբա-

տաշ քարով ԺԳ-ԺԴ դարերում: Արտաքին չափերն են՝ 7,10 x 3,90 մ: Հայտնի ուխտատեղի է (տոմը՝ մայիսի 7-ին)<sup>157</sup>, 1884 թ. նորոգվել է<sup>158</sup>: Կանգուն է, միայն տանիքն է քայքայված:

**Գերեզմանոց.** քաղաքի արևելյան կողմում՝ Տաշվանկա լեռան ստորոտին տարածված հայոց ընդարձակ գերեզմանատանը պահպանված տա-



156 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 67:

157 Նույն տեղում, էջ 70:  
158 «Մշակ», 1886, № 83:



*ԱՆՍԼՔԱԼՔ. «Ճգնավոր» եկեղեցու տեսքը հս-ալ-ից, հր-ամ-ից, հս-ից, ներքին տեսքը դեպի ամ, կոթողի պատվանդան եկեղեցու հս կողմում և հատակագիծը*

պանաքարերից հները վերաբերում են ժԹ դարի կեսերին: Ուշագրավ են եկեղեցածև, դամբարանածև, երկթեք, թևավոր խաչով ավարտվող շիրմա-



*ԱՆԱԼՔԱԼԱՔ քաղաքի հս-ալ կողմում, Տաշվանկա լեռան ստորոտին գտնվող հայոց գերեզմանոցը և մի քանի շիրմաքարեր*

քարերը, որոնց զգալի մասն արձանագիր է: Վերջիններիս թվում հիշատակելի է կալվածատեր Անտոն Քանանյանցի<sup>159</sup> (սև մարմարից կերտված, քառակող) վնասված տապանաքարը, որն ունի երկլեզվյան արձանագրություն:

Տապանաքար.

ԱԶՆՈՒԿԱԿԱՆ | ՆԱԳՎՈՐՆԻ ՍԱՎԷ[ՏՆԻԿ] | [Ա]ՆՏՈՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ[ԵԱՆ] | ՔԱՆԱՆԵԱՆՅ | ԾՆՈՒԲԱԾ 12 ՅՈՒԼԻՍԻ 183(6), | ՎԱԽՆ. 18 ՆՈՒՅԵՄԲԵՐԻ 1911). | ԱՆՍՈՌԱՆԱԼԻ ՀԱՅՐ[ԵՂ-ԲԱՅՐ] | ԱԼԷՔՍԱՆԴՐ (ՔԱՆԱՆՅԱՆԻՅ):

ДВОРЯНИНЪ | [НАД]ВОРНЫЙ СОВЕТ-Н[ИК] | АНТОНЪ ИВАНОВИ[Ч] КАНАНОВЪ | РОД. 12 ИЮЛЯ 1836 Г. | СКОНЧ. 18 НОЯБРЯ 1911 Г. | ДОРОГОМУ И НЕЗАБВЕННОМУ ДЯДЕ | ОТЪ АЛЕКСАНДРА КАНАНОВА.

Հրատ. ստաջին անգամ:

**Ախալքալաքի պատմաերկրագիտական թանգարան.** Ջավախքի տարբեր հնավայրերից ժամա-



ԱՒԱԼՔԱԼԱՔ. պատմաերկրագիտական թանգարանում պահվող աստղագիտական օրացույց և բուխարիկ

ԱՒԱԼՔԱԼԱՔ. Մեսրոպ Մաշտոցի և Ջիվանու հուշարձանները

159 ԺԹ դարի վերջին ազնվական կալվածատեր Ա. Քանանյանցին էին պատկանում Խանդո և Կաճո գյուղերը: Ախալքալաքի քաղաքային ուսումնարանի պատվավոր հոգաբարձու և հնուտ գյուղատնտես Ա. Քանանյանցը զարու բարձրորակ տեսակի ստացման համար արժանացել էր պատվավոր դիպլոմի, իսկ 1889 թ. Կովկասյան ցուցահանդեսի կողմից՝ երկու գովասանագրի՝ գորգերի և վուշի յուղի համար (**Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 69):







ԱԿԱՆԱ (ԱԿՆ, ԱԳԱՆԱ)

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 18 կմ հյուսիս, ծ. ս. 1740-1780 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. գյուղն ունեցել է 13 տուն բնակիչ, և հարկվել 10.000 ալչե<sup>1</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Կարնո Բրդոնք<sup>2</sup> գյուղից: 22 տուն բրդոնքցիները սկզբում 2 ամիս ապրել են Սամսարի տարածքում, այնուհետև նրանցից 7-ը հաստատվել է ներկայիս Ականա գյուղի տեղում՝ հիմք դնելով գյուղի գոյությանը, իսկ 15-ը՝ փոխադրվել Մեծ Արագյալ:

**Վիճակագրություն.** գյուղում հաստատվելուց ի վեր բնակչությունն անընդմեջ աճել է, որն ակնառու երևում է ստորև բերվող աղյուսակից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>3</sup>		88	81	161
1841 <sup>4</sup>		92	77	169
1842 <sup>5</sup>		100	80	180
1844 <sup>6</sup>		109	92	202
1845 <sup>7</sup>		110	100	210
1847 <sup>8</sup>		100	110	210
1849 <sup>9</sup>		100	115	215
1851 <sup>10</sup>	22	107	109	216
1853 <sup>11</sup>		115	126	241
1857 <sup>12</sup>		122	120	242
1860 <sup>13</sup>	30	135	133	268
1861 <sup>14</sup>	33	139	136	275
1862 <sup>15</sup>	33	143	141	284

1863 <sup>16</sup>		147	153	300
1864 <sup>17</sup>	33	150	163	313
1866 <sup>18</sup>	40	156	162	318
1867 <sup>19</sup>		165	171	336
1868 <sup>20</sup>		168	175	343
1869 <sup>21</sup>		174	181	355
1870 <sup>22</sup>		180	191	371
1871 <sup>23</sup>		180	193	373
1872 <sup>24</sup>		179	195	374
1873 <sup>25</sup>		182	200	382
1874 <sup>26</sup>				391
1875 <sup>27</sup>				392
1876 <sup>28</sup>		202	202	404
1877 <sup>29</sup>		185	175	360
1878 <sup>30</sup>		191	179	370
1880 <sup>31</sup>		202	187	389
1881 <sup>32</sup>		202	193	395
1882 <sup>33</sup>		209	201	410
1883 <sup>34</sup>		213	210	423
1884 <sup>35</sup>	41			
1885 <sup>36</sup>		210	206	416
1887 <sup>37</sup>		226	222	448
1889 <sup>38</sup>		239	233	472
1890 <sup>39</sup>		245	228	473
1891 <sup>40</sup>		244	227	471

1 “ճարտարապետական շրջանի ճարտարապետի ճանաչում”, էջ 194-195:  
 2 Բրդոնքը (այժմ՝ Güllüdere) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 42 կմ արևմուտք: Բրդոնքցիներ էին մասնաճյուղի Գոմ գյուղում հաստատված բնակիչների մի մասը:  
 3 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:  
 4 Նույն տեղում, գ. 3802, թ. 62-63:  
 5 Նույն տեղում, գ. 3805, թ. 78-79:  
 6 Նույն տեղում, գ. 3809, թ. 16-17:  
 7 Նույն տեղում, գ. 3811, թ. 71-72:  
 8 Նույն տեղում, գ. 3814, թ. 33-34:  
 9 Նույն տեղում, գ. 3818, թ. 40-41:  
 10 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 29:  
 11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:  
 12 Նույն տեղում, գ. 3830, թ. 53-54:  
 13 Նույն տեղում, գ. 3833, թ. 65-66:  
 14 Նույն տեղում, գ. 3839, թ. 24-25:  
 15 Նույն տեղում, գ. 3836, թ. 21-22:

16 Նույն տեղում, գ. 3843, թ. 21-22:  
 17 Նույն տեղում, գ. 3846, թ. 8-9:  
 18 Նույն տեղում, գ. 3848, թ. 74:  
 19 Նույն տեղում, գ. 3851, թ. 20-21:  
 20 Նույն տեղում, գ. 3853, թ. 28:  
 21 Նույն տեղում, գ. 3856, թ. 10:  
 22 Նույն տեղում, գ. 3857, թ. 24:  
 23 Նույն տեղում, գ. 3858, թ. 10-11:  
 24 Նույն տեղում, գ. 3859, թ. 57-58:  
 25 Նույն տեղում, գ. 3862, թ. 71-72:  
 26 Նույն տեղում, գ. 3864, թ. 27-28:  
 27 Նույն տեղում, գ. 3866, թ. 20-21:  
 28 Նույն տեղում, գ. 3868, թ. 30-31:  
 29 Նույն տեղում, գ. 3869, թ. 29-30:  
 30 Նույն տեղում, գ. 3850, թ. 218-219:  
 31 Նույն տեղում, գ. 3872, թ. 88-89:  
 32 Նույն տեղում, գ. 3873, թ. 97-98:  
 33 Նույն տեղում, գ. 3874, թ. 43-44:  
 34 Նույն տեղում, գ. 3875, թ. 48-49:  
 35 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 36 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 14:  
 37 Նույն տեղում, գ. 3880, թ. 40-41:  
 38 Նույն տեղում, գ. 3884, թ. 65-66:  
 39 Նույն տեղում, գ. 3887, թ. 147:  
 40 Նույն տեղում, գ. 3889, թ. 146:

1892 <sup>41</sup>		249	229	478
1893 <sup>42</sup>		238	227	465
1894 <sup>43</sup>		242	233	475
1897 <sup>44</sup>		261	251	512
1898 <sup>45</sup>		277	267	544
1899 <sup>46</sup>		262	247	509
1900 <sup>47</sup>		269	264	533
1901 <sup>48</sup>		268	270	538
1902 <sup>49</sup>		273	276	549
1905 <sup>50</sup>		295	291	586
1908 <sup>51</sup>	62	314	303	617
1910 <sup>52</sup>		318	297	605
1912 <sup>53</sup>		337	323	660
1914 <sup>54</sup>	69			639
1916 <sup>55</sup>		334	319	653
1918 <sup>56</sup>	73	282	275	557
1921 <sup>57</sup>		60	50	110
1968 <sup>58</sup>				715
1987 <sup>59</sup>	134			656


Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 133 ականացիներից 50-ը զոհվել է<sup>60</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գոյությունը վավերագրերում փաստված է 1865 թ-ից.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>61</sup>		1	24
1874 <sup>62</sup>		1	25
1875 <sup>63</sup>	Թորոս Ռոստոմյան Ասլանյանց		25
1880 <sup>64</sup>		1	26
1881 <sup>65</sup>		1	30


**Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի.** հիմնադրվել է 1830-ական թվականներին<sup>66</sup>: Ի սկզբանե եղել է քարաշեն, փայտածածկ<sup>67</sup>: Նույն դրության մեջ է

41 Նույն տեղում, գ. 3891, թ. 118:  
 42 Նույն տեղում, գ. 3896, թ. 171-172:  
 43 Նույն տեղում, գ. 3895, թ. 42-43:  
 44 Նույն տեղում, գ. 3899, թ. 144-145:  
 45 Նույն տեղում, գ. 3897, թ. 166:  
 46 Նույն տեղում, գ. 3903, թ. 101-102:  
 47 Նույն տեղում, գ. 3905, թ. 52:  
 48 Նույն տեղում, գ. 3906, թ. 68:  
 49 Նույն տեղում, գ. 3907, թ. 20-21:  
 50 Նույն տեղում, գ. 3912, թ. 263-264:  
 51 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 43:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 135-136:  
 53 Նույն տեղում, գ. 3920, թ. 18-19:  
 54 Նույն տեղում, գ. 887, թ. 2-3: Տե՛ս նաև՝ «Кавказский календарь на 1915 г.», էջ 83:  
 55 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 21-22:  
 56 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, թ. 1-4:  
 57 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 1:  
 58 ՀՍՀ, հ. 1, էջ 49:  
 59 Ըստ գյուղխորհրդի մատյանների:  
 60 **Գավթյան Ա.**, Ջավախք, էջ 100:  
 61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:  
 62 Նույն տեղում, գ. 3864, թ. 27-28:  
 63 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 43:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 88-89:  
 65 Նույն տեղում, գ. 3873, թ. 97-98:  
 66 Նույն տեղում, գ. 457, թ. 42-67:  
 67 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:



(ԱԿՆ). Սբ. Հրեշտակապետաց եկեղեցու տեսքը ամ-ից, հր-ամ-ից, խաչքար (ԺԷ-ԺԸ դարեր) և խաչաքանդակ եկեղեցու հր և ամ որմերին





*ԱԿԱՆԱ (ԱԿՆ). 2-րդ աշխարհամարտում զոհված  
ականացիների հիշատակը հավերժացնող հուշակոթողը*



*ԱԿԱՆԱ (ԱԿՆ). բոլորածև շրջանակով երիզված  
հավասարաթև խաչաքանդակի պատկերով քառակող կոթողի  
պատվանդան և կոթողի մնացորդ գյուղամիջում (Է դար)*





*ԱՄՓԱՐԱ. կիսավեր եկեղեցու տեսքը ամ-ից, հր-ից, ալ-ից, հատված հս ճակատի որմնակամարաշարից, որմնախոյակներ և լուսամտի զեղաքանդակ սյակ*

## ԱՐԱԿՈՎԱ



ԱՐԱԿՈՎԱ. գյուղի տեսքը հս-ից

**Տեղադրություն.** աշխարհագրական դիրքի տեսանկյունից Ջավախքի կենտրոնական բնակավայրերից է: Գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 7 կմ հյուսիս, ծ. մ. 1650-1700 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** ըստ ավանդության՝ «Մա հնունն քաղկացած է եղել Արա բերդից, որ կառուցված է եղել գետի ձախ ափին բարձրացող լեռան վրա, և Գովա գյուղից, որ գտնվելիս է եղել բերդից դեպի հյուսիս, գետի աջ ափին: Այժմ այդ երկու անունները միանալով կազմել են Արագովա անունը»<sup>1</sup>:

**Պատմություն.** 1595 թ. գյուղը 6 տուն բնակչով և 16000 ակչե հարկաչափով հիշվում է Արակոն<sup>2</sup> անունով, իսկ 1707-1708 թթ.՝ տանուտեր Հասանի օրոք, գյուղի հարկաչափը 20.500<sup>3</sup> ակչե էր:

1899-1900 թթ., հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի վնասների հետևանքով, Արակովայի գյուղատնտեսությունը հայտնվել է համեմատաբար ծանր իրավիճակում՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով աղետից տուժած երրորդ կարգի բնակավայրերի շարքում<sup>4</sup>:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 350 արակովացիներից 117-ը զոհվել է<sup>5</sup>:

**Կառուցապատում.** դեռևս 1880-ական թվականներին Արակովայի բնակելի տների զգալի մասը կիսագետնափոր էր. «Տներն ընդհանրապես կիսագետնափոր են, միայն քահանան ունի եվրոպական ճաշակով շինված և զարդարված սենյակներ»<sup>6</sup>:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Բայբուրդից և Կարնո Ջինիս<sup>7</sup> գյուղից:

**Վիճակագրություն.** ԺԹ-ի դարերի ընթացքում գյուղի բնակչությունն անընդհատ աճել է, որը հըստակ երևում է ներկայացվող աղյուսակից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>8</sup>		222	211	433
1840 <sup>9</sup>		358	299	657
1841 <sup>10</sup>		306	304	610
1842 <sup>11</sup>		330	320	650

5 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

6 Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 61:

7 Ջինիսը (այժմ՝ Ortabahçe) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 33 կմ արևմուտք: Ի դեպ, Ջինիսցիների մի մասն էլ հաստատվել է Գոմ, Սաթխա և Սաղամո գյուղերում:

8 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, ք. 7-8:

9 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:

10 Նույն տեղում, գ. 3802, ք. 65:

11 Նույն տեղում, գ. 3805, ք. 80:

1 Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 60:

2 “Եջրջոնճանոն յոգլայոտոն ճոցո ճոցոթարո”, էջ 220:

3 “Նոլլոթոն յոգլայոտոն ճոցո ճոցոթարո 1694-1732 ՎՎ”, էջ 127:

4 Մալլիանան, Անբերրիութիւնը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեանքները, էջ 248:



1844 <sup>12</sup>		357	341	698	1885 <sup>44</sup>		440	438	878
1845 <sup>13</sup>		380	387	767	1887 <sup>45</sup>		476	477	953
1847 <sup>14</sup>		143	129	272	1889 <sup>46</sup>		503	500	1003
1849 <sup>15</sup>		149	149	298	1890 <sup>47</sup>		500	508	1008
1851 <sup>16</sup>	53	213	183	396	1891 <sup>48</sup>		512	515	1027
1853 <sup>17</sup>		228	240	468	1892 <sup>49</sup>		502	485	987
1854 <sup>18</sup>		233	235	468	1893 <sup>50</sup>	110	501	470	971
1857 <sup>19</sup>		227	237	464	1894 <sup>51</sup>		514	490	1004
1860 <sup>20</sup>		215	209	424	1897 <sup>52</sup>		401	366	767
1861 <sup>21</sup>		245	210	455	1898 <sup>53</sup>		425	391	816
1862 <sup>22</sup>		255	222	477	1899 <sup>54</sup>		415	368	783
1863 <sup>23</sup>		265	233	498	1900 <sup>55</sup>		437	381	881
1864 <sup>24</sup>		285	247	530	1901 <sup>56</sup>		448	381	829
1865 <sup>25</sup>		285	246	531	1902 <sup>57</sup>		459	407	866
1866 <sup>26</sup>	63	285	246	531	1905 <sup>58</sup>		484	442	926
1867 <sup>27</sup>		314	262	576	1907 <sup>59</sup>				1100
1868 <sup>28</sup>		322	272	594	1908 <sup>60</sup>	132	504	469	973
1869 <sup>29</sup>		327	287	614	1910 <sup>61</sup>		505	474	979
1870 <sup>30</sup>	63	337	286	623	1912 <sup>62</sup>		541	511	1052
1871 <sup>31</sup>		340	283	623	1914 <sup>63</sup>		573	534	1107
1872 <sup>32</sup>		345	298	643	1916 <sup>64</sup>		584	544	1128
1873 <sup>33</sup>		349	306	655	1918 <sup>65</sup>	258	928	930	1858
1874 <sup>34</sup>				677	1919 <sup>66</sup>				1420
1875 <sup>35</sup>				684	1921 <sup>67</sup>		300	250	550
1876 <sup>36</sup>		364	338	702	1970 <sup>68</sup>				1560
1877 <sup>37</sup>		389	356	745	1987 <sup>69</sup>	354			1528
1878 <sup>38</sup>		401	377	778					
1880 <sup>39</sup>		417	397	814					
1881 <sup>40</sup>		417	389	806					
1882 <sup>41</sup>		430	406	836					
1883 <sup>42</sup>		422	408	830					
1884 <sup>43</sup>	78								

**Եկեղեցական-ծխական արական դպրոց.** հիմնադրման ստույգ թվականն անհայտ է, բայց արդեն 1865 թ. գործել է.



12 Նույն տեղում, գ. 3809, թ. 17:  
 13 Նույն տեղում, գ. 3811, թ. 71-72:  
 14 Նույն տեղում, գ. 3814, թ. 35:  
 15 Նույն տեղում, գ. 3818, թ. 40:  
 16 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 27:  
 17 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 38-39:  
 18 Նույն տեղում, գ. 3825, թ. 49-50:  
 19 Նույն տեղում, գ. 3830, թ. 54-55:  
 20 Նույն տեղում, գ. 3833, թ. 66:  
 21 Նույն տեղում, գ. 3839, թ. 25:  
 22 Նույն տեղում, գ. 3836, թ. 22:  
 23 Նույն տեղում, գ. 3843, թ. 20-21:  
 24 Նույն տեղում, գ. 3846, թ. 9:  
 25 Նույն տեղում, գ. 3848, թ. 11-14:  
 26 Նույն տեղում, գ. 3848, թ. 74:  
 27 Նույն տեղում, գ. 3851, թ. 20-21:  
 28 Նույն տեղում, գ. 3853, թ. 27:  
 29 Նույն տեղում, գ. 3856, թ. 10:  
 30 Նույն տեղում, գ. 3857, թ. 19-20:  
 31 Նույն տեղում, գ. 3858, թ. 10:  
 32 Նույն տեղում, գ. 3859, թ. 57:  
 33 Նույն տեղում, գ. 3862, թ. 71-72:  
 34 Նույն տեղում, գ. 3864, թ. 27:  
 35 Նույն տեղում, գ. 3866, թ. 22:  
 36 Նույն տեղում, գ. 3868, թ. 30-31:  
 37 Նույն տեղում, գ. 3869, թ. 28-29:  
 38 Նույն տեղում, գ. 3850, թ. 218-219:  
 39 Նույն տեղում, գ. 3872, թ. 88:  
 40 Նույն տեղում, գ. 3873, թ. 98:  
 41 Նույն տեղում, գ. 3874, թ. 44:  
 42 Նույն տեղում, գ. 3875, թ. 48-49:  
 43 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 10:  
 45 Նույն տեղում, գ. 3880, թ. 40-41:  
 46 Նույն տեղում, գ. 3884, թ. 65-66:  
 47 Նույն տեղում, գ. 3887, թ. 146:  
 48 Նույն տեղում, գ. 3889, թ. 145:  
 49 Նույն տեղում, գ. 3891, թ. 77:  
 50 Նույն տեղում, գ. 3895, թ. 121-122: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 794:  
 51 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 290, թ. 21-22:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 143-144:  
 53 Նույն տեղում, գ. 3897, թ. 165:  
 54 Նույն տեղում, գ. 3903, թ. 101-102: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 128 տուն, 960 շունչ (**Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 7):  
 55 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 52:  
 56 Նույն տեղում, գ. 3906, թ. 68:  
 57 Նույն տեղում, գ. 3907, թ. 19-20:  
 58 Նույն տեղում, գ. 3912, թ. 262-263:  
 59 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 95, թ. 105:  
 60 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 43:  
 61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 135-136:  
 62 Նույն տեղում, գ. 3920, թ. 18-19:  
 63 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, թ. 173-174: Նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 1420 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 89).  
 64 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 20-21:  
 65 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, թ. 1-4:  
 66 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 6:  
 67 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 1:  
 68 ՀՄՀ, հ. 1, էջ 685:  
 69 Ըստ գյուղխորհրդի մատյանների:

տարեթիվ	այլ տեղեկ.	ռաուցիչ	աշակերտ
1865 <sup>70</sup>		1	23
1874 <sup>71</sup>	գործել է		
1876 <sup>72</sup>			27
1877 <sup>73</sup>			27
1878 <sup>74</sup>			27
1881 <sup>75</sup>			60

**Արքունի (ռուսական) դպրոց.** 1884 թ-ից հետո գյուղում բացվել է նաև արքունի շինական (ռուսական) դպրոց, որի գոյության պայմաններում հայոց դպրոցը փակվել է: Համենայն դեպս, 1884 թ. ծխական դպրոցն ուներ ընդամենը մի քանի աշակերտ. «...բացում է այստեղ շինական արք. դպրոց, իսկ հայոց եկեղեցույ գաթում կայ սրբատաշ քարով կառուցած դպրոց, ուր այժմ սովորում են մի քանի երեխաներ մասնաւոր ընթերցանութիւն»<sup>76</sup>: 1885 թ. հայոց դպրոցի փակումից հետո Արակովայում գործել է միայն ռուսականը, իսկ հայոց դպրոցի շենքը վերածվել է պահեստի. «...ռուսաց դպրոցի հիմնելուց ի վեր ծառայում է իբրև հասարակաց շտեմարան»<sup>77</sup>:

**Սբ. Գևորգ եկեղեցի.** հիմնադրվել է 1830-ականներին: Առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1841 թ.<sup>78</sup>: Եկեղեցին տեր Գրիգոր Տեր-Ավետիսյանի միջոցներով<sup>79</sup> հիմնովին վերակառուցել է 1877 թ. Կարինից Աբասթուման գաղթած ճարտարապետ Գրիգոր Կիրակոսյանը<sup>80</sup>: Այն իր ժամանակի աչքի ընկնող շենքերից էր. «Այս գիւղը ունի մի մեծ հոյակապ եկեղեցի...: Եկեղեցին կանգնած է 12 սիւների վրայ, որոնցից իւրաքանչիւրի վրա նկարված է մի-մի առաքելի պատկեր...»<sup>81</sup>, բայց արդեն 1890-ականներին եկեղեցու շենքը քայքայված վիճակում էր. «...եկեղեցու դռները մինչև այժմ փակ են հնութեան պատճառով: Գիւղացիք կամենալով մի նոր եկեղեցի կառուցանել, դիմել են ճարտարապետ պ. Ն. Գրիգորեանի խորհուրդներին»<sup>82</sup>: 1899 թ. մի տեղեկագրում կարդում ենք. «...սհա 2-3 տարի է, ինչ քանդուել է եկեղեցին, և մենք մնացել ենք առանց ժամ ու պատարագի...»<sup>83</sup>: Դրությունը չէր փոխվել նաև 1901 թ.<sup>84</sup>: Վերջապես 1903 թ. սկսվում



ԱՐԱԿՈՎԱ. Սբ. Գևորգ եկեղեցու տեսքը հր-ալ-ից 1988 և 2005 թթ., հաստակագիծը

է եկեղեցու շինարարությունը. «...Արագովան արդեն ձեռնարկել է գործի: Առայժմ քանդում են հինը՝ նորը կառուցանելու համար»<sup>85</sup>: Աշխատանքներն ավարտվում են 1905 թ., իսկ հանդիսավոր օծումը կատարվում է 1909 թ. (ըստ տեղացիների վկայության): Նորակառույց եկեղեցին բավական ընդարձակ (24,90 x 14,70 մ) կառույց է, որի թմբուկը փայտաշեն է, իսկ մնացած մասերը՝ քարաշեն: Արևմտյան ճակտոնի գագաթին զանգակատունն է:

<sup>85</sup> «Արարատ», 1903, էջ 437:

<sup>70</sup> ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:

<sup>71</sup> Խոտրոյան Ս., նշվ. աշխ., էջ 514:

<sup>72</sup> ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 52:

<sup>73</sup> Նույն տեղում, թ. 130:

<sup>74</sup> Նույն տեղում, թ. 178:

<sup>75</sup> Խոտրոյան Ս., նույն տեղում:

<sup>76</sup> «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

<sup>77</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 60-61:

<sup>78</sup> ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 1005, թ. 1, 22:

<sup>79</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 60:

<sup>80</sup> ՀԱԳ, ֆ. 227, ց. 1, գ. 27, թ. 4:

<sup>81</sup> «Մշակ», 1877, № 10, էջ 2:

<sup>82</sup> «Նոր-Գար», 1896, № 201, էջ 3:

<sup>83</sup> «Նոր-Գար», 1899, № 187, էջ 2:

<sup>84</sup> «Մշակ», 1901, № 98, էջ 3:



ԱՐԱԿՈՎԱ. Սր. Գևորգ եկեղեցու տեսքը հս-ամ-ից 1988 և 2005 թթ. և զանգակատունը



ԱՐԱԿՈՎԱ. Սր. Գևորգ եկեղեցու ամ ճակատին ագուցված խաչքար (1741 թ.)

Ներկայումս կանգուն ու անվնաս է՝ բացառությամբ թմբուկից, որն իսպառ քայքայված է:

Խաչքար. ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին, հորինվածքի ստորին մասում՝ 5 տող.

Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ ԲԱՐԵԽՕՍ Է ԱՌ Ա(Ս-ՏՈՒԱ)Ծ | ՎԱՄՆ ԳՐԻԳՈՐԻՆ ԾՆՕՂԱՅ. | ՂԱ-ՉԱՐԻՆ, ՍԱՌԱ(Յ)ԻՆ ԵՒ | ՅԱՆԳՈՒՅԵԱԼ ՀԱՄ-ԲԱՐԻՆ: | ԹՎԻՆ ՌՃՂ (1741):

Հրատ. Կարապետյան Մ., նշվ. աշխ, էջ 13:

**Գերեզմանոց.** տարածվում է եկեղեցու բակում: Տեղում պահպանվել են ԺԹ դարի տապանաքարեր:

Տապանաքար օրորոցածև (96 x 52 x 42 սմ). եկեղեցու հարավային կողմում, ունի հնգատող արձանագրություն.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ՀԱՆԳԸՍՏԵԱՆ | ԴՇԽՈՒՔԻՆԻՆ | ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՔԱՂԱՆԱՅԻ. 1862:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար ուղղանկյունածև (196 x 51 x 68 սմ). եկեղեցու հարավային կողմում, արևմտյան կողմին՝ 7 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՈՍԿԵՐՔ ՄԵԾԱՂ(Ա)ՄԲ(Ա)Ի ԳՐԻԳՈՐ ԱԻ(Ա)Գ Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա)ՅԻ ՏԷՐ | Ա-ԻՏՏ(Ի)ՍԵ(Ա)Ն. ՈՐ ԾՆԱԻ ԵՍԱՅԻ. Ի ՆԱՀԱՆՔՆ | ԿԱՐՆՈՅ, Ի ԳԻԻՂՆ ԴԻՆԻՍ, ԸՆԿ(Ա)ԼԻ ԿԱՐՔ | Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա)Յ(ՈՒԹ)Ե(ԱՆ) ԵՒ Կ(ԱՐԱ)ՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿ(ՈՊՈ)ՍԷ ՄԻՆՉ Յ(Ա)ՐԴ | ՋԱՍԵՆԱՅՆ ՀՈԳԵԻՈՐ ՊԷՏՄՆ ՎՃԱՐԵԱՅ | ԵՒ ՈՐ ՈՔ ԸՆԹԵ(Ր)[Ս]ՅԻ ՅԻՇԵՍՅԷ ՋԻՍ (18)90:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գյուղում նոր եկեղեցի կառուցած ջինիսցի տեր Գրիգորի շիրմաքարն է:



*ԱՐԱԿՈՎԱ. տապանաքար և խաչքար Սր. Գևորգ եկեղեցու բակում, բերդ-աշտարակ գյուղի հս եզրին և նորակառույց մատուռ գյուղի հր կողմում՝ գերեզմանոցի հարևանությամբ*

**Հին եկեղեցի.** Արակովա գյուղում՝ նոր եկեղեցուց փոքր-ինչ հյուսիս, պահպանվում են վաղ միջնադարյան հիմնավեր եկեղեցու մնացորդներ (խորանի հատվածում), ճարտարապետական առանձին բեկորներ (երեսապատի սրբատաշ քարեր, քիվեր), ոչ հեռու՝ նաև խոյածև տապանաքար (ԺՂ-ԺԵ դարեր):

**Բերդ-աշտարակ.** գյուղի հյուսիսային եզրի փոքրիկ բլրի գագաթին պահպանվում են հատակագրծում ուղղանկյունաձև բերդ-աշտարակի մնացորդները՝ շարված մեծաչափ կիսամշակ քարերով, կրաշաղախով: Ըստ տեղացիների վկայության՝ մի քանի հարյուր մետր երկարությամբ ստորգետնյա մի անցք սկիզբ է առնում հիշյալ բերդ-աշտարակի մոտից:

ԱՓՆԻԱ



ԱՓՆԻԱ. գյուղի վրաց եկեղեցու տեսքը հր-ամ-ից և հս-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 17 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1740-1748 մ բարձրության վրա, դեպի Կուր գետը նայող խորանրունդ ձորապռնկի հարթության վրա:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Ափնիան ունեցել է 35 տուն, հարկվել է 10.000 ակչե<sup>1</sup>: Բնակչության բռնի մահմեդականացումից հետո, 1705-1706 թթ.՝ տանուտեր Օսմանի օրոք, գյուղը հարկվել է 24.499 ակչե<sup>2</sup>:

1990-ական թթ. կառավարության ջանքերի շնորհիվ Ափնիայում վերաբնակիչ աջարների համար կառուցվել են շուրջ 30 բնակելի երկհարկ տներ, որոնց մեծ մասն այժմ օգտագործվում է որպես գոմ:

**Տնտեսություն.** 1899-1900 թթ., հացի բզեզի և հոտենոտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով, Ափնիայի գյուղատնտեսությունը հայտնվել է ծանր կացության մեջ: Այդ պատճառով կառավա-

րական հատուկ կոմիտեն բնակավայրը դասել է երկրորդ կարգի տուժած գյուղերի շարքում<sup>3</sup>:

**Վիճակագրություն.** վրացաբնակ այս գյուղում խորհրդային տարիների ընթացքում տեղի է ունեցել բնակչության շարունակական նվազում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1901 <sup>4</sup>	16	95	82	177
1914 <sup>5</sup>				369
1987 <sup>6</sup>	6			17

**Եկեղեցի.** գյուղում կանգուն է համակ սրբատաշ քարից (բացառությամբ հյուսիսային ճակատի) Ի դարի սկզբին կառուցված, հարավից միակ մուտքով, արևմտյան ճակտոնին քառասյուն զանգակատնով վրացական եկեղեցին: Ն. Բերձենիշվիլու վկայությամբ՝ եկեղեցու բակում պահպանվել են պատվանդանն ու քառակող, քանդակազարդ կոթո-

1 “Զըրձեսթանի շիջաօյտի ձոցի ձեթարի”, էջ 214-215:


2 “Խոջեօրի շիջաօյտի ճածա ձեթարի 1694-1732 ՎՎ.”, էջ 120:

3 Մալխան, Անբերրիությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեանքները, էջ 248:

4 «Մշակ», 1901, № 40, էջ 1:

5 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 89:

6 Ըստ գյուղխորհրդի տվյալների:



ԱՓՆԻԱ. եկեղեցու կտրվածքների չափագրությունները՝ ըստ «Ջ. Գեօրգի. Իսტորիულ-նորոմոդերնული Գ Ֆոթոգրաֆի»-ի

ըը, որը տեղագրիների կողմից անվանվում էր «սվետի» (սրբապատկեր) կամ «ջվարի» (խաչ)<sup>7</sup>:

**Քառակող-կոթող.** Ափնիա-Միրաշխան ճանապարհին գտնվող ևս մեկ՝ 1,5 մ բարձրությամբ քառակող կոթող է նկարագրել Ն. Բերձենիշվիլին<sup>8</sup>:

<sup>7</sup> Զերձենիշվիլի Ն., նշվ. աշխ., էջ 113:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 114:

## ԲԱԼԱՆԹԱ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 24 կմ հյուսիս, ծ. ս. 1920-1960 մ բարձրության վրա:

**Պատմություն.** 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հայտնի հարկացուցակում Բալանթան հիշվում է որպես ռայաներից ազատ և 12.000 ակչե հարկվող գյուղ<sup>1</sup>:

Ներկայումս վրացաբնակ այս գյուղը վարչականորեն գտնվում է Բորժոմի շրջանում:

**Բնակչություն.** նախախորհրդային տարիներին Բալանթայում հայեր չեն բնակվել: 1914 թ. գյուղը զուտ վրացաբնակ էր (329 շունչ), սակայն խորհրդային տարիներին ու հատկապես 1944 թ. հետո,

երբ մեսխեթցի թուրքերը ենթարկվեցին համատարած աքսորի, բալանթացի վրացիների մի զգալի մասը փոխադրվում է այգեվետ Մինագա (Մինաձե) գյուղը (Ախալցխայի շրջան), իսկ Բալանթայում բնակություն են հաստատում մերձակա գյուղերից (հատկապես՝ Բեժանոյից) տեղափոխված հայերը:

Այժմ Բալանթան վրացի և հայ բնակչությամբ գյուղ է:

**Վրացական եկեղեցի.** գտնվում է գյուղի կենտրոնում:

**Ալանթա գյուղատեղի.** ավերակները պահպանվել են Բալանթայից արևմուտք<sup>2</sup>:

<sup>1</sup> “Գურჯոսթանոս ցոլաօյտոս ճոճո ճագոարո”, էջ 209:

<sup>2</sup> Զերմենիժցոլո Ե., նշվ. աշխ., էջ 141:

## ԲԱԼԽՈ



ԲԱԼԽՈ. գյուղի տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 12 կմ հյուսիս-արևելք, Սք. Սար կոչվող լեռան հարավային ստորոտին, ծ. մ. 1730-1760 մ բարձրության վրա:

**Պատմություն.** Բալխոն 1899 թ. երկրաշարժից առավել շատ տուժած գյուղերից էր, որտեղ թեև զոհեր չէին եղել, սակայն 48 տնից 45-ը քանդվել էր<sup>1</sup>: Վիճակը շտկելու նպատակով տուժած գյուղերին օգնություն ցուցաբերող կոմիտեի միջոցներով 1902 թ. կառուցվել է 11 տուն (յուրաքանչյուրը՝ 600 ռ. արժողությամբ)<sup>2</sup>:

**Բնակչություն.** հայտնի է, որ ԺԸ դարի երկրորդ կեսին Բալխոյում հաստատվել են դարափափախ թուրքերը<sup>3</sup>:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 1829-30 թթ. փոխադրվել են Կարնո նահանգի համանուն գավառի Ծաղկի (Ծաղկիս)<sup>4</sup> գյուղից:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի բնակչությունը շարունակաբար աճել է: Դրանում կարելի է համոզվել վիճակագրական տվյալների համադրմամբ ստեղծված հետևյալ աղյուսակից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>5</sup>		63	64	127
1841 <sup>6</sup>		67	60	127
1842 <sup>7</sup>		71	68	139
1844 <sup>8</sup>		81	79	160
1845 <sup>9</sup>		85	82	167
1847 <sup>10</sup>		83	77	160
1849 <sup>11</sup>		87	89	172
1853 <sup>12</sup>		90	80	170
1854 <sup>13</sup>		95	91	186
1857 <sup>14</sup>		95	98	193
1860 <sup>15</sup>		107	107	214

5 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

6 Նույն տեղում, գ. 3802, թ. 64:

7 Նույն տեղում, գ. 3805, թ. 78:

8 Նույն տեղում, գ. 3809, թ. 15:

9 Նույն տեղում, գ. 3811, թ. 71-72:

10 Նույն տեղում, գ. 3814, թ. 35:

11 Նույն տեղում, գ. 3818, թ. 41:

12 Նույն տեղում, գ. 2743, թ. 37-38:

13 Նույն տեղում, գ. 3825, թ. 48-49:

14 Նույն տեղում, գ. 3830, թ. 53-54:

15 Նույն տեղում, գ. 3833, թ. 66:

1 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

2 «Մշակ», 1902, № 265, էջ 1:

3 Центральный государственный исторический архив Ленинграда (այսուհետև՝ ЦГИАЛ), ֆ. 1262, օ. 1, Ժ. 25, էջ 453: Տե՛ս նաև՝ ԼՊՄՆՏՁԳ Ձ., նշվ. աշխ., էջ 332:

4 Ծաղկին (Ծաղկիս, այժմ՝ Տենյուրտ) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 34 կմ հյուսիս-արևելք: Ի դեպ, ծաղկիցիների մի մասն էլ հաստատվել էր Սաթխա գյուղում:





ԲԱԼԽՈ. Սր. Սահակ-Պարբև (Սր. Հարություն) եկեղեցու տեսքը հս-ամ-ից և հր-ամ-ից

1861 <sup>16</sup>		118	115	233	1897 <sup>36</sup>		243	224	467
1862 <sup>17</sup>		120	119	239	1898 <sup>37</sup>		254	242	496
1863 <sup>18</sup>		123	123	246	1899 <sup>38</sup>		244	219	463
1864 <sup>19</sup>		125	121	246	1900 <sup>39</sup>		257	228	485
1865 <sup>20</sup>		126	119	245	1901 <sup>40</sup>		264	240	504
1866 <sup>21</sup>	19	126	119	245	1902 <sup>41</sup>		267	240	507
1867 <sup>22</sup>		128	126	254	1905 <sup>42</sup>		297	259	556
1868 <sup>23</sup>		131	130	261	1908 <sup>43</sup>	63	308	275	583
1869 <sup>24</sup>		140	138	278	1910 <sup>44</sup>		305	280	585
1873 <sup>25</sup>		147	149	296	1912 <sup>45</sup>		329	285	614
1875 <sup>26</sup>	30				1914 <sup>46</sup>		240	289	529
1878 <sup>27</sup>		170	170	340	1916 <sup>47</sup>		248	300	548
1884 <sup>28</sup>	28				1918 <sup>48</sup>	75	270	330	600
1887 <sup>29</sup>		223	191	414	1921 <sup>49</sup>		110	90	200
1889 <sup>30</sup>		231	198	429	1987 <sup>50</sup>	186			800
1890 <sup>31</sup>		231	198	429					
1891 <sup>32</sup>		238	208	446					
1892 <sup>33</sup>		229	206	435					
1893 <sup>34</sup>	40	224	203	427					
1894 <sup>35</sup>		224	204	428					

16 Նույն տեղում, գ. 3839, ք. 25:  
 17 Նույն տեղում, գ. 3836, ք. 22:  
 18 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 19 Նույն տեղում, գ. 3846, ք. 9:  
 20 Նույն տեղում, գ. 3848, ք. 12-13:  
 21 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 22 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 23 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:  
 24 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 25 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 26 «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 27 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 218-219:  
 28 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 29 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, ք. 40-41:  
 30 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 31 Նույն տեղում, գ. 3887 ք. 146:  
 32 Նույն տեղում, գ. 3889, ք. 145:  
 33 Նույն տեղում, գ. 3891, ք. 117:  
 34 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 793:  
 35 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 170-171:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 107 բալխոցիներից 60-ը զոհվել է<sup>51</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** Բալխոն, հալառակ իր ոչ այնքան բազմամարդության, նույն-

36 Նույն տեղում, գ. 3899, ք. 143-144:  
 37 Նույն տեղում, գ. 3897, ք. 166:  
 38 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 39 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 40 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 41 Նույն տեղում, գ. 3907, ք. 20-21:  
 42 Նույն տեղում, գ. 3912, ք. 263-264:  
 43 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 45 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 46 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 174-175: Ի դեպ, նույն թվականի հունվարի 1-ին անցկացված մեկ այլ մարդահամարի տվյալների համաձայն, գյուղն ունեցել է 623 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 96):  
 47 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 21-22:  
 48 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 49 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 50 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 51 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:



ԲԱԼԽՈ. Սր. Սահակ-Պարթև (Սր. Հարություն) եկեղեցու (1868 թ.) և շրջապարսպի (1898 թ.) շինարարական արձանագրությունները և Մինաս քահանա Սկրտչյանի տասպանաբարը (1879 թ.)

պես կարողացել է բացել դպրոց, որի գործունեությունը, ըստ դիվանական վավերագրերի, ծավալվել է հետևյալ կերպ.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>52</sup>		1	21
1873 <sup>53</sup>			15
1875 <sup>54</sup>	Խաչատուր Մուրադյանց		15
1880 <sup>55</sup>	գործել է		
1988	9-ամյա		118

**Սր. Սահակ-Պարթև (Սր. Հարություն) եկեղեցի.**

հիմնել են 1830-ականների սկզբին ավերակ գյուղատեղիում հաստատված հայերը: Եկեղեցու նախնական շենքը, որը հիշատակվում է, օրինակ, 1839 թ.<sup>56</sup>, օծված է եղել Սր. Հարություն անվամբ և քարաշեն, փայտածածկ կառույց էր: Բազմաթիվ վավերագրերում մինչև 1868 թ. եկեղեցին հիշատակվում է Սր. Հարություն անվամբ, սակայն 1869 թ-ից հիշվում է նոր՝ Սր. Սահակ-Պարթև անվամբ<sup>57</sup>: Հետևում է, որ 1868-1869 թթ. տեղի է ունեցել եկեղեցու վերակառուցում և օծում: Եվ իրոք, այժմ էլ կանգուն եկեղեցու արևմտյան կողմից բացված մուտքի բարավորին փորագրված արձանագրությունը հաստատում է վերը նշվածը:

Արձանագիր քար. եկեղեցու մուտքի բարավորին, 11 տող.

ՆՈՐՈԳԵՑԱԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻՍ | ԱՆՈՒԱՄԲ Ս(ՈՒՐ)Բ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅՈՐԴՈՐՍԱՄԲ ԵՒ ԽՐԱՏԻՔ ԽԱՉԱԿԻՐ | ՄԻՆԱՍ ԲԱԿ(Ա)ՆԱ(Յ)Ի ՄԿՐՏՉԵԱՆ. 1868 | ՊԱԼԽՈՅ ԳԵՂՁ:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր քար՝ ընկած եկեղեցու առջև, 9 տող.

ՇԻՆԵՑԱԻ ՊԱՐԻՍՊ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԴԵԱՄԲ ԲԱՐԵՊԱՇՏ ԱԴԱՄ ՍՈՂՈՍՈՆԵԱՆԻ ԵՒ ԵՂԲՈՐ | ՈՐԴՈՅ ԻՐՈՆ ... ԻՇԱՍԱԿ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՂԲԱՐՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ | ԵՒ ԳՐԻԳՈՐԻ. 15 ՄԱ(Յ)ԻՄԻ 1898 ԱՄԻ. ՊԱԼԽՈ ԳԻՐԱ:

Հրատ. առաջին անգամ:

Տասպանաքար. եկեղեցու առջև, 4 տող.

1879 ԱՄԻ 10-Ն ՅՈՒՆԻՄԻ ՊԱԼԽՈ ԳԵՂՁ. | ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՏԱՊԱՆ ԵՒ ՈՍԿԵՐԸ ՄԵԾԱՀԱՄԲԱԻ ՄԻՆԱՍ ԽԱՉԱԿԻՐ | ԲԱԿԱՆԱՅԻ ՄԿՐՏՉԵ(Ա)Ն ԾՆԵ(Ա)Լ Ի ԿԱՐԻՆ Բ(Ա)Ղ(Ա)ԲԷ ԹԻՒՆ 1815, 8 ՅՈՒՆԻՄԻ ԵՒ | ԱՅԺՄ ԱՄՓՈՓԵՑԱԻ ԱՆՈՒԱՄԲ Ս(ՈՒՐ)Բ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ ԵԿ(Ե)ՂԵՑՈՅ Յ(ԻՇԱ)ՍԱԿԻ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հայտնի է, որ Մինաս Սկրտչյանը քահանա է ձեռնադրվել Կարինում, Էջմիածնի միաբան Ղազար արքեպիսկոպոսի կողմից (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 192, թ. 52): Նրա մասին ունենք նաև 1859 թ. հիշատակություն (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 3891, թ. 1): 1868 թ. գլխավորել է հնի տեղում նոր եկեղեցու կառուցման աշխատանքները: Վախճանվել է 1879 թ.:


52 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:  
 53 **Խուրդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 514:  
 54 ՀԱԴ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 43:  
 55 **Խուրդյան Ս.**, նույն տեղում:  
 56 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 42-67:  
 57 Նույն տեղում, գ. 3856, թ. 9:



տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1884 <sup>7</sup>				310
1908 <sup>8</sup>	50			455
1912 <sup>9</sup>				407
1914 <sup>10</sup>				597
1915 <sup>11</sup>				481
1916 <sup>12</sup>	62	272	224	496
1987 <sup>13</sup>	346			1387

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 103 բավրացիներից 50-ը զոհվել է<sup>14</sup>:

**Հին եկեղեցի.** գյուղատեղիի վերածված Բավրա-յում 1829-30 թթ.՝ հայ-կաթոլիկների հաստատման ժամանակ, երբ գյուղացիները դեռևս գտնվում էին նյութական ծանր կացության մեջ և եկեղեցի կառուցելու հնարավորություն չուներին, ձեռնարկում և իրականացնում են տեղում գոյություն ունեցող եկեղեցու նորոգումը (փլված տանիքը փոխարինում են փայտածածկով): ԺԱ դարով թվագրվող և ըստ ամենայնի ի սկզբանե բյուզանդածես այս եկեղեցին



ԲԱՎՐԱ. հին եկեղեցու հատակագիծը

բավրացիներին որպես հոգևոր ժողովարան է ծառայել մինչև 1887 թ., երբ տնտեսապես համեմատաբար ամրացած գյուղացիները ձեռնամուխ են լինում նոր, ընդարձակ եկեղեցու կառուցմանը:

Թաղածածկ, միանավ եկեղեցին կանգուն է: Կառուցված է համակ սրբատաշ քարով: Վերջինիս հարավից կից է համանման հորինվածքով երկրորդ եկեղեցին, որը տվյալ դեպքում ավելի հարմար է կոչել սրահ-եկեղեցի: Չույզ կառույցները միասին ունեն 8 x 7,9 մ արտաքին չափեր:

7 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

8 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 40:

9 **Յակոբեան Պ.**, Հրատեր ողջմտութեան, էջ 95:

10 «Кавказский календарь на 1915 г.», էջ 94.

11 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 82:

12 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 36-37:

13 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

14 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:



ԲԱՎՐԱ. հին եկեղեցու տեսքը հս-ալ-ից, ամ-ից, հատված հրկողմից կից սրահ-եկեղեցու խորանին հարող մասից

1. Արձանագրություն, եկեղեցու արևելյան ճակատից բացված լուսամուտից ներքև.

ԿՂ ԾԾ[10]Ղ ՆՓԺԴ



ԲԱՎՐԱ. հին եկեղեցուն հր-ից կից սրահ-եկեղեցու ներքին տեսքը դեպի ալ, հր ճակատը ներքուստ, ամ ճակատի վերնամասում պահպանված վրաց մետրոպոլիտոս արձանագրությունը և քառակող կորովի պատվանդան

ქ(რისტ)ე, ა(დი)დე ს(ო)ფრ(ო)ნ.

Թարգմ. *Քրիստոս, փառավորիչ Սոփրոնին:*

Հրատ. **Brosset M.**, *Melanges asiatiques*. II, էջ 343: **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 39: **Джанашвили М.**, *СМОМПК*, XVI, էջ 102: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 29: **Գոսգարիշվիլի Գ.**, նշվ. աշխ., էջ 121: “ჯავახეთი. ისტორიულ-ხროთმოძღვრული გზამკვლევი”, էջ 55:

Տարբերություն. Մ. Բրոսսե՝ ՄՊ Ի. Ռոստոմաշվիլին ՄՊՄՊ ՍՓԻՆ փոխարեն ունի ՄՊ ՂՏՓԻՆ; Մ. Ջանաշվիլին Ի. Ռոստոմաշվիլու հրատարակած արտանկարի հիման վրա քարզանաբար առաջարկել է սխալ ընթերցում՝ “Христе, прослави Георгия (?) Софрона”; է. Թաղաշվիլի՝ ՄՊ; Վ. Յիսկարիշվիլի՝ ՄՊ:

Ծանոթ. Մ. Բրոսսեի արձանագրությունը հրատարակել է առանց հապավման նշանների: Վ. Յիսկարիշվիլին ունական առանձնահատկությունների հիման վրա արձանագրությունը թվագրել է Ժ-ԺԱ դարերով:

2. Արձանագրություն, եկեղեցու արևմտյան պատին.

†. ՆՏԷ[ԴԵՆԴԵ] ՈԳՆՏԴԵՏ ԾՂԳ ՂՍ ԴԵԴԻ-ՆԴ ՔՇ ՍՓԻՆ ԿՂԻԿՂՆ ՍՏԴԵՏ

†. Տախ[ելուտա] լմրտոսստոս ա(ե)գո Եսե Եկկլեսիա Մ(միլա)ձ Ն(ո)ֆ(ր)ոնիս լոնկոլ(ս)Ն ժ(ո)Ն(ս)տա.

Թարգմ. *Աստուծո անունով շինվեց այս սուրբ եկեղեցին Սոփրոն Բոնրոյասի որդու (Բոնրոյասձեի) կողմից:*

Հրատ. **Brosset M.**, *Melanges asiatiques*. II, էջ 343: **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 38: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 29: **Գոսգարիշվիլի Գ.**, նշվ. աշխ., էջ 122: **Ներթեմիշվիլի Ն.**, նշվ. աշխ., էջ 107: **Նոլոգաջ Գ.**, Նամճե-Ջավախեթոսի Իստորիոլու թշխեթոս լարտուլու Եօիգրաֆիկուլու ժեղեթո, էջ 46, 118, 134: “ჯავახეთი. ისტორიულ-ხროთმოძღვრული გზამკვლევი”, էջ 55:





*ԲԱՎՐԱ. հին եկեղեցու հարևանությամբ տարածված միջնադարյան գերեզմանոցը*

**Գերեզմանոց.** տարածվում է եկեղեցու շուրջը: Տեղում պահպանվել են խաչքարերի և քառակող կոթողների պատվանդաններ և անարձանագիր ու տեղահան՝ պարզ հորինվածքով սակավաթիվ խաչքարեր: Հիմք ընդունելով տեղում պահպանված մի քանի խաչքարերի ոճական և գեղարվեստական առանձնահատկությունները՝ կարելի է պնդել, որ գերեզմանոցի հին թաղումները վերաբերում են Ժ-ԺԱ դարերին և պատկանում գյուղի քաղկեղոնականացած բնակիչներին:

**Սբ. Խաչ եկեղեցի.** գյուղի նոր եկեղեցին հիմնվել է 1883 թ.<sup>15</sup>, բայց կառուցումն ավարտվել է 1887 թ.<sup>16</sup>:

Սբ. Խաչ անվամբ օծված այս եկեղեցին մասնակի նորոգվել է 1916 թ. (ներկվել է տանիքը)<sup>17</sup>: Կառուցված է կիսամշակ քարով, սվաղով: Արևմտյան ճակտոնի գագաթին կանգուն է սրածայր վեղարով ավարտվող քառասյուն զանգակատունը:

Արձանագրություն, եկեղեցու հարավային մուտքի ճակատին, 2 սող.

Տ(Է)Ր ՅՈՎՀ(ԱՆՆԷՍ) ԵՐՓ. | ԲԱԻՐԱԻՍ ԽԱՉԻ Հ(ԱՅ) Կ(ԱԹՈՒԽԿ) ԵԿԵՂԵՑԻ:


Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** հայտնի է, որ տակավին 1915 թ. Բավրան սեփական քահանա չի ունեցել և համար-

<sup>15</sup> ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 40:

<sup>16</sup> «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 82:

<sup>17</sup> ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 55, ք. 17:



*ԲԱՎՐԱ. քառակող կորթոյի պատվանդան (ԺԱ դ.)  
սրահ-եկեղեցու ամ մուտքի մոտ,  
Սր. Խաչ եկեղեցու տեսքը հս-ալ-ից*

*ԲԱՎՐԱ. նոր ժամանակների թաղումներ պարունակող  
միջնադարյան գերեզմանոց*

վել է Կարտիկամի Միքայել քահանա Քոթանջյանի ծովս<sup>18</sup>, սակայն 1916 թ. արդեն գյուղին հովվել է առանձին քահանա, որն էր տեր Սիմեոն Խաչատրյանը<sup>19</sup>:

**Գերեզմանոց.** ԺԹ-ի դարերի թաղումներով հանդերձ միջնադարյան մեկ այլ գերեզմանատան մնացորդներ էլ պահպանվել են գյուղամիջում:

**Գյուղատեղիներ.** գյուղի մերձակայքում պահպանվում են Փոքր Բավրա և Խանումփունար (Տիրուհու աղբյուր) գյուղատեղիները<sup>20</sup>:

<sup>18</sup> «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 82:  
<sup>19</sup> Նույն տեղում, Թիֆլիս, 1916, էջ 82:

<sup>20</sup> Զեյթքենի շրջան, Երևան, 1924, էջ 107-108:



ԲԱՐԱԼԵԹ



ԲԱՐԱԼԵԹ. գյուղի տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 16 կմ հյուսիս, համանուն վտակի աջ ու ձախ ավիերին, հարթ տեղանքում, ծ. մ. 1690-1700 մ բարձրության վրա:

**Հնագիտություն.** Բարալեթից Կոթելիա տանող ճանապարհին՝ Մոխրաբլուր (վրաց. Նացարգորա) հնավայրում հայտնաբերվել է մ.թ.ա. Ա հազարամյակի աստղագիտական մի բրոնզե օրացույց, որի զուգահեռները հայտնաբերվել են Հայաստանի մի շարք հնավայրերում<sup>1</sup>: Օրացույցն այժմ ցուցադրվում է Ախալքալաքի գավառագիտական թանգարանում:

**Պատմություն.** Բարալեթը Ջավախքի պատմական գյուղերից է, որտեղ հայ կյանքը սկիզբ է առել առնվազն վաղ միջնադարից: Այդ է փաստում գյուղի երբեմնի մատուռի շուրջ տարածված գերեզմանատունը, որտեղ պահպանվել են հայերեն արձանագրություններով միջնադարյան գերեզմանաքարեր:

1595 թ. Բարալիս անվանաձևով, 21 տնով (բնակիչների անվանացուցակում հայկական ծագում ունեցողները զգալի մաս են կազմում) և 25000 ակշե

հարկաչափով հիշվում է օսմանյան կառավարության կազմած՝ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ում<sup>2</sup>:

1745 թ. մի վկայության համաձայն՝ Բարալեթը և Կոկիան երկրամասի առավել մարդաշատ ու վաճառաշահ բնակավայրերից էին. «...Բարալեթը փոքր քաղաք է, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները...»<sup>3</sup>:

1755 թ. Բարալեթն ավերել ու թալանել են լեզգիները. «...լեզգիներն ավերում են թուրքական հողը, ավերել են Գոկիան (Կոկիան) և Բարալեթը, քրիստոնյաներին թալանում են և գերի տանում...»<sup>4</sup>: Նույն դեպքերի արձագանքն ենք գտնում մեկ այլ վկայության մեջ. «...մանապես անցան Ջավախեթ, ավերեցին Բարալեթը, բերին բազմաթիվ ավար, փոխադրեցին Փամբակ...»<sup>5</sup>:

Բարալեթն Ախալքալաքի գավառի հյուսիսային մասի կենտրոնական բնակավայրն էր. «Գաւառիս

1 Աստղագիտական օրացույցի մասին մանրամասն տե՛ս **Տոնականյան Հ.**, Աստղագիտական օրացույցների մասին. – «Արվեստ», 1990, № 9, էջ 54-59:

2 “Գյուրջիստանի շոքոյոցի լոյս լոյսար”, էջ 196:  
 3 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց արքայությունը Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 84: Տե՛ս նաև՝ **Գեղամյան Գեղամյան Գեղամյան**, Նախաճակատի շոքոյոցի, Թբիլիսի, 1997, էջ 131:  
 4 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., էջ 108:  
 5 Նույն տեղում, էջ 145:

առաջին մասի պ. պրիստաւը - Խաչատուր Մեծատունեանց - ապրում է այս գյուղում»<sup>6</sup>:

**Կառուցապատում.** ԺԹ դարի վերջին ականատեսը նշել է. «Հայերի և վրացիների տները շինուած են միմեանց հետ խառն: Բոլոր տները քարաշէն են, իրար կից, ցած, խոնաւ, միյարկանի և հողէ կտուրներով: Փողոցները նեղ են, խառն և ծուռ ու մուռ: Երկուսիսիւնների մէջ աչքի են ընկնում շատ հեռուից գիւղական եկեղեցիները, մինը հայոց, միւսը վրացոց, և արքունական երկրասեան ուսումնարանը ամբողջ գաւառիս գիւղերի մէջ միակ շինութիւնը, որը գոյութիւն ունի արդեն 1893 թուականից... Գիւղացիները խմելու ջուրը գործ են ածում գիւղի մէջ տեղից հոսող գետակից, որովհետև աղբիւրներ չկան: Գետակի ջուրը մաքուր է, վճիտ և առողջարար: Այս գետակը իւր սկիզբն առնում է մօտակայ Ճանճղաբլուրների ստորոտներից դուրս բղխող աղբիւրներից, դրա համար էլ բարալէքցիները այս գետակին անուանում են «Ճանճղայի ջուր»<sup>7</sup>: Գիւղումը չկան ոչ պարտէզներ և ոչ այգիներ: Գետակի վրայ շինուած է չորս հատ ջրաղաց: Գիւղի մէջ տեղը կան մի շարք հասարակ ծառեր: Գիւղի հարաւային կողմը գտնուում են գիւղացոց մարգագետինները: Բարալէքցիների գլխաւոր պարապմունքն է երկրագործութիւնը. իսկ մասամբ էլ պարապում են Բակուրիա կոչուած մօտիկ անտառից փայտ կրելով դէպի Ախալքալաք ծախելու...»<sup>8</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների մի մասը բնիկ է (տեղացիների շրջանում վերջիններս հայտնի են «երկական» անվամբ)<sup>9</sup>, մյուսների նախնիները 1829 թ. փոխադրվել են Արտասիանի շրջանից<sup>10</sup>: Համաձայն գյուղի հին գերեզմանատանը պահպանված տապանագրերի՝ Բարալէքում հանգրվանել են նաև ալաշկերտցի հայեր, իսկ Խեչոյան գերդաստանի ժառանգներն այսօր էլ վկայում են իրենց՝ ծագումով դարաբաղցի լինելը: Հետպատերազմյան տարիներին գյուղը համարվել է նաև Սամառից փոխադրված 5 ընտանիքներով:

Բարալէքը Ջավախքի սակավաթիվ գյուղերից էր, որն ուներ խառն ազգային կազմ: Այստեղ հայ մեծամասնության կողքին բնակվում էին նաև փոքրաթիվ վրացիներ: 1873 թ., օրինակ, գյուղի 80 տների 2/3-ը հայեր էին, իսկ 1/3-ը՝ վրացիներ<sup>11</sup>: 1884-ին

գյուղն ունեցել է 46 տուն հայ, նույնքան վրացի և 2 տուն տաճիկ<sup>12</sup>:

Արդեն ԺԹ դարի վերջին նկատվել է գյուղի վրացի բնակչության աճ: Համենայն դեպս, 1895 թ. Բարալէքի 120 տուն բնակչից հայեր էին 65-ը, վրացիներ՝ 55-ը<sup>13</sup>: 1896 թ. գյուղի 109 տուն բնակչից 91-ը հայեր էին, մնացածը՝ վրացիներ<sup>14</sup>: 1899 թ. գյուղի 1038 շունչ բնակչից 688-ը հայեր էին, 354-ը՝ վրացիներ<sup>15</sup>:

**Վիճակագրություն.** ԺԹ-ի դարերի ընթացքում գյուղի հայ բնակչության քանակն արտացոլող տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>16</sup>		158	116	274
1841 <sup>17</sup>		188	166	354
1842 <sup>18</sup>		193	170	363
1844 <sup>19</sup>		203	181	384
1845 <sup>20</sup>		223	210	433
1847 <sup>21</sup>		160	170	330
1849 <sup>22</sup>		149	141	290
1851 <sup>23</sup>	38	152	143	295
1853 <sup>24</sup>		162	168	330
1854 <sup>25</sup>		165	171	336
1857 <sup>26</sup>		184	184	368
1860 <sup>27</sup>	35	203	196	399
1861 <sup>28</sup>	43	200	197	397
1862 <sup>29</sup>	43	206	203	409
1863 <sup>30</sup>		212	211	423
1864 <sup>31</sup>	43	221	213	434
1866 <sup>32</sup>	43	222	218	440
1867 <sup>33</sup>		226	242	468
1868 <sup>34</sup>		231	243	474
1869 <sup>35</sup>		340	344	684
1870 <sup>36</sup>		348	351	699
1871 <sup>37</sup>		332	357	689

12 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

13 «Նոր-Դար», 1895, № 150, էջ 3:

14 «Մուրճ», 1896, № 12, էջ 1642:

15 «Սշակ», 1900, № 43, էջ 2:

16 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:

17 Նույն տեղում, գ. 3802, ք. 62-63:

18 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:

19 Նույն տեղում, գ. 3809, ք. 16-17:

20 Նույն տեղում, գ. 3811, ք. 71-72:

21 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:

22 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:

23 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 30:

24 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 37-38:

25 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

26 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:

27 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:

28 Նույն տեղում, գ. 3839, ք. 26-27:

29 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:

30 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:

31 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:

32 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:

33 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:

34 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:

35 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:

36 Նույն տեղում, գ. 3857, ք. 24:

37 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:

6 «Նոր-Դար», 1895, № 150, էջ 3:

7 Ներկայումս տեղացիներին հայտնի է «Բարալէքի գետ» անվամբ:

8 «Նոր-Դար», նույն տեղում:


9 1933 թ. Ն. Բերձենիշվիլին արձանագրել է կոթելիացիների մեջ տարածված այն ավանդությունը, որի համաձայն՝ Բարալէքն իբր հայերով բնակեցրել է Դավիթ Շինարարը (1089-1125) (Ճգճցնո՞ցջջջոջ Ե., նշվ. աշխ., էջ 143):

10 **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 59: Տե՛ս նաև՝ «Նոր-Դար», 1895, № 150, էջ 3:

11 «Արարատ», 1873, էջ 389:

1872 <sup>38</sup>		339	359	698
1873 <sup>39</sup>		351	365	716
1874 <sup>40</sup>				730
1875 <sup>41</sup>	40			718
1876 <sup>42</sup>		365	372	737
1877 <sup>43</sup>		223	215	438
1878 <sup>44</sup>		224	221	445
1880 <sup>45</sup>		235	229	464
1881 <sup>46</sup>		236	238	474
1882 <sup>47</sup>		243	232	475
1883 <sup>48</sup>		250	240	490
1885 <sup>49</sup>		258	240	498
1887 <sup>50</sup>		266	260	526
1889 <sup>51</sup>		283	271	554
1890 <sup>52</sup>		289	279	568
1891 <sup>53</sup>		301	291	592
1892 <sup>54</sup>		288	284	572
1893 <sup>55</sup>	50	291	295	586
1894 <sup>56</sup>		300	308	608
1897 <sup>57</sup>		353	335	688
1898 <sup>58</sup>		373	343	722
1899 <sup>59</sup>		352	336	688
1900 <sup>60</sup>		370	348	718
1901 <sup>61</sup>		381	356	737
1902 <sup>62</sup>		391	368	759
1905 <sup>63</sup>		418	420	838
1908 <sup>64</sup>	78	450	437	887
1910 <sup>65</sup>		477	484	961
1912 <sup>66</sup>		500	527	1027
1916 <sup>67</sup>		539	552	1091
1921 <sup>68</sup>		163	137	300

38 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:  
 39 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 40 Նույն տեղում, գ. 3864, ք. 27-28:  
 41 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21: Տե՛ս նաև՝ «Մեղու Հայաստան», 1875, № 44, էջ 2:  
 42 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 30-31:  
 43 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30:  
 44 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 45 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:  
 46 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:  
 47 Նույն տեղում, գ. 3874, ք. 43-44:  
 48 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:  
 49 Նույն տեղում, գ. 3877, ք. 14:  
 50 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 51 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 52 Նույն տեղում, գ. 3887, ք. 146:  
 53 Նույն տեղում, գ. 3889, ք. 145:  
 54 Նույն տեղում, գ. 3891, ք. 117:  
 55 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 795:  
 56 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 170-171:  
 57 Նույն տեղում, գ. 3899, ք. 143-144:  
 58 Նույն տեղում, գ. 3897, ք. 166:  
 59 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 60 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 61 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 62 Նույն տեղում, գ. 3907, ք. 20-21:  
 63 Նույն տեղում, գ. 3912, ք. 263-264:  
 64 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 65 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 66 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 67 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 21-22:  
 68 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:



ԲԱՎՐԱ. նոր ժամանակների թաղումներ պարունակող միջնադարյան գերեզմանոց

1914 թ. բարալեթաբնակ 2 ազգությունները միասին կազմել են 1290 շունչ<sup>69</sup>, 1987-ին՝ 263 տուն (1087 շունչ) հայ և վրացի բնակիչ<sup>70</sup>, իսկ 2001-ին՝ 270 տուն, որից 48-ը՝ վրացի:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 290 բարալեթցիներից 137-ը զոհվել է<sup>71</sup>:

1989 թ. վրացական իշխանություններն աջար վերաբնակիչների համար Բարալեթում ևս փորձում են տներ կառուցել, բայց տեղի հայերը անհրաժեշտ հողամասեր չեն տրամադրել:

2004 թ. գյուղն ունեցել է 300 տուն բնակիչ, որոնցից 260-ը՝ հայ, իսկ 40-ը՝ վրացի<sup>72</sup>:

1990-ական թվականներից ի վեր Ջավախքի այլ բնակավայրերի նման Բարալեթից էլ է ծայր առել հայ բնակչության արտագաղթ, որի առթիվ ջավախաբնակ վրացի թղթակիցը նշել է. «Հիշում եմ, ինչպես Գամսախուրդիայի նախագահության տարիներին տեղացի բոլոր հայերն արդեն իրենց իրերը կապկպած պատրաստ էին փախչելու, եթե այդպես անակնկալ չտապալվեր Գամսախուրդիայի ղեկավարությունը, ապա ոչ մի հայ չէր մնա Բարալեթիում»<sup>73</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության վերաբերյալ տվյալներն առկա են՝ սկսած 1870-ական թթ-ից (տեղացիներն այսօր էլ դպրոցի հիմնադրման տարեթիվ են համարում 1867-ը).

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1874 <sup>74</sup>		1	30
1878 <sup>75</sup>		1	23
1880 <sup>76</sup>		1	30
1881 <sup>77</sup>			30

69 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 96:  
 70 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 71 **Գալթյան Ա.**, Ջավախք, էջ 101:  
 72 **Յոսեֆ Սթեֆան** լեզուստի գիտնականը, “Georgian Times”, № 24, 17-24.06.2004.  
 73 Նույն տեղում: Հետաքրքիր է՝ համամիտ են արյուր Ջավախքում մի օր առհասարակ հայ չտեսնելու հողվածագրի բաղձանքին հողվածը հրապարակած խմբագրությունն ու վրաց հասարակությունն առհասարակ:  
 74 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, ք. 27-28:  
 75 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 76 Նույն տեղում, գ. 3872, ք. 89:  
 77 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:



*ԲԱՐԱԼԵԹ. Սբ. Աստվածածին (Սբ. Խաչ) եկեղեցու տեսքը հր-ալ-ից, հր-ամ-ից, ամ ճակտոնի զագարին բարձրացված զանգակատունը, ամ ճակատից բացված միակ մուտքը և եկեղեցու շրջապարսպի դարպասը*

2004 թ. Բարալեթի հայկական միջնակարգ դպրոցն ունեցել է 140 աշակերտ, իսկ վրացականը՝ 38 աշակերտ<sup>78</sup>:

**Պետական դպրոց.** Բարալեթում բացված «շինական» դպրոցը, որը, պետական կրթօջախ լինելով, ըստ էության ռուսական էր, պատճառ է դարձել հայոց դպրոցի փակման: Մինչև 1884 թ. դպրոցն իր գոյությունը պահպանել է Կովկասում հունադավանությունը վերահաստատող ընկերության, ապա՝ հասարակության միջոցներով<sup>79</sup>: Հիշյալ կրթօջախը 1896 թ. եղել է երկդասյա՝ «պանսիոնով ու օրիորդաց բաժնով»<sup>80</sup>:

1970-ական թվականներից գյուղում գործում է երկու դպրոց՝ հայկական՝ միջնակարգ (հիմնադրվել է 1936 թ. և ներկայումս ունի 150 աշակերտ) և վրացական՝ ութամյա:

**Գրադարան-ընթերցարան.** 1895 թ. «Բարալեթի ձրի գրադարան-ընթերցարան» ընկերության ջանքերով բացվել է գրադարան, որը մեկ տարի անց փոխադրվել է հատուկ այդ նպատակով կառուցված շենք<sup>81</sup>:

**Սր. Աստվածածին (Սր. Խաչ) եկեղեցի.** եկեղեցին 1839 և 1841 թթ. երկու վավերագրերում<sup>82</sup> հիշվում է Սր. Խաչ անվամբ, բայց հետագա բազմաթիվ նյութերում, ընդհուպ մինչև խորհրդային առաջին տարիները՝ միայն Սր. Աստվածածին անունով: Հին եկեղեցու տեղում 1869 թ.<sup>83</sup> կառուցվել է համանուն նոր եկեղեցի: Նորաշեն եկեղեցին, որն այժմ էլ կանգուն է, քարաշեն է և փայտածածկ: Փայտից են մաս այուները: Միակ մուտքը արևմուտքից է: Նույն կողմի ճակտոնի գագաթին սրածայր վեղարով ավարտվող ութ սյունանի զանգակատունն է: Արտաքին չափերն են՝ 18,00 x 9,86 մ:


Եկեղեցին շրջափակված է պարսպով, որի արևմտյան և հարավային կողմերից բացված են դարպասներ:

Արձանագրություն, եկեղեցու մուտքի բարավորին, 5 տող.

1869 | ՎԵՐԱՆՈՐՈՎԵՅԱԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻ  
ՅԻՍ ՅԱՆՈՒՆ ԱՍԵՆԱՍԱԶՈՒՐ ՍՈՒՐԲ Ա(Ս-ՏՈՒԱ)ԾԱԾՆԻ, ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻԻՔ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ | ԲԱՐԱԼԵԹ ԳԵՂՁ ԵՒ  
ԽՐԱՏԻՔ ԿԱՐԱՊԵՏ Զ(Ա)Հ(Ա)Ն(Ա)ՅԻ Տ(Ե)Ր  
ԿԱՐԱՊԵՏԵ(Ա)Ն:


Հրատ. առաջին անգամ:

**Գերեզմանոց.** տարածվում է եկեղեցու հարավային կողմում: Տեղում պահպանված տապանա-



ԲԱՐԱԼԵԹ. ծագումով ալաշկերտցի հանգուցյալների տապանաքարեր Սր. Աստվածածին (Սր. Խաչ) եկեղեցու հր կողմում տարածված գերեզմանոցում

78 *Ձեռնարկ* թ., մշվ. հոդվ.:  
79 *Լալայան Ե.*, Երկեր, հ. 1, էջ 59:  
80 «Մուրճ», 1896, № 12, էջ 1642:  
81 Նույն տեղում:  
82 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 457, ք. 42-67, մաս՝ գ. 3798:  
83 «Նոր-Ղար», 1895, № 150, էջ 3: Ի դեպ, Կ. Մայիսուրաձեյն սխալմամբ եկեղեցու կառուցման տարեթիվ է մշել 1889 թ. (*Ձեռնարկ* թ., մշվ. հոդվ.):



*ԲԱՐԱԼԵԹ. դարբին Գարրիելի (1834 թ.)  
և ծնունդով ալաշկերտցի Պետրոսի կողակից  
Մարագուլի (1839 թ.) տապանաքարերը  
Սր. Աստվածածին (Սր. Խաչ) եկեղեցու  
հր կողմում տարածված  
գերեզմանոցում*

քարերից հնագույնները վերաբերում են ԺԹ դարի առաջին կեսին: Ստորև ներկայացնում ենք տապանագրերից մի քանիսը.

1. Տապանաքար, 2 տող.

**ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՐ|ՓԻՆ ԳԱԲԲԷԼԻՆ,**  
**ԹՎԻՆ ՌՄՁԳ (1834)-ԻՆ:**

Հրատ. առաջին անգամ:

2. Տապանաքար, 6 տող.

**ԱՅՍ Է ՏԱՊԱՆ | ԱԼԱՇԿԵՐՏՅԻ ՊՕՂ|ՈՍԻ**  
**ՈՐԹԻ ԳՐԻԳ|ՈՐԻ, ԹՎԻՆ ՌՄ|ՁԵ (1836)-ԻՆ**  
**ՅՈՒՆՎԱՐԻ | Ձ (6)-ԻՆ, ԱՌ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՓՈՒՅԻ-**  
**ՅԱԻ:**

Հրատ. առաջին անգամ:

3. Տապանաքար, 4 տող.

**ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԼԱՇԿԵՐՏՅԻ | ՊԵՏՐՈՍԻ**  
**ԿԻՆ ՍԱՐԱԳՈՒԼԻՆ, | ԹՎԻՆ ՌՄՁԸ (1839)-ԻՆ,**  
**ՅՈՒՆՎԱՐԻ | ԻԹ (29)-ԻՆ:**

Հրատ. առաջին անգամ:

**Մատուռ.** Բարալեթի հյուսիսարևմտյան եզրին մինչև 1936-37 թթ. կանգուն է եղել սրբատաշ քարից միջնադարյան մի մատուռ, որի մասին ականատեսը նշել է. «...Այս գիտը ՝ ինչպես երևում է գիտի հիսիսային կողմում գտնուած ընդարձակ գերեզմանատնից, հայոց հին և մեծ գիտ է եղած. այս գերեզմանատանը կայ հոյակապ՝ բայց քայքայուած մեծ մասամբ՝ մի մատուռ, որոյ դրան քարերի վերայ գրուած է հայոց գրերով, բայց ինձ անվերծանելի եղաւ մաշուած լինելու պատճառով. որոնելով և քննելով մի առ մի այդ գերեզմանատան քարերը, մատուռի հարաւային կողմը՝ կիսից շատ գետնի մէջ կանգուն թաղուած քարի մը վերայ գտայ գրեր, որից դժուարութեամբ կարդացի հետևեալ բառերը միայն...»<sup>84</sup>: Ստորև ներկայացնում ենք նշյալ արձանագրութիւնը, որը փորագրված է անհետացված խաչքարի պատվանդանի արևմտահայաց երեսին.


Խաչքարի պատվանդան (69 x 53 x 50 սմ), 6 տող.

**Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆ ՏԷՐՈՒՆ|ԱԿԱՆ ԱՐԵԱՄԲ**  
**ՆԵՐԿ|ԵԱԼ Է ՊԱՏՎԱԿԱՆ ԲԱ|ՐՍԵՂ Զ(Ա)Հ(Ա)-**  
**Ն(Ա)ՅԻՍ ԼԵՐ ԶԱԻԱ|ՐԱՆ ԵՒ ՅԱԿՈՒԲ ԻՐԻՅԻ|Ս**  
**ԼԵՐ ԱԻԳՆԱԿԱՆ:**

Հրատ. **Մարգարեանց Կարապետ Տ. Մարգսեան**, Հայրենեաց հնութիւններից, էջ 389:

Տարբերություն. Կ. Մարգարյանցի վերծանության մեջ բացակայում է «է» օժանդակ բայը, իսկ «պատվական» և «իրիցուս» բառերը բերված են «պատուական» և «իրիցուս» ձևով:



 43 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 289, ք. 2:  
 44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 43-44:  
 45 Նույն տեղում, գ. 3897, ք. 165:  
 46 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 47 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:

**Անվանի գաղտնիներ.** գյուղը Խորհրդային Միության հերոս Վաչագան Հունանի Վանցյանի (1913-1944) ծննդավայրն է:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գոյությունը դիվանական վավերագրերում վկայված է 1865 թ-ից: Մինչև 1885 թ., երբ կառավարության հրամանով փակվեցին հայկական դպրոցները, դպրոցի գործունեությունը ծավալվել է հետևյալ կերպ.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>59</sup>		1	27
1875 <sup>60</sup>		1	24
1876 <sup>61</sup>		1	18

48 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 49 Նույն տեղում, գ. 3907, ք. 19-20:  
 50 Նույն տեղում, գ. 3912, ք. 262-263:  
 51 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 52 Նույն տեղում, գ. 3917, ք. 135-136:  
 53 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 173-174: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 683 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 125):  
 55 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 20-21:  
 56 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 57 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 58 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 59 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 60 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21:  
 61 Նույն տեղում, գ. 3850, ք. 52:



ՋԱԿ. Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ամ-ից, կրկին հս-ամ-ից և հր-ալ-ից

1877 <sup>62</sup>	1	27
1878 <sup>63</sup>	1	21
1880 <sup>64</sup>	1	27
1881 <sup>65</sup>	1	23
1883 <sup>66</sup>	1	15

**Սր. Մինաս եկեղեցի.** հիմնադրվել է 1830-ական թվականներին և որպես ծխական գործել մինչև 1880-ականի վերջերը: Հնի տեղում նոր եկեղեցի կառուցելու գործին զակցիները ձեռնարկում են 1893 թ., սակայն աշխատանքները կիսատ են մնում կառավարության հարուցած արգելքների պատճառով. «...1893 թուականին սկսեցինք ձեռնարկել նոր եկեղեցու շինութեան, հոգացինք մեր սուղ միջոցներից հարկաւորեալ նիւթեղէնները և ձգեցինք եկեղեցույ հիմքը, բայց մարմնատուր իշխանութեան կողմից արգելուեցաւ, պատճառաբանուելով թէ կառավարութիւնից նոր ստացուած հրահանգի համա-

ձայն, պէտք է, որ ռուսաց էկզարխը ևս համաձայնութիւն տայ այդ մասին...»<sup>67</sup>: Թույլտվության հարցը երկու տարի ձգձգելուց հետո՝ 1895 թ., կառավարությունը զակցիներին առաջարկում է հրաժարվել եկեղեցի կառուցելու մտքից և գոհանալ ոչ շատ հեռու գտնվող Տրկնա գյուղի եկեղեցով<sup>68</sup>:

Սակայն իրենց որոշման մեջ հաստատակամ զակցիները նշել էին. «...նայա՛ մեր գիւղը... հեռու է Տրկնայ գիւղից ոչ թէ վերստ և կէս. այլ երկու վերստից աւելի, երկրորդ՝ մեր և Տրկնայ գիւղերի մէջ կայ մի գետակ, որ գարնան օրերին սաստիկ յորդանալով և ծածկելով փոքրիկ փայտեայ կամուրջը, օրերով խափանում է անցուդարձը, երրորդ՝ մկրտութեան, պսակի և թաղման օրինակատարութիւնների կատարելը այսքան հեռաւորութեան վերայ անհնարին է. և մեր մինչև այժմ արած ծախսերը որ ի կորուստ են մատնուելու...»<sup>69</sup>, ուստի նպատակը մնում է անդրդելի<sup>70</sup>:

62 Նույն տեղում, թ. 130:

63 Նույն տեղում, թ. 178:

64 Նույն տեղում, գ. 3872, թ. 88-89:

65 Նույն տեղում, գ. 3873, թ. 97-98:

66 Նույն տեղում, գ. 3875, թ. 48-49:

67 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 289, թ. 2:

68 Նույն տեղում:

69 Նույն տեղում:

70 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:





ԶԱԿ. գյուղի հս եզրին տարածված գերեզմանոցն ու տապանաքարեր (ԺԹ դար)

1903 թ., երբ զակցիները դարձյալ շոշափել էին ի վերջո նոր եկեղեցի կառուցելու հարցը, հինն արդեն այնպիսի վիճակում էր, որ Զակ գյուղն ընդգրկվել էր եկեղեցուց զուրկ բնակավայրերի ցուցակում<sup>71</sup>:

1905 թ. ընթացել են կառուցվելիք եկեղեցու նախագծի հաստատման աշխատանքները<sup>72</sup>: Երկար ձգձգումից հետո, ի վերջո, տրվել է եկեղեցու կառուցումը շարունակելու թույլտվությունը<sup>73</sup>: Շինարարության ավարտից հետո եկեղեցին հանդիսավոր կերպով օծվել է 1911 թ. ապրիլի 29-ին<sup>74</sup>:

**Գերեզմանոց.** գյուղի հյուսիսարևմտյան եզրին՝ բլրալանջի թեքության վրա տարածված ԺԹ-Ի դարերի գերեզմանատանը, ի թիվս բազմաթիվ տապանաքարերի, պահպանվում է գյուղի ծխատեր քահանա տեր Իսահակի շիրմաքարը՝ հետևյալ արձանագրությամբ.

Տապանաքար. 12 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆ/ԳՍՏԵԱՆ ԻՍԱՀԱԿ | ԲԱՀԱՆԱՅԻ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑ, ՈՐ | Ի ԾՆԵԱԼ 1828 | ԹԻՒՆ 15 ՍԱՐՏԻ | ԶԱԳ ԳԻՒՂԻ ՍՈՒՐԲ ՍԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԵՒ ՉԵՌՆԱԳՐՈՒԹՅԱՒ 1877, | ՎԱԽՃԱՆԵՑԱԻ | ԶԱԳ ԳԵՂ 1897:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Զակ գյուղում պահպանվել է Իսահակ քահանա Աբրահամյանցի տունը (կառուցվել է 1874 թ.):

71 «Արարատ», 1903, էջ 436:  
 72 «Արարատ», 1905, էջ 406-407:  
 73 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8949, ք. 1-27:  
 74 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 8:



*ՋԱԿ. Իսահակ քահանա Աբրահամյանցի տան օջախի (բուխարիկ) քարը (1874 թ.), Վ. Վանցյանի հուշարձանը, խաչքար եղեռնի զոհերի հիշատակին (1999)*



**Բնակելի տուն.** գյուղամիջում է գտնվում Իսահակ քահանա Աբրահամյանցի տունը՝ 1874 թ. օջախի (բուխարիկ) քարով հանդերձ:

## ԶՐԵՍԿ



ԶՐԵՍԿ գյուղի տեսքը հր-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 6 կմ արևմուտք, Ջատկի լճի արևմտյան ափին, ծ. մ. 1720-1730 մ բարձրության վրա:


**Պատմություն.** ներկայումս «Խարաբա» անվամբ հայտնի միջնադարյան Զրեսկ<sup>1</sup> գյուղատեղին է, որը 1595 թ. ունեցել է 16 տուն բնակիչ (հարկացուցակում, ի թիվս օտարոտի, բայց հայկական միջավայրում տարածում գտած անձնանունների, հանդիպում է նաև զուտ հայեցի այնպիսի անուն, ինչպիսին է Աստվածատուրը), հարկվել է 10.000 ակչե<sup>2</sup>: Հայտնի է նաև, որ 1705-1706 թթ.՝ Մահմուդի տանուտերության օրոք, գյուղը պետական գանձարան է մուծել 10000 ակչե<sup>3</sup>:

1 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 227:  
 2 “ზივდორის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.”, էջ 122:  
 3 Զրեսկ տեղանվան հիշատակության առաջին անգամ հանդիպում ենք Հովհ. Դրասխանակերտցու մոտ, սակայն ոչ թե որպես վայր Ջավախքում, այլ Շիրակում. «Եւ վասն զի ի ժամանակս Սողոմոնի՝ հարանց հօր, յերկուս լինէր բաժանեալ ուխտն Մաքենոցաց, և հայրն հարանց հասարակ բաժնի կրօնատրական դասուն երթեալ բնակէր ի Զրեսկ որ ի Շիրակ գաւառի...» (**Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ** պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 110): Նույն դեպքի առնչությամբ միմյանց մոտ գտնվող, բայց ոչ կից Շիրակ և Ջավախք գավառները հստակորեն տարբերակած Ստ. Օրբել

Ներկայումս գյուղատեղին արևմուտքից կից է 1936 թ. Ծալկայի շրջանի Դարաքյով գյուղից փոխադրված<sup>4</sup> հայերի հիմնադրած Զրեսկ (Կիրովական) գյուղը, որը 1987 թ. ուներ 141 տուն՝ 561 բնակչով: Այժմ (2001 թ.) գյուղի բնակչությունը կազմում է միայն 100-110 տուն:

Երկրորդ աշխարհամարտին զրեսկցի 86 մասնակցից 38-ը զոհվել է<sup>5</sup>:

յանը նույնպես Զրեսկը տեղադրում է Շիրակ գավառում. «Բայց կրոնավորները, նախապես տեղեկանալով [վտանգի մասին], երկու մասի բաժանվեցին, որոնց մի մասը Սողոմոն վանահոր հետ, ոչ հայրերի հայր կոչված առաջին Սողոմոնի, այլ նրա աշակերտի հետ գնաց Շիրակ գավառը, Զրեսկ սուրբ վանքը, որտեղ ճգնությամբ փայլեց այս նույն Սողոմոնը՝ մշտական խցաբնակ ճգնավոր դառնալով...» (**Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 166): Խնդրո առթիվ նորություն չենք գտնում նաև Մ. Չամչյանի, Ղ. Ալիշանի և Հ. Էփրիկյանի աշխատություններում (**Չամչյանց Մ.**, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 426: **Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 172: **Էփրիկյան Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 801): Համադրելով առկա նյութերը՝ կարծում ենք, որ բավարար հիմքեր չունենք Շիրակի Զրեսկը Ջավախքի համանուն գյուղի (վանքի) հետ նույնացնելու համար:  
 4 Դարաքյովցի հայերի տեղափոխությունը պայմանավորված է եղել Խրամ գետի վրա ՀԷԿ կառուցելու հանգամանքով:  
 5 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:



ՋՐԵՍԿ. գերեզմանային հուշարձաններ լճամերձ ավերակներում

ՋՐԵՍԿ. խաչքար 1072 թ.<sup>6</sup>

**Հուշարձաններ.** հնավայրի տարածքում նկատելի են քառակող կոթողների և խաչքարերի մի քանի պատվանդաններ, սալատապաններ և միայն մեկ ամբողջական խաչքար:

Խաչքար (120 x 65 x 32 սմ). ստորին խաչաթևից հարավ փորագրված է թվականը.

Ի Թ|(ՌԻ)ԱԿ|ԱՆ ... | ՇԻԱ° (1072°) ... :

Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 7:

Ծանոթ. տառերն անկանոն փորագրությամբ են, թվականի վերձանությունը՝ թեական:

Ջրեսկի միջնադարյան կոթողն առաջին անգամ նկարագրվել և գիտականորեն ուսումնասիրվել է Ն. Բերձենիշվիլու՝ 1933 թ. Ջավախք կատարած գիտարշավի ժամանակ: Հետազոտողի վկայությամբ՝ այն տեղահան վիճակում գտնվում էր Վաչիանից 1


կմ հեռավորությամբ, Կումուրդո տանող ճանապարհի եզրին՝ Թիքար կոչված տեղանքում<sup>6</sup>:

Կոթող (180 x 82 x 40 սմ). ուղանկյունաձև քարի հարթեցված երեսին պահպանվել էր վրաց մետրոպատառ կիսաեղծ երեք արձանագրություն.

ա. ՚. կըր՛տու : ո՛տու : | թղ զսի՛ժն :  
ՆսիկթձճԻ : ԷրԷլԻհղ ՆվրիԷԷր :  
ԿսիԺիղ[լրտ]Է | ԷժրևԷևրուհրև ՆփհրևուԷ...

6 Ն. Բերձենիշվիլու խնդրանքով Ախալքալաքում տեղաբաշխված վրացական գումարտակի հրամանատար, գնդապետ Դուրաշվիլին 1942 թ. կոթողը տեղափոխում է Ախալքալաք, իսկ երկու տարի անց՝ 1944 թ., դարձյալ Ն. Բերձենիշվիլու խնդրանքով, այն փոխադրվում է Ախալցխա՝ Մամջիսե-Ջավախեթիի Պատմական թանգարան, որտեղ պահպանվում է մինչև օրս: Տե՛ս **ՃԵՐՃԵՆՑԵՂՈՒ Ե.**, նշվ. աշխ., էջ 138:

[ա]լիսեղոդ : [ը]լսացե թ...ն...ց : թ... | ...և  
 ճողցիսիտացեառն : ւ.ս. | ՚սկկոտ :  
 տեհճեւեւ[աւ] | ցլիս ճեւ կմին : ոտ  
 †. կ(ս)ե(յ)լ(ո)տա լ(մ)ր(ո)տ(ս)ա | մյ,  
 ճ(յ)ր(մ)ն Ֆ(ր)ե(յ)կ(յ)լ(մ)ն ճ(յ)լ(ո)յ(ն) Ֆ(յ)ն(յ)կ(ո)  
 ր(ո)յ(ն) (ո)տա ... [ո]ր(ս)ա ճ(յ)լ(ո)յ(ն) Ֆ(յ)ն(յ)կ(ո)-  
 ր(ո)յ(ն) (ո)տա ... [ո]ր(ս)ա ճ(յ)լ(ո)յ(ն) Ֆ(յ)ն(յ)կ(ո)  
 մ... | լ(լ)ե(յ)ր(մ)լ(ո)յ(ն) ճ(յ)լ(ո)յ(ն) Ֆ(յ)ն(յ)կ(ո) -ա-ր- | օ ՚յցտ



ԶՐԵՍԿ, Գրիգոր-Լազա թագավորի «Խելի» կոթողի գրչանկարն  
 ըստ «Ջագեխեո. օստորիւլ-խորոտմոժեղրուլի  
 ցճաթեթի. օստորիւլ-խորոտմոժեղրուլի  
 ցճաթեթի»-ի

տանճան[լաւ] | ճ(յ)ր(ս) ճա ճ(յ)մ(յ)ն.  
 լ(մ)ր(ո)տ(ս)ա ...

Թարգմ. Աստուծո անունով, ես՝ Բերի Ջրեսցի  
 շինեցի «գուինակտ» ամիրսպասալար Ջաքարիայի  
 հրամանով... երկու կյանքում... երկարակեցության  
 համար... Բերիին և Սվինին...

Հրատ. Զերթենիցի Ն., նշվ. աշխ., էջ 138: Տիլոգագ ց.  
 Նամցե-Ջագեխեոյի օստորիւլի միջնաբերդի խորտուլի ցո-  
 ցաթեթի թեթեթի, էջ 35, 115, 130: «Ջագեխեո. օստորի-  
 ուլ-խորոտմոժեղրուլի ցճաթեթի», էջ 43:

Մանր. Վ. Սիլոգավան արճանագրութիւնը նույնությանը վե-  
 րահրատարակել է ըստ Ն. Բերճենիշվիլու: Ակադ. Ս Ջանաշի-  
 յի կարծիքով՝ ցլիճն պետք է ըմբերցել ճարճան (Բարանան):  
 Արճանագրութեան մեջ հիշատակած «գուինակտ» բառի ստու-  
 ճաբանութիւնն առ այսօր մնում է ամբողջութեամբ չլուծարան-  
 ված: Ն. Բերճենիշվիլին արել է երեք հիմնական ենթադրութիւն:  
 Առաջինի համաճայն՝ «գուինակտ»-ն առնչվում է հայերեն  
 «այուն», «այունակ» բառերին: Երկրորդի համաճայն՝ այն ստու-  
 ճաբանվում է վրացերեն Ֆուին, Ֆուինայի բառերի հիման վրա՝  
 արտահայտելով «կույտ», «կուտակում» իմաստը, իսկ հետագո-

տողի նախապատկութեանն արճանագրած երրորդ տարբերակը  
 «գուինակտ» բառը կապում է հունարեն *συστακτεον*-ի հետ՝  
 «ի մի ժողոված», «հարկ կիտված» նշանակութեամբ:

Հիմք ընդունելով Ջաքարիա ամիրսպասալարի (†. 1212 թ.)  
 հիշատակութիւնը՝ արճանագրութիւնը թվագրվում է ԺԳ  
 դարասկզբով:

բ. ւճճն | ըլլալիդ  
 ճ(ո)լ(յ)ն | ճ(ո)լ(յ)ն թի.  
 Թարգմ. Փառավորի՛ր Յոտայի որդուն (Յոտաճե-  
 ին):

Հրատ. Զերթենիցի Ն., նշվ. աշխ., էջ 138: Տիլոգագ ց.  
 Նամցե-Ջագեխեոյի օստորիւլի միջնաբերդի խորտուլի ցո-  
 ցաթեթի թեթեթի, էջ 35-36, 115, 130: «Ջագեխեո. օստորի-  
 ուլ-խորոտմոժեղրուլի ցճաթեթի», էջ 43:

Մանր. Վ. Սիլոգավան արճանագրութիւնը նույնութեամբ վե-  
 րահրատարակել է ըստ Ն. Բերճենիշվիլու: Արճանագրութիւնը  
 ժամանակակից է առաջինին և ըստ այդմ թվագրվում է ԺԳ դար-  
 ասկզբով:

գ. ւճճն | ոհ : ցաղոց | ճեւ ճիււր | թուր : ոդ:  
 ճ(ո)լ(յ)ն լ(մ)ր(ո)տ(ս)ա Մ(ս)լ(յ)ն ճա ճ(ս)ա ճ(ս)ա ճ(ս)ա  
 օ(յ)ն(յ)ն.

Թարգմ. Աստված փառավորի Շալվային և նրա  
 որդի Իվանին:

Հրատ. Զերթենիցի Ն., նշվ. աշխ., էջ 139: Տիլոգագ ց.  
 Նամցե-Ջագեխեոյի օստորիւլի միջնաբերդի խորտուլի ցո-  
 ցաթեթի թեթեթի, էջ 35-36, 115, 130: «Ջագեխեո. օստորի-  
 ուլ-խորոտմոժեղրուլի ցճաթեթի», էջ 100-101:

Մանր. Վ. Սիլոգավան արճանագրութիւնը նույնութեամբ վե-  
 րահրատարակել է ըստ Ն. Բերճենիշվիլու: Արճանագրութիւնը  
 ժամանակակից է առաջինին և ըստ այդմ նույնպէս թվագրվում է  
 ԺԳ դարասկզբով:

Ն. Բերճենիշվիլու ղեկավարութեամբ 1995 թ.  
 Ջավայի կատարած գիտարշավի ժամանակ  
 Ջատկի լճի ափին գտնվող հայոց նորակառույց ա-  
 դրոթատան պատին հայտնաբերվել է «Խելի» տեսա-  
 կի արճանագիր կոթող:

«Խելի» կոթող.  
 ՄՆ ԹՐԳՐԳԵԾ ԹՐԳՐԳ : ԳԻԿԻՆ ԺՆԾ ՂՆ  
 ԿՆՆ

Մ(յ)ն(յ)ն(յ)ն (?) ... միջնաբերդ միջնաբերդ տ(ս)մ(ս)ր(ո)յ  
 ճ(ո)լ(յ)ն ճ(ո)լ(յ)ն ճ(ո)լ(յ)ն.

Թարգմ. Ողորմի (՞)... արքայից արքա Թամարի  
 որդի Գիորգի (Լաշայի) ճեղքը:

Հրատ. «Ջագեխեո. օստորիւլ-խորոտմոժեղրուլի  
 ցճաթեթի», էջ 100-101:

Մանր. շրջաբանակ հավատացյալների կոթողի վրա վառած  
 բազմաթիվ մոմերի առաջացրած մրի հետևանքով դրա բանալի-  
 ներն ու արճանագրութիւնը ներկայումս գրեթէ տեսանելի չեն,  
 ուստի հարկադրված ենք արճանագրութիւնը հրատարակել  
 ըստ «Ջագեխեո. օստորիւլ-խորոտմոժեղրուլի ցճաթեթի»-ում  
 գտնված ոչ հստակ գրչանկարի:

Արճանագրութիւնը վերաբերում է Գիորգի Գ Լաշա (1213-  
 1222 թթ.) թագավորութեան շրջանին:

## ԷԽԹԻԼԱ



ԷԽԹԻԼԱ. գյուղի տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 16 կմ հյուսիս, ծ. ս. 1695-1740 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. գյուղն ունեցել է 12 տուն բնակիչ և օսմանյան կառավարությանը վճարել 13.000 ակչե հարկ<sup>1</sup>: 1718-1719 թթ.՝ Ահմեդ Ալիի տանուտիրության օրոք, հարկվել է 10.999<sup>2</sup>, իսկ 1722-1723 թթ.՝ Իսմայիլ Աբդուլլահի օրոք՝ 6.500 ակչե<sup>3</sup>:

1884 թ. Էխթիլան ազնվական Դավիթ Քանանյանցի կալվածն էր<sup>4</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից գյուղի 72 տնից 69-ը քանդվել է, բնակիչներից 9-ը՝ զոհվել<sup>5</sup>: Կորուստները մեղմելու նպատակով աղետյալների օգնություն ցույց տվող կոմիտեի միջոցով Էխթիլայում «46 տուն էր կառուցվել (յուրաքանչյուրը 600 ռ. ծախսով)»<sup>6</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են 1829-30 թթ. Կարնո գավառի Ղարակեպակ<sup>7</sup> գյուղից և Ալաշկերտ գավառից: 1836 թ. բնակիչների մի մասը փոխադրվել ու հիմնել է Էխթիլա-Սամսար (Փոքր Սամսար) գյուղը, մյուս մասը՝ Լոմատուրցիս, իսկ 7 ընտանիք էլ՝ Տրկնա:

**Վիճակագրություն.** համաձայն վիճակագրական տվյալների՝ ԺԹ-Ի դարերի ընթացքում Էխթիլայի բնակչության թվաքանակն անընդմեջ աճել է: Դա ակնառու է ստորև ներկայացվող աղյուսակում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>8</sup>		286	290	576
1841 <sup>9</sup>		248	260	508
1842 <sup>10</sup>		255	270	525
1844 <sup>11</sup>		277	289	566
1845 <sup>12</sup>		282	295	577
1847 <sup>13</sup>		310	320	630

1 “Ծղրճոսեթանոս շեղաօյտոս ճոցո ճոցոթարո”, էջ 199:

2 “Նոլճոթոս ցոլճոթոս ճոցո ճոցոթարո 1694-1732 ՎՎ.”, էջ 157:

3 Նույն տեղում, էջ 173:

4 «Արճազանք», 1885, № 3, էջ 43:

5 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

6 «Մշակ», 1902, № 265, էջ 1:

7 Ղարակեպակի մասին տես սույն աշխատության Ազավրեք գյուղի բաժնում (էջ 37, ծանոթ № 3):

8 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

9 Նույն տեղում, գ. 3802, թ. 62-63:

10 Նույն տեղում, գ. 3805, թ. 78-79:

11 Նույն տեղում, գ. 3809, թ. 16-17:

12 Նույն տեղում, գ. 3811, թ. 71-72:

13 Նույն տեղում, գ. 3814, թ. 33-34:

1849 <sup>14</sup>		321	325	646
1853 <sup>15</sup>		267	240	507
1854 <sup>16</sup>		274	244	518
1857 <sup>17</sup>		200	180	380
1860 <sup>18</sup>		232	197	429
1861 <sup>19</sup>		230	210	440
1862 <sup>20</sup>		235	208	443
1863 <sup>21</sup>		242	216	458
1864 <sup>22</sup>		242	216	458
1866 <sup>23</sup>	42	248	213	461
1867 <sup>24</sup>		257	221	478
1868 <sup>25</sup>		255	223	478
1869 <sup>26</sup>		257	222	479
1870 <sup>27</sup>		271	218	489
1871 <sup>28</sup>		279	221	500
1872 <sup>29</sup>		275	225	500
1873 <sup>30</sup>		281	235	516
1874 <sup>31</sup>				527
1875 <sup>32</sup>				527
1876 <sup>33</sup>		296	236	532
1877 <sup>34</sup>		281	221	502
1878 <sup>35</sup>		285	226	511
1880 <sup>36</sup>		287	240	527
1881 <sup>37</sup>		291	242	533
1882 <sup>38</sup>		300	242	542
1883 <sup>39</sup>		307	253	560
1884 <sup>40</sup>	43			
1885 <sup>41</sup>		294	261	555
1887 <sup>42</sup>		324	283	607
1889 <sup>43</sup>		343	290	633
1890 <sup>44</sup>		340	285	625
1891 <sup>45</sup>		349	295	644

14 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:  
 15 Նույն տեղում, գ. 2743, ք. 37-38:  
 16 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:  
 17 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:  
 18 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:  
 19 Նույն տեղում, գ. 3839, ք. 24-25:  
 20 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:  
 21 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 22 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:  
 23 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 24 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 25 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:  
 26 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 27 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 28 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:  
 29 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:  
 30 Նույն տեղում, գ. 3848, ք. 71-72:  
 31 Նույն տեղում, գ. 3864, ք. 27-28:  
 32 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21:  
 33 Նույն տեղում, գ. 3868, ք. 29:  
 34 Նույն տեղում, գ. 3869, ք. 30:  
 35 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 36 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:  
 37 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:  
 38 Նույն տեղում, գ. 3874, ք. 43-44:  
 39 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:  
 40 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 41 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 11:  
 42 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 43 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 44 Նույն տեղում, գ. 3887, ք. 147:  
 45 Նույն տեղում, գ. 3889, ք. 146:

1892 <sup>46</sup>		342	299	641
1893 <sup>47</sup>	60	343	299	642
1894 <sup>48</sup>		347	298	645
1897 <sup>49</sup>		382	349	731
1899 <sup>50</sup>	72	382	338	720
1900 <sup>51</sup>		399	351	750
1901 <sup>52</sup>		408	360	768
1902 <sup>53</sup>		415	367	782
1905 <sup>54</sup>		451	392	843
1908 <sup>55</sup>	69	469	409	878
1910 <sup>56</sup>		492	429	921
1912 <sup>57</sup>		516	444	960
1914 <sup>58</sup>		541	457	998
1916 <sup>59</sup>		539	471	1010
1918 <sup>60</sup>	93	354	349	703
1921 <sup>61</sup>		190	185	375
1987 <sup>62</sup>	266			1270

Երկրորդ աշխարհամարտին Էխթիլայից մասնակցել են 200 հոգի, որոնցից 52-ը զոհվել է<sup>63</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գոյությունը վավերագրերում փաստված է 1865 թ-ից: Էխթիլայի դպրոցը գործող կրթօջախների ցուցակում վերջին անգամ հիշատակվում է 1908 թ.<sup>64</sup>:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>65</sup>		1	49
1874 <sup>66</sup>		1	20
1875 <sup>67</sup>	նախակրթարան՝ ուսուցչի տանը	1	20
1876 <sup>68</sup>		1	20
1877 <sup>69</sup>		1	18
1878 <sup>70</sup>		1	16
1880 <sup>71</sup>		1	20

46 Նույն տեղում, գ. 3891, ք. 118:  
 47 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 794:  
 48 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 171-172:  
 49 Նույն տեղում, գ. 3899, ք. 144-145:  
 50 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 51 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 52 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 53 Նույն տեղում, գ. 3907, ք. 20-21:  
 54 Նույն տեղում, գ. 3912, ք. 263-264:  
 55 ՀԱԳ, ֆ. 35 ց. 1, գ. 559, ք. 43:  
 56 Նույն տեղում, գ. 3907, ք. 135-136:  
 57 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 58 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 174-175: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 689 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 130):  
 59 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 21-22:  
 60 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 61 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 62 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 63 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:  
 64 **Խորոջյան Ս.**, նշվ. աշխ., էջ 517:  
 65 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 66 Նույն տեղում, գ. 3864, ք. 27-28:  
 67 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 43: Ուսուցիչն էր Երեմիա Բաղչագոյանցը:  
 68 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 52:  
 69 Նույն տեղում, ք. 130:  
 70 Նույն տեղում, ք. 178:  
 71 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:



ԷՄԹԻԼԱ. Սր. Ստեփանոս եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հս-ամ-ից, ամ-ից և հր-ալ-ից

1881 <sup>72</sup>	1	25
1988 <sup>73</sup> միջնակարգ		206

**Սր. Ստեփանոս եկեղեցի.** համաձայն եկեղեցու որմերին պահպանված վրաց մեսրոպատառ արձանագրությունների՝ Սր. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1308 թ., ակնհայտորեն քաղկեդոնականացած, սակայն դրանով հանդերձ հնավանդ սովորույթները պահպանած բնակիչների կողմից: Այդ են փաստում Հայաստանյայց առաքելական եկեղեցու ծխակարգին հարազատ հատկանիշները՝ բարձր բեմ, եկեղեցու ներսում թաղումների բացակայություն և, ընդհակառակը, շուրջը խիտ առ խիտ

ամփոփված հանգուցյալներ: Հարկ է նշել, որ ԺԳ դարի սկզբում կառուցված, ի սկզբանե բյուզանդածես եկեղեցին առնվազն արդեն ԺՁ դարում գործել է որպես հայ-առաքելական: Այդ է վկայում եկեղեցու բակի ԺԵ-ԺԸ դարերի շիրմաքարերով հարուստ հայոց գերեզմանատունը:



Հայոց ծեսով հերթական անգամ Սր. Ստեփանոսի անվամբ եկեղեցին օծվել է 1830-ականին հայաթափ գյուղատեղիում հաստատված կարնեցի հայերի կողմից<sup>74</sup>: Արդեն 1898 թ. (1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի նախօրեին) եկեղեցին այնքան էր քայքայվել, որ «...կառավարութիւնը փակեց գաւառիս՝ Էյստիլա գիւղի հայոց եկեղեցին՝ նրա հա-

<sup>72</sup> Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:

<sup>73</sup> Ըստ դպրոցի տնօրինության տրամադրած տվյալների:

<sup>74</sup> ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, ք. 13:






ԷԽԹԻԼԱ. Սբ. Ստեփանոս եկեղեցու տեսքը ամ-ից, քիվաշարեր, քառակող կորողի խաչագարդ պատվանդան և հաստակագիծը

մար, որ փուլ գալու մօտ էր և շատ մարդիկ տակովն անելու էր»<sup>75</sup>: Պակասն էլ լրացրել է երկրաշարժը, և շենքը դարձել է վթարային<sup>76</sup>: 1900 թ. կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «...այլևս մեր հին եկեղեցին նորոգութիւն չէ կարելի էնել, որովհետև երկրաշարժից բոլորովին հիմքից խախտուած է: Արևելեան և արևմտեան կողմերս էլ քանդուած են բոլորովին, բայց եթէ նոր եկեղեցի շինելու էլ լինենք կարողութիւն չգոյ, որովհետև ժողովուրդը հազիւ հազ կարող է իրեանց երկրաշարժից քանդուած և փլատակ եղած տներն շինել և մենք բոլոր հասարակութիւնս սպասում ենք կոմիտետի օգնութեան, թէ եկեղեցոյ և թէ տների շինութեան մասին»<sup>77</sup>: Ի վերջո, տարիների ընթացքում գյուղացիները դժվարությամբ կարողանում են վերանորոգել

75 «Նոր-Ռար», 1898, № 18, էջ 2:

76 **Мущкетов И.**, 6շվ. աշխ., էջ 27-28:

77 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3356, ք. 6:



ტხმბლს. სპ. სთნქანნო სქტეგნი ჰრ მთოჰი პარაქიჰი ს ჰრ ნაკათი ჯაჯაჰანოქსნერე

სქტეგნი, ოჰრ ჯარონაკლიმ ლ გოიბელ ჰირტი ბქას-  
კან ჳნე:

სპ. სთნქანნო სქტეგნი ჰათაკადომ ჯა-  
ჯადს ლ (შაკაქჰომ ასაკაქ ᰁანჰიჰოთ ᰁოქინ-  
ქადჰ), ასაკან ᰁჯ ᰁნქეჰაქო, ᰁნჯაქიჰქ ᰁნ ᰁან-  
ანან ᰁათაკადოქინ ᰁომომ ᰁინქეო ᰁიქნაქარ-  
ქან ჳაკასთანჰი ᰁ-ლ ᰁარქეჰი ᰁაქანაქიქ სქტეგნი-  
ნერე: ᰁათოცქად ლ ᰁანაკ სპრათოჯ ᰁაროქ (არ-  
თაქინ ჳაქტერნ ᰁნ 12,12 x 9,72 მ):


1. სქტეგნი ᰁარაქაქინ ნაკათი ᰁიქაქოთო ᰁრ სქტოთ  
არბანაკოქოქინ.

ქ. ᰁტტტტტ ᰁოქოქონს ᰁსქს ᰁოქონს  
ტტ ᰁოქოქოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს  
ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს  
ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს ᰁოქონს

ქრათ. Brosset M., Mélanges asiatiques. II, ტე 343: **ქორდანი-  
ო**, CMOMPK, XIII, ტე 130: **ქორდანი ᰁ**, ქრონიკეო, II, 1897,  
ტე 174: **ცისკარიშვილი გ**, ჳავახეთის ეპიგრაფიკა როგორც  
სასტორო ᰁქარო, თბილისი, ტე 94, **ბერძენიშვილი ნ**, მქ.  
აქს., ტე 148: **სოქრათქან ᰁ**, სოქონი ს ᰁაროქსანოქქან  
ქაქნეროქონ, «ღოქ ჳაკონქი», 1998, ᰁᰁ 8, ტე 6: “**ჳავახეთი.  
ისტოროქლ-სუროთმოქვერუელი გზამქვექეო**”, თბილისი,  
2000, ტე 69:

საქნქნქეოქინ. ᰁ. ᰁოქსთქ ᰁოქოქონს: ᰁ. ᰁოქოქანქა  
თმოგველი როსოდანისაგან, შეუნდვენ, ქორონიკონი, ᰁკზ,  
ოვანეს, შეუნდვენ: ᰁ. ᰁიქსარქიქიქი თმოგველი, რესუქლ-  
ანისაგან, შეუნდვენ, მორვანისა, შეუნდვენ: «**ჳავახეთი. ისტო-  
როქლ-სუროთმოქვერუელი გზამქვექეო**»-მ თმოგველი,  
რესუქლანისაგან, შეუნდვენ:

ნანოქ. ᰁ. ᰁოქოქანქაქი მთო ᰁოქონქიქიქი ᰁქსანს ᰁ ᰁკზ  
(527 ᰁ. - 1307 ᰁ.): ᰁ. სოქრათქანს ᰁ. ᰁნქონქიქიქი ᰁქბანოქ-  
ქან ᰁიქან ᰁრ ᰁრათარასქლ ლ ᰁქაქ არბანაკოქოქან ᰁ-  
ქნქნ ᰁარქანოქოქინ:




ქ. გათავდა ქვეშელისა ლ(ი)პ(ა)რ(ი)ტის  
ცოლისა და თმოგოველია ქილისა რო(ვ)-  
სო(ვ)დანიგან, შ(ეუნდუენ ლ(მერთმა)ნ. ქ(რო-  
ნი)კ(ო)ნი იყო ᰁკქ (528 ᰁ.). ჳო(ვ)რვანის ძესა  
ო(ოვანეს) შ(ეუნდუენ ლ(მერთმა)ნ.

თარქ. ᰁქაროქსე ᰁქარქი ᰁქვენი თიქნოქ  
ᰁნოქქენქინქი ᰁოქოქ ᰁოქოქანქი ᰁოქოქი, ᰁოქოქი  
ასოქად: ᰁოქონქიქი 528 ᰁ. (1308 ᰁ.): ᰁოქანქი  
ოქი ᰁოქანქინ ასოქად ᰁოქოქი:

ქქქ ᰁქქ ᰁქქ  
ქქქ ᰁქქ ᰁქქ  
ქქქ ᰁქქ ᰁქქ  
ქქქ ᰁქქ ᰁქქ  
ქქქ ᰁქქ ᰁქქ









ԷԽԹԻԼԱ. գյուղի ալ կողմում տարածված գերեզմանոցը և նմուշներ շիրմաքարերից

**Վանք (Մեղրեկ կամ Նեղրեկ) գյուղատեղի.** Էլսթիլայից 1 կմ արևելք՝ Սամսար լեռան լանջերից սկիզբ առնող Մեղրեկ վտակի ձորում, պահպանվում է Վանք անվամբ գյուղատեղին, որը բարալեթ-

ցի վրացիների շրջանում հայտնի էր Մեղրեկ կամ Նեղրեկ անվանաձևով:

**Վանք.** հնավայրում ուշագրավ է պարսպափակ, կիսավեր վանքը (ԺԲ-ԺԳ դդ.): Վերջինս միանավ



*ԷԽԹԻԼԱ. Մերոնեկ գյուղատեղից և Կիսավեր եկեղեցից*



## ԷՐԻՆՁԱ



ԷՐԻՆՁԱ. գյուղամերձ ձորակն ու աղբյուրը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 20 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1780 մ միջին բարձրության վրա:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 13 տուն բնակիչ (սրանց թվում հիշվում է Հակոբ քահանայի եղբայրը), հարկվել է 3.500 ակչե<sup>1</sup>:

**Բնակչություն.** 1914 թ. գյուղը թրքաբնակ էր (112 շունչ)<sup>2</sup>: Ստալինյան բռնապետության տարիներին Էրինջայի բնակիչներն աքսորվեցին (1944 թ.): Հետագայում այստեղ մշտական բնակություն հաստատեցին հարևան գյուղերից փոխադրված հայեր: 1987 թ. Էրինջան ունեցել է 13 տուն՝ 48 հայ բնակիչ<sup>3</sup>, իսկ 1988-ին (մեր այցելության ժամանակ)՝ միայն 42 բնակիչ:

1 “Ճջրჯջոսթանոս յոջոսթոս ձոջոսթոս”, էջ 283-284:

2 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 213:

3 Ըստ գյուղխորհրդի տվյալների:



**Աղբյուր.** գյուղից հարավ՝ ձորակի ձախ կողմում, գործում է 1882-1883 թթ. (հիջրայի 1300 թ.)<sup>4</sup> համակ սրբատաշ քարով կառուցված և արարատառ թուրքերեն շինարարական արձանագրություն կրող կամարակապ աղբյուրը:

4 Տարեթվի վերձանությունն ըստ պարսկագետ Ք. Կոստիկյանի:



ԹԱԽՉԱ



ԹԱԽՉԱ. գյուղի տեսքը հր-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 8 կմ հարավ-արևելք, ծ. մ. 1920-1960 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են 1829-30 թթ. Բայազետի գավառից: Թախչան երկրամասի համեմատաբար ուշ բնակեցված գյուղատեղիներից էր: 1918 թ. թուրք հրոսակները գյուղում սրախողխող են արել բնակիչներին, փրկվել են միայն 7-ը: Վերջիններս Ճաղկայի Նարդևան գյուղի հայերի հետ 1922 թ. վերահաստատվել են հայրենի գյուղում և շենացրել այն<sup>1</sup>: 1933 թ. գյուղ այցելած Ն. Բերձենիշվիլին իր օրագրում նշել է, թե մինչև 1918 թ. գյուղն իբր մահմեդաբնակ էր<sup>2</sup>, այնինչ բազմաթիվ դիվանական վավերագրեր հակառակն են փաստում:

1988-ին՝ մեր այցելության ժամանակ, գյուղն ուներ 38 տուն և ընդամենը 9 աշակերտով տարրական դպրոց:

**Վիճակագրություն.** ԺԹ -ի դդ. Թախչայի բնակչության աճը, ըստ վիճակագրական տվյալների, ներկայացրել է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1880 <sup>3</sup>		80	74	154
1881 <sup>4</sup>		75	74	149
1882 <sup>5</sup>		76	78	154
1883 <sup>6</sup>		74	80	154
1884 <sup>7</sup>	14			
1885 <sup>8</sup>		76	80	156
1886 <sup>9</sup>		76	80	156
1887 <sup>10</sup>		91	93	184
1890 <sup>11</sup>		92	92	184
1891 <sup>12</sup>		95	97	192
1892 <sup>13</sup>		96	105	201
1893 <sup>14</sup>		97	103	200
1894 <sup>15</sup>		102	112	214
1897 <sup>16</sup>		108	112	220

3 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, ք. 90:

4 Նույն տեղում, գ. 3873, ք. 99:

5 Նույն տեղում, գ. 3874, ք. 44:

6 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:

7 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

8 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:

9 Նույն տեղում, գ. 3878, ք. 12:

10 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:

11 Նույն տեղում, գ. 3887, ք. 184:

12 Նույն տեղում, գ. 3889, ք. 192:

13 Նույն տեղում, գ. 3891, ք. 116:

14 Նույն տեղում, գ. 3895, ք. 120-121:

15 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22:

16 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 142-143:


1 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 398:

2 Նյու Յորքի «Նյու Յորք Երեւոն» թ. 6, նշվ. աշխ., էջ 109:

1898 <sup>17</sup>		109	107	216
1899 <sup>18</sup>		110	110	220
1900 <sup>19</sup>		108	117	225
1901 <sup>20</sup>		116	120	236
1902 <sup>21</sup>		116	120	236
1905 <sup>22</sup>		119	122	241
1907 <sup>23</sup>				238
1908 <sup>24</sup>	24	130	125	255
1910 <sup>25</sup>		143	135	278
1912 <sup>26</sup>		146	134	280
1914 <sup>27</sup>		155	131	286
1916 <sup>28</sup>		156	141	297
1918 <sup>29</sup>	55	240	255	495
1921 <sup>30</sup>		50	45	95
1987 <sup>31</sup>	40			138

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 28 թախչացիներից 14-ը զոհվել է<sup>32</sup>:

**Սբ. Մինաս եկեղեցի.** կառուցվել է 1880-ական թվականների սկզբներին: Առաջին հիշատակությունը վերաբերում է 1884 թ.<sup>33</sup>: Եկեղեցին անմշակ քարից, միանավ, թաղածածկ հորինվածքով, արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված շինություն է: Միակ մուտքը բացված է հարավից, հյուսիսային



ԹԱԽՉԱ. Սբ. Մինաս եկեղեցու հատակագիծը

17 Նույն տեղում, գ. 3897, թ. 167:

18 Նույն տեղում, գ. 3903, թ. 93-94:

19 Նույն տեղում, գ. 3905, թ. 55:

20 Նույն տեղում, գ. 3906, թ. 68:

21 Նույն տեղում, գ. 3907, թ. 19-20:

22 Նույն տեղում, գ. 3912, թ. 262-263:

23 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 95, թ. 93:

24 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 43:

25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 135-136:

26 Նույն տեղում, գ. 3920, թ. 18-19:

27 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, թ. 173-174: Ի դեպ, նույն թվականի հունվարի 1-ին անցկացված մեկ այլ մարդահամարի տվյալների համաձայն, Թախչան ունեցել է 305 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 187).

28 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 20-21:


29 ՀԱԴ, ֆ. 469, ց. 3, գ. 2, թ. 1-4:

30 ՀԱԴ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 2:

31 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

32 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

33 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:



ԹԱԽՉԱ. Սբ. Մինաս եկեղեցու տեսքը հս-ից, հս-ալ-ից և զանգակատունը հղ-ամ-ից

պատի մեջ մկրտարանի ավազանն է, իսկ արևմրտյան ճակտոնին բարձրանում է քառասյուն



ԹԱԽՉԱ. Սր. Մինաս եկեղեցու զանգակատան արձանագրությունը (1902 թ.)

զանգակատունը: Արտաքին չափերն են՝ 13,20 x 6,10 մ: Ըստ արձանագրության՝ նորոգվել է 1902 թ.:

Արձանագրություն.

ԻՇ(Ա)Տ(Ա)Կ Է | Խ(Ա)Չ(Ա)Տ(ՈՒ)Ր ԱՍԼ(Ա)-Ն(ԵԱՆ), 1902 ԱՄԻ ...:

Հրատ. առաջին անգամ:

**Սր. Հովհաննես մատուռ.** Թախչայից 2 կմ հարավ-արևմուտք է գտնվում անմշակ քարերով կառուցված, պարզ հորինվածքով Սր. Հովհաննես մատուռը (արտաքին չափերն են՝ 8,88 x 5,35 մ), որի

խորանում, սեղանի վեմի փոխարեն, տեղադրված է Ե-Է դարերի քառակող կոթողի պատվանդան (59 x 58 x 76 սմ):



ԹԱԽՉԱ. Սր. Հովհաննես մատուռի հատակագիծը

Հնավայրը հայտնի ուխտատեղի է մերձաբնակ հայերի շրջանում:

**Հնագիտական գտածոներ.** 1946 թ. դպրոցի տնօրեն Վարդգես Տիտիզյանը Թախչայի տարածքից գտել է Տիգրան Մեծի դրամներից և փոխանցել Հայաստանի պատմության պետական թանգարանին:

## ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ)



ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). գյուղի տեսքը հս-ալ-ից

**Տեղադրություն.** Ախալքալաքից ուղիղ գծով 14 կմ արևմուտք, պաշտոնապես Թմոզվի վերանվանված նախկին Մարգաստան և պատմական Թմոք գյուղից 1,5 կմ հարավ-արևմուտք, Կուր գետի ձախ ափին վեր խոյացող լեռան զագաթին պահպանվում են համանուն բերդի ավերակները:

**Անվան ծագումը.** անունը ծագում է «մոզ» բառից (Թ-մոզվ-ի)<sup>1</sup>:

**Պատմություն.** մատենագրական աղբյուրներում Թմոք բերդի առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է Թ դարում՝ արաբական արշավանքների ժամանակ բերդի գրավմանը. «...զԹմօք և զԽովլա...»<sup>2</sup>:

Հայտնի է, որ բերդը խիստ տուժել է 1089, 1283 և 1319 թվականներին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերից<sup>3</sup>:

Տևական ընդմիջումից հետո Թմոք բերդի մասին նոր վկայությունների հանդիպում ենք ԺԵ դարի ձեռագիր հիշատակարաններում: Դրանցից առաջինը (1410 թ.) վերաբերում է հայտնի ազգային և եկեղեցական գործիչ «Երանելի եռամեծ Սբ. Գրիգոր Տաթևացի անյաղթ փիլիսոփայի և Հայոց մեծ տիեզերալոյս վարդապետի» ծննդյան վայրին («Ծնեալ յաշխարհին Վրաց, ի յամուրն Թմոք...»)<sup>4</sup>, ապա՝ 1426 թ. («Թվ. ՊՀԵ (1426), ի Մալխաս և յանառիկ դղեակս Թմոք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, ձեռամբ մեղապարտ գրչի Անոյ եպիսկոպոսին տէր Յովհաննիսի...»)<sup>5</sup>, 1442 թ. («Եւ ես ... սուտանուն Ռհաննէս միայնակեաց, ի զաւառէն Վրացտանայ, ի յամուրին դղեակէն Թմոքոյ, ըստ իմում ա-

1 Մելիքսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 197:

2 Ջուանշեր, էջ 107: Պատմական նույն դեպքերի վերաբերյալ ԺԱ դարի վրաց Անանուն պատմիչը նշել է. «...այնտեղից մտավ Սամցխե, և ավերեց Սամցխեն ու Ջավախքը (Ջավախեթը), ապա մոտեցավ Թմոզվի բերդին. տեսնելով վերջինիս անառիկ և ամուր դիրքը, այնտեղից քաշվեց...» (Մելիքսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 202): Տես նաև **Նույնի**՝ նշվ. աշխ., հ. Գ, էջ 39: “Летопись Картли”, перевод, введение и примечания **Цулая Г.**, Памятники грузинской исторической литературы, т. IV, Тбилиси, 1982, էջ 52:

3 **Закарая П.**, Памятники Восточной Грузии, Москва, 1982, էջ 198.

4 ԺԵԱ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (այսուհետև՝ ԺԵԱ), կազմ.՝ **Խաչիկյան Լ.**, Երևան, 1955, էջ 103:

5 Նույն տեղում, էջ 354:



*ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). գյուղատեղիի մնացորդները Կուրի ձախ ափին*

նարժանութեանս գծագրեցի զսայ...»<sup>6</sup> և 1448 թ. («...և Թմոքայ քահանայիցս՝ Սկրտիչ իրիցոյ և Առաքել իրիցոյ...»)<sup>7</sup> հիշատակությունները:

Շահ-Աբասի անվան հետ առնչվող՝ բերդի անկման դեպքերի արձագանքները ավանդապատումների ձևով պահպանվել են հայ և վրաց գրականության մեջ<sup>8</sup>:


Թմոք բերդը կառուցված էր հայ միջնադարյան բերդաշինությանը հարազատ ու լայն տարածում գտած կառուցողական սկզբունքներով և ռազմավարական հնարքներով: Ժայռապատ լեռնագագա-

թի խոցելի հատվածները ամրացված էին կիսաբլուրակ աշտարակներով հզորացված պարսպապատերով: Բերդի ներսում պահպանվում են սրբատաշ քարից կառուցված իշխանական ապարանքի մնացորդներ, պարսպապատերին կից օժանդակ շինություններ և ժայռակերտ աստիճաններով մինչև Կուր գետի ափը ձգվող գետնուղին: Առաջիններից մեկը, որ տվել է Թմկաբերդի նկարագրությունը, ազգագրագետ Ե. Լալայանն է. «Պարիսպը, որի լայնությունը 1,5 արշին է, կրով և տեղ տեղ սրբատաշ քարերով շինված, բոլորում է այս երեք լեռների շուրջը, յուրաքանչյուրի վրա մի մի աշտարակ բարձրացնելով ու ձգվում գնում կողքի լեռները, ուր միանում է յուրաքանչյուրի վրա շինված մի մի աշտարակի: Բուն ամրոցի հանդեպ, արևելյան կողմը


<sup>6</sup> Նույն տեղում, էջ 535:

<sup>7</sup> ԺԵԱ, էջ 618:

<sup>8</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 403: Նաև՝ Դանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 292: "огзрос", 1893, № 40, էջ 2:



*ԹՄՈՔ (ԹՄԿԱՐԵՐԳ), ընդհանուր տեսարաններ*



*ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). բերդապարիսպներ, դարպասներ, բերդամիջի շինությունների մնացորդներ  
և իշխանական կիսավեր ապարանքը*



*ԹՄՈՔ (ԹՄԿԱՐԵՐԳ), բերդամիջից մինչև Կուրի ավիր իջնող ժայռափոր գաղտնուղին*


*ԹՄՈՔ (ԹՄԿԱՐԵՐԳ), բերդասարի արևելահայաց գառիվայրին պահպանված կիսավեր, գմբեթավոր եկեղեցին*

բարձրանում է այս երեք լեռներին կպած մի տափարակ բլուր, որ նույնպես պարսպապատ է: Ամբողջ բերդն ունի երեք դուռ՝ հարավից, հյուսիսից և



արևելքից, որ տանում է դեպի բլուրը...: Հարավային դրան մոտ մի ստորերկրյա անցք ժայռի միջով իջնում է մինչև Կուրը, ջուր բերելու համար»<sup>9</sup>:

**Եկեղեցիներ.** բերդի մոտ, հիմնական շրջապարսպից դուրս պահպանվում է երկու եկեղեցի:



ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). բերդի ալ կողմի եկեղեցու հր ճակատը, կտրվածքը դեպի հս և հատակագիծը:

Դրանցից մեկը վիմափոր է (արևմուտքից կից ունի մաս վիմափոր գավիթ) և գտնվում է բերդի հյուսիսարևմտյան կողմում, մյուսը՝ դեպի Կուրի կիրճը կախված խիստ զառիվայր ձորալանջի աննշան մակերեսով ժայռի ելուստի վրա: Կիսավեր միանավ-գմբեթավոր կառույց է: Ներսում դեռևս նկատելի են որմնանկարների հետքեր: Ամենայն հավա-



ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). Կուրի վրա պահպանված երկթռիչք կամրջի խելերը

նականությամբ, սա այն եկեղեցին է, որը Սբ. Աստվածածին անվամբ բազմիցս հիշվում է ԺԵ դարի ձեռագիր հիշատակարաններում:

**Կամուրջ.** Թմոք բերդի ստորոտում՝ Կուր գետի վրա, պահպանվում են երբեմնի երկթռիչք կամրջի խելերը, իսկ բերդի հարավարևմտյան ստորոտին միջնադարյան գյուղատեղիի ավերակներն են:

**Գերեզմանոց.** մինչև 1960-ական թվականները բերդից մոտ 1 կմ հյուսիս-արևելք՝ Կուր գետի ձախափնյա հարավարևելահայաց մեղմաթեք սարալանջին, տարածված է եղել խիտ թաղումներով աչքի ընկնող խաչքարերով հարուստ, բավականին ընդարձակ միջնադարյան գերեզմանոցը՝ բաղկացած իրարից հազիվ 100 մ հեռավորության վրա գտնվող մեծ և փոքր մասերից, որոնք հետագայում, ցավալիորեն գրեթե ամբողջությամբ ոչնչացվել են:

Հնավայրի գիտական առաջին այցելումն եղել է Ե. Լալայանը: Նա ընդօրինակել ու հրատարակել է տեղում պահպանված արձանագրություններից 3-ը<sup>10</sup>:


Այնուհետև, 1954 թ. հնավայրի ուսումնասիրությամբ զբաղվել է Լ. Դավլիանիձեն, որը մի հոդվածի շրջանակում գիտական շրջանառության մեջ է դրել 5 միավոր արձանագրություն<sup>11</sup>:

1960-ական թվականներին ախալցխացի Սեպուհ Սաղաթեյանի կատարած և Գագիկ Գինուսյանի միջոցով մեզ փոխանցված լուսանկարների հիման վրա իրականացվեցին նախկինում հրատարակված, սակայն ներկայումս անհետացված խաչքարերից երկուսի վիմագրերի վերծանությունների

<sup>9</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 1, էջ 71:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 71-72:


<sup>11</sup> Давлианидзе Л. С., նշվ. հոդվ.:





ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). գերեզմանոցի մեծ հատվածի այժմեական (2005 թ.) տեսքը



ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). գերեզմանոցի փոքր հատվածի այժմեական (2005 թ.) տեսքը





*ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ), տեղահանված և գրեթե ամբողջությամբ ոչնչացված խաչքարերի պատվանդաններ զերեզմանոցում*



ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ), խաչքար (1386 թ.) և սալատապաններ

ճշգրտումներն ու պատրաստվեցին դրանց գրչանկարները<sup>12</sup>:

12 2005 թ. տեղում կատարած աշխատանքներին մեզ ցուցաբերած աջակցության համար խորին շնորհակալություն ենք հայտնում Նաբալաքն գյուղի բնակիչ Դարիսպանի Մայսուրաձեին:



*ԹՄՈՔ (ԹՄԿԱԲԵԼԴ). Ս. Սաղաթելյանի 1960-ական թվականներին կատարած լուսանկարների հիման վրա պատրաստված գրչանկարները*



ԹՍՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). ախալցխացի Սեպուհ Սաղաթեյանն ու իր ընկերները Թմկաթերդի գերեզմանոցում (1960-ական թվականներ)

1. Խաչքար. գեղաքանդակ (132 x 62 x 27 սմ), վերնամասում և խաչաթևերի միջև՝

ԹՎ(ԻՆ) ՊԼԵ (1386) | ԱՎԱՆԻԿՆ | Խ(Ա)ՉՍ ԿԱ(ՆԳՆԵՑԻ) ՅԻՇԱՏԱԿ ԻՆ|Ձ...:

Հրատ. առաջին անգամ:

2. Խաչքար. ներկայումս անհետացված.

ԹՎ(ԻՆ) ԸՃԿԴ (1415) | Ս(ՈՒՐ)Բ ԳՐԻԳՈՐ, Ս(ՈՒՐ)Բ ՅԱԿՈԲ, Ս(ՈՒՐ)Բ ԳԱԲՐԻԵԼ, Ս(ՈՒՐ)Բ ՍԻՔԱՅԵԼ, Ս(ՈՒՐ)Բ ԱՍԵՆԱՅՓՐԿԻՉ:

Հրատ. **Давлианидзе Л. С.**, նշվ. հոդվ., էջ 199:

3. Խաչքար. ներկայումս անհետացված.

ԹՎ(ԻՆ) ՊԿՁ (1417) | ԵՍ ՄԽԻԹԱՐ ... ԵՒ ԿԵՆԱԿԻՑՍ ԿԱՆԳՆԵՑԱԸ | ՁԽԱՉ:

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 71: **Давлианидзе Л. С.**, նշվ. հոդվ., էջ 200:

4. Խաչքար. գեղաքանդակ, ներկայումս անհետացված. վիճագիրը ստուգել ենք համաձայն Մ. Սաղաթեյանի լուսանկարի

ԹՎ ՊՀԴ (1425) | ՈՎ ԶԱՌԱԹԵՒ Զ(Ա)ՌԱԿՈՒՄԻ: ՅԱՀԵՂ ԱՌՈՒՐՆ ԱՆԵՐԵԿԻ: Լ(ՈՒՍՈՎ | ՓԱՅԼԵԱԼ Ի Մ)ԵՁ | ԵՐԿՐԻ, ՋՈԳԻ Ս(Ա)ՐԳ(Ի)Ս Զ(ԱՀԱՆԱՅԻ ԼՈՒՍԱՌ)ՐԵԱ ՅԱՅՆՍ ԱՏԵՆԻ: ՆԱԵՒ ԵՂԲԱՅՐ ԻԻՐՈՅ ԴԱԻԻԹ:

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 71: **Давлианидзе Л. С.**, նշվ. հոդվ., էջ 199:

Տարրերեզում. Ե. Լալայանը՝ ՆԱԵՒ ԵՂԲԱՅՐ ԻԻՐՈՅ ԴԱԻԻԹ-ի փոխարեն ունի՝ ՆԱԵՒ ԵՂ(ԻԱՅԻ ԻԻՐՈՅ)...:

Ծանոթ. լուսանկարն ու գրչանկարը տե՛ս 202-րդ էջում:

5. Խաչքար. «Մի ուրիշ գերեզմանի կարմիր քարե խաչարձանի վրա, որի բարձրությունը 1 սաժեն է և լայնությունը 1 արշին... խաչի փեղկերի միջև... խաչի պատուհանի վրա...»: Ներկայումս անհետացված.

ԽԱՉՍ ԿԱՆԳՆԵՑԱԻ | Ս(ՈՒՐ)Բ ՆԻԿՈՂՈՍ, Ս(ՈՒՐ)Բ ՍԱՐԳԻՍ, | ԱՏՈՒՎԾԱԾԻՆ Ս(ՈՒՐ)Բ ԿԱՍԱՅԿԱՏԱՐ, Ս(ՈՒՐ)Բ ԳՐԻԳՈՐ: | ԱՐԴ ԵՍ ԷՐԵՑՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ | ԻՆՁ ԾՆԱԻ ... ԶՈ ՅԱՐ...ՈՒԵԿԻՆ ԵՒ ԱԲԱԳԵՐԻՆ ... | ԵՂԲԱՐՅՍ ԻՍՈՑ Տ(Է)Ր ՄԽԻԹԱՐԱՅ ԵՒ Տ(Է)Ր ... ԻՐ | ԵՒ ԱՍԵՆԱՅՆ ԱՐԱԿԱՆ ..., ԿԱ...ԱՅ ԵՒ ԵՐԵՆԱՅՈՑ:

Հրատ. **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 71-72:

Ծանոթ. լուսանկարն ու գրչանկարը տե՛ս 202-րդ էջում:



ԹՍՈՔ (ԹՄԿԱԲԵՐԴ). ԺԴ-ԺԵ դարերի անարձանագիր խաչքարեր գերեզմանոցում





ԹՈԹԽԱՄ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 4 կմ հյուսիս, արևմուտքից Ախալքալաք-Բակուրիան մայրուղուն կից, ծ. մ. 1690 մ բարձրության վրա, Կորխից 0,5 կմ արևելք:

**Պատմություն.** համաձայն հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձանների՝ գյուղը բնակեցված է եղել դեռևս նախաքրիստոնեական շրջանում: Այդ են վկայում գյուղում մի բնակելի տան շինարարության ժամանակ գտնված Ա դարի երկրորդ կեսով թվագրվող ապակյա սափորները<sup>1</sup>:

Թոթխամի մասին առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1595 թ.՝ որպես 500 ակչե հարկվող փոքրիկ բնակավայր<sup>2</sup>:

Հետագայում ամայացած հին գյուղատեղին վերստին շենացավ 1911 թ., որն իբրև գյուղ վերջնականապես ձևավորվեց 1913 թ. «...ինչպես երևում է Ախալքալաքի գաւառապետի 1913 թ. յուլիսի 6-ի № 1369 մակագրութիւնից, արդէն բաժանուած է համարվում Կորխ գիւղից և ունի իրեն համար կառավարութիւնից հաստատուած առանձին տանուտէրի օգնական և նորան փոխանորդ»<sup>3</sup>:

Երկրորդ աշխարհամարտին մասնակից 53 թոթխամցիներից 22-ը զոհվել է<sup>4</sup>:

**Բնակչություն.** հետագայում ամայացած գյուղը վերակենդանացրել են 1907 թ. ի վեր Կորխ գյուղից հեռացած ընտանիքները. «...թեմիս Կորխ գիւղից տասն և եօթն տուն գաղթելով 1911 և 1912 թուականներուն չորս վերստ հեռաւորութեամբ Թոթխամ

կոչուած աւերակի վերայ շինել են իրանց համար տներ՝ կազմելով փոքրիկ գիւղ...»<sup>5</sup>: Վերջիններիս թիվը 1911 թ. եղել է 15<sup>6</sup>, իսկ 1913 թ.՝ 17 տուն (ավելի քան 200 շունչ)<sup>7</sup>: Կորխից գատվելու բուն պատճառը տնտեսական էր. «Այս գաղթականության պատճառն ոչ այլ ինչ էր, եթե ոչ Կորխ գյուղում տներուս, կալատեղիներինս և մյուս շինության տեղերուս նեղություններն ու անհարմարությունները այս տասն և յոթ տանս, իսկ այժմ այս նորահաստատ Թոթխամ գյուղում ընդարձակ տարածության վրա շինելով մեր տները, ունենք բոլոր հարմարությունները արժանապես ապրելու...»<sup>8</sup>: Թոթխամի՝ ինքնուրույն գյուղի կարգավիճակ ստանալու խնդիրը երկար ձգձգումներից հետո ի վերջո լուծվում է Թիֆլիսի գյուղացիական գործերի նահանգային աստյանի որոշմամբ 1912 թ. սեպտեմբերի 18-ին<sup>9</sup>:

1987 թ. Թոթխամն ուներ 95 տուն, 418 բնակիչ<sup>10</sup>:

**Եկեղեցի.** ինչ վերաբերում է եկեղեցի ունենալու խնդրին, ապա դեռևս 1915 թ. Էջմիածնի կոնսիստորիան քննել է նորահիմն Թոթխամ գյուղում 2378 ռուբլի նախահաշվային արժեքով, ինչպես նաև բնակիչների տուրքերով և աշխատանքով եկեղեցի կառուցելու հարցը<sup>11</sup>, որը, սակայն, հետագա տարիների քաղաքական անբարենպաստ կացության պատճառով չի իրագործվում:

**Գերեզմանոց.** Թիֆլիսի նահանգապետի թույլտվությամբ նորաստեղծ գյուղին հատկացվում է գերեզմանոցի տեղամաս<sup>12</sup>:

1 Նազինա Չոլոյան, «Մեծ հեղափոխությունից հետո», 1988, № 3, էջ 53-56:  
 2 «Գյուղացիների շրջանային ժողով», էջ 238:  
 3 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 980, թ. 34:  
 4 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

5 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 980, թ. 34:  
 6 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3438, թ. 2:  
 7 Նույն տեղում, թ. 4:  
 8 Նույն տեղում:  
 9 Նույն տեղում:  
 10 Նույն տեղում:  
 11 ՀԱԳ, ֆ. 56, ց. 18, գ. 980, թ. 32:  
 12 Թոթխամ գյուղի ինքնադրաման մասին տես Նահատակյան Ռ., Թոթխամ գյուղի պատմությունից. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, № 2, էջ 133-135:

## ԹՈՐԻԱ



ԹՈՐԻԱ. գյուղի տեսքը ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 8 կմ հարավ-արևելք, շրջկենտրոն Նինո-ծմինդայից 11 կմ հյուսիս, ծ. մ. 1840-1860 մ բարձրության վրա:

**Պատմություն.** զուտ հայաբնակ թորիան 21 տուն բնակչությամբ և 13000 ակչե հարկաչափով հիշվում է օսմանյան կառավարության 1595 թ. կազմած «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ում<sup>1</sup>: Ընտանիքների գլխավորների ցանկում հիշվում են Դուլիջանի որդի Միրզան, Առաքել և Ազարա եղբայրները, Սարգսի որդի Ջանիբեկը, Սկրտիչը, Գրիգորի որդի Խոսրովը և այլք<sup>2</sup>:

Հայանի է նաև, որ 1705-1706 թթ.՝ տանուտեր Հասանի օրոք, գյուղից հարկվել է 16.200 ակչե<sup>3</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները 1829-30 թթ. փոխադրվել են Ստորին կամ Ներքին Բասեն գավառի Չիթահանք (Չիթահանքով)<sup>4</sup> և Թեքման գավառի Բյուլլի<sup>5</sup> գյուղերից:

1 «Գյուրջիստանի ցեղային լեզու լեզու», էջ 229:

2 Նույն տեղում:

3 «Ֆեղդոսի ցեղային լեզու լեզու 1694-1732 ՎՎ», էջ 121:

4 Չիթահանքը հայաբնակ գյուղ էր Ստորին Բասեն գավառում, Արաքս գետի աջակողմում՝ Խորասանից 30 կմ արևելք:

**Վիճակագրություն.** գյուղի բնակչության բվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները խիստ աղքատիկ են.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1884 <sup>6</sup>	20			758
1908 <sup>7</sup>	45			600
1912 <sup>8</sup>				570
1914 <sup>9</sup>				686
1915 <sup>10</sup>				658
1916 <sup>11</sup>	95	364	326	690
1926 <sup>12</sup>	140			830
1987 <sup>13</sup>	153			742

Երկրորդ աշխարհամարտին մասնակցել է 163 թորիացի. 67-ը զոհվել է<sup>14</sup>:

5 Բյուլլին հայաբնակ գյուղ էր Արաքս գետի ձախակողմում՝ Թեքմանից 18 կմ արևելք: Բյուլլեցիների մի մասը հաստատվել է Հեշտիա և Չամդուրա գյուղերում:

6 «Արձագանք», 1885, № 3, էջ 41, նաև՝ № 26, էջ 368:

7 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 43:

8 **Յակոբեան Պ.**, Հրատեղողնություն, էջ 95:

9 «Кавказский календарь на 1915 г.», էջ 189:



10 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:

11 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 37:

12 **Արդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 124:

13 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

14 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:



ԹՈՐԻԱ. գյուղի տեսքը հս-ից, Սբ. Աստվածածին եկեղեցին հր-ալ-ից և հր-ամ-ից

**Գպրոց.** Թորիայի դպրոցի հիմնադրման տարեթիվն անհայտ է, սակայն 1908 թ. ունեցել է 2 ուսուցիչ և 50 աշակերտ (երկու սեռի)<sup>15</sup>:

**Սբ. Աստվածամոր եկեղեցի.** գյուղի եկեղեցին հիմնադրվել է 1843 թ. «Տօրիա, յանուն ս. Աստուածածնի, քարաշէն, 1843 թ. ...»<sup>16</sup>: 1893 թ. տեղի են ունեցել եկեղեցու հիմնավոր վերակառուցման աշխատանքներ<sup>17</sup>: 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշար-

ժից «խիստ տուժել էր հին եկեղեցին (հիմնավորապես խարխալվել էր)»<sup>18</sup>: Գյուղացիները միայն 1905 թ. են կարողացել ձեռնարկել տարիներ առաջ խարխրված և արդեն իսպառ քայքայված եկեղեցու վերակառուցումը: Այդ մասին են վկայում եկեղեցու հարավային և արևմտյան մուտքերի ճակատներին փորագրված արձանագրությունները: 1995 թ. եկեղեցին նորոգվում էր (թերավարտ էր մնացել ծածկը):

15 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 43:

16 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

17 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83:

18 **Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 34-35:



ԹՈՐԻԱ. հատվածներ գերեզմանոցից

Եկեղեցի. արևմտյան մուտքին՝  
 1905 | ԱՅՍ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՈՐՄՆ ԿԱՌՈՒՑ-  
 ԻԱԿ ԾԱԽԻԻՔ ՏԷՐ ՄԻՔԱԷԼ ՔՈԹԱՆՆԵԱՆԻ  
 ՅԻՇԱՏԱԿ Է ՆՈՐԱ:  
 Հրատ. առաջին անգամ:

Եկեղեցի. հարավային մուտքին՝  
 ԿԱՌՈՒՑԱԿ Ս(ՈՒՐ)Ք Ա(ՄՏՈՒԿ)ԾԱՄՕՐ Ե-  
 ԿԵՂԵՑԻՆ Տ(Է)Ր | ՄԻՔԱԷԼ ՔՈԹ(ԱՆ)Ն(ԵԱՆ)Ց

ԾԱԽԻԻՔ ԵՒ ԱՇԽԱՍՏՈՒԹ(ԵԱՍ)Ք ԹՈՐԻՈՅ  
 ԺՈՂՈՎՐԴՈՑ:

Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** 1915 թ. գյուղի ծխատեր քահանայի  
 պաշտոնը ստանձնել էր Ուջմանայի քահանան՝  
 տեր Հովհաննես Դարբինյանը<sup>19</sup>:

**Ձիթհան.** Թորիայում գործած երբեմնի ձիթհանի  
 վկայությունն է ցայժմ պահպանված քարը:

<sup>19</sup> «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:

ԹՈՔ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 12 կմ հյուսիս-արևմուտք, Փարվանա գետի աջափնյա ձորապռնկին, ծ. մ. 1600 մ միջին բարձրության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. գյուղն ունեցել է 10 տուն, հարկվել է 12.000 ալչե<sup>1</sup>:

**Բնակչություն.** 1829-1830 թթ. թրքաբնակ այս գյուղը համալրվել է Արևմտյան Հայաստանից փոխադրված հայերով:

Հայերի արտագաղթից հետո Թոքը կրկին վերածվել է զուտ թրքաբնակ գյուղի, որը, օրինակ, 1914 թ. ուներ 504 բնակիչ<sup>2</sup>: Այս կացությունը պահպանվել է մինչև 1944 թ., երբ ողջ երկրամասի թուրք ազգաբնակչությունն արստրվեց: Հետագայում Թոքում բնակություն են հաստատել մի քանի վրացի ընտանիքներ, իսկ ավելի ուշ՝ ավելի քան մեկդարյա ընդմիջումից հետո՝ նաև հայեր (1988 թ.՝ 6 տուն):

**Վիճակագրություն.** նորաբնակների թիվը Թոք գյուղում, վիճակագրական մի քանի տվյալների համաձայն, 1840-ական թվականների ընթացքում փոքր-ինչ աճել է, 1850-ականի սկզբին նվազել, իսկ 1855-56 թթ. Թոքն իսպառ հայաթափվել է՝ Մամսար լեռան ստորոտում նորահիմն գյուղ փոխադրվելու պատճառով:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>3</sup>		101	100	201
1841 <sup>4</sup>		95	81	176
1842 <sup>5</sup>		100	85	185
1844 <sup>6</sup>		109	97	206
1845 <sup>7</sup>		112	104	216
1847 <sup>8</sup>		115	108	223
1849 <sup>9</sup>		119	111	230
1851 <sup>10</sup>	20	80	77	157
1853 <sup>11</sup>		92	88	180
1854 <sup>12</sup>		94	90	184

1 “Չղրջոսեթանոս շրջաօջտոս ձօջօ ձօջտօթօ”, էջ 201:

2 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 188.

3 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:

4 Նույն տեղում, գ. 3802, ք. 65-66:

5 Նույն տեղում, գ. 3805, ք. 78-79:

6 Նույն տեղում, գ. 3809, ք. 16-17:

7 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:

8 Նույն տեղում, գ. 3814, ք. 35-36:

9 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:

10 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 30:

11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 37-38:



12 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

**Սբ. Աստվածածին հայոց եկեղեցի.** ամենահին վկայություններից մեկը վերաբերում է 1839 թ.<sup>13</sup>: Ամենայն հավանականությամբ, սա համակ սրբատաշ քարից, ի սկզբանե բյուզանդաձև միջնադարյան միանավ այն եկեղեցին է, որն այսօր էլ կանգուն է: Եկեղեցու շուրջը պահպանվել են քառակող կոթողների մի քանի բեկորներ ու դրանց պատվանդանները:



ԹՈՔ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը ամ-ից, քառակող կոթողների բեկորներ և պատվանդաններ եկեղեցու բակում

13 Նույն տեղում, գ. 457, ք. 42-47:



*ԹՈՔ. տեսարաններ Թոքավանքից (հս-ամ-ից) և դիտակետ-աշտարակից, հատակագծեր*



**Թոքավանք.** Թոքի հարավային կողմում՝ Փարվանայի աջ ձորալանջին, Թոքավանք անվանք հայտնի միջնադարյան հուշարձանախումբն է՝ բաղկացած միանավ եկեղեցուց (հյուսիսից՝ կցակառույց ավանդատուն-սրահով), փոքր-ինչ հարավ առանձին կանգնած մատուռից և օժանդակ շենքերի մնացորդներից:

**Եկեղեցի.** Թոքավանքի դիմաց՝ Փարվանա գետի ձախ կողմում գտնվող գյուղատեղիի ավերակ-

ների մեջ, կա կիսավեր, միանավ, թաղածածկ հորինվածքով, սրբատաշ քարից մի բյուզանդաձես եկեղեցի (7,59 x 5,05 մ):

**Դիտակետ-աշտարակ.** գյուղի հարավարևմտյան եզրին պահպանվել են գրեթե քառակուսի հատակագծով (10,70 x 9,05 մ) դիտակետ-աշտարակի ավերակները:

### ԺԴԱՆՈՎԱԿԱՆ



ԺԴԱՆՈՎԱԿԱՆ. նորակառույց եկեղեցու տեսքը հր-ից, խաչքարեր եկեղեցու բակում (Ի դար)

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 35 կմ հարավ-արևելք, շրջկենտրոն Նինոծմինդայից 18,5 կմ հարավ-արևելք, Մադաթափա լճի արևմտյան ափին, ծ. մ. 2110-2130 մ բարձրության վրա, ալպիական հարուստ արոտավայրերի տարածքում:

**Հիմնադրում.** բնակավայրը 1930-32 թթ. Հեշտիա գյուղի ամառային արոտավայրի տեղում հիմնադրել են Հեշտիայից գաղթած մի քանի հայ ընտանիքներ:

**Եկեղեցի.** 1999 թ. գյուղի կենտրոնում սրբատաշ կարմիր տուֆով կառուցվել և Սբ. Սարգիս անվամբ օծվել է եկեղեցի, որին արևմուտքից կից է կրկնահարկ զանգակատունը:


Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատից բացված մուտքի վերնամասում գետեղված սալիկին՝ 6 տող.

ՇԻՆԵՑԱԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶՕՐԱՎԱՐԻ | Ի ԳԻՒՂՍ ԺԴԱՆՈՎԱԿԱՆ, ԱՐԴԵԱՄԲԸ ՄԱՐԻԿԵԱՆ ՍԱՐԳՍԻ, | Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԾՆՕՂԻՆ ՍՏԱՔԵԱՅ ՀԵՇՏԻԱՅԻՈՅ | ՅԱԻՈՒՐՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ | ՎՐԱՍՏԱՆԻ, Տ(ԵԱՌ)Ն ՆԵՐՍԻՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԷՐ-ՆԵՐՍԻՍԵԱՆ | Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԽԶ-ՌՆԽԸ (1997-1999):

Հրատ. առաջին անգամ:

**Հնավայր.** Ժդանովականի արևելյան եզրին պահպանվել են միջնադարյան գյուղատեղիի, իսկ լճափից 60 մ հեռու՝ փոքրիկ կղզյակի վրա՝ բնակատեղիի ավերակները:

## ԼՈՍԱՏՈՒՐՅԵ



ԼՈՍԱՏՈՒՐՅԵ. Սբ. Ամենափրկիչ եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հր-ալ-ից և հր ճակատից բացված մուտքը



**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 17 կմ հյուսիս, ծ. մ. 1770 մ միջին բարձրությամբ հարթավայրում:

**Պատմություն.** պատմական աղբյուրներում գյուղի մասին առաջին հիշատակություններից մեկը 1595 թ-ից է: Համաձայն հիշյալ թվականին օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Լոմատուրցիս ունեցել է 8 տուն և վճարել 10.500 ակչե<sup>1</sup>: Հայտնի է նաև, որ 1724-1725 թթ.՝ տանուտեր Մելիմի օրոք, հարկվել է 8.000 ակչե<sup>2</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով Լոմատուրցիս գյուղի բնակելի 26 տներից 19-ը ավերվել է<sup>3</sup>:

Երկրորդ աշխարհամարտին լոմատուրցիսցի 75 մասնակցից 37-ը զոհվել է<sup>4</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները սերում են 1838 թ. Էխթիլայից փոխադրված 7 հայ ընտանիքներից, որոնք 1829-30 թթ. փոխադրվել են Կարնո նահանգի Բարդավ<sup>5</sup> գյուղից:

**Վիճակագրություն.** գյուղի բնակչության թիվն արտացոլող վիճակագրական տվյալները վավերագրերում առկա են 1850-ական թթ-ից: Դրանց համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1853 <sup>6</sup>		61	65	126
1854 <sup>7</sup>		62	71	133
1857 <sup>8</sup>		76	55	131
1860 <sup>9</sup>		77	61	138
1861 <sup>10</sup>		77	73	150
1862 <sup>11</sup>		80	71	151
1863 <sup>12</sup>		83	74	157
1864 <sup>13</sup>		84	73	157
1866 <sup>14</sup>	15	88	77	165
1867 <sup>15</sup>		94	81	175
1868 <sup>16</sup>		100	85	185
1869 <sup>17</sup>		104	92	196
1870 <sup>18</sup>		104	92	196
1871 <sup>19</sup>		115	101	216

1 “Զարթոնքի շրջանի շրջանային լուսավորչական կոմիտեի ծանուցում”, էջ 198:  
 2 “Խոջաբաշի շրջանային լուսավորչական կոմիտեի ծանուցում 1694-1732 ՎՎ.”, էջ 181:  
 3 «Մշակ», 1900, № 43, էջ 3:  
 4 **Գալստյան Ա.**, Ջավախք, էջ 101:  
 5 Բարդավի տեղադրությունը ճշտել չկարողացանք:  
 6 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 37-38:  
 7 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:  
 8 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:  
 9 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:  
 10 Նույն տեղում, գ. 3839, ք. 24-25:  
 11 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:  
 12 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 13 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:  
 14 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 15 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 16 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:  
 17 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 18 Նույն տեղում, գ. 3855, ք. 6-7:  
 19 Նույն տեղում, գ. 3858, ք. 70-71:

1872 <sup>20</sup>		117	103	220
1873 <sup>21</sup>		119	103	222
1874 <sup>22</sup>				223
1875 <sup>23</sup>				229
1876 <sup>24</sup>		130	107	237
1877 <sup>25</sup>		115	101	216
1878 <sup>26</sup>		119	101	220
1880 <sup>27</sup>		122	101	223
1881 <sup>28</sup>		121	102	223
1882 <sup>29</sup>		133	101	234
1883 <sup>30</sup>		135	103	238
1884 <sup>31</sup>	18			
1887 <sup>32</sup>		136	113	249
1889 <sup>33</sup>		141	120	261
1890 <sup>34</sup>		142	120	262
1891 <sup>35</sup>		142	125	267
1892 <sup>36</sup>		147	125	272
1893 <sup>37</sup>	20	150	125	275
1894 <sup>38</sup>		153	132	285
1897 <sup>39</sup>		167	155	322
1898 <sup>40</sup>		172	164	336
1899 <sup>41</sup>	26	166	154	320
1900 <sup>42</sup>		173	157	330
1901 <sup>43</sup>		185	165	350
1902 <sup>44</sup>		186	158	344
1905 <sup>45</sup>		201	173	374
1908 <sup>46</sup>	36	204	188	392
1910 <sup>47</sup>		220	200	420
1912 <sup>48</sup>		231	207	438
1914 <sup>49</sup>		241	212	453

20 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:  
 21 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 22 Նույն տեղում, գ. 3864, ք. 28-29:  
 23 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21:  
 24 Նույն տեղում, գ. 3868, ք. 29:  
 25 Նույն տեղում, գ. 3869, ք. 2-30:  
 26 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 27 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:  
 28 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:  
 29 Նույն տեղում, գ. 3874, ք. 44-45:  
 30 Նույն տեղում, գ. 3875, ք. 49-50:  
 31 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 32 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, ք. 41-42:  
 33 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 34 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:  
 35 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:  
 36 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:  
 37 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 794:  
 38 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 172-173:  
 39 Նույն տեղում, գ. 3899, ք. 145-146:  
 40 Նույն տեղում, գ. 3897, ք. 167:  
 41 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102: «Մշակ», 1900, № 43, էջ 2:  
 42 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 52:  
 43 Նույն տեղում, գ. 3906, ք. 69:  
 44 Նույն տեղում, գ. 3907, ք. 21-22:  
 45 Նույն տեղում, գ. 3912, ք. 264-265:  
 46 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 136-137:  
 48 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 49 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 175-176: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 461 շունը (“Кавказский календарь на 1915 г.”, էջ 152).

1916 <sup>50</sup>		257	220	477
1918 <sup>51</sup>	65	250	260	510
1921 <sup>52</sup>		110	100	210
1987 <sup>53</sup>	137			548

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության վերաբերյալ դիվանական վավերագրերում առկա են հետևյալ տվյալները.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>54</sup>		1	17
1874 <sup>55</sup>		1	20
1875 <sup>56</sup>	Հովհաննես Տեր-Բաղդասարյանց		25
1876 <sup>57</sup>		1	13
1877 <sup>58</sup>		1	16
1878 <sup>59</sup>		1	15
1880 <sup>60</sup>		1	20
1881 <sup>61</sup>		1	20
1882 <sup>62</sup>		1	14

**Սբ. Ամենափրկիչ (Սբ. Փրկիչ) եկեղեցի.** վավերագրերում հիշատակվում է 1840-ականից: Եղել է քարաշեն, փայտածածկ կառույց<sup>63</sup>: 1890-ականին սկսվել են վերակառուցման աշխատանքները, որոնք կառավարության հարուցած արգելքների պատճառով ընթացել են ընդհատումներով<sup>64</sup>: 1903 թ. հին եկեղեցին արդեն այնպիսի կացության մեջ էր, որ գյուղն ընդգրկվել է Ախալքալաքի գավառի եկեղեցի չունեցող բնակավայրերի ցուցակում<sup>65</sup>: Հայտնի է, որ 1905 թ. ընթանում էին կառուցվելիք եկեղեցու նախագծի հաստատման աշխատանքները<sup>66</sup>: Եկեղեցու պատին փորագրված 1906 թվականը վկայում է, որ նախագծի հաստատմանն անմիջապես հետևել են շինարարական աշխատանքները:



*ԼՈՍՏԱՏՈՒՐՅՅԻ. հատվածներ գերեզմանոցից*

**Գերեզմանոց.** տարածվում է գյուղի հյուսիսարևմտյան եզրին: Պահպանված առավել հին շիրմաքարերը վերաբերում են ԺԹ դարի կեսերին:

50 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 22-23:  
 51 ՀԱԴ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 52 ՀԱԴ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 53 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 54 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 55 Նույն տեղում, գ. 3864, ք. 28-29:  
 56 ՀԱԴ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 43:  
 57 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 52:  
 58 Նույն տեղում, ք. 130:  
 59 Նույն տեղում, ք. 178:  
 60 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:  
 61 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:  
 62 Նույն տեղում, գ. 3874, ք. 44-45:  
 63 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 64 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8948, ք. 1, 25-26, նաև՝ գ. 8949, ք. 14:  
 65 «Արարատ», 1903, էջ 436:  
 66 «Արարատ», 1905, էջ 406-407:

### ԽԱՆԴՈ



ԽԱՆԴՈ. գյուղի տեսքը հր-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 10 կմ հյուսիս-արևմուտք, Փարվանա գետի աջ կողմում, ձորապոնկից ոչ հեռու, ծ. մ. 1660-1670 մ բարձր հարթավայրում:

**Պատմություն.** 1595 թ. գյուղն ունեցել է 61 տուն, սակայն հարկվել միայն 15.000 ակչե<sup>1</sup>:

1870-80-ականներին գյուղը մաս է կազմել ազնվական Քանանյանց տոհմի կալվածների: 1873 թ. Խանդո գյուղն իր տարածքով կազմել է 1200 դեսյատին<sup>2</sup>, իսկ 1884-ին կալվածատեր է հիշվում Անտոն Քանանյանցը<sup>3</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից գյուղի բնակելի 130 տնից 2-ը քանդվել է, բնակիչներից 3-ը՝ զոհվել<sup>4</sup>: Հակառակ համեմատաբար փոքր կորուստների՝ Խանդոն նույնպես ընդգրկվել է երկրամասի կարիքի մեջ գտնվող գյուղերի ցուցակում<sup>5</sup>:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Խանդոյի

գյուղատնտեսությունը հայտնվել է համեմատաբար ծանր կացության մեջ՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով երրորդ կարգի տուժած բնակավայրերի շարքում<sup>6</sup>:

Երկրորդ աշխարհամարտին Խանդոյից մասնակցել է 280 հոգի, որոնցից 125-ը զոհվել է<sup>7</sup>:

**Բնակչություն.** Խանդոն Ջավախքի առավել մարդաշատ գյուղերից էր: Ներկայիս բնակիչների նախնիները 1830 թ. փոխադրվել են Կարնո Խաչկավանք գյուղից<sup>8</sup>, Բասենից և Կարսից:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում Խանդոյի բնակչությունն անընդմեջ աճել է: Այդ են վկայում վավերագրերից քաղված հետևյալ տվյալները.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>9</sup>		191	110	301
1840 <sup>10</sup>		156	135	291
1841 <sup>11</sup>		185	167	356

1 “Զըրջոսեթանոս Յոլաօյտոս ճոջո ճոջոթոթո”, էջ 202-203:

2 «Մեղու Հայաստանի», 1873, № 6, էջ 3:

3 «Արձագանք», 1885, № 3, էջ 43: Ա. Քանանյանցի մասին տես սույն աշխ. էջ 75, ծանոթ. № 159:

4 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

5 «Մշակ», 1901, № 40, էջ 1:

6 **Մայլիմեան**, Անբերրիությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:

7 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:

8 Խաչկավանքը (այժմ՝ Aktoprak) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 17 կմ հյուսիս-արևմուտք:

9 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, թ. 9-10:

10 Նույն տեղում, գ. 3800, թ. 4:

11 Նույն տեղում, գ. 3802, թ. 66:

1842 <sup>12</sup>		190	171	361
1844 <sup>13</sup>		207	185	392
1845 <sup>14</sup>		200	201	401
1847 <sup>15</sup>		200	200	400
1849 <sup>16</sup>		151	150	301
1851 <sup>17</sup>	32	156	158	314
1853 <sup>18</sup>		232	230	462
1854 <sup>19</sup>		235	228	463
1857 <sup>20</sup>		275	270	545
1860 <sup>21</sup>		273	271	544
1861 <sup>22</sup>		259	260	519
1862 <sup>23</sup>		263	260	523
1863 <sup>24</sup>		272	269	541
1864 <sup>25</sup>		284	269	553
1866 <sup>26</sup>	64	294	269	563
1867 <sup>27</sup>		310	289	599
1868 <sup>28</sup>		321	307	628
1869 <sup>29</sup>		325	312	637
1870 <sup>30</sup>		335	327	662
1871 <sup>31</sup>		342	341	683
1872 <sup>32</sup>		351	333	684
1873 <sup>33</sup>	72	360	342	702
1874 <sup>34</sup>				724
1875 <sup>35</sup>				732
1876 <sup>36</sup>		383	373	756
1877 <sup>37</sup>		372	346	718
1878 <sup>38</sup>		391	363	754
1880 <sup>39</sup>		427	393	820
1881 <sup>40</sup>		429	396	825
1882 <sup>41</sup>		431	399	830
1883 <sup>42</sup>		431	419	850
1884 <sup>43</sup>	81			

12 Նույն տեղում, գ. 3805, ք. 80:  
 13 Նույն տեղում, գ. 3809, ք. 15:  
 14 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:  
 15 Նույն տեղում, գ. 3814, ք. 35:  
 16 Նույն տեղում, գ. 3818, ք. 40:  
 17 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 31:  
 18 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 37-38:  
 19 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:  
 20 Նույն տեղում, գ. 3850, ք. 53-54:  
 21 Նույն տեղում, գ. 3833, ք. 66:  
 22 Նույն տեղում, գ. 3839, ք. 24:  
 23 Նույն տեղում, գ. 3836, ք. 22:  
 24 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 25 Նույն տեղում, գ. 3846, ք. 10:  
 26 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 27 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 28 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 29 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 30 Նույն տեղում, գ. 3857, ք. 20:  
 31 Նույն տեղում, գ. 3858, ք. 10:  
 32 Նույն տեղում, գ. 3859, ք. 57:  
 33 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 34 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, ք. 28:  
 35 Նույն տեղում, գ. 3866, ք. 21:  
 36 Նույն տեղում, գ. 3868, ք. 31:  
 37 Նույն տեղում, գ. 3869, ք. 29:  
 38 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 39 Նույն տեղում, գ. 3872, ք. 88:  
 40 Նույն տեղում, գ. 3873, ք. 98:  
 41 Նույն տեղում, գ. 3874, ք. 45:  
 42 Նույն տեղում, գ. 3875, ք. 50:  
 43 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

1885 <sup>44</sup>				403	398	801
1886 <sup>45</sup>				403	398	801
1887 <sup>46</sup>				448	411	859
1889 <sup>47</sup>				476	432	908
1890 <sup>48</sup>				463	428	891
1891 <sup>49</sup>				490	447	937
1892 <sup>50</sup>				498	457	955
1893 <sup>51</sup>				504	408	912
1894 <sup>52</sup>				508	485	993
1897 <sup>53</sup>				557	547	1104
1898 <sup>54</sup>				585	578	1163
1899 <sup>55</sup>	130			567	536	1103
1900 <sup>56</sup>				576	542	1118
1901 <sup>57</sup>				604	558	1162
1902 <sup>58</sup>				609	585	1194
1905 <sup>59</sup>				665	664	1329
1908 <sup>60</sup>	135			719	682	1401
1910 <sup>61</sup>				764	733	1497
1912 <sup>62</sup>				784	760	1544
1914 <sup>63</sup>				833	786	1619
1916 <sup>64</sup>				850	794	1644
1917 <sup>65</sup>						1200
1918 <sup>66</sup>	210	1282	1270			2552
1919 <sup>67</sup>						1967
1921 <sup>68</sup>				400	200	600
1987 <sup>69</sup>	572					2524

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության վերաբերյալ հայտնի են հետևյալ տվյալները.

տարեթիվ	այլ տեղեկ. արական	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>70</sup>		1	41
1881 <sup>71</sup>		1	60

44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 11:  
 45 Նույն տեղում, գ. 3878, ք. 12:  
 46 Նույն տեղում, գ. 3880, ք. 41-42:  
 47 Նույն տեղում, գ. 3884, ք. 66-67:  
 48 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:  
 49 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:  
 50 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:  
 51 Նույն տեղում, գ. 3895, ք. 124:  
 52 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22:  
 53 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 145-146:  
 54 Նույն տեղում, գ. 3897, ք. 167:  
 55 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 56 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 57 Նույն տեղում, գ. 3906, ք. 69: Ի դեպ, ըստ դիվանական մեկ այլ վավերագրի, նույն թվականին Խանդոյի բնակչության ընդհանուր թվաքանակը կազմել է 1122 շունչ, որից 578-ը արական, 544-ը՝ իգական (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 139):  
 58 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 21-22:  
 59 Նույն տեղում, գ. 3912, ք. 264-265:  
 60 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 136-137:  
 62 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 63 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 177: Ի դեպ, մեկ այլ աղբյուրի համաձայն, նույն թվականին գյուղն ունեցել է 1967 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 195).  
 64 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 22-23:  
 65 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 95, ք. 98:  
 66 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 67 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 64, ք. 6:  
 68 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1-4:  
 69 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 70 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 71 **Խոտրյան Ս.**, նշվ. աշխ., էջ 518:





*ԽԱՆԴՈՒ. քաակոր խաչ (Ժ-ԺԱ դդ.)*





*ԽԱՆԴՈ. Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հր-ամ-ից և քառակող կոթողներ գյուղի «Խաչերի թաղ» վայրում*


Խանդոյում իբրև ծխական եկեղեցի՝ հիշվում է միայն Սբ. Խաչը: Վերջինս քարաշեն, փայտածածկ կառույց էր, որը ներկայումս խիստ քայքայված է ու կիսավեր: Սբ. Խաչ եկեղեցու հարավային կողմում տարածվում է հայոց գերեզմանատունը:

**Կոթողներ.** Խանդոյի «Խաչերի թաղ» անվանք հայտնի թաղամասում՝ Ա. Բասենցյանի տնամերձ հողամասում, պահպանվել են երկաստիճան պատվանդանին կանգնեցված և խաչաքանդակի համաչափություններով ավելի շատ Ժ-ԺԱ (քան՝ Ե-Է) դարերին բնորոշ զույգ քառակող կոթողներ:

Մի երեսին առասպելակերպ կենդանապատկերով, մյուսում կենաց ծառով հարդարված քառակող կոթողի մի պատվանդան էլ առկա է գյուղի հյուսիսարևմտյան եզրին կառուցված նորաշեն սրբատեղիի մոտ:

**Ցխիա գյուղատեղի.** գտնվում է գյուղի հյուսիսային մասում: Գրավոր աղբյուրները հիշատակում են 1595 թ-ից: Այդ թվականին գյուղն ունեցել է 5 տուն բնակիչ, հարկվել է 14.000<sup>78</sup>: Հայտնի է, որ 1705-1706 թթ.՝ տանուտեր Իսամայիլի օրոք, պետական գանձարան է մուծել 5.500<sup>79</sup>, 1717-1718 թթ.՝ տանուտեր Հաբիբի օրոք՝ 7.000<sup>80</sup>, իսկ 1718-1719 թթ.՝ տանուտեր Աբդուլլահի որդի Իբրահիմի օրոք՝ 4.000 ակչե<sup>81</sup>:

**Գրիա (Կիրիա) գյուղատեղի.** Խանդոյից 3 կմ հարավ-արևելք, Փարվանա գետի աջ ձորաբերա-



78 “Գյրջուսեցանոս յոգևոյտոս ճոցո ճոցո”, էջ 203:

79 “Նոլլոնոս յոգևոյտոս ճոցո ճոցո 1694-1732 ՎՎ.”, էջ 121:


80 Նույն տեղում, էջ 152:

81 Նույն տեղում, էջ 157-158:





*ԽԱՆՈՒ. կոթողի պատկերաքանդակ պատվանդանի (Թ-ԺԱ դդ.) երկու նիստերը և գյուղամիջի գերեզմանոցը (Ժ-ԺԹ դդ.)*



*ԽԱՆԴՈ. Գրիա (Կիրիբա) գյուղատեղիի եկեղեցու տեսքը ալ-ից, հս-ամ-ից, հր-ամ-ից, հր-ալ-ից, ներքին տեսքը դեպի ալ և հր ճակատից բացված միակ մուտքը ներքուստ*



*ԽԱՆՂՈՒ. Գրիա (Կիրիբա) գյուղատեղիի եկեղեցու ավերակների մեջ պահպանված խաչազարդ երեսապատի քարերից մեկը, շուրջը տարածված գերեզմանոցում կոթողի կամ խաչքարի պատվանդան, հունադավան (քաղկեդոնական) ժամանակաշրջանից ավանդված խաչքար, եկեղեցու ամ կողմում, ձորապոնկին պահպանված դիտակետ-աշտարակի մնացորդները և եկեղեցու հատակագիծը*

նին, Պրտենա գյուղի դեմ հանդիման, տեղաբնակների կողմից Գրիա (Կիրիբա) անվանվող գյուղատեղիում պահպանված միանավ եկեղեցու (արտա-

քին չափերն են՝ 14,47 x 5,28 մ) ավերակներն են: Վերջիններից ոչ հեռու պահպանվել են վաղ միջնադարյան դիտակետ-աշտարակի մնացորդներ:

## ԽԱՎԵԹ



ԽԱՎԵԹ. գյուղի տեսքը հս-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 24 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1700-1740 մ բարձրության վրա, Կուր գետի աջ ափին, հյուսիս-սահայաց լեռնալանջին:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. Խավեթն ունեցել է 36 տուն, հարկվել է 13.000 ալչե<sup>1</sup>: Տնատեր բնակիչների թվում հանդիպում են ոչ միայն հայ միջավայրում տարածում գտած օտարոտի, այլև զուտ հայկական անձնանուններ, ինչպես, օրինակ՝ Աստվածատուր<sup>2</sup>:

Խավեթը մեկն էր այն գյուղերից, որը 1854 թ. Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու համար գնել էր Կարապետ արքեպիսկոպոսը<sup>3</sup>: Գյուղը՝ իբրև եկեղեցապատկան, հիշվում է նաև 1893 թ.<sup>4</sup>:

**Բնակչություն.** հայաթափ գյուղատեղիում հաստատված թուրք կամ, որ շատ հավանական է, բրբազած բնակիչների քանակը 1914 թ. կազմել էր 338 շունչ<sup>5</sup>: Թրբազած բնակչությունը հայրենի գյու-

ղում ապրել է մինչև 1944 թ. արքորը, որից հետո այստեղ բնակություն են հաստատել Մրակոլ (Մրակոլա) գյուղից փոխադրված հայերը:

Խավեթը Ջավախքի սակավաբնակ գյուղերից է: Համաձայն 1981 թ. հունվարի 1-ի մարդահամարի՝ գյուղն ունեցել է 362 բնակիչ, իսկ 1987-ին՝ 94 տուն, 366 շունչ:

**Կոթող.** Խավեթից 0,5 կմ հյուսիս-արևմուտք պահպանվել են քառակող կոթողի պատվանդան և Ժ-ԺԱ դարերին բնորոշ հորինվածքային առանձնահատկություններով խաչքար: Պատվանդանի հետնամասում պահպանվել է վրաց մեսրոպատառ անավարտ արձանագրություն:

Կոթող. պատվանդանի քիկունքին՝

Ք. Նախեղոտա մամոնա ճա...

Թարգմ. Հանուն Հոր և...:

Հրատ. Ջաջաբեո. օստորոյլ-եւրոտոմոճըրւլո ԳՅամքըլըլո, էջ 34:

Շանթ. հրատարակվում է ըստ «Ջաջաբեո. օստորոյլ-եւրոտոմոճըրւլո ԳՅամքըլըլո»-ի:

**Օլոդա գյուղատեղի.** գտնվում է գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուր գետի աջ ափին՝ խոր ձորում: Առնվազն ուշ միջնադարում եղել է շեն ու մար-


1 "Գյւրջոսեթանոս յոլաօյոտոս ճոլո ճոթօրո", էջ 276-277:

2 Նույն տեղում:

3 «Փորձ», 1876, № 1, էջ 196:

4 «Արաքս», գիրք Բ, հինգերորդ տարի, Ս.Պետերբուրգ, 1893, էջ 21:

5 "Кавказский календарь на 1915 г.", էջ 194:



ԽԱՎԵԹ. Խաչակոթող և քառակող կոթողի պատվանդան գյուղից 0,5 կմ հս-ամ

դաշատ բնակավայր: Համաձայն 1595 թ. հարկացուցակի՝ Օլոդան ունեցել է 21 տուն, հարկվել է 8.000 ալչե<sup>6</sup>: Ամենայն հավանականությամբ, հիշյալ թվականին Օլոդան եղել է զուտ հայաբնակ, քանի որ նրա տնատեր բնակիչների թվում, Հակոբ քահանայի գլխավորությամբ, հիշվում են օտարո-

տի, սակայն հայոց միջավայրում տարածում գտած անձնանուններ (Շահնուրադ, Անանիա, Գաբրիել և այլն)<sup>7</sup>:

**Մրակովալ (Մրակոյ) գյուղատեղի: Տեղադրություն.** Ախալքալաքից ուղիղ գծով 28 կմ հարավ-արևմուտք, Կուր գետի աջ ափից 1 կմ հեռու, ծ. մ. 1780-1800 մ բարձրության վրա:

**Նկարագրություն.** Մրակովալը Ջավախքի բազմաթիվ գյուղերից զանազանվել է հատկապես մրգատու այգիների ու պարտեզների առկայությամբ. «Գիղացիք պարապում են գլխադրապես երկրագործութեամբ և անասնապահութեամբ. ունին նաև պարտեզներ և բանջարանոցներ: Պարտեզների և բանջարանոցների վրայ կանոնաւոր հողա, խնամք չեն գործադրում, որ կարողանան լաւ արդիւնք ստանալ: Պարտեզներում կան տանձենի, խնձորենի, ծիրանի, թթենի, բալենի և սալորենի, բանջարանոցներում բուսնում է վարունկ, սոխ, համեն, կոտեն, բագուկ, գետնախնձոր, դդում և ճակընդեղ...»<sup>8</sup>:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. Մրակովալ անվանաձևով հիշվող գյուղն ունեցել է 26 տուն բնակիչ և պետական զանձարան մուծել 22.500 ալչե<sup>9</sup>: Տնատեր բնակիչների մեջ, ի թիվս հայկական միջավայրում լայն տարածում գտած օտարոտի անձնանունների, առկա են նաև զուտ հայկական անուններ, ինչպես օրինակ, Ասովաձատուր<sup>10</sup>:

Առնվազն միջնադարից հայաբնակ Մրակոյի բնակիչները, ԺԷ դարի առաջին կեսին Ախալցխայի փաշաների բռնություններին տեղի տալով, ընդունել են մահմեդականություն և միայն այդ կերպ շարունակել գոյատևել հայրենի գյուղում: 1705-1706 թթ.՝ տանուտեր Գերվիշ Մեհմեդի օրոք, հարկվել է 17.500 ալչե<sup>11</sup>:

**Բնակչություն.** 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Մրակովալը համարվել է Ծաղկայից և Ալեքսանդրապոլից փոխադրված հայերով. «...ազգաբնակչութիւնը վերջին ռուս-թրքական պատերազմից յետոյ Ծաղկայից և Ալեքսանդրապոլից գաղթելով՝ բնակութիւն են հաստատել այս գիւղում»<sup>12</sup>: 1884 թ. գյուղում թուրքերի և նորաբնակ հայերի քանակական հարբերությունը հավասար էր. «15 տուն հայեր և 15 տուն տաճիկ»<sup>13</sup>: Ինչպես ցույց են տալիս հետագա շրջանի վիճակագրական

7 Նույն տեղում:  
 8 **Բրդեան Արսէն քահ.**, Սի մոռացում գիւղ Ջաւախքում.– «Համբարաբեր», 1916, № 17, էջ 528:  
 9 “Գըրջոսեթանոս Յոլաօյտոս ճոցո ճագոարո”, էջ 278-279:  
 10 Նույն տեղում:  
 11 “Նոլաճոթոս Յոլաճոթոս Յոլաճո ճագոարո 1694-1732 ՎՎ.”, էջ 118:  
 12 **Բրդեան Արսէն քահ.**, նշվ. հոդվ., էջ 528:  
 13 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

6 “Գըրջոսեթանոս Յոլաօյտոս ճոցո ճագոարո”, էջ 280:

նյութերը, ժամանակի ընթացքում հայերը քանակապես գերազանցել են: Օրինակ, 1912 թ. վերջիններս 30 տուն էին, իսկ թուրքերը՝ 10<sup>14</sup>: 1914-ին գյուղի 52 տնից թուրքեր էին 20-ը<sup>15</sup>, իսկ 1916 թ-ին՝ 55 տնից 20-ը<sup>16</sup>: Գյուղը շեն էր մինչև 1940-ական թվականները, ընդ որում, թուրքերն արքայազնին 1944 թ., իսկ հարևան Խավեթ փոխադրվելով՝ հայերը գյուղը լքեցին 1945 թ.:

*Վիճակագրություն.* գյուղի հայ բնակչության թվաքանակի աճը ներկայացրել է հետևյալ պատկերը.


տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1878 <sup>17</sup>		52	48	100
1880 <sup>18</sup>		52	50	102
1881 <sup>19</sup>		49	50	99
1882 <sup>20</sup>		52	53	105
1883 <sup>21</sup>		54	55	109
1884 <sup>22</sup>	15			
1885 <sup>23</sup>		57	59	116
1886 <sup>24</sup>		57	59	116
1887 <sup>25</sup>		67	73	140
1889 <sup>26</sup>		75	73	148
1890 <sup>27</sup>		77	78	155
1891 <sup>28</sup>		78	82	160
1892 <sup>29</sup>		84	82	166
1893 <sup>30</sup>		88	85	173
1894 <sup>31</sup>		88	85	173
1897 <sup>32</sup>		100	91	191
1898 <sup>33</sup>		107	102	209
1899 <sup>34</sup>		107	104	211
1900 <sup>35</sup>		106	107	213
1901 <sup>36</sup>		106	117	223
1902 <sup>37</sup>		112	117	229
1905 <sup>38</sup>		132	120	252
1906 <sup>39</sup>		154	127	281

14 «Հորիզոն», 1912, № 284, էջ 5:  
 15 «Ջավախք», 1914, № 15, էջ 127-128:  
 16 **Բրդեան Արսեն քահ.**, նշվ. հոդվ., էջ 528:  
 17 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 217-218:  
 18 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 19 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 20 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 21 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 22 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 23 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 14:  
 24 Նույն տեղում, գ. 3878, ք. 11:  
 25 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 26 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 27 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:  
 28 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:  
 29 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:  
 30 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 31 Նույն տեղում, գ. 3896, ք. 167-168:  
 32 Նույն տեղում, գ. 3899, ք. 140-141:  
 33 Նույն տեղում, գ. 3897, ք. 162:  
 34 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 35 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 36 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 37 Նույն տեղում, գ. 3907, ք. 16-17:  
 38 Նույն տեղում, գ. 3912, ք. 259-260:  
 39 Նույն տեղում, գ. 3915, ք. 20:

1908 <sup>40</sup>	23	144	130	274
1910 <sup>41</sup>		155	136	291
1912 <sup>42</sup>		158	144	302
1914 <sup>43</sup>		163	148	311
1915 <sup>44</sup>	33			313
1916 <sup>45</sup>		162	149	311
1921 <sup>46</sup>		75	65	140

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 122 մրակովայցիներից 48-ը զոհվել է<sup>47</sup>:


**Եկեղեցական-ժխական դպրոց.** արդեն 1881 թ. Մրակովալում 1 ուսուցչով և 14 աշակերտով<sup>48</sup> գործած եկեղեցական-ժխական դպրոցը վկայությունն



*ԽԱՎԵԹ. Երկրորդ աշխարհամարտում զոհված մրակովայցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը Խավեթ գյուղում*

է կրթության հանդեպ մրակովալաբնակ հայերի տաժած լուրջ վերաբերմունքի: Սակայն նյութական դժվարությունների պատճառով այս դպրոցին վիճակված չի եղել տևական գործունեություն ծավալել: Համենայն դեպս, 1916 թ. խնդրով մտահոգ Արսեն քահանան նշել է. «Գիտում դպրոց չկայ. ժողովուրդը բառի բուն նշանակությամբ խարխալում է խաարի մէջ, մոռացած հայ լեզուն, հայ դպրոցը՝ յուսահատուած, անմխիթար օրեր է անցկացնում: Մրակովալը, որ ընկած է Ջավախքի ծայր անկի-

40 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 41 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 42 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 43 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 170-171: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում ցույց է տրված 413 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 160):  
 44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 900, ք. 4:  
 45 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 17-18:  
 46 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 47 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:  
 48 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, ք. 96-97:



ԽԱՎԵԹ. Մրակուվալ գյուղատեղիի Մր. Սարգիս եկեղեցու տեսքը հր-ից, հատվածներ խորանիմ հարող մասերից և հատակագիծը



*ԽԱՎԵԹ. խոյածև տապանաքարեր և խաչքարեր Մրակովալ գյուղատեղիի Սբ. Սարգիս եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում*

նում, իսպառ մոռացութեան է մատնուած: Այս գիւղը, որ կարող է տալ 40-50 աշակերտ, դպրոց չլինելու պատճառով երեխաները մեծանում են անգրագետ: Հոգետր բարձր իշխանութիւնը թող ուշք դարձնի այս մոռացուած գիւղի վրայ և նպաստ հասցնի գիւղում դպրոց բաց անելու համար»<sup>49</sup>:

**Սբ. Սարգիս եկեղեցի**<sup>50</sup>. եղել է միանավ, թաղակապ կառույց: Պահպանվել են չնչին մնացորդներ խորանի հատվածում:

Հորինվածքային և կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եկեղեցին թվագրել ԺԵ-ԺԶ դարերով:

**Գերեզմանոց.** եկեղեցու շուրջը տարածված գերեզմանոցում պահպանվել են սալածև ու խոյածև տապանաքարեր և խաչքարեր:

Խաչքար (չափերն են՝ 100 x 72 x 45 սմ). արևմտահայաց երեսը հարդարված է խաչերության տեսարանով և կենդանապատկերներով, ունի թվակիր, դժվարընթեռնելի արձանագրություն.


Ա(ՍՏՈՒԱ)Ծ | ՈՂՈՐ(ՄԻ) ԾԱՄԻՆ | ... ՈՍԿԵՐԻՉԻՆ, ՎԱՐԾԷԼԻՆ, (ԹՎԻՆ) ՌՃԻԵ (1676):

Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 12:


<sup>49</sup> **Բրդեան Արսեն քահ.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

<sup>50</sup> ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 900, ք. 4:





*ԽԱՎԵԹ. Մրակովայ գյուղատեղիի Սբ. Սարգիս եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում պահպանված «Ամենափրկիչ» հորինվածքով խաչքարը (1676 թ.) և նույն խաչքարի գրչանկարը*



## ԽԵՐԹՎԻՍ



*ԽԵՐԹՎԻՍ. ընդհանուր տեսքը հր-ից*

**Տեղադրություն.** գտնվում է Կուր և Փարվանա գետերի միախառնման հատվածում, Ախալքալաքից ուղիղ գծով 17 կմ հյուսիս-արևմուտք, ծ. մ. 1140-1180 մ բարձրությամբ ձորալանջի արևմտահայաց թեքության վրա:

**Անվան ծագումը.** Խերթվիս անվան ստուգաբանության առնչությամբ գոյություն ունի հետևյալ մեկնաբանությունը. «...Խերթվիս առաջ է գալիս էրթվիս բառից, որ վրացերեն նշանակում է միութին, վասն զի կիրճի մէջ միատրվելով երկու գետակներ սկսում են Թիֆլիսի ծծմայր Կուր գետը»<sup>1</sup>:

**Պատմություն.** Երկրամասի պատմական հարուստ անցյալով նշանավորված գյուղերից է: Համաձայն 1595 թ. կազմված հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 127 տուն (ըստ այդմ, երկրամասի առավել բազմամարդ բնակավայրերից էր), հարկվել է 25.000 ակչե<sup>2</sup>: 1-2 տուն թուրքերից գատ, որոնք հավանաբար կալվածատերեր էին, մնացած տնատեր բնակիչների անձնանունները (օրինակ՝ տեր Գրիգոր և տեր Մովսես քահանաներ, Ամիրանի որդի Սարգիս, Դավթի որդի Հուսիկ, վերջինիս որդի Գար-

րիել, Գրիգորի որդի Պապ, վերջինիս որդի Մելիք, Մելիքի որդի Սարգիս, վերջինիս որդի Հանես, Հայրապետի որդի Խաչատուր, վերջինիս որդի Մրվան, Խաչատուրի որդի Բատատա, Բագրատ, Սկրտիչ, Ումեկ և Աստվածատուր եղբայրներ, Սորազանի որդի Խաչատուր, Մովսեսի որդի Գուրասպ, Եղիազարի որդի Սմբատ, Գաբրիել և Խաչատուր եղբայրներ, Ղանդույի որդի Կիրակոս, Սկրտչի որդի Մամուկ, Ջատիկի որդի Խաստուր, Կիրակոսի որդի Բատատա, Սկրտչի որդի Ումեկ և այլն)<sup>3</sup> վկայում են, որ հիշյալ թվականին Խերթվիսը, եթե ոչ ամբողջությամբ, ապա գերազանցապես հայաբնակ էր:

Հայտնի է, որ 1625 թ. Ախալցխայի Սաֆար փաշան գյուղի բնակչությանը բռնությամբ մահմեդականություն է պարտադրել: Ժամանակի ընթացքում, թրքական ճնշումներին տեղի տալով, հայերի ազգային ինքնագիտակցությունն իսպառ մարել է:

«Վրաստանի աշխարհագրության» համաձայն՝ Խերթվիսի բերդում տեղակայված էր ենիչերիների կայազոր<sup>4</sup>:

1 «Մշակ», 1879, № 157, էջ 1:

2 «Գյւրջոսեթանոս յոլաօյտոս ճոճո ճոթոարո», էջ 171-173:

3 Նույն տեղում:

4 **Գաեջւմցի Զագրաճոնո**, Նաթարտոգեղոս Գեօրգրաֆոս, Թոճոլոսո, 1997, էջ 130:

**Բնակչություն.** հայտնի է, որ 1824 թ., հոծ մահ-մեղապան բնակչությունից զատ, Խերթվիսն ունեցել է նաև փոքրաթիվ հայ-կաթոլիկ բնակիչներ<sup>5</sup>, որոնք 1828-1829 թթ. հեռացել են տարբեր վայրեր :

1829-30 թթ. արդեն զուտ թրքաբնակ գյուղը համալրվել է Արևմտյան Հայաստանից գաղթած հայերով: Նկատելի է, որ, ինչ-ինչ հանգամանքների բերումով, խերթվիսաբնակ հայերը չեն կարողացել ինչպես հարկն է արմատավորվել գյուղում և 1840-ական թվականների կեսերից սկսել են արտագաղթել: Խերթվիսի վերջին հայ բնակիչները գյուղը լքել են 1878 թ.:

1914 թ. հունվարի 1-ի մարդահամարի տվյալների համաձայն, զուտ թրքաբնակ Խերթվիսն ուներ 2010 բնակիչ<sup>6</sup>: Վերջիններս 1944 թ. քաղաքացիներ են դառնալով այդպես գյուղը թողնելով զանազան վայրերից այստեղ գաղթած վրացի նորաբնակներին:

**Վիճակագրություն.** Խերթվիս գյուղի հայ բնակչության թվաքանակն արտացոլող դիվանական վավերագրերից քաղված վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1824 <sup>7</sup>	4			20
1840 <sup>8</sup>		124	120	244
1841 <sup>9</sup>		128	124	252
1842 <sup>10</sup>		133	130	263
1844 <sup>11</sup>		151	143	294
1845 <sup>12</sup>		156	148	304
1847 <sup>13</sup>		100	104	204
1849 <sup>14</sup>		96	87	183
1853 <sup>15</sup>		89	85	174
1854 <sup>16</sup>		50	43	93
1857 <sup>17</sup>		45	37	82
1860 <sup>18</sup>		47	41	88
1861 <sup>19</sup>		49	40	89
1862 <sup>20</sup>		48	42	90
1863 <sup>21</sup>		46	47	93
1864 <sup>22</sup>		46	46	92
1866 <sup>23</sup>	15	45	45	90

5 Յակոբեան Պ., Հրատի ողջմտութեան, էջ 132:

6 "Кавказский календарь на 1915 г.", էջ 197:

7 Յակոբեան Պ., Հրատի ողջմտութեան, էջ 83:

8 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

9 Նույն տեղում, գ. 3802, թ. 65-66:

10 Նույն տեղում, գ. 3805, թ. 79-80:

11 Նույն տեղում, գ. 3809, թ. 17-18:

12 Նույն տեղում, գ. 3811, թ. 73-74:

13 Նույն տեղում, գ. 3814, թ. 35-36:

14 Նույն տեղում, գ. 3818, թ. 40-41:

15 Նույն տեղում, գ. 2743, թ. 39-40:

16 Նույն տեղում, գ. 3825, թ. 49-50:

17 Նույն տեղում, գ. 3830, թ. 54-55:

18 Նույն տեղում, գ. 3833, թ. 67-68:

19 Նույն տեղում, գ. 3839, թ. 25-26:

20 Նույն տեղում, գ. 3836, թ. 21-22:

21 Նույն տեղում, գ. 3843, թ. 21-22:

22 Նույն տեղում, գ. 3846, թ. 8-9:

23 Նույն տեղում, գ. 3848, թ. 74:

1867 <sup>24</sup>	48	46	94
1868 <sup>25</sup>	48	46	94
1869 <sup>26</sup>	48	46	94
1870 <sup>27</sup>	48	48	96
1871 <sup>28</sup>	48	46	94
1872 <sup>29</sup>	49	44	93
1873 <sup>30</sup>	50	45	95
1874 <sup>31</sup>			96
1875 <sup>32</sup>			101
1876 <sup>33</sup>	53	48	101
1877 <sup>34</sup>	30	28	58

**Սբ. Հովհաննես-Կարապետ եկեղեցի.** վավերագրերում հիշատակվում է 1830-ական թվականներից: Հայտնի է, որ «Վասն վերանորոգութեան եկեղեցոյն ի 1843 ամե» 1845 թ. ծախսվել է եկեղեցական գումարներից<sup>35</sup>: Խերթվիսաբնակ հայերի այլ վայրեր փոխադրվելու հետևանքով 1878 թ. եկեղեցին արդեն փակվել է<sup>36</sup>: 1910 թ. եկեղեցին, երբ ավելի քան 30 տարի զուրկ էր ծխականներից, նկարագրվել է այսպես. «Առաջին՝ հայ ժողովուրդ բնա չկայ, 400 տուն տաճիկ են, ուրիշ ազգից անգամ չկայ, հայերը երեսուն տարի են աւելի գաղթած են, մնացել է միայն եկեղեցին անտէր, շինութիւնը եկեղեցու հասարակ քարից և ցեխից, վրէն հողէ ծածկ, դասերի վերայ իջել է տանիքը, և բոլորովին բաց գերանները մնացել է հողի տակ, միւս մնացածն ալ ձմռան տակ կքանդուի, պատերի վերևի մասը երկու արշինի չափ քարերը հեռացել են միմեանցից և վտանգ կարող է լինել, որովհետև տաճիկների երեսխանները խաղում են այդտեղ: Ունի գաւիթ որոյ արևելեան կողմը տաճիկների բնակութեան սեփական տներ է, որը գնել են հայերից, լայնութիւնը քսան արշին: Արևմտեան կողմը եկեղեցու դռնից մինչև ընդհանուրի փողոցը տասներկու արշին երկարութեամբ, լայնութիւնը քսան արշին, Ապասի կրպակի ճակատի հաւասարութեամբ բաց տեղ: Հարաւային կողմը երկարականի տուն և կրպակ Ապաս Բօգրեակովի, քսան և ութը և մի չարէք արշին երկարութեամբ, 1<sup>1</sup>/<sub>4</sub> արշին տեղ վերոյիշեալ Ապասը տան շինութեան պատը եկեղեցոյ հողի վերայ է դրած, նոյնպէս և վերնաշարկի բալկոնը հայեաթի մէջ է, բացի դրանից որպէս սեպիականութիւն եկեղեցու պատից մինչև իրայ կրպակի պատը տախ-

24 Նույն տեղում, գ. 3851, թ. 20-21:

25 Նույն տեղում, գ. 3853, թ. 28:

26 Նույն տեղում, գ. 3856, թ. 10:

27 Նույն տեղում, գ. 3857, թ. 23:

28 Նույն տեղում, գ. 3858, թ. 10-11:

29 Նույն տեղում, գ. 3859, թ. 57-58:

30 Նույն տեղում, գ. 3862, թ. 72-73:

31 Նույն տեղում, գ. 3864, թ. 28-29:

32 Նույն տեղում, գ. 3866, թ. 21-22:

33 Նույն տեղում, գ. 3868, թ. 29:

34 Նույն տեղում, գ. 3869, թ. 30-31:

35 Նույն տեղում, գ. 3811, թ. 73-74:

36 Նույն տեղում, գ. 3850, թ. 206:



*ԽԵՐՐՈՎԻՍ. Բերդի տեսքը ալ-ից և հատվածներ հարավակողմի պարսպապատից*

տակով փակել է, և դուռ է դրած, որտեղից գնում և գալիս են իրենց տունը, լայնությունը չորս և կէս արշին (4<sup>1/2</sup>): Այս մասին Ատեանդ պիտի տնօրէնութիւն անէ: Տաճիկ Ապասը ասում է՝ եթէ կծախէք այդքան տեղը ես կառնեն, կամ թէ ամբողջ եկեղեցին իր հայեաթով: Հիսիսային կողմը նոյնպէս քսան և ութն արշին երկարութիւն և 4<sup>1/2</sup> արշին լայնութիւն: Երկրորդ՝ անշարժ կայք եկեղեցին ոչինչ չունի, ոչ տուն, ոչ կրպակ, և ոչ պարտէզ: Շարժական մի պղնձեայ բուրվառ և երկու փոքր պղնձեայ աշտանակ: Սեղանի մէջ կայ երկու հատ Տիրամօր պատկերներ...»<sup>37</sup>: Հայտնի է նաև, որ հետագա տա-

րիներին հոգևոր իշխանությունները զբաղվել են միայն եկեղեցու գույքի ապահովման հարցերով<sup>38</sup>, իսկ հետագա վավերագրերում եկեղեցին այլևս չի հիշվում:

**Բերդ.** Խերթվիսն առանձնապես նշանավոր է պատմության ընթացքում բազմիցս ձեռքից ձեռք անցած և պարբերաբար վերանորոգված, ամրակուռ համանուն բերդով:

Բերդի մուտքից վեր գտնվում էր մի արձանագրություն, որն այժմ կորած է համարվում: Այս արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Մ. Բրոսսեն, որը երեք անգամ ուղղումներ է մտցրել

37 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 11101, ք. 1:

38 Նույն տեղում, ք. 12-13:



## ԽՉԱԲԱՎՐԱ



ԽՉԱԲԱՎՐԱ. ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 20 կմ հյուսիս-արևմուտք, Կուր գետի աջ ափից 2 կմ հեռու, ծ. մ. 1480-1560 մ բարձրության վրա, ներկայիս Ասպինձայի շրջանում:

**Պատմություն.** գյուղամիջի խաչքարերով գերեզմանատան առկայությունը փաստում է, որ առնչված ժԵ-ժՉ դարերում գյուղն ունեցել է հայ-առաքելական եկեղեցու հետևորդ հայախոս հոծ բնակչություն:

Համաձայն 1595 թ. կազմված հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 40 տուն բնակիչ, հարկվել է 15.165 ակչե<sup>1</sup>: 1704-1705 թթ. կազմված օսմանյան մեկ այլ հարկացուցակի համաձայն՝ Խզաբավրան տանուտեր Իսմայիլի օրոք հարկվել է 15.000<sup>2</sup>, իսկ 1714 թ., տանուտեր Յուսուփի օրոք՝ 10.000 ակչե<sup>3</sup>:

Հայանի է, որ արդեն ժԹ դարում խզաբավրացի հայ-կաթոլիկները գլխավորապես վրացախոս էին: Հանգամանք, որը չէր կարող տեղի ունեցած լինել ժՉ դարից հետո, երբ երկրամասը հայտնվել է օսմանյան տիրապետության տակ: Առավել հավա-

նական է, որ վրացախոսությունն արմատացած լինելու վրաստանի քաղաքական գերիշխանության վերջին շրջանում, այն է՝ ժԸ դարի կեսերին: Ինչ վերաբերում է օսմանյան բռնապետության ճնշումներից գոնե մասամբ զերծ մնալու հույսով խզաբավրացի հայերի՝ կաթոլիկությունն ընդունելու ժամանակաշրջանին, ապա դա պետք է տեղի ունեցած լինել ժԷ դարում կամ ժԸ դարի սկզբներին: Ազգային եկեղեցուց անջատվելու հետևանքով խզաբավրացիները մեկուսացել էին հայության հիմնական զանգվածից, ինչը և հնարավոր դարձրեց վրացախոսության վերջնական հաղթանակը:

Արդեն ժԹ դարի վերջին Խզաբավրայի վրացախոս հայ-կաթոլիկները մինչև իսկ ընդվզել էին իրենց եկեղեցում իրականացվող հայերեն ծիսակարգի դեմ<sup>4</sup>:

<sup>1</sup> “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 175-176:

<sup>2</sup> “წილდობის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.”, էջ 109:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 141:

<sup>4</sup> Արդեն 1880-ական թվականներին հայերենով կատարվող եկեղեցական ծիսակարգը բողոքի առիթ էր ծառայել խզաբավրացի «ուն Մեսխ»-ի համար (“დროება”, 1882, № 185): Հայ և վրացախոս հայ-կաթոլիկների միջև ավելի սրվող հարաբերություններն իրենց արտացոլումն են գտել ժամանակի մամուլում: Գրանց հեղինակները միանշանակ փորձել են ապացուցել, որ իրենք վրացի-կաթոլիկներ են, ուստի հայերեն ծիսակարգից հրաժարվելը բնական անհրաժեշտություն է: Այդ հրապարակումներից մեկում նշվել է, որ խզաբավրացիներին





ԽՉԱԲԱՎՐԱ. Սր. Սրտին Հիսուսի եկեղեցու ներքին տեսքը դեպի ալ և հայ-առաքելական ավանդական ծիսակարգին հարազատ և օրինաչափ՝ հս պատի մեջ գտնվող սկրտարանի ավագանը

բարձրացրին: Իսկ երբ Ազարեան պատրիարքը, լսելով նրա ըմբոստ վարմունքը հրամայեց ջնջել յիշեալ արձանագրութիւնը Վարձելաշվիլին իրան նեղն ընկած տեսնելով դիմեց ստախօսութեան: Նա շրջելով գաւառի բոլոր հայ-կաթօլիկ գիւղերը և հաւատացնելով քահանաներին, որ հրամայել է արդէն ջնջել արձանագրութիւնը, կարողանում է մի քանիսներից ստորագրութիւն առնել, թէ արդէն ջնջված է Խիզաբավրա գիւղի եկեղեցու սխալմամբ փորագրել տուած վրացերէն արձանագրութիւնը...»<sup>17</sup>: Սակայն Ազարյանի մահը փրկում է Վարձելյան-Վարձելաշվիլուն: Ի դեպ, Վարձելյանը, որը սկզբում խանութպան էր, դիմել էր Արարատյան վարդապետին՝ հայ-կաթօլիկ հոգևոր դպրոցն ընդունվելու. «...կաթօլիկ հայ էր եւ Վարձելեան եւ հայ անունով էլ քահանայ ձեռնադրվեց, բայց այժմ նոյն մարդը շապիկը փոխելով, վրացի է անուանում իրան: Եր-

17 «Մշակ», 1900, № 180, էջ 2:

կուսից մէկը՝ կամ նա Արարատեանցին է խաբել եւ կամ այժմ է խաբում»<sup>18</sup>:

Ինչ վերաբերում է եկեղեցու կառուցման նպատակով հայթայթված գումարներին և նվիրատուութիւններին, ապա լրատվական մեկ այլ հաղորդման մեջ նշվել է, որ միայն ալաստանցի հայերը տրամադրել են ավելի քան 500 ռ., բացի այդ, անվճար կիր են մատակարարել, մի ալաստանցի էլ եկեղեցուն նվիրել է 800 ռ. արժողությամբ մի նկար<sup>19</sup>: Ի պատասխան լրագրային քննադատութիւնների՝ «Աւագ-քահանայ Հայ կաթօլիկաց եկեղեցեաց Ախալքալաքայ սահմանի նա եւս վերակացու Խզաբարոյ գիւղի եկեղեցոյ Միայել Վարձելաշվիլի»-ն պարզաբանել էր, որ եկեղեցու կառուցումը կազմել էր ոչ թե 12000, այլ՝ 30000 ռ., նվերները հազիվ 500 ռ. էին, 2000 ռ. նվիրել էին իր ազգականները, իսկ 1000 ռ. շնորհել էր կայսերական պալատը<sup>20</sup>:

Նորաշեն եկեղեցին օծվել է Սր. Սրտին Հիսուսի անվամբ<sup>21</sup>: Հայտնի է նաև, որ եկեղեցու ծածկի քիթեղապատման աշխատանքներն իրականացվել են 1914 թ.<sup>22</sup>:

Եկեղեցին այժմ էլ կանգուն է և բարեկարգ վիճակում:

Եկեղեցու որմերին ներկայումս պահպանվում են վրացերեն երկու արձանագրություն. մեկը զանգակատան արևմտյան ճակատին (այս վիմագիրը, հակառակ իր ոչ այնքան վաղեմության, մեծ մասով եղծված է և դժվարընթեռնելի), մյուսը՝ եկեղեցու հարավային պատին:

Արձանագրություն. եկեղեցու հարավային պատին՝ 5 տող.





აღაშენდა რომის კატოლიკეთა ეკკლესია |  
[ღმროთს] მშობ(ბ)ლისა თაონობითა მიხეველ  
მღდ(ველი) | ვარძელაშვილისა და ხიზაბავრის-  
სა ზომადღობისა კავკაზის და კახეთის(?)  
კათოლიკეთის შემწეობითა წველ(სა) უფ(ლისა)  
1898 სს

Թարգմ. *Կառուցվեց հռոմեական կաթօլիկների եկեղեցին Սր. Աստվածածնի միջնորդությամբ Միայել Վարձելաշվիլու և խզաբավրացիների ջանքերով, Կովկասի և Կախեթի(?) կաթօլիկների օժանդակությամբ Տիրոջ 1898 թ.:*  
Հրատ. առաջին անգամ:

**Քահանա.** 1915 թ. Խզաբավրայի ծխատեր քահանայի պաշտոնը վարում էր տեր Կոստանդիանոս Շեշաբերիձեն<sup>23</sup>:

18 «Մշակ», 1900, № 124, էջ 2:  
19 Նույն տեղում:  
20 «Մշակ», 1900, № 154, էջ 2:  
21 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 81, նաև՝ ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 33:  
22 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 30, ք. 95:  
23 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 81:







*ԽՁԱԲԱՎՐԱ. 1898 թ. Սբ. Սրտին Հիտուսի եկեղեցու կառուցման մասին պատմող վրացերեն արձանագրությունը, հատվածներ 1990-ական թվականներին կառուցված խաչքարապատ շրջապարսպից և երկլեզվյան (հայ-վրացերեն) արձանագրությամբ՝ հայկաթոլիկ քահանայի տապանաքար եկեղեցու ալ կողմում տարածված գերեզմանոցում*

**Գերեզմանոց.** եկեղեցու տարածքի բարեկարգման աշխատանքների ժամանակ հանգուցյալ վարդապետ հայր Պաուլո Սիեպանեկիի (1961-1999) ջանքերով գերեզմանոցի խաչքարերն ու նաև մի քանի տապանաքար ագուցվել են շրջապարսպի մեջ: Դրանցից մեկը թվակիր է:


Խաչքար.  
ԹՎ(ԻՆ) ՋԻ (1471):  
Հրատ. առաջին անգամ:

**Սբ. Խաչ մատուռ.** Խզարավրայում պահպանվել է նաև մի հնաշեն մատուռ, որի մասին միայն մի գրավոր հիշատակություն ունենք. «Գոյ նաև վաղեմի քարաշեն մատուռն յանուն Սուրբ Խաչի»<sup>24</sup>: Մատուռի արևելյան պատուհանից վեր պահպանվել է վրաց մեսրոպատառ արձանագրություն, որը ԺԹ դարի վերջում ծածկվել էր կրաշաղախով,

24 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 81:



*ԽՉԱԲԱՎՐԱ. երկատված խաչքար՝ 1471 թ. (գրչանկարով), գյուղի հայոց միջնադարյան գերեզմանոցից փոխադրված և եկեղեցու շրջապարսպի մեջ ագուցված անարձանագիր, սակայն ակնհայտորեն ՄԵ դարին վերաբերող այլ խաչքարեր*



ԽՁԱԲԱՎՐԱ. գյուղի հայոց միջնադարյան գերեզմանոցից փոխադրված և եկեղեցու շրջապարսպի մեջ ագուցված անարձանագիր խաչքար և տապանաքարեր (ԺԵ-ԺԶ դդ.)

ԽՁԱԲԱՎՐԱ. ԺԵ-ԺԷ դարերի տապանաքարեր Սր. Խաչ մատուռի շուրջ տարածված գերեզմանոցում

ասկայն այժմ դարձյալ ակնառու է: Է. Թաղալվիլին վիճակի ընթերցել է հետևյալ կերպ.


Արձանագրություն.

Ի-դ ցղ ... ժիւս և՛ րո- ծե ը՛-ի Ի՛-դ ց՛ղ  
ժ(րիսճ)ե Մ(ջիճյալ)ե ժրո? և(յ)լու և  
Յ(ուրճ)ի ժ(րիսճ)ե Մ(ջիճյալ)ե.


Թարգմ. *Քրիստոս ողորմիր... հոգուն եւ Գիրգիին Քրիստոս ողորմիր:*

Հրատ. **Brosset M.**, Rapports sur un voyage archèologique II, էջ 152-153: էջ 176: **Такайшвили Е.**, մշվ. աշխ., էջ 18: “ჯავახეთი. ისტორიულ-სუროთმოდგვრული გზამკვლევი”, էջ 87:

Տարբերություն. Մ. Բրոսսեն արձանագրությունից ընթերցել է ընդամենը 5 տառ: Հետագոտողի հրատարակությունից կարելի է ենթադրել, որ այն եռատող էր. «...Չ | ԾՇ... | ... Ծ...»:



*ԽՉԱԲԱՎՐԱ. գերեզմանոցում պահպանված հին (ԺԵ-ԺԸ դդ.) և նոր (կորդիանձև, ԺԹ դ.) տապանաքարեր*



*ԽՁԱԲԱՎՐԱ. Սբ. Խաչ մատուռի տեսքը հր-ամ-ից և այժմ նակատից բացված լուսամտից վեր պահպանված վրաց մշտրուպատառ արձանագրությունը*

«Ջաջախետի. Իստորիւղ-խւրոտմոժըրճի ԳՅԱԿԵՎԵՅԵ»-ում կրօնքը շեւոյալը ... մամա Տըլտա Եւ ԳօրԳի շեւոյալը: **Քարգն.** «Քրիստոս ողորմիր հոգեր հայր ...-ին և Գիրգիին ողորմիր»:

Մանր. «Ջաջախետի. Իստորիւղ-խւրոտմոժըրճի ԳՅԱԿԵՎԵՅԵ»-ի խմբագրակազմի թվագրմամբ՝ ԺԱ դ.:

**Գերեզմանոց.** Եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում Է. Թաղայշվիլին հայտնաբերել է խիստ անկանոն, վրաց մխեդրուլի գրչությամբ արձանագիր տապանաքար: Ցավոք, այն չի ընթերցվել:

### ԽՈՋԱՐԵԿ



ԽՈՋԱՐԵԿ. ընդհանուր տեսքը հր-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 16 կմ հարավ-արևելք, Խանչալի լճի արևելյան ափից 2 կմ հեռու, ծ. մ. 1930-1950 մ բարձրության վրա: Հյուսիս-արևմուտքից կից է Նինոծմինդա շրջկենտրոնին:

**Կառուցապատում.** Խոջարեկի միջով ձգվող Նինոծմինդա-Ախալքալաք մայրուղին գյուղը բաժանում է երկու գլխավոր թաղամասերի, որոնցից աջակողմյանը Սբ. Սարգիս եկեղեցու շուրջը տարածված էին թաղն է:

**Պատմություն.** գյուղի մերձակա հնագիտական հուշարձանների առկայությունը փաստում է, որ Խոջարեկի տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 1830 թ. փոխադրվել են Կարինի նահանգի Չիթոլ<sup>1</sup>, Քոշկ (Քոշք)<sup>2</sup> և այլ գյուղերից:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում բնակչության թվաքանակի աճը արտացոլող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1847 <sup>3</sup>		100	82	182
1849 <sup>4</sup>		100	94	194
1853 <sup>5</sup>		119	123	242
1854 <sup>6</sup>		121	125	246
1857 <sup>7</sup>		130	134	264
1860 <sup>8</sup>		151	143	294
1861 <sup>9</sup>		164	170	334
1862 <sup>10</sup>		167	165	332
1863 <sup>11</sup>		175	174	349
1864 <sup>12</sup>		178	179	359
1866 <sup>13</sup>	27	177	181	358
1867 <sup>14</sup>		187	147	334
1868 <sup>15</sup>		189	150	339
1869 <sup>16</sup>	26	190	158	348

3 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, ք. 34-35:

4 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:

5 Նույն տեղում, գ. 2743, ք. 38-39:

6 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

7 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:

8 Նույն տեղում, գ. 3833, ք. 7-8:

9 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:

10 Նույն տեղում, գ. 3836, ք. 22-23:

11 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:

12 Նույն տեղում, գ. 3846, ք. 9-10:

13 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:

14 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:

15 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:

16 Նույն տեղում, գ. 3856, ք. 9, մակ. ֆ. 56, ց. 1, գ. 5336, ք. 8:

1 Չիթոլը (Չիթահող, այժմ՝ Yolgeçti) մինչև 1915 թ. հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 12 կմ հյուսիս:

2 Քոշկը հայաբնակ գյուղ էր Կարին քաղաքից 12 կմ հյուսիս:

1870 <sup>17</sup>	194	165	359
1871 <sup>18</sup>	208	167	375
1872 <sup>19</sup>	206	172	378
1873 <sup>20</sup>	209	179	388
1874 <sup>21</sup>			398
1875 <sup>22</sup>	35		
1876 <sup>23</sup>	223	199	422
1877 <sup>24</sup>	214	211	425
1878 <sup>25</sup>	225	214	439
1880 <sup>26</sup>	249	230	479
1881 <sup>27</sup>	265	234	499
1882 <sup>28</sup>	268	240	508
1883 <sup>29</sup>	257	234	491
1884 <sup>30</sup>	35		
1885 <sup>31</sup>	274	251	525
1887 <sup>32</sup>	309	282	591
1889 <sup>33</sup>	315	284	599
1890 <sup>34</sup>	327	282	609
1891 <sup>35</sup>	334	295	629
1892 <sup>36</sup>	338	298	636
1893 <sup>37</sup>	335	304	639
1894 <sup>38</sup>	336	302	638
1897 <sup>39</sup>	363	329	692
1898 <sup>40</sup>	376	345	721
1899 <sup>41</sup>	377	354	731
1900 <sup>42</sup>	390	363	753
1901 <sup>43</sup>	402	378	780
1902 <sup>44</sup>	419	387	806
1905 <sup>45</sup>	447	406	853
1908 <sup>46</sup>	77	475	910
1910 <sup>47</sup>	500	443	943
1912 <sup>48</sup>	527	472	999

17 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, ք. 23:  
 18 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
 19 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 20 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 21 Նույն տեղում, գ. 3864, ք. 26-27:  
 22 «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 23 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:  
 24 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 25 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 26 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 27 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 28 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 29 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 30 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 31 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 32 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 33 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 34 Նույն տեղում, գ. 3887, ք. 144:  
 35 Նույն տեղում, գ. 3889, ք. 143:  
 36 Նույն տեղում, գ. 3891, ք. 115:  
 37 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 38 Նույն տեղում, գ. 3896, ք. 168-169:  
 39 Նույն տեղում, գ. 3899, ք. 141-142:  
 40 Նույն տեղում, գ. 3897, ք. 164:  
 41 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 42 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 43 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 44 Նույն տեղում, գ. 3907, ք. 18-19:  
 45 Նույն տեղում, գ. 3912, ք. 261-262:  
 46 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 48 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:

1914 <sup>49</sup>		560	484	1044
1916 <sup>50</sup>		540	450	990
1918 <sup>51</sup>	110	435	447	882
1921 <sup>52</sup>		175	135	310
1987 <sup>53</sup>	472			1896


Երկրորդ աշխարհամարտին մասնակցել է 125 խոջաբեկցի. 53-ը գոհվել է<sup>54</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության վերաբերյալ դիվանական վավերագրերում առկա են հետևյալ տվյալները.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>55</sup>		1	11
1873 <sup>56</sup>		1	30
1875 <sup>57</sup>	Սիմեոն Թումասյանց		30
1876 <sup>58</sup>		1	21
1877 <sup>59</sup>		1	32
1878 <sup>60</sup>		1	34
1881 <sup>61</sup>		1	35
1910 <sup>62</sup>		1	100
1911 <sup>63</sup>	1 բաժանմունքով	1	100
1914 <sup>64</sup>		1	61
1916 <sup>65</sup>	վերաբացվել է		

**Սբ. Մարգիս եկեղեցի.** նախնական շենքը կառուցվել է 1840-ական թվականներին՝ առանց նախապես հոգևոր իշխանություններից համապատասխան թույլտվության: Այդ առթիվ 1848 թ. կոնսիստորիան գեկուցագիր էր հղել վեհափառին՝ շեշտելով խոջաբեկցիների՝ եկեղեցին օժված տեսնելու ցանկության մասին. «...Ախալցխայի նահանգի Խօջաբեկ, Բզաւետ, Տրկնայ, Կորխ գիւղօրէից բնակիչք, թարց հաւանութեան կոնսիստորի և հոգևոր կառավարութեան իրեանց, կառուցեալ են զփայտաշէն միջասահման եկեղեցիս, որոնց որմունքն են քարեայ և ծածկքն փայտեայ, յորժամ կամք եղև իմանալ գէթ զառիթն ընդ անցն իւր կամօք շինուեցան. պատասխանեցին շինողքն թէ՛ քարեպաշտութեամբ և ջերմեռանդ սիրով, աղքատութեամբ կա-

49 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 172-173: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 1080 բնակիչ (”Кавказский календарь на 1915 г.”, էջ 198).  
 50 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 19-20:  
 51 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 52 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1-4:  
 53 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 54 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:  
 55 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 56 **Խորոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 520:  
 57 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 43:  
 58 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 51:  
 59 Նույն տեղում, ք. 130:  
 60 Նույն տեղում, ք. 177:  
 61 **Խորոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 520:  
 62 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 63 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 57: Ի դեպ, դպրոցի 100 սաներից 20-ը աղջիկներ էին:  
 64 **Խորոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 521:  
 65 «Համբաւաբեր», 1916, № 45, էջ 1424:



*ԽՈՋԱՐԵԿ. Սբ. Սարգիս եկեղեցու տեսքը հր-ալ-ից, հր-ամ-ից, ամ ճակտոնի զագաթի կրկնահարկ զանգակատունը, նույն ճակատից բացված լուսամուտը և միակ մուտքը*



ռուցեալ են և եթէ ոչ պասկեսցի այն քրիստոնէական ջերմեռանդութիւն իրեանց, այն է զի ի կիր ածցեն զայնս վասն առտնին շինուածոց...»<sup>66</sup>: Հիշյալ եկեղեցու օծումն ըստ ամենայնի կատարվել է իր ժամանակին և մինչև նոր եկեղեցու հիմնադրումը սուղ միջոցներով կառուցված հին եկեղեցին ծառայել է նպատակին: Նոր եկեղեցու կառուցման աշխատանքներն ընթացել են 1882-84 թթ., որի շնորհիվ խոջաբեկցիները, ականատեսի վկայությամբ, «...ունին մի փառաւոր սրբատաշ քարեայ քաղակապ եկեղեցի, որը Սրբազան Առաջնորդը օծեց ամսոյս 28-ին...»<sup>67</sup>: Կառուցման և օծման մասին վկայում է եկեղեցու արևմտյան ճակատի փորագիր արձանագրությունը:

Սր. Սարգիս եկեղեցին համակ սրբատաշ քարով (արտաքին չափերն են՝ 18,68 x 11,02 մ), արևմտյան ճակատից բացված միակ մուտքով, արևմտյան ճակտոնին կրկնահարկ զանգակատնով շինություն է: 1990-ականի սկզբներին սկսված վերանորոգման աշխատանքներն ավարտվել են 1993 թ. նոյեմբերի 13-ի օծման հանդեսով. «Կեսդարյա ընդմիջումից հետո, նորած Ս. Սարգիս եկեղեցուն մատուցվեց առաջին ս. պատարագը: Պատարագիչն էր եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Եղիա քահանա Թազայանը»<sup>68</sup>:


1995 թ. Խոջաբեկ գյուղում հանդիսավոր պայմաններում տեղի է ունեցել գյուղի հիմնադրման 165 և Սր. Սարգիս եկեղեցու կառուցման 110-ամյակներին նվիրված տոնախմբություն<sup>69</sup>:

Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատին, մուտքից վեր բացված լուսամտի բարավորին՝ 16 տող.

ՅԻՇԱՏԱԿՈՒԹ(ԵԱ)Ն | ԿԱՌՈՒՅԱԻ ԵԿԵՂԵՑԻՍ | ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ, ԱՐԴԵԱՍ(Բ)Ք | ԵԻ ԾԱԽԻԻՔ ԼՈՒՍԱԻՈՐՉԱԴԱԻՎԱՆ ՀԱՅԱԶԳԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԿԱՆԱՅ ՂՕՃԷԲԷԿ ԳԻԻՂՆ | 1882 ԱՄԻ Է ԹԻԻՆ ՀԱՅ(ՈՅ) ՌՅԼԱ, | Ի ՀԱՅՐ(Ա)ՊԵՏ(ՈՒ)ԹԵ(Ա)Ն Տ. Տ. Դ ԳԷՈՐԳ | ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Յ ԵՒ ՕԾԵՅԱԻ 1884 ԱՄԻ, ՅԱՌԱԶՆՈՐԴԷ Հ(ԱՅՈ)Յ | ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆ ԻՍԵՐԷԹԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՍՐԲԱԶ(Ա)Ն | ԱՐԻՍՏ(Ա)Կ(Է)Ս | ԵՊԻՍԿՈՊՈՍԷ:

Հրատ. առաջին անգամ:

**Բերդ.** Խոջաբեկից 2,5 կմ արևմուտք՝ Խանչալի լճի հյուսիսարևելյան ափամերձ մի բլրակի վրա, պահպանվում են կիկլոպյան շարվածքով հնագույն բերդի ավերակները: Ունենալով ընդամենը 24 մ եր-




ԽՈՉԱՐԵԿ. կիկլոպյան ամրոց

66 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 5, ք. 5:

67 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

68 Արքահայրն Վ., Բողոքանովկայի Ս. Սարգիս եկեղեցու օծումը. – «Էջմիածին», 1993, ԺԱ-ԺԲ, էջ 17:

69 Մանուկյան Տ., Հանդիսություն Խոջաբեկ գյուղում. – «Էջմիածին», 1995, Ը-Թ, էջ 130-131:



*ԽՈՋԱՐԵԿ. Ղալաչա գյուղատեղիի մատուռը, քաղկեդոնական հայերից ավանդված խաչքար (Ժ-ԺԱ դդ.) և ձիակերպ ու խոյածև տապանաքարեր մատուռի շուրջը տարածված գերեզմանոցում*


կարություն և 11,6 մ լայնություն՝ այդչափ փոքրության պատճառով հզոր դիտակետ-աշտարակի տպավորություն է թողնում: Պատերի հաստությունը 3 մ է: Միակ մուտքը արևելքից է:

**Բերդակ.** ոչ հեռու՝ լճափին ավելի մոտ, պահպանվում են մեկ այլ բերդակի ավերակներ: ԺԹ դարի վերջին դրան վերաբերող մի նկարագրակա-նում նշված է, որ բերդն ուներ ջրով լեցուն մի ջրա-վազան:

**«Ղալաչա» գյուղատեղի.** բլրակից ցած պահպանվում են «Ղալաչա» անվամբ հայտնի միջնադարյան գյուղատեղիի ավերակները: Այստեղ կան նաև եկեղեցու և գերեզմանատան մնացորդներ:

Եկեղեցու հիմքերի վրա խոջաբեկցի հայերը 1985 թ. մի մատուռ են կառուցել՝ ներսում ագուցելով Ժ-ԺԱ դարերին բնորոշ հորինվածքային առանձնահատկություններով, պարզ ոճավորմամբ մի խաչքար (120 x 70 սմ): Մատուռի առջև կանգնեց-ված են երկու խոյաձև տապանաքարեր:

**Կարտուլա գյուղատեղի.** գտնվում էր «Ղալա-չա»-ից փոքր-ինչ արևմուտք<sup>70</sup>:



*ԽՈՋԱԲԵԿ. Երկրորդ աշխարհամարտում զոհված 53 խոջաբեկցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը*

<sup>70</sup> Զերթոյն Պիցոլո Ե., նշվ. աշխ., էջ 73:

## ԽՈՍՊԻԱ (ՄԵՃ, ՆԵՐՔԻՆ)



ԽՈՍՊԻԱ. ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից 3 կմ հարավ, Փարվանա գետի ձախ ափին, ծ. մ. 1700-1720 մ բարձրության վրա, Փոքր Խոսպիային դեմ հանդիման:

**Անվան ծագումը.** Խոսպի Վրացերեն ստուգաբանվում է ոսպի ձոր (եջջո օնձոնս)<sup>1</sup>:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. գյուղն ունեցել է 16 տուն (տնատերերի թվում հիշվում են մասնաճյուղի հայկական անուններ կրող անձինք, ինչպես՝ Սահակ, Հուսիկ և այլն), հարկվել է 5.490 ակչե<sup>2</sup>:

Գյուղի բնիկ հայ բնակչության մի մասը, թ դարում հունադավանություն ընդունելուց հետո՝ ԺԺ դարի առաջին կեսին, տեղի տալով Ախալցխայի Սաֆար փաշայի բռնություններին, ընդունել է մահմեդականություն և միայն այդ գնով կարողացել գո-

յառնել հայրենի հողի վրա: 1704-1705 թթ.՝ տանուտեր Մուստաֆայի օրոք, գյուղում հարկվել է 30.990 ակչե<sup>3</sup>:

Մեծ Խոսպիան կալվածատեր Փալավանդով ընտանիքի նստավայրն էր: 1873 թ. գյուղը, 650 դեսյատին հողատարածքով հանդերձ, նշված տոհմի ներկայացուցիչ Մուխրեկ-Չատիի սեփականությունն էր<sup>4</sup>:

ԺԹ դարի վերջին ականատեսը նշել է. «Այս գիւղը շինուած է Թափառուան գետակի վրայ և բաժանուած է երկու թաղի՝ հայոց և թուրքաց, որոնք միացած են մի փայտաշէն կամուրջով: Հայոց թաղում ապրում են 50 տուն հայ բնակիչ, իսկ թուրքաց թաղում 30 տուն թուրք բնակիչ: Թուրքերը բնիկ են: Այստեղ ապրում են յայտնի Փալաւանդով հողա-

<sup>1</sup> Рогомов И., նշվ. աշխ., 118:

<sup>2</sup> “Եջրջոնսեճանոս յոլոսոյոս ճոլո ճոլոսո”, էջ 218:

<sup>3</sup> “Խոջլոթոս յոլոլոթոս ճոլո ճոլոսո 1694-1732 ՎՎ.”, էջ 110:

<sup>4</sup> «Մեղու Հայաստանի», 1873, № 6, էջ 3:

տեր հարուստ բեգերը: Բեկերի տները շինուած են եւրոպական ճաշակով: Խոսպիա գիւղի հայերը, Կարինի 1829 թուականի գաղթականներից են...»<sup>5</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով Մեծ և Փոքր Խոսպիաները (միասին 67 տուն, 573 բնակիչ) հայտնվել են կարիքի մեջ գտնվող գյուղերի ցուցակում<sup>6</sup>:

1899-1900 թթ., հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով, Մեծ Խոսպիայի գյուղատնտեսությունը հայտնվել է դժվարին կացության մեջ՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով աղետից տուժած երկրորդ կարգի բնակավայրերի շարքում :

Երկրորդ աշխարհամարտին Մեծ և Փոքր Խոսպիաներից մասնակցել է 41 հոգի, որոնցից 14-ը զոհվել է<sup>8</sup>:

**Բնակչություն.** 1830 թ. Խոսպիայում հաստատվել են հայ և հույն վերաբնակիչներ: 1918 թ. գյուղի մահմեդական բնակիչները գաղթել են Թուրքիա: Կարճ ժամանակ անց թափուր բնակավայրում



ԽՈՍՊԻԱ. եկեղեցու տեսքը հս-ամ-ից, ամ-ից և հաստակագիծը

հանգրվան են գտել Թռեղքի Ռեխա գյուղի վրացիներն ու հույները<sup>9</sup>:

**Եկեղեցի.** գյուղում կանգուն է միանավ, թաղածածկ հորինվածքով, համակ սրբատաշ քարերով

5 «Նոր-Ղար», 1898, № 159, էջ 2: Ի դեպ, հիշյալ Փալավանդով կալվածատերերը ապօրինաբար զավթել են Ախալքալաքին պատկանող գյուղից հյուսիս ընկած հողերը («Մշակ», 1883, № 99, էջ 1): Հայտնի է, որ 1903 թ. Թիֆլիսում երիտասարդ հասակում վախճանված Գ. Փալավանդովը նույն թվականին հողին է հանձնվել հայրենի գյուղում: Նրա հայրը որդու հիշատակին կատարել է մի շարք նվիրատվություններ. «Հանգուցեալի հայրը, Մամադ-Ալի-բեկ Փալավանդով, այդ առիթով հետևեալ նուիրատուքիւններն արաւ. Ախալքալաքի հայոց եկեղեցուն - 50 ռ., ռուսաց եկեղեցուն - 25 ռ., հրեաների սինագոգին - 10 ռ., քաղաքային դպրոցի աղքատ աշակերտների օգտին - 50 ռ., հայոց ծխական դպրոցների - 50 ռ., ռուսաց եկեղեցական-ծխական դպրոցին - 25 ռ., բանտարկեալներին - 32 ռ. (մի-մի րուբլի ամեն մէկին), քաղաքի աղքատներին - 100 պուդ ցորեն: Բացի դրանից՝ նուէրներ եղել են նաև Խոսպիա գիւղի մէջից և հայոց եկեղեցուն. մի քանի հարիւր րուբլի էլ բաժանվել է թաղման օրը հաւաքված հայ և թուրք գիւղացիներին և այլն: Քաղաքագլուխ Ա. Գրիգորեան և ժամանակաւոր քարոզիչ Մեսրոպը վարդապետ Մաքսուդեան գնացել և անձամբ շնորհակալութիւն են յայտնել Մամադ-Ալի-բեկին, առաջինը՝ քաղաքի չքատրների կողմից, իսկ երկրորդը՝ տեղական հայոց եկեղեցու վարչութեան կողմից: Մեսրոպը վարդապետը «հողոց» է ասել և Կ. Պօլսի թիւրքերի գրական բարբառով ճառ է խօսել, որով մխիթարել է վշտացած ծնողին. այդ բանը շատ մեծ տպաւորութիւն է արել ներկայ եղող թիւրքերի վրա: Մ. Փալավանդով ահա երկրորդ անգամն է, որ նուէրներ է անում քրիստոնէական հիմնարկութիւններին, և այդ բանին մենք կարևորութիւն ենք տալիս: Պ. Փալավանդով, իբրև հարուստ կալուածատէր և Թիֆլիսի մուֆթիի հետ ազգակցական կապեր ունեցող անձնատրութիւն, ահագին ազդեցութիւն ունի ոչ միայն մեր գաւառի, այլ և Չլդրի, մասամբ և Ախալցխայի գաւառի թիւրքերի վրա և մի տեսակ ներկայացուցիչ և համարեայ կրօնական պետ է ճանաչված նրանց կողմից: Այդ պատճառով համերաշխութեան այս օրինակը խրատական նշանակութիւն ունի տեղական ամբողջ ազգաբնակչութեան համար, մասնաւոր որ Փալավանդով հայերի կողմից էլ յարգանք է վայելում» («Մշակ», 1903, № 75, էջ 3):

6 «Մշակ», 1901, № 40, էջ 1:  
7 Մալխանեան, Անբերրիութիւնը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:  
8 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

9 Զեթքեճեան Ե., Տեղագրութեան օճակը և Տեղագրութեան օճակը II, 1964, էջ 55:



*ԽՈՍՊԻԱ. Եկեղեցու ամ ճակատից բացված լուսամուտը և հր ճակատին ագուցված պատկերաքանդակ*

կառուցված եկեղեցին, որը Վրաստանի հուշարձանների պահպանության վարչության կողմից 1980-ական թվականներին վերականգնվել է:

Կառուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս կառուցման ժամանակաշրջանը որոշել ԺԱ-ԺԲ դարերի միջև:

ԽՈՐԵՆԻԱ



ԽՈՐԵՆԻԱ. ընդհանուր տեսքը հս-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 7 կմ հարավ-արևելք, Փարվանա գետի աջ ափին, Ախալքալաք-Նինոծմինդա մայրուղու ձախ կողմում, ծ. ս. 1780-1800 մ բարձրության վրա:

**Պատմություն.** զուտ հայաբնակ Խորենիան (օսմանյան կառավարության կազմած հարկացուցակում՝ Մեծ Խորանիա) 1595 թ. ունեցել է 28 տուն բնակիչ, հարկվել է 20.000 ակչե<sup>1</sup>: Ըստ հարկացուցակի՝ հիշյալ թվականին գյուղում բնակվում էին Գրիգոր և Մովսես եղբայրները, Ղայթնազի որդիներ Գրիգորն ու Մովսեսը, Գրիգորի որդիներ Սարգիսն ու Սահակը, Գուրասպ և Խաչատուր եղբայրները և այլք, որոնց հովվում էր տեր Հակոբ քահանան<sup>2</sup>: Ի դեպ, նույն հարկացուցակում ընդամենը 3 տուն բնակչությամբ և 7500 ակչե հարկաչափով

հիշվում է նաև Փոքր Խորենիա գյուղը<sup>3</sup>: Օսմանյան տիրապետության առավել բիրտ և դաժան ժամանակաշրջանում, այն է՝ ԺԸ դարի առաջին քառորդում, գյուղը կառավարում էին մահմեդական իշխողները: Հայտնի է, որ 1709-10 թթ.՝ տանուտեր Յուսուփի օրոք, Խորանիա անվանաձևով հիշատակված գյուղում հարկվել է 11.300<sup>4</sup>, իսկ 1721-1722 թթ.՝ տանուտեր Հասանի օրոք՝ 2.500 ակչե<sup>5</sup>:

ԺԹ դարի երկրորդ կեսին գյուղն իբրև սեփականություն՝ պատկանում էր ախալքալաքի հայ-կաթոլիկ կալվածատեր Ղրիսթյանավիին<sup>6</sup>:

**Խորենիան 1918 թ.**՝ թուրքական զորքերի ներխուժման ժամանակ, մեծ կորուստներ կրած գյուղե-

1 “Գյրջոսեթանոս յոզաջոտոս ձոջո ձոջոտարո”, էջ 225-226:  
2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 226-227:

4 “Յոլլոզոթոս յոզաջոտոս չճոճո ձոջոտարո 1694-1732 ՎՎ.”, էջ 133-134:

5 Նույն տեղում, էջ 165:

6 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

րից է: Ողբերգական օրերի մանրամասերն առ այսօր թարմ են ժողովրդի հիշողության մեջ<sup>7</sup>:

Թուրքերի բարբարոսություններին զոհ գնացած համազյուղացիների հիշատակը հավերժացնելու համար 1978 թ. գյուղում կառուցված երկու հուշարձաններից մեկը նվիրված է տղամարդկանց, մյուսը՝ կանանց:

1. Կոթող.

1917-1918 թ. հայի ու թուրքի պատերազմ 1918 թ. 1 V Ախրքալակ գաղտավ Ծալկա. մէր Խ(որենիա) գեղ ելավ մէր յայլեն Փարվան լիջի վերեվն մէր գեղ կիսվավ տասնութ տուն միյուս յայլեն էր գ. Ծալկա մէծ մաս 700 անծ դառան գեղ թ. հ. դ. տղամարթ չօգ կանայք 7 մէտր վերեվ գոյեցին շենքերու մեջ: Իմ սեփական քարս տաշեցի շարելու օրնէցին Վալօդ Ս.



7 Խորենիա գյուղի ջարդի՝ սերնդեսերունդ փոխանցված վկայությունների մի դրվագում նշված է. «...Խորենիա գյուղի բնակիչները, սայլերի քարավանով 30 կմ անցնելուց հետո, հասնում են Աբուլ սարի արեւելյան մասում գտնվող իրենց յայլան (ամառանոցը - Ս.Կ.): Երկու օր անց թուրք լրտեսները որպէս «քարերարներ», գնում են «յայլա» եւ խորենիացիներին հավատացնում, որ «Խորենիայի եկեղեցու քահանան գնացել է թուրք փաշայի մոտ եւ «մանդատ» է վերցրել խորենիացիների համար, որպէսզի թուրք ասկյարները Խորենիա գյուղի բնակիչներին վերաբերվեն այնպէս, ինչպէս հարեան Թորիա, Ուչմանա եւ Հեշտիա գյուղերում բնակվող կաթոլիկ հայերին»: Տարակուսանքի մեջ ընկած գյուղացիները հավատում են «բարի» յուր բերողներին: Անդրդվելի են մնում Գոքորենք, Թաթոսենք, Տոնոյենք (մոտ 15 տուն) եւ գաղթում են Ծալկա: Գյուղի մնացած բնակչությունը, մոտ 800 հոգի, վերադառնում է Խորենիա: Պարզվում է, որ գյուղի քահանան ոչ թէ գնացել է թուրք փաշայի մոտ «մանդատ» վերցնելու, այլ փախչելու ժամանակ թուրքերը նրան սպանել են: Խորենիա հասնելուց հետո գյուղացիները շրջափակվում են թուրք ասկյարներով: Երկու օր անց, իբր «հաշվառման» համար, բնակիչներին հավաքում են Թափարվան գետի մարգագետնում: Տղամարդկանց առանձնացնում են եւ դահիճներով շրջապատված, տանում փակում են Շահինյան Մաթոսի մարագում: Հավաքված կանանցից առանձնացնում են գեղեցիկ հարս ու աղջիկներին, իսկ մյուսներին՝ երեխաների հետ միասին, փակում են մեկ այլ մարագում: Մութ գիշեր է, ասկյարները քնած են մոտակա տներից մեկում: Կանայք սկսում են եղունգներով քանդել մարագի պատը եւ մեծ դժվարությամբ անցք բացել: Լուսաբացին, պատի անցքից նրանք փախչում են ձորը: Շատերն ընկնում են հորդառատ, խոր գետը եւ խեղդվում, ոմանք էլ փախչելու ժամանակ գնդակոծություններից զոհվում են: Փրկվում են երկու կին՝ Վարդանյան Սանամը եւ Սերոբյան Ծովինարը: Մայիսի 20-ի վաղ առավոտյան թուրք դահիճները հավաքվում են մարագների հողածածկ կտուրների վրա եւ բահերով փորփորում-քանդում են կտուրները, անցքեր բացում եւ գնդակոծում բնակիչներին: Անօգնական երեխաների ողբալի ձայներ, կանանց անվերջանալի ճիչեր, աղաղակներ, ծերունիների աղերսներ, հառաչանքներ, գնդակների շառաչներ: Դժոխային մի տեսարան: Արգարյաններից, Աճույաններից, Բաղայաններից, Ջարդարյաններից, Միերյաններից եւ Քոչկյաններից ոչ ոք չմնաց՝ բոլորը գնդակահարվեցին, իսկ Ասատրյաններից, Առաքելյաններից, Խաչատրյաններից, Սարգսյաններից, Սերոբյաններից, Տեր-Վարդանյաններից, Վարդանյաններից (Օհաննէց), Ֆիդանյաններից փրկվեցին նրանք, ովքեր բանակում էին կամ այդ պահին գյուղում չէին» (Կիլիկոսյան Խ., Խորենիա գյուղի ջարդի 80-ամյակին. – «Հայաստանի Հանրապետություն», 27 հունիս, 1998):



ԽՈՐԵՆԻԱ. ընդհանուր տեսքը ալ-ից, 1918 թ. զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան կոթողներ գյուղամիջում





ԽՈՐԵՆԻԱ. ընդհանուր տեսքը հր-ից

Ս. Ազոսի Հ. Ֆ. Վանիկ Ղ. Ղ. Վաչո Ք. Ա. Սլավիկ Ս. Գ. 1978 թ. Սիմիկ 34 մ(ետր) պատ շ(արեց):

Հուշարցանս 1918 թ. V 19 թուրք մեր Խ. գ. գեղեցիկ հարս աղչիկ վերցրել մյուսներ շենքի մեջ կօտօրեցին Սադո Հօրքուրս, Անա մամս, Մաքօ մամս ողորմի 700 զօյվածներու հուշարցան կանկ. հիշատակ Գօթօրենց Խօրսօյի տղօնցէն իմ քար պատ շարել 7 մետր, դուռ նարդիվան Արմեն, Սիմիկ, Գալօ 1978 IX ես գրեցի վարպետ Սիմիկ:

Հրատ. առաջին անգամ:

2. Կոթող.

Հուշարցան 1918 թ. V 19 թուրք Խ(որենիա) կօտօրեց գեղ այն օրից անցել 60 տարի ես Գօթօրենց Խօսրօյի տղեն եմ Սիմիկ երազ տեսա հաշվի չառա զանքամ սարսափ տեսա ու տեսա Մայրամ Աստվածածին վօր զքար շինիմ զօյվածներու համար վօղորմի ասէնք վօղորմի միյամիտ 700 անծերուն դառնաք ողորմի ասէնք հուշարցաներ կառուցման մասնագիցներուն այսօրվանից ուղտատուն դառալ զօյվածներ. շուրջ հուշարցան տղամարթիկն էն մեր քար պատ շարել 27 մ. դուռ հիշատակ Գօթօրց Խօսրօյի տ(ղաներ) Արմեն, Սիմիկ, Գալօ:

Հրատ. առաջին անգամ:

**Երկրորդ աշխարհամարտ.** Խորենիայից մասնակցել է 119 անձ. 46-ը զոհվել է<sup>8</sup>:

**Քնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Կարնո և Արտահանի շրջաններից:

**Վիճակագրություն.** Խորենիայի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>9</sup>		74	75	145
1841 <sup>10</sup>		71	80	151
1842 <sup>11</sup>		75	84	159
1844 <sup>12</sup>		89	95	184
1845 <sup>13</sup>		92	98	190
1847 <sup>14</sup>		92	90	182
1849 <sup>15</sup>		100	103	203
1853 <sup>16</sup>		84	86	170
1854 <sup>17</sup>		85	86	171
1857 <sup>18</sup>		110	113	123
1860 <sup>19</sup>		113	118	231
1861 <sup>20</sup>		118	116	234
1862 <sup>21</sup>		118	116	234
1863 <sup>22</sup>		121	119	240
1864 <sup>23</sup>		124	124	248
1866 <sup>24</sup>	34	127	130	257
1867 <sup>25</sup>		132	137	269
1868 <sup>26</sup>		136	138	272
1869 <sup>27</sup>		141	139	280
1870 <sup>28</sup>		143	144	287

9 ՀԱԴ., ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4-5:

10 Նույն տեղում, գ. 3802, ք. 63-64:

11 Նույն տեղում, գ. 3805, ք. 77-78:

12 Նույն տեղում, գ. 3809, ք. 15-16:

13 Նույն տեղում, գ. 3811, ք. 72-73:

14 Նույն տեղում, գ. 3814, ք. 34-35:

15 Նույն տեղում, գ. 3818, ք. 38-39:

16 Նույն տեղում, գ. 2743, ք. 38-39:

17 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

18 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:

19 Նույն տեղում, գ. 3833, ք. 7-8:

20 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:

21 Նույն տեղում, գ. 3836, ք. 22-23:

22 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:

23 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:

24 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:

25 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:

26 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:

27 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:

28 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:

8 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

1871 <sup>29</sup>		139	149	288
1872 <sup>30</sup>		144	148	292
1873 <sup>31</sup>		140	152	292
1874 <sup>32</sup>				300
1875 <sup>33</sup>	30			304
1876 <sup>34</sup>		157	156	313
1877 <sup>35</sup>		175	151	326
1878 <sup>36</sup>		179	157	336
1880 <sup>37</sup>		189	168	357
1881 <sup>38</sup>		193	168	361
1882 <sup>39</sup>		195	176	371
1883 <sup>40</sup>		195	178	373
1884 <sup>41</sup>	40			
1885 <sup>42</sup>		197	185	382
1887 <sup>43</sup>		218	208	426
1889 <sup>44</sup>		234	221	455
1890 <sup>45</sup>		242	232	474
1891 <sup>46</sup>		245	234	479
1892 <sup>47</sup>		244	233	477
1893 <sup>48</sup>		251	241	492
1894 <sup>49</sup>		253	240	493
1897 <sup>50</sup>		268	252	520
1898 <sup>51</sup>		275	257	532
1899 <sup>52</sup>		279	259	538
1900 <sup>53</sup>		288	267	555
1901 <sup>54</sup>		291	274	565
1902 <sup>55</sup>		299	282	581
1905 <sup>56</sup>		321	306	627
1908 <sup>57</sup>	57	335	329	664
1910 <sup>58</sup>		354	343	697
1912 <sup>59</sup>		360	359	719

1914 <sup>60</sup>		396	362	758
1916 <sup>61</sup>		404	361	765
1918 <sup>62</sup>	95	305	308	613
1921 <sup>63</sup>		50	47	97
1987 <sup>64</sup>	173			734

**Եկեղեցական-ժխական դպրոց.** գործունեության վերաբերյալ տվյալներն աղբատիկ են: 1873 թ. այն ունեցել է 1 ուսուցիչ, 25 աշակերտ<sup>65</sup>: Նույն-քան աշակերտ դպրոցն ունեցել է նաև 1875 թ. (ուսուցիչ՝ Հարություն Տեր-Վարդանյանց)<sup>66</sup>: Գործել է նաև 1880-ին<sup>67</sup>:

**Երևանն Սր. Խաչ (Սր. Հովհաննես-Կարապետ) եկեղեցի.** միանավ, թաղածածկ բազիլիկ է՝ կառուցված Ժ-ԺԱ դարերում: Ի սկզբանե եղել է բյուզանդաժես: 1830-ականին ամայի գյուղատեղիում հաստատված կարնեցի հայ գաղթականները եկեղեցին նորոգելուց հետո օժել են Սր. Հովհաննես-Կարապետի անվամբ և դարձրել ժխական եկեղեցի<sup>68</sup>: 1850-ականից հետո այս եկեղեցին վավերագրերում հիշվում է Երևանն Սր. Խաչ անվամբ<sup>69</sup>: Ուստի 1830-1850-ական թվականներին միջակայքում իրականացվել են հերթական նորոգումներ, որոնց և հետևել է օժման հանդեսը:

Եկեղեցին գործել է մինչև խորհրդային առաջին տարիները: Կառուցված է համակ սրբատաշ քարով: Արտաքին չափերն են՝ 13,65 x 6,6 մ:

29 Նույն տեղում, գ. 3858, թ. 9-10:  
 30 Նույն տեղում, գ. 3859, թ. 56-57:  
 31 Նույն տեղում, գ. 3862, թ. 70-71:  
 32 Նույն տեղում, գ. 3864, թ. 26-27:  
 33 Նույն տեղում, գ. 3866, թ. 21-22: «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 34 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 30-31:  
 35 Նույն տեղում, գ. 3869, թ. 28-29:  
 36 Նույն տեղում, գ. 3850, թ. 217-218:  
 37 Նույն տեղում, գ. 3872, թ. 87-88:  
 38 Նույն տեղում, գ. 3873, թ. 96-97:  
 39 Նույն տեղում, գ. 3874, թ. 42-43:  
 40 Նույն տեղում, գ. 3875, թ. 47-48:  
 41 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 42 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 10:  
 43 Նույն տեղում, գ. 3880, թ. 39-40:  
 44 Նույն տեղում, գ. 3884, թ. 64-65:  
 45 Նույն տեղում, գ. 3887, թ. 144:  
 46 Նույն տեղում, գ. 3889, թ. 143:  
 47 Նույն տեղում, գ. 3891, թ. 115:  
 48 Նույն տեղում, գ. 3895, թ. 41-42:  
 49 Նույն տեղում, գ. 3896, թ. 168-169:  
 50 Նույն տեղում, գ. 3899, թ. 141-142:  
 51 Նույն տեղում, գ. 3897, թ. 163:  
 52 Նույն տեղում, գ. 3903, թ. 93-94:  
 53 Նույն տեղում, գ. 3905, թ. 55:  
 54 Նույն տեղում, գ. 3906, թ. 67:  
 55 Նույն տեղում, գ. 3907, թ. 17-18:  
 56 Նույն տեղում, գ. 3912, թ. 260-261:  
 57 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 42:  
 58 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 134-135:  
 59 Նույն տեղում, գ. 3920, թ. 17-18:



ԽՈՐԵՆԻԱ. Երևանն Սր. Խաչ եկեղեցու հատակագիծը

60 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, թ. 171-172: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 766 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 199).  
 61 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 18-19:  
 62 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, թ. 1-4:  
 63 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 1:  
 64 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 65 **Խորդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 518:  
 66 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, թ. 44:  
 67 **Խորդյան Ս.**, նույն տեղում:  
 68 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 457:  
 69 Նույն տեղում, գ. 3830:



*ԽՈՐԵՆԻԱ. Երևանի Սբ. Խաչ (Սբ. Հովհաննես-Կարապետ) եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ից, հս-ալ-ից, հս-ից, հս-ամ-ից և լուսամուտի պատկերաքանդակ թեկոյ*

Հարավից եկեղեցուն կից է երկրորդ փոքր եկեղեցին: Վերջինս ժամանակաշրջանով մոտ է նախորդին:

*Վիմագրեր.* 1896 թ. Խորենիա այցելած Ի. Ռոստոմաշվիլին վերձանել է եկեղեցու որմերին պահպանված վրաց մեսրոպատառ հետևյալ արձանագրության:





ԽՈՐԵՆԻԱ. գյուղամիջի գերեզմանոցը, որտեղ պահպանվել են խոյածև տապանաքարեր

մաշվիլու գրչանկարի հնարավոր սխալներն ու բացթողումները. «ածղև տեռեհտուր պարդուր Կալիպեհեռ լուցըրուհտա, Յուլեհ ճեպժուրուհղըրուհ կեհուհ ցցըրի Յղ իալուց ըբուրե-տուրղի. դուրը բժևև հեպուրճղու, Յալուրյևղիղըցճղու ալըճ իրճճղուր բուևու տղուտուր ԿեռուրեղևաՆուև ճե Յղըրըև դուլ-Յըլղու»:

Թարգմ. Երբ թաթարներն ամբողջ երկիրը գրավեցին, նրանից չավարտված դռները ես՝ Չոգա, ավարտեցի: Ովքեր այս տեսներ, հիշեցեք [մեր կողմից] օգտագործված կաթողիկոսի և թագավորի 37 հազ. թեթրին:

Ի դեպ, Է. Թաղայշվիլու հրատարակության մեջ, հավանաբար վրիպակի տեսքով, սպրդել են «հեպուրճղու» «հեպուրճղու»-ի և «Յալուրյևղիղըցճղու» «Յալուրյևղիղըցճղու»-ի փոխարեն:

Վ. Յիսկարիշվիլին արձանագրությունը վերահրատարակել է Ի. Ռոստոմաշվիլու արտանկարի և Է. Թաղայշվիլու առաջարկած ուղղումների հիման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ի. Ռոստոմաշվիլու արտանկարներում, որպես կանոն, չեն արտացոլվում իրական տողաբաժանումները, արձանագրությունը հրատարակել ենք առանց տողաբաժանման նշանների:

Է. Թաղայշվիլու կարծիքով, արձանագրության մեջ հիշված թաթարները սելջուկ թուրքերն են, ուստի այնտեղ նկարագրված դեպքերը նա կապել է ԺԱ դ.՝ Բագրատ Դ-ի (1027-1072 ) թագավորության շրջանին: Վ. Յիսկարիշվիլին չի ընդունում մախաբո հետազոտողի առաջարկած թվագրումն այն բանի հիման վրա, որ վրաց մատենագրության մեջ սելջուկները երբեք թաթար չեն կոչվել, և, որ «թաթար» անվանումը մոնղոլական արշավանքներից առաջ հայտնի չէ: Նրա կարծիքով, արձանագրությունում հիշված դեպքերը վերաբերում են մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանին, ուստի արձանագրությունը պետք է թվագրել ԺԳ դարով: «ჯავახეთი. ისტორიულ-ხეობთ-მოძღვრული ვზამკვევთ»-ի խմբագրակազմը նույնպես համակարծիք է Վ. Յիսկարիշվիլու առաջարկած թվագրմանը:


2. Եկեղեցու կցակառույցի հարավային պատի շրջանածև պակով լուսամուտից ներքև.

ԿՂ ԿՂ ՂՂ ՅԻԵ ԿԻԻ  
Ք(ՐՈՆԵՅ)Ե Մ(ԵՐՄԵԱԼ)Ե Զ(ՕՐԶ)Օ Յ(Ր)ՆԵ  
Մ(Ե)ՆՕ.

Թարգմ. *Քրիստոս, ողորմիր քո ծառա Գիրգիին:*  
Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 122: **Такайшвили Е.**,  
նշվ. աշխ., էջ 32:

3. Կցակառույցի հարավային ճակատի քիվագոտու արևմտյան  
անկյունում պահպանվել է ոչ խորը փորագրությամբ, դժվար-  
ընթեռնելի, վրաց մենարպատառ եռատող արձանագրություն.

ՆԵՄԻՆԻ ԴԵՆ ԴԵՆ | ...ՊԵՂ ... | ...  
ՆՆՆ(ըլլո)տձ ը(մրտոնսձ)տձ ցեց | ... ցցց? ...|...



Թարգմ. *Աստուծո անունով այս...:*  
Հրատ. առաջին անգամ:

4. Կցակառույցի արևմտյան մուտքից վեր կարմիր ներկով  
փորագրված է.

ՃԴ [ԻՂՆ] | ԻՂ ԾԾԾ | ԹԻԽԻՆԾԻԿ  
ԻԾԻԿԵՆՆԵՆ | ԿԵԾԵԿԶԵՆ ՉԻԿԵԾԻԻ ԿԾԾ |  
ԸԵԿԻԿԵԾ ԾԻ. [ԻԿԻ ԿԶ ԵԾԻ]

[ջ(շար)ո յ(րոնց)եսո | յ(րոնց)ե, ձ(ո)ձ(ց)  
մեղ յ(ո)ձ(ց)ձ(ց) յ(արտոն)ս | յ(ս)տձ(ո)կ(ո)ձ(ո)  
որտձ[ց]ց Ս(ոն)[ձ] | ցեթ[ր(ց)ձ(ս)տձ], ձ(մ)ոն. |  
[յ(րոն)ո]յ(ո)նո ոյո Նձո].


Թարգմ. *Քրիստոս, փառավորիր Քարթլիի կաթո-  
ղիկոս Մեքիստեղեկին երկու կյանքում. ամեն: Քրո-  
նիկոնի 249 ք. (1029 ք.):*

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 122: **Такайшвили Е.**,  
նշվ. աշխ., էջ 32: **Չերձեմե՞ջցո Ն.**, նշվ. աշխ., էջ 106:

Տարբերություն. Ի. Ռոստոմաշվիլի՝ Ճ Դ [Ի Դ Ն] իրի,  
ԹԻԽԻՆԾ, ԻԿԵՆՆԵՆ, ՉԻԿԵԾԻ, ԸԵԶԻ... այնուհետև չիք:  
ցեթըրեձ(ս)տձ: Է. Թաղայշվիլի՝ ԵԾԾ, ԹԻԽԻՆԾ, ԻԿԵԾԵՆԵ,  
ԿԵԾԵԾԵԿԵՆՆԵԿԵՆ:


Ծանոթ. Քարթլիի Մեքիստեղեկ Ա կաթողիկոսը գահակալել է  
1010-1033 թթ.: Նրա օրոք՝ 1010-1029 թթ., կառուցվել է Սցիսեթի  
նշանավոր Սվետիցցիստվելի տաճարը: Արձանագրությունը թվա-  
կիր է՝ 1029 ք.:

«Վերի ժամ» մատուռ. գտնվում է գյուղի  
արևմտյան եզրին: Միանավ, քաղածածկ շենք է՝  
կառուցված համակ սրբատաշ քարով: Միակ մուտ-  
քը հարավից է, արտաքին չափերն են՝ 5,85 x 3,80 մ:



ԽՈՐԵՆԻԱ. «Վերի ժամ»-ի տեսքը հր-ամ-ից, հր-ալ-ից և  
հատակագիծը

Հորինվածքային, կառուցողական և հարդարանքի  
ոճական առանձնահատկություններով ԺԲ-ԺԳ  
դարերի կառույց է, սակայն շուրջը բավական խիտ  
թաղումներով տարածված է մինչև ԺԷ-ԺԸ դարե-



*ԽՈՐԵՆԻԱ. «Վերի ժամ» եկեղեցու տեսքը հր-ից, հս-ամ-ից, հս-ից և հս-ամ-ից, հր ճակատից բացված միակ մուտքի բարավորը և ամ ճակատից բացված լուսամտի շրջանակը*

րին վերաբերող հայկական գերեզմանատունը: Հնավայրը իր նպատակին է ծառայել նաև 1830 թ-ից ի վեր գյուղում հաստատված նորաբնակ հայերի համար: Հետևաբար, «Վերի ժամ» կոչված այս մա-

տուղը վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում ծառայել է որպես հայոց գերեզմանատան մատուց: 1896 թ. Ի. Ռոստոմաշվիլին վկայել է, որ փոքր եկեղեցու արձանագրություններն այնքան միտում-








ԽՈՐԵՆԻԱ. Կառույց գյուղատեղիում գտնվող «Ջրի ժամ» գույգ եկեղեցիները



*ԽՈՐԵՆԻԱ. Կառույց գյուղատեղիում գտնվող «Չորի ժամ» զույգ եկեղեցիների տեսքը հր-ալ-ից, եկեղեցին և սրահ-եկեղեցին ամ-ից, եկեղեցու ներքին տեսքը դեպի ամ և ալ*





3. Եկեղեցու պատին, ներքուստ, պահպանվել է մեկ այլ՝ երկտող, դժվարընթեռնելի, վրաց մետրապատառ արձանագրություն.

ԴԴԿ... ԾԾ | ԺԻԴ ...

ՅՕԳ... ...ՆԸ | ՐՆՈ ...

Հրատ. **Րոստոմ Կ.**, նշվ. աշխ., էջ 124: **Երթմենիշեցի Ե.**, նշվ. աշխ., էջ 111:

Տարընթեցում. Ի. Ռոստոմաշվիլի՝ ԺԻԴ ԴԴԿ:

Ծանոթ. արձանագրության մեջ հիշատակված Իովանն Բ Օքրոպիլի կաթողիկոսը գահակալել է 1033-1048 թթ.: Նրան պետք չէ շփոթել Իովանն Ա Օքրոպիլի կաթողիկոսի հետ, որը գահակալել է 980-1001 թթ.:

**Կորոզ.** Խորենիայում հայտնի էր Թուխ Մանուկ անվամբ մի քառակող կորոզ, որը գյուղի բնակչության համար ծառայում էր որպես սրբատեղի<sup>73</sup>:

<sup>73</sup> **Երթմենիշեցի Ե.**, նշվ. աշխ., էջ 112:

ԽՈՒԼԳՈՒՄՈՒ



ԽՈՒԼԳՈՒՄՈՒ. ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքի դեմ հանդիման, Փարվանա գետի աջափնյա սարահարթին, ծ. մ. 1680-1690 մ բարձրության վրա: Քաղաքից բաժանված է գետի ոչ շատ խոր (40-50 մ) ձորով:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. գյուղն ունեցել է 19 տուն, հարկվել է 9.000 ակչե<sup>1</sup>: Ուշագրավ են տնատերերի անձնանունները, որոնց թվում զգալի են ինչպես հայկական, այնպես էլ հայ միջավայրում տարածում գտած օտար անունները, ինչպիսիք են՝ Աստվածատուր, Առյուծ, Արտաշես, Շահազիզ և այլն: Հայտնի է, որ 1718-1719 թթ.՝ տանուտեր Մեհմեդ Մուստաֆայի օրոք, Խուլզումուն հարկվել է 6.500<sup>2</sup>, իսկ 1721-1722 թթ.՝ տանուտեր Հասանի օրոք՝ 2.500 ակչե<sup>3</sup>:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի վիճակագրական մի քանի տվյալների համաձայն՝ Խուլզումնյի բնակչության աճը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1884 <sup>4</sup>				295
1908 <sup>5</sup>	60			560
1912 <sup>6</sup>				585
1914 <sup>7</sup>				723
1915 <sup>8</sup>				556
1916 <sup>9</sup>	65	300	291	591
1987 <sup>10</sup>	305			1257


**Երկրորդ աշխարհամարտ.** Խուլզումնյից մասնակցել է 121 հոգի. 43-ը զոհվել է<sup>11</sup>:

**Սբ. Ստեփանոս (Սբ. Աստվածամոր, Սբ. Ստանիսլավ) հայ-կաթոլիկ եկեղեցի.** գտնվում է գյուղի արևելյան կողմում տարածվող հին թաղի կենտրոնում:

Կառուցվել է 1856 թ. «...ժողովրդապետական քարաշէն եկեղեցի յանուն սբ. Աստուածամոր 1856 ամի, ծախիսք ծխականաց, վերանորոգեալ յամի

1 “Զըրջոսեթանոս յոլաօյտոս ձոցո ձոցոթարո”, էջ 224:  
 2 “Գոլլոցոթոս յոլաօյտոս ճոձո ձոցոթարո 1694-1732 ՎՎ.”, էջ 155:  
 3 Նույն տեղում, էջ 171-172:

4 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:  
 5 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 44:  
 6 **Յակոբեան Պ.**, Հրաւեր ողջանտութեան, էջ 95:  
 7 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 199.  
 8 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 82:  
 9 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 36:  
 10 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 11 **Գալթյան Ա.**, Ջավախք, էջ 101:



*ԽՈՒԼԳՈՒՄՈՒ. Սր. Ստեփանոս եկեղեցու տեսքը ամ-ից, կառուցվելիք եկեղեցու նախագիծը և  
 հին քերդաշտարակի մնացորդներ գյուղամիջում*



*ԽՈՒԼ ԳՈՒՄՈՒ. խոյածև և ձիակերպ տապանաքարերով հարուստ գյուղամիջի գերեզմանոցը*

1908»<sup>12</sup>: 1861-ը նույնպես կառուցման տարեթիվ է համարվել. «Խօլգունօ, յանուն ս. Ստանիսլաւի, քարաշէն, 1861 թուին...»<sup>13</sup>: Եկեղեցին նորոգվել է նաև 1903թ.<sup>14</sup>: Միաժամանակ նաև անվանափոխվել է (օրինակ՝ 1908 թ. հիշվում է Սբ. Ստեփանոս անվամբ)<sup>15</sup>:

12 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 82:  
 13 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:  
 14 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 1346, ք. 1-22:  
 15 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 44:

1910-ական թվականներին նորոգվել է եկեղեցու շրջապարիսպը<sup>16</sup>: Եկեղեցին ներկայումս կանգուն է և բարեկարգ:

**Հին գերեզմանոց.** տեղում պահպանվել են շուրջ մեկ տասնյակ ձիակերպ և խոյածև տապանաքարեր: Չիատապաններից մեկն ունեցել է արաբերեն արձանագրություն<sup>17</sup>:

16 Նույն տեղում, գ. 83, ք. 3:  
 17 **Ճեղքմեջից** **Ն.**, նշվ. աշխ., էջ 142:




*ԽՈՒԼ ԳՈՒՄՈ. սյան խարխիսի գերեզմանոցում*

**Եկեղեցի.** գյուղամիջում նկատվում են մասնաճյուղի միջնադարյան եկեղեցու մնացորդներ (պատի հաստությունը 65 սմ է):







ԾՈՒՆԴԱ (ՆԱԲԱԼԱՔԵՎ, ՔԱԶԱՏՈՒՆ). քաղկեդոնական (բյուզանդածես) բնակիչներից ավանդված եկեղեցին հս-ամ-ից և հր-ից

Մ. ք. ա. Բ դարում Արտաշես թագավորի ջանքերով Քաջատուն-Ծունդան ողջ Գուգարքի հետ միացել է Մեծ Հայքի թագավորությանը:

Մ.ք.ա. Ա դարում՝ վրաց Արբակ Ե թագավորի (մ.ք.ա. 93-81) օրոք, ամրացվել է Ծունդա քաղաքը. «...և աջողեցաւ թագաւորութիւն նորա և շինեաց ամուրս բազումս, և ամրացոյց զպարիսպն Ջաւախեթոյ՝ քաղաքին Ծունդացոց...»<sup>4</sup>:

Ը դարի սկզբին Ծունդան հիշվում է Սմբատ Բյուրատյանի (ծն. ք.՝ անհայտ - 726) լեռնաբնակների դեմ վարած մարտական գործողությունների առնչությամբ. «Ապա Սմբատը հաղթանակով մտավ Քարթլի, ավերեց [ամբողջ] Քարթլին բերդերից ու քաղաքներից գատ: Իսկ բերդերի ու քաղաքների հետ չէր կռվում, քանի որ պատրաստ չէր՝ շտապ ելնելու պատճառով: Նա մի բերդ կառուցեց Ոճրխեյում, որը Սամցխե է կոչվում, Դեմոք անունով մի տեղում՝ Դադո լեռան կյած, թողնելով մեջը զորամաս՝ Ծունդացվոց օգնության համար, քանի որ [ինքն] Ոճրխեյվոց հետ կռվելու գնաց» («Իսկ Սմբատ յաջողութեամբ մտեալ ի Քարթլ՝ աւերեաց զերկիրն Ունձըրխոյ՝ զՍամցխէ, և եթող անդ զօրս օգնական Ծունդացոցն՝ որք հնազանդեցան նմա»)՝<sup>5</sup>:

821 թ.՝ Դավիթ Բ կաթողիկոսի (806-833) օրոք, Ծունդայի հայ ազգաբնակչությունը ուն Գարման

Կակաղեցի քահանայի ճնշմամբ ընդունում է հունադավանությունը. «Յաւուրս տէր Դաւթի Փարման քահանայ Կակաղեցի որոշեալ ի Հայոց ի Վիրս դարձոյց զԾունդեացիսն...»<sup>6</sup>:

1215 թ. Ծունդան Յունդա ձևով հիշվում է Անիի Տիգրան Հոնենց եկեղեցու հարավային ճակատի արևելյան մասում փորագրված արձանագրության մեջ, որից երևում է, որ ի թիվս բազմաթիվ այլ բնակավայրերի, եկեղեցին եկամտի իր բաժինն ուներ նաև Ծունդայից. «...Յընդոյ :Բ: դանգն...»<sup>7</sup>:

Ուշ միջնադարում Ծունդան գյուղ էր, բայց նոր ժամանակներում ստացած իր անվանման վրացական տարբերակում, այն է՝ Նաբալաքևի (վրաց.՝ Քաղաքատեղի) պահպանել է երբեմնի բարգավաճ և ծաղկուն օրերի հիշատակը:

**Բնակչություն.** միջնադարում հայաբնակ, ռուսթուրքական պատերազմներից հետո անբնակ, ապա և մինչև 1944 թ. քրդաբնակ, իսկ վերջիններիս արտրից հետո և ցարդ վրացաբնակ գյուղ է:


<sup>4</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>5</sup> Մելիքսեթ-Բեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 157:

<sup>6</sup> Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 54: Ի դեպ, Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրության» վրացերեն թարգմանության հեղինակ Լ. Դավիթանիձե-Տատիշվիլին հանիրավի կարծում է, որ պատմիչի հիշատակած իրադարձությունը տեղի է ունեցել ոչ թե Չավախքի Ծունդայում, այլ Իորի գետի միջին հոսանքի ձախափնյակում և վերաբերում է Արցախ-Մոսիքից (Առանից) գաղթած հայադավան ծաղերին (Մեօտար Տորոջանցի, յրոնոցրաֆոլոյի օկտորոյ, ժգելոյ Նոմքուրոյան տարգմնա, Մեջնազալոյ, Մեջն-Մեջնոյ զա Նաժոյեղեթոյ զաւրտո լոյանա զաջլոյանաժոյ-Յաճոյիջլոյ, տ.ժ., 1990, էջ 99):

<sup>7</sup> «Դիվան հայ վիճագրության», պրակ 1, էջ 63:





ԾՈՒՆԴԱ (ՆԱԲԱԼԱՔԵՎ, ՔԱՋԱՏՈՒՆ). Մարտիրոսի և Քարճիկի կանգնեցրած խաչքարը (ԺԵ դար) և գրչանկարը



ԾՈՒՆԴԱ (ՆԱԲԱԼԱՔԵՎ, ՔԱՋԱՏՈՒՆ).  
խաչքար (ԺԴ-ԺԵ դդ.) հայոց գերեզմանոցում

ԾՈՒՆԴԱ (ՆԱԲԱԼԱՔԵՎ, ՔԱՋԱՏՈՒՆ).  
ժայռախաչ (ԺԴ-ԺԵ դդ.) հայոց գերեզմանոցում

ռախաչի վիմագրերը<sup>8</sup>: Բարեբախտաբար, նշված հուշարձանները անվնաս գտանք նաև 2005 թ. մեր այցելության ժամանակ, որոնց լրացված և ճշտված վերծանումները ներկայացնում ենք ստորև:

Խաչքար. ամբողջական (117 x 69 x 27 սմ), ձախ եզրին, ամբողջ երկարությամբ՝ 19 կարճ տող.

ԵՍ | ՄԱՐՏԻՐՈՍՍ | ԵՒ ՔԱՐԾ(Ի)ԿՄ ԿԱԿ-  
ՆԵՅԱԹ | ՉԽ|(Ա)ՉՍ | Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ | ԻՆ|Ա-  
Խ|ԻՆ, | ԳԱԲՐԻՆ:

<sup>8</sup> Давлианидзе Л. С., նշվ. հոդվ.:

Հրատ. Давлианидзе Л. С., նշվ. հոդվ., էջ 199:  
Ծանոթ. Ժամանակը՝ ԺԵ դար:


Ժայռախաչ. ամբողջական, հարավարևմտահայաց, շուրջ 2 մ լայնությամբ և նույնքան բարձրությամբ հարթ երեսին մի քանի խաչաքանդակներ են: Դրանցից երկուսը կրում են համապատասխանաբար՝ 6 և 4 տող արձանագրություն.

ԽՈՆՅԻԿՆ, | ՎԱՆԱԿԱՆՆ, ԴԱԻԻԹՆ | ՈՐ-  
ԴԻՔՆ ԵՒՏԻՆ, | ԽԱՍԽ(Ա)Թ(ՈՒՆԻ)Ն ԹԱՆ-  
ՍՈՒԽ(Ի)Ն ՅԻՇ(ԵՑԷՔ):

ՎԱՐԴՕԽ, ՉՄՆԻԹՄԱՐ:  
Հրատ. Давлианидзе Л. С., նշվ. հոդվ., էջ 199:  
Ծանոթ. Ժամանակը՝ ԺԵ դար:



ԾՈՒՆԴԱ (ՆԱՔԱԼԱՔԵՎ, ՔԱԶԱՏՈՒՆ). ժայռախաչ (ԺԴ-ԺԵ դդ.) հայոց զերեզմանոցում



ԾՈՒՆԴԱ (ՆԱԹԱԼԱՔԵՎ, ԶԱՋԱՏՈՒՆ), ժայռախաչ (ԺԴ-ԺԵ դդ.) հայոց զերեզմանոցում

## ԿԱԹՆԱՏՈՒ

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոն Նինո-ծմինդայից 5 կմ, Մեծ Խանչալիից 1,5 կմ հարավ, ծ. մ. 2010-2035 մ բարձրության վրա:

Կաթնատուն Ջավախքի առավել բարձրադիր գյուղերից է:

**Հիմնադրում.** 1928 թ. հիմնադրել են Թորիայից և Ուջմանայից փոխադրված հայերը:

**Տնտեսություն.** գյուղի հյուսիսային եզրին պահպանվել է ջրաղացի ավերակ:

**Երկրորդ աշխարհամարտ.** մասնակցել է 35 հոգի. 13-ը զոհվել է<sup>1</sup>:

**Բնակչություն.** 1987 թ. գյուղն ուներ 78 տուն՝ 324 հայ բնակիչ:

<sup>1</sup> Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

## ԿԱՆՈ



ԿԱՆՈ. գյուղի տեսքը հր-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 19 կմ հյուսիս, Ախալքալաք-Բակուրիան մայրուղում, ծ. մ. 1730-1750 մ բարձրությամբ հարթավայրում:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. գյուղն ունեցել է 17 տուն, հարկվել է 13.000 ալչե<sup>1</sup>, իսկ 1718-1719 թթ. Կանոն հիշվում է մերթ տանուտեր Օսման Մուստաֆայի, մերթ Արդուլլահ Իբրահիմի օրոք համապատասխանաբար 12.500 և 6.000 ալչե հարկաչափով<sup>2</sup>:

1884 թ. գյուղն Անտոն Քանանյանցի կալվածն էր<sup>3</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով Կանո գյուղի բնակելի 32 տներից քանդվել էր միայն 1-ը<sup>4</sup>:

1918 թ. թուրքական բանակի ներխուժման ժամանակ կանոցիները ապաստանել էին Տաբաթուրում և նույն թվականի աշնանը հետ վերադարձել հայրենի գյուղ: Գյուղաբնակ ազգատոհմերից Իսրայելյանները հետ վերադարձին հաստատվել

էին Մեծ Խանչալի գյուղում և վերանվանվել Կանոյաններ:

Կանոյից Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 95 հոգուց 39-ը զոհվել է<sup>5</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները գաղթել են Կարնո գավառից (Ավետիսյանները՝ Կարին քաղաքից, Ալեքսանյանները՝ Տամալայից):

*Վիճակագրություն.* համաձայն վիճակագրական տվյալների՝ ԺԹ-Ի դարերի ընթացքում Կանո գյուղի բնակչության աճը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>6</sup>		34	31	65
1842 <sup>7</sup>		32	31	63
1844 <sup>8</sup>		34	36	73
1847 <sup>9</sup>		37	20	57
1849 <sup>10</sup>		43	39	94
1853 <sup>11</sup>		55	39	94

5 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

6 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:

7 Նույն տեղում, գ. 3805, ք. 78-79:

8 Նույն տեղում, գ. 3809, ք. 16-17:

9 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:

10 Նույն տեղում, գ. 3818, ք.

11 Նույն տեղում, գ. 2743, ք. 37-38:

1 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 200-201:

2 “ჩიხიდორის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.”, էջ 156:

3 «Արձագանք», 1885, № 43, էջ 43: Քանանյանցներին էր պատկանում մաս Էխթիլա և Խանդո գյուղերը (տե՛ս սույն աշխ., էջ 178, 215):

4 «Մշակ», 1900, № 43, էջ 2:




1860 <sup>12</sup>	34	26	60
1861 <sup>13</sup>	48	44	92
1862 <sup>14</sup>	48	44	92
1863 <sup>15</sup>	48	44	92
1864 <sup>16</sup>	48	44	92
1866 <sup>17</sup>	15	48	44
1867 <sup>18</sup>	100	80	180
1868 <sup>19</sup>	100	80	180
1869 <sup>20</sup>	100	80	180
1870 <sup>21</sup>	100	80	180
1871 <sup>22</sup>	102	87	189
1872 <sup>23</sup>	101	90	191
1873 <sup>24</sup>	104	87	191
1874 <sup>25</sup>			196
1875 <sup>26</sup>	20		200
1876 <sup>27</sup>		110	90
1877 <sup>28</sup>		137	105
1878 <sup>29</sup>		138	107
1880 <sup>30</sup>		138	112
1881 <sup>31</sup>		141	112
1882 <sup>32</sup>		140	116
1883 <sup>33</sup>		137	116
1884 <sup>34</sup>	31		
1885 <sup>35</sup>		133	123
1886 <sup>36</sup>		133	122
1887 <sup>37</sup>		152	138
1889 <sup>38</sup>		158	150
1890 <sup>39</sup>		160	159
1891 <sup>40</sup>		166	161
1892 <sup>41</sup>		171	164
1893 <sup>42</sup>		178	178
1894 <sup>43</sup>		179	182

1897 <sup>44</sup>		203	196	399
1898 <sup>45</sup>		207	212	419
1899 <sup>46</sup>	32	212	205	417
1900 <sup>47</sup>		220	214	434
1901 <sup>48</sup>		229	219	448
1902 <sup>49</sup>		218	216	434
1905 <sup>50</sup>		232	241	473
1908 <sup>51</sup>	20	245	250	495
1910 <sup>52</sup>		260	248	508
1912 <sup>53</sup>		274	252	526
1914 <sup>54</sup>		278	250	528
1916 <sup>55</sup>		277	257	534
1918 <sup>56</sup>	53	220	200	420
1921 <sup>57</sup>		70	60	130
1987 <sup>58</sup>	166			642

**Սր. Գևորգ եկեղեցի.** գյուղամիջում է գտնվում Կաճոյի քաղկեդոնական բնակիչներից ավանդված, համակ սրբատաշ քարով կառուցած, միանավ Սր. Գևորգ կիսավեր եկեղեցին (արտաքին չափերը՝ 10,46 x 6,29 մ):

Կիսավեր եկեղեցին առավել ևս վնասվել է 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից<sup>59</sup>:





Եկեղեցու ներսում պահպանվել են քառակող կոթողների և դրանց պատվանդանների բեկորներ, իսկ շուրջը տարածված միջնադարյան գերեզմանոցում՝ երկլեզվյան արձանագրություն:



ԿԱՃՈ. Սր. Գևորգ եկեղեցու հասակագիծը

12 Նույն տեղում, գ. 3833, ք. 67-68:  
 13 Նույն տեղում, գ. 3839, ք. 24-25:  
 14 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:  
 15 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 16 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:  
 17 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 18 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 19 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:  
 20 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 21 Նույն տեղում, գ. 3857, ք. 24:  
 22 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:  
 23 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:  
 24 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 25 Նույն տեղում, գ. 3864, ք. 27-28:  
 26 Նույն տեղում, գ. 3866, ք. 21-22: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 27 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 30-31:  
 28 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30:  
 29 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 30 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:  
 31 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:  
 32 Նույն տեղում, գ. 3874, ք. 43-44:  
 33 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:  
 34 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 35 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 14:  
 36 Նույն տեղում, գ. 3878, ք. 12:  
 37 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 38 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 39 Նույն տեղում, գ. 3887, ք. 147:  
 40 Նույն տեղում, գ. 3889, ք. 146:  
 41 Նույն տեղում, գ. 3891, ք. 118:  
 42 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43:  
 43 Նույն տեղում, գ. 3896, ք. 171-172:

44 Նույն տեղում, գ. 3899, ք. 144-145:  
 45 Նույն տեղում, գ. 3897, ք. 166:  
 46 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102: Տես նաև՝ «Մշակ», 1900, № 43, էջ 2:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 52:  
 48 Նույն տեղում, գ. 3906, ք. 69:  
 49 Նույն տեղում, գ. 3907, ք. 20-21:  
 50 Նույն տեղում, գ. 3912, ք. 263-264:  
 51 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 53 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 174-175: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 482 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 146):  
 55 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 21-22:  
 56 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 57 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 58 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 59 **Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 23:



ԿԱՃՈ. Մր. Գևորգ եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ամ-ից, հս-ալ-ից, ամ-ից, ալ և ամ ճակատներից բացված լուսամուտների, քառակող կործողի պատվանդան



ԿԱՃՈ. գյուղամիջի գերեզմանոցը, խոյածև և ձիակերպ տապանաքարեր, եկեղեցատեղի

**Վիմագրեր.** եկեղեցու պատերին ընթերցվել են վրաց մեսրոպատառ հակիրճ հիշատակագրություններ<sup>60</sup>.

<sup>60</sup> **Ростомов И.**, նշվ. աշխ. էջ 69:


1. Արևմտյան պատին.

ԺՂ ՄՂ ՍԻՂ

Ք(րօսԵ)ց Մ(ցօՎյաԼ)ց Յ(ս)ց(Լ)ց.

Թարգմ. Քրիստոս, ողորմիր Պավլեին:

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 69:



ԿԱՇՈՒՄ. Սբ. Մինաս եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հատված ան ճակատից և փայտամած տանիքից, արձանագրություններ ան ճակատից

2. Հյուսիսային պատի կամարի ներքնակողմում.  
 ԿՂ ՍԴ  
 Կ(ՐՈՏԵՂ)Ե Մ(ԵՎՆՅԱԸ)Ե.  
 Թարգմ. Քրիստոս, ողորմիր:  
 Հրատ. **ՐՕՏՕՄՈՎ Ի.**, նշվ. աշխ., էջ 69:

3. Խորանի ծածկում.  
 ԿՂ ԹՂՎԿՆԻ ՆՆԵ  
 Կ(ՐՈՏԵՂ)Ե ՄՕՅՆ(ԵՆ)Ե Ն(Պ)ԸՕ...  
 Թարգմ. Քրիստոս, հիշիր հոգին...  
 Հրատ. **ՐՕՏՕՄՈՎ Ի.**, նշվ. աշխ., էջ 69:

**Գերեզմանոց.** տարածվում է Սբ. Գևորգ եկեղեցու շուրջը: Պահպանվել են սալատապաններ և ձիատապան:

Ձիատապան. ունի երկլեզվյան՝ հայերեն և վրացերեն արձանագրություն.

ԱԼԷԿՍԻ ՄԻԽԱԷԼՈՎ:

ՄՃՕԻՏ....

Հրատ. առաջին անգամ:

**Սբ. Մինաս եկեղեցի.** մինչև 1863 թ.<sup>61</sup> բոլոր վավերագրերում նշված է, որ գյուղը գուրկ էր ծխական եկեղեցուց, այնինչ 1867 թ-ից արդեն հիշվում է Սբ. Մինաս

եկեղեցին<sup>62</sup>, որը եղել է «...քարաշեն, փայտածածկ...»<sup>63</sup> և վերակառուցվել 1896 թ.:

1899 թ. հայտնի երկրաշարժից եկեղեցին նույնպես տուժել է<sup>64</sup>: Ներկայումս կանգուն է, սակայն քայքայված:

ՅԻՇԱՏԱԿ Է | ԽԱՉՍ ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ՈՒՆՏՈՆՈՎ ... 1896 ԱՄԻ:

Հրատ. առաջին անգամ:

**Գյուղատեղի.** գյուղից հյուսիս-արևելք պահպանվում են Միմինեթ գյուղատեղիի ավերակները<sup>65</sup>:

61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3843:

62 Նույն տեղում, գ. 3851:

63 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

64 **Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 22:

65 **Չերմենիցովո Ե.**, նշվ. աշխ., էջ 141:

## ԿԱՐԾԱՆ



ԿԱՐԾԱՆ. գյուղի տեսքը հս-այ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 24 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1830-1870 մ բարձրության վրա, Խոզաբույն<sup>1</sup> (Խոզապինի) լճի հյուսիսարևելյան ափից 2 կմ հեռու:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված հարկացուցակի՝ Մեծ Կարծախ գյուղն ունեցել է 33 տուն, հարկվել է 26.365 ակչե: Ըստ հարկացուցակում հիշատակված կարծախցի տնատերերի անձնանունների (որոնք կամ զուտ հայկական են, կամ հայոց միջավայրում լայն տարածում գտած օտա-

րոտի անուններ, օրինակ՝ Վարդան, Սարգիս, Հովսեփ, Գրիգոր, Սուքիաս, Կիրակոս, Մկրտիչ, Ումեկ, Անանիկ, Խաչիկ, Սահակ և այլն), Կարծախը եղել է հայաբնակ<sup>2</sup>: 1705-1706 թթ.՝ տանուտեր Հյուսեինի օրոք գյուղից հարկվել է 19.165 ակչե<sup>3</sup>:

Կարծախն իբրև գրչօջախ հիշվում է 1850 թ. այստեղ ստեղծված մի ձեռագիր հիշատակարանի առիթով. «Յիշատակարան Աւետարանի միոյ ի Կարծախ գիւղն (1723 թ.)»<sup>4</sup>:

1834 թվականին կարծախցի թուրքերի՝ դեպի օսմանյան տերություն արտագաղթից և միաժամանակ վերստին հայերով բնակեցվելուց հետո, գյուղը, իբրև եկեղեցապատկան կալվածք<sup>5</sup>, գնվում է Ախալքալաքի Սբ. Փրկիչ եկեղեցու համար: Նույն կարգավիճակում Կարծախը հիշվում է նաև 1893 թ.<sup>6</sup>:

1 Հայաստանի բարձրլեռնային լճերին նվիրված մի տեղեկագրում Խոզապինի մասին նշված է. «Չլուրը ծովակեն ոչ այնքան հեռի (10 վերսդ), կը գտնուի Խօսաբին մեծ լիճը, որոյ տարածութիւնն է 25 քառակուսի վերսդ. արեւելեան կողմը շրթայակապ լեռանց հետ միացած է: Այլ շատ զարմանալի է, որ բնակեղանի էակի նշան չունի և մէջը թողուած ձկներն անգամ արագ անհետացան: Այս կղզոյս հիւսիսային կողմը՝ ուր ջուրն անելի խոր է, գրեթէ 10 ձուածն արհեստական կղզիք կան, որք հազիւ ջրոյ երեսն կերկին, և դպարով ծածկուած են: Այս կղզեաց ժողովն ալ նոյնպէս ջրաբնակ Հայք կը ժողովեն, վասն զի Տաճիկք չեն դպչիր անոնց, և բնաւ չեն ջնջուիր, վասն զի ինչպէս ծանօթ է, շատ բազմութեամբ հաւկիթ կածեն (խրաքանչիւրն մինչև 30 հատ) և հետզհետէ առնուածներուն տեղ նոր կը հասցընեն» («Բազմավէպ», 1891, էջ 248): Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ «Կարգախի մօտն է համանուն լճակն, որից անենկն ձուլը չէ դուրս գալի» («Արձագանք», 1885, № 3, էջ 41):

2 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 277-278:

3 “ჩივლიდობის ვილაიეთის ჯგაბა დავთარი 1694-1732 წწ.”, էջ 118:

4 «Յուցակ Չեռագրաց», հ. Բ (այսուհետև՝ ՅՁԲ), Երևան, 1970, № 9983, էջ 1024:

5 Грикоров К., Селение Карзах, СМОМПК, Тифлис, 1893, էջ 92:

6 Գեղամյանց Յ., Կարապետ արքեպիսկոպոս.– «Փորձ», 1876, № 1, էջ 196: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ գյուղը գնվել է 1841 թ. ապրիլի 18-ին («Մեղու Հայաստանի», 1875, № 38, էջ 1):

1892 թ. Կարծախը Ջավախքի այն սակավաթիվ գյուղերից էր, որը ողջ Կովկասում բռնկված ժամտախտի համաճարակի պատճառով տվել էր գոհեռի առավելագույն չափը՝ 30 մարդ<sup>7</sup>:

**Կառուցապատում.** Կարծախը բաղկացած է 3 թաղից. «...Գիւղը բաժանում է երեք գլխատը մասի՝ Կարծախ, Կիլերթա և Նորաշեն: Բոլոր տները քարաշեն են, իրար կից միյարկանի և հողէկտուր: Կարծախ գիւղը համեմատած գաւառիս շատ գիւղերի հետ, տները շինուած են բաւական գեղեցիկ ու փողոցները լայն և ուղիղ են: Գիւղի Կիլերթա և Կարծախ մասերի մէջտեղից հոսում է մի փոքրիկ գետակ, որ բաժանում է գիւղի այդ մասերը միմեանցից»<sup>8</sup>:

Կարծախի հյուսիսարևելյան կողմը զբաղեցնող Նորաշեն թաղը հիմնադրվել է 1884 թ.<sup>9</sup>:

**Տնտեսություն.** տնտեսության ազատ կառավարման շնորհիվ 1860-ական թվականների վերջերին Կարծախը ողջ գավառի առավել ծաղկուն գյուղերից էր, որը, սակայն, հետագա տարիներին տեղի տվեց. «Կարծախը սրանից մի 6-7 տարի առաջ համարվում էր գաւառիս ամենահարուստ և առաջադէմ գիւղը: Բայց սա անցաւ կապալով զանազան հաճիների ձեռքը, ամբողջ գիւղի խեղճ երկրագործ դասը սնանկացաւ նիւթապէս և սաստիկ ընկաւ բարոյապէս»<sup>10</sup>:

ԺԹ դարի վերջին գյուղում գործել են 5 ջրաղաց, 3 ձիթհան, ունեցել է 9-10 կրպակ:

Կիլերթա թաղամասում գրեթե յուրաքանչյուր տուն ունեցել է առանձին ջրհոր<sup>11</sup>:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Երզրումի նահանգի Մեծ Դու<sup>12</sup>, Օկոն (Հոկամ)<sup>13</sup>, Ավգովեր (Ավլար)<sup>14</sup> և Նիսա<sup>15</sup> գյուղերից նախ՝ Կարսի մարզի Չամդուրա<sup>16</sup> գյուղը 1829-30 թթ., ապա 4 տարի անց փոխադրվել Ջավախքի Կարծախ գյուղը: Հայտնի է, որ մինչև 1834 թ. ներկայիս Կարծախը թրքաբնակ էր:

7 «Նոր-Գար», 1893, № 30, 20 փետրվարի:  
8 «Նոր-Գար», 1896, № 112, էջ 2:  
9 **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, էջ 57:  
10 **Պիճիկեան Բ.**, Ախալքալաք եւ նրա շրջակայքը.– «Մշակ», 1877, № 10, էջ 2:  
11 **Григоров К.**, նշվ. հոդվածը, էջ 96: Տե՛ս նաև՝ «Նոր-Գար», 1896, № 112, էջ 2:  
12 Մեծ Դուն հայաբնակ գյուղ էր՝ Երզրումի նահանգի Բասեն գավառում՝ Երզրում (Կարին) քաղաքից կմ 16 կմ հյուսիսարևելք: Այժմ վերանվանված է Bıyüktüy.  
13 Օկոնը հայաբնակ գյուղ էր՝ Երզրումի նահանգի Բասեն գավառում՝ Արաքսի ձախ վտակ Մուրցի ձախակողմում: Այժմ վերանվանված է Այժմ վերանվանված է Üçümü.  
14 Ավգովերի տեղադրությունն անորոշ է:  
15 Նիսաը (Երկնիստ) հայաբնակ գյուղ էր՝ Երզրումի նահանգի Երզրում գավառում՝ Երզրում (Կարին) քաղաքից կմ 8,5 կմ հյուսիսարևմուտք: Այժմ վերանվանված է Yerlisu.  
16 Չամդուրան (Չամդրա) հայաբնակ գյուղ էր՝ Կարսի մարզի Չղըր գավառում, Կարծախ գյուղից 10 կմ հարավ, Խոզապին լճի հարավային ափից 4,5 կմ հեռավորության վրա, Չղըր լճի հյուսիսային ափից՝ 5,5 կմ հեռու:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի բնակչության թվաքանակն անընդմեջ աճել է: Դա ակնառու է ստորև ներկայացվող աղյուսակից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>17</sup>		326	291	617
1841 <sup>18</sup>		327	293	620
1842 <sup>19</sup>		335	354	639
1844 <sup>20</sup>		365	324	689
1845 <sup>21</sup>		460	440	900
1847 <sup>22</sup>		470	460	930
1849 <sup>23</sup>		494	467	961
1851 <sup>24</sup>	71	447	400	847
1853 <sup>25</sup>		476	470	946
1854 <sup>26</sup>		473	469	942
1857 <sup>27</sup>		508	474	982
1860 <sup>28</sup>		523	506	1029
1861 <sup>29</sup>		584	524	1108
1862 <sup>30</sup>		606	534	1140
1863 <sup>31</sup>		624	541	1165
1864 <sup>32</sup>		620	532	1152
1866 <sup>33</sup>	128	619	528	1147
1867 <sup>34</sup>		651	544	1195
1868 <sup>35</sup>		592	576	1168
1869 <sup>36</sup>		610	598	1208
1870 <sup>37</sup>		619	608	1227
1871 <sup>38</sup>		633	636	1269
1872 <sup>39</sup>		656	629	1285
1873 <sup>40</sup>		675	632	1307
1874 <sup>41</sup>				1319
1875 <sup>42</sup>	160			1342
1876 <sup>43</sup>		726	654	1380
1877 <sup>44</sup>		833	715	1548

17 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:  
18 Նույն տեղում, գ. 3802, ք. 63-64:  
19 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:  
20 Նույն տեղում, գ. 3809, ք. 14-15:  
21 Նույն տեղում, գ. 3811, ք. 72-73:  
22 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:  
23 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:  
24 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 34-35:  
25 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 39-40:  
26 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:  
27 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:  
28 Նույն տեղում, գ. 3833, ք. 66-67:  
29 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:  
30 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:  
31 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
32 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:  
33 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
34 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:  
35 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
36 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
37 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
38 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
39 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
40 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
41 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
42 Նույն տեղում, գ. 3866, ք. 21-22: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
43 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29:  
44 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:

1878 <sup>45</sup>		838	720	1558
1880 <sup>46</sup>		869	757	1626
1881 <sup>47</sup>		906	778	1684
1882 <sup>48</sup>		919	797	1716
1883 <sup>49</sup>		921	800	1721
1884 <sup>50</sup>	166			
1885 <sup>51</sup>		965	928	1893
1886 <sup>52</sup>		965	828	1893
1887 <sup>53</sup>		1145	901	2046
1889 <sup>54</sup>		1180	933	2113
1890 <sup>55</sup>		1218	960	2178
1891 <sup>56</sup>		1242	995	2237
1892 <sup>57</sup>		1242	941	2183
1893 <sup>58</sup>	240	1235	932	2167
1894 <sup>59</sup>		1237	946	2183
1897 <sup>60</sup>		1312	1024	2336
1898 <sup>61</sup>		1332	1038	2370
1899 <sup>62</sup>		1348	1058	2401
1900 <sup>63</sup>		1374	1095	2469
1901 <sup>64</sup>		1417	1133	2550
1902 <sup>65</sup>		1475	1167	2642
1905 <sup>66</sup>		1597	1280	2877
1908 <sup>67</sup>	332	1679	1319	2998
1910 <sup>68</sup>		1798	1391	3189
1912 <sup>69</sup>		1891	1489	3380
1914 <sup>70</sup>		1975	1549	3524
1916 <sup>71</sup>		2000	1546	3546
1918 <sup>72</sup>	430	1915	1898	3813
1921 <sup>73</sup>		450	350	800
1987 <sup>74</sup>	279			994

45 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 46 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 47 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 48 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 49 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 50 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 51 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 52 Նույն տեղում, գ. 3878, ք. 11:  
 53 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 54 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 55 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:  
 56 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:  
 57 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:  
 58 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 793:  
 59 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 167-168:  
 60 Նույն տեղում, գ. 3899, ք. 140-141:  
 61 Նույն տեղում, գ. 3897, ք. 163:  
 62 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 63 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 64 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 65 Նույն տեղում, գ. 3907, ք. 17-18:  
 66 Նույն տեղում, գ. 3912, ք. 260-261:  
 67 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 68 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 69 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 70 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 171-172: Ի դեպ, նույն թվականի հասարակական տարվանքում ցույց է տրված 3088 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 136):  
 71 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 18-19:  
 72 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 73 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 74 Ըստ գյուղատնտեսության տվյալների:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 580 կարծախցիներից 230-ը զոհվել է<sup>75</sup>:

**Անվանի կարծախցիներ.** Կարծախցի հայտնի աշուղ, երաժիշտ-բանաստեղծ ու ժողովրդական երգիչ Ջիվանու (Մերոբ Ստեփանի Լևոնյան) ծննդավայրն է. «Ահա և բերդ կոչվող այն բլուրը, որի ստորոտում Կիլերթա կոչվող թաղամասի հողածածկ հյուղակուն հանգրվանել է Բասենից գաղթած Բենկոյենց Գասպարի բազմանդամ ընտանիքը: Այդ ընտանիքում 1846 թվականին ծնվում է Ստեփանի չորրորդ զավակը՝ Սերովբեն (Ջիվանին)»<sup>76</sup>:


**Դպրոց.** գյուղում եկեղեցական-ժխական դպրոց ունենալու խնդիրը կարգախցիներն արժարժեղ են դեռևս 1860 թ.՝ ծրագրելով կառուցել 2 սենյակից բաղկացած (4 լուսամուտով) վարժարանի հաստակ շենք<sup>77</sup>: Շատ չանցած կրթօջախը կյանքի է կոչվել: Նրա գործունեության վերաբերյալ վավերագրերում առկա են հետևյալ տվյալները.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>78</sup>		1	48
1873 <sup>79</sup>		1	35
1875 <sup>80</sup>	Մարտիրոս քին. Տեր-Մարտիրոսյանց	55	
1876 <sup>81</sup>		2	41
1877 <sup>82</sup>		1	56
1878 <sup>83</sup>		1	60
1894 <sup>84</sup>	արական	1	30
1896 <sup>85</sup>	փակվել է		
1905 <sup>86</sup>	վերաբացվել է		
1910 <sup>87</sup>		1	60
1911 <sup>88</sup>	ունեի 2 բաժանմունք	1	60
1912 <sup>89</sup>		1	60
1914 <sup>90</sup>		1	54
1916 <sup>91</sup>	վերաբացվել է		

**Արքունի դպրոց.** սկսած 1881-ից՝ գյուղում գործել է նաև արքունի շինական (ռուսական) դպրոց, որը բացման տարում ունեցել է 34, իսկ 1891-ին՝ 117 աշակերտ<sup>92</sup>:

75 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:  
 76 «Սովետական Վրաստան», 3.07.1986, էջ 4:  
 77 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 4152, ք. 1:  
 78 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 79 **Խաղոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 519:  
 80 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 43:  
 81 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 51:  
 82 Նույն տեղում, ք. 130:  
 83 Նույն տեղում, ք. 177:  
 84 Նույն տեղում, գ. 3896, ք. 34, 167-168:  
 85 **Խաղոյան Ս.**, նույն տեղում:  
 86 Նույն տեղում:  
 87 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135: Գործել է անկախ Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու նշանակած ամենամյա նպաստի՝ ժամանակին հատկացումից («Արարատ», 1910, էջ 1119):  
 88 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 57:  
 89 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, ք. 17-18:  
 90 **Խաղոյան Ս.**, նույն տեղում:  
 91 «Համբավաբեր», 1916, № 45, էջ 1424:  
 92 **Григорьев К.**, նշվ. հոդվ., էջ 102-103: Տե՛ս նաև՝ «Նոր-Դար», 1896, № 112, էջ 2:





ԿԱՐԾԱՆ. Սր. Հովհաննես-Կարապետ եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հատվածներ ալ և ամ ճակատների հարդարանքներից

**Սր. Հովհաննես-Կարապետ եկեղեցի.** հիմնադրվել է 1830-ական թվականների վերջերին: 1860 թ. կարծախցիները նախատեսում էին նորոգել եկեղեցու ծածկը, բացի այդ պարսպել այն<sup>93</sup>: Կարծախը գավառի ամենամարդաշատ գյուղերից էր, հին եկեղեցին իր համեստ չափերով այլևս անբավարար էր, և 1880-ական թթ. վերջերին սկսվում է նոր եկեղեցի կառուցելու նախապատրաստությունը. «...գիղում այժմ կառուցում է կոփածոյ քարից, մինչև 13.000 ռ. արժողութեամբ եկեղեցի: Գիղացին իր ժամի համար մինչև 20 վ. հեռաւորութիւնից քար է կրում...»<sup>94</sup>: Ըստ արձանագրության՝ շինարարությունն ավարտվել է 1894 թ.:

Իրականում դեռևս 1896 թ. աշխատանքներն ամբողջացված չէին. «Գիղիս նորակառոյց ս. Կարապետ եկեղեցին, որի շինութիւնը սկսուած է 1891 թուականից, մինչև այժմ չի աւարտուած միջոցների սղութեան պատճառով»<sup>95</sup>: Նույն թվականին թիֆլի-



սեցի Եզոր Ավագյան Դավթյանցը 100 ռ. է նվիրում եկեղեցու թերի մասերը լրացնելու համար<sup>96</sup>: 1896 թ. եկեղեցու շենքն արդեն կառուցվել էր, և սկսվել էր զանգակատան շինարարությունը: Ջանգը նվիրել էր թիֆլիսեցի Բագրատ Ալիբեգյանը. «Ախալքալաք գաւառի Կարգախ գիղի նորակառոյց ս. Կարապետ եկեղեցու հիմնարկութեան ժամանակ, 1891 թուին այստեղ էր թիֆլիսեցի պ. Բագրատ Յովհաննիսեան Ալիբեգեանցը, որը խոստացաւ իւր հաշուով զանգակ քերել տալ եկեղեցու համար, երբ նորա շինութիւնը կաւարտուի և զանգակատունը պատրաստ կը լինի. այժմ, թէև շինութիւնը դեռ չէ աւարտուած և զանգակատունը կիսով չափ է միայն բարձրացրած և լսելով յարգելի պարոնը, որ հին փոքրիկ զանգակները բոլորովին կտարտուած ու անպէտքացած են, բարեհաճել է կատարել իւր խոստումը որկելով մի նորածույլ զանգակ եօթը պուղ հինգ ֆունտ ծանրութեամբ. զանգակի վրայ արձանագրուած է. «Բագրատ Ալիբեգեանից ի յի-

93 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 4152, ք. 1:

94 «Նոր-Դար», 1891, № 150, էջ 3:

95 «Նոր-Դար», 1896, № 180, էջ 3:

96 Նույն տեղում:



ԿԱՐՇԱԽ. Սր. Հովհաննես-Կարապետ եկեղեցու ամ ճակատին եկեղեցու և զանգակատան կառուցման մասին պատմող արձանագրությունները, եկեղեցու ներքին տեսքը դեպի ալ և ամ

շատակ իւր հանգուցեալ եղբոր Յարութիւն Ալիբեգեանի...»<sup>97</sup>:

Ի վերջո, եկեղեցու շինարարությունն ամբողջանում է 1896 թ.՝ զանգակատան կառուցմամբ: Շենքի արտաքին չափերն են՝ 23.75 x 13.25 մ:

Արձանագրություն. եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին, 9 տող.

ՈՂՈՐՍՈՒԹԵԱՄԲՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԿԱՌՈՒՅԱԻ Ս(ՈՒՐԲ) ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՅՕՎՀԱՆՆՈՒ, ԱՐԴԵԱՄԲԶ ՀԱՅ | ԱԶԳԻ ԺՈՂՈՎՐԴՈՅ ԿԱՐԶԱԽ ԳԵՂԶ, Ի

| ԹՈՒԱԿԱՆԻ ՓՐԿՉԻՆ 1894 ԵՒ ՀԱՅՈՑ | ՌՅԻԳ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ | Տ. Տ. ՍԿՐՏՉԻ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ ԵՒ Ի ԶԱՀԱՆԱՅՈՒ(Թ)Ե(ԱՆ) Տ(Է)Ր ՍԱՐՏԻՐՈՍԻ ԱԲՈՎԵԱՆ:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակտոնին, զանգակատան ներքո, 6 տող.

ԿԱՍԱԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՌՈՒՅԱԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ՍԱՐԳՍԻ, ԱԻԵՏԻՍԻ, ԶԱՐՈՒԽՏԻ, ԹԱԳՈՒՀԻՍ, ՓԱՌՆԱԿԵ, ՄԻՍԱՅԵԼԻ, ՀԱՅԿԱՆՈՒՇԻ ԱՂԱՊԱՊԵԱՆՅ, Ի 1896 ԱՄԻ ՓՐԿՉԻՆ ԵՒ | ՀԱՅՈՑ ՌՅԻՆԵ:

Հրատ. առաջին անգամ:

97 «Նոր-Դար», 1898, № 13, էջ 4:



ԿԱՐԾԱԽ. գյուղամիջի գերեզմանոցը, ձիատապան նույն գերեզմանոցում (1866 թ.), գյուղի հր-ալ կողմում տարածված գերեզմանոցի հին մասում Կարծախի քաղկեդոնական բնակիչներից ավանդված նորահայտ թևավոր խաչ (Ժ-ԺԱ դդ.), Սամախոր գյուղատեղիի խաչքարերից (ԺՁ դ.)

**Գերեզմանոցներ.** գյուղի հյուսիսային եզրին՝ միմյանցից փոքր-ինչ, հեռու պահպանվում են երկու գերեզմանոց, ուր գերակշռում են անմշակ և կիսամշակ սալատապանները: Պահպանվել է նաև մեկ ձիատապան:

Ձիատապան. հյուսիսային երեսին, ասպանդակից ցած՝ 4 սող.


ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՆՈՒԿԻ | ՈՐԳԻ ՏԻՐ(Ա)-ՑՈՒ ՅՕՀԱՆՆԷՍԻՆ ՀՕՎԻՎԵԱՆՅ, | ՈՐ ՀԱՆ-ԳԵԱԻ Ի Զ(ՈՒ)Մ 1866 | ՀՈԿՏԵՄԲԵՐ 10:

Հրատ. առաջին անգամ:

**Թևավոր խաչ.** Կարծախ գյուղի հարավարևելյան եզրի բլրալանջին տարածվող գերեզմանոցում մի քանի տարի առաջ տեղացիները հայտնաբերել են միակտոր քարից կերտված ամբողջական թևավոր խաչ, որը համադրելով համանման այլ հուշարձանների հետ՝ կարելի է թվագրել Ժ-ԺԱ դարերով:

**Ամրոց.** ԺԹ դարի վերջին գյուղի Կիլերթա թաղում նկատելի էին ամրոցի մնացորդներ. «...երբեմն շինուած է եղել մի ամրոց որ մինչ օրս յայտնի է քանդուած և աւերակցած դիրքով»<sup>98</sup>:

98 «Նոր-Դար», 1896, № 126, էջ 2:



ԿԱՐՃԱՆ. պատմական Սամախոր գյուղատեղիի (այժմ ավելի հայտնի է Ավետենց արտ կամ Ավետենց սուրբ անուններով) խաչքարերով գերեզմանոցի մնացորդները (ԺԵ-ԺԷ դդ.), արձանագրություն խաչքարի հր կողին (ԺՁ դարի սկիզբ)

**Սամախոթ («Ավետենց սուրբ») գյուղատեղի.** Կարծախից 4,5 կմ հարավ-արևմուտք՝ Խոզապին լճի հյուսիսային ափից 150 մ հեռու, միջնադարյան գյուղատեղիի և գերեզմանատան ավերակներն են:

Հայտնի է, որ 1705-1706 թթ.՝ տանուտեր Հասանի օրոք, այս գյուղից հարկվել է 22.000 ակչե<sup>99</sup>:

Սամախոթ գյուղատեղին հիշվում է նաև 1853 թ. ռուս-թուրքական պատերազմի առնչությամբ, երբ օսմանյան բանակները Սամախոթի ուղղությամբ առաջացել և գրավել էին նախ Կարծախ, ապա և մինչև Ախալքալաք ընկած գրեթե բոլոր գյուղերը<sup>100</sup>:

Հնավայրի մասին ԺԹ դարավերջին ականատեսը նշել է. «Ծղարիսթաւի և Կարգախի մէջտեղում կայ մի աներակ գիւղ Սամախօթ անունով, որը արքունական կարուածք է և գտնվում է կարգախցիների շահեցողութեան տակ: Արդ՝ բոլորովին գետնի հետ հաւասարված աներակի քարերի մէջ ես տեսայ 6 խաչքարեր և գերեզմանաքարեր հայերէն արձանագրութիւններով, որոնք դժբաղդաբար անկարելի եղաւ կարդալ...»<sup>101</sup>:

Հնավայրում պահպանվել են ԺԵ-ԺՉ դարերով թվագրվող, կիսով չափ հողի մեջ խրված 4-5 խաչքար:

Խաչքար. ավելի մեծ է ժայռախաչի, արևմտահայաց երեսին, գեղաքանդակ հիմնախաչի վերին թևի երկու կողմերում քանդակված են խաղողի ողկույզներ, ստորին խաչաթևի երկու կողմերում թռչնապատկերներ են, հյուսիսային կողի ստորին մասում կիսաեղծ թվագիրը (2 տող), իսկ հարավահայաց երեսին՝ խառն ու անկանոն գրչությամբ, նաև հողմահար 8 տող.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉ(Ս) | ԿԱՆԿ(Ն)ԵՑԻ | (Յ)ԻՇԱ-ՏԱԿ ԻՆՁ | ԵՒ ԾՆՈՂԱՑ ... | ԹՎ(Ա)Կ(Ա)Ն | Ղ:  
Հրատ. առաջին անգամ:

**Խոզաբիր (Խոզապին) գյուղատեղի.** տարածվում է Կարծախից 3 կմ հարավ՝ Խոզապին լճի արևելյան ափին:

Խոզաբիր գյուղն իր անունն առած պետք է լիներ համանուն լճից, որի ափամերձ գլխավոր բնակավայրն է ներկայիս Կարծախը:



ԿԱՐԾԱԽ. խաչքարեր և արձանագրություն Սամախոթ գյուղատեղիի գերեզմանոցում (ԺՉ դար)

Գրավոր աղբյուրներում առաջին վկայությունը վերաբերում է 757 թ.՝ որպես Հայաստանի արաբ անիրաներից մեկի վախճանման վայր. «...յնգ թուա-

99 «Պեղվածքի ցուցակի 1694-1732 թթ.», էջ 120:  
100 Կարապետ արքեպիսկոպոսի՝ 1853 թ. նոյեմբերի 5-ին Ախալքալաքից գրած նամակում հիշվում է. «Թէև երկու անուրբ յառաջ համբաւեցաւ ի քաղաքիս թէ ի գիւղն Կարծախ որ ի նահանգին Ախալքալաքայ յ30-ն Հոկտեմբերի թշնամիք մեր որ ի Չլտրայ և Սոմախօտու թուովք չորս հարիւր հեծելագորաց յանկարծակի յարձակեալ կողոպտեալ են զամենայն կարողութիւնս խղճալի գիւղականաց մերոց, բայց այժմ հասուցին ինձ հաւատարիմք գիտեսեալս. մելիցիայն Ախալքալաքայ որ ընդ տեսչութեամբ Վեհրէտ բեկի Մութիբէկօղլու և Ճիպրիէլօղլու կարէին դիմամրցել ընդ նոսա և ազատել զգիւղն...» (Աղանանց Գիտ ա. ք., Գիւան Հայոց պատմութեան. Հարստահարութիւններ Տաճկահայաստանում, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 22-23):  
101 «Մեղու Հայաստանի», 1881, № 191, էջ 3: Ի դեպ, Սամախոթում կարծախցիներին պատկանող հողամասերը կազմում էին 395 դեսյատին («Արաքս», 1893, գիրք Բ, էջ 24):



ԿԱՐՇԱԽ. Պետաշեն գյուղատեղիի «Պլած ժամ» եկեղեցու մնացորդներն ու հատակագիծը

կանին, Խալթ իպն Եզիտ՝ Հայոց ամիրայ եկն և էանց բազմութեամբ ի Վիրս. և մեռա ի Ջաւախս, ի գիտն որ կոչի Խոզաբիր»<sup>102</sup>:

Գյուղը Խոզապսուն անվամբ հիշատակվում է նաև 1595 թ. կազմված հարկացուցակում՝ որպես 15 տուն բնակիչ ունեցող և 15000 ակչե հարկվող զուտ հայաբնակ բնակավայր<sup>103</sup>: Տնատերերի անձնանուններից հարկացուցակում նշված են՝ Աստվածատուր, Ավագ, Գրիգոր, Մանուկ, Հանես, Հովհաննես, Շահուն և այլն:

**Պետաշեն գյուղատեղի.** Կարծախից 5 կմ հյուսիս-արևելք՝ ճանապարհի եզրին, Բոզալիից 1 կմ

հարավ-արևմուտք, ներկայիս Բեդեշեն (Բեդաշեն) տեղամասում, առնվազն ուշ միջնադարում գոյություն է ունեցել Պետաշեն գյուղը, որը 1595 թ. ունեցել է ընդամենը 3 տուն բնակիչ, հարկվել է 6.000 ակչե<sup>104</sup>: 1841 թ., ի թիվս այլ տեղամասերի և գյուղերի, Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու համար, որպես կալվածք, գնել էր արդեն ամայի գյուղը<sup>105</sup>:

«Պլած ժամ» եկեղեցի. հիմնավեր է: Գտնվում է Պետաշեն գյուղատեղիում: Պահպանված մնացորդների ուսումնասիրությունը թույլ է տալիս եկեղեցին թվագրել ԺՉ-ԺԷ դդ.:

102 Ստեփանոս Ասողիկ, էջ 106:

103 «Գյրջուսեանոս յոջոյոյոս յոջոյոյոս», էջ 285-286:

104 «Գյրջուսեանոս յոջոյոյոս յոջոյոյոս», էջ 283:

105 «Մեղու Հայաստանի», 1875, № 387, էջ 1:

## ԿԱՐՏԻԿԱՍ



ԿԱՐՏԻԿԱՍ. գյուղի տեսքը հս-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից 3,5 կմ արևելք, Աբուլ վտակի աջակողմյան մեղմաթեք սարահարթին, ծ. մ. 1740-1790 մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղամիջում պահպանված, ԺԵ-ԺՁ դարերով թվագրվող հայոց միջնադարյան գերեզմանոցը փաստում է առնվազն այդ ժամանակաշրջանից ի վեր Կարտիկամի հայաբնակ, բարգավաճ գյուղ լինելը: Հայտնի է, որ 1595 թ. գյուղից հարկվել է 20.000 ակչե<sup>1</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Արտահանի գավառից և հայաթափ Կարտիկամում հաստատվել 1829-1830 թթ. «...Կարտիկամ և մասամբ Տուրս գյուղերի բնակիչները տաճկախօս Հռոմեական հայ են: Սրանք 1829-ին գաղթած են Արտահանի գաւառի Գեղա հասարակութեան Վէլ գիւղից: Ինչպէս ծերունիները պատմում են, իրենց նախնիքը կրօնով Հայեր են եղած և զանազան ժամանակներում այլևայլ տեղերից եկած բնակած են այս գիւղը: Անցեալ դարում Արտահանի բէկը արգիլած է Վէլ և շրջակայ հայախօս գիւղերին հայերէն խօսել և ամէն մի անգամ

խօսելիս 50 բաղտատ տուգանք է առած»<sup>2</sup>: Հակառակ պատմական այս իրողությանը, օրինակ, 1905 թ. ոմն Ջ. Դիճինաձե հայտնել է այն կարծիքը, թե իբր կարտիկամցիները հայախոս և թրքախոս են դարձել մայրենի վրացերենը մոռացության մատնելու հետևանքով<sup>3</sup>: Ըստ Ն. Բերձենիշվիլու՝ 1930-ական թվականներին Կարտիկամի բնակիչների մի մասը շարունակում էր մնալ թրքախոս<sup>4</sup>:

**Վիճակագրություն.** Կարտիկամի բնակչության թվաքանակի վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները.

2 **Լալայանց Ե.**, Տաճկախօս հռոմեական հայեր.– «Արձագանք», 1894, № 118, էջ 3-4: Տե՛ս նաև՝ «Հանդես ամսօրեայ», 1894, էջ 313-315, նաև՝ 1901 թ.:

3 **Ջոջոնաձե Ն.**, նշվ. հոդվածը, էջ 5, 24: Ի դեպ, մի քանի տարի առաջ էլ Թբիլիսիում լույս տեսնող պարբերականներից մեկում ոմն Ախուաշվիլի կարտիկամցի հայերի մասին ափսոսանքով նշել է, թե արդեն 1901 թ. Կարտիկամի 150 տուն բնակիչները կորցրել էին մայրենի վրացերենով խոսելու ունակությունը (ըստ հոդվածագրի՝ իբր նույն վիճակի մեջ էին նաև Խուլգուն, Բավրա, Էշտիա, Տուրցիս գյուղերի հայերը) (**ՆեշաՅեցի Օ.**, Նամճեյ-Նաստաձաջոս յոնեօս, «Օսթորոս և Գեօրգրաֆիա ՆեկոլաՅի», 1990, № 1-2):

4 **Զերձենիշվիլի Ն.**, նշվ. աշխ., էջ 109:

1 «Գյուրջոսեճանի յոլաօյոտի ճոճո ճաթօրո», էջ 230-231:



ԿԱՐՏԻԿԱՍ. Սր. Աստվածածին եկեղեցու տեսքը հս-ալ-ից և հր-ալ-ից

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1595 <sup>5</sup>	13			
1884 <sup>6</sup>				758
1891 <sup>7</sup>	79			795
1908 <sup>8</sup>	120	637	636	1273
1912 <sup>9</sup>				1280
1914 <sup>10</sup>				1557
1915 <sup>11</sup>				1573
1916 <sup>12</sup>	150	773	859	1632
1987 <sup>13</sup>	523			2120

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 200 կարտիկանցիներից 96-ը զոհվել է<sup>14</sup>:

**Գպրոց.** Կարտիկանի եկեղեցական-ծխական դպրոցի հիմնադրման ստույգ տարեթիվն անհայտ է: 1891 թ. այս դպրոցում ուսանել են ոչ միայն Կարտիկանի, այլ նաև հարևան գյուղերի կաթոլիկ և առաքելական ծնողների զավակները<sup>15</sup>: 1910 թ. կատարվել է դպրոցական նոր շենքի հիմնադրումը<sup>16</sup>: 1916 թ. հիշյալ դպրոցը եղել է արական՝ 43 աշակերտով<sup>17</sup>, կրոնուսույցն էր Տեր-Միքայել Բոթանճյանը<sup>18</sup>:

**Սր. Աստվածածին (Վերափոխման Սր. Աստվածածնի) հայ-կաթոլիկ եկեղեցի.** հիմնադրվել է 1843 թ., բայց հետագայում մի քանի անգամ նորոգվել. «Ժողովրդապետական քարաշեն եկեղեցի, յանուն սր. Աստուածածնի, 1843 ամի, ծախսիք ծխակա-

նաց, վերանորոգեալ յամի 1908»<sup>19</sup>: Հայտնի է, որ 1895 թ. ապրիլի 9-ին եկեղեցին փակվել է ծայրահեղ և վտանգավոր կերպով քայքայված լինելու պատճառով<sup>20</sup>: Ստեղծված կացության մասին անմիջապես իրազեկում են Այսրկովկասի Հայ-կաթոլիկ վարչությանը<sup>21</sup>:

1896 թ. ապրիլի 28-ին ճարտ. Լ. Կրոպինսկին Կարտիկանի եկեղեցու վերակացու Հակոբ քահանա Իգիթխանյանցի և տանուտիրոջ օգնական Հակոբ Ղուլախսագյանցի ներկայությամբ արձանագրություն է կազմում այն մասին, որ եկեղեցու փայտակերտ սյուներն ու հատկապես թեքված պատերն այլևս ի զորու չէին իրենց վրա պահելու բավականաչափ ծանր, հողածածկ տանիքը, որի պատճառով էլ եկեղեցու փակումը դրական է գնահատվել, իսկ մինչև նոր եկեղեցի կառուցելը որոշվում է ժամասացությունը կատարել դպրոցի շենքում<sup>22</sup>:

1897 թ. մայիսի 10-ին հոգևոր վարչությանն ուղղված դիմումով թույլտվություն էր խնդրվում «ի հիման է նոր եկեղեցի» կառուցելու համար<sup>23</sup>:

Վերջապես 1900 թ. օգոստոսի 8-ին ՆԳ նախարարությունը տալիս է իր համաձայնությունը եկեղեցու կառուցման համար՝ պայմանով, որ շինարարական ծախսերը պետք է հոգային բացառապես տեղի հայ-կաթոլիկները<sup>24</sup>: 1906 թ. ձգձգվող շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու ակնկալիքով թույլատրվել է Տիրասպոլի հռոմեադավան կաթոլիկների շրջանում մինչև 4000 ռ. գումարի չափով հանգանակություն կատարել<sup>25</sup>:

Հայտնի վերջին նորոգումներից մեկը (ծածկերի նորոգությունը) իրականացվել է 1916 թ.<sup>26</sup>:

5 «Գյրջոսեթանոս յոջոյոյոս ճոջո ճոջո», էջ 230-231:

6 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

7 «Кавказ», 1891, № 241.

8 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 41:

9 **Յակոբյան Պ.**, Հրաւեր ողջմտութեան, էջ 95:

10 «Кавказский календарь на 1915 г.», էջ 137:

11 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:

12 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 65, ք. 36:

13 Ըստ գյուղատիրոջի տվյալների:

14 **Գավթյան Ա.**, Ջավախք, էջ 101:

15 «Кавказ», 1891, № 241:

16 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83:

17 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 65, ք. 36-37:

18 «Тифлисский Листок», 1910, № 140, էջ 3:

19 «Օրացոյց և պատկեր տօնից», նույն տեղում: Տե՛ս նաև՝ «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

20 ՎԱԳ, ֆ. 204, ց. 1, գ. 981, ք. 1:

21 Նույն տեղում, ք. 3:

22 Նույն տեղում, ք. 6:


23 Նույն տեղում, ք. 7:

24 Նույն տեղում, ք. 25: Տե՛ս նաև՝ «Кавказ», 1900, № 206, էջ 3:

25 «Кавказ», 1908, № 99, էջ 2:

26 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 55, ք. 12:





ԿԱՐՏԻԿԱՍ. ԺԵ-ԺԶ դարերի ամբողջական և բեկորված խաչքարեր Կարտիկամի հայոց միջնադարյան գերեզմանոցում

*Քահանա.* 1915 թ. գյուղի ծխատեր քահանայի պաշտոնը վարում էր փոխավագ քահանա Տեր Միքայել Զոթանճյանը<sup>27</sup>:

**Խաչքարերով գերեզմանոց.** Կարտիկամում հատկապես ուշագրավ է եկեղեցուց հագիվ 60 մ հյուսիս-արևելք տարածված, ներկայումս Գումանյանների տնամերձ հողամասի սահմաններում ընդգրկված գյուղի հայոց միջնադարյան գերեզմանոցը, որտեղ պահպանված մի քանի խաչքարերն ու դրանց բեկորները քվագրվում են ԺԵ-ԺԶ դարերով: Հնավայրում պահպանված խաչքարերը, բացառությամբ մեկի, որը նաև արձանագիր է, տեղահան են ու կտորատ-

ված: Ուշագրավ է 170 x 100 x 46 սմ չափերով մի խաչքար, որի ստորին մասում կա հեծյալի պատկերաբանդակ: Գեղաբանդակ խաչքարի մեկ այլ բեկորունի 87 x 80 x 16 սմ չափեր: Հնավայրում կան նաև խոյածև տապանաքարեր:

Խաչքար (չափերն են՝ 200 x 120 x 24 սմ). արևմտահայաց երեսին՝ 9 տող.


ԵՍ ԽԻՄՇԻ ԱՂԵՍ | ԿԱՆԿՆԵՅԻ ՋԵԱԶՍ ՅԻՇ|ԱՏԱԿ ՋԱՀԱՆՇԻՆ, ԴՈՒՄ|ԱՅԵԱԹԻՆ, ՈՍԿԻԾԱՄԻՆ, | ՍՈՒՐԱՅԳԻՆ, ՍԻՐԱՔԻՆ, ԹԱՅԻԲԻՆ, | ԲՈՒԴԱԽԻՆ, ԵԶԴԱՏ|ԱՂԵՍԻՆ, ՋԱՄԲԱ|ՇԵՍԻՆ, ՍԻՍԵ|ՈՆԻՆ. ԹՎ(ԻՆ) ՋԾԱ (1502):

Հրատ. Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, էջ 11:

27 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:



**Գորգաշեն գյուղատեղի.** գտնվում է գյուղի մերձակայքում<sup>28</sup>:



*ԿԱՐՏԻԿԱՄ. խաչքար 1502 թ.*

<sup>28</sup> Զեյթունցի Ե., նշվ. աշխ., էջ 108:

## ԿՈԹԵԼԻԱ

**Տեղադրություն.** Ախալքալաքից ուղիղ գծով 12 կմ հյուսիս, Ախալքալաք-Բակուրիան մայրուղում, ծ. մ. 1700 մ միջին բարձրությամբ հարթավայրում տարածվում է Կոթելիա գյուղը:

**Պատմություն.** գիտական գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ հայ մատենագրության մեջ բազմիցս հիշատակվող վրաց կաթողիկոս Կյուրիոնի ծննդավայր Սկուտրին համապատասխանում է ներկայիս Կոթելիային. «Այժմ Ջավախքում «Սկուտրի» անունով գյուղ չկա, բայց կա «Կոտելիա», որ գուցե նույն [Ս]կո[ւ]տրի»-ի հետագա ձևափոխությունը լինի: Ի դեպ, Կյուրիոնը, իբրև թունդ քաղկեդոնիկ, հայ հակաքաղկեդոնիկների ատելությանն էր արժանացել այն աստիճանի, որ նույնիսկ Սկուտրի գյուղից նրա ծագումը նմանեցնելով Սկարիոպտացի Հուդային էր հիշեցրել: Եվ միանգամայն հասկանալի է Ուլտանեսի հետևյալ բնորոշումը, որ նա տալիս է Կյուրիոնին<sup>1</sup>. «գոր մերժեալ և հերձեալ հեռացոյց [զՎիրս] ի մենջ Կիրիոն Սկուրտացի՝ հանգոյն և հաւասար լեալ Յուդայի Սկարովտացոյ...»<sup>2</sup>:

Միջնադարում Կոթելիան ունեցել է նաև հայ բնակչություն: Այդ է վկայում գյուղում պահպանված հայերեն արձանագրությամբ խաչքարը. «Կոթելիայում կա 2 գերեզմանոց: Հինը մահմեդական է: Անմշակ տապանաքարերի մեջ կա մի մշակված քար՝ խաչով և հայերեն արձանագրությամբ... Սա շատ հետաքրքրական է...: Վնասված հայերեն արձանագրությունը տեղում ընթերցել չկարողացա: Կատարված լուսանկարը չափազանց անհաջող ստացվեց»<sup>3</sup>:

1595 թ. գյուղանվան հիշատակությանը հանդիպում ենք թուրքական հայտնի հարկացուցակում՝ 3 տուն բնակչով և 10000 ակչե հարկաչափով<sup>4</sup>, իսկ

1718-1719 թթ.՝ տանուտեր Հալիլ Աբդուլլահի կառավարման ժամանակ, գյուղից հարկվել է 3333 ակչե<sup>5</sup>:

1810 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կոթելիան նույնպես հայտնվել էր ռազմական գործողությունների թատերաբեմում: Երբ Ախալքալաքի Շերիֆ փաշան Ջավախքի մեծամասնություն կազմող քրիստոնյա ողջ բնակչությանը հրամայում է անցնել Կուր գետի մյուս կողմը, վերջիններս օգնություն խնդրելով ռուսներից՝ հայտնում են, որ եթե շուտափույթ օգնություն հասցվի, իրենք թուրքերի հետ չեն գաղթի և կմիանան ռուսներին թուրքերի դեմ մղվող պայքարում: Ապավինելով ռուսական կողմի խոստումներին՝ շատերը, մասնավորապես Կոթելիա գյուղի բնակիչները, մնում են հայրենի գյուղում, սակայն թալանվում են և լքվում իրենց իսկ պաշտպանության համար գյուղում գտնվող վրացական միլիցիայի կողմից<sup>6</sup>:

1811-12 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կոթելիացիները (57 տուն) միառժամանակ հանգրվանել են Թիֆլիսի մոտ գտնվող Լիլո գյուղում<sup>7</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով Կոթելիա գյուղի 78 տներից քանդվել էր միայն մեկը<sup>8</sup>:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Կոթելիայի գյուղատնտեսությունը հայտնվել է դժվարին կացության մեջ՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով աղետից տուժած երկրորդ կարգի բնակավայրերի շարքում<sup>9</sup>:

**Վիճակագրություն.** գուտ վրացաբնակ Կոթելիա գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալներն են.

1 Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 17:

2 Ուլտանես Կալկադոս, Պատմություն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 35: Կյուրիոնի ծննդավայր Սկուտրի գյուղը հիշատակում է նաև Վարդան Արևելցին. «...որ և զԿիրոն, որ էր ազգաւ Ջաւախաց ի գեղջէ Սկուտրի, և գիտեր դպրութիւն հայ և վրացի, ձեռնադրեաց Վրաց կաթողիկոս, որ եղև յետոյ քաղկեդոնիկ» (Վարդան, էջ 58):

3 Զերժենցիցոզո Ե., նշվ. աշխ., էջ 142:

4 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, էջ 193:

5 “ჩივდორის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.”, էջ 158:

6 “Акты собранные Кавказского археографическою комиссиею” (այսուհետև՝ АКАК), т. IV, Тифлис, 1870, էջ 805:

7 Նույն տեղում, էջ 18: Տե՛ս նաև՝ Լոմսեճե Զ., նշվ. աշխ., էջ 326:

8 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

9 Մալխանյան, Ամերիկայից ներմուծվող Ախալքալաքի գառառում եւ նրա հետևանքները, էջ 248:





## ԿՈԿԻԱ



ԿՈԿԻԱ. գյուղի տեսքը հս-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 18 կմ հյուսիս-արևմուտք, ծ. մ. 1760-1820 մ հարավարևելահայաց լեռնապարի արգավանդ ու բարեբեր ստորոտում:

**Պատմություն.** Կոկիայի հյուսիսարևմտյան եզրին տարածված ԺԵ-ԺԶ դարերով թվագրվող խաչքարերով հարուստ հայոց ընդարձակ գերեզմանատունը վկայում է առնվազն նշված ժամանակաշրջանում գյուղի հայաբնակ ու շեն լինելը: 1595 թ. գյուղն ունեցել է 18 տուն, իսկ կառավարությանը վճարել 15.000 ակչե հարկ<sup>1</sup>: Ամենայն հավանականությամբ, ինչպես երկրամասի շատ այլ բնակավայրերի բնակիչները, Կոկիայի հայերի մի մասը մույնպես մահմեդականություն էր ընդունել ԺԷ դարի առաջին կեսին, սակայն տարանցիկ հարմար դիրքի շնորհիվ շարունակել է պահպանել գավառի գլխավոր բնակավայրերից մեկի իր կարգավիճակը:

1745 թ. մի վկայության համաձայն՝ Կոկիան բավականին բազմամարդ ու վաճառաշահ բնակավայր էր. «...Գոկիան փոքր քաղաք է, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները...»<sup>2</sup>:

1755 թ. մեկ այլ վկայության համաձայն՝ Կոկիան ավերել ու թալանել էին լեզգիները. «...լեզգիներն ավերում են թուրքական հողը, ավերել են Գոկիան (Կոկիան) և Բարալեթը, քրիստոնյաներին թալանում են և գերի տանում...»<sup>3</sup>:

Ավելի ուշ գյուղն արձանագրվել է որպես թրքաբնակ: Հայտնի է, որ 1870-ական թթ. գյուղի կալվածատերն էր Քեմել օղլին, որի կալվածքը կազմում էր 800 դեսյատին<sup>4</sup>:

**Բնակչություն.** 1914 թ. զուտ թրքաբնակ կամ թրքացած բնակչություն ունեցող Կոկիան ունեցել է 511 շունչ<sup>5</sup>: Ներկայիս բնակիչները վկայում են, որ թուրքերը հայրենի գյուղում ապրել են մինչև 1924 թ., երբ, բացառությամբ 5 «աղաների», նրանց սեռագույն մասը գաղթել է Թուրքիա, մինչդեռ Ն. Բերձենիշվիլին նշել է, թե թուրքերի հիմնական մասի գաղթը տեղի է ունեցել 1918 թ.: Հայտնի է, որ 1924 թ. Կոկիայում հաստատվել են օսեր, որոնց մեծ մասը գյուղը լքել է 4 տարի անց<sup>6</sup>: 1927-28 թթ. Կոկիայում

3 Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 108:

4 «Մեղու Հայաստանի», 1873, № 6, էջ 3:

5 «Кавказский календарь на 1915 г.», էջ 144:

6 1933 թ. Կոկիայում դեռևս բնակվում էին 2-3 տուն օսեր, (Նյու-Ջերսիի Պրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Ե. Բ. Մեյեր, «Նյու-Ջերսիի Պրինսթոնի համալսարանի տարեգրք», 1933, հ. 155), որոնք հետագայում մույնպես հեռացան գյուղից:

1 «გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი», էջ 191-192:



2 Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 84: Տե՛ս նաև՝ Գաբրիել Զեյնաբեկյան, Նախա-օսերը և օսերը, Երևան, 1997, էջ 131:

բնակություն են հաստատել Ծաղկայի շրջանի Խաչ, Ղարուռ և Աշխալա գյուղերից փոխադրված հայ ընտանիքներ, ինչպես նաև վրացիներ և վրացախոս հայ-կաթողիկներ Ախալցխայի Անդրիա-ծմինդա, Ջավախքի Գոգաշեն և Ասպինձայի շրջանի Խզաբավրա գյուղերից: Հայտնի է նաև, որ դեռևս 1930-ական թթ. Կոկիան ունեցել է նաև 2-3 տուն հույն բնակիչներ, որոնք ժամանակի ընթացքում փոխադրվել են Ցիխիսջվարի և Ախալցխա (վերջին հույն ընտանիքը գյուղը լքել է 1952 թ.): Ինչ վերաբերում է թուրք «աղաներին», ապա վերջիններս 1944 թ. արքայից են Ալթայի երկրամաս: 1940-ական թթ. վերջերին Կոկիան ունեցել է շուրջ 50 տուն հայ և 30 տուն վրացի բնակիչ: Հետպատերազմյան տարիներին վրացիների մեծ մասը փոխադրվել է թուրքերին արքայից հետևանքով անբնակ դարձած Ադիգենի շրջանի այգեվետ ու բարեբեր գյուղերը (արտոնություն, որից զուրկ մնացին հայերը): Դրա հետևանքով Կոկիայում վրացիների թվաքանակը խիստ նվազեց, որին և հետևեց վրացական դպրոցի փակումը<sup>7</sup>: Ուշագրավ է, որ արդեն 1930-ական թթ. բազմազգ բնակչություն ունեցող Կոկիայում գերիշխող խոսակցական լեզուն թուրքերենի փոխարեն դարձել էր հայերենը<sup>8</sup>: 1987 թ. գրեթե զուտ հայաբնակ Կոկիան ուներ 119 տուն, 564 շունչ<sup>9</sup>:

Հայտնի է, որ 1989 թ. վրացական իշխանությունները Կոկիայում ևս փորձել են աջարցի վերաբնակիչների համար բնակելի տներ կառուցել, բայց ծրագիրը հենց սկզբից հանդիպել է տեղի հայերի դիմադրությանն ու ձախողվել<sup>10</sup>:

2001 թ. գյուղի 120 տուն բնակիչներից 116-ը հայեր էին<sup>11</sup>, 4-ը՝ վրացիներ, իսկ 2004-ին 110-ը՝ հայ, 5-ը՝ վրացի<sup>12</sup>:

**Եկեղեցի.** Կոկիայում և մերձակայքում գոյություն են ունեցել 7 ավերակ եկեղեցիներ<sup>13</sup>: Դրանցից մեկը, որը գտնվում է գյուղի արևմտյան եզրին, տեղաբնակներին հայտնի է «Յամաջի ժամ» անվամբ և գրեթե ավերակ է: Պահպանված ճարտարապետական բեկորների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ եկեղեցին կառուցված է եղել համակ սրբատաշ քարով (արտաքին



7 Գյուղի նոր շրջանի պատմության վերաբերյալ մեզ տրամադրած տեղեկությունների համար շնորհակալություն ենք հայտնում ծնունդով կոկիացի (1928 թ.) Լուսիկ Աբգարի Հակոբյանին: Ի դեպ, ոմն Մայիսուրաձե նշել է, թե մինչև 1971 թ. Կոկիայում բնակվելիս են եղել 85 տուն վրացիներ, բայց նրանք իբրև թե չեն դիմացել Ջավախքի հայկական միջավայրին և 5 տարվա մեջ (1971-1976 թթ.) փտարվել են գյուղից... (Յոսեֆ-Քաձե յ. ჯავახეთში ქართველი სკოლები იხურება, “Georgian Times”, 17-24.06.2004, № 24):

8 Զեքեյան Յուզուբ Ն., նույն տեղում:

9 Ըստ գյուղխորհրդի տվյալների:


10 Յոսեֆ-Քաձե յ., նույն տեղում:

11 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

12 Յոսեֆ-Քաձե յ., նույն տեղում:

13 Ростовов И., նշվ. աշխ., էջ 54:

ԿՈԿԻԱ. «Յամաջի ժամ» եկեղեցու տեսքը ամ-ից, հս և հր կողմերի որմնասյուների հիմնահատվածները և հատակագիծը




*ԿՈԿԻԱ. «Յամաջի ժամ» եկեղեցու շուրջ տարածված միջնադարյան բազմաշերտ գերեզմանոցը (պահպանվել են մինչև ԺԱ դարի քառակող կործողների պատվանդաններ, ինչպես նաև ժամանակաշրջանային խիստ լայն ընդգրկում ունեցող մեծաթիվ սալատապաններ, նաև ձիակերպ և խոյածև տապանաքարեր*

չափերն են՝ 11,0 x 7,0 մ): Կարելի է ենթադրել, որ եկեղեցին ի սկզբանե հունաժես էր, սակայն ոչ հենու տարածված ԺԵ-ԺԶ դարերի հայոց գերեզմա-

նատան առկայությունը հուշում է, որ այն ևս առնվազն նշված դարերում գործել է որպես հայառաքելական:






ԿՈԿԻԱ. հատված «Շտաբի ժամ» եկեղեցուց, որը մի քանի տարի առաջ կամայաբար պեղել է գյուղի վրացի բնակիչներից մեկը, և հատակագիծը

Գյուղամիջում պահպանվել են կոփածո քարից (սրբատաշ են միայն անկյունաքարերը), եռանակ եկեղեցու հիմնապատերը (արտաքին չափերն են՝ 11,20 x 8,80 մ): Եկեղեցին տեղացիներին հայտնի է «Շտաբի ժամ» անվամբ: Ըստ կառուցողական և հորինվածքային առանձնահատկությունների եկեղեցին կարելի է թվագրել ԺԳ-ԺԴ դարերով: Շուրջը տարածված ընդարձակ գերեզմանոցում պահպանված տապանաքարերը վերաբերում են ԺԳ-ԺԸ դարերին: Ուշագրավ են հատկապես կենցաղային պատկերաբանդակներով հարդարված տապանաքարերը:

**Գերեզմանոց.** տեղում պահպանվել են սալատապաններ, ձիակերպ, խոյաձև տապանաքարեր, խաչքարերի պատվանդաններ և խաչքարեր, որոնցից մեկն արձանագիր է.


Խաչքար (չափերն են՝ 125 x 90 x 22 սմ), 4 տող.  
Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ | Է Խ(Ա)ՉՍ | ՄԻՐԶ|ԻՆ:  
Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 10:

**«Կաթրուբան» գյուղատեղի.** գտնվում է գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք:



1595 թ. թուրքական կառավարության կազմած հարկացուցակում երբեմնի գյուղը նշվում է որպես ռայաներից ազատ և 3000 ակչե հարկվող գյուղ<sup>14</sup>:

<sup>14</sup> «Զըբճիսեթանոս շոջաթոս ճոջո ճաթարո», էջ 208:



*ԿՈԿԻԱ. գյուղամիջի գերեզմանոցում պահպանված խաչքարեր (ԺԵ-ԺԶ դարեր) և տապանաքարեր, որոնց թվում նաև, ըստ ամենայնի, եբրայերեն արձանագրությամբ մեկ շիրմաքար*

Հայտնի է նաև, որ 1706-1707 թթ.՝ տանուտեր Մուստաֆայի օրոք, Կալթուրանը պետական գանձարան է մուծել 6.000 ակչե<sup>15</sup>:

<sup>15</sup> «Ֆիզլդորիս յոալլեյոս ջճա ճալեոարի 1694-1732 ՎՎ.», էջ 124:


*Եկեղեցի.* հնավայրի միանավ հորինվածքով, խոշոր ժայռաբեկորներով (առանց կրաշաղախի) կառուցված եկեղեցուց (արտաքին չափերն են՝ 11,70 x 7,0 մ) պահպանվել են միայն պատերը՝ մինչև 1,5 մ բարձրությամբ: Հորինվածքային և կա-



*ԿՈԿԻԱ. ձիակերպ և խոյածև տապանաքարեր*

ռուցողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եկեղեցին թվագրել Ե-Ձ դարերով:

**Այլ հուշարձաններ.** ավերակ եկեղեցիներ են պահպանվել նաև Կոկիայի մերձակայքում գտնվող «Չիարաթ», «Տարբողոզ», «Միրթազին չայիր» և «Չաթալ դոյան» հնավայրերում:



*ԿՈԿԻԱ. «Կարթուբան» գյուղատեղիի եկեղեցու ավերակները հր-ամ-ից, հս-ամ-ից, ներքին տեսքը դեպի ալ և հաստակագիծը*

## ԿՈՐԻՏ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 5 կմ հյուսիս, Փարվանա գետի և Արակովա վտակի միախառնման տեղում, ծ. մ. 1680 մ միջին բարձրությամբ հարթավայրում:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. թուրքական կառավարության կազմած հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 19 տուն, հարկվել է 12.000 ակչե<sup>1</sup>: Ուշագրավ է, որ Կորխի գրեթե բոլոր տնատերերը կրում էին հայկական կամ հայոց շրջանում լայն տարածում ստացած անձնանուններ (օրինակ՝ Աթաբեկ, Կիրակոս, Գոզալ, Գոզալի որդի Կիրակոս, Մկրտիչ, Խոցադեղ, Սարգսի որդի Հովհաննես, Սարգիս, Աստվածատուրի որդի Կիրակոս):

Հայտնի է, որ 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով Կորխի բնակելի 84 տներից 7-ը քանդվել է<sup>2</sup>, և գյուղը հայտնվել է 1901 թ. կազմված Ջավախքի կարիքավոր գյուղերի ցուցակում<sup>3</sup>:

Կորխի գյուղատնտեսությունը լուրջ վնաս է կրել նաև 1899-1900 թթ. հացի բզեզից և հոտենտոտյան մլուխից: Աղետի հետևանքների թուլացման նպատակով ստեղծված կառավարական կոմիտեի կողմից օրհասական վիճակում հայտնված գյուղը մտցվել է առավել տուժած բնակավայրերի շարքը<sup>4</sup>: Գյուղում հաշվառվել է առաջնահերթ օգնության կարոտ 49 տուն՝ 187 բնակչով<sup>5</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիների մեծ մասը 25 տուն (270 շունչ) 1830 թ. փոխադրվել է Էրզրումի նահանգի համանուն գավառի Երկան Մանսուր գյուղից<sup>6</sup>: Վերաբնակիչների հաստատման պահին Կորխն ունեցել է նաև 12 տուն բնիկ հայ բնակչություն:

Ինչպես կարելի է նկատել ԺԹ-ի դարերի ընթացքում Կորխի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալների համադրմամբ

ստեղծված աղյուսակից, 1845-47, 1876-77, 1891-92 և 1912 թվականներին տեղի է ունեցել բնակչության նվազում: Դրանցից առաջինը պայմանավորված է եղել համազրուղացիների մի մասի՝ Ծաղկայի շրջան փոխադրվելու հետ, որտեղ մի ավերակ գյուղատեղիի տարածքում նրանք հիմնել էին Նոր-Կորխ անվամբ գյուղը<sup>7</sup>: Երկրորդ նվազման դրոշմատճառները մեզ անհայտ են: Բնակչության թվաքանակի երրորդ նվազման պատճառը 1892 թ. բռնկված համաճարակն էր: Ինչ վերաբերում է վերջինին, ապա դա տեղի է ունեցել 1907 թ. Կորխից հեռացած այն ընտանիքների հաշվին, որոնք հիմնել էին Թոթխամ գյուղը և, պայմանավորված 1912 թ. առանձին գյուղի կարգավիճակ ստանալու հետ, հանվել էին Կորխի բնակչության ընդհանուր թվից<sup>8</sup>:

*Վիճակագրություն.* ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>9</sup>		143	299	442
1840 <sup>10</sup>		258	235	493
1841 <sup>11</sup>		244	253	497
1842 <sup>12</sup>		251	249	500
1844 <sup>13</sup>		270	261	531
1845 <sup>14</sup>		274	270	544
1847 <sup>15</sup>		185	190	375
1849 <sup>16</sup>		192	203	395
1853 <sup>17</sup>		210	228	438
1854 <sup>18</sup>		220	223	443

7 Արդեն 1847 թ. Նոր-Կորխն ուներ 176 (92 ար., 84 իգ.) բնակիչ (ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, ք. 32-33): Ի դեպ, ընդամենը մի քանի տարի անց՝ 1852 թ., Նոր-Կորխում հաստատված գյուղացիները լքում են նաև վերջինս և փոխադրվում Օլավեր ավերակ գյուղատեղին, շենացնում (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 3436, ք. 8):

8 Ավելի մանրամասն տես՝ Թոթխամ գյուղի բաժինը (սույն աշխ., էջ 205):

9 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, ք. 7-8:

10 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:

11 Նույն տեղում, գ. 3802, ք. 65:

12 Նույն տեղում, գ. 3805, ք. 78:

13 Նույն տեղում, գ. 3809, ք. 15:

14 Նույն տեղում, գ. 3811, ք. 71-72:

15 Նույն տեղում, գ. 3814, ք. 35:

16 Նույն տեղում, գ. 3818, ք. 40:

17 Նույն տեղում, գ. 2743, ք. 38-39:

18 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:

1 Յ. Գրիգորյանի «Յոթնամյակի ճակատագրի», էջ 221:

2 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

3 «Մշակ», 1901, № 40, էջ 1:

4 **Մայիլանան.** Անբերրիությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեանքները, էջ 248:

5 Նույն տեղում, էջ 249:

6 Երկան Մանսուրը (այժմ՝ Çayköy) հայաբնակ գյուղ էր՝ Կարինի (Էրզրում) քաղաքից 36 կմ արևմուտք, Եփրատ գետի աջ կողմում: Տես՝ **Մուրադյան Ռ., Վանատուր Վ.**, նշվ. աշխ., էջ 24:

1857 <sup>19</sup>		260	234	494
1860 <sup>20</sup>		277	205	482
1861 <sup>21</sup>		281	246	527
1862 <sup>22</sup>		280	242	522
1863 <sup>23</sup>		291	258	549
1864 <sup>24</sup>		309	262	571
1865 <sup>25</sup>		308	267	575
1866 <sup>26</sup>	49	308	267	575
1867 <sup>27</sup>		338	280	618
1868 <sup>28</sup>		346	288	634
1869 <sup>29</sup>		359	297	656
1870 <sup>30</sup>		367	302	669
1871 <sup>31</sup>		368	306	674
1872 <sup>32</sup>		376	312	688
1873 <sup>33</sup>		368	319	687
1874 <sup>34</sup>				693
1875 <sup>35</sup>	50			698
1876 <sup>36</sup>		383	371	700
1877 <sup>37</sup>		285	225	510
1878 <sup>38</sup>		288	237	525
1880 <sup>39</sup>		302	245	547
1881 <sup>40</sup>		315	255	570
1882 <sup>41</sup>		324	266	590
1883 <sup>42</sup>		326	254	580
1884 <sup>43</sup>	60			
1886 <sup>44</sup>		336	259	595
1887 <sup>45</sup>		382	285	667
1889 <sup>46</sup>		386	301	687
1890 <sup>47</sup>		389	309	698
1891 <sup>48</sup>		411	322	733
1892 <sup>49</sup>		401	312	713
1893 <sup>50</sup>	78	404	313	717

19 Նույն տեղում, գ. 3830, ք. 54-55:  
 20 Նույն տեղում, գ. 3833, ք. 66:  
 21 Նույն տեղում, գ. 3839, ք. 24:  
 22 Նույն տեղում, գ. 3836, ք. 22:  
 23 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 24 Նույն տեղում, գ. 3846, ք. 10:  
 25 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-14:  
 26 Նշվ. գործը, ք. 74:  
 27 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 28 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 29 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 30 Նույն տեղում, գ. 3857, ք. 20:  
 31 Նույն տեղում, գ. 3858, ք. 10:  
 32 Նույն տեղում, գ. 3859, ք. 57:  
 33 Նույն տեղում, գ. 3868, ք. 71-72:  
 34 Նույն տեղում, գ. 3864, ք. 27:  
 35 Նույն տեղում, գ. 3866, ք. 21: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 36 ՀԱԲ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 31:  
 37 Նույն տեղում, գ. 3869, ք. 29:  
 38 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 39 Նույն տեղում, գ. 3872, ք. 88:  
 40 Նույն տեղում, գ. 3873, ք. 98:  
 41 Նույն տեղում, գ. 3874, ք. 45:  
 42 Նույն տեղում, գ. 3875, ք. 50:  
 43 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 44 ՀԱԲ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 12:  
 45 Նույն տեղում, գ. 3880, ք. 41-42:  
 46 Նույն տեղում, գ. 3884, ք. 66-67:  
 47 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:  
 48 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:  
 49 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:  
 50 Նույն տեղում, գ. 3895, ք. 124: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 793:


1894 <sup>51</sup>		390	314	704
1897 <sup>52</sup>		437	345	782
1898 <sup>53</sup>		456	367	823
1899 <sup>54</sup>	84	437	353	790
1900 <sup>55</sup>		470	369	839
1901 <sup>56</sup>		481	377	858
1902 <sup>57</sup>		483	383	866
1905 <sup>58</sup>		542	416	958
1908 <sup>59</sup>	109	571	455	1026
1910 <sup>60</sup>		576	469	1045
1912 <sup>61</sup>		598	491	1089
1914 <sup>62</sup>		524	490	1014
1916 <sup>63</sup>		538	494	1032
1917 <sup>64</sup>				1000
1918 <sup>65</sup>	120	520	475	995
1919 <sup>66</sup>				1159
1921 <sup>67</sup>		220	180	400
1987 <sup>68</sup>	312			1237

**Եկեղեցական-ժխական դպրոց.** կրթօջախի գործունեությունը սկիզբ է առել 1860-ականից.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>69</sup>		1	62
1875 <sup>70</sup>	նախակրթարան	Հ. Անանյանց	40
1876 <sup>71</sup>		1	23
1877 <sup>72</sup>		1	36
1878 <sup>73</sup>		1	31

**Խաչքարերով գերեզմանոց.** գյուղի հայոց միջնադարյան երբեմնի գերեզմանոցը տարածված է եղել եկեղեցու արևելյան կողմում: Ժամանակի ընթացքում հնավայրը քայքայվել ու լուծվել է ընդարձակված բնակելի թաղամասի մեջ: Այժմ առանձին գերեզմանական հուշարձաններ ու բեկորներ կարելի է տեսնել եկեղեցամերձ բնակելի տների տնա-

51 ՀԱԲ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 22:  
 52 ՀԱԲ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 145-146:  
 53 Նույն տեղում, գ. 3897, ք. 168:  
 54 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102: Նաև՝ «Մշակ», 1900, № 43, էջ 2:  
 55 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 56 Նույն տեղում, գ. 3906, ք. 69: Նույն թվականին, մեկ այլ տվյալի համաձայն, գյուղն ուներ 473 ար., 370 իգ. բնակիչ (ՀԱԲ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 139):  
 57 ՀԱԲ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 22-23:  
 58 Նույն տեղում, գ. 3912, ք. 265-266:  
 59 ՀԱԲ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 60 Նույն տեղում, գ. 3917, ք. 136-137:  
 61 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 62 ՀԱԲ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 177:  
 63 ՀԱԲ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 24:  
 64 ՀԱԲ, ֆ. 56, ց. 1, գ. 95, ք. 160:  
 65 ՀԱԲ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 66 ՀԱԲ, ֆ. 196, ց. 1, գ. 64, ք. 6:  
 67 ՀԱԲ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 68 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 69 ՀԱԲ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 70 ՀԱԲ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 42: Ի դեպ, դպրոցը գետեղված էր ուսուցչի՝ Հարություն Անանյանցի տանը:  
 71 Նույն տեղում, գ. 3850, ք. 52:  
 72 Նույն տեղում, ք. 130:  
 73 Նույն տեղում, ք. 178:



ԿՈՐԽ. խաչքար (1491 թ.)

ԿՈՐԽ. հատվածներ գյուղամիջի միջնադարյան գերեզմանոցից և խոյածև տապանաքար

մերձ հողաբաժինները միմյանցից առանձնացնող, քարաշեն պարսպապատերի մեջ, որտեղից էլ դուրս է բերվել 1491 թ. արձանագիր սույն խաչքարը.

Խաչքար (չափերն են՝ 93 x 73 x 20 սմ), 3 տող.  
(ՅԻՇԱ)ՏԱԿ Է ԽԱՉՍ ՍԿԸՐ(Տ)ՉԻՆ, ԱԶԻԶ-  
ԽԱԹՈՒՆԻՆ, ԲԱՐՄ(ԻՆ), | ԹՎ(ԻՆ) | ՋԽ (1491):  
Հրատ. առաջին անգամ:



ԿՈՐԽ. Սր. Ստեփանոս եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ամ-ից, ամ-ից և ամ ճակատի խաչաքանդակը

**Սր. Ստեփանոս (Սր. Գրիգոր Լուսավորիչ) եկեղեցի.** Կորխում հաստատված կարմեցի հայ գաղթականները, ամենայն հավանականությամբ, հնի տեղում 1830-ականին կառուցել են քարաշեն, փայտածածկ մի եկեղեցի, որը 1839 թ. հիշվում է Սր. Գրիգոր Լուսավորիչ<sup>74</sup>, իսկ 1840-ին՝ Սր. Ստեփանոս<sup>75</sup> անվամբ: Հետևում է, որ 1839-40 թթ. միջակայքում կատարվել են եկեղեցու կառուցման կամ նորոգման աշխատանքներ: Սակայն շուտով խիստ սուղ միջոցներով կառուցված այդ եկեղեցին հիմնավորապես վերաշինելու կարիք էր զգացվել: Ուշագրավ է, որ նոր եկեղեցին կորխեցիները կառուցել են առանց հոգևոր իշխանության գիտու-

թյան և միայն ավարտից հետո՝ 1848 թ., դիմել օժման խնդրանքով<sup>76</sup>: Հնի տեղում կառուցված հիշյալ նոր եկեղեցին նկարագրվել է այսպես. «...կառուցեալ են զփայտաշէն միջաստիւման եկեղեցիս, որոց որմունքն են քարեայ և ծածկքն փայտեայ...»<sup>77</sup>:

1884 թ. եկեղեցին արդեն ենթակա էր նորոգման<sup>78</sup>:

Հավանաբար հենց այս շրջանում կատարված նորոգության մասին է պատմում հարավային ճակատի արևելյան անկյունաքարին պահպանված արձանագրությունը.


74 Նույն տեղում, գ. 457, ք. 42-67:

75 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:

76 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 5, ք. 5:

77 Նույն տեղում:

78 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:



*ԿՈՐԻՆ. Սր. Ստեփանոս եկեղեցու նորոգության մասին պատմող արձանագրությունը (1890 թ.), սրբատեղի և վաղ միջնադարյան եկեղեցու քիվարեկոր սրբատեղի-մատուռի պատի մեջ*



*ԿՈՐԻՆ. նորակառույց եկեղեցու տեսքը հս-ամ-ից*

Արձանագրություն, 2 տող.

**ԱՅՍ ԵՐԵԿ ՊԱՏԻ ՍԻԴԻՍԸ ԱԲՐԵԱՍ | ԱՎԱԶԵԱՆՅԻ ԻՇԱՍ(Ա)ԿՆ Է, 1890-ԻՆ:**

Հրատ. առաջին անգամ:

Ցայժմ Սր. Ստեփանոս եկեղեցին կանգուն է, բայց ոչ միայն քայքայված, այլև վթարային դրության մեջ:

**Գերեզմանոց և եկեղեցի.** գյուղի գերեզմանատան հին մասում նկատելի են հիմնավեր եկեղեցու հետքեր:



ԿՈՒԼԻԿԱՍ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից 2 կմ հյուսիս-արևելք, Խուլգունոյին կից արևելքից, ծ. մ. 1680-1740 մ բարձրության վրա, ջրառատ Արլար վտակի աջ ու ձախ ափերին:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված թուրքական հարկացուցակի՝ գյուղն ունեցել է ընդամենը 1 տուն, սակայն հարկվել 14.000 ակչե<sup>1</sup>:

**Տնտեսական վիճակ.** գյուղը տնտեսական առավել բարվոք վիճակում էր մինչև 1860-ական թթ. վերջերը, որից հետո ենթարկվելով կալվածատերերի կեղեքումներին՝ հասել է աղքատության եզրին. «...Այս փոքրիկ գիւղը պատկանում է 4 հայ և թուրք կալուածատերերին, որոնք ամեն ջանք են թափում խլել խեղճ աշխատասէր գիւղացուց նրա վերջին օրական ապրուստը»<sup>2</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Էրզրումի նահանգի Սնկառիճ գյուղից<sup>3</sup>:

**Վիճակագրություն.** ԺԹ-ի դարերի ընթացքում բնակչության թվաքանակը շարունակաբար աճել է: Այդ երևույթն ակնառու է ստորև ներկայացվող աղյուսակում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>4</sup>		113	102	215
1840 <sup>5</sup>		108	105	213
1841 <sup>6</sup>		120	116	236
1842 <sup>7</sup>		126	120	246
1844 <sup>8</sup>		140	131	271
1845 <sup>9</sup>		143	135	278
1847 <sup>10</sup>		143	120	263
1849 <sup>11</sup>		154	129	283
1851 <sup>12</sup>	25	149	116	265

1853 <sup>13</sup>		156	133	289
1854 <sup>14</sup>		158	141	299
1857 <sup>15</sup>		172	138	310
1861 <sup>16</sup>		167	146	313
1862 <sup>17</sup>		169	149	318
1863 <sup>18</sup>		178	153	331
1864 <sup>19</sup>		180	156	336
1865 <sup>20</sup>		183	164	347
1866 <sup>21</sup>	30	183	164	347
1867 <sup>22</sup>		188	175	363
1868 <sup>23</sup>		198	181	379
1869 <sup>24</sup>		207	190	397
1870 <sup>25</sup>	30	205	197	402
1871 <sup>26</sup>		214	198	412
1872 <sup>27</sup>		220	205	425
1873 <sup>28</sup>		229	260	489
1874 <sup>29</sup>				454
1875 <sup>30</sup>				461
1876 <sup>31</sup>		252	228	480
1877 <sup>32</sup>		252	245	497
1878 <sup>33</sup>		261	253	514
1880 <sup>34</sup>		281	260	541
1881 <sup>35</sup>		289	265	554
1882 <sup>36</sup>		290	267	557
1883 <sup>37</sup>		294	259	553

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დაგთარი", էջ 224:

2 «Մշակ», 1877, № 11, էջ 2:

3 Սնկառիճը (այժմ՝ Adacıy) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 11 կմ հարավ-արևմուտք:

4 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, թ. 8-9:

5 Նույն տեղում, գ. 3800, թ. 4:

6 Նույն տեղում, գ. 3802, թ. 64:

7 Նույն տեղում, գ. 3805, թ. 78:

8 Նույն տեղում, գ. 3809, թ. 15:

9 Նույն տեղում, գ. 3811, թ. 72-73:

10 Նույն տեղում, գ. 3814, թ. 34:

11 Նույն տեղում, գ. 3818, թ. 39:

12 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 31:

13 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743 թ. 38-39:

14 Նույն տեղում, գ. 3825, թ. 47-48:

15 Նույն տեղում, գ. 3830, թ. 53-54:

16 Նույն տեղում, գ. 3839, թ. 26:

17 Նույն տեղում, գ. 3836, թ. 21

18 Նույն տեղում, գ. 3843, թ. 21-22:

19 Նույն տեղում, գ. 3846, թ. 10:

20 Նույն տեղում, գ. 3848, թ. 11-14:

21 Նույն տեղում, թ. 74:

22 Նույն տեղում, գ. 3851, թ. 21-22:

23 Նույն տեղում, գ. 3853, թ. 27:

24 Նույն տեղում, գ. 3856, թ. 10: Նաև՝ գ. 3855, թ. 6-7:

25 Նույն տեղում, գ. 3857, թ. 19-20:

26 Նույն տեղում, գ. 3858, թ. 10:

27 Նույն տեղում, գ. 3859, թ. 57:

28 Նույն տեղում, գ. 3862, թ. 71:

29 Նույն տեղում, գ. 3864, թ. 27:

30 Նույն տեղում, գ. 3866, թ. 20:

31 Նույն տեղում, գ. 3868, թ. 30-31:

32 Նույն տեղում, գ. 3869, թ. 28-29:

33 Նույն տեղում, գ. 3850, թ. 218-219:

34 Նույն տեղում, գ. 3872, թ. 88:

35 Նույն տեղում, գ. 3873, թ. 97:

36 Նույն տեղում, գ. 3874, թ. 44:

37 Նույն տեղում, գ. 3875, թ. 48-49:

1884 <sup>38</sup>	31			
1885 <sup>39</sup>		313	269	582
1887 <sup>40</sup>		349	293	642
1889 <sup>41</sup>		364	296	660
1890 <sup>42</sup>		374	303	677
1891 <sup>43</sup>		383	311	694
1892 <sup>44</sup>		390	314	704
1893 <sup>45</sup>		377	308	685
1894 <sup>46</sup>		379	324	703
1897 <sup>47</sup>		408	325	733
1898 <sup>48</sup>		417	333	750
1899 <sup>49</sup>		428	340	768
1900 <sup>50</sup>		435	348	783
1901 <sup>51</sup>		454	361	815
1902 <sup>52</sup>		475	370	845
1905 <sup>53</sup>		521	404	925
1907 <sup>54</sup>				900
1908 <sup>55</sup>	86	551	409	960
1910 <sup>56</sup>		562	451	1013
1912 <sup>57</sup>		580	500	1080
1914 <sup>58</sup>		600	524	1120
1916 <sup>59</sup>		600	531	1131
1918 <sup>60</sup>	130	575	500	1075
1921 <sup>61</sup>		200	175	375
1987 <sup>62</sup>	476			1436

**Չբաղմունք.** շնորհիվ բնակավայրի միջով հոսող ջրառատ Աբլար վտակի վրա կառուցված բազմաթիվ ջրաղացների՝ կուլիկանցիների համար ջրաղացականությունը համարվել է գլխավոր զբաղմունքներից մեկը. «Բնակիչները պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, բայց գլխատրապէս ջրաղացականութեամբ: Այս գիւղը



*ԿՈՒՆԻԿԱՍ. Սբ. Երրորդություն եկեղեցու տեսքը հր-ից և ամ-ից*


38 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 39 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 40 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 41 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 42 Նույն տեղում, գ. 3887, ք. 145:  
 43 Նույն տեղում, գ. 3889, ք. 114:  
 44 Նույն տեղում, գ. 3891, ք. 116:  
 45 Նույն տեղում, գ. 3895, ք. 120-121:  
 46 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 142-143:  
 48 Նույն տեղում, գ. 3897, ք. 165:  
 49 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 50 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 51 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 52 Նույն տեղում, գ. 3907, ք. 19-20:  
 53 Նույն տեղում, գ. 3912, ք. 262-263:  
 54 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 55 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 56 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 57 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 58 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 173-174: Ի դեպ, նույն թվականի համար այլ վավերագրերում ցույց է տրված 1121 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 147: Նաև՝ ՀԱԳ, ֆ. 196, գ. 1, գ. 64, ք. 6):  
 59 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 20-21:  
 60 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 61 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 62 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

նշանաւոր է իր սառը և քաղցր աղբիւրներով ու կարմրախայտ համեղ ձկներով...»<sup>63</sup>:

**Եկեղեցական-ձխական դպրոց.** հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Գործել է 1865 թ.՝ ունենալով 1 ուսուցիչ և 14 աշակերտ<sup>64</sup>: Հետագա տարիներին նյութական սղության պատճառով փակվել է:

**Սբ. Երրորդություն (Սբ. Կարապետ) եկեղեցի.** 1841 թ. Սբ. Կարապետ<sup>65</sup> անվամբ հիշվող եկեղեցին հետագա բոլոր տարիներին և մինչև խորհրդային կարգերի հաստատումը հայտնի էր Սբ. Երրորդություն անվամբ: 1870-ականին կուլիկանցիները ձեռնամուխ են եղել հնի տեղում եկեղեցու նոր շենք կառուցելու գործին, սակայն աշխատանքները ընդհատվել են նյութական սղության պատճառով. «...ունի մի հին քանդված եկեղեցի, որ գլխաղացիների բաղաձայն ժամանակը նորոգվեցաւ մինչև կէսը, բայց երբ բազմացան նրանց գլխին կալուածատէրերի ճնշումները,

63 Նույն տեղում:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 65 Նույն տեղում, գ. 3798:



ԿՈՒԽԻԿԱՍ. Խաչքար (ԺԵ դ.)՝ ագուցված Սբ. Երրորդություն (Սբ. Կարապետ) եկեղեցու արևելյան ճակատին

նրանք այլ ևս ոյժ չունեցան շարունակել իրանց տաճարի վերանորոգութեան գործը...»<sup>66</sup>: 1878 թ. մի վա-

66 «Մշակ», 1877, № 11, էջ 2:

վերագրում նշված է, թե Կուլիկանը գուրկ էր եկեղեցուց (նկատի է առնված ծխական եկեղեցի չլինելը)<sup>67</sup>: Այնուամենայնիվ, կուլիկամցիները կարողանում են ամբողջացնել շինարարությունը, և, օրինակ, 1884 թ. այն գործել է<sup>68</sup>:

Սբ. Երրորդություն եկեղեցին ցայժմ կանգուն է: Արևմտյան ճակտոնի գագաթին կառուցված է վեց միակտոր սյուների վրա բարձրացող զանգակատունը: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Եկեղեցու արևելյան ճակատին ագուցվել է գյուղի հայոց գերեզմանոցից տեղափոխված արձանագիր մի խաչքար:

Խաչքար (չափերն են՝ 100 x 75 սմ), ուղղահայաց եզրերին՝ կիսաեղծ 2 տող.

**ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ | (ՀԱ)ՅՐՆ՝ ՍՈՒՐԱԴԲ... ԾՆՈՂԻՆ...:**

Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 10: Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ դ.:

Արձանագիր քար, ագուցված Սբ. Երրորդություն եկեղեցու արևելյան պատին, հիշատակագիրը՝ վրաց մեսրոպատառ.

ՇԾԾ ՈԳՒԾ [-] ԿՏԿԵԴ

սճ(ո)ճ(յ) ճ(թյ)տո ճ [-] ցձձլոյ

Թարգմ. Աստված փառավորիր...:

Հրատ. առաջին անգամ:

**Գերեզմանոց.** պահպանվել են ԺԹ դարի շիրմաքարեր:

**Աբ (Աբլար)**<sup>69</sup> գյուղատեղի. գտնվում է Կուլիկամից հյուսիս-արևելք՝ 3 կմ հեռավորության վրա: Գրավոր աղբյուրներում միջնադարյան գյուղի մասին առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1595 թ.՝ որպես ուսյաներից ազատ և 2500 ակչե հարկ մուծող գյուղ<sup>70</sup>:



ԿՈՒԽԻԿԱՍ. Աբ (Աբլար) գյուղատեղիի եկեղեցու հատակագիծը

Տարածքում պահպանվել են կիսավեր, միանավ եկեղեցին (11,50 x 6,15 մ) և գերեզմանոցը: Վերջի-

67 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 206:

68 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

69 Աբ՝ թարգմ. քուր, արլար՝ ջրեր:

70 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი", էջ 233:



*ԿՈՒԼԻԿԱՄ. Աբ (Աբլար) գյուղատեղին հս-ալ-ից, հս-ամ-ից, եկեղեցու ներքին տեսքը դեպի ալ, հատվածներ ներքին ծավալներից, եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցն ու ձիակերպ տապանաքար*

նում առկա են քառակող կոթողների պատվանդաններ և խոյաձև տապանաքարեր:



տարեթիվ	տուն	արական	իգական	միասին					
1840 <sup>8</sup>		194	185	379	1881 <sup>38</sup>		543	464	1007
1841 <sup>9</sup>		184	188	372	1882 <sup>39</sup>		555	477	1032
1842 <sup>10</sup>		193	194	387	1883 <sup>40</sup>		550	469	1019
1844 <sup>11</sup>		212	209	421	1884 <sup>41</sup>	97			
1845 <sup>12</sup>		224	216	440	1885 <sup>42</sup>		578	486	1064
1847 <sup>13</sup>		233	214	447	1887 <sup>43</sup>		624	580	1204
1849 <sup>14</sup>		241	215	456	1889 <sup>44</sup>		654	608	1262
1851 <sup>15</sup>	63	238	217	455	1890 <sup>45</sup>		655	628	1283
1853 <sup>16</sup>		260	243	503	1891 <sup>46</sup>		677	648	1325
1854 <sup>17</sup>		263	247	510	1892 <sup>47</sup>		680	636	1316
1857 <sup>18</sup>		283	264	547	1893 <sup>48</sup>	120	689	644	1333
1860 <sup>19</sup>		294	269	563	1894 <sup>49</sup>		704	661	1365
1861 <sup>20</sup>		302	282	584	1897 <sup>50</sup>		729	679	1408
1862 <sup>21</sup>		310	281	591	1898 <sup>51</sup>		746	676	1422
1863 <sup>22</sup>		322	295	617	1899 <sup>52</sup>		770	694	1464
1864 <sup>23</sup>		328	302	630	1900 <sup>53</sup>		781	700	1481
1866 <sup>24</sup>	68	341	308	649	1901 <sup>54</sup>		810	729	1539
1867 <sup>25</sup>		380	328	709	1902 <sup>55</sup>		833	745	1578
1868 <sup>26</sup>		387	331	718	1905 <sup>56</sup>		863	783	1646
1869 <sup>27</sup>		398	337	735	1908 <sup>57</sup>	136	913	830	1743
1870 <sup>28</sup>		404	347	751	1910 <sup>58</sup>		960	898	1858
1871 <sup>29</sup>		418	359	777	1912 <sup>59</sup>		1013	944	1957
1872 <sup>30</sup>		425	384	809	1914 <sup>60</sup>		1069	987	2056
1873 <sup>31</sup>		433	393	826	1915 <sup>61</sup>	225			
1874 <sup>32</sup>				837	1916 <sup>62</sup>		1094	1009	2103
1875 <sup>33</sup>	100			813	1918 <sup>63</sup>	245	898	864	1762
1876 <sup>34</sup>		450	396	846	1921 <sup>64</sup>		257	260	517
1877 <sup>35</sup>		488	438	926	1987 <sup>65</sup>	584			2610
1878 <sup>36</sup>		501	440	941					
1880 <sup>37</sup>		526	460	986					

**Եկեղեցական-ծխական դպրոց.** ԺԹ-ի դարերի ընթացքում դպրոցի գործունեությունը լուսաբանող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

8 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:  
 9 Նույն տեղում, գ. 3802, ք. 64-65:  
 10 Նույն տեղում, գ. 3805, ք. 77:  
 11 Նույն տեղում, գ. 3809, ք. 13-14:  
 12 Նույն տեղում, գ. 3811, ք. 72-73:  
 13 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:  
 14 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:  
 15 Նույն տեղում, գ. 2596, ք. 36:  
 16 Նույն տեղում, գ. 2743 ք. 39-40:  
 17 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:  
 18 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:  
 19 Նույն տեղում, գ. 3833, ք. 66-67:  
 20 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:  
 21 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:  
 22 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 23 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:  
 24 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 25 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:  
 26 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 27 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 28 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 29 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
 30 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 31 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 32 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 33 Նույն տեղում, գ. 3866, ք. 19-20: Տե՛ս նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, էջ 2:  
 34 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:  
 35 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 36 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 37 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87: Ի դեպ, նույն քվին գյուղն այցելած Ի. Գվարամաձեն («Ոմն մեսխ») միանգամայն անհիմն կերպով հաղորդում է, որ գյուղում բնակվում էին մոտ 60 հոգի Կարինից փոխադրված հայեր: Տե՛ս **ՅԵՅԵՅԵՅԵՅԵՅԵ** օ. (ՅԵՅԵՅԵՅԵՅԵՅԵՅԵՅԵՅԵՅԵ), Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1880, № 196:

38 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, ք. 96-97:  
 39 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 40 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 41 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 42 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 43 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 44 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 45 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:  
 46 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:  
 47 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:  
 48 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 794:  
 49 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 167-168:  
 50 Նույն տեղում, գ. 3899, ք. 140-141:  
 51 Նույն տեղում, գ. 3897, ք. 162:  
 52 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 53 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 54 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 55 Նույն տեղում, գ. 3907, ք. 16-17:  
 56 Նույն տեղում, գ. 3912, ք. 259-260:  
 57 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 58 Նույն տեղում, գ. 3917, ք. 145-135:  
 59 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 60 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 170-171: Ի դեպ, նույն թվականի հասարակական ալմանախը նույն գյուղում գոյություն ունի 1710 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 113):  
 61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 897, ք. 3:  
 62 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 17-18:  
 63 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 64 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 65 Ըստ գյուղապետի տվյալների:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>66</sup>		1	61
1874 <sup>67</sup>		1	38
1875 <sup>68</sup>		1	49
1876 <sup>69</sup>		1	46
1877 <sup>70</sup>		1	49
1878 <sup>71</sup>		1	50
1880 <sup>72</sup>		1	50
1881 <sup>73</sup>		1	30
1882 <sup>74</sup>		1	31
1909 <sup>75</sup>		1	75
1910 <sup>76</sup>		1	41
1911 <sup>77</sup>	ուներ 3 բաժանմունք	1	41
1912 <sup>78</sup>		1	40
1914 <sup>79</sup>		1	65
1917 <sup>80</sup>	գործել է ԿՀԲԸ օժանդակությամբ		
2001 <sup>81</sup>	միջնակարգ		430

**Սբ. Համբարձման եկեղեցի.** Կոմսուրդոյում է գտնվում Ջավախքի առավել հայտնի ու ճարտարապետական բարձրարժեք, ի սկզբանե հունածես եկեղեցիներից մեկը՝ հիմնադրված 964 թ. Հովհաննես եպիսկոպոսի կողմից և օժված Սբ. Համբարձման անվամբ: Տաճարի կառուցման աշխատանքները շարունակվել են մինչև ԺԱ դարի առաջին քառորդը: Խաչաձև, կենտրոնագմբեթ եկեղեցին, որի մասին առկա են ճարտարապետական առանձնահատկություններին ու արժանիքներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ<sup>82</sup>, այժմ կիսավեր է (կործանված է գմբեթը և արևմտյան խաչաքևի ծածկը):

Եկեղեցու տարածքում պահպանված բեկորված խաչքարերը, որոնք փաստում են միջնադարում տեղում հայոց գերեզմանոցի գոյությունը, վերաբերում են առնվազն ԺԵ դարին և անուղակիորեն վկայում, որ Սբ. Համբարձման եկեղեցին արդեն այդ ժամանակաշրջանում օժված է եղել որպես հայ-առաքելական և գործել է ըստ այդմ:

1830-ական թվականներին հիմնավոր գյուղատեղիում հաստատված Կարնո նահանգի հայ գաղ-



ԿՈՒՄՈՒՐԴՈ. Սբ. Համբարձման եկեղեցու տեսքը հր-ալ-ից (2 նկար) և ալ-ից








թականները փառավոր տաճարը գտել են լքված ու կիսավեր: Նրանք այդ եկեղեցու արևմտյան խաչաքևի հատվածը, որից կանգուն էին մնացել միայն

66 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 2:  
 67 Նույն տեղում, գ. 3864, թ. 25-26:  
 68 Նույն տեղում, գ. 3866, թ. 19-20:  
 69 Նույն տեղում, գ. 3850, թ. 51: Տե՛ս նաև՝ գ. 3868, թ. 29-30:  
 70 Նույն տեղում, թ. 130: Տե՛ս նաև՝ գ. 3869, թ. 28-29:  
 71 Նույն տեղում, թ. 177:  
 72 Նույն տեղում, գ. 3872, թ. 86-87:  
 73 Նույն տեղում, գ. 3873 թ. 96-97:  
 74 Նույն տեղում, գ. 3874, թ. 42-43:  
 75 **Խորոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 516:  
 76 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 134-135:  
 77 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:  
 78 Նույն տեղում, գ. 3920, թ. 17-18:  
 79 **Խորոյան Ս.**, նույն տեղում:  
 80 “Армянский вестник”, 1917, № 35-36, էջ 21:  
 81 Ըստ դարոցի տնօրինության տրամադրած տվյալների:  
 82 **Северов Н., Чубинашвили Г.**, Кумордо и Никорциминда, Москва, 1947, էջ 5-16: **Չեթոթյե Յ.**, კუმურდოს ტაძარი 1000 წლისაა, “ძეგლის მგობარი”, 1964, № 2, էջ 25-27:



ԿՈՒՍՏՈՒՆՅԱՆ. Սր. Համբարձման եկեղեցու ներքին տեսքը, ԺԹ և Ի դարերում եկեղեցուն պահված մասունքները





ԿՈՒՄՈՒՐ-ԴՈ. Սբ. Համբարձման եկեղեցու ներքին տեսքը, հատակագիծը, հր, ալ և հս ճակատները, կտրվածք դեպի հր և ալ, ճարտարապետական մանրամասեր: Արտատպված է՝ **Նազարյան Լ., Քաջաբաճեզ Ա., Էժիժձա՛ր Է Իճիժձիժիճա՛, Իճիճա՛, 1947, գրքից:**



ԿՈՒՄՈՒՐԳՈ. նմուշներ Սբ. Համբարձման եկեղեցու պատկերաքանդակներից



*ԿՈՒՄՈՒՐՈՂ. Սբ. Համբարձման եկեղեցու ամ խաչաթևի փայտամած տանիքը, մկրտարանի ավազանը և փայտակերտ խոյակները*

պատերը, փայտածածկով նորոգելուց հետո հոգևոր իշխանության թույլտվությամբ օծել են Սբ. Համբարձման անունով և դարձրել ծխական եկեղեցի, բայց արդեն 1860-ականին վրաց հոգևորակա-

նությունը վեճ է հարուցել եկեղեցին հայերի կողմից յուրացնելու կապակցությամբ: Խնդիրը հասել է մինչև Էջմիածնի Սինոդ, որին Վրաստանի և Իմերեթիայի հայոց կոնսիստորիայի հղած բացատրա-


























ՇԾՇԹ

սճճԹ

Թարգմ. Արամ:

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 92: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 37: **Аладашвили Н.**, Монументальная скульптура Грузии. Фигурные рельефы V-XI веков, Москва, 1977, էջ 96: **სოფოგავა ვ.**, კუმურდო, ტაძრის ეპიგრაფიკა, ნշվ. աշխ., էջ 50, 84, 109, 118:

Ճանոթ. ըստ Վ. Սիլոգավայի՝ Ժ դարի երկրորդ կես և ժամա-



Գրչանկարն ըստ Վ. Սիլոգավայի

նակակից է տաճարի կառուցմանը:


22. Եկեղեցու հյուսիսային ճակատի որմնախորշի վերին մասում Եվայի պատկերաքանդակի շուրջ.

[Դ]ԻԾ

[Է]ՅՏ

Թարգմ. Եվա:

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 92: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 37: **Чубинашвили Г.**, Кумурдо и Никорцминда, как пример разных этапов в развитии барокального стиля в грузинском искусстве (1942), տես նույնի Вопросы истории искусства, т. I., Тбилиси, 1970, էջ 245, տախտակ



Գրչանկարն ըստ Վ. Սիլոգավայի

97-1: **Аладашвили Н.**, նշվ. աշխ., էջ 96: **სოფოგავა ვ.**, კუმურდო, ტაძრის ეპიგრაფიკა, էջ 50-51, 84, 109, 119:

Ճանոթ. ըստ Վ. Սիլոգավայի՝ Ժ դարի երկրորդ կես և ժամանակակից է տաճարի կառուցմանը:

23. Եվայի արձանագիր պատկերաքանդակի կիսաշրջան ավարտով պատուհաններից մեկի վերնամասում, Մ. Բրոսսեի և Է. Թադաշվիլու վկայությամբ, պահպանվում էր այժմ բոլորովին եղծված վրաց մետրոպոլիտոսի հիշատակագրություն.

Ի-Դ Կ-Գ Ե-Դ

Ք(րոսե)ց, Մ(եօ՛ւլլա)ց Գ(ոցան)ց.

Թարգմ. **Քրիստոս ողորմիր Յովանեին:**

Հրատ. **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 167: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 37: **სოფოგავა ვ.**, კუმურდო, ტაძრის ეპიგრაფიკა, ნշվ. աշխ., էջ 46, 84, 118:

Տարբերություն. Մ. Բրոսսե՝ Եօանհի:

Ճանոթ. Մ. Բրոսսեի հաղորդմամբ՝ արձանագրությունը գտնվում էր հյուսիսարևելյան պատուհանին:

Ըստ Վ. Սիլոգավայի՝ 964 թ.: Արձանագրության մեջ հիշատակված Յովանեն, անկասկած, տաճար կառուցող Յովանե էպիսկոպոսն է:


24. Տաճարի արևելյան ճակատի որմնախորշի վերին մասում երկինք խորհրդանշող պատկերաքանդակի ձախակողմում.

ԸԾԾ

ԸՅԾ

Թարգմ. **Երկինք:**

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 92: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 36: **Чубинашвили Г.**, Кумурдо и Никорцминда, как пример разных этапов в развитии барокального стиля в грузинском искусстве, տես նույնի Вопросы



Գրչանկարն ըստ Վ. Սիլոգավայի

истории искусства, т. I, էջ 245: **Аладашвили Н.**, նշվ. աշխ., էջ 96, տախտակ 76: **სოფოგავა ვ.**, კუმურდო, ტაძრის ეპიგრაფიკა, էջ 51, 85, 110, 119:

Ճանոթ. ըստ Վ. Սիլոգավայի՝ Ժ դարի երկրորդ կես և ժամանակակից է տաճարի կառուցմանը:

25. Եկեղեցու արևելյան ճակատի հյուսիսային աջ որմնախորշի վերին մասում, երկիր խորհրդանշող պատկերաքանդակի շուրջ.









ԿՈՒՄՈՒՐՈՒ. խաչքարեր Սր. Համբարձման եկեղեցու շուրջ և ներձակայքում (ԺԵ-ԺԶ դարեր)

Վ. Սիլոգակայի կարծիքով արձանագրությունը թվագրվում է ԺԱ-ԺԲ դարերով:

32. Նույն տեղում, մախորդ արձանագրությունից ներքև.

Ի-Ղ Կ-Ղ Շ-Ղ



Ք(րօսՏ)ե, Մ(եյՎալ)եյն ճ(եթեՅ)ե.

Թարգմ. Քրիստոս, ողորմիլի Դեմետրիսին:

Հրատ. Զագասի Մեղիկի ձ., նշվ. հողվածք, էջ 750-751: յարտուլի ՎարՎերեթիս Կորթուսի I, Լապիդարուլի ՎարՎերեթիս, անտիսեպեղու ճա ճաճերու ճաճարճեղու (V-X սս.), էջ 112: Նիլոգաթա Յ., Կեթերու, Գաթրիս ԵթեթրաթիԿա, էջ 81-82, 88, 113, 125, լուսանկար 33:



Գրչանկարն ըստ Վ. Սիլոգակայի



*ԿՈՒՍՏՈՒՐԴՈ. Մարտիրոս աղա Վարդանյանի կառուցած գլխատան ներքին տեսքը, օջախի քարը և չափագրություններ (արտատպված Շ ւ մ Ե Թ Յ Ե Լ ., Архитектура грузинского народного жилища дарбазы, Тбилиси, 1984, գրքից)*

Տարրերեցում. Ա. Ջավախիշվիլի՝ ԿՊՄՂԻԴԻ: Ն. Շոչիաշվիլի՝ ԿԿԿՄԴԻ-ԴԻ ԿԿԿ: Զածրօջեղ-ի փոխարեն՝ Նատանջեղ: Ծանոթ. արձանագրությունը հրատարակվում է ըստ Վ. Սիլոգավայի հրատարակության, թեև նույն հեղինակի կցած գրչանկարը տեղիք է տալիս որոշ կասկածների:

**Գերեզմանոցներ.** Կումուրդոյի տարածքում գոյություն ունեն ԺԹ-Ի դարերին վերաբերող 2 գերեզմանոցներ: Դրանցից մեկը գյուղամիջում է, մյուսը՝

հարավարևելյան կողմում: Պահպանված շիրմաքարերի մեջ գերակշռում են անմշակ սալատապանները:

**Խաչքարեր.** գյուղի արևմտյան եզրին՝ դեպի Կուր գետը նայող ձորապոնկի ժայռերին, քանդակված են խաչեր: Նույն տեղում պահպանվում է մեկ ամբողջական խաչքար, որի զարդաձևերը բնորոշ են Ջավախքի այլ հնավայրերում պահպանված,




*ԿՈՒՄՈՒՐՈՂ. քառակող կոթող և պատվանդաններ  
(Չ-ԺԱ դարեր), ձիթհանի քար (ԺԹ դար)*



ԺԵ-ԺՉ դարերով թվագրվող խաչքարերին: Հնավայրը սրբատեղի է և տեղացիներին հայտնի է «Նաչ» անվամբ:

**«Թախունթա» եկեղեցի.** կիսավեր է: Գտնվում է Կումուրդոյից 3 կմ հյուսիս: Համակ սրբատաշ քարով կառուցված, միանավ հորինվածքով եկեղեցի է՝ հարավից կից, գրեթե հիմնավեր սրահով հանդերձ: Ուշագրավ են երեսապատի քարերին եղած բոլորածև շրջանակներով ներփակված, հավասարաթև խաչերի քանդակները: Եկեղեցու շուրջը տարածված է փոքրիկ գերեզմանոց:

**Քիղա գյուղատեղի և եկեղեցի.** գտնվում է Կումուրդոյից 5 կմ հյուսիս: Տակավին 1914 թ. երկ-



**ԿՈՒՄՈՒՐԴՈՒ.**  
 «Թախունբա» հնավայրի  
 եկեղեցու տեսքը հր-ալ-ից  
 (2 մկար), հր-ամ-ից, ամ-ից,  
 խաչապատկերներ և  
 հատակագիծը



*ԿՈՒՄՈՒՐՈՂ. Քիլդա գյուղատեղիի եկեղեցու տեսքը հս-ալ-ից և հր-ամ-ից*

րամասի առավել մարդաշատ զուտ վրացաբնակ գյուղերից էր (602 շունչ)<sup>85</sup>: Երկրորդ աշխարհամարտից հետո ապաբնակեցված և գյուղատեղիի

վերածված երբեմնի վրացաբնակ գյուղում կանգուն վիճակով պահպանվել է ԺՁ-ԺԷ դարերի եկեղեցին:

<sup>85</sup> “Кавказский календарь на 1915 г.”, т.9 141:

## ՀԵՇՏԻԱ



ՀԵՇՏԻԱ. գյուղի տեսքը հր-ից, հեռվում՝ Աբուլ լեռը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 12 կմ հարավ-արևելք, շրջկենտրոն Նինոծմինդայից 9 կմ հյուսիս, Փարվանա գետի աջ կողմում, գետափից 3 կմ հեռու, ծ. մ. 1840-1890 մ բարձրության վրա:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված բուրքական հարկացուցակի՝ տեր Հակոբ քահանայի հովվության ներքո գտնվող Հեշտիան ունեցել է 12 տուն բնակիչ, հարկվել է 21.000 ակչե<sup>1</sup>: Հայտնի է նաև, որ բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1703-1704 թթ.՝ տանուտեր Հյուսեինի օրոք, գյուղից հարկվել է 10.000<sup>2</sup>, իսկ 1719-20 թթ.՝ տանուտեր Աբդուլլահի որդի Ալիի օրոք՝ 7.000 ակչե<sup>3</sup>:

1869-81 թթ. գրիչ Սարգիս Քյուրդոլյանցի կողմից գյուղում գրվել է մի ձեռագիր «Տաղարան»<sup>4</sup>:

Երկրորդ աշխարհամարտին հեշտիացի 800 մասնակիցներից 204-ը զոհվել է:

**Բնակչություն.** Ջավախքի առավել մարդաշատ գյուղերից է:

1 "Գյրջոսթանոս յոջալոյոս ճոջո ճոջոարո", էջ 225:

2 "Քոլճոյոս յոջալոյոս ճոջո ճոջոարո 1694-1732 ՎՎ.", էջ 108:

3 Նույն տեղում, էջ 161:

4 ՅՁԲ, № 10036, էջ 1034:

Ներկայիս բնակիչների նախնիները, ըստ տեղացիների պնդման, ծագում են Թեքման գավառի Քյուլլի<sup>5</sup> գյուղից, որոնք հայաբափ գյուղատեղիում հաստատվել են 1829-30 թթ.: Հակառակ հայտնի այս իրողությանը՝ նրանց բնօրրանի մասին ԺԹ դարի մամուլը ներկայացրել է որոշ հակասական նյութեր. «...բնակիչները Մշու դաշտից վաղուց գաղթած հայ կաթօլիկներ են...»<sup>6</sup>:

Ի դեպ, Հեշտիայից մի քանի ընտանիքներ 1930-32 թթ. փոխադրվել են և Մաղաթափա լճի ափին հիմնել Ժղանովական գյուղը:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի բնակչության թվաքանակը ցույց տվող վիճակագրական տվյալներն են.

5 Քյուլլի գյուղի մասին տես սույն աշխ., էջ 206, № 5 ծանոթ.:

6 «Մշակ», 1884, № 39, էջ 1: Հարկ է նշել, որ հեշտիացիների, ինչպես նաև Ուջմանա և Թորիա գյուղերում հաստատված հայերի՝ Մուշ գավառից գաղթած լինելու վարկածն արծածվել է նաև ժամանակի մեկ այլ հաղորդման մեջ. «...Յիշեալ երեք գիւղերն էլ գաղթած են 1828 թ. Մշու Խնուս գաւառի Բիւլուլ (անվան ձևը տպագրված է ակնհայտ վրիպակով, պետք է լինի՝ Քյուլլի - Ս. Կ.) գիւղից...» («Նոր-Գար», 1886, № 42, էջ 2):

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1595 <sup>7</sup>	12			
1870 <sup>8</sup>	125	658	445	1103
1883 <sup>9</sup>				1324
1884 <sup>10</sup>	160			1429
1908 <sup>11</sup>	374			2796
1912 <sup>12</sup>				2760
1914 <sup>13</sup>				2861
1915 <sup>14</sup>				2817
1916 <sup>15</sup>	410	1525	1344	2869
1987 <sup>16</sup>	788			3630

**Եկեղեցական-ծխական դպրոց.** Հեշտիա գյուղում առաջին կրթական հաստատությունը բացվել է Դուկաս Տեր-Անտոնյանի ջանքերով, 1863 թ.<sup>17</sup>: 1884 թ. գյուղում գործել է նաև արքունի շինական դպրոց<sup>18</sup>: 1886 թ. նույն դպրոցը հիշվում է որպես «մի ժողովրդական ուսումնարան Թիֆլիսի “Дирекция”-ի իշխանութեան տակ, որտեղ սովորում են մօտ 40 աշակերտներ..., 5 տարի է, որ ուսուցչի պաշտօնը վարում է մի վրացի երիտասարդ...»<sup>19</sup>: 1904 թ. ծխատեր քահանա Ներսես Պողոսյանի և ուսուցիչ Պողոս Տեր-Պողոսյանի ջանքերով կառուցվում է իր ժամանակի համար լավագույն դպրոցական շենքերից մեկը, որն իր նպատակին է ծառայել մինչև 1980-ական թվականների սկզբները<sup>20</sup>:

1908 թ. դպրոցն ուներ 100 աշակերտ<sup>21</sup>:

**Պետական դպրոց.** 1908 թ. գյուղում գործել է նաև պետական դպրոց, որտեղ ուսանում էր 150 աշակերտ<sup>22</sup>: 1916 թ. պետական դպրոցի կրոնուսույցն էր տեր Անտոն Տեր-Անտոնյանը<sup>23</sup>:

**Միջնակարգ դպրոց.** 1988 թ. Հեշտիա գյուղում գործում էր երկու միջնակարգ դպրոց՝ 830 աշակերտով:

**Սրբ. Աստվածամոր եկեղեցի.** հիմնադրվել է 1835 թ.<sup>24</sup>, սակայն մի քանի անգամ նորոգվել է, օրինակ, 1856 թ. «Ունի ժողովրդապետական քարաշեն եկեղեցի, յանուն սուրբ Աստուածամոր 1856 թ. կառուցված ծխականների ծախքով»<sup>25</sup>: Ներկայիս եկեղեցին



ՀԵՇՏԻԱ. Սրբ. Աստվածամոր եկեղեցու տեսքը հս-ամ-ից և եկեղեցաձև տապանաքարեր եկեղեցու հս կողմում տարածված գերեզմանոցում

ցին կառուցվել է հնի տեղում՝ 1893 թ.<sup>26</sup>: Համակ սրբաբառաշ քարից, արևմտյան ճակտոնին վեր բարձրացող կրկնահարկ զանգակատնով, արևմտյան ճակատից միակ մուտքով շինություն է:

Եկեղեցին ներկայումս կանգուն է և բարեկարգ:

Տապանաքար. ագուցված եկեղեցու հյուսիսային պատի վերնամասում, 4 կիսաեղծ տող.

... ՈՐՄ ԻՐ ԶԻՄ | ... ՏԱՊԱՆ | ... ՍԱՅԵՆ | ... (Ռ)ՃՁԲ (1733) ԹՎ:

Հրատ. Արդյան Ս., նշվ. աշխ., էջ 55:

Արձանագիր քար. 1880 թ. գյուղի հունածես հին եկեղեցու վերակառուցման աշխատանքների ժամանակ սրբաբառա քարերից մեկի վրա հայտնաբերվել և ընթերցվել է հակիրճ, վրաց մեսրոպատառ արձանագրություն<sup>27</sup>.

ԹՄԻՇԸ ԼԵՂԲԵՐԻՂ ՍԴՂՂԿԵՐՈՂ ԼԱՎՐԻ ԻՂԺԴ.

Թարգմ. Սրբ. Ստեփանոս, ողորմիր իմ հոգուն:

Հրատ. ԶԶԻՐԱՅԻՑ Ե. (ՅՈՆՅԵ ՅԵՆԵՍ), “սաճալօ ՅեճօՅեճօ”, “ճրօյեճօ”, 1880, № 196:

7 “გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი”, նույն տեղում: 8 СМОТГ, էջ 31:  
 9 “Кавказский календарь на 1885 г.”, էջ 204:  
 10 «Արձագանք», 1885, № 3, էջ 41, № 26, էջ 368:  
 11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 46:  
 12 **Յակոբյան Պ.**, Հրաւեր ողջմտութեան, էջ 95:  
 13 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 213:  
 14 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:  
 15 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, ք. 36:  
 16 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 17 **Արդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 194:  
 18 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 19 «Նոր-Կար», 1886, № 42, էջ 2:  
 20 **Արդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 195:  
 21 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 46:  
 22 Նույն տեղում:  
 23 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83:  
 24 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:  
 25 «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83:

26 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, ք. 46:  
 27 Արձանագրության մեջ Սրբ. Ստեփանոսի անվան առկայության հանգամանքն Ի. Գվարամաձեին թույլ է տվել կարծելու, որ Հեշտիայի հին եկեղեցին կրում էր Սրբ. Ստեփանոս Նախավկայի անունը:



*ՀեՇՏԻԱ. Սբ. Աստվածամոր եկեղեցու տեսքը ամ-ից*

**Քահանա.** 1915 թ. գյուղի ծխատեր քահանան էր տեր Պողոս Խաչատուրյանը, որի օգնականն էր տեր Անտոն Տեր-Անտոնյանը<sup>28</sup>:

**Գերեզմանոց.** Եկեղեցու շուրջը տարածվում է ԺԹ-Ի դարերի հայոց գերեզմանոցը: Այստեղ ուշա-

գրավ են եկեղեցաձև տապանաքարերը: Եկեղեցու արևմտյան կողմում հանգչում են գյուղի հայ-կաթոլիկ հոգևորականներ:

<sup>28</sup> «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:



## ՀՈԿԱՄ



ՀՈԿԱՄ. գյուղի տեսքը հր-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ զծով 14 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1740 մ բարձրության վրա:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված թուրքական հայտնի հարկացուցակի՝ գյուղն ունեցել է 20 տուն բնակիչ, հարկվել է 31.000 ակչե<sup>1</sup>: Բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1704-1705 թթ.՝ տանուտեր Հասանի օրոք, գյուղից հարկվել է 29.000<sup>2</sup>, նույն թվականին տանուտեր Սեհմեդի օրոք՝ 10.600<sup>3</sup>, իսկ 1709-1710 թթ.՝ տանուտեր Ալիի օրոք՝ 2.000 ակչե<sup>4</sup>:

**Բնակչություն.** գյուղամիջում պահպանվող եկեղեցու և գերեզմանատան ավերակները վկայում են, որ Ժ-ԺԱ դարերում գյուղի բնակիչները հունադավան էին, իսկ ԺԵ-ԺԶ դարերում գոնե մի մասով՝ կրկին առաքելական: ԺԷ դարի առաջին կեսին գյուղի բնակիչների մի մասը դավանափոխության գնով շարունակել է ապրել հայրենի գյուղում: Վերջիններիս թվաքանակը 1914 թ. կազմել է 917 շունչ<sup>5</sup>:

1944 թ. երկրամասի թուրք բնակչության համատարած արտոյի մաս են կազմել նաև հոկամցիները: Ավելի ուշ ամալի ու լքված գյուղում բնակություն են հաստատել վրացաբնակ Քիլդայից փոխադրված 40 ընտանիք, ապա նաև՝ հայեր, գլխավորապես Կոմուրդոյից: 1987 թ. Հոկամն ուներ 74 տուն՝ 298 շունչ հայ և վրացի բնակիչ<sup>6</sup>:

**Եկեղեցի.** Հոկամի կենտրոնում պահպանվում են համակ սրբատաշ, խոշոր քարով կառուցված երբեմնի միանավ եկեղեցու հարավային պատի մնացորդները: Հայտնի է, որ 1870 թ. եկեղեցին եղել է քայքայված: Այդ մասին Վրաստանի և Իմերեթիայի հայոց կոնսիստորիան գեկուցել է Էջմիածնի Սինոդին. «...եկեղեցին տաճկաբնակ Հոգամ գեղջ ամալի է և քայքայեալ...»<sup>7</sup>: Ըստ շարվածքային, կառուցողական և հորինվածքային առանձնահատկությունների՝ եկեղեցին կարելի է թվագրել Ժ-ԺԱ դարերով:

**Ազմանա գյուղատեղի.** տարածվում է Հոկամ գյուղից 4 կմ արևմուտք, ծ. մ. 1714-1720 մ բարձրությամբ հարթավայրում:

Երբեմնի գյուղի առաջին վկայություններից մեկը

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი", էջ 216-217:

2 "ხილდობის ვილაიეთის ჯგაბა დავთარი 1694-1732 წწ.", էջ 109:

3 Նույն տեղում, էջ 110:

4 Նույն տեղում, էջ 133:

5 "Кавказский календарь на 1915 г.", էջ 168:

6 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

7 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 306:



ՀՈԿԱՄ. գյուղամիջի միջնադարյան եկեղեցու մնացորդները

վերաբերում է 1595 թ., երբ ուներ 12 տուն բնակիչ և պետական գանձարան էր մուծում 12.000 ակչե<sup>8</sup>: 1718-1719 թթ.՝ տանուտեր Վասպի Իբրահիմի օրոք, Ազմանայից հարկվել է 9.250<sup>9</sup>, 1719-1720 թթ.՝ տանուտեր Յուսուփ Իսահակի օրոք՝ 12.000<sup>10</sup>, իսկ 1726-1727 թթ.՝ տանուտեր Սեհմեդի օրոք՝ 7.000 ակչե<sup>11</sup>:

*Բնակչություն.* Ժ-ԺԱ դարերում գյուղն ունեցել է հունադավան, իսկ առնվազն ԺԴ դարից՝ հայաառաքելական բնակիչներ: Հայաթափ է եղել ԺԸ դարում: Ավելի ուշ բնակեցվել է խաշնարած մահմեդականներով: Ի դարի սկզբների վիճակագրական նյութերում գյուղն արձանագրվել է որպես զուտ բրբաբնակ<sup>12</sup>: Օրինակ, 1914 թ. ունեցել է 225 բնակիչ<sup>13</sup>: Վերջիններս Ազմանայում բնակվել են մինչև

1944 թ. արքայը, որից հետո՝ 1945 թ., Ազմանան շենագրել են Պրտենայից փոխադրված 41 վրացի ընտանիք: 1969 թ-ին Ազմանան ապաբնակեցվել է, սակայն 1980-ական թթ. վերջերին գյուղը կրկին շենացել է վերաբնակիչ աջարների համար Վրաստանի կառավարության ջանքերով կառուցված մի քանի տասնյակ բնակելի տների շնորհիվ:

*Եկեղեցի.* հնավայրի տարածքում պահպանվել է մի կիսավեր եկեղեցի, որն անմշակ քարով, կրաշաղախով կառուցված միանավ շինություն է: Ներքուստ սվաղված է: Հարավից նկատելի են կից եկեղեցի-սրահի մնացորդները:

*Գերեզմանոց.* տարածվում է եկեղեցու շուրջ: Պահպանվել են չնչին մնացորդները: Նկատելի են ԺԵ-ԺԷ դարերին բնորոշ ուղղանկյունաձև և անմշակ սալատապաններ:

8 "Գյուրջոսեթանոս շիլոնոյոս ճոցո ճոցո", էջ 228:

9 "Նոլլոնոս յոլլոյոս յոլլոնոս 1694-1732 ՎՎ.", էջ 157:

10 Նույն տեղում, էջ 162:

11 Նույն տեղում, էջ 192:

12 Ի դեպ, Ն. Բերձեմիշվիլու վկայությամբ՝ բնակիչները թուրք-դարափափախներ (թարաբամա) էին (Ճերձեմիշվիլո Ն., նշվ. աշխ., էջ 114):

13 "Кавказский календарь на 1915 г.", էջ 84:



*ՀՈԿԱՍ. Ազմանա գյուղատեղիի կիսավեր եկեղեցու տեսքը հր-ամ-ից, ներքին տեսքը դեպի ալ, դեպի հյուսիսային խորան-ավանդատուն տանող մուտքը հր-ից և հատակագիծը*

ՂԱԴՈ (ՂԱԴՈԼԱՐ)

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 20 կմ հյուսիս, ծ. ս. 1780-1830 մ բարձրության վրա, Ախալքալաք-Բակուրիան մայրուղու արևմտյան եզրին:

**Պատմություն.** հին գյուղատեղի է: Հայաթափ է եղել ԺԸ դարում: Վերստին բնակեցվել է ԺԹ դարի 2-րդ կեսին: 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով քանդվել է Ղաղոյի 38 տներից 12-ը, բնակիչներից մեկը՝ զոհվել<sup>1</sup>:

**Բնակչություն.** ներկայիս դադողիների նախնիները սերում են Էրզրումի նահանգի համանուն գավառի Օրթիզ<sup>2</sup> և Չրթլու գյուղերից: 1918 թ. Ղաղոն համալրվել է նաև Բայազեթից և Ալաշկերտից գաղթած հայերով (հիմնականում՝ կանայք):

**Վիճակագրություն.** արխիվային վավերագրերում բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ ենք գտնում՝ սկսած 1869 թ-ից<sup>3</sup>, սակայն, ըստ էության, գյուղը գոյություն ուներ արդեն 1830-ականից (բավական է նշել 1868 թ. կառուցված մեծադիր եկեղեցու փաստը).

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1869 <sup>4</sup>		164	170	304
1870 <sup>5</sup>		164	170	304
1871 <sup>6</sup>		164	170	304
1872 <sup>7</sup>		166	172	338
1873 <sup>8</sup>		169	173	342
1874 <sup>9</sup>				343
1875 <sup>10</sup>	24			349
1876 <sup>11</sup>		171	173	344

1 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

2 Օրթիզը (այժմ՝ Uzunyayla) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 20 կմ հյուսիս-արևմուտք: Ծագումով օրթիզցի են նաև Ղաղոյից ոչ հեռու գտնվող Բոռնաշեթ գյուղի բնակիչները:

3 Նախքան Ղաղոյում հաստատվելը օրթիզցի գաղթականներն ունեցել են մեկ այլ հանգրվան (1830-1969 թթ. ընթացքում) թե ոչ, մեզ հայտնի չէ:

4 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, ք. 10:

5 Նույն տեղում, գ. 3857, ք. 24:

6 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:

7 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:

8 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:

9 Նույն տեղում, գ. 3864, ք. 28-29:

10 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:

11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 30-31:

1877 <sup>12</sup>		171	147	318
1878 <sup>13</sup>		175	149	349
1880 <sup>14</sup>		187	154	341
1881 <sup>15</sup>		184	160	344
1882 <sup>16</sup>		188	165	353
1883 <sup>17</sup>		191	175	366
1884 <sup>18</sup>	25			
1885 <sup>19</sup>		195	177	372
1887 <sup>20</sup>		219	294	513
1889 <sup>21</sup>		234	302	536
1890 <sup>22</sup>		233	295	528
1891 <sup>23</sup>		249	303	552
1892 <sup>24</sup>		251	303	554
1893 <sup>25</sup>	30	257	302	559
1894 <sup>26</sup>		259	312	561
1897 <sup>27</sup>		280	325	605
1898 <sup>28</sup>		294	334	628
1899 <sup>29</sup>	38	286	325	611
1900 <sup>30</sup>		297	237	534
1901 <sup>31</sup>		309	245	554
1902 <sup>32</sup>		304	250	554
1905 <sup>33</sup>		325	279	604
1908 <sup>34</sup>	51	344	294	638
1910 <sup>35</sup>		337	294	638

12 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30:

13 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:

14 Նույն տեղում, գ. 3872, ք. 88-89:

15 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:

16 Նույն տեղում, գ. 3874, ք. 44-45:

17 Նույն տեղում, գ. 3875, ք. 49-50:

18 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

19 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:

20 Նույն տեղում, գ. 3880, ք. 41-42:

21 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:

22 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:

23 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:

24 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:

25 Նույն տեղում, գ. 3895, ք. 43-44: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 793:

26 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 172-173:

27 Նույն տեղում, գ. 3899, ք. 145-146:

28 Նույն տեղում, գ. 3897, ք. 167:

29 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, ք. 101-102: Տե՛ս նաև՝ «Մշակ», 1900, № 43, էջ 2:

30 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 52:


31 Նույն տեղում, գ. 3906, ք. 69:

32 Նույն տեղում, գ. 3907, ք. 21-22:

33 Նույն տեղում, գ. 3912, ք. 264-265:

34 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:

35 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 136-137:



*ՂԱԴՈ (ՂԱԴՈՒԼԱՐ). Սր. Գրիգոր Նարեկացի եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հր-ալ-ից, ամ ճակտոնն ու զանգակատունը և շինարարական արձանագրությունը*

1912 <sup>36</sup>		359	322	681
1914 <sup>37</sup>		375	327	702
1916 <sup>38</sup>		383	333	716
1918 <sup>39</sup>	82	320	335	655
1921 <sup>40</sup>		90	78	168
1979 <sup>41</sup>	152			710
1987 <sup>42</sup>	168			703

1877 <sup>45</sup>		1	29
1878 <sup>46</sup>		1	30
1880 <sup>47</sup>	գործել է		
1882 <sup>48</sup>		1	15

**Դպրոց.** եկեղեցական-ծխական կրթօջախի գործունեությունը լուսաբանող վավերագրերը վերաբերում են 1870-80-ական թվականներին.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1874 <sup>43</sup>	գործել է		
1876 <sup>44</sup>		1	24

36 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:

37 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 175-176: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է խիստ կասկածելի տվյալ, ըստ որի՝ բնակչության թվաքանակը կազմել է 585 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 111):

38 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 22-23:

39 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:

40 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:

41 ՀԱՀ, հ. 7, Երևան, 1987, էջ 6:

42 Ըստ գյուղիորհիղի տվյալների:

43 **Խոսրոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 520:

44 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 30-31:

2005 թ. սեպտեմբերի 10-ին բացվել է ՀՕՄ-ի (Հայ օգնության միություն) Ջավախքի օժանդակության ծրագրի հանձնախմբի նախաձեռնությամբ և Թեհրանի հայոց թեմական խորհրդի տրամադրած միջոցներով վերանորոգված դպրոցը:

**Սր. Գրիգոր Նարեկացի եկեղեցի.** կառուցվել է 1868 թ.: Եկեղեցու շենքը եղել է քարաշեն-փայտածածկ<sup>49</sup>:

Տուժել է 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից<sup>50</sup>: 1903 թ. եկեղեցին այնպիսի վիճակում էր, որ գլուղն ընդգրկվել է գավառի՝ եկեղեցի չունեցող բնակավայրերի ցուցակում<sup>51</sup>: Ցայժմ կանգուն է: Արտաքին չափերն են՝ 17,35 x 10,18 մ:

45 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30: Նաև՝ գ. 3850, ք. 130:

46 Նույն տեղում, գ. 3850, ք. 178:

47 **Խոսրոյան Ս. Գ.**, նույն տեղում:

48 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, ք. 44-45:


49 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

50 **Мушкегов И.**, նշվ. աշխ., էջ 25-26:

51 «Արարատ», 1903, էջ 436:



Արձանագրություն. եկեղեցու մուտքի բարավորին՝ 4 տող.  
**Յ(Ե)Կ(Ե)Ղ(ԵՅ)ԻՆ ՂԱՏՈԼԱՐ | 1868 ՇԻՆԵ-Ց(Ա)Ի | ԱՅՍ ԵԿԷՂԵՑԻՍ ԱՆՎԱ(ՆԵԱ)Ց | ԳՐԻ-ԳՈՐ Ս(ՈՒՐ)Բ ՆԱ(Ր)ԵԿ(Ա)ՑԻ:**  
 Հրատ. առաջին անգամ:



*ՂԱԴՈ (ՂԱԴՈԼԱՐ). Ղաղղար գյուղատեղիի եկեղեցու մնացորդներն ու հատակագիծը*

**Ղաղղար գյուղատեղի և եկեղեցի.** գյուղի հսկողմում պահպանվում են միջնադարյան գյուղատեղիի և եկեղեցու (արտաքին չափերն են՝ 6,81 x 4,36 մ) մնացորդներ: Վերջին տարիներին տեղացիների ուժերով իրականացվել է մասնակի կամայական վերանորոգում:

ՂԱՌԻՐՍԱ (ՂԱՌԻՐՍԵՔ)

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 11 կմ հարավ-արևելք, շրջկենտրոն Նինոծմինդայից 6,5 կմ հյուսիս, Փարվանա գետի երկու ափերին, ծ. մ. 1835-1860 մ բարձրության վրա: Հին թաղը գետի աջ կողմում է:

**Պատմություն.** ընդամենը 3 տուն բնակիչ ունեցող և 12.000 ակչե հարկվող գյուղը 1595 թ. հիշվում է Ղաուրմեք անվանաձևով<sup>1</sup>: Հայտնի է նաև, որ բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1705-1706 թթ.՝ տանուտեր Մուստաֆայի օրոք, Ղաուրմայից հարկվել է 7.000 ակչե<sup>2</sup>:

1880-ական թվականներին գյուղի կալվածատերն էր Մանուկ Բայբուրդյանցը<sup>3</sup>:

Երկրորդ աշխարհամարտին Ղաուրմայից մասնակցել են 76 հոգի, նրանցից 38-ը չեն վերադարձել<sup>4</sup>:

**Բնակչություն.** ուշագրավ է, որ դաուրմացիների նախնիները սերում էին ոչ թե Կարնո գավառից, այլ, ինչպես վկայում են տեղացիները, Կարսի Գյարաք գյուղից:

**Վիճակագրություն.** սկսած 1850-ականներից՝ գյուղի բնակչության քանակը վկայված է հետևյալ չափով.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1853 <sup>5</sup>		42	35	77
1857 <sup>6</sup>		56	46	102
1860 <sup>7</sup>		53	49	102
1861 <sup>8</sup>		66	54	120
1862 <sup>9</sup>		70	55	125
1863 <sup>10</sup>		72	58	130
1864 <sup>11</sup>		74	58	132

1 "Գյուրջուսթանիս շեղաօղտոս ձոցո ձոցոտարո", էջ 227-228:

2 "Խոլաձորոս շեղաօղտոս չճոձո ձոցոտարո 1694-1732 ՎՎ.", էջ 121:

3 «Արձագանք», 1885, № 3, էջ 41: Ի դեպ, այսպիսիացի կալվածատեր Մ. Բայբուրդյանցին էին պատկանում նաև Փոքր Արաքայա, Փոքր Գյոնդուրա գյուղերը:

4 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:

5 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743 թ. 38-39:

6 Նույն տեղում, գ. 3830, թ. 52-53:

7 Նույն տեղում, գ. 3833, թ. 66-67:

8 Նույն տեղում, գ. 3839, թ. 23-24:

9 Նույն տեղում, գ. 3836, թ. 20-21:

10 Նույն տեղում, գ. 3843, թ. 21-22:

11 Նույն տեղում, գ. 3846, թ. 10-11:

1865 <sup>12</sup>		76	60	136
1866 <sup>13</sup>	14	76	60	136
1867 <sup>14</sup>		81	67	148
1868 <sup>15</sup>		83	68	156
1869 <sup>16</sup>		88	72	160
1870 <sup>17</sup>		90	74	164
1871 <sup>18</sup>		91	75	166
1872 <sup>19</sup>		91	79	170
1873 <sup>20</sup>		91	79	170
1874 <sup>21</sup>	181			
1875 <sup>22</sup>	180			
1876 <sup>23</sup>		103	87	190
1877 <sup>24</sup>		105	87	190
1878 <sup>25</sup>		111	91	202
1880 <sup>26</sup>		114	97	211
1881 <sup>27</sup>		115	103	218
1882 <sup>28</sup>		123	101	224
1883 <sup>29</sup>		122	100	222
1884 <sup>30</sup>	15			
1885 <sup>31</sup>		127	110	237
1887 <sup>32</sup>		147	120	267
1889 <sup>33</sup>		150	118	268
1890 <sup>34</sup>		159	122	281
1891 <sup>35</sup>		165	125	290
1892 <sup>36</sup>		170	127	297

12 Նույն տեղում, գ. 3848, թ. 11-12:

13 Նույն տեղում, թ. 74:

14 Նույն տեղում, գ. 3851, թ. 21-22:

15 Նույն տեղում, գ. 3853, թ. 27:

16 Նույն տեղում, գ. 3856, թ. 9:

17 Նույն տեղում, գ. 3857, թ. 23:

18 Նույն տեղում, գ. 3858, թ. 9-10:

19 Նույն տեղում, գ. 3859, թ. 56:

20 Նույն տեղում, գ. 3862, թ. 71-72:

21 Նույն տեղում, գ. 3864, թ. 26-27:

22 Նույն տեղում, գ. 3866, թ. 20-21: Նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:

23 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 30-31:

24 Նույն տեղում, գ. 3869, թ. 29-30:

25 Նույն տեղում, գ. 3850, թ. 217-218:

26 Նույն տեղում, գ. 3872, թ. 88:

27 Նույն տեղում, գ. 3873, թ. 96-97:

28 Նույն տեղում, գ. 3874, թ. 42-43:

29 Նույն տեղում, գ. 3875, թ. 47-48:

30 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

31 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 10-11:

32 Նույն տեղում, գ. 3880, թ. 39-40:

33 Նույն տեղում, գ. 3884, թ. 65-66:

34 Նույն տեղում, գ. 3887, թ. 145:

35 Նույն տեղում, գ. 3889, թ. 144:

36 Նույն տեղում, գ. 3891, թ. 116:

1893 <sup>37</sup>		165	123	288
1894 <sup>38</sup>		167	128	295
1897 <sup>39</sup>		186	136	322
1898 <sup>40</sup>		197	143	340
1899 <sup>41</sup>		194	139	333
1900 <sup>42</sup>		203	140	343
1901 <sup>43</sup>		206	141	347
1902 <sup>44</sup>		215	146	361
1905 <sup>45</sup>		231	155	386
1908 <sup>46</sup>	37	244	162	406
1910 <sup>47</sup>		242	180	422
1912 <sup>48</sup>		254	200	454
1914 <sup>49</sup>		256	210	466
1916 <sup>50</sup>		251	216	467
1918 <sup>51</sup>	64	257	245	502
1921 <sup>52</sup>		170	160	330
1926 <sup>53</sup>	68			382
1975 <sup>54</sup>	146			797
1987 <sup>55</sup>	122			586
1988 <sup>56</sup>		143		780

**Եկեղեցական-ծխական դպրոց.** կրթօջախի գործունեության վերաբերյալ վավերագրերը պարունակում են 1870-80-ական թթ. տվյալներ.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1874 <sup>57</sup>	գործել է		
1876 <sup>58</sup>		1	15
1877 <sup>59</sup>		1	15
1878 <sup>60</sup>		1	15
1883 <sup>61</sup>		1	10
1884 <sup>62</sup>	չի գործել		
1988 <sup>63</sup>	9-ամյա		69

37 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43:  
 38 Նույն տեղում, գ. 3896, ք. 169-170:  
 39 Նույն տեղում, գ. 3899, ք. 142-143:  
 40 Նույն տեղում, գ. 3897, ք. 164:  
 41 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 42 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 43 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 44 Նույն տեղում, գ. 3907, ք. 18-19:  
 45 Նույն տեղում, գ. 3912, ք. 261-262:  
 46 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 48 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 49 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 172-173: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 496 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 137):  
 50 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 19-20:  
 51 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 52 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 53 Արդյան Ս., նշվ. աշխ., էջ 123:  
 54 ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 33:  
 55 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 56 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 57 Խուրդյան Ս., նշվ. աշխ., էջ 520:  
 58 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 51:  
 59 Նույն տեղում, ք. 130:  
 60 Նույն տեղում, ք. 177:  
 61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, ք. 47-48:  
 62 Խուրդյան Ս., նույն տեղում:  
 63 Տվյալներն ըստ դպրոցի տնօրինության:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** գտնվում է գյուղամիջում: Ի սկզբանե եղել է հունածես և, ըստ ամենայնի, Ժ-ԺԱ դարերի կառույց է, բայց 1850-ականին օծվել է հայոց եկեղեցու ծեսով, Սբ. Աստվածածին անվամբ և սկսել գործել իբրև ծխական եկեղեցի:

Համակ սրբատաշ քարից միանավ շինություն է (արտաքին չափերն են՝ 9,05 x 5,42 մ), որի միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Հյուսիսային պատի մեջ պահպանվում է մկրտարանի ա-




ՂԱՌԻՐՄԱ (ՂԱՌԻՐՄԵՔ). Սբ. Աստվածածին եկեղեցու հաստակագիծը


վականը: Եկեղեցու արտաքին հարդարանքից առանձնապես ուշագրավ են լուսամուտների քանդակազարդ շրջանակները: Որմերին պահպանվել են վրաց մեսրոպատառ արձանագրություններ:

1. Եկեղեցու արևմտյան լուսամուտի երկու կողմում 5 տողով փորագրված է.

ԿՂ ԹԻՔԿԳ | ԴԿՆ ԴՉԴԻՐՆ ԾՈՆ | ԹՆ ՄԻՆԵԺԻԿԻ | ԾՆ







ՂԱՌԻՐՍԱ (ՂԱՌԻՐՄԵՔ). Սք. Աստվածածին եկեղեցու տեսքը հս-ալ-ից, հր-ալ-ից, հր-ամ-ից և ամ ճակատից բացված լուսամուտը

Վ(րոսե՛)յ, մ(ո)Վ(սե)յ ց(մ)յն օրց(ս)նց, Ե(յ)ն(ս) մ(ս)ն, Մ(ո)լ(ո)տ(ր)տ} ս(մ)ն. օ?

Թարգմ. Քրիստոս, ողորմած եղիւ Իօվաննի նկատմամբ այն օրը որդիներով հանդերձ. ամեն:

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 72: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 33: **Եսկարիշვილი ց.**, նշվ. աշխ., էջ 30: **Երեմյան Ն.**, նշվ. աշխ., էջ 76: “ჯავახეთი. ისტორიულ-ხელომდღერული გზამკვლევი”, էջ 35:

Տարբերակում. Բ. Ռոստոմաշվիլին սխալմամբ արձանագրության տողերը փորձել է ընթերցել ուղղահայաց երկու շարքով, որի հետևանքով նրա վերծանությունը հեռու է իրականությունից. ԿՐ ԹՐԻՐԻՆԻՍԻՆ և ԲԿՐԴԻՆԻՆԻՆ, արդի վրացերեն գրադարձությամբ. «վրոսե՛յ ց(մ)յնց... սմն. ...Ե(յ)ն(ս)»: Է. Թաղաշվիլի՝ *Մուրադ, Յոհն, Ծողև*: Վ. Ֆիսկարիշվիլի՝ ԿՐԵԿ: ց(մ)յն, Մեղեօ, սմն: Ն. Բերձենիշվիլի՝ սմն:

Մանր. արձանագրությունը թվագրվում է Քարթլի կաթողիկոս Յովանն Բ Օքրոպիի (1033-1048 թթ.) գահակալության տարիներով:

2. Եկեղեցու արևմտյան լուսամուտի քանդակազարդ շրջանակից վեր, քիվատակին, խաչաքանդակի երկու կողմում.

ԿՐ ԾԾՐ ԳԿՄ Կ Գ

Վ(րոսե՛)յ, ս(ե)լոյ օՎ(րո)Յ(օր)օ, Վ(արեղև)ս) Վ(ատալեյ)օ(ն)օ.

Թարգմ. Քրիստոս, փառավորի Օքրոպիիին՝ Քարթլի կաթողիկոսին:

Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 71: **Такайшвили Е.**, նշվ. աշխ., էջ 33: **Եսկարիշვილი ց.**, նշվ. աշխ., էջ 30: **Երեմյան Ն.**, նշվ. աշխ., էջ 75: “ჯავახეთი. ისტორიულ-ხელომდღერული გზამკვლევი”, էջ 35:

Տարբերակում. Բ. Ռոստոմաշվիլին և Է. Թաղաշվիլին ԿԳ վերծանել են՝ Վ(ատալեյ)օ(ն)օ, «*κατολικος*»:

Մանր. արձանագրությունը թվագրվում է Քարթլի կաթողիկոս Յովանն Բ Օքրոպիի (1033-1048 թթ.) գահակալության տարիներով:

3. Հարավային մուտքի բարավորին, խաչաքանդակի երկու կողմում 9 տողանի ելնոգիր արձանագրություն է.

ԿՐ ԾԾՐ | ԴՂ ԹԲՐ | ԾՇ ԿԻՐ | ԹԴՐ | ԿՐ ԾԾՐ ԹԻԿԵԳ | ԿԿԴԵՆ ԿԴԵԵՆ | ԾՇ ԿԻՐ | ԾՐԻՇ ԹՆ | ԾՐ





*ՂԱՌԻՐՄԱ (ՂԱՌԻՐՄԵՔ). Սբ. Աստվածածին եկեղեցու մկրտարանը, հատված բեմառաջի խաչաքանդակներից, կամուրջ Փարվանա գետի վրա*

գուցված է եղել վրացերեն շինարարական արձանագրությամբ մի քար, որն իբր հուշարձանի նորոգ-

ման ժամանակ փոխարինվել է հայերենով: Վերջինս 1933 թ. նույնպես տեղում չի եղել<sup>64</sup>:

<sup>64</sup> ԶեյթքենՇեյքի Ե., նշվ. աշխ., էջ 75:

## ԴՈՒԼԱԼԻՍ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 8 կմ հարավ, շրջկենտրոն Նինոծմինդայից 11 կմ հյուսիս-արևմուտք, Բառասանակն վտակի ձախ ափին, ծ. մ. 1795 մ միջին բարձրության վրա:

**Պատմություն.** միջնադարում և առանձնապես ԺԳ-ԺՋ դարերում Ջավախքի հայաշատ ու ծաղկուն բնակավայրերից մեկն էր: Հայաթափ է եղել ԺԸ դարում: Ավելի ուշ բնակեցվել է մահմեդականներով, կամ տեղաբնիկներն էին, որ մահմեդականացան:

1918 թ.՝ թուրքական բանակի ներխուժման օրերին, տեղի հայերը պաշտպանություն են գտել համագյուղացի թուրքերի շրջանում:

**Տնտեսություն.** 1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենոտոյան մլուկի հասցրած վնասների հետևանքով, Ղուլալիսի գյուղատնտեսությունը հայտնվել է դժվարին կացության մեջ՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով երկրորդ կարգի բնակավայրերի շարքում<sup>1</sup>:

Գյուղի նոր շրջանի պատմության համար թերևս հիշատակելի են 1937 թ. համագյուղացիների ուժերով խմելու ջուրը խողովակներով գյուղ հասցնելը, Երկրորդ աշխարհամարտին 150 դուլալիսցիների մասնակից լինելը (գոհվել է 60-ը)<sup>2</sup>, համագյուղացի թուրքերի աքսորը 1944-ին և այլն:

**Բնակչություն.** միջնադարում Ջավախքի հայաշատ գյուղերից մեկն էր<sup>3</sup>: Դրա վառ ապացույցն է գյուղի հյուսիսարևելյան եզրին տարածված ԺԳ-ԺԴ դարերի հայկական ընդարձակ գերեզմանատունը: ԺԷ դարի առաջին կեսին տեղի տալով Ախալքալաքի փաշաների բռնություններին՝ դուլալիսցիների մի մասն ընդունել էր մահմեդականություն և

դրա շնորհիվ շարունակել գոյատևել հայրենի գյուղում: 1870 թ. նրանց թիվը կազմում էր 16 տուն (103 ար., 111 իգ.)<sup>4</sup>: Մինչև 1918 թ. Ղուլալիսը կիսով չափ թրքաբնակ էր: Վերջիններիս մեծ մասը նույն թվականին փոխադրվել է Աղբաբայի (Ամասիա) շրջան:

Շրջակա բնակավայրերի համեմատ այստեղ նորաբնակ հայերը փոքր-ինչ ավելի ուշ ժամանակներում են հաստատվել: Դա տեղի է ունեցել 1870-ականների սկզբներին: Վերջիններս ծագումով Էրզրումի գավառից էին, բայց Ղուլալիս էին փոխադրվել Ծաղկայի գավառի Դարաքյով, Ղաբուռ, Ջինիս և այլ գյուղերից: Սակայն այսօր էլ տեղացիները վկայում են, որ 1918 թ., երբ գյուղում թուրքերի թիվն էր շուրջ 30 տուն, հայերի մեջ կային նաև «եռլականներ» (տեղաբնիկներ), մասնավորապես Մանվելյանները (13-14 տուն), Անտոնյանները (7-8 տուն) և Գևորգյանները (7-8 տուն):

*Վիճակագրություն.* վավերագրերում գյուղի հայ բնակչության թվաքանակի մասին տվյալներն առկա են՝ սկսած 1870-ական թվականներից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1870 <sup>5</sup>	5	36	20	56
1875 <sup>6</sup>	5			
1877 <sup>7</sup>		49	34	83
1878 <sup>8</sup>		49	34	83
1880 <sup>9</sup>		49	36	85
1881 <sup>10</sup>		49	39	88
1882 <sup>11</sup>		53	38	91
1883 <sup>12</sup>		54	39	93
1884 <sup>13</sup>	7			
1885 <sup>14</sup>		61	48	109
1887 <sup>15</sup>		68	50	118

4 CMOT, Դ. 1, էջ 28:

5 Նույն տեղում:

6 «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:

7 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, ք. 30-31:

8 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:

9 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:

10 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:

11 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:

12 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:

13 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:

15 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:

1 **Մայլիմեան**, Անբերրիությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:

2 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:

3 Գյուղի անվան ծագման հարցի առթիվ դեռևս 1898 թ. տպագրած մի հոդվածում Թիֆլիսի Սբ. Նինայի անվան օրիորդաց ուսումնարանի ուսուցիչ Ի. Պ. Ռոստոմովը հայտնել է այն կարծիքը, թե իբր Ղուլալիս տեղանունը ծագում է գյուղամիջում գտնվող ամրոց-աշտարակից, քանի որ վերջինս իր արտաքին տեսքով նման էր զինու սափորի՝ «կուլայի» (**Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 75):

1889 <sup>16</sup>		73	48	121
1890 <sup>17</sup>		72	51	123
1891 <sup>18</sup>		76	54	130
1892 <sup>19</sup>		81	55	136
1893 <sup>20</sup>		83	57	140
1894 <sup>21</sup>		86	61	147
1897 <sup>22</sup>		101	65	166
1898 <sup>23</sup>		104	66	170
1899 <sup>24</sup>		108	70	178
1900 <sup>25</sup>		114	70	184
1901 <sup>26</sup>		114	73	187
1902 <sup>27</sup>		118	74	192
1905 <sup>28</sup>		124	81	205
1908 <sup>29</sup>	18	22	86	208
1910 <sup>30</sup>		125	100	225
1912 <sup>31</sup>		136	104	240
1913 <sup>32</sup>	13			150
1914 <sup>33</sup>		137	104	241
1916 <sup>34</sup>		134	98	232
1918 <sup>35</sup>	25	170	138	308
1921 <sup>36</sup>	27	25	52	
1987 <sup>37</sup>	180			1200

**Գայրոց.** 1989 թ. Ղուվալիսում գործում էր ութամյա դպրոց՝ 125 աշակերտով:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** գտնվում է գյուղամիջում: Կառուցվել է ԺԹ դարի վերջին՝ միջնադարյան ավերված եկեղեցու տեղում: Ի դեպ, 1894 թ. մի վավերագրում եկեղեցին հիշվում է Սբ. Ստեփանոս<sup>38</sup>, 1899-1910 թթ. վավերագրերում՝ Սբ. Աստվածածին<sup>39</sup>, իսկ 1921 թ.՝ Սբ. Լուսավորիչ<sup>40</sup> անուններով: 1903 թ. լրատվական մի հաղորդման համաձայն՝ դուլալիսցիները նախաձեռնել էին եկեղեցու հերթական վերաշինության գործը<sup>41</sup>:

16 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 17 Նույն տեղում, գ. 3887, ք. 144:  
 18 Նույն տեղում, գ. 3889, ք. 143:  
 19 Նույն տեղում, գ. 3891, ք. 115:  
 20 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 21 Նույն տեղում, գ. 3896, ք. 168-169: Նաև՝ ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21:  
 22 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 141-142:  
 23 Նույն տեղում, գ. 3897, ք. 163:  
 24 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 25 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 26 Նույն տեղում, գ. 3906, ք. 67: Նույն քվականին մեկ այլ տվյալի համաձայն՝ գյուղն ուներ 116 ար., 73 իգ. բնակիչ (ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 134-135):  
 27 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 17-18:  
 28 Նույն տեղում, գ. 3912, ք. 260-261:  
 29 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 30 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 31 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 32 «Արարատ», 1903, էջ 436:  
 33 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 171-172:  
 34 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 18-19:  
 35 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-2:  
 36 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 4:  
 37 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 38 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298:  
 39 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, մաս՝ գ. 3917:  
 40 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895:  
 41 «Արարատ», 1903, էջ 437:



ՂՈՒԼԱԼԻՍ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հր-ից, հր-ալ-ից, 1060 թ. կառուցված եկեղեցու խաչաքանդակ բեկորներից մեկը և հաստակազիծը

Եկեղեցին միանավ, փայտածածկ շենք է: Հյուսիսային պատի մեջ իր ավանդական տեղում է մկրտարանի ավազանը, ավանդատներ չունի: Ի







*ՂՈՒՆԱԼԻՍ. հատվածներ գյուղի հայոց միջնադարյան գերեզմանոցից*








ՂՈՒՒՆԻՍ. Խաչքար, ԺԴ դարի սկիզբ



**Ամրոց-աշտարակ.** ներկայումս ավերակ է (ԺԹ դարի վերջերին դեռևս կանգուն էր): Ավերակների մեջ պահպանվել է դամբարան հիշեցնող ստորգետնյա երկմաս մի շինություն:

**Գավաշեն (Կավաշեն) գյուղատեղի.** գտնվում է Ղուլալիսի դիմաց՝ արևելյան կողմում՝ Քառասնակն վտակի աջափնյա տարածքում<sup>42</sup>:



ՂՈՒԱԼԻՍ. ավերված եկեղեցու բարավոր հայոց գերեզմանոցում

<sup>42</sup> Զեյթքենի շրջան Ե., մշվ. աշխ., էջ 62:





*ՂՈՒԱԼԻՍ. խոյածն տապանաքար և քառակող կործոյի պատվանդան գյոտամիջոմ*

ՄԱՋԱԴԻԱ



ՄԱՋԱԴԻԱ. գյուղի տեսքը հս-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 5 կմ հյուսիս-արևելք, ծ. մ. 1680-1740 մ բարձրության վրա, Ախալքալաք-Բակուրիան մայրուղուց 1,5 կմ հեռու:

**Պատմություն.** համանուն փոքր գյուղից տարբերակելու համար 1595 թ. կազմված բուրքական հարկացուցակում բնակավայրը հիշատակվում է Մեծ Մաջաղիա անվամբ՝ 18 տուն բնակչով և 13.000 ակչն հարկաչափով<sup>1</sup>: Հայաթափ է եղել ԺԸ դարում: Մահմեդական տանուտերերի տիրապետության ներքո, օրինակ, 1704-1705 թթ.՝ տանուտեր Իսմայիլի օրոք, գյուղը հարկվել է 12.000 ակչե<sup>2</sup>:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով Մաջաղիայի բնակելի 78 տնից 17-ը քանդվել է, բնակիչներից 1-ը՝ զոհվել<sup>3</sup>: Կրած զգալի կորուստների պատճառով գյուղը 1901 թ. ընդգրկվել էր կարիքի մեջ գտնվող գյուղերի ցուցակում<sup>4</sup>:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Մաջաղիայի գյու-

ղատնտեսությունը հայտնվել է բարդագույն իրավիճակում՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով առավել տուժած բնակավայրերի շարքում<sup>5</sup>: Գյուղում հաշվառվել է առաջնահերթ օգնության կարոտ 14 տուն՝ 67 բնակչով<sup>6</sup>:

Մաջաղիայից Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 172 հոգուց 72-ը զոհվել է<sup>7</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները (29 ընտանիք) 1829-30 թթ. փոխադրվել են Էրզրումի Ումուտում<sup>8</sup> գյուղից:

**Կառուցապատում.** ԺԹ դարի վերջերին այցելում գյուղը նկարագրել է այսպես. «Տները շինուած են իրար կից միայարկանի հողէ կտուրներով. փողոցները ծառուծուած է...: Գիւղի արևմտեան կողմը կան մի շարք ծառեր և շինուած է հասարակաց հացի շտեմարանը»<sup>9</sup>:

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი", էջ 219:  
2 "ხილდორის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.", էջ 109:  
3 «Մշակ», 1900, № 43, էջ 2:  
4 «Մշակ», 1901, № 40, էջ 2:

5 Մալխանյան, Անբերիտիքի մը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:  
6 Նույն տեղում, էջ 249:  
7 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:  
8 Ումուտումի տեղադրության մասին տես սույն աշխ., էջ 30, № 4 ծանոթ.:  
9 «Նոր-Ղար», 1896, № 133, էջ 2-3:


*Վիճակագրություն*։ Մաջադիայում հաստատվելուց ի վեր գյուղի բնակչության թվաքանակն անընդմեջ աճել է։ Այդ երևույթն ակնառու է ստորև ներկայացվող աղյուսակում.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>10</sup>		127	131	258
1841 <sup>11</sup>		143	143	286
1842 <sup>12</sup>		151	147	298
1844 <sup>13</sup>		161	159	320
1845 <sup>14</sup>		152	160	312
1847 <sup>15</sup>		154	150	304
1849 <sup>16</sup>		160	157	317
1851 <sup>17</sup>	36	156	161	317
1853 <sup>18</sup>		173	183	356
1854 <sup>19</sup>		180	186	366
1857 <sup>20</sup>		170	182	352
1860 <sup>21</sup>		171	193	364
1861 <sup>22</sup>		190	193	383
1862 <sup>23</sup>		195	201	396
1863 <sup>24</sup>		202	205	407
1864 <sup>25</sup>		208	213	421
1865 <sup>26</sup>		202	210	412
1866 <sup>27</sup>	39	202	210	412
1867 <sup>28</sup>		215	224	439
1868 <sup>29</sup>		219	232	451
1869 <sup>30</sup>		227	236	463
1870 <sup>31</sup>	23	227	241	463
1871 <sup>32</sup>		243	241	484
1872 <sup>33</sup>		243	241	484
1873 <sup>34</sup>		249	266	515
1874 <sup>35</sup>				524
1875 <sup>36</sup>	50			527
1876 <sup>37</sup>		264	270	534
1877 <sup>38</sup>		235	226	461

10 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:  
 11 Նույն տեղում, գ. 3802, ք. 64:  
 12 Նույն տեղում, գ. 3805, ք. 78:  
 13 Նույն տեղում, գ. 3809, ք. 15:  
 14 Նույն տեղում, գ. 3811, ք. 72-73:  
 15 Նույն տեղում, գ. 3814, ք. 35:  
 16 Նույն տեղում, գ. 3818, ք. 40:  
 17 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 30:  
 18 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743 ք. 37-38:  
 19 Նույն տեղում, գ. 3825, ք. 47-48:  
 20 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:  
 21 Նույն տեղում, գ. 3833, ք. 66:  
 22 Նույն տեղում, գ. 3839, ք. 26:  
 23 Նույն տեղում, գ. 3836, ք. 22:  
 24 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 25 Նույն տեղում, գ. 3846, ք. 10:  
 26 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-14:  
 27 Նշվ. գործը, ք. 74:  
 28 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 29 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 30 Նույն տեղում, գ. 3856, ք. 10: Նաև՝ գ. 3855, ք. 6-7:  
 31 Նույն տեղում, գ. 3857, ք. 19-20:  
 32 Նույն տեղում, գ. 3858, ք. 10:  
 33 Նույն տեղում, գ. 3859, ք. 57:  
 34 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 35 Նույն տեղում, գ. 3864, ք. 27:  
 36 Նույն տեղում, գ. 3866, ք. 21:  
 37 Նույն տեղում, գ. 3868, ք. 30-31:  
 38 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:

1878 <sup>39</sup>		246	233	479
1880 <sup>40</sup>		257	250	507
1881 <sup>41</sup>		256	252	508
1882 <sup>42</sup>		266	260	526
1883 <sup>43</sup>		277	260	537
1884 <sup>44</sup>	45			
1885 <sup>45</sup>		274	263	537
1887 <sup>46</sup>		282	282	564
1889 <sup>47</sup>		302	283	585
1890 <sup>48</sup>		318	296	614
1891 <sup>49</sup>		330	305	635
1892 <sup>50</sup>		339	299	638
1893 <sup>51</sup>		346	306	652
1894 <sup>52</sup>		340	305	645
1896 <sup>53</sup>	70			
1897 <sup>54</sup>		386	341	727
1898 <sup>55</sup>		410	354	764
1899 <sup>56</sup>	78	384	350	734
1900 <sup>57</sup>		402	362	764
1901 <sup>58</sup>		419	370	789
1902 <sup>59</sup>		415	376	791
1905 <sup>60</sup>		434	407	841
1907 <sup>61</sup>				800
1908 <sup>62</sup>	91	462	405	867
1910 <sup>63</sup>		490	444	934
1912 <sup>64</sup>		507	453	960
1914 <sup>65</sup>		526	484	1010
1916 <sup>66</sup>		530	585	1115
1918 <sup>67</sup>	108	534	476	1010
1919 <sup>68</sup>				1105
1921 <sup>69</sup>		300	200	500
1987 <sup>70</sup>	375			1628

39 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 40 Նույն տեղում, գ. 3872, ք. 88:  
 41 Նույն տեղում, գ. 3873, ք. 98:  
 42 Նույն տեղում, գ. 3874, ք. 44:  
 43 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:  
 44 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 45 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 46 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 47 Նույն տեղում, գ. 3884, ք. 65-66:  
 48 Նույն տեղում, գ. 3887, ք. 145:  
 49 Նույն տեղում, գ. 3889, ք. 144:  
 50 Նույն տեղում, գ. 3891, ք. 116:  
 51 Նույն տեղում, գ. 3895, ք. 120-121:  
 52 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22:  
 53 «Նոր-Դար», 1896, № 133, էջ 2-3:  
 54 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 142-143:  
 55 Նույն տեղում, գ. 3897, ք. 165:  
 56 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 57 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 58 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 59 Նույն տեղում, գ. 3907, ք. 19-20:  
 60 Նույն տեղում, գ. 3912, ք. 262-263:  
 61 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 95, ք. 154:  
 62 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 63 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 64 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 65 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 173-174: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ վկայագրում ցույց է տրված 1105 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 153):  
 66 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 20-21:  
 67 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 68 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 64, ք. 6:  
 69 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 70 Ըստ գյուղխորհրդի տվյալների:



ՄԱՋԱԴԻԱ. Սր. Լուսավորիչ եկեղեցու և շրջապարսպի տեսքը ամ-ից, հր-ամ-ից, ներքին տեսքը դեպի ալ և խոյակ

**Դպրոց.** գյուղի եկեղեցական-ծխական դպրոցի մասին հայտնի է միայն, որ գործել է 1881 թ.՝ 1 ուսուցչով, 42 աշակերտով<sup>71</sup>:

**Եկեղեցի.** 1840-1850-ական թվականներին Մաջադիայի եկեղեցին հիշվում է Սր. Հարություն, իսկ 1860-ականների սկզբից՝ արդեն Սր. Լուսավորիչ անվամբ: Հետևում է, որ 1850-1860-ական թվականների սահմանագլխին տեղի էին ունեցել եկեղեցու վերակառուցման աշխատանքներ: Ներկայիս եկեղեցին կառուցվել է 1867 թ.: Դա է վկայում շինարարական արձանագրությունը:

Եկեղեցին «քարաշէն, կամարակապ»<sup>72</sup> շինություն է և ինչպես այժմ, այնպես էլ ԺԹ դարում եղել

է գյուղի ճարտարապետական զարդը. «...գիւղի մէջ տեղը կառուցուած է եկեղեցին, որը իւր շքեղութեամբ գիւղի միակ զարդն է կազմում արտաքին ձևով»<sup>73</sup>:

Արձանագրություն. եկեղեցու մուտքից վեր, բարավորին՝ 13 տող.

1867 ԱՄԻ ՇԻՆԵՑԱԻ | Ս(ՈՒՐ)Բ ԼՈՒՍԱՎՈՐ-ՉԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ | ԱՐԴ(Ե)ԱՄԲ ՀԱՄԱՐԱԿՈՒԹ(ԵԱ)Ն | ՄԱՃԱՏԻԱ ԳԻՒԴԻ | ՉԵՈՒԱՄԲ ՎԱՐՊԵՏ ԿՈՏՄԱՆԵԱՆԻ ԿԱՐԱՊԵՏ, | Ի ՕԾՄԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈ(ՊՈ)Ս | ՄԱՔԻՆԵԱՆՅ ԵՐԱՇԽԱ(Բ)ՈՐ | ԿԱՐԱՊԵՏ Զ(Ա)ՀԱՆ(Ա)Յ(Ի) Տ(Է)Ր | ՅԱՐ(ՈՒ)ԹՈՒՆԵ(Ա)Ն Փ(Ո)ՔՐ ԳՐԻԳ(Ո)Ր | Զ(Ա)Հ(Ա)ՆԱ ՊԱՐՕՆ ՎԷ(Հ)ԱՓԱՌ | ՄԱՏԹԵՈՍ ԿԱ(Թ)ՕՂԻԿ(ՈՍԻ) | ԱՍ(ԵՆԱՅ)Ն ՀԱՅ(ՈՅ):

Հրատ. առաջին անգամ:

71 Խուրդյան Ս., մշվ. աշխ., էջ 522:

72 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

73 «Նոր-Դար», 1896, № 133, էջ 2-3:



ՄԱՋԱԴԻԱ. գյուղամիջի հայոց միջնադարյան գերեզմանոցը, քառակող կոթողների բեկորներ (Ջ-Է դարեր) և խաչքար (ԺԵ-ԺՁ դդ.)

**Գերեզմանոց.** Սբ. Լուսավորիչ եկեղեցուց ոչ հեռու տարածված հայոց գերեզմանատանը պահպանվել են Ջ-Է դարերին բնորոշ քառակող կոթողների բեկորներ, ԺԵ-ԺՁ դարով թվագրվող արձանագիր մեկ խաչքար, բազմաթիվ սալատապաններ, ինչպես նաև վրաց մեսրոպյան տառերով, եռատող արձանագրությամբ, ուղղանկյունաձև տապանաքար:

Խաչքար՝ գեղաքանդակ. ձախակողմյան ուղղահայաց եզրին և ստորին թևերի երկու կողմում փորագրված է.

ԵՄ Խ(ՈՃԱ՞) Խ... ԿԱ(Ն)ԿՆ(ԵՑԻ) ... | ... ՍԱՐԳՍԻՆ:

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՏԷՐ ԱԻՏՏԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՀԱՆԳՈՒՄՅԷ Ի ԼՈՅՍ ԷՐ Ի ԹԻՒՆ 1850:

Հրատ. առաջին անգամ:

Արձանագիր քար՝ վրաց մեսրոպատառ արձանագրությամբ. Կ՛Դ ՇԾՆԾԴ ԿԼ՛ԽԵ Ե[ա...] | ՇՓԸՆԳԵՇ ԺՓՂԻ ՇՇ ԺԴ ԺՆ | Շ՛աԸ -ԿԴԳՆԴԺԳՆԺԽԵՓ

Ք(ՐՈՅԵ)Յ ԵԸԸԵ Ե(Ե)ԳՐ(Ե)Ե ԿՈ[ՅՐԱՅԱԼԵԹԻ] | ԵՅԵ(Ե)ՅԹԱ Մ(Ե)ՅՅԻ ԸԱ ԺԵ Մ(Օ)Ն(Օ) | Ե(Մ)ՕԵ - ԵԵ--ՕՄԹՕԸՐԵՏԵՅ

Թարգմ. Քրիստոս, փառավորի Բագրատ կյուրապաղատին՝ Արխագաց թագավորին և նրա որդի Աշոտին...


Հրատ. “Ջագսեթու. օստորոյլ-եւրոտոմոկեցրջլու ԳՅԱՄԿԵԼԵՅԻ”, ԹԺԸԸԸԸԸ, 2000, էջ 52:





Տարընքեցում. «Ջաջախեոյ. օստորօյլ-խորոտմօժըրջւ-  
 րլօ ց՝աթքլլեզլեզլօ»-ում թ՝ ճալլէքքլլ օլլալնօ Յաօօ Եաղրաթլլ:  
 Շառօր. «Ջաջախեոյ. օստորօյլ-խորոտմօժըրջւօ  
 ց՝աթքլլեզլեզլօ»-ի խաթրաղրալկաղմի կարծիքօլ, արճառագրօթլլօյ-  
 նը վերաբերում է Բաղրաօ Գ-ին (975-1014 թթ.) ) և փորագրվել է  
 1001-1008 թթ.:

**Սք. Հոփհաննես վանք.** Մաղաղիալից 0,5 կմ  
 հլոյաիս-արևելք գտնվում է շրջարբնակ հալոյթլլան  
 կարևոր ուիստատեղիներից մեկը՝ Սք. Հոփհաննես



*ՄԱՋԱԴԻԱ. Սք. Հոփհաննես վանքի հատակագիծը, տեսքը  
 հր-ից, հս-ալ-ից և խաչաքանդակի հր ճակատին*



վանքը: Միանալ, թաղաճաճկ, համակ սրբատաշ  
 քարից շինութլլուն է, որի մուտքը բացվաճ է հարա-  
 վից կցվաճ սրահի մեղ: Արտաթին չափերն են՝ 7,20  
 x 4,35 մ: Ներկալոյմնս կանգուն է:

ՄԱՐՏՈՒՆԻ (ՓՈՔՐ ԽՈՍՊԻԱ)



ՄԱՐՏՈՒՆԻ (ՓՈՔՐ ԽՈՍՊԻԱ). գյուղի տեսքը հս-ամ-ից

**Տեղադրություն.** Ախալքալաքից 3 կմ հարավ, Փարվանա գետի աջ ափին, ծ. ս. 1700-1720 մ բարձրության վրա, Մեծ Խոսպիային դեմ հանդիման տարածվում է համանուն Փոքր գյուղը, որն այժմ կոչվում է Մարտունի:

**Բնակչություն.** 1595 թ. գյուղն ունեցել է 9 տուն բնակիչ (վերջիններիս թվում հիշվում է տեր Բեկի որդի Սկրտիչը), հարկվել է 3.200 ակչե<sup>1</sup>: Հայաթափ է եղել ԺԸ դարում: Վերստին բնակեցվել է 1829-30 թթ.՝ ռուս-թուրքական պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ ի հաշիվ Էրզրումի նահանգի Թորթում գավառի Շինետ (Շիփեկ)<sup>2</sup> գյուղից փոխադրված հայերի:

1884/85 <sup>72</sup>	գործել է		

65 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:

66 Խուրդյան Ս., նշվ. աշխ., էջ 522:

67 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 43:

68 Նույն տեղում, գ. 3850, ք. 52:

69 Նույն տեղում, ք. 130:

70 Նույն տեղում, ք. 177:

71 Խուրդյան Ս., նույն տեղում:

72 «Արձագանք», 1885, № 3, էջ 43: Տե՛ս նաև՝ Խուրդյան Ս., նույն տեղում:

**Սր. Աստվածածին եկեղեցի.** հիմնադրվել է 1830-ական թվականներին. «...գեկեղեցին Մերենայ վերանորոգեալ են Հայք ի հիմանց անտի...»<sup>73</sup>: Շինությունը քարաշեն էր, փայտածածկ<sup>74</sup>: 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով եկեղեցին փլվել է<sup>75</sup>: Տարիներ անց եկեղեցին վերստին վերականգնվել է: Ներկայումս քայքայված և վթարային վիճակում է:

**Խաչքար.** գյուղամիջում եկեղեցուց ոչ հեռու բխող «Լուսաղբյուրի» պատին, տեղադրված է ԺԷ-ԺԸ դարերով թվագրվող մեկ ամբողջական խաչքար:

73 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 306, ք. 13:

74 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

75 **Мущкетов И.**, նշվ. աշխ., էջ 26:



*ՄԵՐԵՆԻԱ. «Կոտրած ժամ» կիսավեր եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ամ-ից և ամ-ից*

*ՄԵՐԵՆԻԱ. քառակող կորդոնների բեկորներ Սբ. Աստվածածին եկեղեցու որմներում և խաչքար (ԺԷ դար) եկեղեցու բակում*

**Խիդիսցվար գյուղատեղի.** Մերենիայից 2 կմ հարավ-արևմուտք պահպանված գյուղատեղին, որը հայտնի է Խիդիսցվար (վրաց. Կամրջախաչ) անվամբ, գրավոր աղբյուրներում հիշվում է դեռևս 1595 թ.<sup>76</sup> 3 տուն բնակչությամբ և 9.000 ակչե հարկաչափով<sup>76</sup>: 1728-1729 թթ.<sup>77</sup> Մուստաֆա տանուտիրոջ օրոք, հարկվել է 4.500<sup>77</sup>, իսկ Խալիլ տանուտիրոջ օրոք (նույն թվականին)՝ 14.000 ակչե<sup>78</sup>:

*Եկեղեցի.* գյուղատեղին ներկայումս հայտնի է «Կոտրած ժամ» անվամբ, քանի որ տարածքում քիչ

<sup>76</sup> «Զբոսընթացի վեց շաբաթի ընթացքում», էջ 193:  
<sup>77</sup> «Ֆեդոսի յոթնամյա ճանապարհը 1694-1732 ՎՎ.», էջ 198:  
<sup>78</sup> Նույն տեղում:



ՄԵՐԵՆԻԱ. հատված «Կոտրած ժամ» կիսավեր եկեղեցու ամ ճակատից, որմնախոյակ խորանի կորուսյալ մեջ և հատակագիծը

ՄԵՐԵՆԻԱ. «Կոտրած ժամ» կիսավեր եկեղեցու տեսքը հս-ալ-ից, 1988 թ. և 2001 թ. կամայական վերակառուցումից հետո, խոյածև տապանաքար եկեղեցու հր պատին կից

թե շատ պահպանված միակ շինությունը կիսավեր եկեղեցին է: Վերջինս ունի միանավ, թաղածածկ հորինվածք, կառուցված է համակ սրբատաշ քարով (արտաքին չափերն են՝ 8,20 x 4,25 մ): Ըստ հո-

րինվածքային և կառուցողական առանձնահատկությունների քննության՝ եկեղեցին կարելի է թվագրել



ՄԵՐԵՆԻԱ. Խիդիսզվար գյուղատեղիի միջնադարյան գերեզմանոցի մնացորդները և խոյածև տապանաքար

ԺԳ-ԺԴ դդ.: 2000-2001 թթ. ընթացքում մերենիացիները, անշուշտ, դրական մղումներով, սակայն անգիտորեն և կամայաբար վերակառուցել են եկեղեցին, որի պատճառով պատմական հուշարձանը միանգամայն և հիմնավորապես աղճատվել է<sup>79</sup>:

*Գերեզմանոց.* Խիդիսզվար գյուղատեղիի գերեզմանոցում պահպանվել են խաչքարերի մի քանի պատվանդաններ ու անարձանագիր խոյածև և առավելապես անմշակ, սալաքարային տապանաքարեր:

<sup>79</sup> Առանց վերականգնման հաստատված նախագծի և մասնագիտական վերահսկողության կատարված աշխատանքների հետևանքով, ցավոք, խաթարվել է եկեղեցու ճարտարապետական նկարագիրը: Պատմական հուշարձանների նկատմամբ այսօրինակ կամայական վերաբերմունքը խիստ դատապարտելի է: Ցավում ենք, սակայն, տեղի ունեցածին անդրադարձած վրացական լրատվամիջոցները այս խնդրում ևս ի գորու չեն գտնվել գերծ մնալու կանխակալ վերաբերմունքից և նշել են, թե 2000 թ. աշնանը Մերենիա գյուղի մոտ վրացական 11-րդ դարի կիսավեր եկեղեցին իբրև թե վերականգնվել է հայկական ոճով և այդ կերպ յուրացվել: Մինչդեռ իրականում կատարվել է պատմական հուշարձանի սպորինի, կամայական ու անգրագետ վերակառուցում: Եվ միջնադարյան գողտրիկ հուշարձանը ոչ թե ստացել է «հայկական ոճ», ինչպես փորձում են հավաստիացնել հուշարձանի ճակատագրով «մտահոգված» վրացի թղթակիցները («ջողօս ճօճոթ», 20.12.2001, Նակ՝ № 283: «ճջօճօճօճօ», 20.12.2001, № 350: «ճ ԵՏՏՅՅ», 21.12.2001, № 226), այլ աղճատվել ու աղավաղվել է և կորցրել պատմական հուշարձանին հատուկ նկարագիրը:



ՄՅԱՄՆԻԿՅԱՆ



ՄՅԱՄՆԻԿՅԱՆ գյուղի տեսքը հս-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 17 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1850-1880 մ բարձրության վրա:

**Հիմնադրում.** բնակավայրը հիմնադրել են 1920-ական թվականներին Սուղայից այստեղ փոխադրված հայերը:

**Պատմություն.** ներկայիս Մյասնիկյան սակավաբնակ գյուղը հիմնված է պատմական Ղաղալա (Ղատանա) գյուղատեղիի տարածքում, ուստի վերջինիս պատմությունը հարկ է վերագրել ներկայիս գյուղին:

Ղաղալան 1595 թ. հարկացուցակում հիշվում է 5.000 ալչե հարկաչափով<sup>1</sup>: Վերջինս տեղացիներին հայտնի է փոքր-ինչ այլափոխված՝ «Ղատանա» անվանաձևով:

Ի դեպ, Ղաղալան մեկն էր այն ամայացած գյուղերից, որոնք, որպես կալվածք, 1841 թ. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին գնել էր Ախալքալաքի Սբ. Փրկիչ եկեղեցու համար<sup>2</sup>:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 34 մյասնիկյանցիներից 14-ը զոհվել է<sup>3</sup>:

**Բնակչություն.** 1987 թ. Մյասնիկյանը զուտ հայաբնակ էր և ուներ 35 տուն՝ 160 բնակիչ:

**Եկեղեցի.** Ղաղալա (Ղատանա) գյուղատեղիում քիչ թե շատ աչքի ընկնող հուշարձանը երբեմնի ե-



ՄՅԱՄՆԻԿՅԱՆ. Ղաղալա (Ղատանա) գյուղատեղիի եկեղեցու մնացորդները

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი ღავთარი", էջ 289:

2 «Մեղու Հայաստանի», 1875, № 38, էջ 1:

3 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:



*ՄՅԱՄՆԻԿՅԱՆ. քառակող կոթողների բեկորներ (Թ-Ժ դդ.) Ղաղալա (Ղատանա) գյուղատեղիի տարածքում գոյացած ժամանակակից գերեզմանոցում, կործանված եկեղեցու սեղանի վեմ և խոյակ գերեզմանոցում*

կեղեցու մնացորդներն են, որոնք վկայում են շինության՝ համակ սրբատաշ, մեծաչափ քարով կառուցված լինելը (1920-30-ական թվականներին, տոգորված բոլշևիկյան անմշակույթ և վայրենաբարո գաղափարներով, գյուղացիներն իսպառ կործանել են եկեղեցին, իսկ քարերը գործածել այլ կառույցներում): Գյուղատեղիի տարածքում հողային աշխա-

տանքների ժամանակ հայտնաբերվել են ջրմուղի կավե խողովակներ:

Մյասնիկյան գյուղի ներկայիս գերեզմանոցում են գտնվում Ղաղալա (Ղատանա) գյուղատեղիի տարածքից փոխադրված մի շարք հուշարձաններ (եկեղեցու սեղանի վեմ, քառակող կոթողի բեկորներ, սյան խարխախ և այլն):

ՄՈՂԵԳԱՄ



ՄՈՂԵԳԱՄ. գյուղի տեսքը հր-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 23 կմ հյուսիս, ծ. ս. 1940-1980 մ բարձրության վրա, հարավարևելահայաց լեռնալանջին: Հայտնի է խստաշունչ եղանակային պայմաններով:

**Պատմություն.** գյուղի մասին մեզ հայտնի առաջին վկայությունը 1595 թ-ից է, երբ 5.000 ակչե հարկաչափով ռայաներից ազատ բնակավայրը հիշվում է Մողեգան անվանումով<sup>1</sup>: Բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1719-1720 թթ., տանուտեր Սուլեյմանի օրոք, Մողեգամից հարկվել է 5.000 ակչե<sup>2</sup>:

**Բնակչություն.** մողեգամցիները ծագումով դարակեպակցիներ<sup>3</sup> են, որոնք 1890-ական թվականներին փոխադրվել էին Ազավրեթից՝ հաստատվելով Ազավրեթի ամառանոց Մողեգամում:

**Վիճակագրություն.** զուտ հայաբնակ գյուղը 1914 թ. ուներ 367 շունչ<sup>4</sup>, 1918-ին՝ 22 տուն (165 ար.,



ՄՈՂԵԳԱՄ. գյուղի տեսքը հր-ալ-ից

170 իգ.)<sup>5</sup>, 1921-ին՝ 100 բնակիչ (60 ար., 40 իգ.)<sup>6</sup>, իսկ 1987-ին՝ 63 տուն, 257 շունչ<sup>7</sup>:

**Հուշարձաններ.** գյուղում պահպանված ուշագրավ կառույցներից են Կալին Փիլոյանի տունը՝ կառուցված 1867-1871 թթ. (օջախի քանդակազարդ

1 "Գյւրջօսեճանիս յօղաօյտօս լօղի լօղօարօ", էջ 209:

2 "Նօղօղօրօս յօղօղօտօս չճօղօ լօղօարօ 1694-1732 ՎՎ.", էջ 161:

3 Դարակեպակ գյուղի մասին տես սույն աշխ., էջ 37, ծանոթ. № 3:

4 ՀԱԴ, ֆ. 469, ց. 3, գ. 2, թ. 1-4:

5 "Кавказский календарь на 1915 г.", էջ 159:

6 ՀԱԴ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 1:

7 Ըստ գյուղխորհրդի տվյալների:



*ՄՈՂԵԳԱՄ. Կ. Փիլոյանի տան բուխարիկը, գյուղամերձ բնակատեղի և դամբարանաբլուր*

ու թվակիր քարով հանդերձ), եկեղեցին (1886 թ.): Գյուղի հարավային եզրին պահպանվում են սրբատաշ քարով, Ժ-ԺԱ դդ. կառուցված միանավ եկեղեցու, գյուղատեղիի և գերեզմանատան ավերակները:

**Բնակատեղի և դամբարաններ.** նախաքրիստոնեական շրջանի այս հուշարձանները պահպանվում են Մողեգամից 1 կմ հարավ՝ բլրի գագաթին:

ՄՈԼԻԹ



ՄՈԼԻԹ. գյուղի տեսքը հս-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 27 կմ հյուսիս-արևելք, Տաբաթուր լճի արևմտյան ափին, ծ. մ. 2020-2080 մ բարձրության վրա, Ախալքալաք-Բակուրիան մայրուղուն կից:

**Պատմություն.** գյուղի վերաբերյալ առաջին հիշատակություններից մեկը 1595 թ-ից է: Թուրքական կառավարության կազմած հարկացուցակում Մոլիթն այդ թվականին ազատ է եղել ռայաներից, հարկվել է 4.000 ակչե<sup>1</sup>: Բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1724-1725 թթ.՝ տանուտեր Ահմեդի կառավարման ժամանակ, հարկվել է 5.999 ակչե<sup>2</sup>:

**Բնակչություն.** Մոլիթը մինչև 1860-ականը ամառային ու անբնակ էր: Այդտեղ հաստատված հայերը նույնպես Ախալքալաքի գավառից էին, իսկ ծագումով՝ Կարնո (Էրզրում) նահանգի 1829-30 թթ. գաղթականներ. «...Մոլիթի մօտ 25 տունը գաղթած են թե մեր գառառի Չազ և Տրկնա գիւղերից և թե Ծալկա-

յից...»<sup>3</sup>: Նոր բնակավայրում էլ դեռևս երկար ժամանակ մոլիթցիները գտնվել են տնտեսական այնպիսի սուղ կացության մեջ, որ չեն կարողացել վճարել հողերից օգտվելու կապալը<sup>4</sup>:

**Վիճակագրություն.** վավերագրերի ուսումնասիրությունից երևում է, որ Մոլիթը գավառի հայաբնակ փոքր գյուղերից էր: Բնակչության թվաքանակի կտրուկ աճ տեղի է ունեցել 1890-ական թվականների կեսերից.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1867 <sup>5</sup>		40	37	77
1868 <sup>6</sup>		43	57	100
1880 <sup>7</sup>		45	33	78
1881 <sup>8</sup>		47	32	80
1882 <sup>9</sup>		47	33	80
1884 <sup>10</sup>	12			

3 «Մշակ», 1903, № 54, էջ 3:

4 Նույն տեղում:

5 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 21-22:

6 Նույն տեղում, գ. 3853, թ. 28:

7 Նույն տեղում, գ. 3872, թ. 88-89:

8 Նույն տեղում, գ. 3873, թ. 97-98:

9 Նույն տեղում, գ. 3874, թ. 44:

10 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

1 "Գյւրջիսթանիս յոլլաօյտիս ճոլլո ճոլլո", էջ 208:

2 "Խոջեօրիս յոլլաօյտիս ճոլլո ճոլլո 1694-1732 ՎՎ.", էջ 181:

1885 <sup>11</sup>	47	33	80	
1887 <sup>12</sup>	50	39	89	
1889 <sup>13</sup>	56	44	100	
1890 <sup>14</sup>	56	42	98	
1891 <sup>15</sup>	57	44	101	
1892 <sup>16</sup>	57	46	103	
1893 <sup>17</sup>	57	49	106	
1894 <sup>18</sup>	55	50	105	
1897 <sup>19</sup>	173	143	322	
1898 <sup>20</sup>	177	153	330	
1899 <sup>21</sup>	156	151	307	
1900 <sup>22</sup>	164	159	323	
1901 <sup>23</sup>	169	163	332	
1902 <sup>24</sup>	171	169	349	
1905 <sup>25</sup>	184	184	368	
1906 <sup>26</sup>	184	184	368	
1908 <sup>27</sup>	24	197	194	391
1910 <sup>28</sup>	206	203	409	
1912 <sup>29</sup>	218	208	426	
1914 <sup>30</sup>	225	216	441	
1916 <sup>31</sup>	227	216	443	
1921 <sup>32</sup>	63	48	111	

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 50 մոլիթքցիներից 20-ը զոհվել է<sup>33</sup>:

**Սր. Գևորգ եկեղեցի.** կառուցվել է 1860-ական թվականների կեսերին, իսկ առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1867թ.<sup>34</sup>: Եկեղեցին մեծապես տուժել է 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից<sup>35</sup>: Վտանգված հատվածները նորոգելու թույլտվություն ստանալու նպատակով 1903 թ. հոգևոր իշխանություններին գրություն էր հղել եկեղեցու երեցփոխ Աղաջան Վարդերեսյանը<sup>36</sup>: Եկեղեցին ներկայումս կանգուն է:

**Ավերակ եկեղեցի.** գյուղամիջում պահպանվել են համակ սրբատաշ քարից, թաղածածկ, միանավ



ՄՈՒԽԹ. Սր. Գևորգ եկեղեցու տեսքը ամ-ից, խաչքարի պատվանդան և տապանաքար եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում

եկեղեցու մնացորդները (արտաքին չափերն են՝ 9,48 x 5,59 մ):

11 Նույն տեղում, գ. 3877, թ. 10:

12 Նույն տեղում, գ. 3880, թ. 40-41:

13 Նույն տեղում, գ. 3884, թ. 65-66:

14 Նույն տեղում, գ. 3887, թ. 147:

15 Նույն տեղում, գ. 3889, թ. 146:

16 Նույն տեղում, գ. 3891, թ. 118:

17 Նույն տեղում, գ. 3895, թ. 42-43:

18 Նույն տեղում, գ. 3896, թ. 171-172:

19 Նույն տեղում, գ. 3899, թ. 144-145:

20 Նույն տեղում, գ. 3897, թ. 167:

21 Նույն տեղում, գ. 3903, թ. 101-102:

22 Նույն տեղում, գ. 3905, թ. 52:

23 Նույն տեղում, գ. 3906, թ. 69:

24 Նույն տեղում, գ. 3907, թ. 21-22:

25 Նույն տեղում, գ. 3912, թ. 264-265:

26 Նույն տեղում, գ. 3915, թ. 20:

27 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 43:

28 Նույն տեղում, գ. 3917, թ. 136-137:

29 Նույն տեղում, գ. 3920, թ. 18-19:

30 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, թ. 175-176:

31 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 22-23:


32 ՀԱԴ, ֆ. 355, ց. 1, գ. 895, թ. 1:

33 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:

34 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851:

35 Мухомов И., նշվ. աշխ., էջ 18-19:

36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3423, թ. 1-3:



ՄՈԼԻԹ. գյուղամիջի հին եկեղեցու ավերակները և հատակագիծը

ՄՈԼԻԹ. գյուղամերձ մատուռի ավերակները և հատակագիծը

**Մատուռ.** գյուղի հյուսիսային բարձրադիր եզրին՝ մի բլրակի գագաթին, պահպանվել են միջնադարյան մատուռի ավերակները:

## ՄՈՒՐՃԱԽԵԹ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 4 կմ հարավ, Քառասնակն վտակի ձախ ավիին, ծ. մ. 1740 մ բարձրության վրա:

**Պատմություն.** 1595 թ. թուրքական հայտնի հարկացուցակում նշված են Մուրջախեթ անվամբ երեք գյուղ՝ Մեծ, Միջին և Փոքր (տրամաբանական է, որ Մեծ Մուրջախեթի անունը թաքնված է մնացել ի թիվս «Դավթար»-ի չընթերցված գյուղանունների), որոնցից Մեծը գտնվում էր Քառասնակն վտակից աջ, իսկ ձախ՝ Փոքրը<sup>1</sup>: Ներկայիս Մուրճախեթը համապատասխանում է համանուն Միջին գյուղին: Համաձայն հիշյալ «Դավթարի»՝ Միջին Մուրճախեթում հարկվել է 3.000<sup>2</sup>, իսկ Փոքրում՝ 2.000 ակչե<sup>3</sup>: Ի դեպ, Փոքր Մուրջախեթի 6 տուն բնակիչների թվում հիշվում են Սարգսի որդի Հանեսը, նրա եղբայր Ջիհանշահը<sup>4</sup> և այլք:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Մուրճախեթի գյուղատնտեսությունը հայտնվել է ծանրագույն կացության մեջ՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով առավել տուժած բնակավայրերի շարքում<sup>5</sup>: Գյուղում հաշվառվել է առաջնահերթ օգնության կարոտ 3 տուն՝ 12 բնակչով<sup>6</sup>:

1901 թ. Մուրճախեթը մտնում էր Ջավախքի՝ կարիքի մեջ գտնվող գյուղերի ցուցակի մեջ<sup>7</sup>:

Երկրորդ աշխարհամարտին Մուրճախեթից մասնակցել են 47 հոգի, որոնցից 18-ը զոհվել է<sup>8</sup>:

**Նկարագրություն.** ԺԹ դարավերջին այցելում այսպես է նկարագրել գյուղը. «Տները շինուած են քարից, հողէ կտորներով... փողոցները նեղ են և շատ կեղտոտ...»<sup>9</sup>:

**Բնակչություն.** Ջավախքի փոքր գյուղերից է: Ներկայիս բնակիչների նախնիները 1829 թ.

փոխադրվել են Արդահանի գավառից: 1918 թ. գյուղի հայությունը համարվել է Կարս գավառի գաղթականներով: Սկզբնական շրջանում գյուղի հայ բնակիչները դեռևս պահպանել էին թուրքական տիրապետությունից մնացած տխուր ժառանգություն՝ թրքախոսությունը, թեև մայրենին ևս վերստին ըսկսել էր արմատավորվել. «Մուրճախեթի հայերը խօսում են տաճկերեն, երբեմն ծերերը գործ են ածում հայերեն լեզուն: Բոլորովին օտարացած են Հայաստանեայց եկեղեցուց...»<sup>10</sup>:

Հայերի՝ Մուրճախեթում վերահաստատվելու պահին գյուղն ունեցել է թուրք և վրացի փոքրաթիվ բնակիչներ: Վիճակն անփոփոխ էր, օրինակ, 1860-ական թվականների վերջերին, երբ գյուղի 21 տուն բնակիչներից 11-ը մահմեդականներ էին (38 ար., 34 իգ.), 5-ը՝ վրացիներ (20 ար., 18 իգ.), 5-ը՝ հայեր (31 ար., 33 իգ.)<sup>11</sup>: 1895-ին Մուրճախեթում արդեն գերակշռել են հայերը՝ 9 տուն (7 տուն վրացի, 5 տուն թուրք)<sup>12</sup>: 1918 թ. մահմեդականները լքել են գյուղը<sup>13</sup>, իսկ համագյուղացի մի քանի վրացիներից միայն մի քանի ընտանիք է մնացել: Հատկանշական է, որ 1845-47 թթ. ընթացքում մուրճախեթցի հայերի մեծ մասը փոխադրվել է այլ գյուղեր: Ամենայն հավանականությամբ, դրանով էր պայմանավորված հետագա վավերագրերում Մուրճախեթի՝ հայոց գործող եկեղեցուց զուրկ լինելը:

Հայտնի է, որ 1989 թ. Վրաստանի իշխանությունները Մուրճախեթում ևս ցանկացել են աջարցի վերաբնակիչների համար բնակելի տներ կառուցել, բայց հանդիպելով Վաչիանի գյուղխորհրդի դիմադրությանը, որի հետ միավորված է Մուրճախեթը, ծրագիրը մնացել է անիրագործելի<sup>14</sup>:

2004 թ. Մուրճախեթն ուներ 77 տուն բնակիչ, որից 20-ը՝ վրացի, մնացածը՝ հայ<sup>15</sup>:

1 ԶեթքենիՇցու Ն., նշվ. աշխ., էջ 59:

2 "გურჯისტანის ვილაიეთის დიდი ღავთარი", էջ 236:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Մալխանան, Ամբերիթիթինը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:

6 Նույն տեղում, էջ 249:

7 «Մշակ», 1901, № 40, էջ 2:

8 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:

9 «Նոր-Գար», 1895, № 108, էջ 3:

10 Նույն տեղում:

11 CMOTI, էջ 27:

12 «Նոր-Գար», 1895, № 108, էջ 3:

13 ԶեթքենիՇցու Ն., საქართველს ისტორის საკითხები II, 1964, էջ 58:

14 მასიურაძე კ., ჯავახეთში ქართული სკოლები ისურდებ, "Georgian Times", N 24, 17-24.06.2004.

15 Նույն տեղում:



*Վիճակագրություն.* հայերի քանակը Մուրճախեթում ԺԹ-Ի դարերում ներկայացրել է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>16</sup>		45	47	92
1840 <sup>17</sup>		40	33	73
1841 <sup>18</sup>		41	33	74
1842 <sup>19</sup>		49	40	89
1844 <sup>20</sup>		56	45	101
1845 <sup>21</sup>		60	52	112
1847 <sup>22</sup>		18	11	29
1849 <sup>23</sup>		19	11	30
1857 <sup>24</sup>		20	18	38
1861 <sup>25</sup>		22	17	39
1862 <sup>26</sup>		22	17	39
1863 <sup>27</sup>		22	17	39
1864 <sup>28</sup>		22	17	39
1865 <sup>29</sup>		22	17	39
1866 <sup>30</sup>	5	18	19	37
1867 <sup>31</sup>		18	19	37
1868 <sup>32</sup>		18	19	37
1869 <sup>33</sup>		18	19	37
1870 <sup>34</sup>		18	19	37
1875 <sup>35</sup>	4			
1877 <sup>36</sup>		37	31	68
1880 <sup>37</sup>		31	29	60
1881 <sup>38</sup>		34	31	65
1882 <sup>39</sup>		34	31	65
1883 <sup>40</sup>		35	36	71
1885 <sup>41</sup>	6			
1887 <sup>42</sup>		35	31	66
1889 <sup>43</sup>		36	38	74
1893 <sup>44</sup>		34	36	70
1894 <sup>45</sup>		35	37	72

16 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, ք. 6-7:  
 17 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:  
 18 Նույն տեղում, գ. 3802, ք. 64-65:  
 19 Նույն տեղում, գ. 3805, ք. 77-78:  
 20 Նույն տեղում, գ. 3809, ք. 14-15:  
 21 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:  
 22 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:  
 23 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:  
 24 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:  
 25 Նույն տեղում, գ. 3839, ք. 25-26:  
 26 Նույն տեղում, գ. 3836, ք. 22-23:  
 27 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 28 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:  
 29 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-14:  
 30 Նշվ. գործը, ք. 74:  
 31 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:  
 32 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 33 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 34 Նույն տեղում, գ. 3857, ք. 19-20:  
 35 «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 36 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, ք. 30-31:  
 37 Նույն տեղում, գ. 3872, ք. 89-90:  
 38 Նույն տեղում, գ. 3873, ք. 98-99:  
 39 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 40 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 41 Նույն տեղում, գ. 3877, ք. 10:  
 42 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 43 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 44 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 45 ՀԱԳ, ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22:


1899 <sup>46</sup>		42	46	88
1900 <sup>47</sup>		46	42	88
1901 <sup>48</sup>		47	43	90
1903 <sup>49</sup>	8			98
1906 <sup>50</sup>		53	50	103
1908 <sup>51</sup>	8	57	57	114
1910 <sup>52</sup>		62	57	119
1912 <sup>53</sup>		66	62	128
1914 <sup>54</sup>				151
1918 <sup>55</sup>	12	95	86	181
1921 <sup>56</sup>		30	25	55
1980 <sup>57</sup>	72			400
1987 <sup>58</sup>	96			366
2004 <sup>59</sup>	57			

**Գպրոց.** 2004 թ. Մուրճախեթի հայ-վրացական դպրոցի վրացական բաժինն ունեցել է 17 աշակերտ<sup>60</sup>:

**Վիշապաքարեր.** գյուղը հարուստ է բազմաբնույթ պատմական հուշարձաններով, որոնք սկիզբ են առնում վաղնջական ժամանակաշրջաններից: Մուրճախեթում պահպանվել են մ. թ. ա. 5-4 հազարամյակներով թվագրվող 3 վիշապաքարեր: Դրանցից մեկը կանգուն է և գտնվում է գյուղի գերեզմանոցի հին մասում, երկրորդը՝ Հարություն Մարգարյանի տնամերձ հողամասում, իսկ երրորդը՝ Արշակ Բաբաջանյանի հողամասում: Առավել ուշագրավ է գերեզմանատան վեհաշուք վիշապաքարը. «...գիւղի գերեզմանոցի մէջ գտնուում է մի մեծ կանգնած քար «Կաթ-Քար» անունով, որ 1<sup>1/2</sup> արշին լայնութիւն, 1 արշին հաստութիւն և 5 արշին երկարութիւն ունի»<sup>61</sup>:

**Սր. Վարազա խաչի (Գյուտ խաչի) եկեղեցի.** հիշվում է միայն 1839<sup>62</sup> և 1841<sup>63</sup> քվականներին, իսկ հետագա բոլոր վավերագրերը (օրինակ՝ 1903 թ.)<sup>64</sup> միանշանակ վկայում են, որ Մուրճախեթում եկեղեցի չի եղել: Նույնն է վկայել նաև ժամանակի մամուլը:

46 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 47 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 48 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 49 «Արարատ», 1903, էջ 436:  
 50 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, ք. 20:  
 51 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 53 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 173-174:  
 55 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 56 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 57 ՆՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 100:  
 58 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 59 **ՁՅՆՅՐՅՅՁՅ** յ. նույն տեղում:  
 60 Նույն տեղում:  
 61 «Նոր-Գար», 1895, № 108, էջ 3: Տե՛ս նաև՝ **Մանույան Ա. Ս.**, Ջավախքի «վիշապ» քարակոթողները. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, № 2, էջ 97-98:  
 62 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 457:  
 63 Նույն տեղում, գ. 3798, :  
 64 «Արարատ», 1903, էջ 436:



*ՄՈՒՐՃԱԽՆԹ. վրաց եկեղեցու (ԺԹ դար) տեսքը հս-ամ-ից և հր-ամ-ից, եկեղեցու որմերում ագուցված հավասարաթև խաչաքանդակով հարդարված հին տաճարի երեսապատի սրբատաշ քար (Թ-Շ դդ.), այլ բեկորներ և պայտածև ատամնաշարով քիվագոտու բեկորներ (Թ-Շ դդ.)*



ՄՈՒՐՃԱՆԵԹ. գյուղամիջին՝ խաչքարերով, խոյածև և ձիակերպ տապանաքարերով հարուստ միջնադարյան գերեզմանոցը

լլ. «Գլուխի մէջ տեղը կայ մի հին եկեղեցի վրացոց. հայերը չունին իրենց համար ոչ եկեղեցի և ոչ քահանայ...»<sup>65</sup>:

**Խաչքար.** Մուրճախեթի միջնադարյան հուշարձաններից է հարավարևելյան մասում՝ ձորակի ձախ կողմում, պահպանված գեղաքանդակ ու արձանագիր խաչքարը: Վերջինս, ըստ վիմագրի գրչության և զարդաքանդակների ոճական առանձնահատկությունների, կարելի է համարել ԺԵ-ԺԶ դարերի գործ:

65 «Նոր-Դար», 1895, № 108, էջ 3:

Խաչքար. հիմնախաչի թևերի շուրջ արձանագրված է.

Յ(Ի)ՇԱՅՏԱԿ ԽԱՉՍ ՇԱՀՈՒՄԱՆԻՆ, ՎԱՐՁԵԼԻՆ ԵՒ ԻԻՐ (ՇՆ)ՈՂԱ(ՑՆ): ԿԱԶՄՈՂ ՆԱՅ...:


Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 10:

**Գյուղատեղի.** Քառասնակն վտակի աջ ափին՝ Մուրճախեթի հանդիպակաց տարածքում պահպանված միջնադարյան գյուղատեղին համապատասխանում է 1595 թ. կազմված «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ում հիշատակված համանուն Մեծ գյուղին:

**Եկեղեցի.** հնավայրում առկա են հայոց եկեղեցու և գերեզմանատան մնացորդներ: Եկեղեցին



ՄՈՒՐՃԱՆԵԹ. վիշապաքարեր



*ՄՈՒՐՆԱԽԹ. Քառասնակն վտակի աջ կողմում տարածված գյուղատեղիի մնացորդները, եկեղեցու ավերակներն ու հատակագիծը*

միանավ հորինվածքով, հարավից բացված միակ մուտքով, անմշակ քարով, կրաշաղախով կառուցված շինություն է (ներքին չափերն են՝ 7,15 x 4,60

մ): Խորանի կենտրոնում դեռևս կանգուն է վեճ քարը: Պատերը (հաստությունը՝ 1,10 մ) պահպանվել են մինչև 1 մ բարձրությամբ: Հնավայրը և եկեղեցին վերաբերում են ԺԵ-ԺԶ դարերին:

**Պատասպարան.** 1932 թ. Սուրճախեթում հայտնաբերվել է նեղ անցքի միջոցով միմյանց հաղորդակցվող ստորգետնյա երկարահ մի պատասպարան<sup>66</sup>:

<sup>66</sup> Զեյթունցյան Ե., նշվ. աշխ., էջ 59:

ՆԱՄՁԱՐԱ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 10 կմ հարավ, շրջկենտրոն Նինոծմինդայից 8 կմ հյուսիս-արևելք, Քառասնակն վտակի աջ կողմում, Ախալքալաք-Նինոծմինդա մայրուղուց 2 կմ հեռու, ծ. մ. 1800-1830մ բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի գերեզմանատանը պահպանված ԺԳ-ԺՁ դարերի խաչքարերի բեկորները վկայում են, որ առնվազն նշված ժամանաշրջանում Նամգարան հայաբնակ էր: Հայտնի է, որ 1595 թ. Մեծ Մամգուրա անունով հիշվող գյուղն ունեցել է ընդամենը 3 տուն, հարկվել է 10.500 ալչե<sup>1</sup>: Գյուղը նույնչափ հարկվել է նաև բնակչության բռնի մահմեղականացումից հետո՝ 1721-1722 թթ.: Հասան տանուտիրոջ օրոք<sup>2</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները 1829-30 թթ. փոխադրվել են Էրզրումի նահանգի հանանուն գավառից:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի բնակչությունը շարունակաբար աճել է.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>3</sup>		57	56	113
1841 <sup>4</sup>		70	56	126
1842 <sup>5</sup>		76	61	137
1844 <sup>6</sup>		85	77	162
1845 <sup>7</sup>		85	80	165
1847 <sup>8</sup>		92	76	168
1849 <sup>9</sup>		99	79	178
1853 <sup>10</sup>		104	90	194
1854 <sup>11</sup>		107	93	200
1857 <sup>12</sup>		116	104	220
1860 <sup>13</sup>		144	131	245
1861 <sup>14</sup>		158	156	314

1862 <sup>15</sup>		162	156	318
1863 <sup>16</sup>		167	151	318
1864 <sup>17</sup>	28	174	154	328
1866 <sup>18</sup>	28	177	171	338
1867 <sup>19</sup>		189	172	361
1868 <sup>20</sup>		198	180	378
1869 <sup>21</sup>		208	180	388
1870 <sup>22</sup>		211	181	392
1871 <sup>23</sup>		210	182	392
1872 <sup>24</sup>		224	189	413
1873 <sup>25</sup>		227	201	428
1874 <sup>26</sup>				440
1875 <sup>27</sup>	20			
1876 <sup>28</sup>		240	210	451
1877 <sup>29</sup>		238	205	443
1878 <sup>30</sup>		245	213	458
1880 <sup>31</sup>		258	222	480
1881 <sup>32</sup>		267	224	491
1882 <sup>33</sup>		269	228	497
1883 <sup>34</sup>		277	228	505
1884 <sup>35</sup>	36			
1885 <sup>36</sup>		268	229	497
1887 <sup>37</sup>		294	261	555
1889 <sup>38</sup>		308	264	572
1890 <sup>39</sup>		318	267	585

1 "Գյրջոսեթանոս յոճլոյոտոս ճոցո ճոցոտարո", էջ 231:

2 "Յոցլոճոտոս յոճլոյոտոս ճոցո ճոցոտարո 1694-1732 ՎՎ.", էջ 168:

3 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

4 Նույն տեղում, գ. 3802, թ. 63-64:

5 Նույն տեղում, գ. 3805, թ. 77-78:

6 Նույն տեղում, գ. 3809, թ. 14-15:

7 Նույն տեղում, գ. 3811, թ. 72-73:

8 Նույն տեղում, գ. 3814, թ. 33-34:

9 Նույն տեղում, գ. 3818, թ. 39-40:

10 Նույն տեղում, գ. 2743 թ. 38-39:

11 Նույն տեղում, գ. 3825, թ. 48-49:

12 Նույն տեղում, գ. 3830, թ. 52-53:

13 Նույն տեղում, գ. 3833, թ. 66-67:

14 Նույն տեղում, գ. 3839, թ. 23-24:

15 Նույն տեղում, գ. 3836, թ. 20-21:

16 Նույն տեղում, գ. 3843, թ. 21-22:

17 Նույն տեղում, գ. 3846, թ. 10-11:

18 Նույն տեղում, գ. 3848, թ. 74:

19 Նույն տեղում, գ. 3851, թ. 21-22:

20 Նույն տեղում, գ. 3853, թ. 27:

21 Նույն տեղում, գ. 3856, թ. 9:

22 Նույն տեղում, գ. 3857, թ. 23:

23 Նույն տեղում, գ. 3858, թ. 9-10:

24 Նույն տեղում, գ. 3859, թ. 56-57:

25 Նույն տեղում, գ. 3862, թ. 70-71:

26 Նույն տեղում, գ. 3864, թ. 25-26:

27 «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:

28 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:

29 Նույն տեղում, գ. 3869, թ. 28-29:

30 Նույն տեղում, գ. 3850, թ. 217-218:

31 Նույն տեղում, գ. 3872, թ. 86-87:

32 Նույն տեղում, գ. 3873, թ. 96-97:

33 Նույն տեղում, գ. 3874, թ. 42-43:

34 Նույն տեղում, գ. 3875, թ. 47-48:

35 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

36 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 10:

37 Նույն տեղում, գ. 3880, թ. 39-40:

38 Նույն տեղում, գ. 3884, թ. 64-65:

39 Նույն տեղում, գ. 3887, թ. 144:

1891 <sup>40</sup>		324	285	609
1892 <sup>41</sup>		318	278	596
1893 <sup>42</sup>		316	280	596
1894 <sup>43</sup>		325	290	615
1897 <sup>44</sup>		358	316	674
1898 <sup>45</sup>		366	320	686
1899 <sup>46</sup>		376	323	699
1900 <sup>47</sup>		384	328	712
1901 <sup>48</sup>		397	331	728
1902 <sup>49</sup>		402	341	743
1905 <sup>50</sup>		417	354	771
1908 <sup>51</sup>	81	429	366	795
1910 <sup>52</sup>		460	391	851
1912 <sup>53</sup>		479	412	891
1914 <sup>54</sup>		491	439	930
1916 <sup>55</sup>		486	454	940
1918 <sup>56</sup>	100	510	490	1000
1921 <sup>57</sup>		150	130	280
1926 <sup>58</sup>	102			524

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 145 նամզարացիներից 51-ը զոհվել է<sup>59</sup>:

**Եկեղեցական-ժխական դպրոց.** կրթօջախի գործունեությունը փաստող առաջին վավերագիրը 1865 թ-ից է: Հայտնի է, որ 1875 թ. գյուղի տիրացու Գրիգոր Ջորայետյանը խոստացել էր իր սեփական միջոցներով Նամզարայում ուսումնարան կառուցել, սակայն պայմանով, «եթե կեղղոնական ուսումնարանը նոյն Շինական հասարակություն բարեհաճեն իրեանց գիւղում բաց անել»<sup>60</sup>:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>61</sup>		1	18
1874 <sup>62</sup>		1	20
1875 <sup>63</sup>	Գ. Համբարձումյանց		40
1876 <sup>64</sup>		1	32
1877 <sup>65</sup>		1	20
1880 <sup>66</sup>		1	33

40 Նույն տեղում, գ. 3889, ք. 143:  
 41 Նույն տեղում, գ. 3891, ք. 115:  
 42 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 43 Նույն տեղում, գ. 3896, ք. 168-169:  
 44 Նույն տեղում, գ. 3899, ք. 141-142:  
 45 Նույն տեղում, գ. 3897, ք. 163:  
 46 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 47 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 48 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 49 Նույն տեղում, գ. 3907, ք. 17-18:  
 50 Նույն տեղում, գ. 3912, ք. 260-261:  
 51 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 53 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 171-172: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 799 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 154):  
 55 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 18-19:  
 56 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 57 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 58 Արդյան Ս., նշվ. աշխ., էջ 124:  
 59 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:  
 60 «Արարատ», 1875, էջ 348:  
 61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 62 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 63 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 51:  
 65 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 66 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:



ՆԱՄՁԱՐԱ. Սք. Լուսավորիչ եկեղեցու տեսքը ալ-ից, հր-ալ-ից, հս-ալ-ից և հր-ից



ՆԱՄՋԱՐԱ. հայոց միջնադարյան գերեզմանոցը, սրբատեղի, խոյածև տապանաքար և խաչքարի բեկոր (ԺԾ դ.)

1881 <sup>67</sup>	1	40
1906 <sup>68</sup> վերաբացվել է		
1908/09 <sup>69</sup> երկսեռ	1	62 (5-ը՝ աղջ.)
1910 <sup>70</sup>	1	48
1911 <sup>71</sup> 4-ամյա, 1 դասարանով	2	48 (2-ը՝ աղջ.)
1912/13 <sup>72</sup> 3 բաժանմունքով	1	44
1914 <sup>73</sup>	1	53

**Սբ. Լուսավորիչ եկեղեցի.** արխիվային վավերագրերում հիշվում է 1839 թ-ից<sup>74</sup>: Այն «քարաշեն փայտածածկ»<sup>75</sup> շինություն է (արտաքին չափերն են՝ 17,25 x 7,10 մ): Հատկանշական է եկեղեցու կիսաշրջանաձև խորանը, որը նաև արտաքուստ նույն կերպ ընդգծված է ամբողջ ծավալով: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շուրջ տարածվում է ԺԹ դարի հայոց գերեզմանատունը:

67 Խորոյան Ս., նշվ. աշխ., էջ 521:  
 68 Նույն տեղում:  
 69 ՀԱԳ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, ք. 16:  
 70 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 71 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 682, ք. 57:  
 72 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 73 Խորոյան Ս., նույն տեղում:  
 74 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 457:  
 75 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

**Գերեզմանոցներ.** Նամգարա գյուղի տարածքում գոյություն ունեն ևս երկու գերեզմանոց, որոնցից մեկը գյուղամիջում է (ԺԹ դար), մյուսը՝ գյուղի արևելյան եզրին: Վերջինս գյուղի տարածքի ամենահին գերեզմանոցն է: Այստեղ պահպանված խաչքարերի պատվանդաններն ու գեղաքանդակ բեկորները բնորոշ են ԺԳ-ԺՁ դարերին:

**Բերդ-աշտարակ.** տակավին 1932 թ. գյուղում պահպանվում էին խոշոր քարով կառուցված բերդ-աշտարակի պատերը<sup>76</sup>:

**Գյուղատեղի.** Նամգարայից 1 կմ արևելք նկատելի է երբեմնի Փոքր Նամգարա (Մամգարա) գյուղատեղին, որը, համաձայն 1595 թ. կազմված «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ի, ունեցել է 11 տուն բնակիչ (վերջիններիս թվում հիշվում է Ասավաժատուրի որդի Դովիկը), հարկվել է 8.000 ակչե<sup>77</sup>:

76 Զյոթթեֆեթյան Ն., նշվ. աշխ., էջ 62:  
 77 "Զյոթթեֆեթյանի շրջանի շրջանի շրջանի շրջանի", էջ 237:




## ՆԻՆՈՏՄԻՆԴԱ (ԲՈԳԴԱՆՈՎԿԱ)

**Տեղադրություն.** գտնվում է Ջավախքի հարավարևելյան կողմում, Գյումրի-Ախալքալաք մայրուղում, ծ. մ. 1920-1960 մ բարձրության վրա, Խանչալի լճի արևելյան ափից հազիվ 2 կմ հեռու:

**Հիմնադրում.** հիմնադրել են նախ՝ Տամբուլի մարզից, ապա նաև երկրորդ հանգրվան Տավրիկյան մահանգից քարտրված ռուս-դուխորները 1841 թ.:

**Վարչական կարգ.** ամբողջ ԺԹ դարում Բոգդանովկան սովորական մի գյուղ էր՝ միջինից էլ դեռ ավելի փոքր չափերով: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Բոգդանովկան վերածվեց համանուն շրջանի կենտրոնի: Շուտով այն դարձավ ավան, իսկ 1983 թ. հունիսի 6-ին ստացավ շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ: 1990 թ. պաշտոնապես Նինոծմինդա վերանվանված նախկին Բոգդանովկան համանուն շրջանի կենտրոնն է:

**Բնակչություն.** 1909 թ. զուտ ռուսաբնակ (դուխորներ) Բոգդանովկան ունեցել է 33 տուն, 398 շունչ<sup>1</sup>, իսկ 1914 թ.՝ 554 բնակիչ<sup>2</sup>: Ժամանակի ընթացքում Բոգդանովկայի հիմնադիր ռուսների մի մասը հեռացել է հայրենիք: Նրանց փոխարեն այդտեղ բնակություն են հաստատել շրջակա գյուղերից հեռացած հայեր և քիչ թվով վրացիներ: 1926 թ. քաղաքն ուներ 69 տուն, 426 շունչ (101 հայ, 295 ռուս, 13 ուկրաինացի, 17 այլազգի)<sup>3</sup>, իսկ 1979 թ.՝ 3614 բնակիչ: Դրանցից 3080-ը հայեր էին, 57-ը՝ վրացիներ, մնացածը՝ հիմնականում ռուսներ: Գրեթե նույն հարաբերությունը պահպանվում է նաև



ՆԻՆՈՏՄԻՆԴԱ. նորակերտ խաչքարեր

մեր օրերում: 1987 թ. Բոգդանովկան ուներ 5868 բնակիչ (1493 տուն):

Երկրորդ աշխարհամարտին Նինոծմինդայից մասնակցել է 500 հոգի, որոնցից 158-ը զոհվել է<sup>4</sup>:

**Խաչքար.** 1993 թ. Մշակույթի տան բակում կանգնեցվել է 1918-20 թթ. զոհերի հիշատակին նվիրված մի գեղաքանդակ խաչքար (քանդ.՝ Արա Ղարսյան):

1 “Тифлиссский листок”, 1909, № 191, էջ 5:

2 “Кавказский календарь на 1915 г.”, էջ 100:

3 Արոյան Ս., նշվ. աշխ., էջ 123:

4 Դավթյան Ա., Ջավախք, էջ 101:

## ՉԱՄԴՈՒՐԱ

**Տեղադրություն.** Քառասնակն վտակի հոսանքն ի վար վերջին գյուղը Չամդուրան է: Գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 2 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1725 մ բարձրությամբ հարթավայրում:

**Անվան ծագումը.** Չամդուրա անվանումը հավանաբար ծագում է թուրքերեն «չամ» (սոճի) և բարբառային «դուրան» (հարթավայր) բառերից, այսինքն՝ սոճու հարթավայր: Հայտնի է նաև տեղանվան ստուգաբանության վրացական տարբերակը, ըստ որի, գյուղի անունը ծագել է «չամձվրալի» (հողի մեջ խրված քար) բառից:

**Պատմություն.** 1899 թ. երկրաշարժից հետո, ի թիվս Ջավախքի այլ գյուղերի, Չամդուրան ևս ընդգրկվել է կարիքավոր գյուղերի ցուցակում<sup>1</sup>:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Չամդուրայի գյուղատնտեսությունը հայտնվել է ծանրագույն կացության մեջ՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով առավել տուժած բնակավայրերի շարքում<sup>2</sup>: Գյուղում հաշվառվել է առաջնահերթ օգնության կարող 17 տուն՝ 92 բնակչով<sup>3</sup>:

Երկրորդ աշխարհամարտին Չամդուրայից մասնակցել է 127 հոգի, որոնցից 52-ը զոհվել է<sup>4</sup>:

**Կառուցապատում.** Չամդուրան Ջավախքի բնաշխարհին հարազատ ու բնորոշ բնակավայրերից մեկն է: Գյուղի կառուցապատմանը նվիրված 1893 թ. մի հաղորդման մեջ ակնհաստեսը նշել է. «Բոլոր տները քարաշէն են, իրար կից, ցած, միաշարկանի և հողէ կտուրներով: Նկատելով կից շինուած տների վնասակարությունը, այս վերջին ժամանակները մտածում են տները շինել առանձին-առանձին և մի քանի հատ էլ արդէն շինել են...»<sup>5</sup>:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները «25 տնով փոխադրվել են Էրզրումից 1829 թուին. այնտեղի շրջանի զանազան գիւղերից են. Գիւլլի, Բատժուան, Նապի, Թերջան»<sup>6</sup>: Հիշյալ

գյուղերի հիմնական մասը գտնվում էր Բասեն գավառում (Նապի<sup>7</sup>, Պատժվան կամ Բատժվան<sup>8</sup>, Քյուլլի<sup>9</sup>, Բուր<sup>10</sup> գյուղերից և Դերջանից): Չամդուրայում հաստատվել են նաև կարսեցի հայեր:

Բնակիչների առավելագույն թվաքանակը Չամդուրան երբևէ ունեցել է միայն 1918 թ.՝ թուրքական բանակի արշավանքին նախորդած շրջանում՝ շուրջ 1400 շունչ:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>11</sup>		133	158	291
1840 <sup>12</sup>		148	159	307
1841 <sup>13</sup>		134	137	271
1842 <sup>14</sup>		141	142	283
1844 <sup>15</sup>		150	152	302
1845 <sup>16</sup>		182	190	379
1847 <sup>17</sup>		190	200	390
1849 <sup>18</sup>		200	211	411
1851 <sup>19</sup>	38	185	194	379
1853 <sup>20</sup>		169	167	336
1854 <sup>21</sup>		171	170	341
1857 <sup>22</sup>		172	174	346
1860 <sup>23</sup>		156	175	361

7 Նապին հայաբնակ գյուղ էր՝ Էրզրումի նահանգի Վերին Բասեն գավառում՝ Կարին (Էրզրում) քաղաքից 9 կմ արևելք:

8 Պատժվանը (Պատիճվանը) հայաբնակ գյուղ էր՝ Էրզրումի նահանգի Ստորին Բասեն գավառում՝ Կարին (Էրզրում) քաղաքից 46 կմ արևելք:

9 Քյուլլին հայաբնակ գյուղ էր՝ Արաքս գետի ձախակողմում, գավառանիստ Թեքմանից 18 կմ արևելք:

10 Բուրը հայաբնակ գյուղ էր՝ Վերին Բասեն գավառում՝ Կարին (Էրզրում) քաղաքից 40 կմ արևելք, Արաքսի ձախ վտակ Մուրցի աջ ափին: Այս գյուղից են սերում Բլրցյանները:

11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, ք. 6-7:

12 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:

13 Նույն տեղում, գ. 3802, ք. 64-65:

14 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:

15 Նույն տեղում, գ. 3809, ք. 13-14:

16 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:

17 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:

18 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:

19 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 35:

20 Նույն տեղում, գ. 2743 ք. 39-40:

21 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

22 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:

23 Նույն տեղում, գ. 3833, ք. 67:

1 «Մշակ», 1901, № 40, էջ 1:

2 Մալխոնյան, Անբերրիությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:

3 Նույն տեղում, էջ 249:

4 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:

5 «Նոր-Դար», 1893, № 86, էջ 2-3:

6 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 66, ք. 1:

1861 <sup>24</sup>	41	206	184	390
1862 <sup>25</sup>		210	193	403
1863 <sup>26</sup>		214	190	404
1864 <sup>27</sup>		219	191	410
1865 <sup>28</sup>		225	194	419
1866 <sup>29</sup>	41	225	194	419
1867 <sup>30</sup>		243	206	439
1869 <sup>31</sup>		247	214	461
1870 <sup>32</sup>		247	235	482
1871 <sup>33</sup>		246	239	485
1872 <sup>34</sup>		248	239	487
1873 <sup>35</sup>		255	236	491
1874 <sup>36</sup>				509
1875 <sup>37</sup>	48			502
1876 <sup>38</sup>		268	249	517
1877 <sup>39</sup>		268	242	510
1878 <sup>40</sup>		266	241	507
1880 <sup>41</sup>		285	263	548
1881 <sup>42</sup>		291	285	576
1882 <sup>43</sup>		304	298	602
1883 <sup>44</sup>		316	301	617
1884 <sup>45</sup>	48			
1885 <sup>46</sup>		335	315	650
1887 <sup>47</sup>		350	329	679
1889 <sup>48</sup>		308	330	638
1890 <sup>49</sup>		325	335	660
1891 <sup>50</sup>		339	352	691
1892 <sup>51</sup>		343	351	694
1893 <sup>52</sup>	80	344	350	694
1894 <sup>53</sup>		343	357	700
1897 <sup>54</sup>		376	387	763

24 Նույն տեղում, գ. 3839, ք. 25-26:  
 25 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:  
 26 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 27 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:  
 28 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-12:  
 29 Նույն տեղում, ք. 74:  
 30 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 31 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 32 Նույն տեղում, գ. 3857, ք. 19-20:  
 33 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
 34 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 35 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 36 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 37 Նույն տեղում, գ. 3866, ք. 19-20: Տե՛ս նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 38 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:  
 39 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 40 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 41 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 42 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 43 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 44 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48:  
 45 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 46 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 47 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:  
 48 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 49 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:  
 50 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:  
 51 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:  
 52 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42: Նաև՝ «Նոր-Գար», 1893, № 86, էջ 2-3:  
 53 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 167-168: Տե՛ս նաև՝ ֆ. 22, ց. 1, գ. 298, ք. 21-22:  
 54 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 140-141:

1898 <sup>55</sup>		381	405	786
1899 <sup>56</sup>		392	411	803
1900 <sup>57</sup>		403	414	817
1901 <sup>58</sup>		411	433	844
1902 <sup>59</sup>		424	449	873
1905 <sup>60</sup>		462	477	939
1906 <sup>61</sup>		462	477	939
1908 <sup>62</sup>	130	484	478	962
1909 <sup>63</sup>	125			923
1910 <sup>64</sup>		503	487	990
1912 <sup>65</sup>		533	517	1040
1914 <sup>66</sup>		556	536	1092
1916 <sup>67</sup>		578	553	1131
1918 <sup>68</sup>	160	720	680	1400
1921 <sup>69</sup>		116	113	229
1987 <sup>70</sup>	168			569

**Եկեղեցական-ծխական դպրոց.** Չամդուրան

Չավախքի այն սակավաթիվ գյուղերից է, որի բնակիչներն այդտեղ հաստատվելու հենց առաջին տարիներին, կենսական շատ խնդիրներ դեռ չլուծած, հոգ են տարել մանուկների կրթության մասին: Դրա վառ ապացույցն է 1837 թ. գյուղում բացված խայ-ֆայական տիպի դպրոցը: Ծխական կանոնավոր դպրոցը Չամդուրայում գործել է 1865-ին.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1837 <sup>71</sup>	խայֆայական տիրացու	Հակոբ	
1865 <sup>72</sup>		1	27
1868 <sup>73</sup>		1	32
1870 <sup>74</sup>		1	31
1874 <sup>75</sup>	Կ. Մեծատունյանց		40
1875 <sup>76</sup>		1	54
1876 <sup>77</sup>		1	54
1877 <sup>78</sup>		1	44
1878 <sup>79</sup>		1	46

55 Նույն տեղում, գ. 3897, ք. 162:  
 56 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 57 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 58 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 59 Նույն տեղում, գ. 3907, ք. 16-17:  
 60 Նույն տեղում, գ. 3912, ք. 259-260:  
 61 Նույն տեղում, գ. 3915, ք. 20:  
 62 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 63 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 66, ք. 1:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 65 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 66 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 170-171: Ի դեպ, նույն թվականի համար այլ աղբյուրում ցույց է տրված 1189 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 204):  
 67 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 17-18:  
 68 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 69 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 70 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 71 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 4077, ք. 19:  
 72 Նույն տեղում, գ. 3848, ք. 2:  
 73 Նույն տեղում, գ. 3977, ք. 53:  
 74 Նույն տեղում, գ. 3978, ք. 34-35:  
 75 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 76 Նույն տեղում, գ. 3866, ք. 19-20:  
 77 Նույն տեղում, գ. 3850, ք. 51:  
 78 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 79 Նույն տեղում, գ. 3850, ք. 177:



ՉԱՄԴՈՒՐԱ. գյուղամիջի՝ խաչքարերով գերեզմանոցը (ԺԵ-ԺԹ դդ.)

1880 <sup>80</sup>	1	25
1881 <sup>81</sup>	1	28
1882 <sup>82</sup>	1	33
1884 <sup>83</sup>	միդասյա, ձմեռային Հովհ. Կարապետյանց	25
1909 <sup>84</sup>	1	15

**Սբ. Հարություն եկեղեցի.** դրա գոյությունը վավերագրերում հիշատակվում է՝ սկսած 1830-ական թվականներից՝ Սբ. Հարություն անվամբ: 1852-ին եկեղեցին հիմնովին վերակառուցվել է, որից հետո այդ տարին համարվել է որպես կառուցման թվա-

կան: Հայտնի է, որ 1897 թ. նախատեսվել էր եկեղեցու փայտաշեն զանգակատունը փոխարինել քարաշենով. «...յունիսի 15-ին, ճարտարապետ պ. Նիկողայոս Գրիգորեանը իւր ընկերակից սպայ պ. Բոգեանցի հետ մեր գիւղը գալով այցելեց գիւղիս եկեղեցին: Տեսնելով փայտից շինուած հասարակ զանգակատունը, գիւղացիներին յորդորեց, որ քանդեն և քարից նոր կաթողիկէ կառուցանեն, քանի որ գիւղացիներից կան քար կտրողներ և այդ կաթողիկէն կանգնեցնելու գործին հմուտ վարպետներ: Գիւղացիք այդ մասին երկար ու բարակ խորհրդակցելով, խօսք տուին կառուցանել երկար նոր կաթողիկէ»<sup>85</sup>: Պարբերաբար կատարված անհրաժեշտ նորոգումների շնորհիվ Սբ. Հարություն եկեղեցին կանգուն է

80 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:



81 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:

82 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:

83 Նույն տեղում, գ. 3998, ք. 10-11:

84 ՀԱԳ, ֆ. 56, ց. 12, գ. 66, ք. 7:

85 «Նոր-Դար, 1897, № 105, էջ 2:



ՉԱՄԴՈՒՐԱ. արձանագիր խաչքարեր (ԺԵ դար)

մնացել մինչև խորհրդային տարիները: 1933 թ. եկեղեցու քայքայված շենքը կրկին նորոգելու փոխարեն քանդվել է: Ներկայումս երբեմնի եկեղեցու տեղում միայն 3 զույգ սյուների խարսխաքարերն են պահպանվել<sup>86</sup>:

**Քահանա.** 1909 թ. Չամդուրայում քահանայագործել է Հարություն Ազնաուրյանցը (ծնվ. 1881 թ., ձեռն. 1905 թ.)<sup>87</sup>:

**Գերեզմանոց.** Չամդուրայի՝ դեռևս միջնադարում հայաբնակ լինելը լավագույնս ապացուցում է գյուղամիջում պահպանված գերեզմանոցը: Ի թիվս ԺԹ-Ի դարերի շիրմաքարերի՝ նույն հնավայրից մեզ են հասել մի քանի ամբողջական և բեկորված,

գեղաքանդակ խաչքարեր: Դրանցից մեկն ուշագրավ է ստորին մասում քանդակված հեծյալի պատկերաքանդակով (112 x 73x 20 սմ):

Խաչքարի բեկոր (90 x 75 x 18 սմ). եզրերով փորագրված է միատող արձանագրություն.

ԵՄ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԷՅՍ, ԳՐԻԳՈՐՍ ԿԱՆԳՆԵՅԱԶ ԶԻԱՉՍ ՅԻՇԱՏ(Ա)Կ ... ԹԱՍԱՐԻՆ ...:

Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 10:

Խաչքարի բեկոր (65 x 57 x 16 սմ). եզրագոտու վրա արձանագրված է.

... ԻՄ ԵՂԲ(ԱՅՐ)Ս ՅՈՎ(Ա)ՆԷՍ ԵՒ ԽԱՉԱՏ(ՈՒՐ)Ս ԿԱՆԳՆ(Ե)Յ(ԱԶ) ԶԻԱՉՍ Յ(Ի)Շ(Ա)-Տ(Ա)Կ ՀԱԻՐ ՄԵՐ Ս...:

Հրատ. **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, էջ 10: Ծանոթ. ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դդ.:

86 «Մոլորակ», 1997, № 53, էջ 6:  
87 ՀԱԳ, ֆ. Պ-56, ց. 12, գ. 66, ք. 2:

### ՉԻՖԼԻԿ (ՉԻՖԹԼԻԿ)

**Տեղադրություն.** Չիֆլիկը ներկայումս գոյություն չունի, բայց մինչև 1870-ական թվականների վերջերը շեն և քաղաքամերձ կարևոր գյուղերից էր՝ փոփոխված հարթ տեղանքի վրա, Ախալքալաքից 1 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1720 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** Չիֆլիկ տեղանունը ստուգաբանվում է որպես «արքունի կաված»<sup>1</sup>, սակայն հայտնի է նաև, որ «չիֆթ»-ը թուրքերեն է և թարգմանվում է «գույգ»:

**Պատմություն.** 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին միացած Կարսի մարզն իր բարեբեր հողերով շատերին էր գայթակղել, և ողջ Անդրկովկասից մեծ թվով բնակիչներ էին վերաբնակվել այնտեղ: Չիֆլիկցիները ևս հողի ու հատկապես ջրի պակասության պատճառով 1881-82 թթ. գյուղովի փոխադրվում են Կարսի մարզ. «Չիֆլիկ. բնակիչք այսմիկ գեղջ և քահանայն գաղթեցին ի Կարուց գաւառ ի գ. Մազիւրայ»<sup>2</sup>: Գաղթից հետո հին գյուղում արագորեն ավերվում են անտեր մնացած տները (շինանյութի օգտագործման նպատակով), և շեն գյուղից իբրև պատմական հուշ են մնում միայն անմշակ սալատապաններից կազմված փոքրիկ գերեզմանոցն ու Սբ. Գևորգ եկեղեցին: Վերջինս, բնականաբար, այլևս չի գործում. «...վասն գաղթելոյ գիւղացոց ի Կարս եկեղեցին մոցա մնացեալ է փակ»<sup>3</sup>: Տարիներ անց հայաթափ Չիֆլիկի մասին ակնատեսը նշել է. «Այս գիւղի ժողովուրդը հող չունենալու պատճառով 1881-1882 թուականին գաղթեց Կարս նահանգի Մարգա գիւղը: Ներկայումս գիւղի աւերակների հիմքն էլ չէ մնացել, բացի եկեղեցուց, որ դեռ կանգուն է: Այս եկեղեցին, որ անտէր է մնացած չիֆլիկցիների գաղթած օրից և գիւղն էլ արքունական ճանապարհի վրա գտնուելու պատճառաւ՝ դարձել է մի տեսակ պատսպարան ամեն տեսակ թուրք, քիւրդ, մուքռապաների. քաշում են եկեղեցու մէջ իրենց ամեն տեսակ անասունները՝ ձին, էշը, կովը, շունը... և գիշերում են այնտեղ: Յուսով ենք, որ հոգևոր բարձր

իշխանութիւնը ուշք կըդարձնէ այս եկեղեցու վրայ և շուտափոյթ տնօրէնութիւն կանէ կամ քանդել կամ պահել ինչպէս վայել է մի սրբավայրի»<sup>4</sup>: Ըստ ամենայնի, հոգևոր իշխանությունները տվել են եկեղեցու քանդման թույլտվություն, քանի որ ներկայումս շինության հետքն իսկ նկատելի չէ:

**Բնակչություն.** 1829-30 թթ. Չիֆլիկում հաստատվել են Կարնո գավառից գաղթած հայեր: Նկատելի է, որ մոտ 50 տարվա ընթացքում (1830-1870-ական թվականներ), հակառակ տնտեսական սուղ պայմանների (զգալի էր հողի և ջրի պակասը), Չիֆլիկի բնակչությունն ընդհանուր առմամբ աճել է:

*Վիճակագրություն.* ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակի փոփոխություններն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1838 <sup>5</sup>		152	148	300
1840 <sup>6</sup>		106	114	220
1841 <sup>7</sup>		129	145	274
1842 <sup>8</sup>		136	150	286
1844 <sup>9</sup>		152	160	312
1845 <sup>10</sup>		162	170	332
1847 <sup>11</sup>		115	125	240
1849 <sup>12</sup>		135	218	253
1851 <sup>13</sup>	41	137	126	263
1853 <sup>14</sup>		146	130	276
1854 <sup>15</sup>		150	135	285
1857 <sup>16</sup>		138	119	257
1860 <sup>17</sup>		145	121	266
1861 <sup>18</sup>	43	161	141	302
1862 <sup>19</sup>		162	141	303

4 «Նոր-Ղար», 1895, № 128, էջ 1:

5 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1361, ք. 7-8:

6 Նույն տեղում, գ. 3800, ք. 4:

7 Նույն տեղում, գ. 3802, ք. 64-65:

8 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:

9 Նույն տեղում, գ. 3809, ք. 13-14:

10 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:

11 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:

12 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:

13 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 36:

14 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 39-40:

15 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:

16 Նույն տեղում, գ. 3830, ք. 54-55:

17 Նույն տեղում, գ. 3833, ք. 66-67:

18 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:

19 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:

1 «Մշակ», 1873, № 16, էջ 4:

2 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, ք. 43:

3 Նույն տեղում, ք. 46-47:



ՉԻՖԼԻԿ (ՉԻՖԹԼԻԿ), գյուղատեղիի զերեզմանոցի մնացորդները

1863 <sup>20</sup>		163	153	316
1864 <sup>21</sup>		164	154	318
1865 <sup>22</sup>		171	157	328
1866 <sup>23</sup>	43	171	157	328

1867 <sup>24</sup>		176	165	341
1868 <sup>25</sup>		180	173	353
1869 <sup>26</sup>		187	174	361
1870 <sup>27</sup>		193	181	374
1871 <sup>28</sup>		195	182	377
1872 <sup>29</sup>		200	183	383
1873 <sup>30</sup>		209	188	397
1874 <sup>31</sup>				409
1875 <sup>32</sup>	48			
1876 <sup>33</sup>		234	205	439
1877 <sup>34</sup>		227	189	416
1878 <sup>35</sup>		236	196	432
1880 <sup>36</sup>		242	212	454
1881 <sup>37</sup>		252	217	469

**Եկեղեցական-ծխական դպրոց.** Երբեմնի Չիֆլիկում 1860-ականից մինչև բնակիչների գաղթը գործել է հայոց դպրոց.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>38</sup>		1	21
1874 <sup>39</sup>		1	35
1875 <sup>40</sup>	նախակրթարան	Խաչատուր Սիմեոնյան	25
1877 <sup>41</sup>		1	50
1878 <sup>42</sup>		1	28
1881 <sup>43</sup>		1	30

20 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 21 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:  
 22 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-12:  
 23 Նույն տեղում, ք. 74:

24 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 25 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 26 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 27 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 28 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
 29 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 30 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 31 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 32 «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 33 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:  
 34 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 35 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 36 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 37 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 38 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 39 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 40 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:  
4 Արդյան Մ., նշվ. աշխ., էջ 123:

5 ԾղրձոնՊիցոլո Զ., ՆՇՊՋԵՆՇՊՐԻ ԹԵԹՐԱԾԵ ՋՅԱՅԱՅԵՍԻՍ ԳԱԺԱՐՆԵՅՆԱՅ ԵՎԻԼՈՒԾՆ, “ՆՅՅԵՆՇԵ”, 05-06. 06. 2003, № 42:

6 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:



*ՍՊԱՍՈՎԿԱ. գյուղատեղիի, եկեղեցու, գերեզմանոցի և դամբարանների մնացորդներ*



**Գյուղատեղի.** Սպասովկայից 0,5 կմ արևելք՝ վտակի աջ կողմում, պահպանվում են հին գյուղատեղիի, գերեզմանոցի և եկեղեցու ավերակները: Խոյաձև մի տապանաքարի վրա նկատելի են արձանագրության հետքեր:

ՍՈՒԼԴԱ



ՍՈՒԼԴԱ. գյուղի տեսքը հս-ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 16 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1910-1940 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ըստ 1595 թ. կազմված «Գյուրջխատանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ի՝ Սուլդան ունեցել է ընդամենը 4 տուն (տնատերեր են հիշվում Շերմազանը, Գրիգորը, Մերաբը...) և հարկվել է 12.000 ակչե<sup>1</sup>: 1720-1721 թթ.՝ տանուտեր Վելի որդի Խալիլի օրոք, գյուղը պետական գանձարան է մուծել 2.490 ակչե<sup>2</sup>:

1834 թ. Սուլդա գյուղը գնվել է Ախալցխայի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու համար. «Եկեղեցական մի գիղ որ է Յուլտայ և մի ձմերանոց անուն Ապլաղ և Պօզալ ի սահմանին Ախալքալաքայ գնեալ ի Գեորգ եպիսկոպոսե Տէր Դաւթեան<sup>3</sup> յանուն սուրբ

Փրկիչ եկեղեցոյ»<sup>4</sup>: Գյուղն իբրև եկեղեցապատկան հիշվում է նաև 1893 թ.<sup>5</sup>:

**Ջրամատակարարում.** եկեղեցապատկան գյուղերի բնակչությանը հուզող տնտեսական բազմաթիվ խնդիրներին առհասարակ լուծում է տվել Ախալցխայի Սբ. Փրկիչ «կալվածատեր» եկեղեցին: Սուլդան, որը եկեղեցապատկան 4 գյուղերից մեկն էր, խիստ սակավաջուր էր (միակ աղբյուրն ամռանն իսպառ ցամաքում էր, իսկ ձմռանը բնակիչները ջրի կարիքը հոգում էին ձյուն հալելով): Խնդրի լուծման հույսով 1862 թ. սուլդացիները դիմել էին

1 "Յւրջիսթանիս յոճաօյոտիս ճոճօ ճաճօարօ", էջ 282:

2 "Նօճօճօրօս յօճաճօտիս ճճճօ ճաճօարօ 1694-1732 ՎՎ.", էջ 166:

3 Գեորգ եպիսկոպոսը վախճանվել է 45 տարեկանում, Ախալցխայում, 1847 թ. հուլիսի 4-ին խալքայի համաճարակից և քաղվել Սբ. Փրկիչ եկեղեցու բակում («Փորձ», 1876, № 1, էջ 177):

4 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 95-96: Գործարքին առնչվող այլ մանրամասներ գտնում ենք ժամանակի մամուլի էջերում. «...եկեղեցապատկան Սուլտա հայաբնակ մեծ գիղի 2/3 մասը, նոյնպես Ապլախ ատերակն իրենց արօտատեղերով, լճերով և ատերակներով միասին գնել է Գեորգ եպիսկոպոսը 1835 թուին 5500 դրոուշի (մօտաւորապէս 300 ռ.) Շառիֆ աղա Մահմուտ աղա օղլիից, որը գաղթել է Թիւրքիա Ախալցխայի և Ախալքալաքի ռուսաց տիրապետութեան տակ անցնելուց յետոյ...» («Նոր-Դար», 1897, № 117, էջ 3): Ի դեպ, Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու կալվածքի մաս էին կազմում նաև Կարծախ, Խավթե և Դաղեշ գյուղերը («Մեղու Հայաստանի», 1875, № 38, էջ 1):

5 «Արաքս», գիրք Բ, 1893, էջ 21:

հոգևոր իշխանություններին՝ ջուրը խողովակաշարով գյուղ հասցնելու ծախսը հոգալու խնդրանքով. «...ի բերել աստ ի գիւղն մեր զաղբիւր մի յորդառատ առ Երի գեղըն մեր յընդ հարաւ նստեալ սարէն, ուր և գտանին հնուոք խողովակք ջրոյ մնացեալք յառաջին ժամանակաց...»<sup>6</sup>: Նախահաշվի համաձայն՝ 1240 սաժեն հեռավորությունից բխող աղբյուրի ջուրը ջրմուղով գյուղ հասցնելու համար անհրաժեշտ է եղել 1231 ուրբ.<sup>7</sup>: Աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ էր 10.000 կավե խողովակ, 30.000 փութ ձեթ, 3 փութ բամբակ և 300 փութ քիրած<sup>8</sup>: Մինչև 1869 թ. ջրմուղի շինարարությունը ստանձնելու կապակցությամբ սուլդացիների ծարավը սոսկ խոստումներով հագեցնելով՝ եկեղեցին վերջնականապես մերժել է սուլդացիներին այդ հույժ կենսական գործը կյանքի կոչելու համար նյութական օժանդակություն ցուցաբերել<sup>9</sup>:

**Բժշկություն.** մարդաշատ և կենտրոնական դիրք ունեցող Սուլդայում 1910 թ. բացվել էր բուժկետ (ֆելդշերական կայան), դեղատուն<sup>10</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները 1829-30 թթ. փոխադրվել են Կարնո գավառից և Վերին Բասենի Թորդան գյուղից:

**Վիճակագրություն.** Սուլդան Ջավախքի՝ բնակչության կայուն աճ արձանագրած մարդաշատ բնակավայրերից է: ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղին վերաբերող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>11</sup>		191	178	369
1841 <sup>12</sup>		157	142	299
1842 <sup>13</sup>		165	150	315
1844 <sup>14</sup>		181	168	349
1845 <sup>15</sup>		200	180	380
1847 <sup>16</sup>		232	214	440
1849 <sup>17</sup>		281	262	543
1853 <sup>18</sup>		292	272	564
1854 <sup>19</sup>		294	268	562
1857 <sup>20</sup>		231	257	488
1860 <sup>21</sup>	59	256	283	539
1861 <sup>22</sup>	62	345	304	649

6 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2807, ք. 2:

7 Նույն տեղում, ք. 4:

8 Նույն տեղում, ք. 6:

9 Նույն տեղում:

10 «Հորիզոն», 1912, № 199, էջ 3:

11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:

12 Նույն տեղում, գ. 3802, ք. 63-64:

13 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:

14 Նույն տեղում, գ. 3809, ք. 13-14:

15 Նույն տեղում, գ. 3811, ք. 72-73:

16 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:

17 Նույն տեղում, գ. 3818, ք. 39-40:

18 Նույն տեղում, գ. 2743 ք. 38-39:

19 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:

20 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:

21 Նույն տեղում, գ. 3833, ք. 66-67:

22 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:

1862 <sup>23</sup>	62	344	303	647
1863 <sup>24</sup>		362	316	678
1864 <sup>25</sup>		372	320	692
1865 <sup>26</sup>		377	326	703
1866 <sup>27</sup>	62	377	326	703
1867 <sup>28</sup>		397	351	748
1868 <sup>29</sup>		409	378	787
1869 <sup>30</sup>		417	390	807
1870 <sup>31</sup>		420	396	816
1871 <sup>32</sup>		428	409	837
1872 <sup>33</sup>		446	417	834
1873 <sup>34</sup>		470	432	902
1874 <sup>35</sup>				931
1875 <sup>36</sup>	96			1059
1876 <sup>37</sup>		480	423	903
1877 <sup>38</sup>		433	365	798
1878 <sup>39</sup>		435	374	809
1880 <sup>40</sup>		487	397	884
1881 <sup>41</sup>		506	410	916
1882 <sup>42</sup>		527	415	942
1883 <sup>43</sup>		519	409	928
1884 <sup>44</sup>	93			
1885 <sup>45</sup>		555	423	978
1886 <sup>46</sup>		555	423	978
1887 <sup>47</sup>		612	479	1091
1889 <sup>48</sup>		617	492	1109
1890 <sup>49</sup>		632	505	1137
1891 <sup>50</sup>		647	516	1163
1892 <sup>51</sup>		659	524	1183
1893 <sup>52</sup>		670	537	1207

23 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:

24 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:

25 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:

26 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-12:

27 Նույն տեղում, ք. 74:

28 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:

29 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:

30 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:

31 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:

32 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:

33 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:

34 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:

35 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:

36 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21: Տե՛ս նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:

37 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:

38 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:

39 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:

40 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:

41 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:

42 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:

43 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 1015 շունչ («Кавказский календарь на 1885 г.», էջ 204).

44 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

45 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:

46 Նույն տեղում, գ. 3878, ք. 11:

47 Նույն տեղում, գ. 3880, ք. 39-40:

48 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:

49 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:

50 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:

51 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:


52 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:

1894 <sup>53</sup>		682	541	1223
1897 <sup>54</sup>		747	602	1349
1898 <sup>55</sup>		754	627	1381
1899 <sup>56</sup>		757	635	1392
1900 <sup>57</sup>		772	659	1431
1901 <sup>58</sup>		800	688	1688
1902 <sup>59</sup>		833	809	1642
1905 <sup>60</sup>		892	877	1769
1908 <sup>61</sup>	167	954	925	1879
1910 <sup>62</sup>		1030	999	2023
1912 <sup>63</sup>		1069	1043	2112
1914 <sup>64</sup>		1131	1093	2224
1916 <sup>65</sup>		1139	1099	2238
1918 <sup>66</sup>	300	1390	1365	2755
1921 <sup>67</sup>		266	240	506
1987 <sup>68</sup>	351			1258

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 240 սուլդացիներից 126-ը զոհվել է<sup>69</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** Սուլդայում հայոց դպրոցի գործունեության վերաբերյալ վավերագրերը սկիզբ են առնում 1860-ական թվականներից: Տարիներ ի վեր Սուլդայում ծխական դպրոցը գործել է՝ չունենալով շենքային հատուկ պայմաններ: 1875 թ. այդ բացը սեփական միջոցներով լրացնելու խոստում էր տվել գյուղի տանուտեր Թորոս աղան<sup>70</sup>:

Հայտնի է, որ 1885 թ. ցարական իշխանությունների կողմից հայոց դպրոցների փակումից և 1886 թ. վերաբացման թույլտվությունը ստանալուց հետո՝ միայն 1888-ին են սուլդացիներն ի վիճակի եղել խորհել դպրոցի վերաբացման մասին, սակայն նյութական դժվարությունները խոչընդոտել են կրթօջախի բացմանը<sup>71</sup>: Սուլդան Ջավախքի այն սակավաթիվ գյուղերից է, որը, չնայած ձգձգումներին և տևական ընթացքին, կարողացել է գլուխ բերել դպրոցական հարմարավետ շենքի կառուցման գործը: Այդ հաստատության գոյության համար Սուլդան պարտական էր իր զավակներից մեկին՝ Հով-



ՍՈՒԼՂԱ. Հ. Մալխասյանի նախաձեռնությամբ կառուցված դպրոցի շենքը, և երախտաշատ սուլդացու կիսանդրին նույն դպրոցի բակում

հաննես Մալխասյանցին<sup>72</sup>: Հայտնի է, որ 1909 թ. հուլիսի սկզբին սուլդացիները սպասում էին Հ. Մալխասյանցի ժամանմանը՝ հոգաբարձական ընտրություն անցկացնելու նպատակով<sup>73</sup>: Օգոստոսի 2-ին Հ. Մալխասյանցի գլխավորությամբ տեղի ունեցած ծխական ժողովում որոշվում են դպրոցի կառուցմանն առնչվող երեք գլխավոր խնդիրներ. «1) Հոգաբարձուներ ընտրուեցին պ. պ. Յովհ. Մալխասեան, Սիմեօն Ֆերմենեան, Մատթեոս Ջանոյեան, Բարդուղիմէոս Յակոբեան և Յակոբ Մալխասեան. անձնավիճակները՝ Դուկաս Վարդիկեան և Մինաս Ապաճեան: 2) Դպրոցի մակարդակը կազմել է

53 Նույն տեղում, գ. 3896, ք. 167-168:

54 Նույն տեղում, գ. 3899, ք. 140-141:

55 Նույն տեղում, գ. 3897, ք. 163:

56 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:

57 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:

58 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:

59 Նույն տեղում, գ. 3907, ք. 17-18:

60 Նույն տեղում, գ. 3912, ք. 260-261:

61 ՀԱԲ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:

62 Նույն տեղում, գ. 3917, ք. 134-135:

63 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:

64 ՀԱԲ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 171-172:

65 ՀԱԲ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 18-19:

66 ՀԱԲ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:

67 ՀԱԲ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:

68 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

69 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:

70 «Արարատ», 1875, էջ 348:

71 «Նոր-Դար», 1888, № 122, էջ 1:

72 1903 թ. «Ռուսահայ դեմքեր» խորագրի ներքո «Բանասեր»-ը գրել է. «Այժմեան ժողովրդական լեզուով գրող վիպագիրներից մեկը, ծն. Հայոց Ախալքալաքի Սուլդա գյուղում 1866 թ. Սեպտ. 10-ին: Հայրը քահանա է: Մօտ 7 տարեկան հասակից ուսել է գիտի խալֆայի մօտ եւ 10 տարեկան արժանացել «Յասնամուրթ» կարդալու (ծես Հաւատքի շորջը - Հօրօտ Մորոտ Ա. մաս), եւ յետոյ էլ անցել՝ Կարգախի խալֆայի մօտ է ուսել...» (Պարիս, 1903, հ. Ե, № 1, էջ 9):

73 «Սուրհանդակ», 1909, № 7, էջ 2:

Յովի. Մալխասեանը, որը լինելով 6 սենեակից և մէկ ընդարձակ սրահից, շինութիւնը լինելու է միանգամայն համապատասխան մանկավարժական պահանջներին, իր բարձրութեամբ (2 սաժէն) և լոյսով և տաքութեամբ: Շինութեան արտաքին մասը լինելու է սրբատաշ քարից, որի համար որմնադիր վարպետներն ու քար կտրողներն արդէն վարձուած են: Դպրոցն իր մէջ ունենալու է և բեն: 3) Դպրոցի ապահովութեան համար գիւղացիք համախօսականով յատկացրին մի խոտատեղ, որը տարէնը կը տայ մինչև 600 ռուբլի եկամուտ: Բացի այդ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցին տալու է իւրաքանչիւր տարի 400 ռուբլի, իսկ գիւղի եկեղեցին՝ 200 ռուբլի, որպիսի (1200 ռ.) գումարով կարելի կը լինի պահել միդասեան խառն դպրոց, առանձին-առանձին բաժանմունքներով»<sup>74</sup>: Կառուցվելիք դպրոցի հիմնօրհները տեղի է ունենում օգոստոսի 17-ին<sup>75</sup>: 1912 թ. դպրոցի կառուցման ընթացքն ավարտին հասցնելու նպատակով 1000 ռ. էին մվիրել Ալ. Մանթաշյանի ժառանգները, որի առթիվ Սուլդայի Սբ. Խաչ եկեղեցում պատարագ էր մատուցվել հանգուցյալի հիշատակին<sup>76</sup>: Տարօրինակ է, բայց դպրոցի կառուցման գործը նախատեսված հունով ընթանում էր միայն Հ. Մալխասյանցի ներկայությամբ ժամանակ: 1913 թ. կրկին գյուղ այցելած Մալխասյանցը նոր լիցք է հաղորդում ձգձգվող շինարարական աշխատանքներին. «Պ. Մալխասեանի ասելով ուսումնարանի շէնքի մինչև աւարտը ծախս կը գնայ դարձեալ 2000 ռուբ., որի կէսը՝ 1000 ռուբ. խօստանում է ինքը ժողովել, իսկ մնացածը առաջարկեց գիւղացիներին տալու... Գիւղացիք «Պոզալ ձոր» կոչւած խոտատեղը 3 տարի (1914, 15, 16 թ.) ժամանակով յատկացրին ուսումնարանին: Այդ 3 տարում եկամուտ է սպասում 1000 ռուբ.: Շինութիւնը վերսկսելու է այս ամսի 8-ից...»<sup>77</sup>: Կառույցն ավարտին հասցնելու համար նյութապես օժանդակել է նաև Վրաստանի և Իմերեթի կոնսիստորիան. «1916 թ. Վրաստանի կոնսիստորիայի դպրոցական դրամագլխի տոկոսներից միանվագ 300 ռ. տրվել է նպաստ Սուլտայի դպրոցական կիսատ մնացած շէնքը կառուցելու-ավարտելու համար»<sup>78</sup>: 1916 թ. հոկտեմբերի 5-ին վերաբացվում է գյուղի միդասյա ծխական դպրոցը. «...Դպրոցը առ այժմ յաճախում են 100 աշակերտ, որից 20-ը աշակերտուհի. աշակերտների թիւը օր աւուր աւելանում է: Դպրոցում դասաւանդում են 1 ուսուցիչ և 2 ուսուցչուհի...»<sup>79</sup>: Վերջիվերջո, 1917 թ. Սուլդայի նորակառույց դրպ-

րոցն ընդունում է իր առաջին սաներին. «Յունուարի 11-ին գիւղիս ծխական դպրոցի սաները ժամանակաւոր հին շէնքից տեղափոխուեցին նորակառույց դպրոցի շէնքը և այնտեղ սկսուեցին դպրոցական պարապմունքները: Նոր դպրոցի վրայ մինչև այսօր ծախսուած է մօտ 10-12 հազար ռ., 4 դասարան պատրաստ են իրանց բոլոր յարամարութիւններով, իսկ մնացած մասի կառուցումը մնաց գարնան լրացնելու: Սուլտայի ծխական դպրոցի նոր շէնքը պատիւ է բերում սուլտացիների անուան. նոր դպրոցի կառուցման գործում մեծ ջանքեր է թափել պ. Յովհաննէս Մալխասեանը: Ամբողջ Ջաւախքի գիւղերում չկա մի այդպիսի դպրոցական շէնք...»<sup>80</sup>:

Տարիների ջանք ու եռանդ կլանած և իր ժամանակի առավել աչքի ընկնող կրթօջախը 1990-ական թթ. սկզբներին նորոգվել է: Բակում կանգնեցված է Հովհաննէս Մալխասյանցի կիսանդրին:

Ստորև ներկայացնում ենք դպրոցի գործունեությանը ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>81</sup>		1	29
1874 <sup>82</sup>		1	40
1875 <sup>83</sup>	Մատթեոս Հովհաննիսյանց		40
1876 <sup>84</sup>		1	19
1877 <sup>85</sup>		1	38
1878 <sup>86</sup>		1	17
1880 <sup>87</sup>		1	31
1881 <sup>88</sup>		1	34
1883 <sup>89</sup>		1	12
1906 <sup>90</sup>	վերաբացվել է, եռամյա		
1910 <sup>91</sup>	գործել է		
1912 <sup>92</sup>	երկդասյա, եռամյա	2	65
1912/13 <sup>93</sup>		1	67 (7-ը՝ աղջ.)
1914 <sup>94</sup>		2	101
1916 <sup>95</sup>		3	100 (20-ը՝ աղջ.)
1917 <sup>96</sup>	գործել է ԿՀԲԸ օժանդակությամբ		

80 «Համբարաբեր», 1917, № 9, էջ 216:

81 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:

82 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:

83 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:

84 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, ք. 51:

85 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:

86 Նույն տեղում, գ. 3850, ք. 177:

87 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:

88 **Խոսրոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 523:

89 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, ք. 47-48:

90 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 625, ք. 13: Ի դեպ, լրատվական մի հաղորդման համաձայն՝ դպրոցի վերաբացման տարեթիվ է համարվել 1909 թ-ը («Кавказ», 1910, № 1, էջ 2):

91 Կրթօջախը գործել է՝ անկախ Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու նշանակած ամենամյա նպաստի՝ ժամանակին հատկացումից («Արարատ», 1910, էջ 792):

92 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3920 ք. 17-18:

93 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 625, ք. 15-16:

94 **Խոսրոյան Ս.**, նույն տեղում:

95 «Համբարաբեր», 1916, № 45, էջ 1424:

96 «Армянский вестник», 1917, № 35-36, էջ 21:

74 «Հովիւ», 1909, № 32, էջ 511:

75 Նույն տեղում: Տե՛ս նաև՝ «Մուրհանդակ», 1909, № 20, էջ 3:



76 «Հորիզոն», 1912, № 55, էջ 4:

77 «Ջաւախք», 1913, № 24, էջ 193-194:

78 «Արարատ», 1916, էջ 466, 469:

79 «Համբարաբեր», 1916, № 45, էջ 1424:





ՍՈՒՆԴԱ. ծխական Սր. Խաչ եկեղեցու տեսքը հս-ամ-ից և ալ ճակատին ագուցված թևավոր խաչերի բեկորներ

**Սր. Խաչ եկեղեցի.** կառուցվել է 1830-ականներին<sup>97</sup>: Հայտնի է, որ 1853 թ. այդ եկեղեցին վերակառուցվել է և վերստին օծվել Սր. Խաչ անվամբ: Ի դեպ, աշխատանքների ընթացքում օգտագործվել են Հոկամ և Կաշ գյուղերի միջև գտնվող հին ու ավեր շինության սրբատաշ քարերը (հավանաբար՝ իջևանատան)։ «...ի 13-ն յունվարի 1853 ամի վեց անձինք միաձայնութեամբ ցուցեալ են թէ կայր ընդ մէջ Կաշ և Հօքամ գիւղօրէից կերտուած ինչ և ոչ տաճար Աստուծոյ, որոց կոփեալ քարինքն թափեալ էին ի վերա երկրի, զքանի մի ի քարանց անտի տարեալ ի գործ եղեալ են ի վերա նորաշէն եկեղեցոյն Սուլթային և ոչ այլ շինութեանց և ապա ի 27-ն ապրիլի նոյն ամի երկուտասան անձինք երդմամբ ցուցեալ են համաձայն միմեանց, թէ ընդ մէջ Կաշ և Հօքամ գիւղից գտանի աւերակ շինուածոց ինչ, զոր ոչինչ կերպիւ չէ հնար ճանաչիլ, թէ եկեղեցի իցէ լեալ, որ յանմտաբերելի հնութեն ոչ թէ միայն խախտեալ է, այլ նաև բազում քարինք անկեալ են ի զանազան տեղիս առանց ամենայն խնամոց, կամեցեալ շինել ի Սուլտայ գեղջ զեկեղեցի և վասն աղքատութեան իրեանց ունելով կարօտութիւն նիւթոց ժողովրդականք խորհրդակցութեամբ միմեանց և թոյլտուութեամբ տանուտեառն իրեանց Մովսիսի

Ղազարեանց գնացեալ ժողովեալ են զցրուեալ քարինս»<sup>98</sup>: Քարաշէն, փայտածածկ<sup>99</sup> եկեղեցու պատերի մեջ այժմ էլ ակնհայտ են այն սրբատաշ և իրենց չափերով ավելի մեծ քարերը, որոնք, համաձայն վավերագրի, փոխադրվել էին նշված հնավայրից 1853 թ.:

Ներկայումս Սր. Խաչ եկեղեցին քայքայված և մինչև իսկ վթարային վիճակում է: Եկեղեցու արևելյան պատին ագուցված են թևավոր խաչքարեր, որոնց վրա նկատվում են վրաց մետրոպոլիտան արձանագրությունների հետքեր:

1. Արձանագրություն.

Մթիւլաւ Գեորգի Միւլլալե յաւելց[օիւելլի].  
Թարգմ. Սր. Գևորգ (Գիւրգի), ողորմիր Այսլխասցուն:

Հրատ. «Ջաւախեո. օսթօրօյլ-նւրօտմօժըրլլօ ԳՅձձքլլեւլլօ», էջ 33:

Մանր. «Ջաւախեո. օսթօրօյլ-նւրօտմօժըրլլօ ԳՅձձքլլեւլլօ»-ի թվագրմամբ ԺԲ-ԺԳ ող.

2. Արձանագրություն.

Տախելօտա լըտօսեմՄօժլօսաժօտա Ջւարօ Եսլլ Ելլմարտա. թլ օլլըլօրըլլ թօլլախսլլըլլ Մլլօլտա իլլթօտա թլլլլըլլ...

97 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 42-67:

98 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 3352, թ. 4:  
99 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:



ռուցված շինություն է: Պահպանված բարձրությունը հազիվ 2 մ է, արտաքին չափերը՝ 6,9 x 4,8 մ: Շինարվեստն ու կառուցողական առանձնահատկությունները հնատճ են, բնորոշ՝ Թ-Ժ դարերին: Ոչ հեռու պահպանվում է նույն ժամանակաշրջանին վերաբերող թևավոր խաչ (190 x 130 x 50 սմ): Հայտնի ուխտավայր է<sup>100</sup>:

Ոչ միայն Սուլդայի, այլև մերձակա գյուղերի հավատացյալ բնակիչներն ուխտի են գալիս Սբ. Գևորգ մատուռ, հատկապես Կրկնագատկի (Կարմիր կիրակի) օրը<sup>101</sup>:

**Քերդ.** ավանդաբար բերդատեղի է համարվել Հ. Մալխասյանցի ջանքերով կառուցված դպրոցի հարթ և բարձրադիր տեղանքը:

100 **Էփրիկեան**, նշվ. աշխ., էջ 70:

101 «Նոր-Դար», 1889, № 132, էջ 2-3:

## ՎԱՀԱՆԱՎԱՆՔ



ՎԱՀԱՆԱՎԱՆՔ. հուշարձանայտնի ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ասպինձայից 30 կմ հարավ, Վարձունյաց վանական համալիրից դեպի Կուր գետի հոսանքն ի վար, քիչ ներքև, Կուր գետի աջ ափին, դժվարամատչելի քարայրներում, որոնք մինչև ԺԴ դարի երկրորդ կեսը կոչվում էին «Վահանի քարայրեր»:

**Ընդհանուր տվյալներ.** կոչվել է նաև Վահանի վանք, կամ Վանիս Բվարի: Բազմաշերտ քարայրների համալիր է: Վանքի կառույցներից ուշագրավ են գլխավոր՝ գմբեթավոր, վիմավոր տաճարը, որը ԺԲ դարում վերակառուցել է Իչքիթը՝ Գուրգենի որդին, սրահավոր եկեղեցիները, տնտեսական շինությունները: Մասամբ պահպանվել են հորիզոնական և գրեթե ուղղահայաց սանդղավոր թունելների համակարգը, փոքրիկ կիսավիմավոր եկեղեցին, որը կառուցվել է Թամար թագուհու մծիգնորարքու-

խուցեսի կողմից, ջրատար կավե խողովակներ, որոնք Ջավախքի բարձրավանդակից ջուր են հասցրել վանք: Սկզբում սա եղել է զուտ արական վանք, սակայն, երբ այն անցել է Ղարիբայիսձենների տոհմին, կանանց նույնպես թույլատրվել է նույն վանքում ունենալ առանձին կացարաններ: Վերին շերտերից մեկի վրա հավելվել է մի գմբեթավոր, փոքր եկեղեցի, որի որմերը ծածկված են սև թանաքով կատարված նկարներով և արձանագրություններով:

**Պատմություն.** Վահանավանքի պատմության մասին գրավոր աղբյուրներում տեղեկություններ չկան: Վանքը ներկայումս կիսավեր է<sup>1</sup>: Ավանդու-

<sup>1</sup> ՅՅՅՅՅՅՅ յյյյյյյ յյյյյյյ, *ՄյսեջեղիՊջիջի լլ-օս ցամոցյ-ձս*, 1939, էջ 9-10:

թյան համաձայն՝ վանքը կառուցվել է ԺԱ դարի վերջում, Թմոզվու հետ միասին ավերվել է<sup>2</sup>: Սակայն դրանով Վահանավանքը չի դադարել գործող լինելուց: Դրա մասին վկայում է Վահանավանքում պահպանված արձանագրությունը, որի համաձայն, 1204 թ. Անտոն ճղոնդիդել-մծիգնոբարթուխուցեսը, որը թագավորի առաջին վեզիրն էր, Վահանավանքի համար կառուցել է շրջապարիսպ: Դա վկայում է նաև այն մասին, որ վանքը 1204 թ. դեռևս չի միացել որևէ խոշոր ավատատիրոջ կալվածքին<sup>3</sup> և դեռևս թագավորական արքունական սեփականություն էր: Սակայն այն օրվանից, երբ Թմոզվին դարձել է Երկայնաբազուկների ժառանգական կալվածք, մերձակայքում գտնվող Վահանավանքը նույնպես մաս է կազմել այդ կալվածքի: Այս հարցի առնչությամբ հարկ է նշել, որ «խոշոր ավատատիրական սեփականության կարևորագույն հատկանիշներից է տոհմական վանք ունենալը»<sup>4</sup>: 1204-1234 թթ. տարածքի նոր տեր, իշխանաց իշխան (յրօստօջտ յրօստօջտ) Սարգսի որդի Երկայնաբազուկ-Թմոզվեցին հաստատել է Վահանավանքի վանական կանոնակարգը<sup>5</sup>:

ԺԴ դարի առաջին կեսին թմոզվեցի իշխանական տոհմի՝ Թմոզվիցի հեռանալուց հետո Վահանավանքն անցնում է ոմն Ղարիբայիսձենների տոհմին: 1393 թ. մի գրության մեջ Ղարիբի որդի Մուրվանն ասում է, թե «գանջօգե սաջոյնոսի սաճեսեյնեբեղի ճամօգճեսեյնե ցեջորճարսա, սամքօյդրեբեղեսա շօրճտօ հեյմտօսա, ցանօս շեյսճեթտօ, սանօֆօլցեսա ճա սօջլօցեսա հեյմտօ մօճցօլցեբլեթտօսօ ճա սօջլօցեսա Նեյլօ ՄՊօրցեղեսա»<sup>6</sup>:

Սեկ այլ անթվակիր գրության մեջ, որը պատկանում է նույն ժամանակաշրջանին, Ղարիբայիսձեն տոհմի անդամները նշել են. «Միճասա մօնեսճերեսա շեյսճեթտօ ... մօջօճեսեյնե ցեյ ցեյլճարսա հեյլեսա, սամքօյդրեբեղեսա ճա սօջլօցեսա հեյլեստօ»<sup>7</sup>:

Այս տվյալներից ակնհայտ երևում է, որ Վահանավանքը դարձել է տոհմական վանք և դամբարան-եկեղեցի Ղարիբայիսձենի տոհմի համար:

**Եկեղեցիներ.** Վահանավանքի վանական համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից: Դրանցից մեկը գտնվում է քարայրների ստորին շարքում և կիսավիմափոր, դարպասատիպ շինություն է: Միակ դուռը բացված է հարավից: Մուտքի շրջանակի ներքևի աջ մասում ագուցված է վրաց մենարպատառ, գլխագիր յոթ տողանի արձանագրությամբ




ՎԱՀԱՆԱՎԱՆՔ. հուշարձանախմբի ընդհանուր տեսքը

մեկ քար: Եկեղեցին ենթարկվել է վերակառուցումների: Դրա մասին այլ նշանների հետ միասին վկայում է նաև այն հանգամանքը, որ արձանագիր քարն ուղղահայաց էր կանգնեցված:

1. Արձանագրություն. մուտքի շրջանակի ներքևի աջ մասում՝ 7 տող.

Ճ. ԴԿ ԿԴ [ԿԲԿԵԴ ՉԿԵ]ԴԴ | ԿՄ: Ն[ՉՓԴԴԴԵԴԵԴ] Խ[Դ]ՓԴ|ԵԴ [ԽԴԴԴ: ԵԴ] ԵԴ[ՓԴԴ]: | ԵԽԴ: ՔԴ[ԵԴԴ Խ]ՓԿԴԴԴԴ: Խ[ԴԴԴԴԴԴ: Ե: ԵԴԴԴԴ: [ՆԴԴ: Խ]Դ | ԵԴԴԴԴԴ: ՆԴ[ԵԴԴ]: ԴԴԴ: Կ[ԴԴ ԴԴԴ]



Գրչանկարն ըստ Գ. Օթյանզուրու

2 ԳաճաՄեղի Յ. ցարճիս, "ԳՅամքեյլ", 1945, էջ 38:  
 3 ցաճանօս շեյսճեթտօ ցանջեթտօ, մշվ. աշխ., էջ 12:  
 4 ցաճանօս շեյսճեթտօ ցանջեթտօ, մշվ. աշխ., էջ 17:  
 5 Մօրճանօ տ., օսճթօրօջլեյլօ սօճջլեյլօ մօլ-մեյլօմօս մօնեսճերօս, 1895:  
 6 Մօրճանօ տ., մշվ. աշխ., էջ 44-45:  
 7 Մօրճանօ տ., մշվ. աշխ., էջ 46:













## ՎԱՉԻԱՆ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 6 կմ հարավ-արևմուտք, ծ. մ. 1740-1780 մ բարձրությամբ հարթության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. Վաչիան ունեցել է 17 տուն և թուրքական կառավարությանը մուծել 19.500 ակչե<sup>1</sup>: Բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1703-1704 թթ., տանուտեր Խալիլի օրոք, գյուղից հարկվել է 6000 ակչե<sup>2</sup>:

Չնայած Վաչիանը 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից գրեթե չի տուժել, այնուամենայնիվ, հայտնվել է Ջավախքի՝ 1901 թ կազմված կարիքավոր գյուղերի ցուցակում<sup>3</sup>:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Վաչիանի գյուղատնտեսությունը հայտնվել է խիստ ծանր իրավիճակում՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով առավել տուժած բնակավայրերի շարքում<sup>4</sup>: Գյուղում հաշվառվել է առաջնահերթ օգնության կարոտ 56 տուն՝ 328 բնակչով<sup>5</sup>:

**Նկարագրություն.** ԺԹ դարի վերջին Վաչիանի նկարագիրն այսպիսին էր. «...Բոլոր տները քարաշեն են, իրար կից, ցած, միայրականի և հողե կտուրներով: Տները առողջապահական պայմաններից զուրկ են. փողոցները նեղ, խառն և ծուռ ու մուռ: Շինությունների մեջ աչքի են ընկնում միմիայն, թե ներքուստ և թե արտաքուստ, պարզ և անշուք գիղական եկեղեցին և արքունական երկդասեան ուսումնարանը...: Վաչեան գիղի ամեն մի տան առաջը շուրջը բռնուած է գիղացու և սրա բազմաթիւ լծկան ու կթան կենդանիների վառելիքի և ուտելիքի պահեստներով. արարի բուրգերը, խտտի և յարդի խուրձերն ու դեզերը պատսպարում են միևնոյն ժամանակ գիղացու տունը ձմռան հակառակ սաստիկ հողմերից և չեն թողնում որ ձիւնի սարսափները բակի և տան մէջ լցուին: Հաղորդակցութեան համար առհասարակ տների տուրներն են ծառայում: Վա-

չեանցիների միակ և գլխաւոր պարսպմունքն է երկրագործութիւնը...: Վաչեանցին գիշեր ու ցերեկ աշխատում է, նա հերկի ժամանակ լծած իր գեղեցիկ եզն ու գոմշուկը հերկում է արտը, աղբով պարարտացնում է արտերը՝ գալ տարի ցանելու համար: Վաչեանցիներն իրենց այս օրինակելի աշխատութեամբ առաջին տեղն են բռնում գաւառիս բոլոր գիղերի մէջ»<sup>6</sup>:

**Ջրամատակարարում.** Ախալքալաքին մերձակա սակավաջուր գյուղերի շարքում Վաչիանը, կարելի է ասել, առաջին տեղում է: Խմելու ջրի աղբյուր էր ծառայում գյուղին կից գտնվող կիսաճահճային լճակը. «Գիղացիները խմելու ջուր թէ իրենց և թէ կենդանիների համար գործ են ածում այս լճակի ջրից, որովհետև ... չկան ոչ աղբիւրներ և ոչ գետեր: Այս լճակի ջուրը ծանր և անհամ է, մինչև անգամ կարելի է ասել՝ հոտած: Վաչեանցիներն այս ջրից են գործածում: Ի՞նչ անեն խեղճերը, ուրիշ ջուր չունեն»<sup>7</sup>: Այդ իսկ պատճառով 1892 թ. բռնկված խոլերայի համաճարակին հարևան գյուղերի համեմատ Վաչիանում զոհերի թիվն ավելի շատ էր: Քառասնօրյա համաճարակից վարակվել էին 300 մարդ, նրանցից 100-ը՝ զոհվել<sup>8</sup>: Համաճարակի սարսափներն ապրելուց հետո՝ 1893 թ., վաչիանցիները մինչև իսկ մտադրվել էին լքել գյուղը և հետևելով չիֆլիցիների օրինակին՝ փոխադրվել Կարսի մարզ. «Վաչիան գիղն ուզում է գաղթել Ղարսի նահանգը. այդ մասին գիղից երկու հարստարմատար ներկայումս Թիֆլիզ խնդիրներ են տալիս...: Գաղթելու պատճառը ջուրն է, վաչիանցիք ճահճային ջուր են խմում. շատերն այդ տեսակ ջրից վախենալով իրենց «բախտ» – արաղի են տուել»<sup>9</sup>: Սակայն վաչիանցիները փոխադրվելու փոխարեն, ի վերջո, գերադասում են Քառասնակն վտակից խմելու ջուր հասցնել գյուղ: 1895 թ. ձեռ-

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი", էջ 214:  
 2 "ხიფდღირის ვილაიეთის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.", էջ 108:  
 3 «Մշակ», 1901, № 40, էջ 1:  
 4 **Մալիմեան,** Անբերրիությունը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեւանքները, էջ 248:  
 5 Նույն տեղում, էջ 249:

6 «Նոր-Ղար», 1895, № 128, էջ 3:  
 7 Նույն տեղում:  
 8 «Արձագանք», 1893, № 18, էջ 1-2: Այլ տվյալների համաձայն՝ զոհերի թիվն էր՝ 150 («Արձագանք», 1893, № 12, էջ 2): Վնասակար ջրի հետևանքներին անդրադարձած Արսեն քահանա Բլրցյանը նշել է. «...Այդ հոտած ջուրն էր, որ անցեալ խոլերայի ժամանակ սարսափելի ջարդին նպաստեց...» («Նոր-Ղար», 1895, № 128, էջ 3):  
 9 «Արձագանք», 1893, № 12, էջ 2: Տե՛ս նաև՝ «Նոր-Ղար», 1893, № 15, էջ 1:

նարկը կյանքի են կոչում. «Ինչպես լսում ենք հաստատաբար աղբյուրներից, յիշեալ լճակի ջուրը ցամաքեցնում են վաչեանցիները և իրենց համար ջուր են հոսեցնում դէպի գիւղ (Վաչեան) Կողխ Բուլախ (քառասուն աղբերաց) գետակից»<sup>10</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները 1829-30 թթ. փոխադրվել են Էրզրումի Թվանջ գյուղից:

**Վիճակագրություն.** ԺԹ-ի դարերի ընթացքում գյուղի բնակչության անընդմեջ աճն արտացոլող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>11</sup>		214	193	407
1841 <sup>12</sup>		227	185	415
1842 <sup>13</sup>		233	199	431
1844 <sup>14</sup>		261	215	476
1845 <sup>15</sup>		272	263	535
1847 <sup>16</sup>		270	265	535
1849 <sup>17</sup>		223	276	569
1853 <sup>18</sup>		343	298	641
1854 <sup>19</sup>		355	302	657
1857 <sup>20</sup>		381	337	718
1860 <sup>21</sup>		411	365	776
1861 <sup>22</sup>	88	420	385	805
1862 <sup>23</sup>	88	432	399	831
1863 <sup>24</sup>		440	419	859
1864 <sup>25</sup>		446	424	870
1865 <sup>26</sup>		457	427	884
1866 <sup>27</sup>	88	457	427	884
1867 <sup>28</sup>		471	451	922
1868 <sup>29</sup>		485	461	946
1869 <sup>30</sup>		499	474	973
1870 <sup>31</sup>		507	488	925
1871 <sup>32</sup>		514	498	1012
1872 <sup>23</sup>		544	508	1052
1873 <sup>34</sup>		561	525	1081

10 «Նոր-Գար», 1895, № 128, էջ 3:  
 11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:  
 12 Նույն տեղում, գ. 3802, ք. 64-65:  
 13 Նույն տեղում, գ. 3805, ք. 76-77:  
 14 Նույն տեղում, գ. 3809, ք. 13-14:  
 15 Նույն տեղում, գ. 3811, ք. 70-71:  
 16 Նույն տեղում, գ. 3814, ք. 33-34:  
 17 Նույն տեղում, գ. 3818, ք. 38-39:  
 18 Նույն տեղում, գ. 2743 ք. 38-39:  
 19 Նույն տեղում, գ. 3825, ք. 49-50:  
 20 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:  
 21 Նույն տեղում, գ. 3833, ք. 66-67:  
 22 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:  
 23 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:  
 24 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 25 Նույն տեղում, գ. 3846, ք. 10-11:  
 26 Նույն տեղում, գ. 3848, ք. 11-12:  
 27 Նույն տեղում, ք. 74:  
 28 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:  
 29 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 30 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 31 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 32 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
 33 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 34 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:

1874 <sup>35</sup>				1101
1875 <sup>36</sup>	130			1059
1876 <sup>37</sup>		579	529	1108
1877 <sup>38</sup>		584	507	1091
1878 <sup>39</sup>		602	455	1057
1880 <sup>40</sup>		649	491	1140
1881 <sup>41</sup>		674	491	1140
1882 <sup>42</sup>		677	502	1179
1883 <sup>43</sup>		686	500	1186
1884 <sup>44</sup>	133			
1885 <sup>45</sup>		717	531	1248
1886 <sup>46</sup>				1321
1887 <sup>47</sup>		778	578	1356
1889 <sup>48</sup>		794	581	1375
1890 <sup>49</sup>		922	605	1527
1891 <sup>50</sup>		941	623	1564
1892 <sup>51</sup>		916	605	1521
1893 <sup>52</sup>		928	622	1550
1894 <sup>53</sup>		944	621	1565
1895 <sup>54</sup>	187			
1897 <sup>55</sup>		968	672	1640
1898 <sup>56</sup>		987	694	1681
1899 <sup>57</sup>		998	701	1699
1900 <sup>58</sup>		1023	730	1753
1901 <sup>59</sup>		1042	747	1789
1902 <sup>60</sup>		1083	760	1843
1905 <sup>61</sup>		1175	923	2098
1908 <sup>62</sup>	222	1211	958	2169
1910 <sup>63</sup>		1290	1010	2300
1912 <sup>64</sup>		1360	1073	2433
1914 <sup>65</sup>		1415	1134	2549

35 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 36 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21: Տե՛ս նաև՝ «Մեղու Հայաստան», 1875, № 44, էջ 2:  
 37 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:  
 38 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 39 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 40 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:  
 41 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 42 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:  
 43 Նույն տեղում, գ. 3875, ք. 47-48: Ի դեպ, նույն թվականի համար մեկ այլ աղբյուրում նշված է 1012 շունչ («Кавказский календарь на 1885 г.», էջ 204).  
 44 «Արձազանք», 1885, № 3, էջ 41:  
 45 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10:  
 46 «Кавказский календарь на 1894 г.», էջ 156.  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, ք. 39-40:  
 48 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 49 Նույն տեղում, գ. 3887, ք. 143:  
 50 Նույն տեղում, գ. 3889, ք. 142:  
 51 Նույն տեղում, գ. 3891, ք. 114:  
 52 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 53 Նույն տեղում, գ. 3896, ք. 167-168:  
 54 «Նոր-Գար», 1895, № 128, էջ 2:  
 55 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, ք. 140-141:  
 56 Նույն տեղում, գ. 3897, ք. 162:  
 57 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 58 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 59 Նույն տեղում, գ. 3906, ք. 67:  
 60 Նույն տեղում, գ. 3907, ք. 16-17:  
 61 Նույն տեղում, գ. 3912, ք. 259-260:  
 62 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 42:  
 63 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 134-135:  
 64 Նույն տեղում, գ. 3920, ք. 17-18:  
 65 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 170-171: Վիճակագրական մեկ այլ տվյալի համաձայն՝ նույն թվականին Վաչիանն ունեցել է 2720 բնակիչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 104):



ՎԱՉԻԱՆ. Սր. Սիոն եկեղեցու տեսքը ամ-ից և հր-ամ-ից



ՎԱՉԻԱՆ. գյուղամիջի միջնադարյան գերեզմանոցը

1916 <sup>66</sup>		1425	1118	2543
1918 <sup>67</sup>	310	1315	1328	2643
1921 <sup>68</sup>		400	300	700
1987 <sup>69</sup>	557			2257

Երկրորդ աշխարհամարտին Վաչիանից մասնակցել է 415 հոգի, որոնցից 145-ը զոհվել է<sup>70</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության վերաբերյալ վավերագրերը տեղեկություններ են պարունակում՝ սկսած 1865 թ-ից:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>71</sup>		1	55
1873 <sup>72</sup>		1	35
1874 <sup>73</sup>		1	48
1875 <sup>74</sup>	Խաչ. Կարապետյանց		35
1876 <sup>75</sup>		1	40
1877 <sup>76</sup>		1	32
1878 <sup>77</sup>		1	31
1880 <sup>78</sup>		1	31

66 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 17-18:

67 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:

68 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:

69 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

70 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:

71 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:

72 **Խոսրոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 524:

73 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, ք. 25-26:

74 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 44:

75 Նույն տեղում, գ. 3850, ք. 51:

76 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:

77 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:

78 Նույն տեղում, գ. 3872, ք. 86-87:

1881 <sup>79</sup>	1	40
1882 <sup>80</sup>	1	42

Ծխական դպրոցի հետագա գործունեության վերաբերյալ վավերագրերի լուսթյունը պայմանավորված է եղել Վաչիանում արքունի (ռուսական) դպրոցի բացմամբ (1881)<sup>81</sup>, որի արդյունքը, ինչպես այլուր, այստեղ ևս հայոց դպրոցի փակելն էր:

**Սր. Սիոն եկեղեցի.** գտնվում է գյուղամիջում: Բազմիցս հիշատակվում է 1830-ականներից:

Եղել է քարաշեն, փայտածածկ շինություն<sup>82</sup>, որը 1887 թ. հիշվում է որպես «բառական գեղեցիկ նորաշեն եկեղեցի»<sup>83</sup>: Արդեն 1914 թ. քայքայված տանիքի նորոգությանը վերաբերող նախահաշվի համաձայն, նախատեսվել էր եկեղեցական գումարներից ծախսել 1200 ռ.<sup>84</sup>: Ներկայումս ավերակ է:

Եկեղեցու արևմտյան պատին ագուցված է վրաց մեսրոպատառ, կիսանդժ, երկտող արձանագրությամբ խաչքար.

ԿՂ ՄԻ ԶԱՆ | ՆՉԺ ՂՏԿ : Կ

Ճ(ԹՕԵԾ)Ե Մ(ԵՕՄԿԵԼ)Յ ԽՕՆ ԽՅՐ ՅՅԾ? :

Թարգմ. Քրիստոս, ողորմիր...

Հրատ. առաջին անգամ:

79 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:

80 Նույն տեղում, գ. 3874, ք. 42-43:

81 «Նոր-Դար», 1895, № 128, էջ 2:

82 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

83 «Նոր-Դար», 1887, № 174, էջ 2:

84 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3459, ք. 1-6: Տես նաև՝ ֆ. Պ-56, ց. 18, գ. 994, ք. 1: Նաև՝ «Արարատ», 1914, էջ 881:



ՎԱՉԻԱՆ. խոյածև և ձիակերպ տապանաքարեր գյուղամիջի միջնադարյան գերեզմանոցում

ՎԱՉԻԱՆ. հայ-քաղկեդոնականների խաչքարեր

**Գերեզմանոց.** միջնադարյան ավերակ եկեղեցու հարևանությամբ տարածվում է միջնադարյան գերեզմանոց, որտեղ պահպանվել են հայ-քաղկեդոնականներից մնացած Ժ-ԺԱ դարերին վերաբերող մի քանի խաչքարեր:

**Մատուռ-սրբատեղիներ.** Վաչիանի մերձակայքում պահպանվում են երեք մատուռ-սրբատեղիներ. «Մատուռների մէջ կան սրբերի գերեզմաններ, ուր ժողովուրդը հաւատով ուխտ է գնում: Մատուռների շուրջը կան գերեզմաններ, գերեզմանաքարը



ՎԱՉԻԱՆ. հատված գյուղամիջի մատուռ-սրբատեղիի խաչաքանդակ շարվածքից, կոթողի պատվանդան, նորաշեն մատուռ՝ «Սբ. Հովիկ» (2002 թ.)



ՎԱՉԻԱՆ. վրաց մեսրոպատառ արձանագրությամբ հայ-քաղկեդոնական խաչքար՝ ագուցված Սբ. Սիոն եկեղեցու ամ ճակատին

ներկայացնում է խոյ կամ գուռ, ուր լցվում է անձրևի ջուրը»<sup>85</sup>: Դրանցից մեկի մասին, որը հայտնի է «Եղնկաբեր» անվամբ, ավանդաբար պատմվում է. «...իբր թէ ամեն տարի Չատկին մի եղնիկ գալիս պառկում է մատուռի դրանը, որ մատաղ անեն»<sup>86</sup>:

Սբ. Լուսավորչի մատուռ. մատուռներից մյուսն էլ՝ Սբ. Լուսավորիչ անվամբ, գտնվում է գյուղից 3 կմ հարավ՝ Սբ. Սար լեռան (2001 մ) գագաթին: Վերջինս ուղղանկյուն հատակագծով, անմշակ քարով ու կրաշաղախով կառուցված պարզ շինություն է: Հայտնի է, որ մերձակա գյուղերի բնակիչներն այստեղ ուխտագնացության են գալիս կիրակի օրերին<sup>87</sup>:

85 «Նոր-Կար», 1887, № 174, էջ 2:

86 Նույն տեղում:

87 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 70:

## ՎԱՐԳԱՎ



ՎԱՐԳԱՎ. գյուղի տեսքը հր-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 15 կմ հյուսիս-արևմուտք, ծ. մ. 1700-1720 մ բարձրության վրա: Ժամանակակից վարչական բաժանմամբ մտնում է Ասպինձայի շրջանի մեջ:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. Վարգավ գյուղից, որն ազատ էր ռայաներից, հարկվել է 3.000 ակչե<sup>1</sup>:

**Բնակչություն.** ինչպես հարևան Խզաբավրայում, այստեղ ևս տեղում պահպանված հայ մշակույթի միջնադարյան հուշարձանները վկայում են, որ գյուղը նախնապես ունեցել է առաքելադավան հայ բնակչություն, որը ԺԷ դարում գնալով սաստկացող մահմեդականության պարտադրանքին դիմագրավելու նպատակով ընդունել է կաթոլիկություն: Ավելի ուշ վարգավցի հայ-կաթոլիկները, պայմանավորված վրացիների ներհուսքով, վրացական միջավայրին զոհաբերել են մայրենի լեզուն:

Վարգավը համարվել է նաև Վրաստանի խորքերից փոխադրված վրացիներով: Դրանցից է Շեշաբերիձեների ընտանիքը, որ ծագում է Զավթիսցի-

խե<sup>2</sup> գյուղից: Ի դեպ, այս ազգությունից էր սերում 1910-ական թթ. գյուղի հովվության պաշտոնը կատարած տեր Կոստանդիանոս Շեշաբերիձեն<sup>3</sup>:

Վարգավը Ջավախքի վրացախոս, հայ-կաթոլիկ բնակչություն ունեցող գյուղերից է:

**Վիճակագրություն.** ԺԹ-ի դարերի ընթացքում Վարգավի բնակչության քանակը վավերագրերում ցույց է տրված հետևյալ չափով.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1884 <sup>4</sup>				115
1908 <sup>5</sup>	24			172

2 Մեր այցելության ժամանակ (2001 թ. օգոստոս) վարգավցի Իոսեփ Միխայիլի Շեշաբերիձեն վկայեց, որ իր քավթիսցիսեցի նախնապապը կնոջ նկատմամբ վրաց թագավորի ոտնձգությունից խուսափելու համար իբր սպանել է թագավորին և հնարավոր հետապնդումից խույս տալով՝ հաստատվել Վարգավում: Այնուհետև Ռուսաց կայսեր կողմից պարզատրվել է թորքերի դեմ պայքարում ցուցաբերած մասնակցության և քաջագործությունների համար: Ինչ վերաբերում է Զավթիսցիսե գյուղին, ապա, ամենայն հավանականությամբ, վերջինս համապատասխանում է ներկայիս Կասպիի շրջանի Զավթիսխին:

3 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83:

4 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

5 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 34:

1 «გურჯისტანის ველისთვის დიდი ღაგთარი», էջ 206:





ՎԱՐՁԱՎ. հին՝ ավերակ և կառուցվող հայ-կաթոլիկ եկեղեցիները, տապանաքար

1914 <sup>6</sup>				291
1915 <sup>7</sup>				185
1916 <sup>8</sup>	24	101	98	199

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 170 վարգավցիներից 68-ը զոհվել է<sup>9</sup>:

**Սր. Աստվածածին եկեղեցի.** 1916 թ. կազմված տեղեկագրերից մեկում նշվել է, որ Վարզավը «ունի վաղեմի քարաշեն եկեղեցի»<sup>10</sup>, սակայն, օրինակ, 1884 թ. համարվել է եկեղեցի չունեցող գյուղ. «Եկեղեցին գտնուում է մասնատր տան մէջ»<sup>11</sup>:

6 «Кавказский календарь на 1885 г.», էջ 103:

7 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:

8 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, ք. 36-37:

9 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:

10 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83:

11 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:




ՎԱՐՁԱՎ. խաչքար (1491 թ.) Իոսեք Շեշաբերիձեի տնամերձ հողամասում, երբեմնի հայոց գերեզմանոցում

Վարզավի Սր. Աստվածածին եկեղեցին 1890 թ. վերակառուցվելուց հետո գործել է որպես ծխական շենք<sup>12</sup>: 1908 թ. նորոգման կարիք ունեւ<sup>13</sup>: 1915 թ.

12 ՀԱԴ, ֆ. 316, ց.1, գ. 102, ք. 34:

13 Նույն տեղում:



գյուղը հանձնված էր Խզարավրայի ծխատեր քահանա տեր Կոստանդիանոս Շեշաբերիձեի հոգևոր խնամքին<sup>14</sup> :

Ներկայումս եկեղեցին կիսավեր է, ուստի վարգավցիները սկսել են նոր եկեղեցու կառուցման աշխատանքները:

**Խաչքար.** գյուղամիջում՝ Լազարաշվիլի Նաթելայի (Վարզավ է տեղավորվել Խերթվիսից) տնամերձ հողամասում, ամբողջական տեսքով պահպանվում է մի գեղաքանդակ, արձանագիր խաչքար:

Խաչքար (չափերն են՝ 106 x 42 x 50 սմ), 5 սուղ.

ԹՎ(ԻՆ) ՋԽ (1491). | Յ(Ի)Շ|(Ա)Տ(Ա)Կ Է ԽԱՉՍ  
ՍԱՐԳՍԻՆ ԵՒ Ի(Ի)Ր ԾՆ(Ո)ՂԱՑՆ:

Հրատ. առաջին անգամ:

**Գերեզմանոց.** տարածվում է Վարզավի հյուսիսային եզրին: Տեղում պահպանվել են ԺԷ-ԺԹ դարերով թվագրվող, հիմնականում ուղղանկյունաձև տապանաքարեր:

**Գյուղատեղիներ.** գյուղի մերձակայքում հայտնի են հետևյալ հնավայրերը՝ Դամպալծղարոն, Խերթեսուվելին, Խորիանաբան, Ծերակունդան, Կաղմաստերին և Օղիսերին:

<sup>14</sup> «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 84:

ՎԱՐԵՎԱՆ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 13 կմ հյուսիս-արևմուտք, ծ. մ. 1670-1690 մ բարձրության վրա:

**Պատմություն.** մինևույն՝ Վարևան անվամբ 18 տուն բնակիչ ունեցող գյուղը, որից հարկվում էր 8.000 ակչե, հիշվում է 1595 թ. կազմված հարկացուցակում<sup>1</sup>: Հայտնի է նաև, որ 1718-1719 թթ.՝ տանուտեր Մուստաֆա Իբրահիմի օրոք, հարկվել է 18.500 ակչե<sup>2</sup>:

**Բնակչություն.** գյուղի հայ և հույն բնակիչների նախնիները փոխադրվել են Արևմտյան Հայաստանից, հայերը՝ Կարմո Թվանջ գյուղից, մյուսները՝ Արդահանից:

1870 թ. մի տեղեկագրի համաձայն՝ Վարևանում հայերից բացի բնակվում էին նաև վրացիներ (8 տուն, 51 ար., 42 իգ.) և թուրքեր (8 տուն, 47 ար., 41 իգ.)<sup>3</sup>: 1914 թ. գյուղի բոլոր բնակիչները միասին կազմում էին 1074 շունչ<sup>4</sup>: 1944 թ. թուրքերն արտրվեցին, իսկ վրացիների մեծ մասը, սկսած 1947 թ-ից, վերաբնակվեց կառավարության կողմից միայն իրենց արտոնված, Կուր գետի հովտում գտնվող թուրք-մեխիներից ազատված, այգեվետ ու բարեբեր գյուղերում: Վրացիների արտագաղթի հետևանքով արդեն 1964 թ. Վարևանում փակվում է վրացական դպրոցը<sup>5</sup>: 1990 թ. վարևանաբնակ վրացիները կազմում էին միայն մի քանի ընտանիք (3 գերդաստան՝ Մելիքիձեներ, Բալախաձեներ և Բերիձեներ)<sup>6</sup>: Մեր այցելության ժամանակ (2001 թ.) Վարևանն ուներ 180 տուն հայ, 7-8 տուն վրացի և 2 տուն վրացացած հույն բնակիչ:

**Վիճակագրություն.** Վարևանի հայ-կաթոլիկ բնակչության թվաքանակը ԺԹ-Ի դարերի մի քանի տեղեկագրերում ցույց է տրված հետևյալ չափով.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1870 <sup>7</sup>	36	96	113	209
1884 <sup>8</sup>				367
1908 <sup>9</sup>	77			560
1912 <sup>10</sup>				625
1915 <sup>11</sup>				674
1916 <sup>12</sup>	95	358	348	706
1987 <sup>13</sup>	200			820

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 175 վարևանցիներից 62-ը զոհվել է<sup>14</sup>:

Արցախյան ազատամարտին Վարևանը տվել է 1 զոհ՝ Պետրոս Միքայելի Աբաջյան (1964-1992):

**Գյուղոց.** Վարևանի կրթօջախի վերաբերյալ տեղեկություններն աղքատիկ են: 1916 թ. գործել է 1 ուսուցչով, 45 աշակերտով<sup>15</sup>:

**Սր. Աստվածածին հայ-կաթոլիկ եկեղեցի.** կառուցվել է 1843 թ.<sup>16</sup>, բայց հրդեհի պատճառով վերակառուցվել է 1856 թ. «Ժողովրդապետական քարաշեն եկեղեցի յանուն Վերափոխման ամենասուրբ Կուսին Մարիամու, 1856 ամի: Ծախսիք ծխակաւնաց»<sup>17</sup>: Եկեղեցու վերանորոգման աշխատանքներ են իրականացվել նաև 1898<sup>18</sup>, 1903<sup>19</sup> և 1916 (նորոգվել է տանիքը)<sup>20</sup> թվականներին:

Ներկայումս Սր. Աստվածածին եկեղեցին կանգուն է և բարեկարգ:

**Քահանա.** 1915 թ. գյուղի ծխատեր քահանայի պաշտոնը վարում էր տեր Պետրոս Տեր-Պողոսյանը<sup>21</sup>:

**Սր. Դունկիանու մատուռ.** գտնվում է գյուղամիջում, իսկ Պետրոս Մանասյանի տնամերձ հողա-

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი", էջ 197:  
 2 "ხილდორის ვილაიეთის ჯგაბა დავთარი 1694-1732 წწ.", էջ 157:  
 3 CMOTI, էջ 25:  
 4 "Кавказский Календарь на 1915 г.", Тифлис, 1914, էջ 103:  
 5 **კახა მახსურაძე**, ჯავახეთში ქართველი სკოლები იხურება, Georgian Times, 17-24. 06. 2004, № 24:  
 6 "სოფლის ცხოვრება", 16.02.1990, էջ 6:

7 CMOTI, էջ 25:  
 8 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:  
 9 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 35:  
 10 **Յակոբյան Պ.**, Հրատեր ողջնություն, էջ 95:  
 11 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 81-82:  
 12 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 36-37:  
 13 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 14 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:  
 15 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 36-37:  
 16 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:  
 17 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 81-82:  
 18 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 35:  
 19 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 81-82:  
 20 ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 55, թ. 18:  
 21 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 82:





ՎԱՐՆԱՆ. Վարդիսցիխն գյուղատեղիի եկեղեցու տեսքը հր-ից, հր-ալ-ից, հր-ամ-ից, հր-ից, ալ-ից և հր ճակատից բացված մուտքը


ԿՍԻՆԻՅԵՎԻ | ... ԿԿԶ ԲԴ; Ի. Ռոստոմաշվիլի՝ ՂՏ, ԴՍՏ, ՀԳՄԻՄՆՏ, ԲԿԸԾ...ԲՆ; լեւոնաթ, յե, յարեւան, յեղատա, յորոնիկոն: Վ. Յիսկարիշվիլի՝ լեւոնաթ, յարեւան, յեղատա, յորոնիկոն: Ն. Բերձենիշվիլի՝ [ձեւը], ԿՕձեւոս, [Օրա]Նեց; Բալաբեր, Օրանց: «Ճաւաթեո. ինտորիւլ-նորոտոմոձեւը»-ում Բալաբեր, Օրանց, յորոնիկոն:

Նանթ. Մ. Բրոստի առաջարկած քրոնիկոնի թվականը վերաբերում է ԺԿ պարբերաշրջանին՝ ԲԴ (55 թ. = 1365 թ.): Է. Թադայշվիլին հաստատել է Մ. Բրոստի և Ի. Ռոստոմաշվիլու կողմից առաջարկված տարբեր թվագրումների առկայությունը: Ն. Բերձենիշվիլին և «Ճաւաթեո. ինտորիւլ-նորոտոմոձեւը»-

լու «Յաթեւեւ»-ի խմբագրականը քրոնիկոնի թվականի հարցում մայապատկություն են տվել 13-րդ պարբերաշրջանին և որպես կառուցման թիվ՝ նշել 1020 թվականը:

**Վարդիսցիխն գյուղատեղի.** գտնվում է Վարնանից 1 կմ արևելք, բարձունքի վրա: Մատենագիր աղբյուրներում առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1595 թ.<sup>22</sup>: Այդ թվականին կազմ-

22 "Գրքոստանի յոլոյոտի լոլո լոլո", էջ 191:



*ՎԱՐՇՎԱՆ. Վարդիսցիխն գյուղատեղիի եկեղեցու ներքին տեսքը դեպի հս-ամ, ամ, հս և հր ճակատին պահպանված վրաց մետրոպատառ արձանագրությունը*

ված թուրքական «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար»-ում գյուղը հիշվում է 14 տուն բնակչությամբ և 8.000 ակչե հարկաչափով: Բնակչության բռնի մահմեդականացումից հետո Վարդիսցիխն հիշվում է 1719-1720 թթ.՝ Յահյաի տանուտիրության օրոք՝ 15.500<sup>23</sup>, իսկ 1724-1725 թթ.՝ նույն Յահյաի որդի Օմերի օրոք՝ 7500 ակչե հարկաչափով<sup>24</sup>: Գյուղատեղիում պահպանվել են եկեղեցին և գերեզմանատունը:

չության բռնի մահմեդականացումից հետո Վարդիսցիխն հիշվում է 1719-1720 թթ.՝ Յահյաի տանուտիրության օրոք՝ 15.500<sup>23</sup>, իսկ 1724-1725 թթ.՝ նույն Յահյաի որդի Օմերի օրոք՝ 7500 ակչե հարկաչափով<sup>24</sup>: Գյուղատեղիում պահպանվել են եկեղեցին և գերեզմանատունը:

*Եկեղեցի. Ն. Բերձենիշվիլու կարծիքով՝ ԺԳ-ԺԵ որ. կառույց է՝*<sup>25</sup> : Համակ սրբատաշ (արտաքուստ) և կոփածո (ներքուստ) քարով, կրաշաղախով կառուցված միանավ շինություն է՝ հարավային ճակատից բացված միակ մուտքով: Նույն ճակատին երեսապատի սրբատաշ քարերից մեկի վրա պահպանվում է վեց տողով փորագրված վրաց մետրոպատառ, խիստ հողմահար արձանագրություն:

<sup>23</sup> "ხელდობის ვიდეგობის ჯაბა დავთარი 1694-1732 წწ.", էջ 160:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>25</sup> *გერძენიშვილი ნ.*, ნշվ. աշխ., էջ 169:









ՎԱՐՉՈՒՆԻՔ. հատվածներ (նկ. Հ. Սանասարյանի)

մեծ խորանի շինող տեր Իվանեին, արժանանա արքայությանը, և նրա մեղքերն Աստված թողնի. ասմեն:

Հրատ. **Եսեկարի** շիջիլի ց., նշվ. աշխ., էջ 115; «Ջագախեո. օստրոյուլ-խորոտոմոկըրուլի ց Ֆոմկեղեցի», էջ 119:

Տարընքերցուն. «Ջագախեո. օստրոյուլ-խորոտոմոկըրուլի ց Ֆոմկեղեցի»-ում շիջընլոս:

Շանթ. Մ. Բրոսսեն այս արձանագրությունը չի հրատարակել: Կ. Մելիտաուրին և Վ. Յիսկարիշվիլին արձանագրության մեջ հիշված Իվանեին նույնացնում են 1391-1444 թթ. ապրած Իվանե արքային՝ վիսազիրը թվագրելով նրա կյանքի տարիներով (Մեղիտաուրի ց. Մոմիաշիջիլի ց., Նանտաթե Մ., Ջագախեո ց., Վարձիա, տոմոլոսի, 1955, էջ 80):

Կ. Մելիտաուրին նշել է, որ այդ արձանագիր քարն այսօրվա տեղում է հայտնվել հոգևորական Գ. Պուրնդապուրյի ղեկավարությամբ ԺԺ դ. 60-ական թթ. Վարձուրի վանական համալիրում ընթացած վերականգնողական աշխատանքներից հետո, ուստի դրանից մեկ տասնամյակ առաջ հնավայրն այցելած

Մ. Բրոսսեն այն տեսնել չէր կարող (Մեղիտաուրի ց. Մոմիաշիջիլի ց., Նանտաթե Մ., Ջագախեո ց., նշվ. աշխ., էջ 80):

2. Գլխավոր եկեղեցու խորանի կամարին, ներքուստ Հիսուս մանկանը ձեռքերին պահած Սբ. Աստվածածնի որմնանկարի կողքին պատկերված թագն ու լուսապսակ կրող մարդու գլխի աջակողմնում.

ԿՆՆՏ ՇՈՒՂՏԻՆԳԴՆՏ ԺԻԳԴՏ | ԺԻԳԴ ԴՂ ԺԻ ՇԻԺԻԵԺԻ | ԺԻԳԴՏ ԺԻԳՏ : Ժ

ց(ոջ)լոսա ձեռնազեղեցիսա մեղեցոս | մեղեց ցոորցո, ժե ձեղեցրե | մեղեցոս մեղեցոս : մ.

Թարգմ. Ողջ արևելքի արքայից արքա Գլորիգի. արքայից արքա Դենտրեի որդի:

Հրատ. **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 292-293:

Շանթ. արձանագրության մեջ հիշատակված են Գլորիգի Գ-ն (1156-1184 թթ.) ու նրա հայր Դենտրե Ա-ն (1125-1156 թ.):

3. ზადაქორი ირანაყასტისი კოეჲნი აყასყანძელს ს. ს. ასოქადბანძინს ხსენებენ მანრასტონს იმბაჲოლ არეყასტის ირანანსკარდ აფსკოჲნიან კრავ მნაროყასთან ხსოსკალ არბანანაგოჲსჲს.

ყონსტანტინოპოლისი | კოქორდს  
კოქორდს | კოქორდს | კოქორდს | კოქორდს

ყ(ო)ლისა აღმოსავლეთისა | მეფეთა მეფე  
შვილი | ძე გ(იორ)გ(ი)სი თამარ ჩ(ემ)ი  
შვილი შექველცხმცა.

შარდ. იღვ არსტეჲსი არეყასტისი არეყასტისი  
იოსთრ ზამარ, იღვ ხრესარასკეჲსი ქინძ:

ჰრათ. Brosset M., ნძქ. აქს., ხვ 292-293:

შარდ. ს. მონსენს პარგანსელს. «*Le roi des rois de tout l'orient; Thamar; née du roi Giorgi: Que je porte bonheur à mon fils!*»: სრბანანაგოჲსჲსი იხუჯათასკად ანბინძ ხნ<sup>1</sup> ჲრასთანისი გიორგისი (1156-1184 წწ.) ს მრას იოსთრ ზამარს პაგოჲსინს (1184-1213 წწ.):

4. ჲარბინძისი ირნეჲსი მსხინს აყასყანძელს ს. ს. მსხინს კასთარქად მსხს აქს კრავ მნაროყასთან სრბანანაგოჲსჲსინს.

ჰოე, ჲმრთისა ჲედაო, მიითუაღე ... მსახურება ჩემ მიერ მონისა შენისა რატი ... ჲა

ქართლისა ერისთავისაგან, რომელმან ვიგულისმოდგინე და მოხატვით აღვამკვე წმიდად ესე ტაძარი დიდებისა შენისა და ნაცვალმაგე წინასშე ძესა შენსა და ჲმერთსა ჩუენსა ჲღესა მას დიდსა საშუჲლისასა და ამას სოფელსა შინა ძეთა ჩემთა თანა მცველადა და მფარველ მექმენ.

შარდ. ო<sup>1</sup>ხ, შარქი ასთონი, მასქი ... ხმ<sup>1</sup> ქი ბანა ოასთი ბანოჲსჲსინ... ს ჲარქისი ხუჯანძისი (ერისთავი), იღვ... ს მსარსილ კაროჲსინსი ქი ქიარქისი აქს თანარქი ს ირას ქიქსარენს ოგნასკანს ს აყასყანს ხიქი ხნძ ოი აქს აქსარხინს [ასქილ] ხმ ირქინსინსი ქი ორქი ს მნე სქიოჲს ათღს მნძ იასთანისი აქს ორქ:

ჰრათ. «*ჯავახეთი. ისტორიულ-ხუროთმოძღვრული გზამკვლევი*», ხვ 118:

შარდ. ხრასარასკინს ს რას «*ჯავახეთი. ისტორიულ-ხუროთმოძღვრული გზამკვლევი*»-ს:

შქარქინს ს 1184-1185 წწ-ილ:

ՎԼԱԴԻՍԻՐՈՎԿԱ



ՎԼԱԴԻՍԻՐՈՎԿԱ. ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 23 կմ արևելք, շրջկենտրոն Նինոծմինդայից 22 կմ հյուսիս-արևելք, ծ. ս. 2080-2100 մ բարձրության վրա, Փարվանա լճի հարավարևմտյան ափին:

**Բնակչություն.** ԺԹ դարի 40-ական թթ. Վլադիմիրովկայում բնակություն էին հաստատել աքսորական ռուսներ, որոնց քանակը 1914 թ. կազմում էր 197 շունչ<sup>1</sup>: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ռուս բնակիչները ժամանակի ընթացքում հայրենադարձվել են: Վերաբնակիչ վերջին ռուսը գյուղը լքել է 1956 թ.: Ռուսների արտագաղթին զուգահեռ, արդեն 1937 թ-ից ի վեր Վլադիմիրովկայում բնակություն են հաստատել մերձակա գերբնակեցված հայաբնակ գյուղերից փոխադրված ընտանիքներ: Վերջիններս հատկապես Փոկա ու նաև Հեշտիա գյուղերի բնակիչներ էին, որոնց թիվը 1988 թ-ին կազմում էր 52 տուն, 286 բնակիչ:

Երկրորդ աշխարհամարտին Վլադիմիրովկայից մասնակցել է 90 հոգի, որոնցից 36-ը զոհվել է<sup>2</sup>:

<sup>1</sup> “Кавказский календарь на 1915 г.”, էջ 105:  
<sup>2</sup> **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:

**Դպրոց.** 1960-80-ական թվականներին Վլադիմիրովկայում հայոց 8-ամյա դպրոցի գործունեության մասին առկա են հետևյալ տվյալները.

տարեթիվ	աշակերտ
1966/67	42
1967/68	52
1968/69	59
1969/70	71
1970/71	81
1971/72	78
1974/75	62
1980/81	51
1986/87	56
1987/88	46
1988/89	44

**«Պորիկան» գյուղատեղի.** Վլադիմիրովկայից 0,5 կմ հարավ-արևմուտք պահպանվում են տեղացիներին «Պորիկան» անվամբ հայտնի միջնադարյան գյուղատեղիի, գերեզմանատան և եկեղեցու ավերակները: Հնավայրից ոչ հեռու մենհիր հիշեցնող սրբատեղիի վերածված մի կոթող կա (245 x 115 x 45 սմ):

**Գյուղատեղի.** հետքերը նկատելի են գյուղից 2 կմ հյուսիս՝ լճի մեջ հրվանդանաձև մխրճված թերակղզու վրա:



*ՎԱԴԻՍԻՐՈՎԿԱ. գյուղատեղիի, եկեղեցու, գերեզմանոցի  
ավերակներ և մենհիր*

ՏԱԲԱԾՂՈՒՐ



ՏԱԲԱԾՂՈՒՐ. ընդհանուր տեսքը

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 30 կմ հյուսիս-արևելք, համանուն լճի հյուսիսային ափին (այժմ՝ Բորժոմի շրջանի մեջ), ծ. մ. 1990-2040 մ բարձրության վրա (լճի մակարդակն է 1989,7 մ):

**Պատմություն.** համաձայն 1595 թ. բուրբակյան կառավարության կազմած հարկացուցակի, որտեղ հիշվում է Տաբախուր անվանաձևով, գյուղն ազատված էր ռայաներից, և հարկվում էր 3.000 ակչե<sup>1</sup>:

1880-ական թվականներին Տաբաժդուրը կալվածապատկան էր. «Գիղս կալուած է Մեծ իշխ. Միքայել Նիկոլայեվիչի...»<sup>2</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիներն այդտեղ են փոխադրվել 1860-ականին Ախալքալաքի գավառի 3 գյուղերից. «...Դզըլ-Քիլիսայի մօտ 60 տունը մօտ 30 տարի սրանից առաջ գաղթած են մեր գաւառի Կորիս գիւղից - 33 տուն, Բարալէթից - 19 տուն եւ Տրկնայից - 5 տուն...»<sup>3</sup>:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում Տաբաժդուրին վերաբերող վիճակագրական տրվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1867 <sup>4</sup>		41	26	67
1868 <sup>5</sup>		41	26	67
1880 <sup>6</sup>		94	104	198
1881 <sup>7</sup>		94	104	198
1882 <sup>8</sup>		103	105	208
1883 <sup>9</sup>		116	116	232
1884 <sup>10</sup>	30			
1885 <sup>11</sup>		122	117	239
1887 <sup>12</sup>		148	136	284
1889 <sup>13</sup>		159	145	304

4 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 21-22:

5 Նույն տեղում, գ. 3853, թ. 28:

6 Նույն տեղում, գ. 3872, թ. 88-89:

7 Նույն տեղում, գ. 3873, թ. 97-98:

8 Նույն տեղում, գ. 3874, թ. 43-44:

9 Նույն տեղում, գ. 3875, թ. 49-50:

10 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 11:

12 Նույն տեղում, գ. 3880, թ. 40-41:

13 Նույն տեղում, գ. 3884, թ. 65-66:

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი დაგთარი", էջ 206:

2 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:

3 «Մշակ», 1903, № 54, էջ 3:



ՏԱԲԱԾՂՈՒՐ. Սր. Կարապետ եկեղեցու տեսքը հր-ամ-ից և հր-ալ-ից

1890 <sup>14</sup>		159	146	305
1891 <sup>15</sup>		164	146	310
1892 <sup>16</sup>		163	146	309
1893 <sup>17</sup>		171	153	324
1894 <sup>18</sup>		179	159	334
1897 <sup>19</sup>		274	239	513
1898 <sup>20</sup>		285	265	550
1899 <sup>21</sup>		275	244	519
1900 <sup>22</sup>		290	153	443
1901 <sup>23</sup>		292	164	456
1902 <sup>24</sup>		294	169	463
1905 <sup>25</sup>		223	229	452
1908 <sup>26</sup>	68	238	252	489
1910 <sup>27</sup>		256	261	517
1912 <sup>28</sup>		284	280	564
1914 <sup>29</sup>		301	285	586
1916 <sup>30</sup>		293	289	582
1921 <sup>31</sup>		190	170	360

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 120 տարածադուրսիներից 75-ը զոհվել է<sup>32</sup>:





14 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:  
 15 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:  
 16 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:  
 17 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43:  
 18 Նույն տեղում, գ. 3896, ք. 172-173:  
 19 Նույն տեղում, գ. 3899, ք. 145-146:  
 20 Նույն տեղում, գ. 3897, ք. 167:  
 21 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102:  
 22 Նույն տեղում, գ. 3905, ք. 52:  
 23 Նույն տեղում, գ. 3906, ք. 69:  
 24 Նույն տեղում, գ. 3907, ք. 21-22:  
 25 Նույն տեղում, գ. 3912, ք. 264-265:  
 26 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 27 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 136-137:  
 28 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 29 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 175-176:  
 30 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 22-23:  
 31 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 32 Գալթյան Ա., Ջակախյա, էջ 102:

**Ջրադնունք.** Տարածադուրսը հայտնի է իր բնակլիմայական խիստ պայմաններով, որին բնակիչները, այնուամենայնիվ, կարողացել են հարմարվել. «Գիւղի մեծ մասը պարապում է գլխաւորապէս երկրագործութեամբ և խաշնարածութեամբ. կլիման սառն է. միմիայն գարի է բուսնում, այն էլ երբեմն ձիւնի և երբեմն էլ սառցի վրայ կախում...»<sup>33</sup>:

**Գայրոց.** կրթօջախի բացման նախապատրաստությունը սկսվել է 1912 թ.: Գործի ջատագովներն էին ուսուցիչ Արշակ Գրիգորյանցն ու տեղի ծխական քահանա Արշակ Տեր-Գալստյանը<sup>34</sup>: Ներդրված ջանքերի շնորհիվ ցանկալին իրականություն է դառնում 1913 թ. օգոստոսին. «...ամսիս 18-ին պաշտօնապէս բացւեց և օրհնւեց տեղիս ծխական դպրոցը ստուար երկսեռ հասարակութեան ներկայութեամբ...: Պատարագին խօսեց Տեր-Արշակ քահանան, իսկ դուրսը հանդէսին՝ պ. Արշ. Գրիգորեան, որի շնորհիւ և բացւում է դպրոցը...»<sup>35</sup>:


**Սր. Կարապետ եկեղեցի.** կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց առավել հավանական է, որ իրականացվել է 1870-ականին: 1884 թ. մի հաղորդման մեջ այն հիշված է «...եկեղեցի քարաշէն, փայտածածկ»<sup>36</sup> ձևով: Հայտնի է, որ 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետևանքով եկեղեցին դարձել էր վթարային<sup>37</sup>: Այնուամենայնիվ, կատարված նորոգումների շնորհիվ Սր. Կարապետը շարունակել է գործել որպես ծխական եկեղեցի: Ներկայումս կանգուն է:

33 «Հորիզոն», 1912, № 190, էջ 3:  
 34 Նույն տեղում, էջ 3:  
 35 «Հորիզոն», 1913, № 187, էջ 3:  
 36 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 37 **Мушкетов И.**, նշվ. աշխ., էջ 18:



Պատկեր 1

ՏԱԲԱԾՂՈՒՐ. գյուղամիջի հին եկեղեցու տեսքը հր-ալ-ից, ալ-ից, ամ-ից, մանրամասեր ամ ճակատից, ներքին տեսքը դեպի հս-ամ և հատակագիծը



**Եկեղեցիներ.** ինչպես գյուղամիջում, այնպես էլ գյուղից 2,5 կմ հյուսիս, հին գյուղատեղիում պահպանվում են երբեմնի քաղկեդոնական բնակիչներից ավանդված, համակ սրբատաշ քարով կառուցված, միանավ հորինվածքով կիսավեր մեկական եկեղեցիներ (ԺԳ-ԺԴ դդ.):

*ՏԱԲԱՇՂՈՒՐ. գյուղից 2,5 կմ հս գտնվող գյուղատեղիի եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հր-ից, ալ և ամ ճակատներից բացված լուսամուտները, ներքին տեսքը դեպի ալ, պատկերաքանդակ և հատակագիծը*



ՏԱՄԱԼԱ



ՏԱՄԱԼԱ. ընդհանուր տեսքը հս-ալ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 24 կմ հյուսիս-արևմուտք, Ասպինձա շրջկենտրոնից 3 կմ արևելք, ծ. մ. 1340-1420 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները, ի թիվս էրզրումի նահանգի Գառանկոթ<sup>1</sup>, Կերեկ<sup>2</sup>, Շինետ (Շիփեկ)<sup>3</sup> և Ռաբատ<sup>4</sup> գյուղերի (1829-30 թթ.), սերում էին մահ Ղարաբաղից. «...Տամալան արքունական գիւղ է...յայտնի է «աւճի» (որսորդ) Գրիգորը, նա ինքը այժմ ծերացած է, բայց նրա եղբայրը իրանից էլ գերագանցել է: Նոցա ազգանունը Մելիքեան է և իրենց նախահայրը Ղարապաղցի է...»<sup>5</sup>:

**Վիճակագրություն.** ԺԹ-ի դարերի ընթացքում Տամալա գյուղի բնակչության անը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>6</sup>		122	127	249
1841 <sup>7</sup>		148	144	282
1842 <sup>8</sup>		150	153	303
1844 <sup>9</sup>		165	169	334
1845 <sup>10</sup>		121	110	231
1847 <sup>11</sup>		140	120	260
1849 <sup>12</sup>		161	139	300
1853 <sup>13</sup>		175	144	319
1854 <sup>14</sup>		180	144	324
1857 <sup>15</sup>		170	136	306
1860 <sup>16</sup>	31	177	142	319

1 Գառանկոթը արդյո՞ք Թորթումի գավառի Գառնկոց գյուղն է:  
 2 Կերեկը հավանաբար Կարսի շրջանի Գյարաք (Համգազյարաք) գյուղն է:  
 3 Շինետի տեղադրության մասին տես սույն աշխ., էջ 37, ծանոթ.  
 № 4: Ի դեպ, Շինետից փոխադրված հայերի մի մասն էլ հաստատվել էր Ազավրեթ և Մարտունի (Փոքր Խոսպիա) գյուղերում:  
 4 Ռապատը (Ռաբաթ), այժմ՝ Kemer kaya, հայաբնակ գյուղ էր՝ Կարին (երզրում) քաղաքից 45 կմ հյուսիս-արևելք:  
 5 «Մերու Հայաստանի», 1873, № 15, էջ 2:

6 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, ք. 4:  
 7 Նույն տեղում, գ. 3802, ք. 65-66:  
 8 Նույն տեղում, գ. 3805, ք. 79-80:  
 9 Նույն տեղում, գ. 3809, ք. 17-18:  
 10 Նույն տեղում, գ. 3811, ք. 73-74:  
 11 Նույն տեղում, գ. 3814, ք. 35-36:  
 12 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:  
 13 Նույն տեղում, գ. 2743 ք. 39-40:  
 14 Նույն տեղում, գ. 3825, ք. 48-49:  
 15 Նույն տեղում, գ. 3830, ք. 54-55:  
 16 Նույն տեղում, գ. 3833, ք. 67-68:

1861 <sup>17</sup>		183	162	345
1862 <sup>18</sup>	35	186	168	354
1863 <sup>19</sup>		193	167	360
1864 <sup>20</sup>		203	172	375
1865 <sup>21</sup>		207	177	384
1866 <sup>22</sup>	35	207	177	384
1867 <sup>23</sup>		210	189	399
1868 <sup>24</sup>		213	196	409
1869 <sup>25</sup>		225	204	429
1870 <sup>26</sup>		230	208	438
1871 <sup>27</sup>		235	213	448
1872 <sup>28</sup>		245	213	458
1873 <sup>29</sup>		245	218	463
1874 <sup>30</sup>				475
1875 <sup>31</sup>				487
1876 <sup>32</sup>		253	242	495
1877 <sup>33</sup>		262	248	510
1878 <sup>34</sup>		268	259	527
1880 <sup>35</sup>		268	275	543
1881 <sup>36</sup>		287	289	576
1882 <sup>37</sup>		295	307	602
1883 <sup>38</sup>		294	325	619
1884 <sup>39</sup>	40			
1885 <sup>40</sup>		294	332	626
1887 <sup>41</sup>		324	364	688
1889 <sup>42</sup>		351	376	727
1890 <sup>43</sup>		322	323	645
1891 <sup>44</sup>		430	392	822
1892 <sup>45</sup>		434	396	830
1893 <sup>46</sup>		446	406	852
1894 <sup>47</sup>		436	407	843
1897 <sup>48</sup>		396	388	784

17 Նույն տեղում, գ. 3839, ք. 25-26:  
 18 Նույն տեղում, գ. 3836, ք. 21-22:  
 19 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:  
 20 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:  
 21 Նույն տեղում, գ. 3848, ք. 13-14:  
 22 Նույն տեղում, ք. 75:  
 23 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:  
 24 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:  
 25 Նույն տեղում, գ. 3856, ք. 10:  
 26 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 27 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:  
 28 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:  
 29 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:  
 30 Նույն տեղում, գ. 3864, ք. 28-29:  
 31 Նույն տեղում, գ. 3866, ք. 21-22:  
 32 Նույն տեղում, գ. 3868, ք. 30-31:  
 33 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30:  
 34 Նույն տեղում, գ. 3850, ք. 218-219:  
 35 Նույն տեղում, գ. 3872, ք. 90:  
 36 Նույն տեղում, գ. 3873, ք. 98-99:  
 37 Նույն տեղում, գ. 3874, ք. 44-45:  
 38 Նույն տեղում, գ. 3875, ք. 49-50:  
 39 «Արձագանք», 1885, № 4, էջ 56:  
 40 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 14-15:  
 41 Նույն տեղում, գ. 3880, ք. 41-42:  
 42 Նույն տեղում, գ. 3884, ք. 66-67:  
 43 Նույն տեղում, գ. 3887, ք. 148:  
 44 Նույն տեղում, գ. 3889, ք. 147:  
 45 Նույն տեղում, գ. 3891, ք. 119:  
 46 Նույն տեղում, գ. 3895, ք. 33-34:  
 47 Նույն տեղում, գ. 3896, ք. 54-55:  
 48 Նույն տեղում, գ. 3899, ք. 145-146:

1898 <sup>49</sup>		409	404	813
1899 <sup>50</sup>		418	412	830
1900 <sup>51</sup>		419	410	829
1901 <sup>52</sup>		422	411	833
1902 <sup>53</sup>		445	430	875
1905 <sup>54</sup>		486	470	956
1906 <sup>55</sup>		507	450	957
1907 <sup>56</sup>				957
1908 <sup>57</sup>	100	600	500	1100
1910 <sup>58</sup>		520	461	981
1912 <sup>59</sup>		520	450	1050
1914 <sup>60</sup>				1052
1915 <sup>61</sup>	120			
2001 <sup>62</sup>		570		2100

Երկրորդ աշխարհամարտին Տամալայից մասնակցել է 350 հոգի, որոնցից 105-ը զոհվել է<sup>63</sup>:

**Ազգատոհմեր.** տամալեցի Վահրամ Սաղաթելյանի վկայությամբ՝ Մելիքյանները եղել են Սահակ և Հակոբ անունով երկու եղբայրներ, որոնցից սերել են Սահակյաններն ու Հակոբյանները, իսկ որսորդ Գրիգորից՝ Գրիգորյանները: Տամալաբնակ մեկ այլ գերդաստանի՝ Ալեքսանյանների մասին հայտնի է, որ միայն մեկ տարի տեղում մնալուց հետո (1831 թ.<sup>64</sup>) փոխադրվել են Կաճո:

**Գպրոց.** Տամալա գյուղի եկեղեցական-ծխական դպրոցի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն գործել է առնվազն 1865 թ-ից: Հետագայում հավանաբար նյութական տղության պատճառով փակվել է, վերաբացվել 1873 թ.: Գործունեության հետագա տարիների վերաբերյալ վավերագրերը պարունակում են հետևյալ տվյալները.

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1865 <sup>64</sup>		1	33
1873 <sup>65</sup>	բացվել է		
1874 <sup>66</sup>		1	35
1876 <sup>67</sup>		1	21
1877 <sup>68</sup>		1	26
1878 <sup>69</sup>		1	27

49 Նույն տեղում, գ. 3897, ք. 162:  
 50 Նույն տեղում, գ. 3903, ք. 83-84:  
 51 Նույն տեղում, գ. 3905, ք. 58:  
 52 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 205, ք. 133-134:  
 53 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, ք. 16-17:  
 54 Նույն տեղում, գ. 3912, ք. 259-260:  
 55 Նույն տեղում, գ. 3915, ք. 42:  
 56 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 240, ք. 2:  
 57 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 39:  
 58 Նույն տեղում, գ. 3917, ք. 35-36:  
 59 Նույն տեղում, գ. 3920, ք. 49:  
 60 «Кавказский календарь на 1915 г.», էջ 186:  
 61 «Մշակ», 1915, № 247, էջ 3:  
 62 Ըստ գյուղխորհրդի տվյալների:  
 63 **Դավթյան Ա.**, Ջավախք, էջ 102:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, ք. 2:  
 65 **Խոտրյան Ս.**, նշվ. աշխ., էջ 510:  
 66 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, ք. 28-29:  
 67 Նույն տեղում, գ. 3850, ք. 52:  
 68 Նույն տեղում, ք. 130:  
 69 Նույն տեղում, ք. 178:

1881 <sup>70</sup>	1	35
1883 <sup>71</sup>	1	15
1884 <sup>72</sup>	ձմեռային միդասյա	
1885 <sup>73</sup>	փակվել է	
1909 <sup>74</sup>	վերաբացվել է	
1910 <sup>75</sup>	1	45
1911 <sup>76</sup>	երկսեռ, 3 բաժանմունք	1 60
1911/12 <sup>77</sup>	քառամյա, 1 դասարան	
1912/13 <sup>78</sup>	3 բաժանմունք	40
1915 <sup>79</sup>	միդասյա	

**Սր. Խաչ եկեղեցի.** վավերագրերում հիշվում է 1830-ականից: Հայտնի է, որ «...վասն վերանորոգութեան եկեղեցոյն ի 1843 ամէ» ծախսվել էին նաև 1845 թ. եկեղեցական գումարներից<sup>80</sup>: Ամենայն հավանականությամբ, շուրջ քառորդ դար անց եկեղեցին հիմնովին վերակառուցվել է, քանի որ 1873 թ. նշվել է. «...Տամալայի նորաշէն եկեղեցին Ս. Խաչի անունով շինել են գիւղացիք իրենց հաշուով...: Եկեղեցին քարաշէն է և գեղեցիկ, երկայնութիւնը 30 ոտնաչափ: Չանգակատան խաչը, 26 ռ. արժէ, ընծայել է Թիֆլեզցի պ. Նիկողայոս Ալադաթեանցը...»<sup>81</sup>:

2004 թ. Սր. Խաչ եկեղեցին (արտաքին չափերն են՝ 16,80 x 10,55 մ) արդեն բավականաչափ քայքայված դրության մեջ էր, գրեթե ամբողջությամբ փլուզված էր փայտածածկ տանիքը:


**Գերեզմանոց.** տարածվում է Սր. Խաչ եկեղեցու շուրջը: Տեղում, ի թիվս քառակող կոթողների պատվանդանների, պահպանվել են նաև ուշ միջնադարին բնորոշ հայոց տապանաքարեր, որոնց նմանները, այդ թվում՝ արձանագիր, հաճախ են հանդիպում երկրամասի այլ հնավայրերում:

«**Վանք**». Տամալայից հազիվ 1 կմ արևելք՝ գեղատեսիլ ձորակի հարավահայաց լանջին, պահպանվում է Ժ-ԺԱ դարերում կառուցված պարսպապատ եկեղեցի: Շուրջը տարածվում է պատմական երկու ժամանակաշրջաններով գատորոշվող (Ժ-ԺԱ և ԺԵ-ԺԷ դդ.) գերեզմանոցը: «Վանք»-ը տեղագիր հեղինակներից հիշատակել է միայն «Մեղու




ՏԱՄԱԼԱ. Սր. Խաչ եկեղեցու ամ ճակատը, ներքին տեսքը դեպի ալ, փայտամած, կիսափուլ (2004 թ.) տանիքի փայտե խոյակներից մեկը

70 Նույն տեղում, գ. 3873, թ. 98-99:  
 71 Նույն տեղում, գ. 3875, թ. 49-50:  
 72 **Խոտորյան Ս.**, նշվ. աշխ., էջ 510:  
 73 Նույն տեղում:  
 74 Նույն տեղում:  
 75 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:  
 76 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57: Դպրոցի 60 սաներից 8-ը՝ աղջիկ:  
 77 Նույն տեղում:  
 78 Նույն տեղում: Ի դեպ, 40 աշակերտների թվում էին 16 աղջիկ:  
 79 «Մշակ», 1915, № 247, էջ 3:  
 80 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 73-74:  
 81 «Մեղու Հայաստանի», 1873, № 15, էջ 2: Ի դեպ, նվիրատուն էր Թիֆլիսի քաղաքագլուխ (1869 թ.), դրամատուրգ, դերասան Նիկողայոս Հովհաննիսյան Ալադաթյանցը (վախճ. 1875 թ.): Ն. Ալադաթյանի կենսագրական մանրամասնությունները տես **Կարապետյան Ս.**, «Թիֆլիսի քաղաքագլուխները», Բեյրութ, 2003, էջ 67:



*ՏԱՄԱԼԱ. «Վանք» եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հր-ալ-ից, մուտքը հսկող վիշապի քանդակը, սյունասարահի կամարաշար մուտքը և կորովների պատվանդաններ*



*ՏԱՄԱԼԱ. «Վանք» եկեղեցու տեսքը ամ-ից, ալ ճակատից բացված լուսամուտը, տապանաքար (ԺԷ դար) «Վանք»-ի հր կողմում և «Կողտաբերդ» ամրոցը*

Հայաստանի»-ի քրթակից Բզնունին: Նա շեշտել է եկեղեցու հայկական լինելու հանգամանքը<sup>82</sup>:

Հարավից և արևմուտքից կից սրահով, միանալ եկեղեցին, որը գրեթե նույնությամբ կրկնում է Ա-զավրեթ, Բուռնաշեն և Խանդո գյուղերում պահպանված համանման հուշարձանների հորինվածքային առանձնահատկությունները, ակնհայտորեն, ի սկզբանե եղել է քաղկեդոնական և միայն, հավանաբար, ԺԴ-ԺԵ դարերում վերստին օծվել հայ-

առաքելական եկեղեցու ծխակարգով («Վանք»-ի շուրջ և հատկապես նրա հարավային կողմում տարածվում է ԺԵ-ԺԷ դարերին հարազատ ոճավորում ունեցող հայկական տապանաքարերով գերեզմանոցը):

**«Կողտաբերդ» ամրոց.** Տամալայի հյուսիսային կողմում՝ գյուղից ոչ հեռու, պահպանվում են «Կողտաբերդ» անվամբ հայտնի փոքրիկ դղյակ-ամրոցի և գրեթե կից, ընդարձակ եկեղեցու ավերակները:

<sup>82</sup> «Մեղու Հայաստանի», 1873, № 15, էջ 2:

## ՏԱՄԲՈՎԿԱ



*ՏԱՄԲՈՎԿԱ. հիմնավեր եկեղեցու լուսամտի գեղաքանդակ պսակ գյուղի միջնադարյան գերեզմանոցում*

**Տեղադրություն.** գտնվում է շրջկենտրոն Նինո-ծմինդայից 30 կմ հյուսիս-արևելք, Փարվանա լճի հյուսիսային ափին, ծ. մ. 2080-2090 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** հին գյուղատեղին ԺԹ դարի 40-ական թվականներին վերաբնակեցվել է ռուսներով: 1914 թ. Տամբովկան ունեցել է 469 բնակիչ<sup>1</sup>:

1993 թ. հնագիտական պեղումներ են կատարվել մ.թ.ա. 2000-1800 թթ. թվագրվող գյուղամերձ

հնավայրում: Աշխատանքները վերսկսվել են 2000 թ.: Հայտնաբերվել են միջին բրոնզի և պղնձի ժամանակաշրջաններով թվագրվող նյութեր, 28 մ տրամագծով և 3 մ բարձրությամբ դամբարանաբլուր: Ըստ Կախա Կախիանիի՝ Տամբովկայի հնագիտական նյութերը վկայում են, որ «տեղում վրացիները 4000 տարվա պատմություն ունեն»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Кавказский календарь на 1915 г.», т. 2, с. 186:

<sup>2</sup> «ხელონდელი დღე», 20.07.2005, № 138:

ՏՐԿՆԱ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 11 կմ հյուսիս, Ջակ-Բուղաշեն-Բալխո-Գոմ շտրապար գյուղերի կենտրոնում, ծ. մ. 1710-1730 մ բարձրության վրա:

**Պատմություն.** 1595 թ. գյուղն ունեցել է 6 տուն, հարկվել է 1.500 ակչե<sup>1</sup>: Հայտնի է նաև, որ բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1706-1707 թթ.՝ տանուտեր Իսմայիլի օրոք հարկվել է 6.500 ակչե<sup>2</sup>:

1899 թ. դեկտեմբերյան երկրաշարժի հետևանքով Տրկնայի բնակելի 21 տներից 19-ը քանդվել է, 3 բնակիչ՝ զոհվել<sup>3</sup>: 1901 թ. Տրկնան տեղ է գտել Ջավախքի առավել կարիքավոր գյուղերի ցուցակում<sup>4</sup>: Դրությունը մեղմելու նպատակով, տուժած բնակավայրերին աջակցություն ցույց տվող կոմիտեի միջոցներով 1902 թ. Տրկնայում կառուցվել է 3 տուն, յուրաքանչյուրը՝ 600 ռ. արժողությամբ<sup>5</sup>:

1899-1900 թթ. հացի բզեզի և հոտենտոտյան մլուկի հասցրած վնասների հետևանքով Տրկնայի գյուղատնտեսությունը հայտնվել է համեմատաբար ծանր իրավիճակում՝ կառավարական հատուկ կոմիտեի կողմից դասվելով աղետից տուժած երրորդ կարգի բնակավայրերի շարքում<sup>6</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները 1829-30 թթ. փոխադրվել են Էրզրումի նահանգի Թորթում գավառի Պար (Բար)<sup>7</sup> և այլ գյուղերից:

Հայտնի է, որ ԺԹ-Ի դարերի ընթացքում Տրկնայի բնակչության թվաքանակն աճել է, սակայն 1860-ական թվականներին տրկնացիներից մի քանի ընտանիք փոխադրվել է գավառի հյուսիսում ընկած Մոլիթ գյուղը<sup>8</sup>:

*Վիճակագրություն.* ստորև ներկայացնում ենք գյուղի բնակչության թվաքանակի փոփոխություններն ըստ հետևյալ տարիների.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1847 <sup>9</sup>		29	23	52
1849 <sup>10</sup>		31	20	51
1853 <sup>11</sup>		36	22	58
1857 <sup>12</sup>		53	33	86
1860 <sup>13</sup>	9	54	36	90
1861 <sup>14</sup>	9	51	42	93
1862 <sup>15</sup>	9	52	42	94
1863 <sup>16</sup>		56	41	97
1864 <sup>17</sup>	9	55	44	99
1866 <sup>18</sup>	9	55	45	100
1867 <sup>19</sup>		57	50	107
1868 <sup>20</sup>		55	54	99
1869 <sup>21</sup>		56	57	112
1870 <sup>22</sup>		56	56	112
1871 <sup>23</sup>		60	56	116
1872 <sup>24</sup>		58	57	115
1873 <sup>25</sup>		61	58	119
1874 <sup>26</sup>				122
1875 <sup>27</sup>	8			122
1876 <sup>28</sup>		64	58	122
1877 <sup>29</sup>		68	56	124
1878 <sup>30</sup>		73	57	130

9 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, ք. 35:

10 Նույն տեղում, գ. 3818, ք. 40-41:

11 Նույն տեղում, գ. 2743, ք. 37-38:

12 Նույն տեղում, գ. 3830, ք. 53-54:

13 Նույն տեղում, գ. 3833, ք. 65-66:

14 Նույն տեղում, գ. 3839, ք. 24-25:

15 Նույն տեղում, գ. 3836, ք. 22-23:

16 Նույն տեղում, գ. 3843, ք. 21-22:

17 Նույն տեղում, գ. 3846, ք. 8-9:

18 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:

19 Նույն տեղում, գ. 3851, ք. 20-21:

20 Նույն տեղում, գ. 3853, ք. 28:

21 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:

22 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:

23 Նույն տեղում, գ. 3858, ք. 10-11:

24 Նույն տեղում, գ. 3859, ք. 57-58:

25 Նույն տեղում, գ. 3862, ք. 71-72:

26 Նույն տեղում, գ. 3864, ք. 27-28:

27 Նույն տեղում, գ. 3866, ք. 20-21: Տե՛ն նաև՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:

28 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 30-31:

29 Նույն տեղում, գ. 3869, ք. 29-30:

30 Նույն տեղում, գ. 3850, ք. 218:

1 "ՅւրջօնԹանօն Յօղօյտօն ճօճօ ճօճօ", էջ 238-239:

2 "Խօղճօնօն Յօղօյտօն ճօճօ ճօճօ 1694-1732 ՎՎ.", էջ 127:

3 «Մշակ», 1900, № 43, էջ 2:

4 «Մշակ», 1901, № 40, էջ 1:

5 «Մշակ», 1902, № 265, էջ 1:

6 **Մայլանան.** Անբերրիութիւնը Ախալքալաքի գաւառում եւ նրա հետեանքները, էջ 248:

7 Պարը (Բար, այժմ՝ Yumakli) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 40 կմ հյուսիս-արևելք, Թորթումից 8 կմ հարավ:

8 «Մշակ», 1903, № 54, էջ 3:

1880 <sup>31</sup>		74	64	138
1881 <sup>32</sup>		75	63	138
1882 <sup>33</sup>		75	62	137
1883 <sup>34</sup>		78	62	140
1884 <sup>35</sup>	12			
1885 <sup>36</sup>		79	64	143
1887 <sup>37</sup>		88	73	161
1889 <sup>38</sup>		91	76	167
1890 <sup>39</sup>		91	76	167
1891 <sup>40</sup>		95	78	173
1892 <sup>41</sup>		94	78	172
1893 <sup>42</sup>	16	94	79	173
1894 <sup>43</sup>		91	79	170
1897 <sup>44</sup>		96	86	182
1898 <sup>45</sup>		99	92	191
1899 <sup>46</sup>	21	97	86	183
1900 <sup>47</sup>		97	87	184
1901 <sup>48</sup>		104	90	194
1902 <sup>49</sup>		110	91	201
1905 <sup>50</sup>		118	96	214
1908 <sup>51</sup>	21	124	101	225
1910 <sup>52</sup>		119	93	212
1912 <sup>53</sup>		122	97	219
1914 <sup>54</sup>		126	100	226
1916 <sup>55</sup>		125	103	228
1918 <sup>56</sup>	25	178	181	359
1921 <sup>57</sup>		25	15	40
1987 <sup>58</sup>	54			239

31 Նույն տեղում, գ. 3872, ք. 87-88:  
 32 Նույն տեղում, գ. 3873, ք. 97-98:  
 33 Նույն տեղում, գ. 3874, ք. 43-44:  
 34 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:  
 35 «Արձագանք», 1885, № 3, էջ 43:  
 36 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10-11:  
 37 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 38 Նույն տեղում, գ. 3884, ք. 65:  
 39 Նույն տեղում, գ. 3887, ք. 146:  
 40 Նույն տեղում, գ. 3889, ք. 145:  
 41 Նույն տեղում, գ. 3891, ք. 117:  
 42 Նույն տեղում, գ. 3895, ք. 42-43: Տե՛ս նաև՝ «Մուրճ», 1894, № 5, էջ 793:  
 43 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3896, ք. 170-171:  
 44 Նույն տեղում, գ. 3899, ք. 143-144:  
 45 Նույն տեղում, գ. 3897, ք. 165:  
 46 Նույն տեղում, գ. 3903, ք. 101-102: Տե՛ս նաև՝ «Մշակ», 1900, № 43, էջ 2:  
 47 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, ք. 52:  
 48 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 49 Նույն տեղում, գ. 3907, ք. 19-20:  
 50 Նույն տեղում, գ. 3912, ք. 262-263:  
 51 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 52 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, ք. 135-136:  
 53 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
 54 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 1020, ք. 173-174: Ի դեպ, նույն թվականի հունվարի 1-ին անցկացված մեկ այլ մարդահամարի տվյալների համաձայն, գյուղն ունեցել է 210 շունչ («Кавказский календарь на 1915 г.», էջ 190):  
 55 ՀԱԳ, ֆ. 196, ց. 1, գ. 43, ք. 20-21:  
 56 ՀԱԳ, ֆ. 469, ց. 3, գ. 2, ք. 1-4:  
 57 ՀԱԳ, ֆ. 355, ց. 1, գ. 895, ք. 1:  
 58 Ըստ գյուղխորհրդի տվյալների:



ՏՐԿՆԱ. Սր. Նշան (Սր. Խաչ) եկեղեցու տեսքը հր-ամ-ից

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 36 տրկնացիներից 19-ը զոհվել է<sup>59</sup>:

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության մասին վավերագրում առկա նյութերը սկիզբ են առնում 1870-ական թվականներից: Հայտնի է, որ 1891 թ. ի վեր Տրկնայում նախատեսվել է կառուցել կենտրոնական ուսումնարան, բայց գործնական քայլեր չեն արվել<sup>60</sup>:

տարեթիվ	այլ տեղեկ.	ուսուցիչ	աշակերտ
1873 <sup>61</sup>		1	10
1874 <sup>62</sup>		1	10
1875 <sup>63</sup>	Հ. Սարգսյանց		10
1877 <sup>64</sup>		1	22
1988 <sup>65</sup>	4-ամյա		

**Սր. Նշան (Սր. Խաչ) եկեղեցի.** շինարարական աշխատանքներն իրականացվել են 1840-ականին, ընդ որում 1848 թ. կոնսիստորիան վեհափառին զեկուցել էր այն մասին, որ տրկնացիները, առանց հոգևոր իշխանություններին տեղյակ պահելու և թույլտվության, ավարտել են իրենց միջոցներով եկեղեցու կառուցումը և ակնկալում են օժման արարողություն. «...կառուցեալ են զփայտաշէն միջասահման եկեղեցիս, որոց որմունքն են քարեայ և ծածկքն փայտեայ...»<sup>66</sup>: ԺԹ դարի վերջին անհրաժեշտություն է զգացվել հիշյալ եկեղեցու փոխարեն,

59 Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:  
 60 «Մշակ», 1891, № 94, էջ 3:  
 61 Խորոյան Ա., նշվ. աշխ., էջ 524:  
 62 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, ք. 27-28:  
 63 ՀԱԳ, ֆ. 56, ց. 3, գ. 52, ք. 43:  
 64 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, ք. 29-30:  
 65 Ըստ դպրոցի տնօրինության տրամադրած տվյալների:  
 66 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 5, ք. 5:



որը կառուցվել էր բավական սուղ միջոցներով և արդեն հնացել էր, կառուցել նոր եկեղեցի: Այդ մտահղացումը կյանքի է կոչվել 1891 թ.: Սակայն նորակառույց եկեղեցուն էլ վիճակված չէր տևակա-նորեն ծառայել արկնացիներին, քանի որ 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժից վտանգավոր չա-փերով խարխլվել է<sup>67</sup>:

1988 թ. մեր այցելության ժամանակ կիսավեր էր:

Արձանագրություն. նորաշեն եկեղեցու մուտքի հյուսիսային կողմում՝ 5 սող.

1891 ՇԻՆԵՑԱԻ Ս(ՈՒՐԲ) ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՐԴԵԱՄԲ ԺՈՂՈՎՐԴՈՅ ՏՐԿՆԱ | ԳԵՂՁ ԵՒ ՍԱՍԱՄԲ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ԻՒՂԱԲԵՐԻ ԴԵՏԱ-ԼԻԹԱՅԻ ԵՒ ՍԵՐԻՑԱԿԱ ԳԻՒՂՈՐԵՅԻՑ:

Հրատ. առաջին անգամ:

<sup>67</sup> Мушкетов И., նշվ. աշխ., էջ 30:

## ՏՈՒՐՑԽ



ՏՈՒՐՑԽ. ընդհանուր տեսքը հս-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 17 կմ հյուսիս, ծ. մ. 1740 մ միջին բարձրության վրա:

**Պատմություն.** գյուղի առաջին հիշատակություններից մեկը մեզ է հասել 1595 թ-ից: Համաձայն թուրքական կառավարության՝ հիշյալ թվականին կազմած «Ջաբա Դավթար»-ի, ըստ ամենայնի, զուտ հայաբնակ Տուրցխն ունեցել է 10 տուն բնակիչ (տնատերերի անձնանունների զգալի մասով՝ հայկական կամ հայկական միջավայրին հարազատ, օրինակ՝ Ավագ, Սարգիս, Ումեկ և այլն) և վճարել 15.000 ակչե հարկ<sup>1</sup>:

Գավառի բազմաթիվ գյուղերի հետ մեկտեղ հայաթափ է եղել ԺԸ դարում և վերստին բնակեցվել 1830 թ.:

1918 թ.՝ թուրքական բանակի ներխուժման ժամանակ, շուրջ 900 բնակիչ ունեցող Տուրցխը փոխադրվել է Բորժոմի մերձակայքում գտնվող Ցիխիսիջվարի գյուղ: Ամիսներ անց սովի և վարակիչ հիվանդությունների պատճառով հայրենի գյուղ

կարողացել են վերադառնալ միայն 300 հյուժված գյուղացիներ, որոնց գրեթե կեսն էլ կարճ ժամանակում վախճանվել է Տուրցխում:

Երկրորդ աշխարհամարտին Տուրցխից մասնակցել է 150 հոգի, որոնցից 54-ը զոհվել է<sup>2</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիների հիմնական մասը փոխադրվել է Արտահան գավառի Վել<sup>3</sup> և շրջակա գյուղերից (Գյոլեի հասարակություն) 1829-30 թթ.<sup>4</sup>: Նորաբնակների թվաքանակը, տարեց տուրցխեցիների վկայությամբ, եղել է 26 տուն: Բացի Վելից, Տուրցխում հաստատվել են նաև այլ բնակավայրերից փոխադրված հայեր: Օրինակ, Օքրոյանները եկել էին Գորիից, Էլազյանները՝ Կարսից, Ափարյաններն ու Խաչատրյաններն

<sup>2</sup> Դավթյան Ա., Ջավախք, էջ 102:

<sup>3</sup> Վել գյուղը գտնվում է Արտահանի գավառում, գավառանիստ Արտահանից 14 կմ արևելք՝ Կուր գետի ձախ ափին: 1504 թ. մի հիշատակության համաձայն՝ Վելը քաղաք էր: Այժմ անբնակ է: Ավերակավայրից 2 կմ արևելք, Կուրի նույն ափին, գոյություն ունի թրքաբնակ նույնանուն նոր գյուղը, որը պաշտոնապես վերանվանվել է՝ Սևիմի:

<sup>4</sup> «Արձագանք», 1894, № 118, էջ 3-4:

<sup>1</sup> «Գրքչեսեճանոս յոլաօցոտոս ճոճո ճոճոճո», էջ 198:

րը՝ Ռաբաթից, Գրիգորյանները, Գասպարյանները, Հովհաննիսյանները՝ Կամպիրից<sup>5</sup> (վերջիններս նախ հաստատվել էին Ջակ գյուղում, ապա 1831-ին փոխադրվել Տուրցիս):

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերին վերաբերող վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Տուրցիսն իր բնակչության թվաքանակով Ջավախքի միջին գյուղերի շարքում էր.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1870 <sup>6</sup>	26	135	125	260
1884 <sup>7</sup>				429
1908 <sup>8</sup>	88			
1912 <sup>9</sup>				699
1913 <sup>10</sup>	104	420	371	791
1914 <sup>11</sup>				900
1915 <sup>12</sup>				800
1916 <sup>13</sup>	106	437	387	824
1987 <sup>14</sup>	443			2108
1991 <sup>15</sup>	550			2250
1993 <sup>16</sup>				627
2001 <sup>17</sup>				230

**Լեզու.** սկզբնական շրջանում տուրցիսեցիները հիմնականում թրքախոս էին: Այդ ցավալի ժառանգությունը արդյունք էր ԺԸ դարում թուրք տիրապետողների կիրառած բռնությունների. «Անցեալ դարում Արտահանի բեկը արգիլած է Վել և շրջակայ հայախօս գիւղերին հայերէն խօսել և ամէն մի անգամ խօսելիս 50 բաղդատ տուգանք է առած»<sup>18</sup>: Սակայն Տուրցիսի տարածքում պահպանված գերեզմանոցներն ու խաչքարերը վկայում են, որ ներկայիս գյուղը հայաբնակ է եղել առնվազն միջնադարում:

**Դպրոց.** Սբ. Աստվածամոր եկեղեցու հարավային կողմում մինչև 1980-ական թվականների վերջերը պահպանվում էր դեռևս 1860-ական թվականներին<sup>19</sup> գործած ծխական դպրոցի կիսավեր շենքը: Վերջինս եկեղեցու տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում քանդվել է:

**Սբ. Աստվածամոր հայ-կաթոլիկ եկեղեցի.** կառուցվել է 1856 թ. «Ունի մէկ ժողովրդապետական քարաշէն եկեղեցի, յանուն սբ. Աստուածամօր, 1856



ՏՈՒՐՑԻՆ. Սբ. Աստվածամոր եկեղեցու տեսքը հր-ամ-ից, հս-ամ-ից և հր-ալ-ից

ամին, ծախսիք ծխականաց, վերանորոգեալ յամի 1894»<sup>20</sup> (ըստ արձանագրության՝ 1892 թ.): 1915 թ.

5 Կամպիր գյուղի մասին տե՛ս սույն աշխ., էջ 172, ծանոթ. № 5:

6 ՇՄՈՒԳ, էջ 28:

7 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

8 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 37:

9 **Ցակրեան Պ.**, Հրատր ողջմտութեան, էջ 95:

10 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 4:

11 «Кавказский календарь на 1915 г.», էջ 190:

12 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 36-37:

13 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 82:

14 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

15 Ըստ գյուղխորհրդի տվյալների:



16 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

17 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

18 «Արձագանք», 1894, № 118, էջ 3-4:

19 ՇՄՈՒԳ, նույն տեղում:

20 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 82:



*ՏՈՒՐՅՆ. Սր. Աստվածամոր եկեղեցու ամ ճակատին ագուցված 1464 և 1465 թթ. խաչքարերը*



ՏՈՒՐՑԻՆ. Սբ. Աստվածամոր եկեղեցու բակում ամփոփված հայ-կաթոլիկ հոգևորականների մահարձաններ, Թ-ԺԱ դարերի քաղկեդոնական խաչքարեր

գյուղի ծխատեր քահանան էր տեր Հակոբ Գրիգորյանը<sup>21</sup>: Կառուցված է համակ սրբատաշ քարով, կրաշաղախով: Ուշագրավ է արևելյան ճակատը՝ արտաքուստ ընդգծված կիսաշրջանաձև խորանով: Արևմտյան ճակատին ագուցված են ԺԵ դարի արձանագիր ու զեղաքանդակ երկու խաչքար:

1. Խաչքար (չափերն են՝ 96 x 55 սմ), ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին՝ 3 տող.

ԹՎ(ԻՆ) ՋԺԳ (1464) | (ԵՍ) ԱՄԻՐՍ ԿԱՆԿՆ(ԵՑԻ | ՋԵԱԶ)Ս Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ ՀՕՐ ԻՄ Կ...:

Հրատ. Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, էջ 9:

2. Խաչքար (չափերն են՝ 92 x 55 սմ), ագուցված եկեղեցու արևմտյան ճակատին, 3 տող.


ԹՎ(ԻՆ) ՋԺԳ (1465) | ԵՍ Ս(Ա)ՐՏ(ԻՐ)|ՈՍ | ԿԱՆԿՆ(Ե)ՑԻ ՋԵ(ԱԶՍ) ...:

Հրատ. Կարապետյան Ս., Ջավախքի խաչքարերը, էջ 9:

*Գերեզմանոց.* եկեղեցու հարավարևելյան կողմում ամփոփված են հայ-կաթոլիկ հոգևորականների (տեր Ստեփան քահանա Ավետիսյան, Հակոբ վարդապետ Էլազյան, տեր Մովսես Մովսիսյան, տեր Հովհաննես վարդապետ Մովսիսյան) մարմինները: Ներկայումս եկեղեցին կանգուն է և բարեկարգ վիճակում<sup>22</sup>:

21 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 82:

22 Ստալինյան բռնապետության տարիներին իշխանությունները ցանկացել են գյուղի եկեղեցին, ինչպես հարևան շատ այլ բնակավայրերում, վերածել պահեստի, սակայն տուրքյուեցիներն ընդդիմացել են կարճ ժամանակամիջոցում պահեստ կառուցել, և եկեղեցին շարունակել է գործել:



*ՏՈՒՐՑԽ. Հակոբ Ավետիսյանի տան բուխարիկը (օջախի քարը), 1915-1918 թթ. գոհերի և Ավետիսյան գերդաստանի հիշատակին  
Հ. Ավետիսյանի կերտած և կանգնեցրած խաչքարերը*



ՏՈՒՐՑԽ. դիտակետ-աշտարակ

**Հիմնավեր եկեղեցի.** Տուրցխի հյուսիսային կողմում պահպանվել է հավանաբար ԺԳ-ԺԴ դարերով թվագրվող մի հիմնավեր եկեղեցի:

**Հին գերեզմանոց.** գտնվում է գյուղամիջում՝ պարսաված հսկա ժայռաբեկորներով: Հնավայրում պահպանված անմշակ սալատապաններից զատ, կա նաև հավասարաթև, մեծ խաչաքանդակով հարդարված Ժ-ԺԱ դարերին բնորոշ մի բոլորածն խաչքար:

**Երկրորդ գերեզմանոց.** տարածվում է գյուղի հյուսիսային եզրին: Ըստ տեղում պահպանված շիրմաքարերի՝ թվագրվում է ԺԹ-Ի դարերով:

Տուրցխում, հատկապես վերջին տասնամյակներին, արագ թափով կառուցապատվելու հետևանքով գերակշռում են նորակառույց շենքերը, սակայն հանձինս բանաստեղծ-առակագիր Նազարեթ Կիրակոսյանի լավ պահպանված գլխատան և Հակոբ Ավետիսյանի տան բուխարու քանդակագործ քարի, գյուղն ունի ժողովրդական ճարտարապետության ուշագրավ նմուշներ:

Գյուղամիջում՝ Սարգիս Նոնոյանի տնամերձ հողամասում, պահպանվում է ձիթհանի քար (տրամագիծը՝ 215 սմ, հաստ.՝ 50 սմ):

**Դիտակետ-աշտարակ.** գյուղից 2 կմ հարավ՝ լայնատարած հարթավայրում առանձնացած ոչ մեծ բլրի վրա, պահպանվում են ուղղանկյուն հատակագծով (չափերն են՝ 14,5 x 10,50 մ, պատերի հաստությունը՝ 2,06 մ), անմշակ քարով կառուցված դիտակետ-աշտարակի ավերակները, որն ունեցել է նաև գաղտնուղի:

**Մուրչ գյուղատեղի.** նշյալ դիտակետ-աշտարակի շրջակայքում նկատելի են տեղացիներին «Մուրջեր» անվամբ հայտնի գյուղատեղիի հետքերը: Ի դեպ, 1595 թ. Մուրչ անվանաձևով գյուղը հիշվում է 10 տուն բնակչով (հիշատակված անձնանունների զգալի մասը հայկական են) և 11166 ակչե հարկաչափով<sup>23</sup>: Նույն բնակավայրը 1716-1717 թթ. հիշվում է մերթ տանուտեր Հասան Ալիի օրոք՝ 4000, մերթ Օմեր Աբդալի օրոք՝ 2000 ակչե հարկաչափով<sup>24</sup>:

23 "Գյւրջուսեճանի շղեպոցոս ճոճո ճոճո", էջ 195-196:  
24 "Նոճոճոսի յոճոճոսի յոճոճո 1694-1732 ՎՎ.", էջ 149:

**ՈՒՋՄԱՆԱ**



*ՈՒՋՄԱՆԱ. ընդհանուր տեսքը հր-ալ-ից*

**Տեղադրություն.** գտնվում է Հեշտիայից 2 կմ հյուսիս, Ախալքալաքից ուղիղ գծով 10 կմ հարավ-արևելք, շրջկենտրոն Նինոծմինդայից 11 կմ հյուսիս, ծ. մ. 1930-1970 մ բարձրության վրա:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. Ուջմանան ազատ էր ռայաներից, և հարկվում էր 4.000 ակչե<sup>1</sup>: 1714 թ. հավանաբար բռնի մահմեդականացված գյուղը հիշվում է տանուտեր Աբդուլբակի կառավարման օրոք՝ 10.500<sup>2</sup>, իսկ 1717-1718 թթ.՝ տանուտեր Մեհմեդի օրոք, 10.000 ակչե հարկաչափով<sup>3</sup>:

**Բնակչություն.** ուջմանացիների նախնիները Բասեն գավառից<sup>4</sup> գաղթած հայ կաթոլիկներ էին:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող տվյալները հետևյալն են.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1870 <sup>5</sup>	16	96	93	189
1884 <sup>6</sup>				317
1908 <sup>7</sup>	64	300	274	574
1912 <sup>8</sup>				585
1914 <sup>9</sup>				697
1915 <sup>10</sup>				660
1916 <sup>11</sup>	79	353	308	661
1926 <sup>12</sup>	125			756
1959 <sup>13</sup>				734
1987 <sup>14</sup>	176			551

Երկրորդ աշխարհամարտին Ուջմանայից մասնակցել են 45 հոգի, որոնցից 19-ը զոհվել է<sup>15</sup>:

1 "Զյւրջոսեթանոս յոգլայոտոս ճոցո ճոցոթարո", էջ 236:

2 "Նոջլոթոս յոգլայոտոս ճոցո ճոցոթարո 1694-1732 ՎՎ.", էջ 141:

3 Նույն տեղում, էջ 152:

4 ԺԹ դարի որոշ տեղեկագրերի համաձայն՝ ներկայիս ուջմանացիների նախնիները փոխադրվել են Մուշ գավառի գյուղերից (տես սույն աշխ., էջ 338, ծանոթ. № 6):

5 ՇՄՄԴ, էջ 31:

6 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:

7 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 38:

8 Նույն տեղում, գ. 3920, թ. 18-19:

9 "Кавказский календарь на 1915 г.", էջ 193:

10 «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:

11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 36-37:

12 Արդյան Ս., նշվ. աշխ., էջ 124:

13 Նույն տեղում:

14 Ըստ գյուղխորհրդի տվյալների:

15 Դավթյան Ա., Ջավախք, էջ 103:





*ՈՒՋՄԱՆԱ. Սբ. Հովհաննես եկեղեցու տեսքը հս-ամ-ից, հր-ամ-ից և ամ ճակատից բացված միակ մուտքը*

**Եկեղեցական-ծխական դպրոց.** գործունեության մասին պատմող վավերագրերը խիստ աղքատիկ են: Համաձայն մի տեղեկության՝ կրթօջախը գործել է 1860-ական թվականներին<sup>16</sup>, սակայն հետագայում, երկար տարիներ փակ լինելու պատճառով, 1912 թ. նշվել է, որ «Մինչև այժմ գիտը չունի դպրոց...»<sup>17</sup>:

1988 թ. գործում էր ութամյա դպրոց՝ 91 աշակերտով:

**Սբ. Հովհաննես-Սկրտիչ եկեղեցի.** գյուղամիջում այսօր էլ կանգուն է 1850 թ. կառուցված Սբ. Հովհաննես Սկրտիչ քարաշեն, փայտածածկ եկեղեցին<sup>18</sup>: 1915 թ. գյուղի ծխատեր քահանան էր տեր Հովհաննես Դարբինյանը<sup>19</sup>:

<sup>16</sup> ՇՄՈՒՂ, նույն տեղում:

<sup>17</sup> «Հորիզոն», 1912, № 254, էջ 3:

<sup>18</sup> ՀԱԳ, ֆ. 316, ց. 1, գ. 102, թ. 38: Ի դեպ, եկեղեցու մուտքին կառուցման տարեթիվ է նշված 1851-ը: Նույնը փաստված է նաև լրատվական նյութերում («Արձագանք», 1885, № 26, էջ 368: «Օրացոյց եւ պատկեր տօնից», Թիֆլիս, 1916, էջ 83):

<sup>19</sup> «Օրացոյց և պատկեր տօնից», Թիֆլիս, 1915, էջ 83:

### ՓԱՐՎԱՆԱ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 30 կմ արևելք, շրջկենտրոն Նինոծմինդայից 30 կմ հյուսիս-արևելք, Փարվանա լճի արևելյան ափին, Նինոծմինդա-Ճավկա մայրուղու ճախ եզրին, ծ. մ. 2080-2130 մ բարձրությամբ արևմտահայաց լեռնալանջին:

**Պատմություն.** հայտնի է, որ 1595 թ. միևնույն անվամբ հիշատակվող Փարվանան ազատ է եղել ռայաներից, հարկվել է 10.000 ակչե<sup>1</sup>:

**Բնակչություն.** ԺԹ դարի 40-ական թթ. գյուղում հաստատվել են ռուս աղանդավորներ: Նրանց թվաքանակը 1909 թ. կազմել է 45 տուն, 364 բնակիչ<sup>2</sup>, 1914 թ.՝ 508 շունչ<sup>3</sup>: Ի դարի երկրորդ կեսից ծայր առած վերաբնակիչ ռուսների արտագաղթին զուգահեռ Փարվանան համալրվել է մերձակա գյուղերից փոխադրված հայերով: Ներկայումս գյուղն առավելապես հայաբնակ է:

**Առաջին եկեղեցի.** գտնվում է գյուղամիջում: Միանավ հորինվածքով, երկու զույգ որմնասյունների վրա հենված թաղակիր կամարներով, հարավային ճակատից բացված միակ մուտքով և համակ սրբատաշ քարով կառուցված շինություն է (արտաքին չափերը՝ 14,32 x 6,80 մ): Որմերին պահպանվել է եկեղեցու կառուցման ժամանակաշրջանին (ԺԺԱ դդ.) վերաբերող, բովանդակությամբ իրար կրկնող, վրաց մեսրոպատառ երկու հիշատակագրություն:

1980-ական թվականների վերջերին Վրաստանի հուշարձանների պահպանության վարչության ջանքերով ընթանում էին եկեղեցու վերականգնման աշխատանքները:

- 1. Եկեղեցու հարավային ճակատին.  
Կ՛Ղ Կ՛Ղ ՄԻՆԴ ՇԻ  
յ(ՌՍԵՂ)Յ Մ(ՅՈՎՅԱԼ)Յ Յ(Վ)ՅԼԵ, Վ(ՅԵ)Ն.  
Թարգմ. Քրիստոս, ողորմիր Պավլեին. ամեն:  
Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 57.  
Տարբերակում. Ի. Ռոստոմաշվիլի՝ ձօճ:  
Ծանոթ. ժամանակը՝ ԺԱ-ԺԲ դդ.:





*ՓԱՐՎԱՆԱ. վերականգնման ընթացքում գտնվող միանավ եկեղեցին հր-ամ-ից և հատակագիծը*

- 2. Նույն ճակատին, նախորդից վեր.  
Կ՛Ղ Կ՛Ղ ՄՆԴ  
յ(ՌՍԵՂ)Յ Մ(ՅՈՎՅԱԼ)Յ Յ(Վ)ՅԼԵ.  
Թարգմ. Քրիստոս, ողորմիր Պավլեին:  
Հրատ. **Ростомов И.**, նշվ. աշխ., էջ 58:  
Ծանոթ. ժամանակը՝ ԺԱ-ԺԲ դդ.:

**Երկրորդ եկեղեցի.** գտնվում է առաջին եկեղեցուց ոչ հեռու՝ գյուղի կենտրոնական մասում: Ունի միևնույն հորինվածքը, սակայն չափերով (5,92 x 3,82 մ) ավելի նման է մատուռի: Կառուցողական

1 "გურჯისტანის ვილაიეთის დიდი ღვათაბი", էջ 234:  
2 "Тифлисский листок", 1909, № 191, էջ 5.  
3 "Кавказский календарь на 1915 г.", էջ 175.



ՓԱՐՎԱՆԱ. երկրորդ կամ փոքր եկեղեցու (մատուռի) տեսքը հր-ամ-ից, հր-ից և հատակագիծը

ՓԱՐՎԱՆԱ. հատվածներ գյուղամիջում պահպանված միջնադարյան իջևանատնից և հատակագիծը

առանձնահատկություններով ավելի բնորոշ է ԺԳ-ԺԴ դարերի համանման հուշարձաններին:

**Իջևանատուն.** գյուղամիջում ցայսօր կիսավեր դրությամբ պահպանված իջևանատունն ունի եռանավ հորինվածք և կառուցված է անմշակ ու կոփածո մոխրագույն քարով, նաև աղյուսով: Երկթեք ծածկի տակ առնված թաղակապ տանիքը ներքուստ պահում են 4 գույգ քառանկյուն կտրվածքով հաստահեղույս սյուները:



Ի դարի սկզբին իջևանատունը չափագրելիս Սիխելի Շավիշվիլին հայտնաբերել և գրչանկարել է վրաց մեսրոպատառ արձանագրությամբ 4 քար<sup>4</sup>: Ցավոք, դրանք ներկայումս կորած են:

**Թևակոր խաչքար.** Փարվանայից 2,5 կմ արևելք, ծ. մ. 2398,5 մ բարձրության վրա պահպանվում է զանգվածեղ ժայռաքեկորի վրա կանգնեցված թևակոր մի խաչքար (2,77 x 70 x 38 սմ), որի արևմտահայաց երեսին, խաչի հորիզոնական թևերին՝ Սբ. Աստվածածնի պատկերաքանդակի երկու կողմերում և խաչի ստորին թևին փորագրված է 8 տողով վրաց մեսրոպատառ արձանագրություն.

ԲԾ ՈՆ ԺԿԿԷ | ԿԻՄԵՆԸ | ՈՒԴԵՆԸ | ԿԴՇԻՐԻԸ | ՆԲԿԵՆ ԾՇԸԿԵՇՆ ԴՆԵԻՆՇ ՂԻԴԾԻ | ԴԺ

Մ(ծոց)ա լ(մրտ)ոս մՄ(ո)ծ(յը)ո. | Մջոլնո | լ(մրտ)ոսանո | լ(րոս)թ)յանո. | Ն(ս)Մյ(ս)լո լ(ս)ո)ճ(ս)ա լ(ո)ճ(յ)ա ճքքլ(ր)ո | յ(ս)ր.

4 Զերթքենի Մջոլո Ե., նշվ. աշխ., էջ 99:



ՓԱՐՎԱՆԱ. քաղաքի խաչ, ԺԲ դար



ՓԱՐՎԱՆԱ. վիշապաքար

Թարգմ. Մուրբ Աստվածածին: Ո՛վ Աստուծո՞ւ քրիստոնյա որդիներ: Թշվառ Դաթուսա սղոթքում աղաչում եմ:

Հրատ. «Ջգաջեթու. օստորիւլ-խւրօտմօժկըրճուլօ ԳՅօմկվլլլլլլ», էջ 11:

Տարընքեցում. «Ջգաջեթու. օստորիւլ-խւրօտմօժկըրճուլօ ԳՅօմկվլլլլլ»-ում ԳԳլլլլլլլ:

Յանոթ. ժամանակը՝ ԺԲ դ.:

**Վիշապաքար.** գտնվում է Փարվանա գյուղից հյուսիս, պատմական Ջավախք-Թռեղք գավառները կամ ներկայիս Նինոծմինդայի և Շաղկայի շրջանները սահմանագատող, ջրբաժան լեռնագծին հարող տեղամասում, Նինոծմինդա-Շաղկա մայրուղու աջ կողմում, Փարվանա գյուղից 3 կմ հեռու<sup>5</sup>:

<sup>5</sup> Մանույան Ա. Ս., նշվ հոդվ.:

ՓՈԿԱ



ՓՈԿԱ. ընդհանուր տեսքը ամ-ից

**Տեղադրություն.** գտնվում է Ախալքալաքից ուղիղ գծով 25 կմ արևելք, շրջկենտրոն Նինոծմինդալից 22 կմ հյուսիս-արևելք, Փարվանա լճի հարավային եզրին, լճի այն մասում, որտեղից սկիզբ է առնում համանուն գետը, ծ. մ. 2080-2110 մ բարձրության վրա:

**Պատմություն.** համաձայն 1595 թ. կազմված հարկացուցակի՝ գյուղից հարկվել է 5.000 ակչե, և ազատ է եղել ռայաներից<sup>1</sup>: Հայտնի է, որ բնակչության բռնի մահմեդականացումից հետո՝ 1714 թ.՝ տանուտեր Խալիլի օրոք, փոկացիները պետական գանձարան են մուծել 1.000 ակչե<sup>2</sup>:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Արտահանից, Էրզրումից և Մուշից 1829-1830 թթ.: Ըստ ականատեսի վկայության (1896 թ.) փոկացիների նախնիները հիմնականում Արտահանի և Մուշի գաղթականներ էին, որոնք Կարնո գաղթականների համեմատ ունեին որոշակի առանձնահատկություններ. «...ունին մի յատկություն, որ մեր ժամանակներում ասելի գնա-

հատելի է. այդ նրանց անվեհերությունը, քաջությունն է: Եթե առազակ-արիւնարբու թարաքաման իր աւարառութիւններով միւս գիւղերի մօտից անպատիժ է անցնում, արդահանցու մօտից չի կարող, նոքա շատ են ճաշակել Փոկացու շիկացած գնդակի տաքութիւնը և սայրասուր սրի թափը»<sup>3</sup>:

**Վիճակագրություն.** ԺԹ-Ի դարերի ընթացքում, Փոկայում հաստատված հայերի քանակն ընդհանուր առմամբ աճել է, բայց 1841-42, 1853-54 և 1878-80 թթ. արձանագրվել են նվազման դեպքեր.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1840 <sup>4</sup>		89	66	155
1842 <sup>5</sup>		50	44	94
1844 <sup>6</sup>		61	53	114
1845 <sup>7</sup>		92	89	181
1847 <sup>8</sup>		140	132	242
1849 <sup>9</sup>		133	107	240

3 «Արձագանք», 1896, № 12, էջ 1:

4 ՀԱԴ., ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

5 Նույն տեղում, գ. 3805, թ. 78-79:

6 Նույն տեղում, գ. 3809, թ. 15-16:

7 Նույն տեղում, գ. 3811, թ. 71-72:

8 Նույն տեղում, գ. 3814, թ. 32-33:

9 Նույն տեղում, գ. 3818, թ. 38-39:

1 "Գյրջոսեթանոս Յոլաօյտոս ձոձո ձոթօարո", էջ 234:

2 "Խոլձոթոս յոլալլոթոս ջոձօ ձոթօարո 1694-1732 ՎՎ.", էջ 141-142:

1851 <sup>10</sup>	24	121	99	220
1853 <sup>11</sup>		242	222	464
1854 <sup>12</sup>		177	152	329
1857 <sup>13</sup>		181	166	347
1860 <sup>14</sup>	44	212	181	393
1861 <sup>15</sup>	53	229	212	441
1862 <sup>16</sup>	53	228	218	446
1863 <sup>17</sup>		225	216	442
1864 <sup>18</sup>	53	232	215	447
1866 <sup>19</sup>	53	235	220	455
1867 <sup>20</sup>		250	245	495
1868 <sup>21</sup>		259	248	507
1869 <sup>22</sup>		266	250	516
1870 <sup>23</sup>		275	262	537
1871 <sup>24</sup>		280	265	545
1872 <sup>25</sup>		286	270	556
1873 <sup>26</sup>		295	276	571
1874 <sup>27</sup>				588
1875 <sup>28</sup>	75			572
1876 <sup>29</sup>		297	288	585
1877 <sup>30</sup>		320	300	620
1878 <sup>31</sup>		325	306	631
1880 <sup>32</sup>		349	225	574
1881 <sup>33</sup>		346	226	572
1882 <sup>34</sup>		354	231	585
1883 <sup>35</sup>		354	228	582
1884 <sup>36</sup>	79			
1885 <sup>37</sup>		370	239	609
1887 <sup>38</sup>		413	281	694
1889 <sup>39</sup>		448	295	743
1890 <sup>40</sup>		456	312	768
1891 <sup>41</sup>		454	329	783

10 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, ք. 32:  
 11 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, ք. 38-39:  
 12 Նույն տեղում, գ. 3825, ք. 47-48:  
 13 Նույն տեղում, գ. 3830, ք. 52-53:  
 14 Նույն տեղում, գ. 3833, ք. 66-67:  
 15 Նույն տեղում, գ. 3839, ք. 23-24:  
 16 Նույն տեղում, գ. 3836, ք. 20-21:  
 17 Նույն տեղում, գ. 3843, ք. 20-21:  
 18 Նույն տեղում, գ. 3846, ք. 9-10:  
 19 Նույն տեղում, գ. 3848, ք. 74:  
 20 Նույն տեղում, գ. 3851, ք. 21-22:  
 21 Նույն տեղում, գ. 3853, ք. 27:  
 22 Նույն տեղում, գ. 3856, ք. 9:  
 23 Նույն տեղում, գ. 3857, ք. 23:  
 24 Նույն տեղում, գ. 3858, ք. 9-10:  
 25 Նույն տեղում, գ. 3859, ք. 56-57:  
 26 Նույն տեղում, գ. 3862, ք. 70-71:  
 27 Նույն տեղում, գ. 3864, ք. 25-26:  
 28 Նույն տեղում, գ. 3866, ք. 19-20: Նան՝ «Մեղու Հայաստանի», 1875, № 44, էջ 2:  
 29 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, ք. 29-30:  
 30 Նույն տեղում, գ. 3869, ք. 28-29:  
 31 Նույն տեղում, գ. 3850, ք. 217-218:  
 32 Նույն տեղում, գ. 3872, ք. 87-88:  
 33 Նույն տեղում, գ. 3873, ք. 96-97:  
 34 Նույն տեղում, գ. 3874, ք. 43-44:  
 35 Նույն տեղում, գ. 3875, ք. 48-49:  
 36 «Արձագանք», 1885, № 3, էջ 41:  
 37 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, ք. 10-11:  
 38 Նույն տեղում, գ. 3880, ք. 40-41:  
 39 Նույն տեղում, գ. 3884, ք. 64-65:  
 40 Նույն տեղում, գ. 3887, ք. 145:  
 41 Նույն տեղում, գ. 3889, ք. 144:

1892 <sup>42</sup>		463	335	798
1893 <sup>43</sup>		462	337	799
1894 <sup>44</sup>		486	358	844
1897 <sup>45</sup>		508	399	907
1898 <sup>46</sup>		528	414	942
1899 <sup>47</sup>		554	429	983
1900 <sup>48</sup>		566	445	1011
1901 <sup>49</sup>		596	466	1062
1902 <sup>50</sup>		610	483	1093
1905 <sup>51</sup>		686	553	1239
1908 <sup>52</sup>	158	689	572	1261
1910 <sup>53</sup>		764	644	1408
1912 <sup>54</sup>		807	682	1489
1914 <sup>55</sup>				1539
1916 <sup>56</sup>		873	754	1627
1918 <sup>57</sup>	160	875	880	1755
1921 <sup>58</sup>		189	154	343
1926 <sup>59</sup>	221			1169
1987 <sup>60</sup>	446			2386

Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 260 փոկացիներից 107-ը զոհվել է<sup>61</sup>:


1980-ական թվականների վերջերից քաղաքական և տնտեսական ճնշումների պատճառով Փոկա գյուղից արտագաղթող բնակիչների թվաքանակն աննախադեպ չափեր է ընդունել: Երևույթի առթիվ 2003 թ. վրացի թղթակիցն անթաքույց հրճվանքով նշել է, որ գյուղի 600 տուն բնակիչից արդեն մնացել է միայն 300-ը<sup>62</sup>:

**Մարդրություն վրացական ձևով կամ նորոգյա հայ-քաղկեդոնականներ.** համաձայն Փոկայում հիմնված Կուսանաց վանքի մայրապետ Էլիսաբեթի վկայության՝ արդեն 2003 թ. իրենց հաջողվել էր վրաց ուղղափառ եկեղեցում վերամկրտել փոկացի բազմաթիվ հայերի, ընդ որում, իբրև թե տեղի հայերն իրենք էին դիմում վրաց եկեղեցու ավագանուն վերամկրտվելու խնդրանքով, քանի որ «իմացան ուղղափառ եկեղեցու առավելությունը»<sup>63</sup>:

42 Նույն տեղում, գ. 3891, ք. 116:  
 43 Նույն տեղում, գ. 3895, ք. 41-42:  
 44 Նույն տեղում, գ. 3896, ք. 169-170:  
 45 Նույն տեղում, գ. 3899, ք. 142-143:  
 46 Նույն տեղում, գ. 3897, ք. 164:  
 47 Նույն տեղում, գ. 3903, ք. 93-94:  
 48 Նույն տեղում, գ. 3905, ք. 55:  
 49 Նույն տեղում, գ. 3906, ք. 68:  
 50 Նույն տեղում, գ. 3907, ք. 18-19:  
 51 Նույն տեղում, գ. 3912, ք. 261-262:  
 52 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 559, ք. 43:  
 53 Նույն տեղում, գ. 3917, ք. 135-136:  
 54 Նույն տեղում, գ. 3920, ք. 18-19:  
